ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՐԿԱ – ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ - 1828-1829 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՂԵԿԱՎԱՐ - ԱՂԱՋԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԱԳԱՐԱԿԻ ՄԻՋՆ. ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՑՉՈՒՀԻ

ՎԱՀՐԱԴՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՎԱՆԱՁՈՐ 2022

«1828-1829 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ» ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ՊԼԱՆ

1. Ներածություն:
2. Քարտեզների օգտագործումը «Ռազմական գործողությունների ընթացքը» թեման ուսուցանելիս:
3. Ներառարկայական կապերի օգտագործումը «Բայազետի հերոսական պաշտպանությունը» թեման ուսուցանելիս:
4. Պատմական վավերագրերի օգտագործումը «Ադրիանապոլիսի պայմանագիրը: Արևմտահայերի գաղթը» թեման ուսուցանելիս:
5. Վերջաբան:
6. Օգտագործված գրականության ցանկ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատմության դպրոցական դասընթացի առջև դրված խնդիրները հաջողությամբ լուծելու համար ուսուցիչը հարկադրված է լինում դիմել ուսուցման տարատեսակ մեթոդների և հնարների: Ժամանակակից մանկավարժական գիտությունը այս տեսակետից ուսուցչին լայն հնարավորություններ է ընձեռնում: Դասի ժամանակ մեթոդական բազմազանության ապահովումը այսօր հրամայական պահանջ է դարձել:

Այս աշխատանքի մեջ անդրադարձել եմ դասավանդման ժամանակ օգտագործվող մի քանի մեթոդների և հնարների:

Առաջին գլխում 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմի ռազմական գործողությունների դասավանդման օրինակով ներկայացրել եմ պատմության դասին քարտեզների օգտագործման ձևերն ու եղանակները, ցույց եմ տվել դրանց դերն ու նշանակությունը աշակերտների մոտ տարածական պատկերացումների ձևավորման գործում: Ընդհանուր առմամբ հարկավոր է նշել, որ տեսական գիտելիքները հաջողությամբ ամրապնդվում և մնում են աշակերտների հիշողության մեջ երբ դրանք ներկայացվում են դիտազննական միջոցների օգնությամբ:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը վերնագրել եմ «Բայազետի հերոսական պաշտպանությունը», ներկայացրել եմ պատմության դասավանդման ժամանակ ներառարկայական կապերի օգտագործման առավելություններն ու դրանց արդյունավետությունը: Ներառաարկայական կապեր եմ ստեղծել նախորդ՝ «1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմը» թեմայի՝ Շուշիի պաշտպանությունը ենթաթեմայի հետ: դասի ժամանակ նման համեմատությունը հնարավորություն կտա ոչ միայն լավագույն կերպով ներկայացնել նոր նյութը, այլև պայմաններ կստեղծի անցած թեմային մի անգամ ևս անդրադառնալու համար:

Աշխատանքի երրորդ գլխում Ադրիանապոլիսի պայմանագիրը և արևմտահայերի ներգաղթը թեմայի օրինակով ներկայացրել եմ պատմության դասավանդման ժամանակ պատմական վավերագրերի և փաստաթղթերի օգտագործման արդյունավետությունն ու դրանց կիրառման մեթոդիկան:

Աշխատանքը շարադրելիս որպես առաջնային աղբյուր օգտագործել եմ

հիմնական դպրոցի 8-րդ դասարանի «Հայոց պատմության» դասագիրքը:

Աշխատանքը շարադրելիս օգտագործել եմ ինչպես խորհրդային մեթոդիստների, այնպես էլ ժամանակակից ռուս մեթոդիստների աշխատություններ: Առանձնահատուկ ցանկանում եմ ներկայացնել խորհրդային մեթոդիստ-մանկավարժ Ա. Վագինի աշխատությունը, որտեղ հանգամանորեն ներկայացված են աշակերտներին քարտեզագրական գիտելիքներ հաղորդելու մեթոդներն ու հնարները, պատմական վավերագրերի օգտագործման առանձնահատկությունները[1]: Աշխատանքը կատարելիս օգտվել եմ նաև ժամանակակից հեղինակների աշխատություններից, որոնք ներակայացրել են պատմության դասավանդման նկատմամբ ժամնակակից մոտեցումներն տեսությունները[2]: Աշխատանքը կատարելու ժամանակ օգտվել եմ նաև համացանցից:

1. Вагин А. А. Методика преподавания истории в средней щколе, М. ,1968г.

2. Берльковский И.В. , Павлов Л. С., Методика Преподования истории в школе, М., 2001г., Вяземский Е.Е. , Стрелова О. Ю. Методика Преподования истории в школе, М.2001г.,

ԳԼՈՒԽ I

Քարտեզների օգտագործումը «Ռազմական գործողությունների ընթացքը» թեման ուսուցանելիս

Նախընտրելի է, որ ուսուցիչն «1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմը» թեման մատուցի խառը համակցված դասի ձևով: Նախատեսված հարցումն ավարտելուց հետո նա անցնում է նոր նյութի հաղորդման և տնային առաջադրանք հանձնարարելու փուլին: Ըստ դասագրքի կառուցվածքի «1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմը» թեման բաղկացած է երեք ենթավերնագրերից: Առաջին ենթավերնագիրը վերնագրված է «Ռազմական գործողությունների ընթացքը»: Քանի որ այն ենթադրում է ռազմական արշավանքների և մարտական գործողությունների նկարագրություն և վերլուծություն, նախընտրելի է այն շարադրել քարտեզների օգնությամբ: Պատմության դպրոցական դասավանդման ժամանակ քարտեզների օգտագործումը ունի հետևյալ նպատակները. ցույց տալ այն աշխարհագրական միջավայրը, որտեղ տեղի են ունեցել ուսումնասիրվող պատմական իրադարձությունները, դրա միջոցով բացահայտել բնության ազդեցությունը մարդկային հասարակ զարգացման վրա: Պատմական փաստերը որոշակի տարածքի, երկրի կամ քաղաքի մեջ տեղայնացնելու միջոցով, այդ փաստերը կապել մեկը մյուսի հետ, որպես նշված տարածքներում կատարվող պատմական պրոցեսի հաջորդական օղակներ, և այդպիսով պայմաններ ստեղծել աշակերտների համար՝ հասկանալու պատմության ընթացքը, որպես հասարակական երևույթների ծագման, զարգացման և փոփոխման հաջորդական ու օրինաչափ պրոցես: Ցույց տալ պատմական երևույթների տեղաբաշխումն ու տևողությունը տարածության մեջ, տարածքային առումով նրանց միջև եղած հարաբերությունները, և դրանով պայմաններ ստեղծել հասկանալու առանձին երկրների միջև եղած տնտեսական, քաղաքական և մշակութային կապերը[3]:

Այսպիսով, դասավանդման ժամանակ տարածության մեջ պատմական փաստերի տեղայնացումը հանդիսանում է աշակերտներին հասանելի խորությամբ պատմական պրոցեսը բացատրելու կարևոր պայմաններից մեկը:

Պատմական փաստերի տեղայնացումը տարածության մեջ այդ փաստերի

[3] Короткова М. В., Наглядность на уроках истории, М. 2000, с 25.

ուսուցումից առանձնացված, վերացական աշխատանք չէ: Այն ներառնվում է ընդհանուր ուսումնական պրոցեսի մեջ, որպես պատմական փաստերը ճանաչելու պրոցեսի օրգանական մաս: Սա վերաբերում է պատմական նյութը յուրացնելու բոլոր փուլերին:

Ուսուցիչը շարադրանքն սկսում է հետևյալ կերպ. 1828թ. ապրիլին սկսվեց ռուս-թուրքական պատերազմը: Ռազմական գործողությունները տեղի էին ունենում երկու ռազմաճակատներում՝ Բալկաններում և Կովկասում: Ցանկալի է, որ ուսուցիչը դասարանում ունենա այնպիսի քարտեզ, որի վրա պատկերված կլինեն նշված տարածաշրջանները: Ընդհանուր առմամբ տարածության մեջ տեղայնացնելու կոնկրետության աստիճանը կախված է ուսումնասիրվող փաստերի բնույթից, դպրոցական դասընթացի ժամանակ դրանց ուսումնասիրման խորությունից և ուրիշ փաստերի հետ դրանց ունեցած կապերից ու հարաբերություններից: Մի դեպքում տեղայնացումը սահմանափակվում է երկիրը կամ մարզը ցույց տալով, օրինակ, վիճակագրական փաստերը, բնակչության տեղաբաշխումը, և այլն, տեղայնացվում են պետությունների ու մարզերի լայն շրջանակների մեջ: Այլ դեպքերում փաստերը տեղայնացվում են ավելի նեղ շրջանակների մեջ՝ մեկ բնակավայրի սահմաններում, ճակատամարտի վայրում, արշավանքի կամ ճանապարհորդության երթուղով: Եվ վերջապես, պատմական իրադարձությունը տեղայնացվում է իր զարգացման տարբեր փուլերի մեջ, որպեսզի ավելի պարզ և հասկանալի լինի տվյալ իրադարձության ընթացքը[4]: Ուսուցիչը քարտեզի վրա ցույց է տալիս Բալկաններն ու Կովկասը, համեմատության մեջ է դնում նրանց աշխարհագրական և ռազմա-ստրատեգիական դիրքերը:

Այնուհետև ուսուցիչը շարունակում է շարադրանքը. Հունիս ամսին ռուսական բանակը Պասկևիչի գլխավորությամբ Գյումրիի մոտ անցնում է Ախուրյան գետը և շարժվում դեպի Կարս: (բնականաբար նա քարտեզի վրա ցույց է տալիս նշված վայրերը) Ճանապարհին նրանք հանդիպում են ամայացած գյուղերի, թուրքերը հայ բնակիչներին քշում էին դեպի երկրի խորքերը: Հակառակորդը մեծ ուժեր էր կենտրոնացնում Կարսի անառիկ բերդում: Երեք օր ու գիշեր կատաղի մարտեր էին մղվում բերդի պարիսպների մոտ: Հունիսին ռուսներին հաջողվում է գրոհով վերցնել ռազմական կարևոր նշանակություն ունեցող Կարսի բերդը. Դրանից հետո նրանք իրար ետևից գրավում են Ախալքալաքը,

[4] Короткова М. В., указ. соч., с 27.

Ախալցխան, Արդահանը: Ախալցխայում թուրքերը համառ դիմադրություն են ցույց տալիս: Առանց կռվի հանձնվելու առաջարկը նրանք մերժում են: Պասկևիչը հրամայում է հրդեհել քաղաքը և շարունակել գրոհը: Մեկօրյա արյունահեղ մարտերից հետո գրավվում է Ախալցխայի բերդը: Այդ մարտերում ռուսական զորքին մեծ օգնություն են ցույց տալիս հայերը և վրացիները[5]:

Ռազմական գործողությունները բնութագրելու հիմնական ձեռնարկը քարտեզն է: Ռազմական գործողությունների մասին հստակ պատկերացում կազմելու, նրա առանձին հատվածներ տարածության մեջ տեղայնացնելու, պատերազմի առանձին ճակատամարտերի, զորքերի տեղաշարժերի, ամրությունների նշանակությունը հասկանալու և գիտակցաբար յուրացնելու լավագույն միջոցը քարտեզի օգտագործումն է: Անցած ճակատամարտերը, որոնք տեղի են ունեցել ընդամենը մի քանի ժամ կամ ծայրահեղ դեպքում մի քանի օր, բնութագրելու համար, օգտագործում են սխեմատիկ պլաններ: Մեծ արդյունավետություն ունեն այն սխեմաները, որոնք նյութի շարադրանքի ընթացքում գծվում են վրա, և ցույց են տալիս ռազմական գործողությունների զարգացումը: XX դարի ռազմական օպերացիաները, որոնք տեղի են ունեցել հազարավոր կիլոմետր քառակուսիների վրա, և տևել են շաբաթներ ու ամիսներ, ցույց են տրվում կամ ընդհանուր քարտեզի վրա, կամ առանձին մեծ օպերացիաների քարտեզների վրա: Բայց այս դեպքում ևս կարող է օգտագործել սխեմատիկ պլան: Պատերազմները և ճակատամարտերը քարտեզի վրա պատկերելը հնարավորություն է տալիս բացահայտել յուրաքանչյուր դարաշրջանի ռազմական գործողությունների յուրահատկությունները՝ օրինակ, 17-18 դարերի զորքերի գծաքայլը, I համաշխարհային պատերազմի դիրքային բնույթը մեծ հայրենականի արագ զորաշարժերը և այլն: Դրանք աշակերտների օգնում են հասկանալ, ռազմական արվեստի էությունը և տաղանդավոր զորավարների դերը: Պատմության քարտեզների պայմանականությունը հնարավորություն է տալիս ոչ միայն ցույց տալ կատարված ռազմական գործողությունները, այլև ցույց տալ զորավարների և պատերազմների պլանները: Դա հնարավորություն է տալիս հակադրել պատերազմող կողմերի ռազմական պլանները և ցույց տալ դրանց

[5] Թեմայի այս և հետագա շարադրանքը կատարվում է ըստ դպրոցական դասագրքի. Հայոց պատմություն, 8-րդ դասարանի համար:

իրականացումը պատերազմի ժամանակ[6]:

Ռուս-թուրքական պատերազմը և թուրքերի դեմ տարած հաղթանակը ոտքի է հանում նաև Բայազետի հայերին: Բայազետի փաշայության չորս գավառների բնակչության 80 տոկոսը հայեր էին: 1828 թ. օգոստոսին գեներալ Ա. Ճավճավաձեն իր փոքրաթիվ զորամասով օգնության է գնում հայերին և ընդհարման ժամանակ պարտության մատնում թուրքական հեծելազորին: Հաջորդ օրը հայերի ճնշման տակ Բայազետի փաշան բերդը հանձնում է ռուսներին: Ռուսների հաջողությունները և՛ Կովկասում, և՛ Բալկաններում մեծ իրարանցում են առաջացնում ոչ միայն Թուրքիայի, այլև եվրոպական պետությունների կառավարող շրջանակներում: Անգլիայի հրահրումով Թուրքիան մեծ ուժեր է կուտակում էրզրումում (Կարինում) և 1829 թ. գարնանը հարձակման անցնում: Նրանք կարողանում են ներխուժել Ախալցխա և կորուստներ պատճառել տեղի կայազորին: Պաշարված Ախալցխային օգնության է հասնում գեներալ Բուրցովը: Ռուսական զորքերին հաջողվում է կասեցնել թուրքերի գրոհները և անցնել հակահարձակման: Հունիսին նրանք գրեթե առանց կռվի գրավում են Արևմտյան Հայաստանի խոշոր քաղաքը՝ էրզրումը: Ընկնում է Թուրքիայի ռազմական ամենանշանավոր կենտրոնը: Այնուհետև ռուսական զորքերը գրավում են Խնուսը, Դերջանը, Մուշը և այլ բնակավայրեր: Պատերազմական գործողություններին այստեղ ևս գործուն մասնակցություն ունեցան դեկաբրիստները: Նրանցից գեներալ Բուրցովը հերոսաբար ընկավ մարտում: Ինչպես ռուս-պարսկական, այնպես էլ ռուս-թուրքական պատերազմների ժամանակ հայերի համակրանքը ռուսների կողմն էր: Նրանք ձգտում էին թոթափել պարսկա-թուրքական ծանր լուծը: Այդ պատճառով հայերը և՛ ռազմական, և՛ նյութական օգնություն էին ցույց տալիս ռուսական զորքերին: Արևելյան Հայաստանի նման այստեղ ևս կազմակերպվեցին կամավորական ջոկատներ: Բայազետում Մելիք Մարտիրոսյանի գլխավորությամբ մի քանի օրում կազմակերպվում է 500 հոգուց բաղկացած ջոկատ, որն ակտիվ գործողություն է ծավալում: Արևելահայերն իրենց հերթին կազմավորում են կամավորական ջոկատներ և օգնության շտապում հայրենակիցներին: Ղարաբաղի կամավորական հեծյալ գնդի մասին Ա.Պուշկինը գրել է. «Հունիսի 17-ի առավոտյան մենք նորից լսեցինք հրաձգության ձայներ և երկու ժամ հետո տեսանք Ղարաբաղի գունդը, որը վերադառնում էր՝ բերելով թուրքական 8 դրոշակ»:[7] Հայ

---

[6] Вагин А. А. Методика преподавания истории в средней щколе, М. ,1968г.,с. 256.

[7] Вагин А. А., указ. соч., ,с. 260.

կամավորներն ակտիվ մասնակցում էին ռազմական գործողություններին: Նրանցից շատերն աչքի ընկան խիզախությամբ և արժանացան պարգևների: Ինչպես տեսանք ամբողջ ենթավերնագիրը շարադրելու և աշակերտներին հասանելի դարձնելու համար քարտեզների օգտագործումը անգնահատելի նշանակություն է ձեռքբ բերում:

Հասկանալի է, որ ոչ աշակերտը, ոչ էլ ուսուցիչը իրենց պատկերացումներով չեն կարող տեղայնացնել այնպիսի երևույթներ, որոնք դուրս են մարդու զգայական ընկալման սահմաններից: Օրինակ՝ պետական սահմանները, ժամանակակից խոշոր քաղաքները և այլն: Այստեղ գլխավոր դերը պատկանում է քարտեզագրական ձեռնարկներին, որոնք պայմանական նշաններով պատկերում են պատմական երևույթների տեղաբաշխումը երկրի վրա: Պատմության դասավանդման ժամանակ քարտեզագրական ձեռնարկների օգտագործումը ծառայում են՝ որպես միջոց ուսուցչի շարադրանքից և գիտելիքների այլ աղբյուրներից ձեռք բերված պատմական և աշխարհագրական երույթների մասին գիտելիքները տեղայնացվեն տարածության մեջ: Ծառայում են որպես աղբյուր՝ որոշակի տարածության վրա տեղադրված պատմական և աշխարհագրական գիտելիքները ուսումնասիրելու համար: Ծառայում են որպես զգայական հիմք՝ ուսուցանվող պատմական երևույթների միջև կապերը և հարաբերությունները գիտակցաբար յուրացնելու համար: Ծառայում են որպես միջոց՝ տարբեր երկրների պատմական զարգացման առանձին փուլերը ընդհանրացնելու համար: Եվ վերջապես, ծառայում են որպես միջոց՝ պատմությունից ստացած գիտելիքները ամրապնդելու և ստուգելու համար:

Երևույթները տարածության մեջ տեղայնացնելու աշխատանքների ժամանակ օգտագործվում են աշակերտի կողմից աշխարհագրությունից՝ Երկրի և քարտեզների մասին ունեցած գիտելիքները: Սա պատմության ուսուցչին պարտավորեցնում է ծանոթանալ նշված առարկայի ուսումնական դասընթացին, ինչպես նաև իմանալ, թե աշակերտները որքանով են յուրացրել աշխարհագրական և քարտեզագրական գիտելիքները: Պատմության դասավանդման ժամանակ քարտեզագրական ձեռնարկների օգտագործումը, համեմատած աշխարհագրության դասավանդման հետ, ունի իր յուրահատկությունները: Պատմության դասավանդման ժամանակ քարտեզների օգտագործումը արդյունավետ կլինի, եթե ապահովվեն մի շարք պայմաններ:

1) Քարտեզների հետ աշխատանքը պետք է կատարել սիստեմատիկորեն,

ինչպես նոր նյութը հաղորդելու ժամանակ, այնպես էլ ձեռք բերված գիտելիքները ամրապնդելու և ստուգելու դեպքում:

2)Ուսուցիչը աշակերտներին պետք է սովորեցնի քարտեզների վրա աշխատելու հնարներն ու մեթոդները:

3) Աստիճանաբար աշակերտների մոտ աճում է քարտեզների հետ ինքնուրույն աշխատելու ձգտումը, որը կապված է ուսումնառության ընթացքում նրանց ինքնուրույնության աճի հետ:

Ուսուցիչը պատմական քարտեզների հետ աշխատանքը սկսելու ժամանակ աշակերտներին ծանոթացնում է դրանց հետ, որպես ուսումնական ձեռնարկի նոր տիպ:

Աշակերտներին պատմական քարտեզների հետ ծանոթացնելու բոլոր դեպքերում ուսուցիչը առաջարկում է որոշել, թե ինչ տերիտորիա է այն ընդգրկում և որ ժամանակաշրջանին է այն պատկանում: Պատմական քարտեզների հետ միաժամանակ օգտագործում են կիսագնդերի ֆիզիկական քարտեզը, որի վրա տեղայնացվում են պատմական քարտեզի տերիտորիան, մի քարտեզից մյուսին անցնելու ժամանակ հարկավոր է պահպանել նրանց հաջորդականությունը: Եթե հին և նոր քարտեզները ընդգրկում են տարբեր տարածքներ, հարկավոր է որոշել դրանց տերիտորիալ փոխհարաբերությունները: Այդ նպատակով օգտագործում ենք առավել ընդհանուր քարտեզ, որի վրա պատկերված են երկու տարածքները: Հարկավոր է նաև որոշել դրանց ժամանակային փոխհարաբերությունները՝ այսինքն դրանք տեղի են ունեցել միաժամանակ, թե՞ ոչ: Պատմական քարտեզի օգտագործման ամենապարզ ձևը ուսուցչի կողմից նյութը շարադրելու ընթացքում քաղաքների, գետերի, արշավանքների, ուղղությունների, ճակատամարտերի վայրերի ցույց տալն է: Դրանք ցույց տալու ժամանակ հարկավոր է հետևել մի շարք կանոնների՝ քարտեզի վրա տեղայնացվող վայրի մասին խոսելով, «ցույց եմ տալիս քարտեզի վրա» խոսքերով ուսուցիչը աշակերտների ուշադրությունը կենտրոնացնում է քարտեզի վրա:



Ցույց տալով նոր վայրի տեղը՝ նա հենվում է սովորողներին արդեն ծանոթ կողմնորոշիչների վրա: Օրինակ՝ «դեպի հարավ», «Ախուրյան գետի հոսանքով դեպի ներքև» և այլն: Սա ոչ միայն օգնում է հին գիտելիքները ամրապնդելուն, այլև նրանց հետ կապում է նոր ինֆորմացիան: Քարտեզի վրա նոր սովորած վայրի ուղղությունը կողնորոշիչից կարելի է պատկերել մատիտով տարված գծերի միջոցով, որը շատ լավ է մնում աշակերտների հիշողության մեջ: Պատմության քարտեզը, որպես գիտելիքների աղբյուր, նախապես օգտագործվում է ուսուցչի կողմից նյութը շարադրելու ընթացքում: Հաղորդելով քարտեզի հետ կապված նյութը, ուսուցիչը կարծես թե կարդում է քարտեզի բովանդակությունը, և այդ ընթերցանությանը ներգրավվում է նաև աշակերտին: Օրինակ, սկսելով որևէ երկրի պատմության ուսումնասիրությունը, նա քարտեզի օգնությամբ ցույց է տալիս, թե այդ երկիրը որ մայրցամաքում է գտնվում, դատելով նրա աշխարհագրական դիրքից, այն ինչ կլիմայական գոտում է, որ ծովի մոտ է, և ինչ պետություններ են նրան հարևան: Ուսուցիչը քարտեզի վրա կարդում է արշավանքների և ճանապարհորդությունների ուղղությունները, ցույց է տալիս այն երկրներն ու ծովերը, որտեղով անցել են դրանք: Պատի և սեղանի քարտեզների վրա աշխատանքները տարվում են միաժամանակ և համակարգված ձևով: Դա օգնում է դասարանի հետ տարվող աշխատանքը

համակցել անհատական աշխատանքների հետ՝ այդ ձևով բարձրացնելով աշակերտների ակտիվությունն ու ինքնուրույնությունը: Պատմության քարտեզների վրա աշխատանքների սկզբում աշակերտները սովորաբար կրկնում են ուսուցչի գործողությունները: Աշակերտների գիտելիքների աճի հետ ուսուցիչը նրանց հանձնարարում է սեղանի քարտեզի վրա ինքնուրույն գտնել անհրաժեշտ վայրը, ապա այն ցույց տալ պատի քարտեզի վրա, որոշել պայմանական նշանի նշանակությունը և այլն: Քարտեզների վրա ինքնուրույն աշխատանքներ կատարելու հանձնարարությունները աստիճանաբար բարդանում են: Պատմական քարտեզների պայմանական նշանների լեզուն շատ աղքատիկ է: Դրանցով պատմական իրադարձությունների միջավայրի մասին կարելի է իմանալ միայն հակիրճ տեղեկությունների, իսկ կոնկրետ իրադարձությունների մասին ավելի քիչ բան է հաղորդվում: Այս պատճառով միայն քարտեզներ կարդալը քիչ է պատմական գիտելիքների ձևավորման համար: Այդ պատճառով անհրաժեշտ է քարտեզը զուգակցել գեղեցիկ շարադրանքի և այլ մեթոդների հետ: Այդ նպատակով ուսուցիչը քարտեզները համակցում է դիտազննական պարագաներ ցույց տալու, պատկերավոր շարադրանքի հետ: Այդ պայմաններում քարտեզը կարող է հանդիսանալ որպես յուրօրինակ կոնսպեկտ, որը համակարգում է փաստական նյութը, իրադարձությունները տեղայնացնելով տարածության մեջ ժամանակագրական հաջորդականությամբ[8]:

Առաջին ենթավերնագիրը ներկայացնելուց հետո ուսուցիչը համառոտ հարցումով ամրապնդում է հաղորդված նյութը: Կարող է առաջադրել հետևյալ հարցերը.

1. Ե՞րբ սկսվեց ռուս-թուրքական պատերազմը,
2. Ո՞վ էր ռուսական զորքի հրամանատարը կովկասյան ճակատում,
3. Քարտեզի վրա ցույց տվեք հիմնական մարտական գործողությունների վայրերը և այլն:

Ամփոփում կատարելուց հետո անցնում է երկրորդ ենթավերնագիրը ներկայացնելուն:

[8] Вагин А. А., указ. соч ., с. 260-261.

ԳԼՈՒԽ II

Ներառարկայական կապերի օգտագործումը «Բայազետի հերոսական պաշտպանությունը» թեման ուսուցանելիս

Թեմայի երկրորդ ենթավերնագիրը կարելի է աշակերտներին ներկայացնել ներաառարկայական կապեր օգտագործելու միջոցով: Ուսուցիչը համառոտ ներկայացնում է Բայազետի հերոսական պաշտպանությունը. 1829 թ. ամռանը, երբ ռուսական զորքերն արշավում էին դեպի Էրզրում, Վանի փաշան 15 հազար զորքով հարձակվում է Բայազետի վրա: Ճանապարհին թուրքական զորքերն, ավերելով Ալաշկերտի հայկական գյուղերը, պաշարում են Բայազետի բերդը: Բայազետի պաշտպանությունը գլխավորում էին 1812 թ. Հայրենական պատերազմում կոփված հրամանատարներ,

գեներալներ Պոպովը և Պանյուտինը: Նրանք իրենց տրամադրության տակ ունեին 1800 զինվոր և 100 հայ կամավորներ: Թշնամին գերազանց ուժերով անընդհատ գրոհում է, բայց պաշտպանները հերոսաբար ետ են մղում: Հինգ օր շարունակ կատաղի մարտեր էին գնում: Միայն այն բանից հետո, երբ քաղաքի մուսուլմանական թաղամասի բնակիչներն անցնում են թշնամու կողմը, թուրքերին հաջողվում է գրավել քաղաքի մի մասը: Հունիսի 20-ի գիշերը կայացած խորհրդակցությունում որոշվում է մինչև վերջ դիմադրել հակառակորդին, չհանձնել քաղաքը: Քաղաքի պաշտպաններն այդ գիշեր իրենց փոքրաթիվ ուժերը կենտրոնացնում են, իսկ դատարկ վրանները թողնում նույն տեղում՝ թշնամուն խաբելու համար: Հունիսի 21-ի առավոտյան ռուսական հրետանին ուժգին կրակ է բացում քաղաք մտած հակառակորդի վրա և ավերում նրա դիրքերը: Թուրքական զորքերը մի քանի անգամ աղմուկ-աղաղակով գրոհում են ռուսների դիրքերը, բայց, ծանր կորուստներ կրելով, ետ են մղվում: Կեսօրին հակառակորդը դուրս է շպրտվում քաղաքից: Բայազետի պաշտպանության ժամանակ շատ ռուս զինվորներ և հայեր աչքի են ընկնում հերոսությամբ: Գեներալ Պանյուտինը ծանր վիրավորված շարունակում է վարել մարտը և սեփական օրինակով ոգեշնչել մարտիկներին: Երիտասարդ հրետանավոր Սելիվանովը նույնիսկ երեք անգամ ծանր վիրավորվելուց հետո չի թողնում հրանոթը, մինչև վերջին շունչը հարվածում է թշնամուն և քաջի մահով ընկնում հրանոթի մոտ: Ռուս զինվորներից ետ չէին մնում հայ մարտիկները, որոնք նույնպես գտնվում էին կրակի առաջին գծում:

Շարադրանքն ավարտելուց հետո ուսուցիչը ներառարկայական կապեր է ստեղծում 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ տեղի ունեցած Շուշիի բերդի պաշտպանության հետ:

Ներառարկայական են կոչվում այն կապերը, որոնք ստեղծվում են տվյալ առարկայի շրջանակներում՝ տարբեր բաժինների, թեմաների, ենթաթեմաների կամ ուսումնասիրվող համապատասխան հարցերի միջև: Հայտնի է, որ պատմության դպրոցական դասընթացի ծրագիրը կազմված է ոչ թե գծային, այլ կոնցենտրիկ սկզբունքով, այսինքն երբ բարձր դասարաններում անդրադառնում ենք ցածր դասարաններում անցածին, բայց ավելի խորացված ու բազմակողմանիորեն: Հետևապես այդ հանգամանքը լայն հնարավորություն է տալիս պատմության ուսուցչին դասի ընթացքում բազմապիսի ներառարկայական կապեր ստեղծելու և կենսագործելու համար, որը մեծապես նպաստում է պատմության ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Այդ կապերն ամենից առաջ նպաստում են

աշակերտների խոր և բազմակողմանի գիտելիքներ ձեռք բերելուն: Պատմության դասերին ներառարկայական կապերի սահմանման գլխավոր խնդիրներն են՝ ապահովել դպրոցականների գիտական մտահորիզոնի հետևողական ձևավորումը, նրանց կողմից հասարակական կյանքի օբյեկտիվ կապերի յուրացումը, հասարակության զարգացման օրինաչափության ընմբռնումը, ինչպես նաև այդ տեսական գիտելիքները ուսումնական և հասարակական պրակտիկայում օգտագործելու կարողությունը: Ներառարկայական կապերը բաժանվում են երկու հիմնական խմբերի՝

1. ժառանգական կամ հետևողական, երբ ներառարկայական կապեր ստեղծելիս հենվում ենք նախկինում ուսումնասիրվածի վրա,

2. Առաջ անցնելով, երբ հենվում ենք այն նյութի վրա, որը պետք է ուսումնասիրվի ապագայում[9]:

Թե՛ ներառարկայական, թե՛ միջառարկայական կապերի իրացման մեթոդական պայմաններն են՝

1) Ուսուցչի նախապատրաստվելը աշխատանքին. Նա պետք է ծանոթանա պատմության դասընթացի բոլոր ծրագրերին, դասագրքերի ու ուսումնական ձեռնարկների բովանդակությանը, կապ հաստատվող նյութի շարադրման տրամաբանությանն ու բնույթին, տերմիններին, հասկացությունների սահմանմանը, հարցերի ու առաջադրանքների համակարգին, նկարներին ու փաստաթղթերին, քարտեզներին, սխեմաներին, քրեստոմատիաներին ու ընթերցանության գրքերին, որոնք լրացնում են դասագրքի բովանդակությունը: Ուսուցիչը կազմում է թեմատիկ օրացուցային պլան պատմության ուսումնասիրվող դասընթացի համար՝ այլ դասընթացների նյութերի հետ բոլոր կապերով: Թեմատիկ օրացուցային պլանը կազմելու համար ուսուցիչը հենվում է պատմության ծրագրերի համապատասխան բաժինների վրա:

2) Այն միջոցների օգտագործումը, որոնք խթանում են ներառարկայական կապերի ստեղծումը: Ուսուցիչը աշակերտներին սովորեցնում է նախկինում յուրացված թեմաների ընդհանրացումը: Ներառարկայական առաջադրանքները գնահատելիս ուսուցիչը պետք է տարբերակի տարբեր պատրաստվածություն ունեցող աշակերտներին[10]:

---

[9] Берельковский И. В., История: Методика преподавания, М. 2001, с. 178.
[10] Берельковский И. В., указ. соч. с. 279.

Ուսուցիչը համառոտ կերպով անդրադառնում է Շուշիի հերոսական պաշտպանությանը.

1826 թ. հուլիսին պարսկական 60 հազարանոց բանակը թագաժառանգ Աբբաս-Միրզայի գլխավորությամբ ներխուժում է Ռուսաստանի սահմանները: Սկսվում է ռուս-պարսկական երկրորդ պատերազմը: Պարսկական բանակի հանկարծակի հարձակումը ծանր դրության է ստեղծում ռուսական զորամասերի և սահմանամերձ բնակչության համար: Հատկապես տուժում են Շիրակի և Փամբակի բնակիչները, որտեղ ավերածություններ էին կատարում Երևանի խանի զորքերը: Հուլիսի 26-ին պարսկական զորքերը պաշարում են Ղարաբաղի Շուշի բերդը: Բերդի կայազորը (1700 հոգի) և այստեղ ապաստանած տեղի բնակիչները դիմում են ինքնապաշտպանության: Պարսիկներն անգլիական մասնագետների գլխավորությամբ ականապատում են բերդի պարիսպները և բազմիցս գրոհում, բայց ապարդյուն: Շուշիի հերոսական պաշտպանությունը տևում է 47 օր և նկատելիորեն ձախողում թշնամու ռազմական պլանները: Բերդի կայազորի պետ գնդապետ Ռեուտի ղեկավարությամբ ռուս զինվորները և հայերը տոկունություն ու քաջություն էին ցուցաբերում: Հայերից շատերը զենքը ձեռքներին մարտնչում էին թշնամու դեմ, արհեստավորները վառոդ էին պատրաստում, կանայք և երեխաները փամփուշտ ու սննդամթերք մատակարարում: Ղարաբաղի հայերն, իրենց քաջարի նախնիների ավանդներին հավատարիմ, հերոսաբար պաշտպանում էին հայրենի հողը:

Ցանկալի է, որ նա հարցերի միջոցով դասարանին ներգրավի անցած նյութի կրկնության մեջ, օրինակ.

1. Ե՞րբ սկսվեց ռուս-պարսկական պատերազմը,
2. Ե՞րբ գրավվեց Երևանի բերդը,
3. Ի՞նչ էր նախատեսվում Թուրքմենչայի պայմանգրով,

Նպատակահարմար է, որ ուսուցիչը ներառարկայական կապերն ավելի ակնառու դարձնելու համար կիրառի համեմատության աղյուսակ.

	ԲԱՅԱԶԵՏ	ՇՈՒՇԻ
Պաշարման տարեթվերը	1829 հունիս	1826 հուլիս
Կայազորի հրամանատարը	Պոպով, Պանյուտին	Ռեուտ
Ռուսական զորքի թիվը	1800	1700
Հայերի մասնակցությունը	100 հայ կամավոր, որոնք գտնվում էին կրակի առաջին գծում:	Հայերից շատերը զենքը ձեռքներին մարտնչում էին թշնամու դեմ, արհեստա-

		վորները վառոդ էին պատրաստում, կանայք և երեխաները փամփուշտ ու սննդամթերք մա-տակարարում:
Հակառակորդի զորքի թիվը	15.000	60.000
Պաշարման տևողությունը	5 օր	47 օր
Նշանակությունը	Ձախողում է թշնամու հա-կառակորդի պլանները	Նկատելիորեն ձախողում է թշնամու ռազմական պլանները

ՆԵՐԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ. Դպրոցում պատմության դասավանդման պրակտիկան ցույց է տալիս, որ պատմության դասն ավելի հետաքրքիր ու արդյունավետ է լինում այն դեպքում, երբ ուսուցիչը ստեղծում ու կենսագործում է ներառարկայական կապեր: Այսպիսով, եթե ընդհանրացնենք, պետք է փաստենք, որ ներառարկայական կապերով ու հարցադրումներով ոչ միայն ստուգվում են աշակերտների գիտելիքները, այլև դրանք նպաստում են նոր նյութը ավելի լավ հասկանալուն: Ուսուցման այս ձևի առավելությունը, նախ և առաջ այն է, որ մի ընդհանուր համակարգի է բերում տարբեր դասարաններում անցած նյութերը:

Ժամանակակից դպրոցը պահանջում է, որ ուսուցիչը ստեղծագործող լինի, որոնի դասի կազմակերպման, նրա արդյունավետության բարձրացման նոր ձևեր ու եղանակներ: Վերը շարադրվածից դժվար չէ եզրակացնել, որ դրանցից մեկն էլ դասի ընթացքում ներառարկայական կապերի ստեղծումն ու օգտագործումն է: Վերլուծելով և ընդհանրացնելով պատմական փաստերն ու երևույթները՝ աշակերտների մեջ դաստիարակում ենք ճիշտ, հիմնավորված ու իրականությանը համապատասխանող դատողություններ և եզրահանգումներ անելու կարողություններ[11]:

Այսպիսով, ուսուցիչն ամփոփում է դասի երկրորդ հատվածը և անցում է կատարում թեմայի երրորդ բաժնի ուսումնասիրությանը:

[11] Берельковский И. В., указ. соч. с. 279-281.

ԳԼՈՒԽ III

Պատմական վավերագրերի օգտագործումը «Ադրիանապոլիսի պայմանագիրը: Արևմտահայերի գաղթը» թեման ուսուցանելիս:

Թեմայի այս բաժինը ցանկալի է ուսումնասիրել պատմական վավերագրերի և փաստաթղթերի օգտագործման մեթոդով:

Պատմության դասավանդման ժամանակ որպես գիտելիքների աղբյուր հանդես են գալիս մարդիկ, գրքերը, նկարները, կինոֆիլմերը, կենցաղի առարկաները և այլն: Թյուրիմացությունից խուսափելու համար առաջին հերթին անհրաժեշտ է պարզաբանել «պատմական աղբյուրներ» և «աշակերտի պատմական գիտելիքների աղբյուրներ» հասկացությունների տարբերությունները: Առաջինը, որը ընդունում է պատմական գիտությունը, նշանակում է վավերագրական սկզբնաղբյուր, որոնց հիման վրա պատմաբանները բացահայտում և ստուգում են պատմական փաստերը: Այս նույն իմաստով էլ «պատմական աղբյուրներ» հասկացությունը օգտագործվում է դասավանդման մեթոդիկայի կողմից: Մեթոդական գրականության մեջ դրանք անվանվում են սկզբնաղբյուր: «Պատմական գիտելիքների աղբյուրները» մանկավարժական հասկացություն է: Սա շատ ավելի լայն հասկացություն է, քան առաջինը և իր մեջ բացի սկզբնաղբյուրից ներառում է նաև այնպիսի աղբյուրներ, որոնք պարունակում են գիտության կողմից մշակված և համակարգված գիտելիքներ:

Սկզբնաղբյուրները հանդիսանում են դասավանդման ժամանակ օգտագործվող պատմական գիտելիքների աղբյուրներից մեկը: Դպրոցականների համար, որպես պատմական գիտելիքների աղբյուրներ, բացի ուսուցիչը և դասագիրքը, ծառայում են նաև պատմական ինֆորմացիայի այլ կրողներ՝ թանգարանները, փաստագրական և խաղարկային ֆիլմերը, հուշարձանները, թերթերը և այլն: Սրանցից աշակերտները պատմական գիտելիքներ են ձեռք բերում ինչպես դասավանդման պրոցեսում, այնպես էլ դրանից դուրս:

Պատմական գիտելիքների աղբյուրները մեթոդական գրականության մեջ սովորաբար խմբավորում են ըստ արտաքին հատկանիշների. այսինքն թե նրանց մեջ պարունակվող ինֆորմացիան ինչ ձևով է ազդում մեր զգայարանների վրա: Տարբերակում են բանավոր շարադրանքը, տեքստը և դիտազննության պարագաները: Այս մեծ խմբերն էլ իրենց հերթին բաժանվում են ավելի

մասնավորների: Պատմական գիտելիքների աղբյուրների դասակարգումը օգնում է դասավանդման ժամանակ մեթոդապես ճիշտ որոշել բազմաբնույթ աղբյուրների ընտրության և օգտագործման կարգը: Ելնելով վերը նշվածից, պատմական գիտելիքների աղբյուրները բաժանվում են հետևյալ հիմնական խմբերի՝

1. վավերագրական պատմական աղբյուրներ (սկզբնաղբյուրներ)
2. գիտականորեն մշակված գիտելիքներ պարունակող աղբյուրներ, որոնց մեջ շարադրված են համակարգված փաստեր իրենց բացատրություններով և գնահատականներով
3. արվեստի միջոցով անցածը վերականգնող աղբյուր[12]:

Սկզբում ուսուցիչը ներկայացնում է Ադրիանապոլսի պայմանագիրը՝ օգտագործելով պայմանագրի տեքստը:

Ռուս-թուրքական պատերազմն ավարտվում է Ռուսաստանի հաղթանակով: 1829թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում կնքվում է հաշտության պայմանագիր: Պայմանագրի համաձայն Սև ծովի արևելյան ափերը Փոթի նավահանգստով, և Ախալցխան ու Ախալքալաքը անցնում են Ռուսաստանին[13]: Ներում է շնորհվում պատերազմին մասնակցած երկու կողմերի հպատակներին և ռազմագերիներին[14]: Թուրքիայի տիրապետության տակ գտնված հայերին թույլատրվում է գաղթել ռուսական պետության սահմանները: Պատերազմող կողմերի միջև վերականգնվում են դիվանագիտական հարաբերությունները[15]:

Անհրաժեշտության դեպքում ուսուցիչը կարող է մանրամասնորեն ներկայացնել Ադրիանապոլսի պայմանագրի բովանդակությունը:

Այդ պայմանագրով ամրապնդվում էին Ռուսաստանի դիրքերը Սև ծովում, Բալկաններում և Անդրկովկասում: Սակայն Ադրիանապոլսի պայմանագիրն ամենևին չարդարացրեց հայերի հույսերը, նրանց արդարացի ցանկությունները: Արևմտահայերը ձգտում էին թոթափել թուրքական լուծը և վերամիավորվել իրենց արևելահայ եղբայրների հետ: Դա չիրականացավ Ռուսաստանի հակառակորդ եվրոպական մեծ պետությունների քաղաքականության հետևանքով: Նրանց ճնշման տակ Ռուսաստանը հարկադրված էր Թուրքիային վերադարձնել Կարսը, Արդահանը, էրզրումը, Մուշը, Բայազետը և գրաված մյուս

[12] Âàãèí À. À., указ. соч ., с. 201.
[13] Хрестоматия по истории СССР, пособие для учителей, М. 1941, с.475.
[14] Там же, с. 476.
[15] Там же, с. 476-478.

շրջանները: Այլ խոսքով, Արևմտյան Հայաստանի մեծագույն մասը մնաց օսմանյան տիրապետության տակ: Ադրիանապոլսի պայմանագիրը արևմտահայերին դնում էր ծանր կացության մեջ: Նրանք կա՛մ պետք է մնային իրենց վայրերում, շարունակելով կրել թուրքական լուծը, կա՛մ թողնեին իրենց բնակավայրերը և անցնեին Ռուսաստանի տիրապետության տակ: Պասկևիչը ևս դժգոհ մնաց, երբ իմացավ, որ զենքի ուժով իր գրաված տարածքները վերադարձվելու են Թուրքիային: Դեռևս մինչև գաղթի թույլտվություն ստանալը, հայերից շատերը ռուս զորքի հետ մեկնում էին: Իսկ երբ ստացվում է պաշտոնական հրահանգը, ծայր է առնում հայերի զանգվածային գաղթը դեպի ռուսական սահմանը: 1829-1830թթ. Էրզրումից, Կարսից, Բայազետից գաղթում և ռուսական տիրապետության տակ են անցնում 75-80 հազար հայեր: Էրզրումից գաղթողները հիմնականում հաստատվում են Ախալցխայում և Ախալքալաքում, կարսեցիները՝ Շիրակի ե Թալինի շրջաններում, բայազետցիք՝ Սևանա լճի ավազանում: Ներգաղթողները 6 տարով ազատվում էին հարկերից: Կարիքավոր ընտանիքներին դրամական նպաստ էր տրվում: Եկվորները գյուղացիներ, արհեստավորներ և առևտրականներ էին: Երկրագործները բնակեցվում էին գյուղերում, պետական հողերի վրա, իսկ արհեստավորներն ու առևտրականները՝ քաղաքներում կամ քաղաքատիպ վայրերում: Նրանք, հաղթահարելով դժվարությունները, սկսեցին մշակել ամայի հողերը, այգիներ գցեցին, ջրանցքներ ու ճանապարհներ շինեցին, կենդանություն տվեցին հին ու նոր բնակավայրերին: Արևելահայերի և արևմտահայերի ներգաղթը խոշոր նշանակություն ունեցավ Արևելյան Հայաստանի գյուղատնտեսության, արհեստների և առևտրի զարգացման համար:

Այս թեման լայն հնարավորություն է տալիս ստեղծել նաև ներառարկայական կապեր և Ադրիանապոլսի պայմանագիրը համեմատության մեջ դնել Թուրքմենչայի պայմանագրի կամ մեկ այլ պայմանագրի հետ: Բացի այդ, ուսուցիչը հնարավորություն ունի Ադրիանապոլսի պայմանագրին անդրադառնալու 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմն ուսումնասիրելու ժամանակ:

Ուսուցիչը կարող է համառոտ կերպով, եթե ժամանակը բավականացում է, ներկայացնել պատմական աղբյուրների տեսակները և դրանց գործնական նշանակությունը.

Վավերագրական պատմական աղբյուրներ[16]

Պատմական գիտության մեջ, ինչպես նաև պատմության դասավանդման

[16] Вагин А. А., указ. соч ., с. 202-208

ժամանակ սկզբնաղբյուրները աչքի են ընկնում մեծ բազմազանությամբ: Այդ բազմազանությունը վերաբերում է թե՛ սկզբնաղբյուրում արտացոլված ժամանակաշրջանի մասին տեղեկությունների պահպանման ձևին, թե՛ լեզվին, որով շարադրվում են այդ տեղեկությունները: Այս բազմազանությունը պահանջում է մանրամասն հաշվարկել սկզբնաղբյուրների կրթական-դաստիարակչական հնարավորությունները և մեթոդապես ճիշտ կիրառել դրանք:

Խոսքով արտահայտված սկզբնաղբյուրներ[17]

Բացառություն այն ժամանակաշրջանի և հիմա չի եղել, պատմության ճանաչողության համար մեծ նշանակություն են ձեռք բերում գրավոր սկզբնաղբյուրները: Իրենց բովանդակությամբ սկզբնաղբյուրները բաժանվում են մի քանի տեսակների. Պետա-իրավական փաստաթղթերը (սահմանադրություններ, օրենքներ, դատական որոշումներ) հարուստ ինֆորմացիա են պարունակում պետական կարգի, պետության դասակարգային բնույթի և այլ հարաբերություններ մասին: Ներքաղաքական բնույթի փաստաթղթերը (կուսակցությունների ծրագրերը, քաղաքական ճառերն ու հոդվածները, պամֆլետները) բացահայտում են դասակարգերի նպատակներն ու գաղափարախոսությունը, քաղաքական պայքարի ձևերն ու մեթոդները: Միջպետական բնույթի փաստաթղթերը (պայմանագրերը, դիվանագիտական գրագրությունները) ծառայում են որպես աղբյուրներ միջազգային հարաբերությունների մասին գիտելիքների համար: Տնտեսական փաստաթղթերը (առք ու վաճառքի ակտերը, տնտեսական պայմանագրերը, գործարար գրագրությունները) ծանոթացնում են արտադրողական ուժերի զարգացման մակարդակին և հասարակության սոցիալական կառուցվածքին: Գիտական-փիլիսոփայական աշխատանքները, որոնք լուսաբանում են ուսումնասիրվող ժամանակաշրջանի գիտության և գաղափարախոսության զարգացվածության մակարդակը, դասավանդման ժամանակ սովորաբար օգտագործվում են շատ համառոտ շարադրանքի ձևով, որը կարելի է համատեղել ստեղծագործություններից ոչ մեծ հատվածների ընթերցանությամբ: Դիցաբանությունը, կրոնական բնույթի նյութերը հարուստ ինֆորմացիա են տալիս գաղափարախոսության և հասարակական հարաբերությունների մասին: Հուշագրությունները և նկարագրական ստեղծագործությունները. դրանք տարեգրություններն են, ժամանակագրությունները,

[17] Там же.

պատմական իրադարձությունների ականատեսների կամ մինչև մեր ժամանակները չպահպանված աղբյուրներից օգտված մարդկանց պատմական աշխատությունները, իրադարձությունների մասնակիցների կամ ականատեսների նամակներն ու հուշերը, երկրների և քաղաքների աշխարհագրական նկարագրությունները, ժողովրդագրական նկարագրությունները: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի գեղարվեստական գրականության ստեղծագործությունները, որոնք այս կամ այն իրադարձության նկատմամբ արտացոլում են հեղինակի անմիջական տպավորությունները, պատկերում են տվյալ ժամանակաշրջանի ընդհանուր կոլորիտը և պարունակում են պատմական գործիչներիկ բնութագրումները: Այդ ստեղծագործությունների որոշ մասը իրենց բնույթով մոտ են հուշագրությունների մակարդակին: Թևավոր խոսքերը և պատմական գործիչների ասույթները. մեծ մասամբ դրանք արտացոլում են իրական պատմական երևույթներն ու իրադարձությունները: Իրոք հանդիպում են թևավոր խոսքերը, որոնք զարմանալի ճշտորեն արտահայտում են պատմական երևույթների էությունը: Իրենց կարճության և արտահայտչականության շնորհիվ դրանք հեշտ են մտապահվում և օգնում են լավ հասկանալ ու մտապահել իրենց հետ կապված փաստերն ու գնահատականները: Տոպոնիմիկա - տեղանքի, գետերի, լճերի, քաղաքների, փողոցների անվանումները, որոնք հանդիսանում են ցեղերի և ժողովուրդների տարածվելու և գաղթի, արտադրության պատմության և այդ վայրերում տեղի ունեցող իրադարձությունների վկաներ: Տեղանունների բացատրությունը հատկապես կարևորվում է երկրամասի պատմությունը ուսումնասիրելու ժամանակ: Օբյեկտիվով պատկերված փաստաթղթեր - լուսանկարչության, կինոմատոգրաֆի, հեռուստատեսության և տեսամագնիտոֆոնի հայտնագործումն ու զարգացումը ստեղծել են փաստաթղթերի նոր տեսակներ, որոնց թիվը և նշանակությունը գնալով ավելի է մեծանում: Լուսանկարչական և կինոօբյեկտիվները պատմական իրականությունը պատկերում են այնպես, ինչպես այն կա իրականում (բացառությամբ այն դեպքերի, երբ իրականությունը գիտակցաբար կեղծվում է): Եվ դա ի տարբերություն նկարչի, որը կյանքը պատկերում է այնպես, ինչպես ինքն է պատկերացնում, կամ այնպես, ինչպես որ ուզում է, որ տեսնեն ուրիշները: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի կիրառական արվեստի ստեղծագործությունները պարունակում են հարուստ և բազմակողմանի ինֆորմացիա այն ժամանակաշրջանի մասին, որում դրանք ստեղծվել են: Այն

ժամանակաշրջանների մասին, որոնցից մեզ գրավոր սկզբնաղբյուրներ չեն հասել, կամ հասել են շատ սահմանափակ թվով, պատմությունը որպես գիտության դասավանդվող առարկա, կիրառական արվեստի նմուշներից քաղում է շատ արժեքավոր տեղեկություններ հասարակության կյանքի՝ արտադրության կազմակերպման, դասակարգային հարաբերությունների, կենցաղի, ռազմական պատմության մասին: Երևակայական էակների և ամբողջական գործողությունների պատկերում կիրառական արվեստի նմուշների վրա բացահայտում են մարդկանց պատկերացումները աշխարհի մասին, և նրանց կրոնական հայացքները: Այդ ստեղծագործությունները իրենց մեջ պարունակում են նաև իրական կյանքի տարրեր: Գրավոր աղբյուրների թվի ավելացմանը զուգընթաց, առավել ևս լուսանկարչական և կինոյի հայտնվելով, կիրառական արվեստի ստեղծագործությունների դերը, որպես հասարակության նյութական կյանքի ուսումնասիրման միջոց, նվազում է: Բայց բոլոր ժամանակաշրջանների համար կիրառական արվեստի ստեղծագործությունների դերը՝ որպես սկզբնաղբյուր պահպանվում է: Դա վերաբերում է հատկապես հասարակության հոգևոր կյանքը ուսումնասիրելուն: Ինչպես գրականությունը և երաժշտությունը, այնպես էլ կիրառական արվեստի ստեղծագործությունները հանդիսանում են որպես մշակույթի պատմության ուսումնասիրության սկզբնաղբյուր: Սատիրիկ բնույթի ստեղծագործությունները, չնայած ճշտությամբ չեն արտահայտում պատմական իրականությունը, բայց երգիծանքի միջոցով արտահայտիչ կերպով բացահայտում են երևույթների էությունը, ներկայացնում են դասակարգերի և կուսակցությունների պայքարը: Ժամանակաշրջանը բնութագրող փաստաթղթեր են հանդիսանում նաև քաղաքական պլակատները: Գեղանկարչական և քանդակագործական դիմանկարները սերունդների համար ոչ միայն պահպանում են պատմական գործիչների արտաքին տեսքը, այլ հաճախ նաև արտացոլում են նրա մարդկային բնութագիրը: Պրակտիկ նշանակություն ունեցող առարկաները (իրեր, շինություններ) իրենց մեջ պարունակում են հասարակական կյանքի տարբեր կողմերի նկարագրություններ: Դրանք բացահայտվում են այդ առարկաների նշանակությունը պարզաբանելու միջոցով: Պրակտիկ նշանակություն ունեցող առարկաները հատկապես մեծ նշանակություն են ձեռք բերում նախագրային շրջանի պատմության դասավանդման ժամանակ: Պրակտիկ նշանակություն ունեցող առարկաների օգտագործման արդյունավետությունը՝ որպես պատմական

գիտելիքների աղբյուր, կտրուկ աճում է, երբ դրանք ուսումնասիրվում են ոչ թե առանձին-առանձին, այլ համակցված, մեկը մյուսի հետ կապի մեջ: Օրինակ, հին բնակավայրի մնացորդները բացահայտում են արտադրական կյանքի, հասարակական հարաբերությունների, սովորույթների, հաճախ նաև մարդկանց ճակատագրերի համարյա լրիվ պատկերը: Տարբեր ժամանակաշրջանների առարկաների համեմատությունը հնարավորություն է տալիս հետևել հասարակական կյանքի զարգացման առանձին կողմերին, թույլ է տալիս բացահայտել կամ հստակեցնել հասարակության դասակարգային սահմանազատումը: Պրակտիկ նշանակություն ունեցող առարկաների նշանակությունը ընկալելու որակը մեծապես կապված է աշակերտներին՝ նրանց հետ ծանոթացնելու կարողությունից:

Գիտականորն մշակված պատմական գիտելիքներ պարունակող աղբյուրներ[18].

Պատմության դպրոցական դասավանդման ժամանակ գիտականորեն մշակված և համակարգված գիտելիքներ պարունակող աղբյուրների հետ աշխատանքը հանդիսանում է որպես հիմնական միջոց: Միայն սա կարող է ապահովել սովորողների կողմից գիտելիքների համակարգի յուրացումը: Բացի այդ, նման աղբյուրների հետ աշխատանքը նպաստում է գրքերի և հասարակական գիտությունների վերաբերյալ հոդվածների հետ աշխատելու կարողությունների ձևավորմանը, դասախոսությունները ընկալելուն, պատմական նյութը հետևողականորեն և տրամաբանորեն շարադրելուն, դատողություններն ու եզրահանգումները փաստարկելուն և հիմնավորելուն: Գիտականորեն մշակված և համակարգված գիտելիքները դասավանդման ժամանակ շարադրվում են տպագիր և բանավոր ձևով: Որպես գիտականորեն մշակված գիտելիքների փոխանցման միջոց օգտագործվում են աղյուսակները: Նրանց մեջ ուսումնական նյութը խմբավորվում է հորիզոնական կամ ուղղահայաց սյունակներով: Պատմության դասավանդման ժամանակ օգտագործվող աղյուսակները իրարից տարբերվում են իրենց բացահայտած կապերի և երևույթների միջև հարաբերությունների բնույթով: Ժամանակագրական աղյուսակները փաստերը խմբավորում են իրենց ժամանակագրական հարաբերությունների հիման վրա: Թեմատիկ աղյուսակներում բերված են բնույթով իրար նման փաստեր: Օրինակ՝ պատերազմները,

[18] Вяаземский Е., Методика преподавания истории в школе, М. 2001., с. 98-110.

ապստամբությունները, գիտական հայտնագործությունները և այլն, միաժամանակ ցույց են տրված յուրաքանչյուր փաստի ամենաէական հատկանիշները: Համեմատության աղյուսակները ներկայացնում են պատմական երևույթների էական նմանություններն ու տարբերությունները, և համեմատության մեջ են դնում դրանք մեկը մյուսի հետ: Օրինակ, համեմատության մեջ են դնում դասակարգերը, պետական կառուցվածքի ձևերը, հասարակական տնտեսական ֆորմացիաները և այլն: Զարգացման աղյուսակները բացահայտում են քանակական կամ որակական փոփոխությունները, առանձին պատմական երևույթների զարգացումը: Ի տարբերություն համեմատության աղյուսակների, սրանց մեջ ոչ թե ներկայացվում են տարբեր երևույթներ, այլ ներկայացվում է մի երևույթ՝ զարգացման տարբեր փուլերում: Համապատասխանության աղյուսակները արտացոլում են պատմական երևույթների միջև գոյություն ունեցող բազմաբնույթ կապերն ու հարաբերությունները: Օրինակ, ամբողջը և նրա մասերը, երևույթը և նրա էական նշանը, պատճառը և նրա հետևանքները: Այդպիսին են օրինակ այն աղյուսակները, որոնք ցույց են տալիս դասակարգերի և նրանց շահերն արտահայտող քաղաքական կուսակցությունների հարաբերությունները: Պատմության դասավանդման ժամանակ տպագիր աղյուսակների հետ մեկտեղ օգտագործվում են ուսուցչի կողմից կազմած աղյուսակներ, որոնք պատկերվում են գրատախտակին: Աղյուսակի տարատեսակ են նաև դիագրամաները, որոնք ցույց են տալիս քանակական հարաբերությունները առանձին երևույթների կամ միևնույն երևույթի զարգացման տարբեր փուլերի միջև:

Վերջաբան

Այսպիսով, ամփոփելով աշխատանքը կարող ենք փաստել, որ պատմության դպրոցական դասավանդման ընթացքում տարատեսակ մեթոդների և հնարների օգտագործումը նպաստում է ուսումնական նյութը լավագույն կերպով յուրացնելուն, պատմական փաստերի ու իրադարձությունների դերն ու նծանակությունն ընկալելուն:

Դասավանդման ժամանակ քարտեզագրական ձեռնարկների օգտագործումը հնարավորություն է տալիս զարգացնել սովորողների տարածական պատկերացուները, նրանք հնարավորություն են ստանում տեսնել այն աշխարհագրական միջավայրը, որտեղ տեղի են ունեցել ուսումնասիրվող պատմական իրադարձությունները: Ավելի լավ են պատկերացնում ռազմական գործողությունների ընթացքը, դրանց ժամանակ զորավարների կիրառած մարտավարության առանձնահատկությունները:

Կարևոր է միայն, ինչպես նշվեց վերևում, որ քարտեզների հետ աշխատանքը կրի պարբերական բնույթ:

Ինչպես տեսանք պատմության դասավանդման ժամանակ կարևոր նշանակություն ունի նաև ներառարկայական կապերի ստեղծումն ու կիրառումը: Պատմության դասերին ներառարկայական կապերի օգտագործումը հին ու նոր նյութերը կապում է իրար հետ և պայմաններ ստեղծում լավ հասկանալու նորը, ընկալելու պատմական զարգացման օրինաչափությունները: Զարգացնում է աշակերտների ստեղծագործական մտածողությունը: Այդպիսի դասերը թարմություն ու հետաքրքրություն են առաջացնում, վերացնում դասավանդման միօրինակությունը:

Խոսք չկա, որ պատմության դասերն առավել հետաքրքիր և արդյունավետ են անցնում, երբ ուսուցիչը դասավանդման ժամանակ օգտագործում է պատմական փաստաթղթեր և վավերագրեր: Նման դասերին աշակերտն իրեն զգում է որպես հետազոտող-գիտնական, ավելի մեծ հետաքրքրություն է ցուցաբերում առարկայի նկատմամբ: Բացի այդ նման ձևով սովորողին հնարավորություն է տրվում կատարել ինքնուրույն վերլուծություններ և եզրահանգումներ:

Օգտագործված գրականություն

1. Հայոց պատմություն, դասագիրք 8-րդ դասարանի համար, Երևան 2018:
2. Вагин А. А., Методика преподавания истории в средней школе, М., 1968
3. Короткова М. В., Наглядность на уроках истории, М. 2000
4. Берельковский И. В., История: Методика преподавания, М. 2001.
5. Вяаземский Е., Методика преподавания истории в школе, М. 2001.
6. Хрестоматия по истории СССР, пособие для учителей, М. 1941.

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը և Բաթումի պայմանագիր

Կատարող՝ Աիդա Աղաբաբյան

Ստուգող՝ Սամվել Աղաջանյան

Վանաձոր 2022թ.

Բովանդակություն

1. Ներածություն
2. Հայաստանի Հանրապետության հռչակումը
3. Բաթումի հաշտության պայմանագիրը
4. Իշխանության մարմինների ստեղծումը
5. Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը
6. ՀՀ զինված ուժերի կազմակերպումը
7. Հայ-վրացական ընդհարումները 1918թ
8. Մարդասիրական օգնություններ Հայաստանին
9. Կրթական-մշակութային ձեռնարկումները
10. Վերջաբան
11. Թեմայի դասավանդման մեթոդիկա
12. Օգտագործված գրականություն

Նախաբան

XIII-XIV դարերում հայկական պետականության անկումից հետո սկսվեց մեր պատմության ամենատևական և ամենածանր ճգնաժամը: Վեցդարյա մաքառումներից ու ցեղասպանության ենթարկվելուց հետո մեր ժողովուրդը կրկին ուժ գտավ իր մեջ և կարողացավ վերականգնել անկախ պետականությունը:

1918 թ. սկզբին, օգտվելով պատեհ հնարավորությունից, թուրքերը նոր արշավանք սկսեցին Հայաստանի դեմ, որի հաջողության դեպքում նրանք կիրականացնեին նաև արևելահայության ցեղասպանություն: Հայությունն ուժերի գերլարումով 1918 թ. մայիսյան հերոսամարտերում (Սարդարապատ, Բաշ Ապարան, Ղարաքիլիսա) կասեցրեց թուրքերի հարձակումը: Դրանով ոչ միայն արևելահայությունը փրկվեց ցեղասպանության ենթարկվելուց, այլև դրվեցին հայկական պետականության վերականգնաման հիմքերը:

1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայստանի անկախությունը: Անկախության հռչակագրում Թիֆլիս Հայոց ազգային խորհուրդը (նախագահ՝ Ավետիս Ահարոնյան) հայտարարեց իր իշխանությունը Կովկասի բոլոր հայկական գավառների նկատմամբ: Սկսվեց Հայաստանի պատմության նոր՝ հանրապետական դարաշրջան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Անդրկովկասի անկախության հռչակումից հետո(1918թ. Ապրիլի22) Ե.Գեգեչկորին հրաժարական տվեց և կազմվեց նոր կառավարություն՝Ա.Չխենկելիի գլխավորությամբ: Սեյմը որոշել էր թուրքերի հետ Տրապիզոնում ընդհատված հաշտության բանակցությունները շարունակել Բաթումում: Բաթումի հաշտության կոնֆերասին մասնակցելու համար կազմվեց Անդրկովկասյան նոր պատվիրակություն հետևյալ կազմով.

Ա.Չիննկելի՝նախագահ, Ն.Նիկոլաձե, Ա.Խատիսյան, Հ.Քաջազնունի, Մ.Հաջինսկի, Խան-Խոյսկի: Գեներալ Գ Ղորղանյանը, Ս Վրացյանը և ուրիշներ նշանակվեցին խորհրդականներ:

Բաթումի կոնֆերասին հանդիսավոր բացումը տեղ ունեցավ1918 թ. Մայիսի 11-ին:Թուրքերի կողմից կոնֆերանսին մասնակցում էին՝ Խալիլ բեյը,Վեհիբ փաշան և ուրիշներ: Նախագահում էր Խալիլ բեյը:

Ա.Չխենկելին առաջարկեց իբրև բանակցությունների հիմք ընդունեն Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը,սակայն Խալիլ բեյը վճռականորեն մերժեց այդ առաջարկը,պատճառաբանելով, որ Տրապիզոնի բանակցությունների խզումից հետո նոր դեպքեր են տեղի ունեցել՝պատերազմ է տեղի ունեցել՝ Թուրքիայի և Անդրկովկասի միջև,արյուն է հոսել, ուստի այլևս անկարելի է գոհանալ Տրապիզոնում ներկայացված պայմաններով: Այնուհետև Խալիլ բեյը Չխենկելիին հանձնեց մի կնքված ծրար, որի մեջ Թուրքիայի և ԱԴՖՀ միջև կնքվելիք հաշտության պայմանագրի նոր նախագիծը: Դրանով էլ Բաթումի խորհրդաժողովի առաջին ու վերջին նիստն ավարտվեց:

Ներկայացված նախագիծը բաղկացած էր 12 հոդվածներից, 3 հավելվածներից և սարսափելի ծանր պայմաններ էր պարունակում ամբողջ Անդրկովկասի, Վրաստանի և, մանավանդ, Հայաստանի համար: Վրաստանից գրավվում էր Բաթումի շրջանը՝նավահանգստով, Ախալցխայի գավառը: Հայաստանի խլվում էր Ալեքսանդրապոլը, Ախալքալաքը, Շիրակի, Էջմիածնի գավառների մեծ մասը, Սուրմալուն, Ալեքսանդրապոլ-Կարս և Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին: <<Հայաստան փաստորեն չեր մնում,-գրում է Ս. Վրացյանը, -հայերին թողնվում էր հազիվ 11.000 քառակուսի վերստ լեռնոտ տարածություն Արագածի և Սևանա լճի միջև: Հողային պայմաններին զատ դրվում էին և չափազանց ծանր տնտեսական,առևտրական,ռազմագիտական և այլ պահանջներ>>: (**Ս. Վ.,էջ 119**)

Հայ ժողովրդի մղած Մայիսյան հերոսամարտերից հետո պարզ դարձավ, որ Անդրկովկասը արա քայլերով գնում է դեպի քայքայում, որովհետև օրեցօր սաստկանում էին հակամարտությունները վրացիների,ադրբեջանցիների ու հայերի միջև :

Վրացիները որոնում էին գերմանացիների հովանավորությունը և գաղտնի բանակցություններ էին վարում նրանց հետ,ադրբեջանցիները բռնել էին թուրքերի փեշից և քաշում էին դեպի Բաքու,որն այդ օրերին բոլշևիկների ձեռքին էր: Հայերը մնացել էին մենակ և օրհասական կռիվ էին մղում առաջ շարժվող թուրքական զորքերի դեմ:

1918 թ. մայիսի 26-ին Բաթումում Խալիլ բեյը Չխենկելուն հանձնեց վերջնագիր,որով պահանջվում էր 72 ժամվա ընթացքում պատասխանել երկու շաբաթ առաջ իրենց ներկայացրած հաշտության նախագիծն ընդունել կամ

չընդունելու մասին: Նույն օրը՝1918 թ. մայիսի 26-ին,Թիֆլիսում գումարվեց Սեյմի վերջին,ողբերգական նիստը,որը վրացիների մնդմամբ ընդունեց հետևյալ բանաձևը. <<Նկատի ունենալով, որ պատերազմի և խաղաղության խնդրում երևան եկան հիմնական տարակարծություններ Անդրկովկասի անկախ հանրապետությունը կազմող ազգերի միջև,որով անհնար է դառնում ամբողջ Անդրկովկասի համար մի հեղինակավոր իշխանության գոյությունը,Սեյմը արձանագրում է Անդրկովկասի քայքայման փաստը և հայտարարում չեղյալ իր լիազորությունները>>(Ս.Վ. էջ 159) 1918 թ. մայիսի 26-ի կեսօրին Սեյմը ցրվեց,իսկ հինգ ժամ անց,նույն սրահում գումարվեց Վրաց ազգային խորհրդի նիստը՝Նոյ Ժորդանիայի նախագահությամբ,որը հանդիսավորապես հռչակեց Վրաստանի անկախությունը: <<Իրականացավ համառ պայքարով,անթիվ զոհերով ու զրկանքներով: Հայկական պետականության վերականգնումը հայ ժողովրդի մեծագույն հաղթանակն էր, բեկումնային իրադարձություն նրա կյանքում, բազմադարյան պատմության մեջ>>

(Հրանտ Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 256):Արխիվային նորահայտ մի փատաթղթի հիման վրա Հ.Ավետիսյանը գրում է,որ Հայաստանի պետականության վերականգման և Հայաստանի Հանրապետության ստեղծման փաստը ի լուր ամբողջ աշխարհի հայտնել են Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ա.Ահարոնյանը, վարչապետ Հ.Քաջազնունին, արտաքին գործերի նախարար Ա.Խատիսյանը՝ հետևյալ հակիրճ ու հստակ ծանուցմամբ. <<Անդրկովկասյան հանրապետության կազմալուծումից հետո Հայոց Ազգային խորհուրդը,այն իրավունքերի հիման վրա,որով նրան լիազորել է հայ ժողովուրդը, 1918 թվականի մայիսի 28-ին որոշեց հռչակել հայկական պետության

անկախությունը, հիմնեց Հայկական ժողովրդավարական Հանրապետություն>>

(Հրանտ Ավետիսյան, նշվ. աշխ.,էջ 257):

ՀՀ խորհրդանիշները

ԲԱԹՈՒՄԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Մեր Հայրենիք, ազատ անկախ,
Որ ապրել է դարե դար
Իր որդիքը արդ կանչում է
Ազատ, անկախ Հայաստան....

Հայոց Ազգային խորհրդի պատվիրակներ Ա. Խատիսյանը (պատվիրակության նախագահ),Հ.քաջազնունին և Մ. Պապաջանյանը Բաթում հասան 1918 թ. մայիսի 30-ին և նույն օրն էլ, երեկոյան ժամը 5-ին,սկսվեցին բանակցություններ հայկական և օսմանյան պատվիրակությունների միջև:Մի շարք նիստերից հետո կողմերը եկան համաձայնության և 1918 թ. հունիսի 4-ին ստորագրվեց <<Հաշտության և բարեկամության պայմանագիր Օսմանյան կայսերական կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև>>,երեք հավելվածներ,որոնք վերաբերում էին տրանզիտին,սահմանակից շրջաններում առևտրին,կրոնական ազատություններին և մեկ համաձայնագրի՝երկաթուղային գույքի բաշխման մասին:Թուրքական կողմից այն ստորագրեցին պետական խորհրդի նախագահ Խալիլ բեյը և Կովկասյան

ռազմաճակատի օսմանյան զորքերի գլխավոր հրամանատար,գեներալ-լեյտենանտ Վեհիբ Մահմեդ փաշան,հայկական կողմից՝ Ա Խատիսյանը, Հ. Քաջազնունին և Մ. Պապաջանյանը: Դա առաջին միջազգային փաստաթուղթն էր,որ ստորագրում էին անկախ ՀՀ-ան ներկայացուցիչները:



Բաթումի հիմնական դաշնագիրը բաղկացած էր 14 հոդվածներից:Առաջին հոդվածն արձանագրում էր,որ Օսմանյան կայսերական կառավարության և ՀՀ կառավարության միջև հաստատվում է հաշության և մշտական բարեկամություն:

Երկրորդ հոդվածը գծում էր հայ-թուրքական սահմանը:Թուրքիային էին անցնում ոչ միայն Արևմտյան Հայաստանը,այլևս Արևելյան Հայաստանի տարածքի զգալի մասը՝ Շարուր-Դարալագյազը, Նախիջևանը, Սուրմալուն, Կարսը, Կաղզվանը, Սարիղամիշը, Ախալքալաքը, Լոռին: Հայաստանը բաղկացած էր լինելու Նոր Բայազետի գավառից, Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսիայի գավառների մի մասից՝ ընդամենը 9.000 քառակուսի վերստ (մոտ 11.000 քառակուսի կիլոմետր)տարածություն: Պետական սահմանն անցնում էր Երևանից 7 կիլոմետր հեռավորության վրա: Ըստ ակադեմիկոս Հ. Ավետիսյանի հաշվումների՝ Թուրքիան հայերին էր <<հատկացնում ամբողջ Անդրկովկասի տարածքի 5 տոկոսը, որտեղ բնակում էր ընդամենը 310 հազար մարդ, որից էլ հայեր՝ 230 հազար: Մինչդեռ Վրաստանին տրվում էր երկրամասի տարածքի 33 տոկոսը՝ 61.000 կմ քառակուսի, Ադրբեջանին՝ 38 տոկոսը՝ 70.000 կմ քառակուսի: Հայերը պահանջում էի 54,5 հազար

կմ քառակուսի,որը 29 տոկոսն էր,բայց ստացան 5 տոկոս:Կովկասահայության ճնշող մասը՝ 1 միլիոն 200 հազար մարդ,բնակվելու էին ՀՀ սահմաններից դուրս:Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան Բերնսդորի արտահայտությամբ՝ <<Թուրքերը հայերին տեղ տվեցին Սևանում լողանալու համար,բայց դուրս գալու՝ չորանալու համար, տեղ չտվեցին>> (Հ.Ա., էջ 255-256):

Ստորագրված հավելվածներով թուրքական զորքերն իրավունք էին ստանում անարգել անցնել Հայաստան տարածքով, օգտվել Ղաևաքիլիսա-Ղազախ խճուղուց՝ զորամասեր և ռազմամթերք փոխադրելու համար:

Ակադեմիկոս Հ.Ավետիսյանը գտնում է,որ Թուրքիան համաձայնեց ինքնիշխան Հայաստանի գոյությունը այն հաշվով,որ տնտեսապես թույլ և չնչին տարածք ունեցող Հայաստանը չի կարող վտանգ սպառնա Թուրքիային, իսկ հեռանկարում նրանք տեսնում էին այդ Հայաստանի վերացումը (Հ.Ա., էջ 254):

Երրորդ հոդվածը նախատեսում էր, որ հայ-ադրբեջանական սահմանի վերաբերյալ համաձայնագրի մասին պիտի հաղորդվի օսմանյան կառավարությանը:

Չորրորդ հոդվածով Օսմանյան կառավարությունը պարտավորում էր զենքի ուժով օգնություն ցույց տալ ՀՀ կառավարությանը այն դեպքում, եթե վերջինս այդ օգնությունը խնդրե՝ երկրում կարգն ու հանգստությունը ապահովելու համար:

Հատուկ ուշադրության է արժանի հինգերորդ հոդվածը, որով ՀՀ կառավարությունը պարտավորվում էր գործուն կերպով հակազդել, որպեսզի ոչ մի բանդա չկազմավորվի և չզինվի իր տարածքում, ինչպես և զինաթափելու ցրել բոլոր բանդաները, որոնք կփորձեն թաքնվել այնտեղ: Խոսքն այստեղ այստեղ վերաբերում էր Անդրանիկի զորամասին և գոյություն ունեցող ֆիդայական խմբերին: Հատկանշական է, որ այդ հոդվածի հիշատակումը Ս. Վրացյանի մոտ բացակայում է:

Վեցերորդ հոդվածում խոսվում էր ՀՀ-ում բնակվող մուսուլմանների կրոնը հարգելու մասին,յոթերորդ հոդվածը վերաբերում էր հյուպատոսական կոնվենցիային, ութերորդը՝երկաթուղային տարիֆներին,իններորդը՝ փոստային և հեռագրական կապիբ,տասներորդը՝ կողմերի քաղաքացիների անշարժ գույքի տնօրինմանը: Ուշագրավ է տասնմեկերորդ հոդվածը, ըստ որի,ՀՀ կառավարությունը պարտավորվում էր գործադրել բոլոր ջանքերը՝որպեսզի Բաքու քաղաքից անհապաղ էվակուացվեն այնտեղ գտնվող բոլոր հայկական զինվորական ուժերը: Տասներկուերորդ հոդվածով կողմերը պայմանավորվում էին ուժի մեջ թողնել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի դրույթները, տասներեքերորդը վերաբերում էր զորքերի էվակուացիային, իսկ վերջին՝ տասնչորսերորդ հոդվածը հոդվածը

նախատեսում էր պայմանագիրը փոխադարձաբար վավերացնել մեկ ամցվա ընթացքում Բաթումի պայմանագրի մասին Ս. Վրացյանն իր խոսքն ավարտում է այսպես՝ վերջնահաշվարկը, հավանաբար,թողնելով ընթերցողին.<<Այսպիսով,-գրում է նա,-ըստ Բաթումի դաշնագրի,Հայաստանը դառնում էր անկախ պետություն:Ահ ու դողով մտնում էր նա ինքնիշխան ազգերի համակեցությամբ մեջ,իբրև ազատ անձնավորություն միջազգային իրավունքի նրա հողի տարածությունը մոտավորապես 12.000 քառակուսի կիլոմետր էր,բնակչության թիվը գաղթականներով միասին՝ մոտ մեկ միլիոն: Մայրաքաղաքից 7 կիլոմետր հեռու երևում էին թուրքական թնդանոթները …>>: Ինչպես նկատել է ակադեմիկոս Հ. Ավետիսյանը,Բաթումի պայմանագիրը ոչ թե թուրքական <<գթասրտության>> արդյունք էր,նրա <<պարգևն>> էր հայերին,ինչպես փորձում էին ներկայացնել Կարաբեքիրը, Վեհիբը: 1920 թվականի ապրիլի 20-ին ժխտելով Հայաստանի անկախությունը թուրքական շնորհ համարելու մտայնությունը Հ.Օհանջանյանը հայտարարել է. <<Իր անկախությունը պաշտպանելու պատրաստակամությունը հայ ժողովուրդը ապացուցել է Սարիղամիշի,Սարդարապատի,Ղարաքիլիսայի և այլ մարտերում, ուր Հայաստանի հազարավոր զավակներ զոհվեցին այդ անկախության համար…հայ ժողովուրդը իր այս զոհերով ստեղծեց անկախ և ինքնիշխան Հայաստանի Հանրապետություն>>: Սակայն Բաթումի թալանչիական պայմանագիրը կարճատև կյանք ունեցավ:[1] 1918 թ. Մուդրոսի զինադադարով Օսմանյան կայսրությունը ճանաչեց իր անվերապահ պարտությունը և դեկտեմբերի սկզբին թուրքական զորքերը հեռացան Անդկովկասից: Իսկ Անդրանիկը զայրույթով ասել է.<<Վեց հարյուր տարվան ստրկության շղթան դարձյալ ձեր վիզն ու ոտքը կանցնեք ձեր ձեռքով: Չեմ կրնար այս պայմանները հանդուրժել, մոռանալով մեր երեսուն տարվա զոհերը և մեկ միլիոն նահատակները>>: Վրդովված էր ոչ միայն Անդրանիկը, այլև ողջ Արարատյան երկիրը:Երևանի փողոցներում խմբված մարդկանց հուզված խոսակցությունների ընդհանուր եզրակացությունը մեկն էր.հայ զորքը հաղթել է կռվի դաշտում,իսկ թուրքերը հայ զինվորներին խաբելով դիվանագիտական խոշոր հաղթանակ են տարել:Հունիսի 5-9-ը Երևանում տեղի ունեցան խոշոր ցուցեր հաշտության դեմ:

Անդրանիկ Օզանյան

1- (Բաթումի պայմանագրի լրիվ տեքստը տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում,պրոֆ.Ջոն Կիրակոսյանի խմբագրությամբ,Երևան,1972,էջ 531-537,էջ771-ի ծանոթությունը):

Արամ Մանուկյանը ստիպված էր հանդես գալ և համոզել ժողովրդին,որ այլ ելք չկար:Դժգոհ էր նաև զորքը:Գեներալ Մ. Սիլիկյանը Երևանի ազգային խորհրդից և անձամբ Արամից պահանջեց չենթարկվել Բաթումի պայմանագրին: Անգլիացիների հնարավոր օգնության հետ հույսեր կապող Անդրանիկը Դիլիջանից բռնեց Բաղդադի ճանապարհը՝ Միջագետքում գտնվող անգլիական զորքերին հանդիպելու նպատակով:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության ծննդյան մասին հետևյալ տպավորիչ, պատկերավոր ու իրական նկարագիրն է տվել այդ հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը. <<Այսպես, ուրեմն, -գրում է նա, -ընդ հուր և ընդ սուր անցնելով՝ Հայաստանը կոչվեց անկախ կյանքի: Ցնծության աղաղակներով ու ծափերով չընդունվեց հանրապետության ծնունդը: Ընդհակառակը, շատերի համար նա նկատվում էր անժամանակ ծնունդ: Հիվանդ երեխա աշխարհ բերած մոր պես,հայ ժողովուրդը գլուխ էր ծեծում սգավոր՝ շշնջալով. <<Դու իմ և ուրախությունն ես,դու՝ դժբախտությունը իմ…>>

Այո՛, արցունքի ու տառապանքի կռվից ծնվեց Հայաստանի անկախությունը: Ոմանք չէին հավատում դրան.անկախություն ու հանրապետություն բառերը դնում էին չակերտի մեջ:Եվ այդպես վարվելու հիմքերը շատ էին զորավոր.իրոք որ,զարհուրելի էին պայմանները,և անկախությունը այդ պայմաններում թվում էր հեգնանք:

Փաստորեն հայերի ձեռքը մնացել էր ավեր,լաց ու թծվառություն,կոտորած ու սարսափ:իսկ մյուս կողմը՝ երկրի բանակը հաղթական՝ համթրքական երազներով

սոգորված, որ Հայաստանի մարմնի վրայով ձգտում էր դեպի Ապշերոն ու Թուրքեստան (Ս.Վրացյան, Հայաստանի Հանրապետություն Երևան, 1993,էջ 18)

Բաթումի հաշտության պայմանգրի ստորագրումից հետո և հայկական պատվիրակության վերադարձից հետո Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը ձեռնամուխ եղավ Հայաստանի Հանրապետության կառավարության կազմակերպմանը և վարչապետ հրավիրվեց Հովհաննես Քաջազնունուն մի փոքրիկ հողաշերտ՝ հազիվ 12.000 քառ. Կիլոմետր աղքտ ու կիսակործան մի երկիր՝ կծված ցամաք լեռների մեջ, աշխարհի խուլ անկյունում, ծանրաբեռնված գաղթականներով ու որբերով, շրջապատված ատամ կրճտացնող թշնամիներով, անհաց, անդեղ, անօգնական: Սով ու հիվանդություն, ավար ու ավեր, լաց ու թծվառություն, կոտորած ու սարսափ:իսկ մյուս կողմը՝երկրի բանակը հաղթական՝ համթրքական երազներով սոգորված, որ Հայաստանի մարմնի վրայով ձգտում էր դեպի Ապշերոն ու Թուրքեստան (Ս.Վրացյան, հայաստանի Հանրապետություն Երևան,1993,էջ 18)

Բաթումի հաշտության պայմանգրի ստորագրումից հետո և հայկական պատվիրակության վերադարձից հետո Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը ձեռնամուխ եղավ Հայաստանի Հանրապետության կառավարության կազմակերպմանը և վարչապետ հրավիրվեց Հովհաննես Քաջազնունուն (Իգիթխանյան,1868-1938),

1868թ. ծնված Հ. Քաջազնունին ավարտել էր Պետերբուրգի քաղաքացիական ինժեներների ինստիտուտը, 1914թ. աշխատել Ազգային բյուրոյում, 1918թ. եղել Անդրկովկասի սեյմի անդամ:

Հայաստանի առաջին վարչապետ Քաջազնունին ցանկանում էր ստեղծել միջկուսակցական կառավարություն, այնուհանդերձ այն կազմվեց հիմնականում դաշնակցականներից:

Կառավարության կազմը.

Ա. Խատիսյան - արտաքին գործերի նախարար /ՀՅԴ/

Ա. Մանուկյան - ներքին գործերի նախարար /ՀՅԴ/

Խ. Կարճիկյան - ելմտական նախարար /ՀՅԴ/

Հ. Հախվերդյան - զինվորական նախարար /անկուսակցական/

Գ. Տեր-Պետրոսյան - արդարադատության նախարար /անկուսակցական/ Քաջազնունին միաժամանակ ներկայացրեց նաև կառավարության գործունեության ուղղությունները. «Բացառիկ ծանր պայմանների մեջ է գործի անցել իմ կազմած կառավարությունը... Կառավարությունը չունի ոչ մի հենարան անցյալում, նա չի հաջորդում նախկին կառավարությանը՝ շարունակելու արդեն ընթացքի դրած պետական աշխատանքը», -փաստեց Քաջազնունին:

Հստակորեն ուղենշելով գործունեության ոլորտները՝ կառավարությունը ձեռնամուխ եղավ իր առաջադրած ծրագրի իրագործմանը:

«Կամաց-կամաց սկսանք ոտքի կանգնիլ: Շինարարութիւն սկսավ, պարենաւորումը, թէև անբաւական կանոնաւորեուցաւ, դպրոցներ բացուեցան իրարու ետև», - պատմում է Սիմոն Վրացյանը:

Եվ այնուհանդերձ, Հայաստանում ժողովրդի վիճակը մնում էր բավականին ծանր. սնունդ չկար: Վարչապետ Քաջազնունին Հայաստանի խորհրդին առաջարկեց՝ սովի դեմն առնելու համար՝ դիմել դաշնակից պետություններին, մասնավորապես ԱՄՆ-ին: Հայաստանի խորհուրդը հանձնարարեց վարչապետին՝ ուղևորվել Եվրոպա և ԱՄՆ՝ խնդրին լուծում տալու համար:

Քաջազնունու վարչապետության շրջանի բնորոշիչը հիմնականում համարվում է այն, որ օրհասական այդ օրերին երկրի վարչապետն իր անձնական մասնակցությամբ կարողացավ լուծել Հայաստանի պարենավորման հարցը՝ ԱՄՆ-ից մեկ միլիոն 300 հազար փութ ալյուր, մեծ քանակությամբ հացահատիկ և պահածո բերելով:

Հայաստանի առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին հետագայում ինքն իր մասին գրել է. «Իբրև արևելցի՝ հակված եմ եղել երազելու և փիլիսոփայելու: Է՞լ ասեմ: Անբուժելի ռոմանտիկ եմ եղել և միաժամանակ՝ շեշտված սկեպտիկ: Հաշտեցրեք, եթե կարող եք: Իբրև գրասեր գրել եմ դեսից-դենից: Իբրև տնաբույս փիլիսոփա՝ շատ մտածել եմ անլուծելի խնդիրների մասին», - նրա հետ հաճախ էր փոխկանչի մեջ մտնում մեկ ուրիշ վարչապետ՝ Երրորդ հանրապետության ութերորդ վարչապետը՝ Վազգեն Սարգսյանը. նա հաճախ էր սրտի ցավով հիշում, թե ինչպես,

«վագոն չլինելու պատճառով» Հայաստանի առաջին կառավարությունը չէր կարողանում Թիֆլիսից Հայաստան գալ. հետո էլ կառավարությունը եկել էր Հայաստան ու չէր կարողանում Եռագույնի համար կտոր ճարել իր հայրենիքում, ու ստիպված էր դրսից բերել կտորը:

Քաջազնունու վարչապետությունը տևեց մինչև 1919թ. օգոստոսը: Նույն թվականի փետրվարին որոշում կայացվեց նրան ուղարկել ԱՄՆ, որպես պաշտոնակատար նրան փոխարինեց Ալեքսանդր Խատիսյանը: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև Քաջազնունու գրական ժառանգությունը: Հոգեպես մեծ կապվածություն ունենալով ժամանակի գրական կյանքի և գործիչների հետ, հետագայում նրանց մասին հուշեր է գրել: Հատկանշական են Թումանյանի մասին նրա հուշերը. անկեղծ՝ անկաշկանդ, սիրով առլեցուն:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո 1921թ. Քաջազնունին հաստատվեց Ռումինիայում՝ Բուխարեստում: Սակայն 1924թ. վերադարձավ Երևան և տարիներ հետո՝ 1937թ. ձերբակալվեց: Իր մահկանացուն կնքեց 1938թ.-ին, ՆԺԿ բանտում:

Այսպիսով՝ հայոց երկրի առաջին վարչապետը զոհ գնաց բռնարարքի՝ իր ետևից թողնելով ցավոտ մի ճամփա, որով պետք է անցնեին նաև Երկրորդ Հանրապետության մի շարք վարչապետներ:

որը ձևավորեց կառավարության հետևյալ կազմով.արտաքին գործերի նախարար՝ Ալեքսանդր Խատիսյան, ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյան

Մանուկյան Արամ (Հովհաննիսյան Սարգիս) Հարությունի

(1879-1919)

Ծնվել է Ղափանի Զեյվա գյուղում, արհեստավորի ընտանիքում: Մահացել է 1919թ. հունվարի 29-ին, Երևանում՝ բծավոր տիֆից: ՀՀԴ և Թիֆլիսի Հայոց Ազգային

Խորհրդի անդամ:Շուշիում դերձակություն անող եղբոր օգնությամբ ավարտել է Ագուլիսի ծխական ուսումնարանը և 1890-ին ընդունվել Շուշիի թեմական դպրոցը: Դաշնակցության ազդեցությունը շատ մեծ էր աշակերտության մեջ, և Արամը իր ընկերների հետ հաճախ էր ըմբոստանում տնօրինության դեմ: Ի վերջո, խռովահույզ ցույցերից հետո, ընկերների հետ վտարվել է դպրոցից և ընդունվել Երևանի թեմական դպրոցը:1901թ. ավարտել է Երևանի թեմական դպրոցը, մեկնել Բաքու՝ բանվորության մեջ աշխատելու, ուր և ծավալել է դաշնակցական գործունեություն:1903թ., եկեղեցական կալվածների գրավման օրերին, Բաքվի կենտրոնական կոմիտեի կողմից ուղարկվել է Գանձակ՝ ինքնապաշտպանության գործով, ապա՝ Կարսի շրջան:1904թ. աշնանը մեկնել է Վան, ուր սկսվել է նրա գործունեությունը Վասպուրականում, որտեղ էլ նրան անվանել են Վանի Արամ:1911թ. մեկ տարի անց է կացրել Ժնևում, ապա վերադառնալով Վան՝ ստանձնել է Վասպուրականի դաշնակցության ղեկավարումը: Վասպուրականում նա ամեն ինչ էր՝ և դպրոց, և մամուլ, և ազգային հաստատություններ, և երիտասարդական շրջաններ, և հարաբերություններ կառավարության հետ և այլն:Առաջին աշխարհամարտը սկսվելուն պես ղեկավարել է Վանի հերոսամարտը, որով 1915-ին Վանը փրկվեց ջարդից, և Արամը հռչակվեց նահանգապետ: Դա տևեց չորս ամիս: Նա միակ մարդն էր, որ հեղինակություն ուներ ամենքի մոտ՝ թե հակառակորդների, թե կողմնակիցների:1916-1917թթ. անց է կացրել Թիֆլիսում, մասնակցել է Ազգային բյուրոյի և ՀՅԴ բյուրոյի աշխատանքներին, բայց առավելապես զբաղվել է Վասպուրականի և այլ վայրերի գաղթականների հարցերով:1917թ. վերջից եղել է Երևանի ազգային խորհրդի փաստացի ղեկավար: Այդ խորհրդի կազմից առանձնացած Հատուկ կոմիտեն վերափոխվեց Վարիչների մարմնի, որի նախագահը և պաշտպանության գործերի վարիչը Արամ Մանուկյանն էր: Նրա արտակարգ կազմակերպական շնորհքի և մեծ կամքի շնորհիվ՝ Երևանի ուղղությամբ թուրքական նվաճողների հարձակումը ետ է մղվել: Նա Սարդարաբադի հերոսամարտի կազմակերպիչներից էր:Արամ Մանուկյանը Հայաստանի Հանրապետության առաջին կառավարության ներքին գործերի և պարենավորման նախարարն էր, իսկ աշխատանքի և խնամատարության նախարար Կարճիկյանի սպանությունից հետո, մոտ մեկ ամիս՝ 15.11.1918թ.-13.12.1918թ., հանրային խնամատարության և աշխատանքի նախարարի պաշտոնակատարը: Շատերը Արամին համարում են Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր:

ֆինանսների նախարար Խաչատուր Կարճիկյան,զինվորական՝ Հովհանես Հախվերդյան: Վեանկուսակցական էր, իսկ մյուսները դաշնակցականներ էին:

1918 թ. հուլիսի 17-ին Հայոց զգային խորհուրդն ու կառավարությունը վերջապես Թիֆլիսից մեկնեցին Երևան: Քանի որ Սանահինի կայարանից սկսած երկաթուղին թուրքերի ձեռքում էր և ճանապարհը երկաթուղով շարունակելը վտանգավոր էր, մեկնողները Սանահինի ճանապարհը պիտի շարունակեին Աղստաֆա-Դիլիջան ճանապարհով: Մեկնողների մեջ էին կառավարության անդամներ Հ. Քաջազնունին,Խաչատուր Կարճիկյանը, Ս. Տիգրանյանը, Ստ.Մալխասբանը, Ա Բաբալյանը և ոստիկաններ, ինչպես նաև պահակախումբ՝ Դալի Ղազարի գլխավորությամբ: Նրանց հետ էին նաև երկու գերմանացի և մեկ թուրք սպա:

Ս.Վրացյանի նկարագրությամբ համաձայն՝ մեկնումը կատարվեց շատ տխուր պայմաններում, որովհետև վրացիներն ամեն ինչ անում էին որպեսզի վիրավորեն հայերի ինքնասիրությունը: Վրաց կառավարությունից ոչ ոք չեր եկել կայարան, իսկ երկաթուղային վարչությունը տրամադրել էր մի հին, կեղտոտ ու անհարմար վագոն: Նրանք մեծավարությամբ էին թույլատրել տանելու նաև երկու կիսախարխուլ ավտոմոբիլ: Հայաստանի վարիչները Թիֆլիսից մեկնեցին նվաստացման դառը զգացմունքներով, կարծես թշնամի երկրից էին հեռանում: Կայարաններից մեկում վրացի սահմանապահները նույնիսկ փորձեցին զարկել Հայաստանի կառավարության վագոնը, բայց գերմանացի սպաները թույլ չտվեցին:

Սիմեոն Վրացյան

Ծնվել է 1882 թվականին Նոր Նախիջևանի Մեծ Սալա գյուղում: Սկզբնական կտթությունը ստացել է Նոր Նախիջևանի միջնակարգ դպրոցում, 1900-1906 թվականներին սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1908-1910 թվականներին սովորում է Սանկտ-Պետերբուրգի համալսարանի մանկավարժական և իրավաբանական ֆակուլտետներում: 1906 թվականից սկսում է հեղափոխական գործունեությունը, զենք է ձեռք բերում և ուղղարկում արևմտյան Հայաստան՝ ֆիդայական ջոկատներին: 1907 թվականին մասնակցում է Վիեննայի դաշնակցական 4-րդ կոնգրեսին: 1910 թվականին Մոսկվայում լույս է ընծայում «Հասկ» ժողովածուն, որի մեծ մասը ցարական կառավարությունը առգրավում է: Վախենալով հետապնդումից Վրացյանը փախչում է Բաթում, ապա Տրապիզոն ու Կոստանդնուպոլիս: Հետագա տարիներին դասավանդում է Կարինի որոշ ուսումնական հաստատություններում, խմբագրում է Կարինում և Եվրոպայում հրատարակվող մի շարք թերթեր: 1911-1913 թվականներին ԱՄՆ-ում թողարկում է «Հայրենիք» օրաթերթը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին վերադառնում է Թիֆլիս, որտեղ մասնակցում է հայկական կամավորական ջոկատների կազմակերպմանը: 1917 թվականի Փետրվարյան հեղափոխությունից հետո Թիֆլիսում հրատարակում է «Հորիզոն» թերթը: 1918 թվականին ընտրվում է Անդրկովկասյան Սեյմի , ապա 1919 թվականին դաշնակցական բյուրոյի անդամ: 1918 թվականին անդրկովկասյան կառավարության կազմում մասնակցում է Բաթումի թուրք-անդրկովկասյան բանակցություններին:Անկախության հռչակումից հետո (1918) նշանակվում է Հարավ Ռուսական կամավորական բանակին կից դիվանագիտական առաքելության ղեկավար: 1919 թվականին ընտրվում է Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամ: 1920 թվականի մայիսին նշանակվում է Հ. Օհանջանյանի գլխավորած կառավարության գյուղատնտեսության և աշխատանքի նախարար, 1920 նոյեմբերին ՀՀ կառավարության վարչապետ:Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումից հետո գլխավորում է Հայրենիքի Փրկության Կոմիտեն: 1921 թվականի օգոստոսից հետո ապրում է Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Լիբանանում: Շարունակում է քաղաքական գործունեությունը: 1945 թվականին, որպես Հայկական ազգային կոմիտեի նախագահ վերջնագիր է ներկայացնում Սան-Ֆրանցիսկոյում ՄԱԿ-ի հիմնադիր համառողովի կազմակերպիչ պետություններին՝ նրանց ուշադրությունը գրավելով պատմական անարդարության վրա՝ հայ ժողովրդի հանդեպ: 1951 թվականից մինչև կյանքի վերջը Վրացյանը Բեյրութի «Նշան Պալաջյան» վարժարանի տնօրենն էր:

Տարօրինակ է,բայց դրան հակառակ՝բոլորովին այլ էր ադրբեջանցիների վերաբերմունքը: Սահմանի վրա նրանք հայկական կառավարությանը դիմավորեցին զինվորական պատիվներով, ընդառաջ եկան նահանգապետը և Ադրբեջանի կառավարության ներկայացուցչները: Աղստաֆայում և Ղազախում կազմակերպվել էր պաշտոնական ընդունելություն և ճաշկերույթ: Նրանց համկրանքով էին դիմավորում նաև ադրբեջանցի գյուղացիները, որոնք մինչև Հայաստանի սահմանը բարեկամական ցույցեր էին անում(Ս.Վ., էջ688): Հայաստանի հողի վրա առաջին հանդիսավոր դիմավորումը տեղի ունեցավ Դիլիջանում,որտեղ կատարվեց ճոխ հյուրասիրություն: Նույնը տեղի ունեցավ նաև Սեմյոնովկայում և Ելենովկայում (այժմ՝ Սևան), որտեղ դիմավորման-ճանապարհման արարողություններին մասնակցում էին հայկական զինվորական ստորաբաժանումներ: Հուլիսի 19-ին երեկոյան ճանապարհորդները հասան Ախտա(այժմ՝Հրազդան), ուր Երևանից դիմավորելու էր եկել Արամ Մանուկյանը: Փողոցում կանգնած էր զորքն ու զինվորական նվագախումբը: Ա.Վ. Սահակյանն ընդունեց հրամանատարի զեկույցը,որից հետո զինվորական ստորաբաժանումները հանդիսավոր երթով անցան կառավարության անդամների առջևից: Քանաքեռում հյուրերին դիմավորեց Հայկական կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանը՝ իր ապայակույտով: Հուլիս 19-ի ուշ երեկոյան Ազգային Խորհրդի և կառավարության անդամները հասան Երևան: Քաղաքը զարդարված էր դրոշակներով, գորգերով ու կանչով: Աստաֆյան (ներկայիս՝Աբովյան) փողոցը լեցուն էր բազմությամբ: Փողոցի որկու կողմում կանոնավոր շարքերով կանգնած էին զորքքեևը՝Սարդարապատի ու Բաշ-Ապարանի հերոսները, որոնք ողջունեցին հյուրերին խանդավառ <<կեցցե>>-ներով ու զինվորական երաժշտությամբ: Երեկոյան տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որին ներկա էին ռուս, ուկրաինացի,ադրբեջանցի բազմաթիվ հյուրեր: Արտասանվեցին ողջույնի ճառեր, որոնց Հ. Քաջազնունին պատասխանեց հետևյալ խոսքերով. <<Մեր պետությունը կոչվում է ոչ թե հայկական, այլ Հայաստանի Հանրապետություն: Այդ ցույց է տալիս որ մեր պետութունը հայրենիք է նրա մեջ ապրող բոլոր ժողովուրդների համար>> (Ս.Վ.,էջ 189)”Հաջորդ օրբանից կառավարությունն անցավ գործի և ձեռնամուխ եղավ պետական ապարատի կառուցմանը:Ինչպես իրավամբ գրում է Ս.Վրացյանը,երկիրը կատարյալ քաոսի և անիշխանության մեջ էր, ուստի պետք էր կարգ ու օրենք հաստատել,գաղթականությանը ապահովել սննդով ու կացարանով,կանխել

սահմանային ընդհարումները,զսպել ներքին մահմեդական խռովությունները,մի խոսքով՝ պետք էր ոչնչից պետություն ստեղծել:

Թիֆլիսի և Երևանի Ազգային խորհուրդների մի շարք միացյալ նիստերում քննարկվեց Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմնի ստեղծման հարցը:Որոշվեց եռապատկել 15 հոգուց կազմված Ազգային խորհրդի անդամների թիվը, հրավիրել նաև ադրբեջանցիների, եզդիների և ռուսների ներկայցուցիչներին: Այդ եղանակով կազմվեց 46 հոգուց բաղկացած Հայաստանի առաջին օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդ անունով: Նրանցից 38-ը հայեր էին, 6-ը՝ադրբեջանցիներ,մեկ ռուս,մեկ եզդի: Խորհրդի հայ պատգամավորները ներկայացնում էին երեք կուսակցություն. դաշնակցականներ՝18, էսէռեր՝6, սոցիալ-դեմոկրատներ՝ 6,ՀԺԿ՝6, չեզոք՝2 (Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., Քաղաքական պատմություն, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու,Երևան,2000.էջ 53):Կառավարության նախկին կազմին ավելացավ արդարադատության նախարար,անկուսակցական Գ.Պետրոսյանը:1918 թ օգոստոսի 1-ին Երևանի քաղաքային ակումբի դահլիճում(Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի նախկին,այժմ՝քանդված շենքը—Մ.Կ>) մեծ հանդիսավորությամբ բացվեց Հայաստանի խորհրդի Ադրանիկ նիստը:Առաջին նիստը բացելու պատիվը վերապահվեց Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավետիք Սահակյանին:Նա իր ճառի վերջում ասաց.<<Այո,մեր հանրապետությունը փոքր է ու նեղ իր սահմաններով.նա զրկվել է իր ամենագնահատելի երկրամասերից ու չի կարող իր մեջ սեղավորել ամբողջ ազգաբնակչությանը և,կարծես թե,պայմաններ չունի անկախ գոյության համար:Բայց ես կարծում եմ,որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ միշտ.ես հավատում եմ,որ մեր երկրի սահմանները յընդարձակվեն կյանքի երկաթե ուժով …>>(նշվ.ժողովածու,էջ 55):Այդ կանխատեսումն իրականացավ մեկ տարի էլ չանցած: Երբ Ավ. Սահակյանը խոսքն ավարտեց՝ առաջարկելով ընտրել խորհրդի նախագահ,խորհրդարանի շենքի գլխին բարձրացավ Հանրապետության եռագույն դրոշը,դրսում հնչեցին հազարավոր <<կեցցեներ>>,<<Ներ հայրենիք>> և զորքը պատվի առավ:Հայաստանի խորհրդի նախագահ ընտրվեց դաշնակցական Ավ. Սահակյանը, փոխնախագահներ՝ժողովրդական Գր. Տեր-Խաչատրյանը և Էսէռ Դ.Զուբյանը:Խորհրդի նիստից հետո գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ տեղի ունեցավ զորահանդես.զորքն անցավ հանդիսատեսների առջևից և ժողովրդի ծափողջույնների ու երաժշության ուղեյցությամբ բարձրացավ Աստաֆյան փողոցով:<<Տեսարանը հուզիչ էր,-գրում է

Ս.Վրացյանը:Շատերի աչքից արցունք էր հոսում:Հայաստանի Խորհրդարան ,հայոց կառավարություն,հայկական բանակ…Երազ չէր արդյոքք>>(Ս.Վ., 195)Օգոստոսի 3-ին,Հայաստանի Խորհրդի երկրորդ նիստում,վարչապետ Հ.Քաջազնունին հրապարակեց իր գլխավորած կառավարության ծրագրային հայտարարությունը(տես ՀՀ 1918-1920 թթ. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու,էջ 57-59)Երկրի ընհանուր վիճակը ներկայացնելով մեկ բառով միայն՝կատաստրոֆային (աղետալի) վարչապետն ընդգծեծ,որ նման պայմաններում կառավարության գլխավոր խնդիրն է կասեցել քայքայման պրոցեսը,հանել երկիրը անիշխանության վիճակից և պայմաններ ստեղծել պետական շինարարության համար,որը հանգելու է հետևյալին.

1.Ներքին գործերի բնագավառում երկրում հաստատել տարրական կարգ ու կանոն ,կյանքի և գույքի ապահովություն,բացել հաղորդակցության ճանապարհները,վերականգնեկ փոստ-հեռագրական կապը, հնարավորին չափ մեղմացնել պարենավորման տագնապը,տնօրինել գաղթականների վիճակը,նախապատրաստել Հայաստանի Սահմանադիր ժողովի հրավիրումը:

2.Ֆինանսների բնագավառում հող նախապատրաստել սեփական դրամական համակարգ ստեղծելու համար,վերականգնել արդյունաբերությունը և ապրանքափոխականությունը,մշակել հարկային առողջ համակարգ:

3.Արդարադատության բնագավառում բարեկարգել դատարանը,քրեական դատավարությանը մասնակից դարձնել ժողովրդի ներկայացուցիչներին:

4.Զինվորական բնագավառում վերակազմել երկրի զինվորական ուժերը,ստեղծել թվով ոչ մեծ,բայց ոգով ու կարգապահությամբ ուժեղ բանակ:

5.Արտաքին գործերի բնագավառում ամրացնել հաշտությունը օսմանյան կառավարության հետ,լուծել Ադրբեջանի և Վրաստանի հետ սահմանային հարցերը՝հիմք ունենառվ ազգագրական սկզբունքը:Ներկայացված ծրագիրը վարչապետն անվանեց պետության գոյությունն ապահվող ամենաանհրաժեշտ գրավականների ծրագիրը,որը եղած հնարավորությունների առավելագույնն է:Ծրագիրն արժանացավ էսէռների և սոցիալ-դեմոկրատների խիստ քննադատությանը,իսկ դաշնակցականներն ու ՀԺԿ-ն հավանության արժանացրին:Օգոստոսի 6-ին նիստում պատասխանելով ծրագրի քննադատներին՝ Հ. Քաջազնունին դրեց վստահության քվ եստանալու պահանջ:Հօգուտ կառավարության քվեարկեցին դաշնակիցները,4 ժողովրդականները,մահմեդական և ռուս պատգամավորները,ձեռնապահ մնացին 5 սոցիալ-դեմոկրատ,3 էսէռ,2

ժողովրդական և 1 անկուսակցական:<<Այսպիսով,-ինչպես նշում է Ս. Վրացյանը ,- իր կյանքի առաջին իսկ օրից Հայաստանի Խորհուրդը դուրս եկավ ներքին շաղախից զուրկ,ամուր մեծամասնություն չունեցող,հակամարտություններով ու անակնկալներով լի մի մարմին:Նրա այս հիվանդությունը բնածին էր և մինչ վերջ էլ կարելի չեղավ դարմանել>>(Ս.Վ., էջ198)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Նորահռչակ Հայաստանի Հանրապետության ներքին ահավոր կացության մասին շատ նկարագրություններ կան,սակայն դրանցից ոչ մեկն այնպես տպավորիչ չի ներկայացնում դաժան իրականությունը,ինչպիսին Ս.Վրացյանինն է:Ուստի խոսքը տանք նրան՝ համոզված ,որ <<անձև քաոսի և ավերակների կույտ էր>>(Հ.Քաջազնունու ծրագրային ելույթի բառերն են ---Մ.Կ.) Հայաստանն այդ օրերին:Եվ սարսափելին այն էր ,որ չէր երևում ոչ մի հեռանկար…Դրսից պատպանություն,ապրուստի միջոց,դրամական օժանդակությյուն չէր գալիս:Ինչ որ արվելու էր՝ պետք էր անել սեփական ուժերով:Հայաստանը,ավելի շուտ, գաղթականական կայան էր.ամբողջ երկրում շուրջ 450.000 գաղթական էր թափված,որից մոտ 40.000-ը՝Երևանում,շատերը՝ փողոցների և ավերակ շենքերի մեջ:Հաց չէր ճարվում,ժողովուրդն ապրում էր ինչպես կարող էր… դարման հասցնելու,դեղ չկար,վառելիք չկար,սնունդ չկար,սպիտակեղեն չկար:եվ մարդիկ մեռնում էին անմռունչ,հարյուներով,հազարներով:Ժողովուրդը սպառվում էր վառվող մոմի պես:Սովի ու համաճարակի հետ երկրում խախտված էր և ապահովությունը: Դասալիք զինվորներ,ապրուստի միջոց չունեցող գաղթականներ ու տեղացիներ, խմբերով և անհատ-անհատ,հարձակվում էին ճամփորդների վրա,թոլանում տները, խանգարում հանրային անդորրությունը: Հասարակական չարիք էր արձել,այսպես կոչված <<մաուզերիզմը>>՝ մաուզերով զինված մարդիկ շահատակություններ էին անում նույնիսկ մայրաքաղաքի փողոցներում,և խաղաղ բնակչությունը տառապում էր նրանց ձեռքին…Վեց ամցվա ընթացքում սովից ու հիվանդություններից Հայաստանում մեռավ 180.000 մարդ: (Ս.Վ.,էջ 199-200)Սարսափելի էր որբերի վիշակը:Երևանի<<Զանգ>> թերթը գրում էր օգոստոսի 3-ին .<<Տասնյակ հազարավոր որբեր այսօր ցրված Հայաստանի Հանրապետության սահմաններում, մոռացված ամենքից՝ ենթակա են ցրտի,քաղցի և համաճարակ հիվանդությունների…Մահազողներին վերջ չկա.մեռնում են ամենքը և ամենուրեք,գյուղերում թե քաղաքներում, բացօթյա ամենքի աչքի առաջ>>:

Հացի,բնակարանների, հագուստի և դեղերի պակասն ու գաղթականության խռնվածությունը առաջ բերին ու զարգացրին համճարակ հիվանդություններ, սկզբում՝ խոլերան,ապա՝ բծավոր սիֆը,որի գերանդին առատ հունձ էր անում ամեն կողմ: Տուն չկար, որ հիվանդ չունենար: Հիվանդները թափվում էին և փողոցներում ու հրապարակներում…Հապճեպով պատրաստված հիվանդանոցներն անզոր էին իրական

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՀՀ ստեղծման պահին Հայկական բանակային կորպուսը բաղկացած էր երկու հրաձգային դիվիզիաներից, որոնցից յուրաքանչյուրն ուներ չորսական հրաձգային գնդեր և մեկական հրետանային բրիգադներ՝ վեցական հրետանային մարտկոցներով: Կորպուսի մեջ էին մտնում նաե Հայկական առանձին հեծյալ բրիգադը՝ բաղկացած երկու հեծյալ գնդերից ե հեծյալ լեռնային մարտկոցից, Ալեքսանդրապոլի բերդապահ հետեակային բրիգադը՝ բաղկացած հինգ հետևակային գնդերից, Հայկական համահավաք զորաջոկատը՝ բաղկացած երեք հատուկ հետեակային բրիգադներից, Հայկական պահեստային հետևակային բրիգադը, գնդացրային, հրետանային դիվիզիաներ, ավտոմոբիլային երեք վաշտեր, ավիաջոկատ և այլ մասնագիտացված զորամասեր ու ստորաբաժանումներ: (Մուրադ Կարապետյան, Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920), Երևան, 1996, էջ 27):

Հայոց բանակի պատմության հետազոտող Մուրադ Կարապետյանը հանգում է այն եզրակացության, որ եթե 1918 թ. վերջին հայկական դիվիզիայի շարքերում ծառայում էին մոտ 16.000, 1919 թ. աշնան վերջին՝ 30 հազար մարդ, ապա 1920 թ. նոյեմբերի սկզբին ՀՀ բանակի թվաքանակը, ներառյալ նաե կամավորական-պարտիզանական, միլիցիոներական և թիկունքային ծառայողները, հասնում էր 40 հազարի (Մ. Կ., նշվ. աշխ., էջ 45-48):

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Անկախությունից առաջ վրացիները բազմիցս հայտարարել էին, որ Ախալքալաքի գավառն ու Բորչալուի գավառի մեջ մտնող Լոռին համարում են հայկական տարածքներ, սակայն անկախությունից հետո հանկարծ պահանջեցին, որ դրանք մտնեն Վրաստանի մեջ՝ հիմնավորելով այդ պահանջը ռազմաստրատեգիական ու տնտեսական անհրաժեշտությամբ։ Մինչ այդ, դեռես թուրքերի առաջխաղացման ժամանակաշրջանում՝ 1918 թ. մայիսին, վրաց-գերմանական զորամասերը գրավել էին Բորչալուն՝ վստահեցնելով հայերին, որ դա արվում է պաշտպանական նպատակներով, ե թուրքերի հեռուսնալուց հետո գրված վայրերից կհեռանան նաե վրացական զորքերը։ Սակայն դա տեղի չունեցավ, *և* վրացական կառավարությունը հայտարարեց Վրաստանի սահմանները՝ նրանց մեջ ներառելով վիճելի համարվող տարածքները։ Հայաստանի կառավարությունը անմիջապես բողոքեց այդ հւսյտարարության դեմ։

Վիճակն ավելի սրվեց, երբ 1918 թ. հոկտեմբերին թուրքերն սկսեցին դատարկել Լոռի-Փամբակի շրջանը, իսկ Դրոյի գլխավորած հայկական զորքերը զբաղեցրին այդ տարածքները։ Վրացական կառավարությունը հայերի այդ քայլը համարեց ապօրինի ե հոկտեմբեի 19-ին Վրաստանում Հայաստանի ներկայացուցիչ Ա. Ջամալյանին բողոք ներկայացրեց։ Հաջորդ օրը Սանահինում կանգնած վրացական զրահագնացքի հրամանատար Գոգուաձեն վերջնագրով պահանջեց հայկական զորամասերից՝ հեռանալ Լոռիից և այն Շահալիով հանդերձ հանձնել վրացիներին։ Նրանք իրենց պահանջը հիմնավորում էին նրանով, որ Լոռին մտնում է Թիֆլիսի նահանգի մեջ, որն անվիճելիորեն վրացական հող է։ Այդ հարցում Վրաստանին բացահայտորեն հովանավորում էր Գերմանիան։

Վրացիների վերջնագիրը մեծագույն վրդովմունքով ընդունվեց Երեանում, ն ՀՀ կառավարությունը որոշեց չընդունել վերջնագիրը, չհանձնել Շահալի կայարանը ե

հարկ եղած դեպքում ցույց տալ զինված դիմադրություն։ Հայաստանի Խորհուրդը հավանություն տվեց կառավարության քաղաքականությանը տվյալ հարցում։

Հոկտեմբերի 23-ին վրացական զրահագնացքը ռմբակոծեց Շնող գյուղը և հասավ մինչև Այրում։

Բացի դրանից, ինչպես նկատում է Ս. Վրացյանը, վրացիները կարծես դիտմամբ խնդիրներ էին ստեղծում, վիրավորում էին հայերի արժանապատվությունը, խոչընդոտում հաղորդակցությանը դրսի հետ փակում ճանապարհները հայերի առջև։ Սովի և հիվանդությունների ճիրաններում գալարվող Հայաստանի համար նման վերաբերմունքը գնահատվում էր իբրե տմարդի ու թշնամական։ Օրինակ՝ վրացիները բռնագրավեցին Բաքվում գնված ն Հայաստան տեղափոխվող 40 ցիս տեռն նավթն ու 9 ցիստեռն բենզինը։ Վրացի զինվորները շահատակու՛ թյուններ էին անում հայկական Շուլավեր, Ուզունլար և այլ գյուղերու (Ս. Վ., էջ 222-224)։

1918 թ. դեկտեմբերի 5-ին վրացական զորքերը, օգտվելով թուրքերի հեռանալուց, գրավեցին Ախալքալաքի գավառը և այն հայտարարեցին Վրաստանին միացված։ ՀՀ բողոքներն ապարդյուն անցան։

1918 թ. դեկտեմբերի 13-ին բռնկվեց հայ-վրացական պատերազմը։ ՀՀ կառավարությունը հրամայեց Դիլիջան-Լոռու զորամասի հրամանատար Դրոյին՝ մաքրել Լոռին վրացական զորքերից, և հաջորդ օրը զորամասն առաջ շարժվեց Վորոնցովկա-Պրիվոլնոյե-Այրում գծով։ Զորամասի աջ թեռում փոխգնդապետ Կորոլկովի ուժերն էին, կենտրոնու փոխգնդապետ Նեստերովսկին էր, ձախ թեռում՝ գնդապետ Տեր-Նիկողո սյանը, պահեստային ուժերի հրամանատարն էր գնդապետ Միրիմա նյանը, ընդհանուր առմամբ 28 վաշտ, 26 գնդացիր, 7 լեռնային թնդանոթ, 4 հեծյալ հարյուրյակ։Պատերազմի առաջին իսկ օրը գնդապետ Տեր-Նիկողոսյանի զորամասը գիշերային գրոհով գրավեց Վորոնցովկան, Պրիվոլնոյեն և Մի խայլովկեսն։ Գնդապետ Նեստերովսկու զորամասը գրավեց Սանահիխ կայարանը։ Այրումի կողմից Կորոլկովի զորամասը կտրեց վրացական զրահագնացքների նահանջի ճանապարհը և պայթեցրեց դրանցից մեկը։ Ռոտմիստր Փիրումյանի հարյուրյակը գրավեց Լալվար սարը։Գեկտեմբերի 14—15—ին հայկական զորքերի ճնշման տակ վրա ցական զորքերը թողեցին Ալավերդին, իսկ դեկտեմբերի 16-ին Կորոլկովը գրավեց Այրումը։ Դեկտեմբերի 17-ին Ախթալա կայարանի մոտ հայ կական ուժերը գրավեցին 2 զրահագնացք և դրանք ուղղեցին վրացիների դեմ։ Վրացական զորքերի հրամանատար գեներալ Օուլուկիձեն փախուստի դիմեց՝ հայերին թողնելով իր սալոն-վագոնը։ Կորոլկովի ջոկատը մոտեցավ Սադախլուին, իսկ դեկտեմբերի 18-ին

Տեր-Նիկողոսյանը գրավեց Բոլնիս-Խաչենը։ Կռիվներն ընթանում էին ձյան, ցրտի, հագուստի ու սննդի պակասի պայմաններում։Դեկտեմբերի 19-ի երեկոյան Ֆիերկովսկու վաշտը ե Տեր-Մար– տիրոսյանի հեծյալ հարյուրյակը գրավեցին Սադախլուն։ Վրացիները սպիտակ դրոշ բարձրացրին։ Բայց այդ, պահին մոտեցավ վրացական զրահագնացքը, և հայկական ուժերը շրջապատման մեջ ընկան, իսկ Ֆիերկովսկին ու Տեր-Մարտիրոսյանը գերի ընկան։Դեկտեմբերի 20-ին Կուռո Թարխանյանի հարյուրյակը գրավեց Շուլավերը։ Շուլավեր-Սադախլուի շրջանում ծավալվեցին թեժ մարտեր։ Դեկտեմբերի 23-ին հայկական ուժերը Ասլանյանի հրամանատարությամբ վերագրավեցին Սադախլուն ե ձեռք գցեցին մեծաքանակ ռազմավար, 100 վագոն պարեն։ Գեներալ Ծուլուկիձեի զորախումբը գլխովին ջախջախվեց, ինքն էլ փախավ։ Նրան փոխարինեց գեներալ Մազնիեը։ Հարձակումներն ու հակահարձակումները իրար հաջորդեցին մինչե դեկտեմբերի 28-ը։Հակամարտությանը միջամտեցին անգլիական գեներալ Ռայկ– բոֆտը, ֆրանսիական գնդապետ Շարդինյին, որոնք վրացիներին ու հայերին հարկադրեցին դեկտեմբերի 28-ին ստորագրել համաձայնագիր՝ դեկտեմբերի 31-ի գիշերվա ժամը 12-ին պատերազմական գործողությունները դադարեցնելու մասին։Դեկտեմբերի 31-ի առավոտյան Սադախլուի շրջանում սկսվեց ուժեղ ճակատամարտ, որտեղ վրացիները կենտրոնացրել էին մոտ 3,5 հազար զինվոր՝ 12 թնդանոթով։ Ճակատամարտը դեռ չէր ավարտվել, երբ հասավ պայմանաժամը՝ ժամը 12-ը, ե կողմերը կանգ առան իրենց գրաված դիրքերում։ Հայ-վրացական պատերազմն ավարտվեց, ե դժվար էր ասել, թե ով հաղթեց այդ պատերազմում։ Պատերազմը մեծ չարիք պատճառեց երկու կողմերին էլ (Ս. Վ., էջ 248)։1918 թ. հունվարի կեսերին Թիֆլիսում բացվեց հայ-վրացական հաշտության խորհրդաժողովը, որը տեեց երկար՝ երեք ամիս։ Մշակվեց Լոռու չեզոք գոտու վարչության կանոնագիրք։ Չեզոք գոտին կառավարվելու էր անգլիացի ընդհանուր նահանգապետի կողմից, որն ունենալու էր մեկ վրացի և մեկ հայ տեղակալներ։ Ստորագրվեց նաե փոստ-հեռագրական համաձայնություն,վերականգնվեց երկաթուղային հաղորդակցությունը, կողմերը փոխադարձաբար ճանաչեցին միմյանց ակախությունը։ Այդպիսով հայ-վրացական հարաբերությունները կանոնավորվեցին։

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀՀ-ԻՆ

1919 թ. սկզբներին ՀՀ ներքին վիճակը շարունակում էր մնալ չափազանց ծանր, սովն ու համաճարակները, մանավանդ բծավոր տիֆը շարունակում էին իրենց «հունձքը», որոնք օրական հառյուրսվոր կյանքեր էին խլում: Առաջին հինգ ամիսների ընթացքում Երկանում, որի բնակչությունն այդ ժամանակ մոտ 60.000 էր, մեռավ մոտ 4000 մարդ: 1919 թ. հունվարի 26-ի 40-օրյա տառապանքներից հետո բծավոր տիֆին զոհ գնաց Արամ Մանուկյանը, նաև ուրիշ պաշտոնյաներ: Հատկապես սոսկալի էր գա՛ղթականների վիճակը, որոնք տառապում էին սովի ճիրաններում: Գյուղերի մեծ մասը կանաչով էին կերակրվում: Մայիսին հացաբաժինը Երևանում իջեցվեց 100 գրամի:

1919 թ. փետրվարի 4-ին Հայաստանի խորհուրդը որոշեց օգնություն խնդրել Եվրոպայից և ԱՄՆ-ից: Եվ օգնությունը չուշացավ: Այդ նպատակով Հայաստան եկավ ԱՄՆ-ի պարենավորման մինիստր Հուվե– ը՝ իբրե նպաստամատույցի տնօրեն: «Ինչ էլ լինի մեր վերաբերումը դեպի Ամերիկայի քաղաքական դերը հայկական խնդրում,— գրում է Ս. Վրացյանը,— ամերիկյան մարդասիրական նպաստն ու պարենը երբեք չենք մոռանա, չպետք է մոռանանք» (Ս. Վ., էջ 254-256): 1919 թ. մայիսի 20-ին Բաթում հասավ ամերիկյան առաջին նավը՝ բեռնված 125 հազար փութ ալյուրով (1 փութը հավասար է 16 կիլոգրամի — Մ. Կ.), իսկ մեկ շաբաթ անց եկավ երկրորդ նավը՝ 600.000 փութ ալյուրով: Տարվա ընթացքում Հայաստանն Ամերիկայից ստացավ 1.295.243 փութ ալյուր, 256.758 փութ ցորեն, 125.000 փութ լոբի, 68.563 փութ բրինձ, 20.000 փութ կորեկ, 8.010 փութ եգիպտացորեն, 10.738 փութ վարսակ, 5.950.000 տուփ խտացրած կաթ, 12.000 փութ կակաո, 44.000 փութ շաքար, 5.000 փութ ճարպ, 1.500 փութ թեյ: Պայմանագրի համաձայն՝ 1920 թ. սկզբին գալու էր ևս 2.170.000 փութ ալյուր (Ս. Վ., նույն տեղում): Այդ ամենը Հայաստան հասցվեց մեծ դժվարություններով:

ԿՐԹԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի առաջին Հանրապետության պետական գործիչները անհրաժեշտ նշանակություն էին տալիս կրթական գործի ե մշակութային կյանքի զարգացմանը, ուստի՛ այդ ուղղությամբ նույնպես, չնայած սուղ հնարավորություններին, ձեռնարկվեցին լուրջ միջոցառումներ։

1919 թ. մայիսի 30-ին կառավարությունը որոշեց 15-օրյա ժամկետում դատարկել բոլոր դպրոցական շենքերը, նորոգել դրանք ե նախապատրաստել նոր ուսումնական տարվա համար։ Այդ նպատակին հատկացվեց շուրջ 11 միլիոն ռուբլի։ Արդեն տարվա վերջին հանրապետությունում կար 431 տարրական դպրոց, որոնցում սովորում էին ավելի քան 38 հազար աշակերտներ ե աշխատում էին շուրջ 1100 ուսուցիչներ։ Միջնակարգ դպրոցների թիվը քիչ էր՝ ընդամենը 20 դպրոց՝ 5162 ա– շակերտներով ե 288 ուսուցիչներով։1919 թ. մայիսի. 16-ին կառավարությունը որոշում ընդունեց հա-մալսարան բացելու մասին։

Հուլիսի 15-ին բացվեցին հուշարձանների պահպանման և արվեստի հովանավորության բաժինները։Մայիսի 25-ին Երեանում բացվեց Հայ արվեստագետների միության կազմակերպած անդրանիկ նկարչական ցուցահանդեսը՝ հանրային կրթության ե արվեստի նախարարության հովանավորությամբ։ Ցուցադրված էին Գ. Բաշինջաղյանի, Ե. Թադեոսյանի, Մ. Սարյանի ե այլոց նկարներ։ Կառավարությունը պետական թանգարանի համար ցուցահանդեսից գնեց 100.000 ռուբլու նկարներ։Հուլիսի 9-ին կառավարությունը Հայ գրողների միության քարտուղար Հովհաննես Թումանյանի դիմումի համաձայն հատկացրեց 100.000 ռուբլի՝ որպես նպաստ հայ գրողներին, գիտնականներին ու հրապարակախոսներին տալու համար։ Միության վարչությունը այդ գումարը բաժանեց ութ ամենահեղինակավոր ու կարիքավոր գրողների։Սեպտեմբերի 10-ին Խորհրդարանը որոշեց հիմնել Ազգագրա– կան-Մարդաբանական թանգարան-գրադարան։ Նոր հիմնադրված թանգարան-գրադարանին հանձնվեց Հայոց ազգագրական ընկերության ամբողջ շարժական ե անշարժ գույքը՝ մոտ 10.000 գիրք, պարբերականներ, 120 ձեռագրեր, ազգագրական նյութեր։ Ընկերության հիմնադիր ե վարիչ, հայ նշանավոր ազգագրագետ Երվանդ Լալայանը նույն պաշտոնով տեղափոխվեց Հայաստան։1919 թ. վերջին Երեանում արդեն գործում էին թատերական վարժարանը, երաժշտական, հայոց լեզվի, մանկավարժական դասընթացներ։Ինչպես գրում է Ս. Վրացյանը, տարվա վերջին արդեն երկիրը գտնվում էր համեմատական բարեկարգության մեջ ե ոգևորության ու գուրգուրանքի առարկա

էր ոչ միայն Հայաստանում, այլե նրանից դուրս ապրող հայերի համար։ Հայաստանը դարձել էր այն հուսատու փարոսը, որ իրեն էր քաշում աշխարհի չորս կողմը սփռված հայությանը։1919 թ. դեկտեմբերին Թիֆլիսում կազմվեց Հայ կուլտուրական հաստատությունների միություն, որի մեջ, մտան Հայ գյուղատնտեսական ընկերությունը, Հայոց տեխնիկական ընկերությունը, Հայ կանանց միությունը, Հայ իրավաբանների միությունը, Հայ բժիշկների միությունը, Ազգագրական ընկերությունը, Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը։ Միության նպատակն էր բազմակողմանի օգնություն ցույց տալ Հայաստանի կառավարությանը։ Շատ հայ մասնագետներ ու հասարակական գործիչներ ցանկություն էին հայտնում տեղափոխվել Հայաստան՝ հայրենիքին ծառայելու մղումով (Ս. Վ.; էջ 372-376)։

Վերջաբան

Հայաստանը հռչակվեց անկախ հանրապետություն: Տասնամյակներ անց, ի նշանավորումն այս իրադարձության, Հայաստանի արդեն երրորդ Հանրապետությունը պետական տոնացույցում մայիսի 28-ը հռչակեց Հանրապետության տոն:ՀՀ խորհրդարանը ձևավորվեց Հայոց ազգային խորհրդի անդամների եռապատկման սկզբունքով: Այն միապալատ էր, ուներ մշտական հանձնաժողովներ և ավագների խորհուրդ:1919 թ. հայտարարվեց Միացյալ, Անկախ Հայաստանի ակտը, և երկրորդ գումարման խորհրդարանում, իբրև արևմտահայ հատվածի ընտրյալներ, ընդգրկվեց 12 նոր պատգամավ: 80 պատգամավորից բաղկացած այդ գումարման խորհրդարանում դարձյալ մեծամասնություն էր կառավարողԴաշնակցությունը. Հիշյալ ակտի դրդապատճառներն էին Հայաստանի սահմանների մեծացումը՝ ներառյալ Կարսի նահանգը, արևմտահայության տարերային հոսքը, կուտակումը սահմանագլխին: Հայաստանի առաջին Հանրապետության գոյության երկուսուկես տարիների ընթացքում հիմնականում դաշնակցականներից կազմավորվեց կառավարության հինգ կաբինետ՝ վարչապետներ Հովհաննես Քաջազնունու (երկու անգամ), Ալեքսանդր Խատիսյանի, Համազասպ Օհանջանյանի, Սիմոն Վրացյանի գլխավորությամբ:

1918թ Խորհրդարանի Անդրանիկ նիստի փակումից հետո, խորհրդի շենքի առջև, տեղի է ունեցել զորահանդես, որն ընդունել է վարչապետ Քաջազնունին: Պատմաքաղաքական բարդ ժամանակներում Հայաստանի խորհրդարանն առաջին և երկրորդ գումարման ընթացքում համապատասխանաբար գումարել է 87 և 93 նիստեր, որոնցում ընդունել է 1000-ից ավելի օրենքներ և օրենքի ուժ ունեցող իրավական փաստաթղթեր:1920 թ. նոյեմբերի 23-ին գումարվել է խորհրդարանի արտակարգ նիստը, որումհրաժարական է տվել Հ.Օհանջանյանի կառավարությունը, և կազմվել է դաշնակցական նոր կառավարություն՝ Ս. Վրացյանի ղեկավարությամբ:Հայաստանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ.Լեգրանը նոյեմբերի 30-ին դաշնակցական կառավարությանն առաջարկել է իշխանությունը խաղաղ հանձնել Հեղկոմին: Կառավարությունն այն ընդունել է, իսկ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ՌՍՖՍՀ և Հայաստանի Հանրապետության միջև կնքվել է համաձայնագիր, ըստ որի՝ Հայաստանը հայտարարվել է սոցիալիստական հանրապետություն:Եվ, այնուամենայնիվ, կամենում ենք Հայաստանի առաջին հանրապետության ժամանակաշրջանի պատմության շարադրանքն ավարտել այ հանրապետության առաջին մեծության պատմագիր՝ ՀՀ վերջին վարչապետ Սիմեոն

Վրացյանիհուզիչ խոսքերով. <<Այսպիսով ,__ դեռևս 1958-ին գրել է նա.__ պատմական իրողություն է , ուր ներկա Խորհրդային Հանրապետությունը շարունակությունն է ՀՀ-ն: Եթե տեղի չունենային այն մաքառումները , որոնք հանգեցրին հայկական անկախ պետության ստեղծման 1918թ. մայիսի 28-ին , եթե գոյություն չունենար ՀՀ-ը իր ազգային կազմով ու նկարագրով, այսօր գոյություն չէր ունենա և Խորհրդային Հայաստանը ազգային կազմով ու դիմագծով...

Վարչաձևերը ժամանակավոր երևույթներ են:Ժամանակավոր են և վարիչները: Հավերժ են ազգերն ու հայրենիքները՝ հայրենի հողի վրա նստած ժողովուրդները: Հավերժական է ազատատենչ հայ ժողովուրդը, որ մահվամբ մահըկոխելով՝ կերտեց հայրենիքի անկախությունը:Ժամանակները հոլի են դեպքերով : Պատմությունը վերջացած չէ: Մենք հավատում ենք , որ Հայաստանը նորից կլինի ազատ և անկախ,ավելի լայն ազգային սահմաններով...ՀՀ-ը շարունակում է ապրել հայ ժողովրդի սրտում , որպես մշտական հուշ անցյալի և իբրև կենդանի հույս ապագայի>>:

Թեմայի դասավանդման մեթոդիկա

Դասի թեման-Իշխանության մարմինների ձևավորումը

Նպատակը-Աշակերտը պետք է իմանա տվյալ ժամանակաշրջանի Իրադարձությունները,Հայաստանի առաջին հանրապետության առաջացման նախադրյալները,արտաքին և ներքին գործոնները,ներկայացնի առաջին հանրապետության իշխանության ձևավորման սկզբունքները,կառուցվածքը և գործունեությունը

Խնդիրները-Աշակերտի մոտ պետք է ձևավորել որոշակի արժեքային համակարգ՝ գնահատել առաջին հանրապետության գործիչներին,արժեվորել առաջին Հանրապետության դերն ու նշանակությունը հայ ժողովրդի հետագա ճակատագրի մեջ:Իրեն համարել այդ երկրի ժառանգորդը,պահպանողն ու հաջորդ սերնդին փոխանցման պատասխանատուն:

Անհրաժեշտ նյութերը—Դասագիրք,քարտեզ Հայաստանը 1918-1920 թթ<<Առաջին հանրապետության գործիչների վերաբերյալ ցուցապաստառ և ՀՀ առաջին հանրապետության տարանջատումները:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Խթանման փուլ- մտագրոհի միջոցով վեր հանել աշակերտների նախնական գիտելիքները առաջին հանրապետության վերաբերյալ 7-15 րոպե:

Իմաստի ընկալման փուլ-Համակարգելով մտագրոհի արդյունքները՝ ընդհատվող դասախոսության ձևով ներկայացնել նյութը,օգտագործելով՝ Մտքերի քարտեզագրումը և պատմական հիշողության օղակներ սխեմաները15-20 րոպե:

Կշռադատում-այս փուլում հանձնարարել աշխատել զույգերով և ընտրելով որոշակի իրադարձությունն քարտեզագրել կամ կազմել պատմական հիշողության օղակներ:

Կատարել - գնահատում, հաջողված սխեմաները փակցնել պատերին

Հանձնարարել - տնային առաջադրանք--- ուսումնասիրել նյութեր, ինքնուրույն գտնել չպարզաբանված հարցերի պատասխանները

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Հայ Ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ, հ.7,Երևան, 1967:

2.Հայ ժողովրդի պատմություն, բուհական դասագիրք, հ.4, Երևան,1970:

3.Հայ ժողովրդի պատմություն /1801-1978/, բուհական դասագիրք, Երևան,1979:

4.Գալոյան Գ.Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999:

5.Գևորգյան Հ., Դրո, Երևան,1991,1999:

6.Լազյան Գ..Հայաստան և հայ դատը հայ և ռուս հարաբերություններու լույսին տակ, Երևան, 1991:

7.Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետություն /1918-1920թթ/, Երևան, 1992:

8.«Հայկական հարց» Հանրագիտարան, Երևան, 1996:

9.«Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները» (1918-1920 թթ.), Երևան, 1998:

10.«Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.», /քաղաքական պատ-մություն/, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ ակադեմիկոս Գ. Գալոյան, պրոֆ. Վ.Ղազախեցյան և ուրիշներ, Երևան,2000:

11. Ա.Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968:

12.Ասունի Կ., Մայիսյան խռովությունները և թաթարական ապստամբ շրջանները, Բեյրութ, 1968:

13.Փիրումյան Ռ., Հայաստանը ՀՀԴ-Բոլշևիկ հարաբերությունների ոլորտում (1917-1921), Երևան, 1997:

14.Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների դասընթացներ

Մանե Վարդանի Մնացականյան

Ղարաքիլիսայի ճակատամարտը

Հետազոտական աշխատանք

Ղեկավար՝ Ս.Աղաջանյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն …….. 3

Փամբակի գավառը ճակատամարտի նախօրերին ……... 4

Դիմավորման փորձ ……. 7

Նժդեհը «գնում է մեռնելու» ……... 11

Հակառակորդի կորուստները շատ մեծ են …….. ….. 13

Եզրակացություն ……. 15

Օգտագործված գրականության ցանկ …… ... 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի առջև ծառացած արտաքին ու ներքին մարտահրավերները, ինչի հետևանքով կարող է գոյութենական ճգնաժամ առաջանալ ազգի ու պետականության համար: Այսօր անհրաժեշտություն է առաջացել անդրադարձ կատարել հայոց պատմության այնպիսի ժամանակաշրջանների, որոնցում տեղի ունեցած իրադարձությունները համեմատելի են այսօրվա իրադարձությունների հետ, և որոնք հնարավորություն են ընձեռում պատմական զուգահեռներ անցկացնել, արձանագրել ընդհանրություններն ու տարբերությունները, կատարել եզրահանգումներ,որոնց օգտակարությունը կասկածից վեր է:

Այս հետազոտությունը նպատակ ունի բացահայտելու, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, հանրության տրամադրությունների հակասական պատկերը:Այս իմաստով, այսօր նույնպես, Հայաստանի Հանրապետության հանրության մեջ առկա են տրամադրությունների ամբողջովին համեմատելի պատկեր: Մի կողմից պարտության ու կորուստների հետևանքով առաջացած պարտվողական տրամադրություններն են, մյուս կողմից մեր ժողովրդին այս տրամադրություններից դուրս բերելու առանձին անհատների ջանքերը: Սակայն, եթե 1918 թվականին այդ անհատները անմիջական ազդեցություն ունեին իրադարձությունների ընթացքի վրա/ Գարեգին Նժդեհ,Գուրգեն Տեր-Մինասյան/, ապա այսօր պարտվողական տրամադրությունները մերժող,իրավիճակից այլընտրանքային ելք առաջարկող անհատներն ու խմբերը գրեթե ազդցություն չունեն իրադարձությունների զարգացման ընթացքի վրա: Այս իմաստով այն տեսակետը, թե այսօր համեմատաբար ավելի անվտանգ միջավայրում ենք,քան հարյուրերեք տարի առաջ,մեղմ ասած, խնդրահարույց է: Վերջին հարյումյակի ընթացքում մենք այդպես էլ չենք ձևավորել ազգային քաղաքականության ինստիտուտ: Ձևավորված չէ նաև ազգային անվտանգության այնպիսի համակարգ,որը զերծ լինի արտաքին ազդեցություններից: Այսպիսի ինստիտուտների բացակայությունը մեզ հերթական անգամ կանգնեցրել է գոյութենական խնդրի առաջ:

Հայերը ինչպես Արցախյան պատերազմներում,այնպես էլ մայիսյան հերոսամարտերում,այդ թվում և Ղարաքիլիսայում, կռվում էին միայնակ,առանց արտաքին դաշնակիցների,ինչպես օրինակ Գերմանիայի աջակցությունն էր Վրաստանին:

Դաշնակիցների բացակայությունը Հայոց հայրենական պատերազմներում, արդյո՞ք օրակարգային է Հայաստանի Հանրապետության քաղաքական դասի համար:

Ղարաքիլիսայի ճակատամարտը

Փամբակի գավառը ճակատամարտի նախօրեին

1918 թվականի մայիսյան հերոսամարտերը հիմք նախապատրաստեցին մայիսի 28-ին Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման համար: Ղարաքիլիսայի ճակատամարտը փաստորեն վերջինն էր, Սարդարապատից ու Բաշ - Ապարանից հետո, որով վերջակետ դրվեց թուրք-հայկական պատերազմին և ստորագրվեց Բաթումի հաշտության պայմանագիրը:

Պետք է նշել, որ հերոսամարտերի շարքում լինելով վերջինը, Ղարաքիլիսան մի տեսակ ստվերվել է և հաճախ դիտարկվել է որպես Սարդարապատի բաղկացուցիչ մաս: Մինչդեռ, եթե Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատամարտերը ունեին զուտ հայապահպան նշանակություն և նպատակ ունեին փրկել Արարատյան դաշտում ծվարած հայությանը, ապա Ղարաքիլիսայինը ուներ նաև աշխարհաքաղաքական նշանակություն, քանզի դրա հետևանքով ժամանակավորապես կասեցվեց թուրքերի առաջխաղացումը դեպի Թիֆլիս և խանգարվեց քեմալականների ծրագրերի շուտափույտ իրականացումը:

Հանուն արդարության պետք է նշել, որ, ի տարբերություն Սարդարապատի և Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատամարտի մասին ավելի քիչ է գրվել ու խոսվել,հավանաբար հայկական զորքի մարտավարական պարտության պատճառով: Այնինչ հայ ժողովուրդը և հատկապես Լոռվա տարածաշրջանի բնակչությունը պետք է իմանա և չմոռանա այն հերոսական օրերի մասին և, անշուշտ, հասկանան Ղարաքիլիսայի հերոսամարտի խորհուրդը, օգտակար դասեր քաղելով դրանից: Իսկ որ Ղարաքիլիսայի հերոսամարտն ունի իր խորհուրդը՝ կասկածից վեր է:

Այնուամենայնիվ, ինչպես պատահեց, որ Ղարաքիլիսայում ունեցանք մարտավարական, բայց ոչ բնավ, բարոյական ու ռազմավարական, պարտություն: Փորձենք կանգ առնել մի քանի հիմնադրույթների վրա, որոնք բախտորոշ ազդեցություն են ունեցել ճակատամարտի ելքի վրա:

ա/ Ղարաքիլիսայում կային Կարսից տեղափոխված 3000 թուրք ռազմագերիներ,որոնց ճագատագրի կապակցությամբ Թովմաս Նազարբեկյանը մայիսի 18-ին դիմում է Հայոց Ազգային խորհրդին, հայտնելով, որ նրանք կարող են առիթ հանդիսանալ թուրքերի

հարձակման համար: Սա անընդունելի տեսակետ է, քանզի թուրքերը, միևնույն է, ամեն դեպքում առաջ շարժվելու առիթ կգտնեին: Այդպես էլ,պատասխան չստանալով, հայկական հրամանատարությունը Ղշլաղ գյուղի մոտ, բաց դաշտում, ազատ է արձակում ռազմագերի ասկյարներին՝ որպես <<նվեր>> հարձակվող թուրքերին: Չնայած շտաբի և զորքի հեռանալուն երկու ամբողջ օր թուրք գերիները, առանց հսկողության մնալով, թողել հեռացել էին: Տարօրինակ է,որ այդքան ժամանակ գերիները սնվել ու փոխադրվել էին հայկական զորքի հաշվին Կարսից մինչև Ղշլաղ,որպեսզի հետո ազատ արձակվեն: Բնականաբար, այս ավելի կատաղած ասկյարներով Էսադ փաշան ավելացնում է իր զորքերի թվաքանակը: Էլ չենք խոսում այն մասին, որ այդ ռազմագերիները քաջատեղյակ լինելով տեղանքին և հայկական զորքերին, կարող էին օգտակար տեղեկություններ տրամադրել թուրք հրամանատարությանը:

բ/ Ալեքսանդրապոլի անսպասելի անկումը, տասնյակ հազարավոր մարդկանց խուճապահար փախուստը բարոյահոգեբանական ծանր ազդեցություն էր ունեցել Ղարաքիլիսա նահանջած հայկական ստորաբաժանումների վրա: Դասալքությունը մեծ չափերի էր հասել՝ մի քանի հարյուր զինվոր, չլսելով հրամանատարների, այդ թվում՝ Անդրանիկի խորհուրդը, զենքը ձեռքին հեռանում են եւ Սանահինի վրայով շարժվում դեպի Վրաստան, սակայն ընկնում են դարանակալ թաթարների ձեռքը եւ գրեթե ամբողջությամբ կոտորվում: Թուրքերի հարձակմանը զուգահեռ տարածվում են ասեկոսեներ, թե հայկական բանակի բարձրագույն հրամանատարությունը դավաճանել է եւ «երկու բեռ» ոսկով հանձնել Ալեքսանդրապոլը: Բացի այդ, ժողովրդի շրջանում պատկերացում էր ձեւավորվել, թե թուրքերը չեն անցնելու Ախուրյանը, որովհետեւ մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմը սահմանը գետով էր անցնում: Ավետիս Ահարոնյանն այսպես է նկարագրում ժողովրդի նահանջը. «Այս ժողովուրդը, որ տակավին երեկ միամտորեն հավատում էր թուրքի զինադադարին, լույսը չբացված՝ ինքզինքը գտել էր թշնամու կրակի տակ, հասկանալ չէր կարողանում կատարվածը: Ախուրյանը նրա համար անանցանելի մի պատվար էր. թուրքը չպիտի հանդգներ այն թեւակոխել ու անցնել: Նոր դավ կա այստեղ: Ո՞վ է դավադիրը: Եվ տագնապալի փախուստի ճամփին այս անիծված առեղծվածի վրա հազարավոր գլուխներ են տնքում: Եվ հանկարծ, չգիտես որ

տենդահար, բանդագուշակ ուղեղից ծնավ հրեշավոր զառանցանքը նախ որպես վախլուկ շշուկ, ապա կամաց-կամաց որպես դալուկ ու վրեժխնդիր ուրվական եւ անցավ ուշակորույս փախստականների շարքերով ամենքի ականջին կանչեց, թե ինքը՝ Նազարբեկյանն է Ալեքսանդրապոլը ծախել թուրքերին երկու բեռ ոսկով...»

Ղարաքիլիսայի ճակատամարտի մասնակից Մանուկ Ղազարյանը գրում է, որ փախստականների հոսքը ձգվում էր Համամլուից մինչեւ Համզաչիման՝ շուրջ 30 կիլոմետր: Այստեղ էին կենտրոնացել Երեւանի եւ Ղարսի նահանգների բնակչության մեծագույն մասը, ինչպես նաեւ Երզնկայից, Էրզրումից ու Մուշի դաշտից ճողոպրած տաճկահայ հոծ բազմությունը:

Այսպիսով Ղարաքիլիսայի ճակատամարտից օրեր առաջ Ղարաքիլիսայում ծայրահեղ ծանր եւ հուսահատական դրություն էր: Թուրքական բանակի գլխավոր նպատակն էր դուրս գալ Ղազախ-Ելիզավետպոլ (Գանձակ), այնտեղից Բաքու արշավելու համար: Այս նպատակին հասնելու համար թուրքերը պետք է գրավեին Ղարաքիլիսան (Վանաձոր), Դիլիջանն ու Ջալալօղլին (Ստեփանավան): Մայիսի 16-20-ը թուրքերը Ղարաքիլիսայի ուղղությամբ ակտիվ ռազմական գործողություններ չեն ձեռնարկում, սակայն ամսի 20-ին անսպասելի հարձակումով գրավում են Ջաջուռը, եւ հայտնվում Փամբակի գավառում՝ Աղբուլաղում(Լուսաղբյուր), Ղալթախչիում (Հարթագյուղ): Մայիսի 21-ին թուրքական առաջապահ ստորաբաժանումները դուրս են գալիս Վորոնցովկա (Տաշիր), գրավում են Գյոյ Յոխուշը (Սարալանջ),շարժվում դեպի Համամլու (Սպիտակ) եւ մայիսի 22-ին գրավում այն:

Դիմավորման փորձ

Համամլուի առումը ցնցեց՝ անտեր մնացած հարստությունը յուրացնող փամբակեցուն.նա զգաց իր օրհասական դրությունը.փրկության ու պաշտպանության բնազդը խոսեց նրա մեջ: Մի խավար ու անձրևոտ գիշեր Փամբակի երիտասարդությունը,թշնամու դավից փրկվելու համար, ոտից մինչև գլուխ զինված քաշվեց Մայմեխի անմատչելի բարձրունքները:

Գյուղերում մնացին խաղաղ տարրերը:Բայց կազմալուծված էր հասարակությունը.անարխիան ու շանտաժը գլուխ էին բարձրացրել. Գյուղացիությունը ինչպես ասում են, դառել էր <<անգլուխ-Սամի>>: Անհրաժեշտ էր վերականգնել նորմալ կյանքը.հարկավոր էր Ղարաքիլիսային մի խելացի և ուժեղ կամքի տեր ղեկավար: Կայացավ մի բազմամարդ միտինգ. դրված էր թշնամուն դիմավորելու հարցը, Գառները գայլերին խնամախոս են գնում. ի”նչ արած...

Դիմադրելու և մեռնելու <<հավեսը>> կորել էր.ինքնապաշտպանության տրամադրություն չկար. Ամենքին զբաղեցնում էր մի միտք, մի գաղափար – համակերպվել թշնամու պահանջներին, կամովին կրել ստրկության շղթան...

Որոշվեց հասարական գործերի ղեկը հանձնել մի փորձված և եռանդուն գործիչի: Գտնվեց մի այդպիսի անձնավորություն – Արսենանց Վանոն,որ օժտված էր դրական կողմերով: Հեղափոխական անիվն ու ռիսկը տեղի տվեցին խոհականության ու չափավոր քայլերին:Ժողովուրդն իր պարտքը կատարած համարելով. ցրվեց միտինգից, պատսպարվեց իր հարկի տակ և սպասեց օրհասին…

Վանոն,որ վճռել էր մինչև վերջ մնալ իր հայրենիքում,կրել իր հարևանի հետ բռնակալի անագորոյն լուծը և այդպիսով թեթևացնել փամբակեցուն հասած ճակատագրի հարվածները, ստանձնելով իր պաշտոնը՝ անմիջապես անցավ գործնականին – թշնամուն դիմավորմանը:

Հաշտարար պատգամավորությունը պատրաստ էր. Նրան մասնակցում էին Փամբակի գյուղերի հայտնի ներկայացուցիչներ: Հրապարակ էր եկել <<աղ ու հացը>> և <<սպիտակ>> - դրոշակը՝ խաղաղության ու եղբայրության հավիտենական սիմվոլը:

Պատգամավորությունը պետք է գնար մինչև Համամլու և այնտեղ դիմավորեր թշնամուն՝ արտահայտելով ժողովրդի հպատակության ու հնազանդության հավաստիքը: Այս էր միակ միջոցը: Խաղաղ մասսայի կյանքի ու մահվան խնդիր էր վճռվում:Պայքարի ու մարտնչելու պահն անցել էր:

Պատգամավորությունը շարժվեց. Նրան առաջնորդում էր էր <<խաչ ու խաչվառը>>:

Ղշլաղում նրան միացան Գրիշա-Աղան,Հաջի – Ղարի, Դար-Բասի ու Բզովդալի պատգամավորները:

Այդ օրը կարծես բնությունը փորձում էր մեղմանալ.նրա տխուր դեմքը ստանում էր քաղցրահամբոյի ժպիտ, սև ու մռայլ ամպերը կամաց-կամաց հեռանում էին հորիզոնի այն կողմը.կենսատու արևն ուրախ նայում էր երկրին և կարծես բոլորին խոստանում էր կյանք ու անդորրություն…

Պատգամավորության հանդիսավոր երթը հասավ Արչուտ.նրան շրջապատեցին թուրք խուժանը,որին տհաճություն պատճառեց դրոշակը: Այսպիսի պայմաններում հազիվ թե հասնեին Համամլու՝ավելի խելացի

համարեցին վերադառնալ Ղարաքիլիսա և սպասել թշնամու զորքի մոտենալուն:

Անցավ երեք օր.Ղարաքլիսան ընկավ ահ ու սարսափի մեջ: Փրկության հույսի վերջին կայծերը կամաց-կամաց հանգան ու կորան. Մահվան օրհասը տիրեց բոլորին. Խորհրդավոր լռությունը կապարի պես ճնշեց մասսային,որ դառել էր մի հսկա կենդանի դիակ,իսկ Փամբակի գեղեցկանիստ ձորը – մի ահռելի գերեզման...

Բայց մայիսի 24-ին, մի անսպասելի դեպք,ավելի շուտ մի զարմանալի հրաշք եկավ ցրելու համատարած լռությունը,պատռեց մահվան վարագույրը և մարդկանց երակներով հոսեց ապրելու և կռվելու տենչը:

Ղարաքիլիսայից դեպի արևելք, Համզաչիմանի ուղղությամբ,Դիլիջանի ոլորապտույտների վրա երևաց մի անորոշ զանգված, որ քանի մոտենում, ավելի տարածվում և ավելի նկատելի էր դառնում: Շատ չանցած գյուղում երևացին մի խումբ ձիավորներ,ոտից մինչև գլուխ զինված:

Ժողովրդի սարսափահար դեմքին երևացին և' զարմանքի և' ուրախության նշան: Եկվորները ծանոթ դեմքեր էին. ՆԺԴԵՀԻ տղերքը: Հետաքրքրվող բազմությունը շրջապատեց ձիավորներին:

<<**Գալիս է հայ զորքը,մի՞թե. Նրանք,որոնք երեք օր առաջ բռնել էին նահանջի ուղին, կորցրել էին կռվելու տրամադրությունը և խելակորույս փախչում էին գայլերի ռհմակի առաջ,պիտի կռի՞վ տային**...>>:

Գալիս է հայ զորքը, գալիս են հայ կամավորները: Կռիվ պիտի տանք.փախչելն ամոթ ա՜.տղամարդություն պիտի շանց տանք, - արար աշխարհ պիտի զարմացնենք – ծլկողը նամարդ է:

Լսողները չէին հավատում իրենց ականջին, թվում էր ամենքին մի երազ,մի քա՜ղցր ու կարճա՜տև երազ...

Այո՛, այս ամենը երազ չէր,այլ իրականություն: Մի ժամից հետո Ղարաքիլիսա մտավ կազմակերպված մի բանակ մի բուռն ուխտիալ հերոսների,որոնց համար անհարդուժելի էր ստրկության շղթան և արհամարելի - վախկոտի կյանքը: <<Մահ-իմացիալ>>-ները վճռել էին իրենց կյանքի գնով,իրենց արյամբ ստեղծել ժողովրդի համար – անմահություն:

Ղարաքիլիսան ցնծությամբ դիմավորեց ՆԺԴԵՀԻ մահապարտներին:

Անսպասելիորեն մայիսի 24-ը դառնում է փրկության ու հուսավառության օր: Առաջին ոգեւորիչ տեղեկություններն են ստացվում. Բաշ-Ապարանում եւ Սարդարապատում հայկական զորքը հաղթել է, եւ թուրքերը նահանջում են: «Այս սրտապարար ու ցնցող լուրը կայծակի փայլի պես անցավ ծանր վհատությամբ բռնված մթնոլորտում, մտավ բոլոր խրճիթները, ծեծեց բոլոր դռները, արձագանքեց բոլոր ձորերում, բոլոր անտառներում, փախստականների մեջքը շտկեց, եւ հուսաբեկների կորացած ճակատը բարձրացրեց, դասալիքներին հետ շպրտեց դեպի ճակատ եւ խուճապահար, թշվառ ամբոխի աղեկտուր վայունը ցնծության աղաղակների վերածեց»,- Սարդարապատի ու Բաշ-Ապարանի հաղթանակի լուրն այսպես է նկարագրում Ավետիս Ահարոնյանը:

Նժդեհը «գնում է մեռնելու»

Մայիսի 22-ին Կորպուսի սպայակույտը Դիլիջանում ժողով է հրավիրում եւ սկսում համոզել Նազարբեկյանին գնալ Ղարաքիլիսա ու հանձնվել թուրքերին: 4-րդ մարտկոցի հրամանատար, կապիտան **Գուրգեն Տեր-Մովսիսյանը** հայտարարում է, որ ինքը հրաժարվում է ենթարկվել այդ հրամանին: «Ես չեմ հնազանդի այդ որոշման: Դա դավաճանություն է: Ոչ ոք իրավունք ունի այդպես վարվելու Հայոց ճակատագրի հետ: Ես իմ թնդանոթներով այս իսկ րոպեին կմեկնեմ ճակատ՝ մեռնելու: Ով տղամարդ է եւ հայու արյուն ունի իր երակներում՝ թող իմ հետեւից գա»:

Գուրգեն Տեր-Մովսիսյանը

Նժդեհը նույնպես հայտարարում է, որ կռվելու է մինչեւ վերջ. «Սպաները գնում են անձնատուր լինելու: Թող գնա՛ն: Իսկ ես գնում եմ մեռնելու: Ով դեռ իրեն բարոյապես մեռած չի համարում՝ թող հետեւի ինձ»:

Դիլիջանի Ս. Աստվածածին եկեղեցու բակում հավաքվում են հազարավոր մարդիկ, որոնց առաջ ելույթ է ունենում Նժդեհը: Նրա խոսքը կարծես կենդանացնում է մարդկանց, վստահություն եւ պատերազմելու վճռականություն է պարգեւում: «Հանկարծ լսվեցին զանգերի ղողանջներ, բոլորը վազեցին դեպի զանգերը՝ վազում էին սպաներ, զինվորներ,

փախստականներ՝ չիմանալով ինչ է պատահել, բայց բոլորի աչքերում փայլում էր փրկության հույսը»,- գրում է 4-րդ մարտկոցի շտաբս-կապիտան Պետրոսյանցը։

«Նժդեհը այդ օրերում հայտնվեց Ղարաքլիսեի ճակատում՝ նախ որպես խրախուսող առաքյալ։ Նրա խոսքը պողպատ հալեցնելու եւ պատնեշ կանգնելու հիպնոսացուցիչ գրավչություն ուներ։ Դասալքությունը նահանջում էր Նժդեհի հայրենաշունչ խոսքի առաջից։ Շուտով դեպի ճակատ գնալու եւ կենաց ու մահու վերջնական կռիվ մղելու տրամադրություն վերստացավ՝ շնորհիվ Նժդեհի թե՛ համոզիչ խոսքին եւ թե՛ կռիվ վարելու նրա ժողովրդաճանաչ հմտության»,- պատմում էր Ղարաքիլիսայի ճակատամարտի մասնակից Վախթանգ Տեր-Հարությունյանը։

Դեպի ճակատ, այնտեղ է փրկությունը

Մայիսի 24-ին վերակազմավորված հայկական ստորաբաժանումները Դիլիջանից շարժվում են Ղարաքիլիսա։ Զորքը բաժանված էր երեք մասի. հյուսիսում ռազմաճակատի աջ թեւը վստահված էր Անդրանիկին, որն իր 2700 կամավորներով պետք է պաշտպաներ Գարգառի լեռնանցքը (Ստեփանավանից 10 կմ հեռավորությամբ)։ Ձախ թեւում՝ Հաջիղարա (Լեռնապատ) գյուղի մոտ գնդապետ Սամարցյանի ստորաբաժանումն էր եւ կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանի 4-րդ մարտկոցը։

Նրանք պետք է պաշտպանեին Ղարաքիլիսայի հարավում գտնվող Գյադա-Մայմեխ (Անփայտ Մայմեխ) լեռան դիրքերը։ Կենտրոնական հատվածում՝ Դարպասից մինչեւ Ղշլաղ (Վանաձորի Տավրոս թաղամասը) գնդապետ Նիկոլայ Ղորղանյանի հեծելազորն էր եւ Նժդեհի կամավորական ջոկատը։ Մայիսի 25-ին տեղի են ունենում մարտերը թուրքերի առաջապահ հետախուզական ստորաբաժանումների հետ։ Նժդեհի հեծյալներն ու Տեր-Մովսիսյանի մարտկոցը հերոսական կռվով ջախջախում են թուրքերին ու ստիպում փախչել։ Այս հաղթության լուրն էլ ավելի է ոգեւորում հայերին։ Այս մարտում էլ զոհվում է Գուրգեն Տեր-Մովսիսյանը։

Հակառակորդի կորուստները շատ մեծ են

Մայիսի 25-ին Ջալալօղլիում (Ստեփանավան) թուրքերի հետ մարտեր է մղում նաեւ Անդրանիկի ջոկատը, որից հետո տեղափոխվում է Դսեղ եւ այլեւս չի մասնակցում մարտական գործողություններին։

Մայիսի 26-ին Հայկական կորպուսի շտաբը հաղորդում է. «Ղարաքիլիսայի ջոկատն անցել է հարձակման, թեւանցելով թուրքերի աջ թեւը Գյադա-Մայմեխի կողմից։ Թեւանցումը հաջող է անցել, թուրքերին դուրս են մղել Հաջիղարայից եւ նրանից արեւելք գտնվող N 1010 բարձունքից։ Միեւնույն ժամանակ ճակատից գրոհել է Կորգանովի գունդը եւ գրավել N 750 բարձունքը։ Թուրքերը փախել են։ Միայն հեծյալները ոչնչացրել են 200 ասկյար։ Հակառակորդի կորուստները շատ մեծ են»։

Ականատեսներից մեկը նկարագրում է, թե ինչպես էր Նժդեհը հենց առաջնագծում՝ թուրքական շարքերի դիմաց, անձամբ ղեկավարում մարտը։ «Երիտասարդ խմբապետի մտավորական դեմքը փոխվեց, դարձավ մտահոգ ու խիստ։ Քրտինքը քունքերից իջնում էր ցած՝ լվանալով ու լղոզելով դեմքի փոշին։



Աչքերը հուրհրում էին զինավառ կրակով։ Մեր հրետանին եւ մի քանի գնդացիրներ կրակ բացեցին թուրք հեծյալների վրա, բայց չնայած կորուստներին, նրանք շեշտակի մոտենում էին։ Սկսվեց արյունալի դաժան սվինամարտը, որը տեւեց մոտ մեկ ժամ։ Դժվար էր հասկանալ ինչպես

կավարտվի այդ կոտորածը: Խմբապետը գտնվում էր մեր զորքերի մարտաշարքի կենտրոնում եւ մարտը վարում էր վստահ ու համարձակ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ սրամարտում էր որպես գերազանց դրագուն: Թուրքական հեծելազորը ճնշմանը չդիմացավ, սկսեց նահանջել նախ թեւերից, ապա՝ կենտրոնից: ...Մի քանի դաշտային հրանոթներ սկսեցին կրակել նահանջող թուրք հեծյալների վրա՝ ցրելով նրանց եւ նահանջը վերածելով փախուստի:

Թուրքերի հակահարձակումը

Մայիսի 27-ին թուրքերը վերախմբավորում են իրենց ուժերը եւ անցնում հակահարձակման՝ գրավելով նախորդ օրը կորցրած մի քանի դիրքը: Կորպուսի հաղորդագրության մեջ նշված էր, որ «2000 ասկյարներ Գյուլազարակի ճանապարհով շարժվում են դեպի Գյադա-Մայմեխի շրջան: Թուրքերը սկսում են նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնել»: Նույն օրը Նազարբեկյանը հեռագրում է Ազգային խորհրդին, որ անհրաժեշտ է հաշտության ուղիներ գտնել թուրքերի հետ:

Հայկական ուժերը զգալի կորուստներ էին կրել, սպառվում էր զինամթերքը, սակայն համառ մարտերը շարունակվում էին: Բոլորը օգնության հույս ունեին: Չկարողանալով դիմադրել թուրքական նոր ուժերին՝ հայերը նահանջում են: Մայիսի 28-ին թուրքերը գրավում են Ղարաքիլիսան եւ Վարդանլուն:



Եզրակացություն

Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից (1917 թ.) հետո ռուսական զորքերը լքել էին Կովկասյան ռազմաճակատը: Տրապիզոնից մինչև Վանա լիճ՝ 400 կմ երկարությամբ, թուրքերին դիմակայել են գերազանցապես հայկական խմբեր և նոր կազմավորվող զորամասեր: Թուրքական զորքերը, խախտելով Անդրկովկասի կոմիսարիատի հետ 1917 թ-ի դեկտեմբերի 5-ին կնքած զինադադարը, 1918 թ-ի փետրվարի 10-ին անցել են հարձակման և նվաճել Երզնկան, Կարինը, Սարիղամիշը, Կարսը: Հայկական առանձին բանակային կորպուսը, գեներալ Թովմաս Նազարբեկյանի հրամանատարությամբ, գերակշիռ ուժերի ճնշման տակ նահանջել է. նրա հետ արտագաղթել են տասնյակ հազարավոր արևմտահայեր, որոնց անվտանգությունն ապահովել է Անդրանիկի ջոկատը:Մայիսի 15-ին, Ալեքսանդրապոլը (այժմ՝ Գյումրի) գրավելուց հետո, թուրքական մի զորամաս արշավել է Ղարաքիլիսա (այժմ՝ Վանաձոր), իսկ 36-րդ դիվիզիան, Յաղուբ Շնքի փաշայի գլխավորությամբ թափանցելով Արարատյան դաշտ, արշավել է Սարդարապատի ուղղությամբ՝ Երևան ներխուժելու նպատակով:

Մայիսյա ն հերոսամարտերի և Հայաստանի Հանրապետության պատմական նշանակությունն ու դասերը

1. 1918 թ. մայիսին օրակարգում էր դրված հայ ժողովրդի լինել-չլինելու, իր Հայրենիքի մի փոքր անկյունում՝ Արևելյան Հայաստանում ապրելու, գոյատևելու խնդիրը: Հայ ժողովուրդը հերոսաբար լուծեց այդ պատմական խնդիրը, կարողացավ ջախջախել թուրքական զորքերին և զենքով ձեռք բերել իր սեփական հայրենիքում ապրելու, գոյատևելու ու զարգանալու իրավունքը: Չլինեին այդ պատմական հաղթանակները հայ ժողովուրդը կկորցներ իր Հայրենիքի վերջին անկյունը՝ Արևելյան Հայաստանը, ժողովրդի մի մասը ցեղասպանության կենթարկվեր, մյուս մասը՝ կհեռանար օտար երկրներ: Արևելյան Հայաստանը և արևելահայությունը կարժանանային այն դաժան ճակատագրին, որին արժանացան Արևմտյան Հայաստանը և արևմտահայությունը: Արևելյան Հայաստանը հայաթափ կլիներ, այն կբնակեցվեր թուրքերով, ադրբեջանցիներով և քրդերով:

2. Մայիսյան հերոսական ճակատամարտերով ազատագրվեց Արևելյան Հայաստանը, մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի Անկախ Հանրապետությունը։ Ավելի քան 600 տարվա ընդմիջումից հետո վերականգնվեց հայոց անկախ պետականությունը, որը ժողովրդի գոյապահպանման ու զարգացման հիմնական պայմանն է։ Մայիսյան հերոսամարտերը և մայիսի 28-ը նշանավորեցին պետականության կորուստից հետո մղված ազատագրական դարավոր պայքարի հաղթանակը, հայոց պետականության վերածնունդը։
3. 1918 թվականին հայերը թուրքերի դեմ ժողովրդական պատերազմ էին մղում, որին մասնակցում էր ամբողջ հայ ժողովուրդը։ Թուրքական զորքերն Արևելյան Հայաստան էին ներխուժել ամբողջ հայությանը ոչնչացնելու նպատակով և հայ ժողովուրդն էլ կռվի ելավ ամբողջությամբ՝ մեծից մինչև փոքր, իր բոլոր կուսակցություններով և դասակարգերով։ Հաղթահարվեց կուսակցական, դասակարգային, քաղաքական, հատվածային պառակտվածությունը, որը նախորդ շրջաններում երբեմն բախտորոշ վնասներ էր հասցրել ազատագրական շարժմանը։1918 թվականի մայիսին հաղթեց ազգային միասնության գաղափարը, հաղթեց ժողովրդի գոյապահպանման հիմնական գործոնը ՝ ինքնապահպանման բնազդը։
4. Թուրքերը, քրդերը և չերքեզները դարեր շարունակ և ոչ առանց հաջողության, հայերի մեջ արմատավորում էին պարտվողականության, ստրուկի և զոհի բարդույթը։ Եվ դա ցավոք աստիճանաբար դառնում էր ազգային բնավորության գիծ։ 1918 թվականի Մայիսյան հերոսամարտերում հաղթահարվեց այդ չափազանց վտանգավոր բարդույթը։ Հայ ժողովրդի մեջ վերազարթնեց իր նախնիների քաջարի ոգին, հայ ժողովուրդը հավատաց իր ուժերին, իր հաղթանակին, իր ապագային, որ չի պատկանում կործանված ազգերին, և գալիք դարերում առաքելություն ունի իրագործելու։
5. Մայիսյան Հերոսամարտերով և Հայաստանի Հանրապետության հռչակմամբ հայ ժողովուրդը թևակոխեց իր պատմության նորագույն շրանը՝ ցույց տալով աշխարհին, որ չի կորցրել հոգու կորովը և պատրաստ է նորագույն շրջանում ևս զենքը ձեռքին ապահովելու Հայրենիքի անկախությունը, ապրելու և զարգանալու իրավունքը։ Այդ դրույթը հայ ժողովուրդը փայլուն կերպով ապացուցեց

Ղարաբաղյան շարժման տարիներին դրսևորած ազգային-ազատագրական հերոսական պայքարով

6. Հայաստանի Առաջին Հանրապետությունը հիմք հանդիսացավ Խորհրդային Միության կազմում Հայաստանի՝ որպես միութենական հանրապետություն գոյության համար Միութենական հանրապետություն՝ Խորհրդային Հայաստանում, հետագա տասնամյակներում բարենպաստ պայմաններ ստեղծվեցին հայության կոնսոլիդացիայի , ժողովրդական տնտեսության, մշակույթի, գիտության, կրթական համակարգի թռիչքաձև զարգացման համար, առանց որի 1991 թվականին բացառվում էր Հայաստանի Անկախ Հանրրապետության հռչակումը։

Օգտագործված գրականության ցանկ

1. **Էլչիբեկյան Հ.,** <<Ղարաքիլիսայի ճակատամարտը>>. <<Տեղեկագիր հասարակագիտական գիտությունների>>, Երևան 1947, N 8
2. **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն,Երևան, 1993
3. **Մելիքյան Վ. ,** Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերը, <<Հայկական բանակ>>, N 2,1988
4. https://republic.mediamax.am/story/29/

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա

Անգլիայի քաղաքականությունը Արցախի նկատմամբ 1918-1920թթ

Կատարող՝

Վանաձորի թիվ 13 ավագ դպրոցի պատմության և հասարակագիտության ուսուցչուհի

Գայանե Գագիկի Առաքելյան

Ղեկավար՝ պ.գ.թ Ս.Աղաջանյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

1.Իրավիճակը Լեռնային Ղարաբաղում մինչև 1918թ----------4

2.Անդրկովկասի ռազմակալումը Մեծ Բրիտանիայի կողմից 1918թ----------6

3.Արցախահայության պայքարը և բրիտանական քաղաքակությունը 1918-1919թթ ----8

4.1920թ... ----------12

5.Եզրակացություն----------14

6.Գրականություն----------15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի պատմության թերևս ամենաբարդ ու դրամատիկ իրադարձություններով հարուստ ժամանակաշրջանը 20րդ դարի սկիզբն է և հատկապես Առաջին հանրապետության երկուսուկես տարիները:Պատմական իրադարձությունների շղթան պատահականության բերումով հանգեցրեց կորսված պետականության վերականգնմանը:Թեև կարճ տևեց այդ անկախությունը,բայց այնքան բազմաշերտ ու խճճված իրադարձություններ էին,որ մինչ այսօր բազմաթիվ հարցերի պատասխաններ մնում են չլուսաբանված:Դրանց հետազոտությունը և վերլուծությունը ոչ միայն լույս կարող է սփռել շատ հարցերի վրա,այլ այսօր 21րդ դարում տեղի ունեցող աշխարհաքաղաքական նոր իրողությունների պայմաններում բազմաթիվ զուգահեռներ անցկացնելով 1918-1920թթ իրադարձությունների հետ,ակնհայտ են դարձնում նաև արդի միջազգային քաղաքականության խորքային պատճառները,որոնք ցավոք բազմաթիվ անտեսանելի թելերով կրկին գնում են դեպի 20րդ դարի սկիզբ:Այդ ժամանակաշրջանում բարդ ու հերոսական պայքարի ուղի անցավ նաև Արցախը,երբ հայության գլխին կրկին կախվեց բնաջնջման և օտարման վտանգը:1918թ տեղի ունեցած իրադարձությունները և բրիտանական զորքերի մուտը տարածաշրջան նոր իրավիճակ ստեղծեցին հայության համար:Այս թեման բավականին արդիական ու կարևոր է հատկապես այսօր ,քանի որ 2020թ 44 օրյա պատերազմում արցախահայության և ՀՀ կրած պարտության հետևանքով Ադրբեջանը ավելի հետևողականորեն կեղծում է պատմական ճշմարտությունը և կարծում եմ այստեղ մեծ աշխատանք է պահանջվում հայ հասարակության բոլոր շերտերից և առաջին հերթին ուսուցչից:«Հայ-ադրբեջանական և հայ- թուրքական հարաբերությունները» թեման ուսումնասիրում ենք նաև ավագ դպրոցի 12-րդ դասարանի հայոց պատմության դասընթացի «Հարաբերությունները հարևան երկրների հետ:Տարածքային հիմնախնդիրները» դասի շրջանակներում:Եվ որպես ապագա կրթված ու գիտակից քաղաքացի ձևավորելու նպատակով հարկավոր է սովորողների մոտ զարգացնել իրադարձությունները վերլուծելու համադրելու ու համեմատելու հմտությունները,ինչը հնարավորություն կտա ապագայում ձևավորել ճկուն դիվանագիտություն և շատ հարցեր իրենց լուծումը կգտնեն ոչ թե պատերազմի դաշտում,այլ դիվանագիտական սեղանի շուրջ:Այս հիմնախնդրին անդրադարձել են Ս. Վրացյանը «Հայաստանի Հանրապետություն»,Ա.Ղարիբյանը «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920թթ և Մեծ Բրիտանիան» աշխատություններում:Այս աշխատանքում անդրադարձ է կատարվել 1918-1920թթ Լեռնային Ղարաբաղում տիրող իրավիճակին,բրիտանական քաղաքականությանը,արցախահայության հերոսական պայքարին:Թեմայի արդիականությունը կարևորելու նպատակով աշխատանքի մեջ ներառված են նաև մի քանի հնարներ,որոնց կիրառման արդյունքում դասի արդյունավետությունը ավելի բարձր կլինի:

1.Իրավիճակը Լեռնային Ղարաբաղում մինչև 1918թ

Նախ մի փոքիրկ պատմական էքսկուրս անցկացնենք և հիշենք Արցախ աշխարհի մասին պահպանված տեղեկությունները: Եվ քանի որ Արցախի մասին սովորողները տեղեկություններ գիտեն նաև 10-րդ և 11-րդ դասարանների հայոց պատմության դասընթացից,կարող ենք կատարել մտագրոհ և պարզել նախագիտելիքները:Ներկայիս Լեռնային Ղարաբաղի տարածքը կազմում է պատմական Արցախ նահանգը:Այն Մեծ Հայքի 15 նահանգներից մեկն է և աչքի ընկնում իր բարձրադիր անառիկ դիրքով:Ըստ Ղևոնդ Ալիշանի Ղարաբաղը ընդգրկում է Արցախ նահանգի միջնամասը, մասնավորապես Սյունիքից մինչև Կուր ընկած մասը:Եվ Ղարաբաղն իր անունը ստացել է խոր անտառների,այգիների և դրանց ստվերների պատճառով:Պարսկերենից թարգմանած Ղարաբաղ նշանակում է« Սև այգի»:Ղարաբաղը թե քաղաքակրթական ,թե մշակութային և թե տնտեսական կապերով կապված է Հայաստանի հետ:Դրա մասին են վկայում հայ ազգաբնակչության,մշակութային բազմաթիվ կոթողների,հուշարձանների առկայությունը:15-16-րդ դարերում Ղարաբաղում հայ բնակչության կողքին բնակություն են հաստատում նաև թուրք քոչվոր ցեղերը,սակայն հայերը կարողանում են պահպանել իրենց ինքնավարությունը:Հիշենք նաև 1722-1731թթ արցախահայության մղած ազատագրական պայքարը, 1736թ Խամսայի մելիքությունները,Իսկ 19-րդ դարի ռուս պարսկական պատերազմի արդյունքում 1813թ Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղն անցավ Ռուսաստանի տիրապետության տակ,իսկ 1868թ այն գերակշիռ մասով մտավ նորաստեղծ Ելիզավետպոլի նահանգի մեջ:Եվ պետք է նշել,որ միշտ էլ հայ բնակչությունը այս երկրամասում կազմել է մեծամասնություն,օրինակ. «Ղարաբաղի լեռնաստանում 1917թ տվյալներով ապրում էին հայեր 150000(70%),մուսուլմաններ 58000(27%),մնացած ազգեր 5000(3%)»:(3,էջ326) Ռուսական հեղափոխությունը Ղարաբաղում ևս ընդունվեց խանդավառությամբ:Հեղափոխության առաջին օրերից Շուշիում կազմվեց հայ թուրքական միջկուսակցական մի բյուրո,որի կողմից նշանակվեց շրջանային գործադիր կոմիտե,որը պետք է վարեր Ղարաբաղ-Զանգեզուր միացյալ շրջանի կառավարական գործերը:«Հայերն ու թուրքերը համերաշխ էին.գավառի հայկական մասերում ղեկավարում էին հայերը,թուրքական մասերում թուրքերը»:3,էջ327Այս իրավիճակը տևեց մինչև 1918թ ամառը,երբ լուծարվեց Անդրկովկասյան միությունը,իսկ նորաստեղծ Ադրբեջան պետությունը տարածքային հավակնություններ սկսեց դրսևորել Ղարաբաղ,Զանգեզուր և Նախիջևան հայկական տարածքների նկատմամբ:Այստեղ կարելի սովորողներին բաժանել նախապես պատրաստված ՀՀ համր քարտեզ և հանձնարարել գունավորել Հայաստանի հարևան երկրները և 1918թ դրությամբ վիճելի տարածքները,և համր քարտեզի հետ առաջադրել հարցադրումներ.ո՞ր երկրների հետ էին կապված տարածքային վեճերը,որտեղի՞ց է սկզբնավորվում տարածքային վեճերը,ո՞ր երկրի հետ բարիդրացիական հարաբերություններ կային ձևավորված:Ապա ներկայացնել 1932թ քարտեզ ու համեմատել տարածքային ինչ փոփոխություններ են կատարվել,դրանից հետևություն անելով ի՞նչ լուծում են ստացել տարածքային վեճերը(հ.1):Լավ աշխատանք է նաև Մ-ձև համեմատական աղյուսակի կիրառումը,այս դեպքում կարող ենք ընտրել Գերմանիա, Մեծ Բրիտանիա,Ռուսաստան,Թուրքիա և լրացուցիչ նյութեր տրամադրելով սովորողներին առաջադրել լրացնել սյունակները,թե որ երկիրը ինչ շահեր ուներ Անդրկովկասում,ապա համեմատելով վերլուծել այդ երկրների դիրքորոշումը հայկական պետության,տարածքային պահանջների նկատմամբ(հ.2):

Հ.1

Հ.2

Երկիրը	Շահերը Անդրկովկասում	Նմանություն	Տարբերություն
Գերմանիա			
Մեծ Բրիտանիա			
Թուրքիա			
Ռուսաստան			

Հ.3

Քննարկում. «Իրավունքը ուժեղինն է»:

Հարցադրումներ.

1.Ինչպե՞ս եք հասկանում այս ասույթը:

2.Պատմությունից հիշեք օրինակներ,երբ հակամարտությունները լուծվել են ուժի միջոցով:

3.Արդյո՞ք արդարացի է նման մոտեցումը:

4.Ո՞ր դեպքում կարելի է հակամարտությունը լուծել դիվանագիտության միջոցով:

Հ.4

Աշխատանք սկզբնաղբյուրի հետ (Ս.Վրացյան «Հայաստանի Հանրապետություն»)

«Դեկտեմբերի սկզբին Շուշի հասավ անգլիական զինվորական առաքելությունը:Այդ առթիվ ղարաբաղցիք որոշեցին հարաբերության մեջ մտնել անգլիացիների հետ:Գավառի 4 շրջանների և քաղաքի մեկական ներկայացուցիչներից կազմվեց Ղարաբաղի ժամանակավոր խորհուրդ,որը բանակցության մեջ մտավ անգլիացիների հետ կամենալով որոշել Ղարաբաղի քաղաքական դրությունը:Անգլիացիք խուսափեցին այդ հարցից,պատասխանելով,թե իրենք քաղաքական լիազորություններ չունեն,թե այդ հարցով կզբաղվեն զորավար Թոմսոնից հրահանգ ստանալուց հետո,բայց ձեռքի տակից աշխատեցին համոզել հայերին ընդունելու Ադրբեջանի իշխանությունը»:

2. Անդրկովկասի ռազմակալումը Մեծ Բրիտանիայի կողմից 1918թ

1918թ հունիսի 4ին կնքված Բաթումի պայմանագրով Թուրքիան իր տիրապետությունն էր հաստատում Հայաստանի զգալի տարածքներում:Թուրքական զավթողական նպատակները այդ պահին ձգվում էին նույնիսկ մինչև Աֆղանստան և Հնդկաստան: Հատկանշական է ,որ թուրք-մուսավաթականները չէին բավարարվում Բաթումի պայամանագրի ստացածով,այլ «...պնդում էին,որ Երևանն իր բնակչությամբ ու պատմությամբ ադրբեջանական քաղաք է,ուստի պահանջում էին այն կցել Ադրբեջանին, իսկ ՀՀ մայրաքաղաքը,ըստ նրանց պետք է լիներ Էջմիածինը»2,էջ306 : Չնայած Թուրքիայի դաշնակից Գերմանիայի հորդորներին և պահանջներին,որ թուրքական զորքերը պետք է հետ քաշվեն մինչև Բրեստ Լիտովսկի պայմանագրի սահմանները,քանի որ Գերմանիան փորձում էր կանխել Թուրքիայի դիրքերի ամրապնդումը Անդրկովկասում,1918թ հունիսի կեսերին սկսվեց թուրքական զորքերի ռազմարշավը դեպի Բաքու: Բաթումի պայմանագրի դրույթներով Թուրքիան հայկական կողմին պարտավորեցնում էր նաև Բաքվից դուրս բերել և անմիջապես լուծարել այնտեղ գտնվող իր ազգային զորամասերը:Գիտակցելով վտանգը,որ դա հանգեցնելու է արևելահայության նոր կոտորածի ու տեղահանության,հայկական կողմը չճանաչեց հայկական զորամասերի լուծարման վերաբերյալ Բաթումի պայմանագրի դրույթները և համագործակցելով Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհրդի հետ ի դեմս Ստեփան Շահումյանի,դիմեցին ինքնապաշտպանության:«Հուլիսի 3 ին Բաքվում թուրքական վտանգը դառնում է սպառնալից,հայերը հուսադրվում էին բրիտանական օգնության գալստյան հույսով:Բաքվի հայկական և ռուսական զորքերը վատ էին զինված և մարտունակ չէին»:1,էջ26 Իսկ անգլիական շահերն Անդրկովկասում ավելի հստակ դարձան այն բանից հետո,երբ ռուսական զորքերի նահանջով վտանգվեց թուքերի հետ ռազմաճակատի գիծը և ուժեղացավ ընդհանուր ճակատի քայքայման վտանգը:Իսկ ինչ շահ ուներ Մեծ Բրիտանիան Անդրկովկասում,չէ՞ որ յուրաքանչյուր մեծ պետություն իր գործողություններում առաջնորդվում է ազգային շահերից ելնելով, հատկապես եթե խոսքը վերաբերում է գաղութատեր խոշոր երկիր Մեծ Բրիտանիային:Հայտնի է,որ դեռևս 19րդ դարի վերջից անգլիական նավթային ընկերությունները որոշակի տեղ էին զբաղեցնում Բաքվի նավթարդյունաբերության մեջ:Այդ ծավալներն ավելի մեծացան առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին:Բացի այդ Անդրկովկասում առանձնահատուկ նշանակություն ունեցող տնտեսական և ռազմական ճանապարհներին անգլիացիների տիրանալը կհեշտացներ նրանց տիրապետության հաստատումը Միջին Ասիայի և Մերձավոր Արևելքի վրա, ինչպես նաև զգալիորեն կկրճատեր ճանապարհը դեպի Հնդկաստան:Այս ամենին ավելանում էր նաև 1917թ դեկտեմբերի 23-ին Անգլիայի և Ֆրանսիայի միջև կնքված գաղտնի համաձայնագիրը, ըստ որի Կուբանը,Հայաստանը,Վրաստանը,Ադրբեջանը և Քրդստանը վերահսկվելու էր Անգլիայի,իսկ Բեսարաբիան,Ուկրաինան և Ղրիմը՝Ֆրանսիայի կողմից:Հետամուտ լինելով իրենց ռազմաքաղաքական նպատակների իրագործմանը,դաշնակիցները բոլոր քայլերը շղարշում էին քրիստոնյաներին օգնելու բարձրագոչ քարոզներով ու կոչերով:Ինչպես վերը նշվեց 1918թ հունիսի կեսին սկսվեց թուրքական զորքերի արշավանքը դեպի Բաքու:Բաքվի պաշտպանների վիճակը ավելի ծանրացավ օգոստոսի վերջին,քանի որ ինչպես գրում է անգլիացի գեներալ Դենստերվիլը,պաշտպանությունը շատ թույլ էր կազմակերպված,իսկ տեղի թուրք մուսավաթականները թաքուն օժանդակում էին

թուրքերին:Սեպտեմբերի 15-ին թուրքերը գրավեցին Բաքուն,տեղի 100հազարի հասնող հայ բնակչության 30հազարին կոտորեցին,իսկ մյուսներին հաջողվել էր տեղափոխվել քիչ թե շատ ապահով վայրեր:Սեպտեմբերի 20-ին Բաքվի 26 կոմիսարներին,որոնց թվում էին Ստ.Շահումյանը,Գր.Կորգանովը գնդակահարվեցին անդրկասպյան էսեռական իշխանությունների և անգլիացիների կողմից:Ելիզավետպոլի ու Բաքվի նահանգների հայկական գավառներում հայերի հալածանքների քաղաքականությունը շարունակվեց նաև հետագա տարիներին:Ոգևորված թուրքական բանակի հաջողություններով Ադրբեջանի կառավարությունը նոր ոտնձգությունների դիմեց Զանգեզուրի ու Ղարաբաղի նկատմամբ:Ցավոք անգլիացիները ոչ մի քայլ չձեռնարկեցին հայերի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ,քանի որ ինչպես երևում է գաղտնի փաստաթղթերից նրանց պլաններում չէր մտնում միացյալ Հայաստան ստեղծելու տեսլականը:Այստեղ տեղին է ներկայացնել մի դրվագ Բաքվի պաշտպանության շուրջ համայնքների պալատում տեղի ունեցած հարց ու պատասխանից,երբ այն հարցին,թե ինչ տեղեկություն կա Բաքուն պաշտպանող ուժերի ապահովության վերաբերյալ,հնչում է հաջորդ հարցը.«հայկական, թե՞ բրիտանական ուժերի մասին է խոսքը»:Պատասխանը գոհացուցիչ էր ներկաների համար,քանի որ բրիտանական ուժերին վտանգ չէր սպառնում:Պարզ է,որ անգլիացիները նպատակ չունեին անհանգստանալու հայերի ապահովությամբ:Ինչպես երևում է հետագա գործողություններից,նրանք մինչև վերջ այդպես էլ չէին վստահում հայերին նրանց համարելով «անուղղելի ռուսասերներ»:1918թ հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարից հետո , երբ Օսմանյան Թուրքիան պարտվել էր պատերազմում և հետ էր քաշում իր զորքերը Անդրկովկասից,այդ տարածքները արագորեն սկսեցին ռազմակալվել բրիտանական զորքերի կողմից:Արդեն նոյեմբերի 17-ին անգլիական զորքը մտավ Բաքու գեներալ Թոմսոնի գլխավորությամբ: Դեկտեմբերին արդեն ամբողջ Անդրկովկասը գտնվում էր անգլիական զորքերի հսկողության տակ:

3.Արցախահայության պայքարը և բրիտանական քաղաքականությունը 1918-1919թթ

Ամբողջ 1918թ ընթացքում ծայրահեղ լարված իրադրություն էր Ղարաբաղում: Հարաբերությունները լարված էին տեղի հայ և թաթար բնակչության միջև:Ծայրահեղ ծանր էր պարենավորման խնդիրը:Թուրքիայի դրդմամբ Ադրբեջանի կառավարությունը վերջնագրեր է ուղարկում Հայոց ազգային խորհրդին Ղարաբաղը Ադրբեջանին պատկանելու պահանջով:Հայաստանի կառավարությունը հայտարարում է ,որ Ղարաբաղը Հայաստանի անբաժանելի մասն է կազմում և պատրաստ են փոխարենը զիջելու Գանձակը և երբեք Ղարաբաղը: 1918թ հուլիսի 22-26- ը Շուշիում հրավիրվեց արցախահայության առաջին համագումարը,որտեղ ընտրված Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը կազմեց կենտրոնական պաշտպանության շտաբ Արտաշես Վարդանյանի գլխավորությամբ:Ցավոք 1918թ աշնանը թուրքերին հաջողվում է կտրել Զանգեզուր- Ղարաբաղ կապը գրավելով Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը,իսկ նոյեմբերի 16-ին Զանգեզուրից Անդրանիկը երբ փորձեց օգնության հասնել Ղարաբաղին,նրա առաջխաղացումը կանգնեցնում են գեներալ Թոմսոնի հրամանով: Վերջինս ուղերձ է ուղարկում Անդրանիկին այն մասին,որ շուտով Եվրոպայում նախատեսվող կոնֆերանսի ժամանակ պետք է քննարկվի հայկական հարցը,ուստի իր քայլով նա միայն կվնասի գործին:«Իրականում չցանկանալով թույլ տալ Հայաստանի Հանրապետության հզորացումը և տեղյակ լինելով նրա կապերին հարավային Ռուսաստանի ուժերի հետ բրիտանացիները ամեն գնով ձգտում էին պահպանել իրավիճակի նկատմամբ գերակայությունը...նրանց ցանկալի չէր նաև հայկական հողերի միավորումը,քանի որ բրիտանական կառավարությունը չէր կարող թույլ տալ Ադրբեջանի և Թուրքիայի վերջնական թուլացումը իրենց իսկ շահերից ելնելով»:1,էջ80 Մուսավաթական իշխանությունները ուշադիր հետևելով իրադարձությունների ընթացքին ,իրենց բազմաթիվ հանդիպումներում ճնշում էին գործադրում Թոմսոնի վրա: Ահա թե ինչու Թոմսոնը արգելեց Անդրանիկի մուտքը դեպի Շուշի:Իսկ Անդրանիկն էլ ըստ էության երկմտանքի առջև էր կանգնած,քանի որ եթե չկատարեր անգլիացիների հրահանգը,մտածում էր,թե կարող էր վնասել գործին:Բայց ինչպես տեսնում ենք թե 1918թ,թե այսօր իրավիճակը Ղարաբաղի շուրջ գրեթե նույնն է,ամեն պարագայում մեծ տերությունների շահերի բախման կիզակետում անտեսվում է հայկական արդար պահանջատիրությունը:(Այստեղ տեղին է կիրառել նաև հետևյալ ասույթը և կազմակերպել քննարկում.(տես նկ.3)«Իրավունքը ուժեղինն է» և առաջարկել վերհիշել պատմությունից օրինակներ,երբ ուժի իրավունքով են լուծում գտել հակամարտությունները): Անդրանիկն իր ուժերի հետ քաշվեց դեպի Զանգեզուր:Նրա հեռանալուց հետո թուրքերը ոչնչացրին Ղարաբաղի ու Զանգեզուրի միջև ընկած հայկական գյուղերը:Այստեղ կարելի է կատարել աշխատանք սկզբնաղբյուրի հետ ներկայացնելով հատված Ս.Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն» աշխատությունից. (տես հ.3)«Դեկտեմբերի սկզբին Շուշի հասավ անգլիական զինվորական առաքելությունը:Այդ առթիվ ղարաբաղցիք որոշեցին հարաբերության մեջ մտնել անգլիացիների հետ:Գավառի 4 շրջանների և քաղաքի մեկական ներկայացուցիչներից կազմվեց Ղարաբաղի ժամանակավոր խորհուրդ,որը բանակցության մեջ մտավ անգլիացիների հետ կամենալով որոշել Ղարաբաղի քաղաքական դրությունը:Անգլիացիք խուսափեցին այդ հարցից,պատասխանելով,թե

իրենք քաղաքական լիազորություններ չունեն,թե այդ հարցով կզբաղվեն զորավար Թոմսոնից հրահանգ ստանալուց հետո,բայց ձեռքի տակից աշխատեցին համոզել հայերին ընդունելու Ադրբեջանի իշխանությունը»:(տես հ.4) 3,էջ330 Սկզբնաղբյուրի հետ ներկայացնել նաև հարցեր մտորելու համար,մասնավորապես համեմատելու, վերլուծելու անգլիացիների վարած քաղաքականությունը Ղարաբաղի նկատմամբ և բացատրելու իրադարձությունների պատճառահետևանքային կապերը:Անգլիացիների համար Ղարաբաղի և Զանգեզուրի ճակատագիրը որոշված էր.նրանք վճռել էին այդ հողամասերը միացնել Ադրբեջանին:Թոմսոնը հանդես գալով հայտարարությամբ,նշում էր,որ Մեծ Բրիտանիան Ադրբեջանի տարածքը համարում է միասնական ամբողջություն և այդ տարածքի վրա ճանաչում է միայն ադրբեջանական իշխանությունը:Պարզ է,որ միասնական տարածք ասելով Թոմսոնը նկատի ուներ նաև Ղարաբաղն ու Զանգեզուրը:«Այս քայլով անգլիացիները փորձում էին ուժեղացնել հեռանկարային ու խոստումնալից երիտասարդ պետություն Ադրբեջանին,որն ուներ հարուստ նավթահանքեր և հեշտ կառավարելի էր»1,էջ82 :Ծանր էր նաև 1919թ, արցախահայության հերոսական պայքարի ևս մեկ տարի:1919թ հունվարին բրիտանացիների համաձայնությամբ ադրբեջանական կառավարությունը ստեղծում է Զանգեզուր-Ղարաբաղի ժամանակավոր գեներալ-նահանգապետություն,իսկ հունվարի 15-ին Թոմսոնի հավանությամբ Ղարաբաղ-Զանգեզուրի ընդհանուր նահանգապետ նշանակվեց Խոսրով բեկ Սուլթանովը,որը հայտնի էր իր հայատյացությամբ:Ինչպես նշում է Ս.Վրացյանը.«Ղարաբաղի բնակչությունը չէր կարող հաշտվել զորավար Թոմսոնի կարգադրության հետ:Փետրվարի 12-ին հրավիրվում է համաղարաբաղյան 4-րդ համագումարը,որը ևս մեկ անգամ որոշեց,որ Ղարաբաղը Հայաստանի անբաժանելի մասն է ...Անգլիացիների բոլոր ջանքերն անցան ապարդյուն,ղարաբաղցիները մերժեցին ճանաչել Սուլթանովի իշխանությունը»: 3,էջ331Փետրվարի երկրորդ կեսին բրիտանացիները ուժեղացնում են ճնշումը հայերի վրա:Սուլթանովի իշխանությունը ճանաչելու պահանջով փետրվարի 24-ին ՀՀ արտաքին գործերի նախարարին հատուկ գրություն է ուղարկում Երևանում բրիտանական միսիայի ներկայացուցիչ գեներալ Ասսերը:Անգլիացիների բացասական վերաբերմունքը հայերի նկատմամբ բացատրվում է բոլշևիկների հետ ունեցած կապերով,ինչպես նաև Լոռու գավառի վիճելի տարածքի հետ կապված անգլիացիների մոտ հայերի նկատմամբ վրացական կողմի բամբասանքներով(իբրև թե հայերը չեն վստահում անգլիացիներին և ցանկանում են ռուսների վերադարձը Անդրկովկաս):Իրավիճակը չփոխվեց նաև այն ժամանակ,երբ գեներալ Թոմսոնին փոխարինեց գեներալ Շատելվորդը:Վերջինս հայտարարեց,որ պաշտպանելու է Սուլթանովի բոլոր հրամանները:Իսկ 1919թ փետրվարի12-21,ապա ապրիլի 23-29 ընթացքում տեղի ունեցած արցահայության չորրորդ և հինգերորդ համագումարները:Հատկապես լարված մթնոլորտում անցավ հինգերորդ համագումարը:Շուշի է ժամանում նաև գեներալ Շատելվորդը,ով թույլ չի տալիս Եղիշե Իշխանյանին մասնակցել համագումարին,պատճառաբանելով,թե վերջինս խոչընդոտում է համաձայնության կայացմանը:Այս համագումարում ներկայացվում է բրիտանական հրամանատրության դիրքորոշումը,այսինքն Ղարաբաղը պետք է ճանաչի Ադրբեջանի իշխանությունը: Սակայն թե չորրորդ և թե հինգերորդ համագումարներում ընդունված որոշումներով արցախահայությունը կտրականապես մերժեցին Սուլթանովի և Ադրբեջանի իշխանությունը:Հատկանշական է,որ 1919թ հունիսին բազմամարդ հանրահավաքներ տեղի ունեցան Երևանում և Թիֆլիսում ի պաշտպանություն արցախահայության: Զուգահեռ անցկացնելով այսօրվա իրադարձությունների հետ

սովորողներին կարող ենք մտորելու հարցադրումներ անել.ինչ նմանություն կարող եք գտնել 100 տարվա տեղի ունեցած իրադարձությունների միջև,արդյոք հնարավոր է դասեր քաղել պատմությունից:1919թ ամռանը իրավիճակը էլ ավելի ծանրացավ կապված թաթարական քոչի հետ:Բրիտանական հրամանատրությունը պահանջում էր հայերից թույլատրել թաթարներին օգտվելու Զանգեզուրի արոտավայրերից:Պարզ էր,որ նրանք պատրաստվում էին հպատակեցնել նաև Զանգեզուրը,քանի որ վերջինիս անկախ մնալը ուժ ու հավատ էր տալիս նաև Ղարաբաղին հետագա պայքարի համար:Անգլիական այսպիսի քաղաքականության դեմ իր դժգոհությունն է արտահայտել նաև Զանգեզուրի գեներալ-կոմիսար Ա.Շահմազյանը իր զեկուցագիր նամակում ,նշելով,որ ստացվում է,որ եթե Զանգեզուրի հայությունը չենթարկվի Ադրբեջանի իշխանությանը,պետք է արժանանա Ղարաբաղի ճակատագրին:Իսկ անգլիական քաղաքականությունը տանում էր նրան,որ ստիպելով հայերին թաթարական քոչը թույլատրելու պատրվակով պետք է զորք մտցնեն Զանգեզուր և այդ տարածքը ևս միացնել Ադրբեջանին:Զուգահեռ անցկացնելով արդի անցուցադարձի հետ ամենաակնհայտ տարբերությունն այն է,որ 1918-1919թթ ՀՀ իշխանությունները ամեն կերպ օժանդակում էին Ղարաբաղին,հանդես գալիս նրա անունից,ներկայանում էին որպես նրա անվտանգության երաշխավոր, գիտակցում էին Ղարաբաղի ստրատեգիական նշանակությունը,որ հաջորդ զոհը Զանգեզուրն է լինելու և թուրքերը կանգ չեն առնելու: Իրենց բոլոր հանդիպումներում, բանակցությունների ընթացքում բարձրաձայնում էին հարցի հրատապությունը և անհնարինությունը Ադրբեջանի կազմում որևէ կարգավիճակ: Գնալով սեղմվում էր Ղարաբաղի շուրջ օղակը:Սուլթանովը կազմակերպում է հայերի կոտորած,ավերում է հայկական մի քանի գյուղեր:ՀՀ կառավարությունը դժգոհություն է հայտնում բրիտանական զորքերի անգործության համար:Ադրբեջանը ավելի ագրեսիվ կեցվածք է դրսևորում 1919թ կեսին հովանավորվելով Թուրքիայում իշխանության եկած քեմալականներից,նրանց հետ կնքում են նաև փոխօգնության գաղտնի պայմանագիր ընդդեմ հայերի:Օգոստոսի 6-ին անգլիական կառավարությունը որոշում է ընդունում նախկին Ռուսական կայսրության տարածքներից հետ քաշել իր զորքերը:Պարզ է,որ այս պայմաններում հայերը մնալու էին անպաշտպան ու անհուսալի իրադրության մեջ:Չնայած հայկական կառավարության բազմաթիվ խնդրագրերին ու դիմումներին ուղղված դաշնակից երկրներին,որ գոնե մի քիչ ուշացնեն անգլիական զորքի հեռացումը տարածաշրջանից,արդյունք չտվեցին:Բոլորն էլ գիտակցում էին,որ հայերը մնում են միայնակ թուրք-ադրբեջանական ուժերի դեմ և դիմադրելու լայն հնարավորություն չունեն:Բրիտանական զորքերի դուրս բերումը Անդրկովկասից սկսվեց օգոստոսի 15-ին: Եվ այսպիսի պայմաններում օգոստոսի 12-ին Շոշ գյուղում տեղի ունեցավ արցախահայության յոթերորդ համագումարը,որտեղ անգլիացիների ճնշման ներքո որոշում ընդունվեց ժամանակավոր համաձայնության գալ Ադրբեջանի կառավարության հետ,մինչև հարցի վերջնական լուծումը,որն ակնկալվում էր Փարիզի խաղաղության խորհրդաժողովում,որտեղ կվճռվեր Ղարաբաղի վերամիավորումը Հայաստանին:Այստեղ ստորագրված համաձայնագիրը բաղկացած 26 կետից մանրամասն ներկայացրել է Ս.Վրացյանը նշված աշխատության մեջ,էջ339-340,նշելով,որ օգոստոսի 22-ի համաձայնությունը ցնծությամբ ընդունվեց ամբողջ Ադրբեջանում:Մուսավաթականների պարագլուխ Ռասուլ Զադեն ուրախությամբ նշել է,որ «Ղարաբաղը ազատվեց մեր համառ դրացիների ոտնձգություններից...Առանց տեղի տալու ավելորդ արյունահեղության հայ ժողովուրդը բռնեց հարցի խաղաղ լուծման ճանապարհը և ընդունեց Ադրբեջանի գերիշխանությունը»: Ընդ որում այդ համաձայնագրի կետերից հետաքրքիր էր 12 –րդ

կետը,որտեղ նշվում էր,թե Ղարաբաղի հայերը վայելում են մշակութային ինքնավարություն:Այսպիսի գաղափար դեռևս 19-րդ դարի 50-ական թթ Արևմտյան Հայաստանի համար առաջ էր քաշում ազատական հոսանքի ներկայացուցիչներից Ստեփանոս Նազարյանցը:Կարծում եմ բոլորիս համար պարզ է այդ գաղափարի սնանկությունը,հաշվի առնելով թուրքեի հայատյաց կեցվածքը և դիրքորոշումը Արևմտյան Հայաստանի հարցի նկատմամբ:Որքան արդիական են հնչում Ս.Վրացյանի հետյալ խոսքերը.«Պարզ ու կտրուկ.Ղարաբաղի հարցը միայն Ղարաբաղը Ադրբեջանին կցելու խնդիր չէ,այլև Զանգեզուրն ու Նախիջևանը Ադրբեջանին միացնելու»:3,էջ342:Եվ իսկապես,Ղարաբաղի հարցը «լուծելուց» հետո , Ադրբեջանը սկսեց շուտափույթ պատրաստություններ տեսնել Զանգեզուրը ևս «անվնաս դրության մեջ» դնելու համար: 1919թ նոյեմբերի 23-ին Թիֆլիսում Հայաստանի և Ադրբեջանի միջև ստորագրվեց համաձայնագիր,որով ռազմական գործողությունները դադարեցվում էին:Չնայած ստորագրված համաձայնությանը ՀՀ կառավարությունը շարունակում էր Լեռնային Ղարաբաղը համարել ՀՀ անբաժանելի մաս և խաղաղության խորհրդաժողովին հղված նամակում նշում է ,որ Ադրբեջանը բռնություն է կիրառում և ստիպում է Ղարաբաղին համաձայնության գալ,ինչը բնականաբար,օրինական համարել չի կարելի:Ավելացնենք նաև,որ կնքված համաձայնագիրը ,որով պետք է հաստատվեր խաղաղություն,այդպես էլ կյանքի չկոչվեց:Քանի որ Սուլթանովը փորձում էր հայաթափել ու վերջնականապես հպատակեցնել Ղարաբաղն ու Զանգեզուրը:

4.1920թ...

Թեև բրիտանական զորքը հեռացավ Անդրկովկասից,բայց տեղերում թողեցին իրենց ներկայացուցիչներին:Դաշնակից երկրները իրենց հեղինակությունը վերականգնելու նպատակով Փարիզի խորհրդաժողովում ճանաչեցին Հայաստանի,Վրաստանի անկախությունը:Սակայն ՀՀ մնացել էր մեկուսակցման մեջ և օգտվելով հայկական կողմի անօգնական վիճակից 1920թ մարտի 20-ին Սուլթանովը վերջնագիր է ներկայացնում Ղարաբաղի ազգաբնակչությանը զինաթափվելու պահանջով,հակառակ դեպքում սպառնում էր կոտորածով:Հայկական ինքնապաշտպանական ուժերը ռազմական գործողությունների ընթացքում գրավում են Ասկերանը: Սուլթանովը չհաշտվելով այդ կորստի հետ մարտի 22-23-ը կազմակերպեց Շուշիի հայ բնակչության կոտորածը,որի զոհ գնաց 8000 հայ,իսկ փրկված 5000 հայեր ապաստան են գտնում Ղարաբաղի մյուս շրջաններում:1920թ ապրիլի 25-ին հրավիրվում է 9-րդ համագումարը,որտեղ Ղարաբաղը ճանաչվում է ՀՀ անբաժանելի մաս:Ադրբեջանի խորհրդայնացումը 1920թ ապրիլի 28 ին և խորհրդա-քեմալական համաձայնությունը նոր հնարավորություն բացեցին ադրբեջանական զավթողական քաղաքականությունը ավարտին հասցնելու համար:Ծրագրված էր,որ խորհրդային զորքերը գրավելով Եվլախը,պետք է շարժվեն Շուշի և Ղարաբաղի վրայով կապվեն Արևմտյան Հայաստանի հետ:Պատահական չէ,որ Ադրբեջանը ապրիլի 30-ին վերջնագիր է ներկայացնում ՀՀ կառավարությանը, պահանջելով մաքրել Ղարաբաղն ու Զանգեզուրը հայկական զորքերից:Ի պատասխան այդ վերջնագրի կառավարությունը որոշում է ամեն ջանք գործադրել բնակչության անվտանգությունը ապահովելու համար:Եվ մայիսի 7-ին Դրոյի գլխավորությամբ հավաքագրված 8000 զինվոր ուղարկում է Ղարաբաղ:Մայիսի 19-ին Կարմիր բանակի պատվիրակությունը ժամանում է Շուշի,ուր տեղակայված էր հայկական զորքերի շտաբը:Պատվիրակությունը հավաստիացնում է Դրոյին,որ խորհրդային զորքերը հայերի դեմ ուղղված որևէ գործողություն թույլ չի տա և պահանջում են Դրոն Ղարաբաղից դուրս բերի հայկական զորքերը,ինչին ի պատասխան զորավարը նշում է,որ ինքը հայկական կառավարության հրահանգով է այստեղ և կհեռանա վերջինիս հրամանով:Այդուհանդերձ արդեն մայիսի վերջին խորհրդա-ադրբեջանական զորքերը գրավում են Շուշին, Ջաբրայիլը: Եվ Դրոն Ավետարանոց գյուղում խորհրդակցություն է հրավիրում,որտեղ հայտնում է Ղարաբաղի համար ծանր որոշումը.Հայաստանի կառավարությունը համաձայնություն է տվել զորքերը դուրս բերել Ղարաբաղից:Այդ լուրը մեծ դժգոհության ալիք առաջացրեց երկրամասում.այդ մասին իր բողոքն է արտահայտում Զանգեզուրի գեներալ-կոմիսար Ս.Մելիք-Յոլչյանը,Դրոյի հապշտապ հեռացումը համարելով հանրապետության քաղաքականության ձախողում:Ստացվում էր,որ Դրոն անձամբ իշխանությունը հանձնեց բոլշևիկներին:Այս օրհասական օրերին մայիսի 28-ին Ղարաբաղի Թաղավարդ գյուղում կայանում է արցախահայության 10-րդ համագումարը:Այստեղ էլ երկրամասը հռչակում է խորհրդային և ստեղծվում է իշխանություն (հեղկոմ) Սաքո Համբարձումյանի նախագահությամբ:Ղարաբաղի խորհրդայնացմամբ ավարտվում է երկրամասի գոյապայքարի 1918-1920թթ ժամանակաշրջանը:Կարող ենք ավելի կոնկրետ ասել,որ խորհրդա-քեմալական գաղտնի համագործակցության արդյունքում տեղի ունեցավ Ղարաբաղի խորհրդայնացումը: Ցավոք այսօր մենք կանգնած ենք այս նույն քաղաքական ուղու ճանապարհին:

Ղարաբաղի հարցը քննարկման առարկա է դառնում նաև Փարիզի վեհաժողովի բանակցություններում,որտեղ ևս բրիտանական դիրքորոշման պատճառով,չնայած Ավ.Ահարոնյանի առարկություններին,Ղարաբաղը մշտապես ներկայացվում էր որպես Ադրբեջանի մաս:1920թ օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագրով Անդրկովկասի հանրապետությունների միջև վիճելի սահմանային հարցերը պետք է վճռվեին երեք հանրապետությունների փոխադարձ համաձայնությամբ:Այսպիսի որոշումը թերևս պայմանավորված էր այն հանգամանքով,որ Անդրկովկասում այդ ժամանակ լայն թափով սկսել էր ծավալվել Խորհրդային Ռուսաստանը:Պահպանվել են բրիտանական արխիվային փաստաթղթերի ժողովածու,որտեղ Հայաստանի սահմանների վերաբերյալ պահպանված մի հուշագիր կա,այնտեղ հստակեցված են Հայաստանի արևելյան սահմանները և Ղարաբաղի հարցը նախատեսվում էր լուծել ըստ նախկին ցարական բաժանման.այն է հայ – ադրբեջանական սահմանը Երևանի ու Ելիզավետպոլի նահանգների միջև եղած սահմանն է:Հուշագրից պարզ երևում է,որ բրիտանացիները այս ծրագրով ձգտում էին իրենց քաղաքականության հիմքում պահել Ելիզավետպոլի նահանգի նախկին սահմանները,որով Ղարաբաղը մտնում էր Ադրբեջանի կազմի մեջ:Նման սահմանազատման մի քարտեզ ներկայացնում էին ռուսական աղբյուրները,որն արտահայտում էր ռուսական ծավալապաշտական ու շահադիտական նպատակները: Մենք գիտենք նաև ,որ հենց նույն Սևրի պայմանագրի օրը Թիֆլիսում ստորագրված հայ-ռուսական համաձայնագրով վիճելի համարվող «Զանգեզուրը, Ղարաբաղը և Նախիջևանը զբաղեցնելու էին խորհրդային զորքերի կողմից,մինչև մոտ ապագայում նոր խաղաղության համաձայնագրի ստորագրումը»:Պայմանագրի մեկ այլ կետով թույլ էր տրվում Հայաստանի տարածքով խորհրդային զորքերի ազատ տեղաշարժը,ինչին առանձնահատուկ նշանակություն էին տալիս խորհրդային ղեկավարները:Այն նպատակ ուներ Թուրքիայի հետ անմիջական կապ հաստատել «համաշխարհային հեղափոխությունը» տարածելու համար:Այսպիսով ՀՀ-ը Ղարաբաղը ճանաչում էր Խորհրդային ազդեցության գոտի (որքան նմանություն այսօրվա իրադարձություններին):Իսկ 1921թ հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումի արտահերթ նիստի անարդարացի որոշմամբ Ղարաբաղը բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին:

5.Եզրակացություն

Այսպիսով,ամբողջացնելով թեմայի ուսումնասիրությունը կարող ենք կատարել մի շարք կարևոր հետևություններ:1918թ անգլիացիները հաստատվելով Անդրկովկասում իրենց վարած քաղաքականությամբ ևս մեկ անգամ հաստատեցին իրենց կողմից որդեգրած կարևոր սկզբունքներից մեկը.որ չկան հավատարիմ դաշնակիցներ,այլ կան հավատարիմ շահեր:Ժամանակի ընթացքում կարող են փոխվել դաշնակիցները,իսկ շահերը մնում են անփոփոխ:Անդրկովկասում անգլիացիների կողմից հայերին հովանավորելը միայն ժամանակավորապես էր բխում իրենց քաղաքական նպատակներից,ինչի ականատեսն ենք դառնում վերը շարադրվածից:Չնայած ծանր ու բարդ,ոչ հայանպաստ թշնամական մթնոլորտին մենք ականատեսն ենք դառնում նաև Ղարաբաղի հայության անձնուրաց պայքարին հանուն իրենց իրավունքների ու գոյության:Յուրաքանչյուր հայ պետք է այս ամենից մեծ եզրակացություն կատարի,որ միայն պայքարի,անկոտրում կամքի շնորհիվ կարող ենք ապահովել ազգի շարունակականությունը:Նաև չմոռանանք,որ թուրքական գործոնը միշտ էլ եղել ու մնալու է հայության համար գոյատևման վտանգ,ուստի հայության միակ փրկությունը միասնականության,զգոնության,ուժեղ ու հզոր հայրենիք ստեղծելու և իր հայրենիքի յուրաքանչյուր հատվածին տեր կանգնելու մեջ է:Ցավոք ինչպես 1918-1920թթ բրիտանացիների օգնությամբ ադրբեջանցիները կարողացան բռնի տեղահանությամբ ու կոտորածներով հայաթափել Ղարաբաղի հայաշատ շրջանները և հասնել Ղարաբաղի բռնակցմանը Ադրբեջանին,նույն գործընթացը մենք տեսնում ենք այսօր:Քաղաքակիրթ աշխարհի լուռ համաձայնության պայմաններում Ադրբեջանը տեղահանում է հայկական գյուղերի բնակչությանը, նրանց ներկայացնում որպես ահաբեկիչներ,ոչնչացնում է հայկական մշակութային ժառանգությունը,խեղաթյուրում պատմական ճշմարտությունը:Եվ ավագ դպրոցի սովորողները որպես նոր կյանք մտնող հերթափոխ,պետք է գիտելիքներով զինված լինի:Արդի սերնդի կարևորագույն խնդիրներից է նոր ձևավորվող աշխարհաքաղաքական գործընթացներում ապացուցել համաշխարհային հասարակությանը Արցախի հայկական պատկանելիությունը: Հակառակ դեպքում մենք անդառնալի կարող ենք կորցնել նաև Արցախը,ինչպես Արևմտյան Հայաստանը:Պայքարի հերթափոխը փոխանցվում է հաջորդ սերունդներին, որոնց ուսերին ծանրանում է ամենածանր բեռը այն է պահպանել հայկական պետականությունը,պայքարել հայկական հողերի պահպանման համար,հաջողությամբ ավարտին հասցնել համահայկական պայքարի պատասխանատվությունը: Մենք կարիք ունենք սառը դատող,պարտությունը ուժի ու հաղթանակի վերածող ապագա դիվանագետների, բացառապես ազգային շահերով առաջնորդվող առաքինի քաղաքական առաջնորդների և գործիչների:Այդ ամենի հիմքը դրվում է դպրոցում ,ուստի պետք է ամեն ջանք գործադրել կանխելու հայ ժողովրդի համար հետագա ողբերգական իրադարձությունները,որպեսզի թույլ չտանք ևս մեկ անգամ կորցնելու պետականությունը,ինչպես եղավ 1045թ և միայն 1918թ կարողացանք վերականգնել այն: Ուսուցիչը պետք է համակողմանի ուսումնասիրությամբ ներկայացնի հիմնախնդիրը, տիրապետի տարբեր հնարների,միջոցների,որոնց միջոցով գիտելիքը ավելի հիմնավոր ու պատկերավոր կդառնա,դրանից մի քանիսը նկարագրված են աշխատանքի մեջ:

6.Գրականություն

1.Ղարիբյան Ա.-Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920թթ և Մեծ Բրիտանիան, Երևան,ԵՊՀ,հրատ.2012,էջ282

2.Սիմոնյան Հր.-Թուրք հայկական հարաբերությունների պատմությունից,Երևան,Հայաստան,1991,էջ630

3.Վրացյան Ս.-Հայաստանի Հանրապետություն,Երևան,Հայաստան,1993թ,էջ704

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա պատմության ուսուցիչների
վերապատրաստման դասընթաց

Մարինե Ազիզյան
Ջրաշենի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչուհի

Հետազոտական աշխատանք

Թեմա «Մկրտիչ Խրիմյանի հայացքները»

Ղեկավար Ս. Աղաջանյան

Վանաձոր 2022

Բովանդակություն

1. Ներածություն:
2. Արևմտահայության սոցիալ-քաղաքական վիճակը 19-րդ դարի երկրորդ կեսին:
3. Մ. Խրիմյանի կյանքն ու գործունեությունը:
4. Մ. Խրիմյանը՝ ուսուցիչ և դաստիարակ:
5. Եզրակացություն:
6. Գրականություն:

Ներածություն

Հոդվածում ներկայացրել ենք 19-րդ դարի երկրորդ կեսի հայ հասարակական-քաղաքական, գրական-իմաստասիրական, հոգևոր ականավոր գործիչ, Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցու կամ Ամենայն հայոց հայրիկի գործունեությունը:

19-րդ դարի արևմտահայ իրականությունը տվեց մի գործիչ, որը դուրս գալով Արևմտյան Հայաստանից, այն կապեց արևմտահայ մշակութային կենտրոնԿ. Պոլսի հետ, ապա իրար շաղկապեց Արևմտյան Հայաստանի հայաբնակ ամենամեծ նահանգները՝ Վասպուրականն ու Տարոնը: Նա դարձավ Արևմտյան Հայաստանի առաջին պարբերականի՝ «Արծուի Վասպուրականի» խմբագիրը, արևմտահայ գյուղացուն և արհեստավորին հաղորդակից դարձրեց գուտենբերգյան հրաշագործության հետ, մեծ դեր կատարեց արևնտահայ աշխատավորության մարդկային արժանապատվության, ազգային ինքնագիտակցության զգացմունքներն արմատավորելու հարցում: «Առաջին աբեղան էր, որ դարձավ պուբլիցիստ, հրապարակախոս, առաջին վարդապետն էր, որ մերժեց վանական ամուլ կյանքը և նվիրվեց իր բովանդակ էությամբ աշխատավոր ժողովրդին» գրում է [1,էջ 6] Մ. Վարանդյանը: Առաջին կաթողիկոսն էր, որ համարձակվեց չինազանդվել տիրող պետության՝ ցարիզմի և անձամբ Նիկոլայ 2-րդի հրամանին՝ հայ եկեղեցու անշարժ և շարժական գույքը գրավելու մասին:

Մկրտիչ Խրիմյանը ավելի քան կես դար հայ ժողովրդի իղձերի և ձգտումների գործուն արտահայտիչն էր, իր ժամանակի պատմական բոլոր նշանակալից իրադարձությունների մասնակիցն ու անվեհեր հեղափոխական ոգով լցված անձն ու հայ ժողովրդի ներկայի ու ապագայի համար պատասխանատվությամբ լեցուն աշխարհական և հոգևորական գործիչ: Ե. Ֆրանգյանը իր աշխատությունում գրում է. «հայ կյանքի և իրականության, հայ ժողովրդի և պատմության իմաստությունը» [2, էջ 19]:

Չանտեսելով Մ. Խրիմյանի գործունեության ամբողջական պատկերը՝ մենք փորձել ենք ավելի շատ ուշադրություն դարձնել նրա լուսավորական, կրթական ու դաստիարակչական ձեռքբերումներին ու ազգային մտածողության հարցերին, որոնք այնքան արդիական են մեր այսօրվա հասարակական քաղաքական կյանքում:

Արևմտահայության սոցիալ-քաղաքական վիճակը 19-րդ դարի երկրորդ կեսին

19-րդ դարում Արևմտյան Հայաստանը շարունակում էր մնալ Օսմանյան կայսրության կազմում: Թուրքական արքունիքը 19-րդ դարի երկրորդ կեսին անընդհատ փոփոխություններ էր մտցնում երկրի վարչական կազմի մեջ, նպատակ ունենալով փոխել Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական կազմը: 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ հասարակական կյանքի կարևոր իրադարձություններից էր Ազգային սահմանադրության համար մղվող երկարատև պայքարը, ինչն իր ավարտին հասավ 1863թ-ին: Սակայն Ազգային սահմանադրությունը չէր ապահովում հայ ժողովրդի ազգային ու սոցիալական զարգացումը կայսրության սահմաններում և իր մեջ չէր պարունակում գեթ մի հոդված, որն ի վիճակի լիներ պաշտպանել հայ գյուղացու արդար վաստակը քուրդ բեկերից ու թուրք հարկահաններից: Այս ամենով հանդերձ Ազգային սահմանադրությունը դրական երևույթ էր, որովհետև այն ներկայացնում էր բուժուականացող երիտասարդության պահանջները, պայքարում իր դարն ապրած ավատատիրական, ամիրայական, պատրիարքական դասի դեմ, սահման էր դնում նրանց չարաշահումներին, պաշտպանում արհեստավորության իրավունքները և դեր տալիս նրան ազգային կյանքը բարելավելու առումով:

Մինչև սահմանադրության հռչակումն ու վավերացումը, Կ. Պոլսի հայոց պատրիարք էին ընտրվում Թուրքիայի ծովեզրյա քաղաքների՝ Կ. Պոլսի և Իզմիրի բարձրաստիճան հոգևորականության ներկայացուցիչները, որոնք, անտեղյակ էին գավառահայության տառապանքներին ու հարստահարումներին, նրանք արտահայտում էին այդ քաղաքների համեմատաբար ապահով հայ բնակչության շահերն ու ակնկալիքները: 1869թ.Կ. Պոլսի ազգային ժողովում տեղեր գրված բուրժուական առաջավոր սկզբունքներ հետապնդող երիտասարդության ներկայացուցիչներն իրենց ղեկավար Գրիգոր Օտյանի առաջարկով, Կ. Պոլսի պատրիարքական առաջնորդի թեկնածու առաջադրեցին և ընտրեցին Արևմտյան Հայաստանի երկու հայաշատ նահանգներում՝ Վասպուրականում և Տարոնում իր հասարակական գործունեությամբ ժողովրդի համակրանքը շահած մի գործչի՝ Մկրտիչ Խրիմյանին: Նրա անունն անբաժանելի միահյուսվեց 19-րդ դարում արևմտահայությանը հոգող բոլոր կարևորագույն խնդիրներին, դարձավ խորհրդանիշ և չափանիշ աշխատավոր հայության նվիրվածության ու հայրենասիրության:

Մ. Խրիմյանի կյանքն ու գործունեությունը

Կորցրած պետականությունը, հայրենիքի դժգույն ներկան հակադրելով անցյալի հզոր իշխանների ու թագավորներին, միացյալ Հայաստանի գաղափարին, ժամանակի հասարակական գործիչները ցանկանում էին ժողովրդի մեջ անթեղված ազատության կայծերը բորբոքել, արթնացնել ազգային ինքնագիտակցության ու արժանապատվության զգացումը: Այս գործում իր մեծագույն դերակատարությունն ունեցավ Մկրտիչ Խրիմյանը:

Մկրտիչ Խրիմյանը ծնվել է Վանում 1820թ. վաճառականի ընտանիքում: Մկրտիչը տառաճանաչություն է սովորում իր հորեղբոր մոտ և քանի որ Վանում դպրոցներ չկային Խրիմյանը մեկնում է Լիմ և Կտուց կղզիներ, որոնք կորցրել էին լուսավորականություն տարածողի իրենց նախկին դերը: Վանական մթնոլորտը չէր կարող բավարարել եռանդուն բանաստեղծական նկարագրի տեր երիտասարդին, և նա շուտով հեռանում է այդտեղից և հաստատվում Վանում: 1848թ. Խրիմյանը Կ. Պոլսի Խասգյուղի աղջիկների նորաբաց դպրոցում դառնում է ուսուցիչ: Նա միաժամանակ այստեղ կապեր է հաստատում Օտյան և Այվատյան ընտանիքների անդամների հետ և դասեր է տալիս այդ ընտանիքներում: Մանկավարժությունը դառնում է Խրիմյանին ամենից շատ ձգտող աշխատանքներից մեկը, իսկ դպրոցների վիճակը բարելավելը և նոր դպրոցների հաստատումը՝ կյանքի նպատակներից մեկը: Սակայն նա երկար չի մնում Կ. Պոլսում և վերադառնում է Վան, ու մահացել էր մայրը, կինը, աղջիկը և նրան ոչինչ չէր կապում աշխարհիկ կյանքի հետ և նա որոշում է ընդմիշտ նվիրվել հայոց եկեղեցու ծառայությանը: Ուսուցիչն ու քարոզիչը, հայրենասերը Աղթամարում կուսակրոնություն է ընդունում և ձեռնադրվում վարդապետ: Աղթամարում նրան հիասթափություն էր սպասում, որովհետև հանդիպում է լճացած, միապաղաղ ու մեղկ առօյային:

1855թ. Պողոս Օտյանի աջակցությամբ Խրիմյանը հրատարակում է «Արծուի Վասպուրական» ամսագիրը, որի բովանդակային նյութերը վերաբերում էին պանդխտությանն ու գաղթականությանը, ինչը հայ գյուղացու կյանքը վերածել էր դժողքի: Ամսագրում տեղ են գտել նաև կրոնական բովանդակություն ունեցող հոդվածներ, ուր խմբագիրը չափանիշ ընդունելով քրիստոնեական դոգմաները, պաշտպանում էր աղքատներին ու զրկվածներին: Խրիմյանի կարծիքով, դպրոց,

ուսում, վարժապետ, ազգասիրություն հասկացություններն առավել անհրաժեշտ են գյուղացուն, որովհետև գյուղացիությունը ժողովրդի ամենաստվար մասն է: Նա տառապում է, բողոքում, որ գյուղացիության և ընդհանրապես ժողովրդի համար մտահոգվող գործիչներ չկան, չկան Մովսեսներ, որոնք իրենց անձը մինչև մահ նվիրաբերեն ժողովրդին:

1857թ. Խրիմյանը նշանակվում է Վարագա վանքի վանահայր: Այստեղ նրա ձեռնարկած առաջին իսկ քայլերը արժանանում են հետադեմ խավերի, մի խումբ աղաների և լճացած հոգևորականների զայրույթին: Այնուամենայնիվ Խրիմյանը կարողանում է այստեղ հիմնադրել «Ժառանգավորաց» գիշերօթիկ դպրոցը: Այս դպրոցի սաները հետագայում մեծ մասնակցություն ունեցան հրատարակչական և տպագրական աշխատանքներում: Հրապարակախոս և խմբագիր Խրիմյանի գործունեությունը բարձր է գնահատել Միքայել Վարանդյանը. «Մի ձայն միայն հնչում էր բարձր ու խրոխտ այդ վեհերոտ, մեղկացուցիչ լռության մեջ, հնչում էր մարդկային արժանապատվության լիակատար գիտակցությամբ…ձայնը հնչում էր Վասպուրականից, Վարագա բարձունքներից, ուր թառել էր արծիվը: Մարմնացնում էր ժողովրդի տանջանքն ու նահատակությունը և շեփորում նրա հուսահատ բողոքը խավարի և բռնության համատարած ուժերի դեմ: Խրիմյանն էր: Այն ժամանակվա հայության խիղճը, նրա իղձերի սգավոր ու ցավատանջ թարգմանը» [3, էջ 202]:

Բարոյախրատական հոդվածներում կոչ էր անում գյուղացիներին պայքարել գոյատևման համար, բացել նոր դպրոցներ ու վարժարաններ, կանգուն մնալ հայրենի երկրի վրա, շենացնել նախնիներից ժառանգություն ստացած երկիրը: Նա հորդորում է հայ մեծատուներին իրենց ունեցվածքից բաժին հանել հայրենիքը կանգուն պահող գյուղացիությանը, օգնել նրանց գրագետ դառնալ, հասնել լուսավորյալ աստիճանին: 1862թ. Մ. Խրիմյանն ու ամսագրի գլխավոր աշխատակից Գ. Սրվանձտյանցը հեռանում են Վարագից և հաստատվում Տարոնում, որտեղ բացվում է «Նոր Ժառանգավորացը», որի տնօրենն ու ուսուցիչը դարձավ Գ. Սրվանձտյանցը: Տարոնում Մ. Խրիմյանը երկար չի մնում և մեկնում է Կ. Պոլիս, որտեղ էլ 1869թ. ընտրվում է Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք: Վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրյանը, որ ապրում էր մայրաքաղաքում իր առաջին տպագիր բանաստեղծությունն է նվիրում նոր պատրիարքի գալստյան առթիվ: Նա գնահատում է Խրիմյանի ժողովրդանվեր գործունեությունը այն պատճառով, որ նա մի համեստ

հոգևորական է, ոչ թե թագավոր կամ դյուցազն. «Նա կարմահարե ծիրանի փառքեր, նա սև է հագեր» [4,էջ 153]: Նորընտիր պատրիարքը ցանկանում էր սահմանադրության հիմնադրույթները կիրառվեին այնպես, որ առավելություն տրվեին գավառահայության խնդիրներին, լուծում ստանային կուտակված բազմաթիվ ներհոգևորական խժդժությունները, ապահովել վանքերի ու եկեղեցիների կալվածքներն ու եկամուտներըև դրանք ծառայեցնել ազգի շահերին, նոր միջոցներ էր գտնում ուսումն ու գիտությունը ազգի մեջ ծառայեցնելու համար: Սակայն չորս տարի պատրիարքության շրջանը ավարտվում է նրա հրաժարականով: Մաղաքիա Օրմանյանը այսպիսի գնահատական է տալիս պատրիարք Խրիմյանի գործունեությանը. «…անկեղծ միտքը, ուղիղ սրտը, անշահասեր ընթացքը, ազգասեր նպատակը և առաքինասեր հոգին միշտ բարձր մնացին և Հայրիկ փաղաքշական կոչումը ևս քան զևս հաստատվեցավ, և մեծ անունը, և մեծ մարդը մեծ մնաց միշտ» [5, էջ 197-198]:

Բեռլինում հայկական պատվիրակության ղեկավար Մ. Խրիմյանը, որ Եվրոպա էր մեկնել մեծ հույսերով ու ակնկալիքներով, որ հույս էր կապում քրիստոնյա մեծ պետությունների բարի կամքի հետ, որ կարծում էր թե համամարդկային վշտի և լացի լեզվով խոսելը կդրդի մեծ տերություններին կատարել հայերի օրինական պահանջներն ու խնդիրները, զգաց ուժի իրավունքի մեծ սարսափները: Դեռ վեհաժողովից սկզբում Խրիմյանն արձանագրում է, որ երիցս արդարացի է Բիսմարկը, թե իրավունքը ուժի մեջ է: Ստացվում է, որ «մուրճ» և «զնդան» հարաբերություններում հայերը մշտապես «զնդան» են: Եվ Խրիմյանը նկարագրելով վեհաժողովի ողջ ընթացքը, կոչ է անում «թղթե շերեփը» փոխարինել սրով. «Ժողովուրդ հայոց, երբ հայրենիք վերադառնալու լինեք՝ իբրև պագև ձեր բարեկամներին զենք տարեք: Ամենից առաջ քո հույսը քո վրա դիր, քո խելքին ու բազկին ուժ տուր, մարդ ինքը պետք աշխատի, որ փրկվի »[6, էջ 266]:

1892թ. մայիսի 5-ին Էջմիածնում կայացած կաթողիկոսական ընտրությունների ժամանակ հայ հոգևոր և աշխարհիկ պատգամավորների միաձայն քվեարկությամբ 72 քվեով Մ. Խրիմյանն ընտրվում է Ամենայն հայոց կաթողիկոս: Չնայած ուսումնասիրողների իրարամերժ կարծիքներին՝ Խրիմյանն իր գահակալության 14 տարիների ընթացքում զբաղվել է այն բոլոր խնդիրներով, ինչ հուզել է հայ

ժողովրդին, հայ հասարակական կյանքն ու միտքը 1890-ականներից մինչև 1907թվականը:

Մ. Խրիմյանը՝ ուսուցիչ և դաստիարակ

Վազգեն Ա կաթողիկոսը «Խրիմյան հայրիկը որպես դաստիարակ» աշխատության մեջ գրում է. «Խրիմյանը դաստիարակ է, ուսուցիչ, մանկավարժ, հայրը հայ մանկավարժության» [6, էջ 20]:

18572թ. Խրիմյանը դնում է «Ժառանգավորաց» վարժարանի հիմնաքարը, որը նորություն էր Արևմտյան Հայաստանի տարածքում: Այն լինելով գիշերօթիկ դպրոց նախատեսված էր 25 աշակերտների համար: Դպրոցին կից կար սեղանատուն, խոհանոց, դասասենյակները կահավորված էին գրասեղաններով, նստարաններով, գրատախտակով, բնագիտական դիդակտիկ նյութերով, քարտեզներով: Դպրոցին կից կար թանգարան, ուր պահվում էին 270 հատոր հին ու նոր ձեռագիր մատյաններ: Չնայած «Ժառանգավորացը» հոգևոր դպրոց էր, սակայն դասավանդվող առարկաների մեջմնայուն տեղ էին գրավել նաև աշխարհիկ գիտելիքները: Դասավանդվող առարկաների թվում էին սրբազան պատմությունը, բնագիտությունը, եկեղեցական երաժշտությունը, ճարտասանությունը, քերականությունը, թվաբանությունը, աշխարհագրությունը և այլ աշխարհիկ առարկաներ: Ըստ «Ժառանգավորացի» տնօրենի պարտադիր չէր, որ բոլոր շրջանավարտները դառնան հոգևորականներ, սակայն պարդադիր էր, նրանց մշակութային գործունեությունը: Եվ պատահական չէ, որ «Ժառանգավորացի» սաները մեծ մասնակցություն ունեցան հրատարակչական և տպագրական գործերի մեջ:

Մ. Խրիմյանը «Դրախտի ընտանիք» աշխատության մեջ առանցքային հարց է համարում ամուր ընտանիքի դերը, որպես հայության գոյության հիմք: Նրա կարծիքով ընտանիքը մի փոքրիկ պետություն կամ թագավորություն է, ուր ծնողները կառավարում են ընտանիքը: Սակայն սովորական պետությունից տարբերվում է նրանով, որ ընտանիքում տիրում է մայրական գորովն ու հայրական սերը: Ժողովրդի առաջադիմությունը, զորությունն ու ոգին, լուսավորականության մակարդակը Խրիմյանը կապում է ընտանիքի առաջադիմության ու ամրության, նրա դավանած բարոյական արժեքների հետ: Ըստ Խրիմյանի՝ ընտանիքում կնոջ դերը

անփոխարինելի է երեխաների կրթության բնագավառում: Եվ քանի որ զավակների կրթությունը սերտորեն առնչվում է ժողովրդի վաղվա օրվա հետ, Խրիմյանը պահանջ էր դնում կնոջ կրթության և ուսումնառության խնդիրը դնել պատշաճ բարձրության վրա: Նրա կարծիքով դպրոցը երեխաների միայն միտքն է կրթում ու հարստացնում: Ընտանիքի քայքայումը կկանխվի ուսման և դաստիարակության միջոցով: Ուրեմն ազգի հարատևման հիմքը ընտանիքի հարատևումն է, իսկ նրա հարատևման միակ ուղիղ ճանապարհը ողջամիտ կրթությունն ու ուղիղ դաստիարակությունն է: Այս աշխատության բարոյական դասերն այժմ էլ պահպանում են իրենց ժամանակակից հնչեղությունն ու արժեքները:

Մինչև կաթողիկոս ընտրվելը Խրիմյանը գտնվում էր Սբ. Հակոբի վանքում, որտեղ էլ ստեղծեց մի նոր գործ «Պապիկ ու թոռնիկ», որը գյուղական կյանքի հանրագիտարան լինելով հանդերձ, ցույց է տալիս, որ գյուղացիության հետամնացության հիմնական դարմանը դպրոցն ու կրթությունն է: Մինչև Պապիկի տված խրատները՝ կապվելու մայր հողին, մշակելու այն և օգտվելու վերջինիս պարգևած հարստություններից, այստեղ որդուն դիմող հայրն է ասում, որ հարստության աղբյուրը հողն է և այն բխեցնողը մարդկային ձեռքն ու աշխատասիրությունն է: Իսկ այս հարստության արդյունավետ միջոցը նա համարում է գիտությունը: Ահա թե ինչու Խրիմյանը անհատի և երկրի աղքատության պատճառը չաշխատելը և ծուլությունն է համարում, որոնք կվերանան կրթությամբ և լուսավորությամբ: Ընդհանրապես, խոսելով երկրի բարեկեցության մասին, նա նկատի է ունեցել, որ ապօրինությունները կվերանան ժողովրդի մեջ լուսավորության մուտք գործելով: Ահա թե ինչու երկրի և ժողովրդի առաջընթացի գլխավոր պայմանը նա համարում է ինքնակրթությունը, որն իր հերթին բարելավելու է կյանքի բոլոր բնագավառները:

Դպրոցների հիմնումը նա դնում է հոգևոր առաջնորդների պարտականությունների մեջ: Ըստ Խրիմյանի դպրոցը բացում է մարդու աչքը, հոգին, ուղեղը, նրան դնում ճիշտ ճանապարհի վրա: Գյուղացի երեխաների կրթության մեջ Խրիմյանը շեշտը դնում է աղջիկների՝ իգական սեռի կրթության վրա, որի շնորհիվ նրանք կդառնան խելացի տնտես և բարի մայրեր: Ընտանիքի շենությունը կախված է կրթված, գիտակից կնոջից: Կանանց տգիտությունը մեծ վնաս կարող է հասցնել ընտանիքի ամրությանը: Կնոջ կրթության համապատասխան մակարդակը

անհրաժեշտ է նաև երեխաների, մատաղ սերնդի դաստիարակության համար: Ընտանիքի կոչումը և խորհուրդը, ներքին կառուցվածքը, ձևավորումը և ընտանեկան կյանքը իր առաքինություններով և սպառնացող վտանգներով հարցերը Խրիմյանը քննարկում է նաև «Սիրաք և Սամուէլ» գրքում: Այստեղ նա ընդգծում է, որ դրպության դասերը բավարար չեն պատանիների համար և խորհուրդ է տալիս հետևել իր առաջարկած խրատ-դասերին, որի առանցքը կազմում է մարդու հասարակական դերին և կոչումին:

Խրիմյանը կոչ է անում գյուղացիությանը, որ նրանք իրենց գյուղերում հիմնեն դպրոցներ, որտեղ գյուղացի երեխաները կսովորեն գյուղատնտեսական գիտելիքներ: Նա կարծում էր, որ տնտեսություն վարելու համար մեքենաներ օգտագործելուց բացի կարևոր է, որ գյուղացին գիտելիքներ ունենա ոռոգման, սերմացուի ընտրության, ցանքսի ժամանակի և այլնի մասին:

Ոգևորված հակասահմանադրականների դեմ մղված պայքարում հաղթանակով դուրս գալուց, Խրիմյանի խումբը վերսկսում է հայրենասիրական, ազգային, լուսավորական աշխատանքները: Մեծ գործ է կատարվում Տարոնի գյուղերում, ապա նաև վանքերում վարժարաններ բացելու ուղղությամբ: Ամենօրյա աշխատանքի շնորհիվ Տարոնում կազմավորվում են բազմաթիվ ընկերություններ՝ Մուշեղյան, Խորենյան, Ներսիսյան և այլն: Ամեն մի ընկերություն իր առաջ դնում է մի նպատակ՝ ազգի օգտակարության համար դպրոցներ բացել, գրքեր հայթայթել և ուրիշ գրենական պիտույքներ գնել:

Կ. Պոլսում Խրիմյանը չի դադարում մտածել Տարոնի Սբ. Կարապետ վանքի դպրոցների մասին: Նա հայթայթում է անհրաժեշտ դասագրքեր՝ մայրենի, ընթերցարան, քերականություն և դրանք սնդուկներով ուղարկում աշակերտներին: Նրան մտահոգում էր նաև տպարանների հիմնումը՝ մասնավորապես Կարինում նա ցանկանում էր գնել քրդերին պատկանող մի տպարան և այնտեղ հայ մանուկների համար դասագրքեր տպագրել:

Վարագի և Տարոնի առաջնորդությունների ժամանակ շարունակ պայքար մղելով կրթության լույսը տարածելու համար, Հայոց Հայրիկը համոզվում է, թե ինչպիսի ավերներ են գործում բարոյական ախտերը, առավել ևս, եթե դրանք կատարվում են հոգևորականների կողմից կամ հոգևորականների մասնակցությամբ: Ահա այս պատճառով նրա բարոյախրատական գործերից երկուսը«Երկնային արքայության

մարգարիտը», և «Խաչի ճառը» որպես բարոյական հորդորներ ու պատգամներ, ավելի շատ ուղղված են հոգևորականներին ովքեր ստում են, խաբում, դավաճանում և դրանով խոչընդոտում ազգային առաջադիմությանը: Միաժամանակ նա դիմում է երիտասարդներին՝ կարևորելով մարդկային առաքինությունները, ցուցաբերել ազգասիրություն և փրկել Հայրենիքը:

Հայկական նահանգրերում ապրող, տգիտության մեջ խարխափող ժողովրդի վիճակը Խրիմյանը համեմատում է հոգեվարքի մեջ ընկած անդամալուծ հիվանդի հետ, որի օգնության խնդրանքներին ոչ ոք չի պատասխանում: Եվ այդ անդամալույծ հիվանդին բուժելու համար Խրիմյանը առաջարկում է հետևյալ դեղատոմսը՝ դպրոց, ուսում և ուսուցիչ:

Եզրակացություն

Մ. Խրիմյանի հոգևոր, հասարակական քաղաքական, վարդապետական, գրական, բարոյախրատական, մանկավարժական գործունեությանը նվիրված է աշուղական երգ՝ հետևյալ վերնագրով. «Հայրիկ, հայրիկ, քո հայրենիք»: Նրա բովանդակ գործունեության ամբողջական գնահատականը տվել են ժամանակի ինչպես հոգևոր, այնպես էլ առանձին գրական, հեղափոխական մեծեր և պատմության հետազոտողներ: Որպես երիտասարդների խրատատու, մատաղ սերնդի դաստիարակ և ուսուցիչ, բարեփոխումների բնագավառում հեղափոխական, նա հավերժ մնաց հայ իրականության մեջ:

Անցյալի հայ մանկավարժական միտքը ևս խիստ կարևորություն է տվել սերնդի բարոյական որակների դաստիարակությանը: Եզնիկ Կողբացին գրում է . «...Եվ արդ՝ ինչպե՞ս ի հայտ կգար գործերի ընտրումը, եթե մարդը չունենար երկակի ենթարկվելու և չենթարկվելու իրավունք: Ուրեմն պարզ է, որ մարդն ազատակամ եղավ կատարելու բարին կամ ձգտելու դեպի չարը» [7, էջ 271]:

Նրա բարոյական հորդորներն ու կոչերը այսօր էլ արդիական են հայ հասարակությանը բարոյական առաքինություններով՝ հայրենասիրությամբ ու պետականության ոգով դաստիարակելու:

Գրականություն

1. Վարանդյան Մ. Հայկական շարժման նախապատմությունը, Եր.1998թ. 425 էջ:
2. Կոստանդյան Է. Մկրտիչ Խրիմյան, Հասարակական քաղաքական գործունեությունը, Եր.2008, 459 էջ:
3. Դևրիկյան Վ. Վասպուրականի արծիվը, Եր. 2021, 351էջ:

Բովանդակություն

Ներածություն……..……..2

Գլուխ 1 Հայերի զանգվածային հայրենադարձության տրամադրությունների և պայմանների հասունացումը…….....3

Գլուխ 2 Սփյուռքահայերի հայրենադարձության նախապատրաստումը……...….9

Գլուխ 3 Հայրենադարձների տունդարձը և նրանց տեղավորումը հանրապետությունում……..15

Եզրակացություն……20

Օգտագործված գրականության ցանկ……22

Ներածություն

Սփյուռքահայերի հայրենադարձության թեմայի ուսումնասորությունը հնարավորություն է տալիս վեր հանել այնպիսի խորքային հարցեր, որոնք, ըստ արժանվույն չեն գնահատվել:

Ինչու՞ հենց Երկրորդ աշխարհամարտից հետո կազմակերպվեց հայերի դարձը, ի՞նչ պատճառներ ուներ դա, ինչպե՞ս կազմակերպվեց և ի՞նչ փուլերով անցավ: Հետաքրքիր է իրոք կապիտալիստական աշխարհում տասնամյակներ ապրած հայ ժողովրդի սերունդների ճակատագիրը մտահոգիչ էր սոցիալիստական համակարգի վերնախավի համար: Իրոք նրանք ցանկանում էին իրենց հայրենիքը տեսնելու, այնտեղ ապրելու հնարավորություն տալ սփյուռքահայերին, թե՞ Ստալինն ու իր շրջապատը հեռուն գնացող նպատակներ ունեին: Կարևոր է հասկանալ, թե մեր երկիրն ուներ այդպիսի հնարավորություններ, տասնյակ հազարավոր ներգաղթողների ընդունելու և ապահովելու կենցաղային տարրական պայմաններով:

Հայրենադարձության թեման ուսումնասիրվել է շատ պատմաբանների կողմից և տարբեր գնահատականներ, մեկնաբանություններ են տրվել: Խորհրդային պատմագրությունը, հակառակ արդի պատմագրության, այլ գնահատական է տվել հայրենադարձության պատճառներին, ընթացքին: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո այս թեմային անդրադարձել են մերօրյա շատ պատմաբաններ, ուսումնասիրողներ, որոնք փորձել են ավելի օբյեկտիվորեն մոտենալ հայրենադարձության փաստին, վեր հանել առաջին հայացքից կարևոր չթվացող այնպիսի հարցեր, որոնք մնացել են քողարկված՝ սփյուռքահայի և տեղացի հայերի մշակութային, գաղափարական տարբերությունները, նոր երկիր, նոր քաղաքական համակարգին և գաղափարախոսությանը հարմարվելու դժվարությունները, տեղացի հայերի վերաբերմունքը սփյուռքահայերի նկատմամբ:

Սփյուռքահայերի պատմությունը հայ ժողովրդի պատմության անքակտելի մասն է կազմում: Սփյուռքը Հայաստանի հանրապետության կողքին եղել և մնում է հայկական հարցի և հայ դատի գլխավոր պահանջատերը: Ներկայումս սփյուռքահայությունը մեծ դեր ունի ՀՀ արտաքին և ներքին՝ քաղաքականության հարցերի լուծման գործում:

ԳԼՈՒԽ 1

ՀԱՅԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄԸ

Հայոց Մեծ Եղեռնից հետո, որպես փյունիկ հառնած Հայաստանի հանրապետությունը և ապա ստեղծված Հայաստանի Խորհրդային հանրապետությունը եղան խթան և հիմք՝ հայրենադարձության համար: Սկսվեց հայրենադարձությունը: Հայրենադարձվող հայերի 3 հազար մարդուց բաղկացած առաջին քարավանը Բաթում հասավ 1921թ. դեկտեմբեր ամսին, որին հաջորդեց ևս այդպիսի թվով (այս թվերը վերցված են ՀԽՀ-ից, հատոր 6, էջ 207-208) մի քարավան 1922թ. հունվարին: Մինչ 1938թ. Իրաքից, Ֆրանսիայից, Թուրքիայից, Իրանից կանոնավոր կերպով, փոքր ընդմիջումներով հայրենիք վերադարձան 42286 հայեր[1]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին արտասահմանում կային մեկուկես միլիոն հայեր, որոնք իրենց առաջավոր ուժերի գլխավորությամբ ոչ միայն բազմակողմանի աջակցություն էին ցույց տալիս ֆաշիզմի դեմ մարտնչող երկրներին, այլ նաև անմիջական և ակտիվ մասնակցություն ունեին զինված պայքարին: Այս ուղղությամբ սփյուռքահայերի գործունեությունը ավելի ակտիվացավ Գերմանիայի կողմից Խորհրդային Միության վրա կատարված հարձակումից հետո: Համայն աշխարհի հայությունը քաջ գիտակցում էր, որ ֆաշիզմի հաղթանակը ողբերգական, նույնիսկ կործանարար հետևանք կունենա մայր հայրենիքի համար:

Ամբողջ աշխարհին հայտնի էր, տվյալ դեպքում Թուրքիայի կողմից Անդրկովկասին սպասվող սպառնալիքը: Ահա հայրենիքի և իրենց ազգակիցների ճակատագրի նկատմամբ տագնապով լցված սփյուռքահայությունը իր բարյացակամ հայացքը դարձրեց դեպի այն երկիրը, որի նկատմամբ մինչ այդ ուներ անվստահ և վախվորած վերաբերմունք[2]: Սփյուռքահայերից շատերը իրենց կյանքը զոհաբերեցին հանուն ազատության այն հաստատ համոզմամբ, որ դրանով իսկ պաշտպանում են իրենց մայր հայրենիքի և ժողովրդի պատիվն ու արժանապատվությունը, անկախությունը: Այդպես գործեցին Միսակ Մանուշյանն ու Գեղամ Աթմաճյանը, Արփեն Դավթյանն ու Հայկ Դպիրյանը՝ Ֆրանսիայում, Հակոբ Պարոնյանն ու Ռազգրադյանը՝ Բուլղարիայում, Անդրանիկ Ղուկասյանն ու Վահրամ

[1] «Ազգ», 1996թ, 15 նոյեմբեր, էջ 4:
[2] «Ազգ», 1996թ, 7 սեպտեմբերի, էջ 5:

Սաքայնը՝ Հունաստանում, բազմաթիվ ուրիշ պայծառ հայորդիներ Հարավսլավիայում, Ռումինիայում և այլուր:

Նրանք միաժամանակ նյութական ու բարոյական ամեն տեսակ օգնություն ու աջակցություն կազմակերպեցին մեր երկրին՝ այն դիտելով որպես, նաև իրենց իսկական հայրենիքը: Դրա կոնկրետ վկայությունները հանդիսացան սովետական բանակի համար դյուցազնական «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման և այլ նպատակներով գումարների հանգանակումը, հագուստեղենի, դեղորայքի, սննդամթերքի և այլ միջոցների առաքումը մեր եկրիրը[3]:

1943թ. փետրվացին հրապարակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահ արքեպիսկոպոս Չեորեքչյանի կոչը՝ ուղղված համայն հայ ժողովրդին՝ «Սասունցի Դավիթ» տանկային զորասյան օգտին միջոցներ հավաքելու վերաբերյալ: Ինչպես Խորհրդային Միության, այնպես էլ սփյուռքի հայերը սիրով արձագանքեցին էջմիածնի կոչին: 1944թ. փետրվարին ռազմաճակատ մեկնեց «Սասունցի Դավիթ» առաջին, իսկ նույն թվականի մայիսին՝ երկրորդ տանկային շարասյունը[4]:

1946թ. հունվարին Տնն Կիլիկիո Գարեգին Ա Կաթողիկոսի նախաձեռնությանբ սկսվեց մի նոր համազգային հանգանակություն՝ «կոշիկի մի գործարան և սարքեր» ձեռք բերելու և Հայաստան ուղարկելու համար: Հալեպի, Լիբանանի և Դամասկոսի թեմերում կատարված հանգանակությունից գոյացել էր 175 հազար լիր թղթադրամ: Այդ գումարից 80 հազարը առանձնացվել է կոշիկի գործարանի գնման համար, իսկ մնացյալը հատկացվել ներգաղթի ֆոնդին»[5]:

Հայրենիք-սփյուռք կապի ուժեղացմանը և զարգացմանը մեծապես նպաստեց հայ եկեղեցին: Մինչպատերազմական ժամանակաշրջանում ոչ միայն թույլ էին եկեղեցու կապերը արտասահմանյան թեմերի և գաղթօջախների հետ, այլ խորհրդային իշխանությունները ճնշում և սահմանափակում էին նրա գործունեությունը երկրի ներսում: 1938թ. Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսի հանկարծակի և առեղծվածային վախճանից հետո միտումնավոր ձևով ձգձգվում էր նոր կաթողիկոսի ընտրությունը: Նույնիսկ այդ գործի կազմակերպման համար

---

[3] Մելիքսեթյան Հ.Ու. «Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայերանադարձությունը 1920-80թթ., Երևան 1985թ, էջ 171-172 :

[4] Թոփուզյան Հ. Խ. «Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախի պատմություն» Հայկական ՍԱՀԳԱ հրատ, Երևան 1986, էջ 261:

[5] Թոփուզյան Հ. Խ. նշված աշխատությունը, էջ 262:

բավարար հնարավորություններ չկային արտասահմանի թեմերի հետ կապ պահպանելու և ներկայացուցիչներ հրավիրելու համար: Նրան փոխարինող Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը միայն կաթողիկոսական տեղապահ էր համարվում և Գերագույն հոգևոր խորհրդի նախագահողը: Պատերազմի ժամանակ ոչ միայն թույլատրվեց ընդլայնել գրագրությունը էջմիածնի Աթոռի և սփյուռքի միջև, այլ խրախուսվում էր նրա միջոցով համայն աշխարհի հավատացյալ հայությունը համախմբելու հակաֆաշիստական ճամբարում և կռնակ լինելու հայրենիքին այդ ծանր կացության մեջ[6]:

Երբեք հայրանիք-սփյուռք կապերը այդքան մեծ չէին եղել, երբեք հետաքրքրությունը դեպի հայրենի երկիրը, նրա պատմությունը մշակույթը այդպիսի կրքոտությամբ չէր արտահայտվել: Գաղթօջախները ստացան հայրենիքում հրատարակված գրականություն: Այստեղ թափանցեց նաև Հայաստանի պարբերական մամուլը: Եղան նաև Հայաստանի, սփյուռքի մտավորականների և հոգևորականների փոխայցելություններ: Այս բոլոր միջոցառումները անկասկած ոչ միայն մեծացրեցին աշխարհով մեկ ցրված հայերի հետաքրքրությունը հայրենիքի նկատմամբ, այլ դեպի այն ունեցած սիրո և կարոտի ավելի բուռն զգացմունքների տեղիք տվեցին[7]:

Ահա սա էր այն հիմնական դրդապատճառներից մեկը, որը պատերազմից հետո սովետական կառավարությանը թելադրեց ընդառաջել հայրենասիրաբար տրամադրված սփյուռքահայության հայրենադարձվելու բուռն ցանկություններին և կազմակերպել նոր զանգվածային ներգաղթ[8]:

Սփյուռքահայերը ոչ միայն դաշնակից երկրների նյութական և բարոյական օգնությամբ էին հանդես գալիս, այլև ակտիվորեն մասնակցում էին ֆաշիզմի դեմ մղվող զինված պայքարին: 18 հազար հայեր ծառայում էին ԱՄՆ-ի զինված ուժերում: Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի բանակներում ծառայում և մարտնչում էին բազմաթիվ հայեր, որոնց թվում ոչ միայն այդ երկրների մետրոպոլիայից էին, այլև զորակոչվել էին Եգիպտոսից, Սիրիայից և Լիբանանից: Այդ ժամանակ Ֆրանսիայում ապրող 130 հազար հայերի զգալի մասը համախմբվեց դիմադրական շարժման դրոշի

---

[6] «Ազգ», 1996, 7 սեպտեմբերի, էջ 5:
[7] «Ազգ», 1996, 7 սեպտեմբերի, էջ 5:
[8] Մելիքսեթյան Հ. Ու. «Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրանադարձությունը 1920-80թթ., Երևան 1985, էջ 172:

ներքո, որոնց սխրագործությունները հայտնի դարձան և փառաբանվեցին ամբողջ աշխարհում[9]:

Սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության մյուս կարևոր դրդապատճառը հանդիսացավ Թուրքիայի կողմից զավթված հայկական հողերի ետ պահանջումը, որը այդ ժամանակ առաջ քաշեց սփյուռքահայությանը, և այն ըմբանումով ընդունեց ու պաշտպանեց սովետական կառավարությունը[10]:

Սփյուռքահայության զանգվածային ներգաղթի կազմակերպման ծրագիրը սերտորեն առնչվում էր Թուրքիայից հայկական տարածքների ազատագրման իրական թվացող հեռանկարների հետ: Այդ հարցը միջազգայնորեն առաջին անգամ դրվեց 1945թ. ապրիլին Սան-Ֆրանցիսկոյում բացված Միավորված ազգերի կոնֆերանսի առաջ Ամերիկայի հայկական ազգային խորհրդի կողմից կոնֆերանսի պատվիրակություններին հանձնված հուշագրում: Պահանջվում էր «հայկական հողերի միացումը և արտասահմանում ապրող ու Հայաստան մեկնելու ցանկություն ունեցող բոլոր հայերի վերադարձը այնտեղ»:

Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը զանգվածային հայրենադարձություն կազմակերպելու հիմնախնդիրն ամբողջությամբ կենտրոնական իշխանություններին՝ հանձին Ստալինի, ներկայացրեց 1945թ. մայիսի 15-ին՝ ՀԽՍՀ ժողկոմիորհի նախագահ Ա. Սարգսյանի և ՀԿ(բ) Կ կենտկոմի քարտուղար Գր. Հարությունյանի ստորագրած գրությամբ: Մինչ այդ Գր. Հարությունյանը եղել էր Մոսկվայում, հանդիպել Ստալինին և պայմանավորվածություն ձեռք բերել հայրենադարձությունը կազմակերպել ավելի ուշ, պատերազմի հասցրած վնասներն որոշ չափով վերացնելուց հետո[11]:

ՀԽՍՀ ժողկոմխորհը դրական է վերաբերվում հայրենիք՝ Խորհրդային Հայաստան արտասահմանյան հայերի վերադարձի հարցին և խնդրում են Ձեր թույլտվությունը:

1. Հայաստանի ժողկոմխորհին՝ կազմակերպել ռուս-թուրքական պատերազմների և թուրքական կառավարության կողմից հայերի

[9] «Ազգ», 1996, 7 սեպտեմբերի, էջ 5:
[10] Մելիքսեթյան Հ. Ու., նշված աշխատություն, էջ 172
[11] Պատմական հետազոտություններ, ՀՀ ԳԱԱ պատմ. Ինստիտուտ, Հ. Թումանյանի անվան ՎՊՄԻ պատմության ամբիոն, Վանաձոր, 2001, էջ 28-29

կոտորածների ընթացքում արտասահմանյան երկրներ փախած հայերի վերադարձը:

2. Կազմակերպել ՀԽՍՀ Ժողկոմխորհին կից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման գծով կոմիտե:
3. Հայակական գաղթօջախներում առաջադիմական, հայրենասիրական և բարեգործական ընկերությունների ներկայացուցիչներից ստեղծել հայերի հայրենիք վերադարձի գծով կոմիտեներ:
4. Հավանություն տալ արտասահմանյան հայերի նախաձեռնությունը հայության շրջանում միջոցների հավաքման և Խորհրդային Հայաստան վերադարձի և տեղավորման հիմնադրամ ստեղծելու համար այդ նպատակով ներգրավելով արտասահմանի բարեգործական և այլ ընկերությունների հիմնադրամները:
5. ՀԽՍՀ ժողկոմխորհի տրամադրությանը հատկացնել 5 մլն ռուբլի ընթացիկ տարում հայ ներգաղթողների ընդունման կազմակերպման ծախսերի համար:
6. Թույլատրել ՀԽՍՀ Ժողկոմխորհին 1945թ. կազմակերպել հայերի վերադարձը, առաջին հերթին Ռումինիայից և Բուլղարիայից՝ աշխատանքի տեղավորելով նրանց հայկական ԽՍՀ խորհրդային տնտեսություններում և շահագործման հանձնվող արդյունաբերական ձեռնարկություններում[12]:

1925թ. դեկտեմբերի 17-ի սովետա-թուրքականն բարեկամության և չէզոքության պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ 1945թ. մարտի 19-ին սովետական կողմը Թուրքիային ծանուցում տվեց նրա դենոնսացիայի մասին: Այդ առթիվ տեղի ունեցան բանակցություններ՝ սկզբում Անկարայում, իսկ ապա Մոսկվայում, որտեղ Թուրքական կողմն առաջարկեց կնքել սովետա-թուրքական նոր պայմանագիր: Ի պատասխան դրա՝ սովետական կառավարությունը պայման դրեց վերանայել և կարգավորել սովետա-թուրքական սահմանը Կարսի, Արդվինի և Արդահանի շրջաններում[13]: Սովետական կառավարությունը հայտարարեց, որ 1921թ.

---

[12] Պատմական հետազոտություններ, ՀՀ ԳԱԱ պատմ. Ինստիտուտ, Հ. Թումանյանի անվան ՎՊՄԻ պատմության ամբիոն, Վանաձոր, 2001, էջ 29

[13] Մելիքսեթյան Հ. Ու., նշված աշխատությունը, էջ 173

թուրքերն, օգտվելով սովետական պետության թուլությունից, անարդարացի կերպով զավթեցին Սովետական Հայաստանի տերիտորիայի մի մասը: Ինչպես 1945թ. Պոտսդամի կոնֆերանսի ժամանակ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Ա. Իդենի հետ ունեցած զրույցում նշել է ՍՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Վ. Մ. Մոլոտովը, դրանից հայերը վիրավորված են, որի համար էլ սովետական կառավարությունը բարձրացրել է օրինական կերպով ՍՍՀՄ-ին պատկանող այդ տերիտորիաները իրենց իսկական տիրոջը վերադարձնելու հարցը: ՍՍՀՄ արտաքին գործերի ժողկում Վ. Մ. Մոլոտովը միաժամանակ հայտնեց, որ պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ արտասահմանում գտնվում է 1 միլիոնից ավելի հայ և, երբ այդ հողերը վերադարձվեն Սովետական Հայաստանին ու նրա տերիտորիան ընդարձակվի, շատ սփյուռքահայեր, որոնք ցանկություն են հայտանել վերադառնալ հայրենիք, հնարավորություն կունենան կրկին հաստատվելու իրենց պապենական օջախներում:

Թեպետ այս հարցը քննարկվեց ՄԱԿ-ում, սակայն Թուրքիային հովանավորող արևմտյան տերությունների բռնած բացասական դիրքի հետևանքով հնարավոր չեղավ հասնել դրական արդյունքի[14]:

Որոշ պատմաբաններ թե՛ Կարսի և Արդահանի հողային պահանջը, և թե՛ ներգաղթը Խորհրդային միության սահմաններն ընդլայնելու Ստալինի ձգտմանն են վերագրում Հայաստանը լցնել հայերով և ցույց տալ, թե հայերը հողերի մեծ պակաս ունեն: Եթե այս մեկնաբանությունն իրողություն էլ լինի, համեմայն դեպս ծրագիրը հայության շահերից էր բխում և հայությունն ընդառաջեց դրան: Ներգաղթի մեկ այլ դրդապատճառ էլ պատերազմի բազմաթիվ զոհերը դրսի հայերով փոխարինելը կարող էր լինել: Բացի այդ պատերազմի օրերից սկսած խորհրդային իշխանությունը հատուկ ուշադրություն էր ցույց տալիս սփյուռքահայությանը, որը կարող էր նյութական օժանդակության լավ աղբյուր լինել: Ներգաղթը սփյուռքահայերին սիրաշահելու միջոց էր[15]:

---

[14] Մելիքսեթյան Հ. Ու., նշված աշխատությունը, էջ 173

[15] Փիրումյան Ռ. «Հայկական հարցի պատմություն», Երևան 2000, էջ 175:

Այսպիսով՝ սփյուռքահայերի ետպատերազմյան զանգվածային հայրենադարձության կազմակերպման կարևոր շարժառիթներից մեկն էլ հանդիսացավ Թուրքիայից հայկական տերիտորիաների պահանջումը[16]:

[16] Փիրումյան Ռ. «Հայկական հարցի պատմություն», Երևան 2000, էջ 175:

ԳԼՈՒԽ 2

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ընդառաջելով արտասահմանում բնակվող հայության բուռն ձգտումներին Հայկական ՍՍՀ կառավարության միջամտությամբ սովետական միության կառավարությունը 1945թ. նոյեմբերի 21-ին որոշում կայացրեց սփյուռքահայության ներգաղթը սովետական Հայաստան իրականացնելու մասին[17]:

Ի կատարումն ՍՍՀՄ կառավարության վերոհիշյալ որոշման և ներգաղթի աշխատանքների գործնական իրականացման համար ՀՍՍՀ ժողկոմխորհը 1945թ. դեկտեմբերի 8-ին ստեղծեց ժողկոմխորհին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե հետևյալ կազմով. պետական-կուսակցական ճանաչված գործիչ Բ. Ա. Աստվածատրյան (նախագահ), ՀՍՍՀ ժողկոմիխորհի նախագահի տեղակալ Հ. Հ. Մարշանյան (նախագահի տեղակալ), ժողովրդական նկարիչ Մ. Ս. Սարյան (նախագահի տեղակալ) ՀՍՍՀ արտաքին գործերի ժողկոմ Ս. Կ. Կարապետյան և բժշկական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Արտ Ալ. Մելիք-Ադամյան անդամներ: Մի փոքր անց 1946թ. հունվարին կոմիտեի կազմի մեջ մտցվեց նաև ՀՍՍՀ ներքին գործերի ժողկոմ Ի. Ի. Մաթևոսովը[18]:

Ստեղծվեցին ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե և վերաբնակեցման վարչություն[19]: Միաժամանակ կազմակերպվեց ՀՍՍՀ Ժողկոմխորհին առընթեր վերաբնակեցման վարչություն (նախագահ՝ Ի. Տ. Գևորգյան) և կատարվեց վերջինիս ու ներգաղթի ֆունկցիաների սահմանազատում: Ներգաղթի կոմիտեի խնդիրն էր սփյուռքահայության հայրենադարձության կազմակերպումը արտասահմանում և նրանց ընդունումը ՍՍՀՄ տերիտորիայում ստեղծված կայաններում (Բաթում, Ջուլֆա, Բաքու), իսկ վերաբնակեցման վարչությունը՝ ներգաղթածների տեղաբաշխումը հանրապետությունում, նրանց բնակարանային ու աշխա տան քային հարցերի կազավորումը, նոր ավանների ու բնակելի տների կառուցումը[20]:

Սիրիայում և Լիբանանում ներգաղթի պատմական գործի գլուխ կանգնեց «Սուրիո և Լիբանանի հայերի ներգաղթի կոմիտեն», որը գործում էր հայ ազգային իորհրդի հովանավորությամբ: Նրանում ընդգրկված էին ս.-դ. հնչակյան ռամկավար

---

[17] Հայ-ժող. պատմություն, VIII հատոր, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 1970, էջ 248
[18] Մելիքսեթյան Հ. Ու., նշված աշխատությունը, էջ 178
[19] «Ազգ», 1996,15 նոյեմբեր, էջ 178:
[20] Մելիքսեթյան Հ. Ու., նշված աշխատությունը, էջ 178

ազատա-կան կուսակցությունների և այլ կազմակերպությունների հետևյալ ներկայացուցիչները՝ Մկրտիչ Մսըրյան՝ հատվո նախագահ, Հրանտ Դևեջյան՝ նախագահ, Հրաչ Սեդրակյան, Վահրիճ Ճերեճյան՝ քարտուղարներ, Բագրատ Բագալյան՝ գանձապահ և վեց խորհրդականներ: Սիրիայի բնակչության 90%-ը, Լիբանանի 80%-ն արձագրվեց ներգաղթելու համար[21]:

Սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձության վերաբերյալ սովետական կառավարության որոշումը անհուն գոհունակությամբ և ոգևորությամբ ընդունեց համայն հայությունը, ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքում: Այդ առթիվ սովետական կառավարությանն ուղղված շնորհակալական ջերմ խոսքով և սփյուռքահայ տարագիրներին հասցեագրված ողջույններով հանդես եկան մեր մտավորականության անվանի դեմքեր Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Հր. Աճառյանը, Մ. Սարյանը, Ս. Սարգսյանը[22]:

Արդեն 1946թ. փետրվարին հայրենիք գալու թույլտվություն էին խնդրել 130 հազար մարդ, սակայն նկատի առնելով հանրապետության հնարավորությունները, որոշվեց այդ թվականին ընդունել միայն 28.800 մարդ[23]: Սովետական Հայաստանի բոլոր շրջաններում ու քաղաքներում արագորեն ծավալվեց հայրենասիրական լայն շարժում հայրենադարձների համար բնակարաններ առանձնացնելու, նրանց համար տներ կառուցելու և նյութական ու դրամական միջոցներ կուտակելու ուղղությամբ: Ահա այդ մասին վկայող մի քանի կոնկրետ փաստեր: Հայրենադարձության ֆոնդի օգտին Սիսիանի շրջանում մեր օրվա 1946թ. ապրիլի 5-ի հատկացումների գումարը կազմեց 700 հազար, Երևանի Լենինյան շրջանի միայն 12 արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվների բանվոր-ծառայողները տրամադրեցին 630 հազար, Բասարգեչարի շրջանի աշխատավորները' 300 հազար ռուբլի և այլն: Մայրաքաղաքի շինարարները պարտավորվեցին իրենց միջոցներով կառուցել 500 նոր բնակարան, իսկ Կոտայքի (այժմ Աբովյան) շրջանի աշխատավորները հատկացրին 350 հազար, Ստեփանավանի շրջանի կոլտնտեսականները՝ կես միլիոն,

[21] Թոփուզյան Հ. Խ. նշված աշխատությունը, էջ 262-263 :
[22] Մելիքսեթյան Հ. Ու., նշված աշխատությունը, էջ 183
[23] Հայ-ժող. պատմություն, VIII հատոր, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 1970, էջ 249:

բանվոր-ծառայողները՝ 150 հազար, Հոկտեմբերյանի աշխատավորները՝ 850 հազար, լենինականցիները՝ 1 մլն 22 հազար ռուբլի»[24]:

Ամերիկահայ ազգային խորհրդին կից ստեղծված հայերի ներգաղթի օգնության հանձնախումբը ներգաղթի կապակցությամբ հրահարակած իր կոչում գրում էր. «Դարերով աղոթեցինք, դարերով երազեցինք և դարերով երգեցինք այլ նվի բա կան օրը: Մեր հայերը անցյալի մեջ, մեր քույրերը և եղբայրները դեռ երեկ այս երանավետ օրվան համար ողջակիզվեցին և զոհաբերվեցան հավատքի կայծը իրենց հոգիին խորքը և հյուսի ժպիտը իրենց շուրթերուն վրա»[25]: Ներգաղթի կազմակերպման ուղղությամբ լայն գործունեություն ծավալեց նաև հայկական բարեգործական ընդհանուր միությունը, որը միայն 1946թ. այդ նպատակով հանգանակեց 1 մլն դոլար: «Ներգաղթը արտագաղթին տեղ: Հայրենադարձը կմնա օրվան կարգախոս»,-այս նշանաբանով էր գործում այս միությունը, որը պարտավորվում էր հոգալ ներգաղթողների ճանապարհածախսի և հայրենիք վերադառնալու սկզգրնական շրջանի պետքերը, հատկապես օգնել ներգաղթող կարիքավոր ընտանիքներին, տրամադրել հիվանդանոցային և մանկական հիմնարկների կահավորում, ինչպես նաև հա գուստ, կոշիկ և այլն: Բարեգործական միության Ֆրանսիայի մասնաճյուղը նույնպես հավաստիացնում էր, որ կլարի բոլոր ջանքերը ներգաղթող հայերանակիցների կարիքները բավարարելու համար է[26]»:

Հայրենադարձությունը վերսկսելու լուրը խանդավառությամբ համակեց նաև հեռավոր Լատինական Ամերիկայի հայկական գաղթօջախներին, որոնք նույնպես ձեռնամուխ եղան ներգաղթի նախապատրաստական աշխատանքներին: Այդ առթիվ ահա թե ինչ էր գրում «Հայ մամուլ» շաբաթաթերթը. «Ներգաղթի արտոնության բերկրալի լուրը անսահման ուրախությամբ կհամակե սրտերը բոլոր անուց, ովքեր մաքուր համոզումը ունեցան Սովետ Հայաստանի լուսապայծառ իրականության, և որոնք Սովետ Միության հայրենական պատերազմի դժվարին օրերուն անխախտ հավատքը ունեցան ժողովուրդներու արդար դատի հաղթանակին, անձկանոք սպասելով բախտավոր ու երջանիկ օրվան, դեպի հայրենիք ներգաղթին[27]: Արդեն 1946թ. փետրվարից Սիրիայում, Լիբանանում, Իրանում, Հունաստանում,

[24] Մելիքսեթյան Հ. Ու., նշված աշխատությունը, էջ 183
[25] Հայ-ժող. պատմություն, VIII հատոր, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 1970, էջ 249:
[26] Հայ-ժող. պատմություն, VIII հատոր, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 1970, էջ 249:
[27] Մելիքսեթյան Հ. Ու., նշված աշխատությունը, էջ 183

Բուլղարիայում, Ռումինիայում և այլ երկրներում սկսվել էր ներգաղթողերի արձանագրումը[28]:

Անկասկած հայրենադարձության գործոնն զգալի ազդեցություն գործեց եւ նա նի հատակագծման վրա, բայց այդ գործոնը ենթարկվեց միասնական քաղաքաշինության գաղափարին, դարձավ դրա անքակտելի մասը[29]:

Բնակարանային հարցը գտնվում էր շատ ծանր վիճակում: Գր. Հարությունյանը 1945թ. հոկտեմբերի 27-ին Ստալինին ուղարկած գրությունում նշում էր. «Մեզ մոտ՝ Հայաստանում ամենածանր լուծվող հարցերից մեկը բնակչությանը բնակտարածությունով ապահովելն է: Հատկապես բնակարանի սուր կարիք է զգացվում Երևան, Լենինական և Կիրովական քաղաքներում վերջին տարիներին բնակչության աննախադեպ աճի հետևանքով»: Քաղաքներում մեկ շնչի հաշվարկով նվազագույնը 9քմ պետական չափաբաժնի փոխարեն Երևանում փաստացի դրությունն էր՝ 1932թ. 4.3, իսկ 1940թ. իջել էր 4.5-ի, իսկ Կիրովականում համապատասխանաբար՝ 4.9 և 4.1 քմ-ի: Պատերազմի տարիներին չափաբաժինն ավելի էր իջել: Գր. Հարությունյանը խնդրում էր Ստալինից հանձնարարել նշված քաղաքների խորհուրդներին 1946-47թթ. Ընթացքում յուրաքանչյուր տարի հատկացնել 25-ական մլն ռուբլի՝ բնակարանայի շինարարության համար[30]:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ հայրենադարձներին ընդունելու համար բնակարանային պայմաններ բնավ չկային[31]:

Օգոստոսի 2-ին ավարտվեց «Պոտսդամի կոնֆերանսը՝ Թուրքիայի կողմից Խորհրդային միությանը տարածքներ վերադարձնելու հարցում ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կոշտ դիրքորոշման առկայությամբ: Ուստի Ստալինը չէր շտապում որոշում ընդունել»: ժամանակն անցնում էր, Խորհրդային կառավարության ա նու նով շարունակում էին ստանձնել հազարավոր նամակներ, որոնց պատասխանը կառավարությունը չուներ: Հայրենադարձության հարցն արտասահմանյան մամուլում դարձավ շահարկման առարկա: Ստեղծված իրադարձությունից ելք

---

[28] Մելիքսեթյան Հ. Ու., նշված աշխատությունը, էջ 183

[29] «Ազգ», 1996

[30] Պատմական հետազոտություններ, ՀՀ ԳԱԱ պատմ. Ինստիտուտ, Հ. Թումանյանի անվան ՎՊՄԻ պատմության ամբիոն, Վանաձոր, 2001, էջ 31

[31] Պատմական հետազոտություններ, ՀՀ ԳԱԱ պատմ. Ինստիտուտ, Հ. Թումանյանի անվան ՎՊՄԻ պատմության ամբիոն, Վանաձոր, 2001, էջ 31

գտնելու համար Գր. Հարությունյանը որոշում է մեկնել Մոսկվա, տեսակցել Ստալինի և երկրի մյուս ղեկավարների հետ:

Հարությունյանը սփյուռքահայերի հայրենիք վերադառնալու վերաբերյալ Մուկվայում երկու գրություն է կազմել, մեկը՝ Ստալինի, մյուսը՝ Մալենկովի անուններով[32]:

Ստալինին ուղղված գրությունը կարճ է, շեշտը դրված է երեք հանգամանքի վրա.

1. Սփյուռքահայերից շարունակվում են ստացվել դիմումներ հայրենիք վերադառնալու թույլտվության մասին: Խորհրդային Հայաստանն այդ դիմումնե ին դրական պատասխան չի տվել՝ միութենական կառավարության որոշման բացակայության պատճառով:
2. Հայկական գաղթօջախներում թշնամաբար տրամադրված խմբերը տարածում են լուրեր այն մասին, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը չի պատասխանում այդ դիմումներին այն պատճառով, որ Խորհրդային իշխանությունը չի պատասխանում այդ դիմումներին հայերի վերադարձին հայրենիք, բացասաբար է վերաբերվում:
3. Խորհրդային Հայաստանի 25 ամյակի առթիվ Հայաստանի կոմկուսի Կենտկումը և ժողկոմխորհը անհրաժեշտ են գտնում ունենալ միութենական կառավարության հատուկ որոշումը՝ հրապարակված մամուլում, արտասահմանյան երկրներում ապրող հայերի հայրենիք՝ Խորհրդային Հայաստան վերադառնալու թույլտվության մասին:

[32] Պատմական հետազոտություններ, ՀՀ ԳԱԱ պատմ. Ինստիտուտ, Հ. Թումանյանի անվան ՎՊՄԻ պատմության ամբիոն, Վանաձոր, 2001, էջ 31

ԳԼՈՒԽ 3

Եվ ահա Արարատի դեմ հանդիման հայրենաբնակ մեր ժողովուրդը դեռ իր վերքերի ցավը չամոքած, հիշեց արևմտյան դժբախտ իր կեսին և 1946-47թթ «Ներգաղթ» բառով արձանագրվեց առաջին լուսավոր էջը սփյուռքի տխուր պատմության մեջ[33]:

Եվ այսպես՝ լարված նախապատրաստական աշխատանքներից հետո 1946թ. հունիսի 23-ին, Բեյրութի նավահանգստից Բաթում ուղևորվեց «Տրանսիլվանիա» շոգենավը՝ հայրենադարձների առաջին քարավանով, որի մեջ գտնվում էր 1805 մարդ[34]:

Խորհրդային միության կառավարության որոշմամբ 1946թ. Հայաստան պետք է գար 130 հազար հայ, ուստի հայրենադարձների իրական թիվն այդ տարի անցավ 50 հազարից: Հայաստան ներգաղթեցին Իրանից՝ 20597, Սիրիա-Լիբանանից՝ 19253, Հունաստանից՝ 4974, Բուլղարիայից՝ 4983, Ռումինիայից՝ 1738 մարդ[35]: Նրանք տեղավորվեցին հանրապետության քաղաքներում և գյուղերում: Երևանում բնակություն հաստատեց 15 հազար հայրենադարձ[36]:

Հայրենադարձների առաջին քարավանի պետ բժիշկ Գևորգ Մանուշակյանը Բեյրութ-Երևան ճանապարհորդության ընթացքում կազմել է մի օրագրություն-տեղեկագիր, ուր շատ համոզիչ էջեր կան օտարությունից տուն դարձող հայրենակարոտ մարդկանց զգացմունքների, սովետական հողում նրանց ցույց տրված ընդունելության, մասին[37]: Բոլոր աշխատունակ հայրենադարձները՝ գյուղացիները, բանվորները, արհեստավորները և մտավորականները բավարարվեցին աշխատանքավ, նրանցից 3.897-ը տեղավորվեցին արդյունաբերական ձեռմարկություններում, 9.405-ը՝ գյուղատնտեսությունում, 1,133-ը՝ շինարարությունում, 3.448-ը' արհեստագործական կոոպերացիայի սիստեմում, 234-ը՝ առևտրի բնագավառում և այլն: Երեխաներն ընդգրկվեցին դպրոցներում: 1947թ. փետրվարի 1-ի տվյալներով միջնակարգ դպրոցներում սովորում էր 7.454, իսկ մյուս

---

[33] Հայրենիքի ձայն, 1988, 10 փետրվարի, էջ 4:
[34] Մելիքսեթյան Հ.ՈՒ, նշված աշխատությունը, էջ 211:
[35] «Ազգ», 1996, 15 նոյեմբեր, էջ 4:
[36] Սովետական Հայաստան, 1988, 5 փետրվարի, էջ 205:
[37] Մելիքսեթյան Հ.ՈՒ., նշված աշխատությունը, էջ 212:

տիպի դպրոցներում 1.270 հայրենադարձ երեխա: Մեծ աշխատանք տարվեց հայրենադարձների անգրագիտության վերացման համար: 4.073 անգրագետներից 1947թ. ապրիլի 1-ի տվյալներով անգրագիտության վերացման խմբակներում ընդգրկված էր 3.883 մարդ: 2874 կիսաանգրագետներից համապատասխան խմբակներում ընդգրկված էր 2.719 մարդ: 203 երիտասարդներ ընդունվեցին հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ, 94 հոգի տեխնիկումներ: Ներգաղթած 1801 ընտանիքից նոր բնակարաններ ստացան 936-ը, իսկ մնացածները տեղավորվեցին գոյություն ունեցող բնակարանային ֆոնդից առանձնացված բնակարաններում: 1600 ընտանիքներ ստացան հողամասեր և վարկ անհատական շինարարության համար»[38]: Ներգաղթի առաջին քարավանին հետևեցին երկրորդը, երրորդը և բազմաթիվ ուրիշները[39]: 1946թ. հուլիս-օգոստոս ամիսներին «Անիվա», «Ռուփա» և «Վերխոյանսկ» շոգենավերով Բուլղարիայից Սովետական Հայաստան ժամանեցին 4383 հայրենադարձներ: Ուշագրավ է, որ բուլղարական կառավարությունը հայերին թույլատրել էր իրենց հետ հայրենիք տանել եկեղեցական գույք, սրբապատկերներ, գրքեր և ընդհանրապես հայկական ազգային մշակույթի համար արժեք ներկայացնող այլ առարկաներ: Դրանք միաժամանակ ազատվում էին մաքսից[40]»:

Սովետական կառավարությունը 1947-48թթ. ևս շարունակեց հայրենադարձությունը, 1947-ին Սիրիայից, Լիբանանից, Կիպրոսից, Պաղեստինից, Իրաքից, Եգիպտոսից, Հունաստանից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից և մի փոքր խումբ Չինաստանից Սովետական Հայաստան ներգաղթեց 35401, 1948-ին Սիրիայից, Լիբանանից, Եգիպ տո- սից, Եգիպտոսից, Բուլղարիայից և ԱՄՆ-ից՝ ավելի քան 10 հազար մարդ: Այնուհետև նկատի ունենալով բնակարանային ու այլ կարգի դժվարությունները՝ հայրենադարձությունը ժամանակավորապես դադարեցվեց: 1946-48թթ. 15 երկրներից հայրենիք վերադարձավ մոտ 100 հազար հայ[41]: Առանձին ձեռնարկություններ ներգաղթածների համար կառուցել են 3700 տուն:

---

[38] Հայ-ժող. պատմություն, VIII հատոր, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 1970, էջ 249:
[39] Մելիքսեթյան Հ.ՈՒ., նշված աշխատությունը, էջ 212:
[40] Մելիքսեթյան Հ.ՈՒ., նշված աշխատությունը, էջ 212:
[41] «Սովետական Հայաստան», 1988, 5 փետրվար, էջ 209

Հայրենադարձների համար հիմնադրվել է ութ նոր ավան, տներ կառուցելու նպատակով ծախսվել է 274 մլն ռուբլի»[42]:

Որոշակի խոչընդոտներ առաջացան նաև ԱՄՆ-ից և հարավային Ամերիկայի հայկական գաղթօջախներից հայրենադարձության իրականացման գործում: ԱՄՆ-ի, Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգվայի կառավարությունները մերժեցին այդ երկրներ մեկնելու վիզաներ տալ ՀՍՍՀ մինիստրների խորհրդի հայրենադարձության գծով ներկայացուցիչներիտն: Հարուցվեցիտն նաև այլ կարգի խոչընդոտներ: Սովետական կառավարության գործադրած հետևողական ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ ինչ-որ չափով կարգավորել ամերիկահայերի ներգաղթը, սակայն Հարավային Ամերիկայի հայ տարագիրների հայրենադարձությունը մնաց անկատար[43]:

1946-48թթ ներգաղթի կազմակերպման գործում գոյություն ունեին որոշ թերություններ: Դրանց զգալի մասը անխուսափելի էր, որովհետև Սովետական Հայաստանի կառավարությունը, ելնելով ազգահավաքի իր ճիշտ քաղաքականությունից, ավելի շատ մարդ ընդունեց, քան կարող էր[44]:

Ներգաղթը երկուստեք թե՛ դժվարություն էր առաջացրել, և թե՛ առավելություն ստեղծել: Հայրենադարձների համար դյուրին չէր համակերպվել նոր քաղաքական և սոցիալական պայմաններին: Նրանց մեծ մասը, որ այնքան կարոտով էր հայրենիք եկել, տեսնելով Հայաստանում ապրող և ստալինյան օրինակով խորհրդային քաղաքացի դարձած հայերի անտարբերությունը դեպի ազգայինն ու հայկականը, հուսախաբ էր լինում, կոմունիզմի ճնշումն էր զգում իր առօրյա կյանքում և ինչն իրեն օտար էր զգում:

Որքան էլ Հայաստանի համար նպաստավոր լիներ ներգաղթը, Հայաստանը պատրաստ չէր ներգաղթողների այդ հսկա թիվն ընդունելու ոչ պարենամթերքի և ոչ էլ բնակարանի տեսակետից: Տարիներ էին պետք, որպեսզի ներգաղթածների վիճակը բարելավվեր, որպեսզի նրանք Հայաստանի վարք ու բարքին վարժվեին ու նույնանային տեղացիների հետ: Բայց այս նույնացումը երբեք լիակատար չեղավ, և երբ հայերն իրավունք ստացան Հայաստանից արտագաղթելու, հայրենադարձների

[42] «Սովետական Հայաստան», 1988, 5 փետրվար, էջ 209
[43] Մելիքսեթյան Հ. Ու., նշված աշխատությունը, էջ 228:
[44] Հայ-ժող. պատմություն, VIII հատոր, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 1970, էջ 249:

ընտանիքներից շատերն իսկույն հեռացան Հայաստանից[45]: Ի նշան հայրենիքի նկատմամբ ջերմ սիրո և նվիրվածության, սփյուռքահայ բազմաթիվ կազմակերպություններ ու անհատներ ՀՍՍՀ ներգաղթի կոմիտեի միջոցով ամեն տեսակ նվերներ էին ուղարկում կամ հայրենադարձվելիս իրենց հետ Սովետական Հայաստան բերում աշխատանքի գործիքներ, մեքենաներ, կազմում արտելներ և այլն: Հայրենի երկրին ավելի մեծ նպաստ մատուցելու նպատակով մի խոսքով դրանք բազմազան ու բազմաբնույթ նվերներ էին՝ սկսած հաստոցներից ու բաշկական սարքավորումներից մինչև արաբական ընտիր նժույգներ ու մասունք դարձած սուրճի գավաթներ: Այսպես, օրինակ, Եգիպտոսից հայրենիք եկած Դոլարջյան գերդաստանը 1947թ. նոյեմբերին Սովետական Հայաստանի կառավարությանը նվիրեց Լիվերպուլում գնված բրդեղեն հյուսող 63 սնդուկ անգլիական առաջակարգ հաստոցներ, որոնք տրվեցիտն ՀՍՍՀ տեղական արդյունաբերության մինիստրության Երևանի մահուդի ֆաբրիկային[46]»,

Սիրիրայում ապրող Հովհ. Ղոնթարջյանը Հայաստանի պատմության պետական թանգարանին նվիրեց Կիլիկիայի Ռուբինյան դինաստիային պատկանող պղնձյա դրամների հարուստ հավաքածու (104 հատ), Նյու Յորքից Երանուհի Ասատրյանը՝ պարսկական երկու ծխամորճ և ուրիշ գեղարվեստական իրեր, այդ թվում դերասանուհի Սիրանույշին պատկանող սուրճի սպասքը և այլ իրեր, իսկ Սիրիայի Ջեզիրեի շրջանից ներգաղթած Պարունակ Ծիղիկյանը և Սարգիս Օսիկյանը հայրենի- քին նվիրեցին արաբական 5 ձի:

1948թ. նյու Յորքից հայրենիք բերվեցին նկարիչ Արշակ Ֆեթվաջյանի անձնական իրերը և գեղանկարները, Բուլղարիայից՝ թանգարանային արժեքավոր գորգեր, ռումինահայ Վարդան և Զինաիդալ Բարակյանները Հայաստանի պետական պակերասրահին նվիրեցին երկար տարիների ընթացքում ձեռք բերված հնագիտական և գեղարվեստական իրերի ճոխ հավաքածուն (16 արկղ, 747 անուն), իսկ նրանց հայրենակից Հարություն ավագ քահանա Սարգսյանը Երևան ուղարկեց իր հարուստ գրադարանը: Այսպիսով՝ 1946-1948-49թթ ներգաղթը ոչ միայն դաժան ճակատագրի բերումով աշխարհով մեկ սփռված արևմտահայ տարագիրների

[45] Փիրումյան Ռ. «Հայկական հարցի պատմություն», Երևան 2000, էջ 176:
[46] Մելիքսեթյան Հ. Ու., նշված աշխատությունը, էջ 243:

հայրենադարձություն էր, այլև հայ մշակույթի մասունքների տունդարձ, որը շարունակվում է առ այսօր[47]

[47] Մելիքսեթյան Հ. Ու., նշված աշխատությունը, էջ 243:

Եզրակացություն

Այսպիսով՝ Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի նկատմամբ տարած հաղթանակը բարձրացրեց Խորհրդային Միության, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի հեղինակությունը:

Թուրքական յաթաղանից մազապուրծ փրկված և աշխարհով մեկ սփռված հայերի մեջ ծնվեց մի նոր հույս՝ պապերի հայրենիք վերադառնալու, այնտեղ ապրելու և արարելու հույսը: Արևմտահայերի՝ հայրենիք վերադառնալու հարցը սերտորեն առնդվում էր ԽՍՀՍ ղեկավարության ծրագրերի հետ (խոսքը Թուրքիայից պատմական Հայաստանի տարածքի ետ պահանջման մասին է): Սակայն, ինչպես գիտենք, Պոտսդամի կոնֆերանսում այդ հարցը բարձրացվեց ԽՍՀՄ արտգործնախարար Մոլոտուի կողմից, սակայն մերժվեց, Հայակական հարցի լուծումը կրկին ենթարկվեց արևմտյան տերությունների շահարկմանը և փակվեց չլուծված:

Խորհրդային միության կառավարությունը միայն 1945թ. նոյեմբերի 21-ին ստորագրեց ներգաղթ իրականացնելու մասին որոշումը: Չնայած Խորհրդային Հայաստանը չուներ լիարժեք բնակարանային աշխատանքի տեղավորման խնդիրներ, այնուամենայնիվ ներգաղթը կազմակերպվեց: 1946թ հունիսի 23-ին հայրենադարձների առաջին խումբը «Տրանսիլվանիա» նավով ժամանեց Բաթում, այնտեղից՝ գնացքով Երևան: Հայրենադարձությունը շարունակվեց 1947-1948թթ: Նրանց ընդունում-տեղավորում էին նախօրոք ստեղծված կոմիտեները, տրամադրվում էին բնակարաններ, տեղավորվում էին աշխատանքի, երեխաներին ընդունում էիտն դպրոցներ, նրանց տրվում էին արտոնություններ:

1946-1948թթ. Հայաստան ժամանեցին մոտ 100 հազար հայազգի պանդուխտ զավակներ, ուստի հատահական չէր, որ այն առանձնացվում է և կոչվում «Մեծ հայրենադարձություն»: Ցավալի է, սակայն, այս թվականներին հայրենիք ժամանած շատ հայրենադարձներ դարձան ստալինյան բռնապետության զոհը, նրանցից շատերն աքսորվեցին Սիբիր՝ որպես հայրենիքի դավաճաններ, որպես օտարերկրյա գործակալներ և լրտեսներ: Անհատի պաշտամունքի քննադատությունից հետո նրանց հնարավորություն տրվեց վերադառնալ Հայաստան:

Շատ հայրենադարձներ ենթարկվում են բարոյահոգեբանական ճնշման նաև տեղացիների կողմից, նրանց սկսում են անվանել եղբայր (աղբար), որը ավելի շատ կրում էր ծաղրական բնույթ: Հայրենադարձները հանդիպում էին տարաբնույթ կենցաղային, մշակութային, աշխարհայացքային տարբերությունների:

ԽՍՀՄ-ն ուներ և՛ դեմոգրաֆիական խնդիր, և՛ բնակարանային խնդիր: Բնակարանային խնդիր ունեին նաև տեղացիները, սակայն առաջնությունը տրվում էր սփյուռքահայերին. սա նույնպես լարվածության մեծ առիթ էր:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ սփյուռքահայերը ոչ մի առավելության չարժանացան, չդարձան մանիկը սեփական հայրենիքի, չկարողացան ինտեգրվել ԽՍՀՄ հասարակական կարգերին, դարձան բռնությունների զոհ և 80-ական թվականներին մեծ մասը վերադարձան:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Ազգ», 1996թ. :
2. Թոփուզյան Հ. Խ. «Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախի պատմություն» Հայկական ՍԱՀԳԱ հրատռ, Երևան 1986թ. :
3. Հայ-ժող. պատմություն, VIII հատոր, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 1970թ. :
4. Հայրենիքի ձայն, 1988թ. :
5. Մելիքսեթյան Հ.Ու. «Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայերանադարձությունը 1920-80թթ., Երևան 1985թ. :
6. Պատմական հետազոտություններ, ՀՀ ԳԱԱ պատմ. Ինստիտուտ, Հ. Թումանյանի անվան ՎՊՄԻ պատմության ամբիոն, Վանաձոր, 2001թ. :
7. Սովետական Հայաստան, 1988թ. :
8. Փիրումյան Ռ. «Հայկական հարցի պատմություն», Երևան 2000թ. :

Հայրենադարձության թեմայի ուսուցումը դպրոցում

Թեմայի ուսումնասիրությունից առաջ աշակերտներին հարցնենք, թե ինչ են հասկանում՝ հայրենադարձություն ասելով:

Հայրենադարձություն բառը ներկայացնել մտագրոհի միջոցով:



Ֆրոնտալ հարցման միջոցով վերհիշենք, թե երբ և ինչի արդյունքում են առաջացել հայկական գաղթօջախները:

Թեմայի շուրջ կարելի է կատարել հարցադրումներ, որոնք կզարգացնեն աշակերտների մտածելու, վերլուծելու կարողությունը.

- Ի՞նչ սովորեցին սփյուռքահայերը տեղացիներից և հակառակը
- Արդյո՞ք արդարացվեցին սփյուռքահայերի սպասելիքները
- Ինչո՞ւ նրանցից շատերը վերադարձան

Նախապես աշակերտներին հանձնարարել տեղեկություններ բերել սփյուռքահայերի խոհանոցի, հագուստի, աշխարհայացքի մասին և կենցաղային այն տարբերությունների, որոնց կարող էին բախվել սփյուռքահայերը:

Գրատախտակը բաժանել երկու մասի և նշել տարբերությունոներն ու նմանությունները:

Բացատրել աղբար (եղբայր) բառի գործածությունը:

Հանձնարարել տնային աշխատանք՝ գրել շարադրություն՝ «Նամակ սփյուռքահայ բարեկամիս» վերնագրով:

ՀՀ Կրթության Գիտության Մշակույթի Սպորտի Նախարարություն

Վանաձորի Հ, Թումանյանի անվան պետական համալսարան

Հերթական ատեստավորման ենթակա պատմության ուսուցիչների
վերապատրաստման դասընթաց

Թեմա՝ ՀՀ-ն որպես Անտանտի դաշնակից. ակնկալիքներ և Հիասթափություն

Ծաղկաբերի միջ. դպրոցի ուսուցչուհի՝ Սոնա Քալամյան

ղեկավար՝ Ս. Աղաջանյան

Վանձոր 2022

Բովանդակություն

Ներածություն

Ռազմաքաղաքական դաշինքները առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Ընդհանուր ակնարկ դաշինքների մասին:

Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ.

Եզրակացություն

Ներածություն

Հայերըերբեքաչքչենգցելուրիշժողովուրդներիտարածքներին, այլպայքարելենիրենցազգայինինքնությունննուպետականանկախությունընպա հպանելուհամար:Չնայածներքինևարտաքինբոլորփոթորիկներինհայերըսիրե լովհարազատերկրամասիանկախությունը, թանկենգնահատելնաևմյուսժողովուրդներիանկախությունը:

Սակայնմեծտերություններըքաղաքականխանդավանքներովքայլառքայլաճու ղդիառարկադարձրինՀայաստանը:Այդքաղաքականությունըվերջինհաշվովի անգեցրեցԹուրքիայումհայերիցեղասպանությաննուԱրևմտյանՀայաստանի կորստին:

Հայաստանը մոռացության էր մատնվել, բոլոր եվրոպական երկրները հետաքրքրված էին Թուրքիայով, քանի որ այդ երկրից նրանք շահ ունեին, կախում ունեին:

Ռազմաքաղաքական դաշինքները առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Ընդհանուր ակնարկ դաշինքների մասին:

•Անտանտի կազմավորումը

ԱնտանտռազմաքաղաքականդաշինքՌուսաստանի, ԱնգլիայիևՖրանսիայիմիջև՝ստեղծվածորպեսհակակշիռԵռյակմիությանը՝ A-Entente՝Գերմանիային, Ավստրո-ՀունգարիայինևԻտալիային:Չևավորվելէհիմնականում 1904-1907 թվականներինևմեծտերություններիսահմանազատում

նավարտեցԱռաջինհամաշխարհայինպատերազմինախաշեմին:Եզրույթնառ աջացելէ 1904 թվականին՝իսկզբանենշանակելովանգլո-ֆրանսիականդաշինքը, ընդորումկիրառվումէրl’Ententecordiale («սրտակիցհամաձայնություն») արտահայտությունը՝իհիշատակ 1840-ականթվականներիննույնանվանումըկրողանգլո-ֆրանսիականկարճատևդաշինքի:Անտանի երկրներն են(Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, Ֆրանսիա, Սերբիա, 1917 թ-ից՝ ԱՄՆ և այլն, ընդհանուր թվով 34 պետություն):

Եռյակդաշինք եղելէռազմականդաշինք Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի միջև:Այնտևելէ 1882 թվականիմայիսի 20-ից մինչև Առաջինհամաշխարհայինպատերազմ սկիզբը՝ 1914 թվականը:Ամենանդամխոստացելէրպաշտպանելմյուսներինայլգերտերությանհարձակումից, կամԳերմանիայինկամԻտալիային Ֆրանսիայի հարձակումից:Որպեսհավելում, Իտալիանհայտարարելէր, որիրգործողություններըչենհամարվի, որպես ՄեծԲրիտանիայի դեմգործողություններ: 1902 թվականիհունիսինԻտալիանգաղտնինույնանմանհայտարարությունուղարկեց

նաևՖրանսիային:ՈրպեսպայմանագրիբաղկացուցիչմասչԱվստրո-ՀունգարիանևչէլԻտալիանչպետքէառանցլրացուցիչհամաձայնությանփոխեին ստատուսքվոն Բալկաններում:

ԵրբԱվստրո-ՀունգարիանհարձակվեցՍերբիայիվրաԻտալիանպարտավորվելէրաջակցել Կենտրոնականուժերին:ՍակայնԳերմանիանևԱվստրո-Հունգարիանառաջիննէինհարձակվել, իսկդաշինքըպաշտպանողականէր:ՀետագայումԻտալիանմիացավպատերազմինԱնտանտիկողմից 1915 թվականիմայիսին:



. *Ըստ գծապատկերի Անտանտի երկրները բարիդրացիական*

հարաբերություններ ունեին միմյանց հետ: Սերտ

հարաբերություններ էին Ռուսաստանը և Սերբիան: Իսկ Եռյակի

երկրներին [Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Օսմ. Կայսրություն]

1915թ միացավ Բուլղարիան և միությունը դարձավ Քառյակ Միություն:

. *ՀՀ-ն որպես Անտանտի դաշնակից. ակնկալիքներ և հիասթափություն*

-1913թ մայիսին հայ-թուրքական հակամարտությունն այնպիսի ընթացք ստացավ, որ հեռատես գործիչները նույնիսկ կանխատեսում էին, որ այն կարող էր հանգեցնել հայերի լիովին բնաջնջմանը Թուրքիայում: Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակի վերաբերյալ ստացված տեղեկությունները դրդեցին Ռուսաստանի կառավարությանը հատուկ նոտայով դիմելու Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին: Նշելով, որ Ռուսաստանը չի կարող անտարբեր մնալ իր կայսրության սահմանամերձ շրջաններում բարենորոգումներ անցկացնելու հարցի նկատմամբ: Այդ երկրներն են՝ Ֆրանսիան, Անգլիան, Ավստրո-Հունգարիան: Անգլիան և Ֆրանսիան վարում էին անջատ գործողություններ: Ֆրանսիան արդարացնում էր իր անջատ որոշումը՝ Թուրքիայի ֆինանսական և տեխնիկական խորհրդականներ ուղարկելու վերաբերյալ: Չկարողանալով զսպել եվրոպական երկրներ անջատ գործողությունները, Ռուսական կառավարությունը հանդես եկավ որոշումով՝եվրոպական երկրների հետ միասին մշակեն բարենորոգումների հիմունքներ: Շատ չանցած մեծ տերությունները տվեցին իրենց համաձայնությունը: Գերմանիան և Ավստրո-Հունգարիան համաձայնեցին մասնակցել միայն մեկ պայմանով, որ բարենորոգումները չեն վնասի Օսմ. կայս. անձեռնամխելիությունը, սուլթանի հեղինակությունը և վարքը: Իսկ Անգլիան և Ֆրանսիան, գտնվելով Ռուսաստանի հետ միևնույն դաշինքում, վճռականություն հանդես չէին բերում Ռուսաստանի առաջարկած բարենորոգումների ծրագրին: Գերմանիայի ակտիվության ուժեղացումը Փոքր Ասիայում որոշակիորեն

ազդում էին Հայաստանի վերաբերյալ եվրոպական տերությունների փոխհարաբերությունների վրա:

Այսպիսով Հայկական հարցը համաշխարհային պատերազմի նախօրեին դարձել էր եվրոպական երկրների իմպերիալիստական հակասությունների հանգույցներից մեկը: Դրանով էլ Հայկական հարցը դատապարտված էր չլուծման:

Ստեղծված այսպիսի մթնոլորտում Կ. Պոլսում հավատարմագրված դեսպանների ավագ ավստրիական դեսպանը հունիսի30-ին հրավիրեց 6 մեծ տերությունների [Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի] դեսպանների խորհրդակցություն՝ բարենորոգումների վերաբերյալ ներկայացված նախագծերի շուրջ խորհրդայցելու համար:

Բեռլինում Անգլիայի դեսպանի հետ ունեցած զրույցի ժամանակ Գերմանիայի արտգործնախարար Գոտլիբ ֆոն Յագովը, ըստ ֆրանսիական դեսպանի ունեցած տեղեկությունների <<թշնամաբար է վերաբերվել ռուսական առաջարկությանը, որը ձգտում էր ինքնավար Հայաստանի ստեղծմանը՝ սուլթանի սուվերենության ներքո>>: Ինքնավար Հայաստան ստեղծելու գաղափարն ընդունելի չէր Անգլիայի և Ֆրանսիայի համար:

Ստացվում է, որ գրգռելով Հայկական հարցը, եվրոպական տերությունները քայլ առ քայլ հեռանում էին նրա լուծումից, բախտի քմահաճույքին թողնելով ավելի քան երկու միլիոն հայերի ճակատագիրը:

Այս ժամանակ Ռուսաստանի և Օսմ. կայս միջև սկսվեցին բանակցություններ և կարողացան ընդհանուր հայտարարի

գալ:1914թ. հունվարի 26-ին կնքվեց ռուս-թուրքական համաձայնագիր՝Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու համար: Պետք էր 7 նահանգներից ձևավորվեր երկու վարչական միավոր՝Էրզրում, Տրապիզոն, Սեբաստիա և Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիրաբեքիր կազմով: Սակայն ռուս-թուրքական համաձայնագիրը գործնական առումով չէր ապահովում հայերի ոչ անձնական անվտանգությունը, ոչ էլ գույքի ու սեփականության անձեռնամխելիությունը:



-Հայերը իրենց հույսը դրել էին երիտթուրքերի վրա, բայց երիտթուրքերը շարունակում էին իրենց խաղը: Թալեաթը մի ձեռքով ստորագրում էր հայերի կոտորածը

նախապատրաստող նախագիծը, մյուսով այն համաձայնագիրը, որով հոլանդացի Վեստենենկը և նորվեգացի Հոֆֆը նշանակվում էին Արևելյան Անատոլիայի վիլայեթների ընդհանուր վերահսկիչներ:

Դա 1914թ ապրիլ ամիսն էր: Սկզբում երիտթուրքերը կեղծ ձևով հանդես եկավ, թե նրանք ցանկանում էին հայերին օգնեին, այս ձևով նրանք հայերին իրենց կողմը քաշեցին: Հայերը իրենց հույսը դրել էին նրանց վրա: Հայերը կարծում էրին, որ նոր իշխանության եկած երիտթուրքերը կարող էին արդարացնել իրենց հույսերը, իրականացնեին բարենորոգումներ և Արևմտյան Հայաստանի վիճակը էլ ավելի կթեթևանար, սակայն ոճրագործ Թալեաթի հրամանով Օսմ.

Կայսրությունում գտնվող բոլոր հայերին սպանեցին:{1915թ}

Եզրակացություն

Ռուս-թուրքական համաձայնագիրը ոչ միայն չէր նպաստում Հայկական հարցի լուծմանը, այլև նոր բարդություններ էր հարուցել, քանի որ նրանում ոչ միայն մթագնվում էր Արևմտյան և ԱրևելյանՀայաստանների միավորման հեռանկարը, այլև բուն Արևմտյան Հայաստանը մասնատվում էր երկու սեկտորների և, կորցնելով իր պատմական անունն ու տարածքային ամբողջականությունը, վեր էր ածվում, << Արևելյան Անատոլիայի երկու սեկտորնեևի>>: Սա այն էր, ինչին ձգտում էր Թուրքիան, երբ 1913թ. հուլիսի 1-ին եվրոպական երկրների դեսպանների քննարկմանը ներկայացրեց բարենորոգումներ անցկացնելու իր հականախագիծը: Հենց այս հանգամանքը նկատի առնելով հարելի է պնդել, որ ռուս-թուրքական համաձայնագրի կնքումը թուրքական դիվանագիտության հաղթանակն էր:

Այսպիսով՝ հայկական բարենորոգումների հերթական ծրագիրը կրկին չիրագործվեց:

Շուտով, շատ շուտով պայթելու էր Առաջին աշխարհամարտը, որը նոր, ավելի ահեղ փորձությունների առջև էր կանգնեցնելու արևմտահայերին: Այդ վտանգը գիտակցողները խոր հիասթափություն էին ապրում:

Հայաստանի նկատմամբ 1917-1923թթ մեծ տերությունների վարած քաղաքականությունը ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի համար՝ հատկապես Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, և ԱՄՆ-ի

վարած քաղաքականությունը:1917-1923թթ հայ ժողովրդի շրջանի պատմության մեջ նշանավորվեցին պատմական հաղթանակներով ու ողբերգություններով:Հայ ժողովուրդը ենթարկվեց ծանր փորձությունների:Փորձը, հատկապես անցած դարի փորձը, ցույց տվեց, որ թուրքերին չի կարելի վստահել իրենց տիրույթներում ապրող քրիստոնեական ժողովուրդների ունեցվածքը, պատիվն ու կյանքն:Հայկական համայնքներն անբողջությամբ անհավատալի դաժանությամբ կոտորվեցին այն իսկ հողում, որը դարեր ի վեր զբաղեցնում էին նրանց նախնիները:

1922-1923թ. Լոզանի խորհրդաժողովի ժամանակ դաշնակից տերություններ ցուցադրական ձեռք մեկնեցին:

Մեծ պատմագիր Լեոյի խոսքերով՝ Այժմ Թուրքաց Հայաստան չկա: Նա դարձել է մի վիթխարի գերեզման, որի վրա հավիտենական արձանագրված է. Եվրոպայի զոհը...:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գ. Գալոյան Հայաստանը և Մեծ տերությունները , Երևան 1999, 539էջ

2. Ադամյան Ն. Դասավանդման մեթոդիկայի արդի պահանջներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ: «Էդիթ Պրինտ»: Երևան: 2018: 264 էջ:

3. Գիտահետազոտական հմտություններ: Ուսումնամեթոդական ուղեցույց (աշխատանքների համակարգող Դեմիրճյան Գագիկ) // Գյումրի: «Էլդորադո» հրատ.: 2013: 151 էջ:

4. Կրթական քաղաքացիական նախաձեռնություն: Փոքր դրամաշնորհների մրցույթի վերլուծական փաստաթղթի կառուցվածք //

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Արամ Մանուկյան

Ուսուցիչ՝ Վահրամ Եղինյան

Ղեկավար՝ Սամվել Աղաջանյան

Բովանդակություն

Ներածություն.....3

Կյանքն ու գործունեությանունը.....4

Արամ Մանուկյանի պետական գործունեությունը.....6

Արամ Մանուկյանը Վանի 1915թ. հերոսական ինքնապաշտպանության կազմակերպիչ և ղեկավար.....9

Արամ մանուկյանը Վանի նահանգապետ.....13

Արամ մանուկյանը Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր.....15

Արամ Մանուկյանի գործունեությունը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին.....18

Եզրակացություն.....19

Գրականության ցանկ.....20

Ներածություն

Թեմայի նպատակն է մանրամասն ներկայացնել Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման պատմությունը, ինչպես նաև ներկայացնել նրա ստեղծման գործում կարևոր ավանդ ունեցող գործիչներից մեկի՝ Արամ Մանուկյանի գործունեությունը։ Թե՛ Հայաստանի ստեղծման, թե՛ Արամ Մանուկյանի գործունեության մասին լիարժեք պատկերացում կազմելու համար թեմայում մեծ տեղ է հատկացվել նրա կյանքին և գործունեությանը, 19րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ծավալված ազգային-ազատագրական շարժմանը, ազատագրական շարժման ուժերի կազմից անկախության գաղափարի արծարծմանը, հայ-թուրքական հարաբերություններին, 1915թ. իրադարձություններին, հատկապես Վանի հերոսամարտին և Վանի նահանգապետության ստեղծմանը։

Վերջին հարյուրամյակում երրորդ անգամ պետականության ուղղին բռնած մեր ժողովրդի, առանձնապես նրա քաղաքական առաջնորդների համար կենսական է իմանալ ճշմարտությունն այդ պատմական անցքերի, ներքին ծալքերի, դրանցում գործիչների ունեցած իրական դերի մասին։ Անհրաժեշտ է դասեր քաղել անցյալից, վերցնել ուսանելին՝ հնարավոր սխալներից խուսափելու, երկրի առջև ծառացած խնդիրների լուծման ու նպատակների իրականացման համար։

Կյանքն ու գործունեությանունը

Նկ. 1 Արամ Մանուկյան

Հայաստանի առաջին հանրապետության պետական հասարակական գործիչ, հայոց նորագույն պետականության հիմնադիր, ներքին գործերի նախարար, Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության անդամ: Ղեկավարել է Վանի ինքնապաշտպանությունը, եղել է Վանի նահանգապետ,Հայաստանի Հանրապետության կառավարության անդամ:

Արամ Մանուկյանը (Սարգիս Հովհաննիսյան) ծնվել է 1879թ. մարտի 19 Շուշիում՝ աղքատ զինծառայողի ընտանիքում: Ունեցել է դառը մանկություն: Սովորել է Շուշիի, ապա Երևանի թեմական դպրոցում: 14 տարեկանում ընդունվել է ՀՅԴ շարքերը և մինչև կյանքի վերջը ծառայել հարազատ կուսակցությանն ու ժողովրդին:

Շուշիում դերձակություն անող եղբոր օգնությամբ ավարտելով Շուշիի Ագուլյաց ծխական ուսումնարանը 1890թ. ընդունվել է Շուշիի թեմական դպրոցը:

Դաշնակցության ազդեցությամբ տեղի ունեցած խռովահույզ ցույցերից հետո, ընկերների հետ վտարվել է դպրոցից, ապա ընդունվել և ավարտել է Երևանի թեմական դպրոցը (1907թ.):

Ընդգրկելով հայ ժողովրդի հակացարական պայքարի մեջ 1901-1903թթ. գործել է Բաքվում, Գանձակում, Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Կարսում: 1903թ. Կարսում զբաղվել է Արևմտյան Հայաստան զենք, զինամթերք նաև կամավորական խմբեր փոխադրելով: 1904-1908թթ գործել է Վանում (որտեղ էլ նրան անվանել են Վանի Արամ): Վանի նահանգապետ եղել է 70 օր: Դավոյի հայտնի դավաճանության հետևանքով ձերբակալված և 1908թ. երիտթուրքական հեղաշրջման արդյունքում Ազատված Արամը միայն կարճ ժամանակ ոգևորվեց երիտթուրքական սահմանադրության հռչակմամբ և այն շատ արագ հասկացավ և ճիշտ ընբռնեց նրա էությունը:

Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակումից (1918թ. մայիսի 28) հետո փաստացի ղեկավարել է երկիրը մինչև հուլիսի 23-ը, երբ Երևան ժամանեց Թիֆլիսում ստեղծված Հայաստանի կառավարությունը: Նոր կառավարության կազմում զբաղեցրել է ներքին գործերի նախարարի պաշտոնը: Մահացել է 1919թ.

բծավոր տիֆից։ Ամուսնացած էր Հայաստանի առաջին խորհրդարանի 2-րդ գումարման պատգամավոր-բժշկուհի
Կատարինե Գալյան-Մանուկյանի հետ։ Ունեին մեկ դուստր՝ Սեդա։

Արամ Մանուկյանի պետական գործունեությունը

20-րդ դարը տվել է հայոց ազատամարտի այնպիսի նվիրյալներ, որոնք հայ ժողովրդի գոյամարտի օրհասական պահերին ցուցաբերել են ազգային քաղաքական ու պետական գործիչներին բնորոշ աներևակայելի կազմակերպչական տաղանդ, նախաձեռնողականություն, երկաթյա կամք ու վճռականություն, բացառիկ հետևողականություն և շրջահայացություն: Նման ազգային ու պետական մտածողության տեր գործիչներից էր Արամ Մանուկյանը[1]:

Նրա պետական գործունեության ուսումնասիրությունը արդիական է նաև մեր օրերի համար, երբ կայանում է Հայաստանի երրորդ Հանրապետությունը:

Արամ Մանուկյանի պետական գործունեությունը կարելի է բաժանել երեք փուլերի: Առաջին փուլն ընդգրկում է 1915-1916թթ. , երկրորդը՝ 19171918թթ. , իսկ երրորդը՝ 1918-1919թթ. :

Երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը ջանք ու եռանդ չխնայեց թուրքերի վայրենի կրքերի բորբոքմանը նոր առիթ չտալու և Վասպուրականի հայությանը կոտորածներից հեռու պահելու համար: Սկզբում փորձելով խաղաղ ձևով խուսափել կոտորածներից խելամտությամբ գոհացում տալով թուրքական իշխանությունների պահանջներին, նա նպաստեց նորակոչիկների որոշ մասին թուրքական բանակում ծառայելուն, սակայն հիմնական մասին թույլ չտվեց մեկնել ծառայության, այլ Օսմանյան խորհրդարանի անդամ Ա. Վռամյանի հետ գաղտնի նրանց, ժողովրդավարական և կուսակցական բոլոր ուժերին հրահանգեց պատրաստ լինել թուրքերի բոլոր որոգայթներին[1]: Իսկ երբ արդեն պարզ դարձավ, որ հայության մեծ չափերի հասնող ջարդերն այլևս խաղաղ միջոցներով անհնար է հետաձգել, Արամը, որպես նահանգի հայության ամենաազդեցիկ քաղաքական կուսակցության Հ. Յ. Դաշնակցության ներկայացուցիչ, այլ քաղաքական ուժերի հետ միասին

[1] Տես Ասրյան «Արամ Մանուկյանի կյանքը և գործունեությունը» Երևան 2009թ. ,էջ 246

ձեռնարկեց 1915թ. ապրիլյան ինքնապաշտպանության կազմակերպումը և նախաձեռնեց Հայ ինքնապաշտպանության Զինվորական մարմնի ստեղծումը: Որոշ ժամանակ անց ինքն էլ մտավ այդ մարմնի մեջ և ղեկավարեց Վանի հայության ինքնապաշտպանությունը՝ հանդիսանալով նրա ոգին:

Դրսևորելով ռազմաքաղաքական ու պետական գործչի բացառիկ ընդունակություններ, տաղանդավոր կազմակերպչի ու ղեկավարի: Ժողովրդի միասնականության ապահովման ու պաշտպանողական գործողություններին արդյունավետ մասնակցության ապահովման գծեր՝ Արամը Վանի հաղթական պաշտպանությամբ ոչ միայն ապացուցեց, որ հայությանը անհնարին է հաղթել, այլև հայությանը փրկեց թուրք ցեղասպանների ճիրաններից: Երբ Վանում թուրքական հարձակումը 1915թ. ապրիլի 21-ին իր գագաթնակետին հասավ (մի քանի ժամում Այգեստանի վրա հարձակվեց 500 ռումի): Արամն այդ օրը պաշտպանական դիրքից դիրք էր անցնում և հայ զինվորներին ոգևորում: 1915թ. մայիսի 5-ին Արարատյան կամավորական գնդի հեծելազորը դաշնակցական Խեչոյի հրամանատարությամբ մտավ Վան: Թ. Նազարբեկյանի վկայության համաձայն՝ նրանց դիմավորց Արամն իր օգնականների և քաղաքի բնակչության հետ:

Վանի հերոսամարտը, որի շնորհիվ Վան-Վասպուրականի ավելի քան 150000 հայեր փրկվեցին կոտորածից. փաստեց այն իրողությունն, որ ճիշտ ղեկավարելու և միասնաբար գործելու, պայքարելու դեպքում հայությանն անկարելի է հաղթել:

Այս հաղթանակից հետո ռուսական բանակի հրամանատարության կողմից Արամ Մանուկյանը նշանակվեց Վան-Վասպուրականի «Ժամանակավոր նահանգապետը՝ բացառապես հայերից կազմված կառավարություն կազմելու և կամավորական գնդերի վրա հենվելու լիազորությամբ[2]»:

Արամից մեծ ջանք էր պահանջվում նահանգապետի պաշտոնում: Կարճ ժամանակում մայիսի 7-22-ը նա ձևավորեց հայ գործիչներով համալրված պետական ապարատ իր օրենսդիր և գործադիր ճյուղերով:

Վասպուրականի նահանգը բաժանվեց 14 գավառակների, իսկ Վան քաղաքը կառավարում էր նահանգապետի կողմից նշանակված քաղաքապետը:

1915թ. հուլիսին, երբ ռուսական բանակը Վանից բռնեց նահանջի ուղին, Արամը հանդես բերելով ազգային պետական հայրենասիրություն, պատասխանատվություն և պարտքի բարձր զգացումով իր ժողովրդի հաբդեպ, վճռեականապես դեմ արտահայտվեց գաղթին՝ այն համարելով կործանարար հայության համար և ընտրեց դիմադրության կազմակերպման դժվարին ուղին:

Արամին էր վստահել դասալքության դեմ պայքարի ղեկավարությունը:

---

[2] Տես Էդիկ Մինասյան, «Արամ 2010թ., էջ 8

Ինչպես Վան-Վասպուրականում, այնպես էլ Երևանում գործելով բացառիկ պայմաններում, Արամը շատ Արագ դարձավ կենտրոնական դեմք, իր ուժեղ ու նախաձեռնող բնավորության, սրամիտ կեցվածքի, հավասարակշիռ մոտեցումների շնորհիվ նա հասավ հասարակության հետ միասնության ապահովմանը: Այդ է պատճառը, որ հռչակվեց Երևանի դեկտատոր:

1918թ. մայիսին Հայաստանի հանրապետության ստեղծմանը մեծապես պարտական ենք Արամին և ամենևին պատահական չէ, որ միայն նա է արժանացել Հայաստանի Հանրապետության հիմնադիրի կոչմանը: Նա դրան հասավ ողջ հայ ժողովրդի և բազմաթիվ գործիչների գերմարդկային ջանքերի շնորհիվ, որոնց կարողացավ միավորել և նրանց գործունեությունը ծառայեցնել մեր նվիրական նպատակների[3]:

Չնայած Արամը նորանկախ հանրապետությունում չդարձավ վարչապետ, բայց ՀՀ անդրանիկ կառավարության մեջ նա ուներ բացառիկ դիրք՝ նրան էր վստահված միաժամանակ ներքին գործերի լուսավորության, հաղորդակցության, պարենավորման պաշտոնը:

Տարբեր գործիչներին աշխատանքի մեջ ընտրելու գործում Արամի մոտեցումների յուրահատուկ ձևը անկախ նրանց կուսակցական պատկանելությունից: Արամի այդ քայլով իշխանությունների հանդեպ ժողովրդական վստահությունը մեծացավ:

[3] Տես Էդիկ Մինասյան, «Արամ 2010թ., էջ 17

Արամ Մանուկյանը Վանի 1915թ. հերոսական ինքնապաշտպանության կազմակերպիչ և ղեկավար

Թուրքական իշխանությունները, օգտվելով սկսված պատերազմի ընձեռած հնարավորությունից, որոշեցին իրականացնել իրենց հրեշավոր ծրագիրը՝ բնաջնջելու միջոցով լուծել հայկական հարցը: Այնպես որ, Հայոց ցեղասպանությունը նախորոք մտածված, մանրամասն ծրագրավորված ու հատուկ այդ նպատակով ստեղծված պետական կառույցների կողմից իրականացվող քաղաքականություն էր, որին զոհ գնացին ավելի քան 1,5 միլ. անմեղ հայեր4:

Ստեղծված իրավիճակում հայությունը ոտքի ելավ ինքնապաշտպանվելու, թուրքական արնախում ռհմակին դիմագրավելու, սեփական պատիվն ու կյանքը փրկելու համար: Ցավոք շփոթված, հանկարծակի եկած, հիմնականում անզենք ու գլխատված ժողովուրդը չկարողացավ կազմակերպել համընդհանուր միասնական ինքնապաշտպանություն, ինչի հետևանքով Արևմտյան հայաստանի մեծ մասում տեղահանվեց ու անխնա կոտորվեց: Բայց մի շարք գավառներում, այնուամենայնիվ, հայ ժողովուրդը կարողացավ կազմակերպված ինքնապաշտպանվել և փրկվեց թուրքական յաթաղանի ամենակուլ երախից:

[4] Տես Էդիկ Մինասյան, «Արամ 2010թ., էջ 18



Նկ. Վանի քաղաքամիջի ինքնապաշտպանության քարտեզ

Վստահորեն կարելի է պնդել, որ եթե հայ ազգային ազատագրական պայքարի բոլոր գործիչները 1908թ-ից հետո Արամի նման մտածեին, ձեռնամուխ լինեին արևմտահայությանն զինելու աշխատանքին, հայությունն այդքան դաժանորեն չէր ճաշակի ցեղասպանության սարսափները։

1915թ. ապրիլին, Վանի նորանշանակ կուսակալ Ջևդեթ բեյը հրամայում է քաղաքի հայկական թաղամասերը՝ Այգեստանն ու Քաղաքամեջը զորքերով շրջապատել ու սպառնում հաշվեհարդար տեսնել Վանի հայության հետ, Եթե նրանք չենթարկվեն ու չկատարեն Ջեդեթի հրամանները։



Ապրիլի 5-ին ստեղծվում է Վանի հայ ինքնապաշտպանության զինվորական մարմին, որի մեջ մտնում են ռամկավար Ա. Երկանյանը, Կ. Առաքելը, Բուլղարացի Գրիգորը, Փանոս Թերլեմեզյանը և Արամ Մանուկյանը։

Այգեստանը բաժանվում է յոթ ինքնապաշտպանական շրջանների՝ 79 դիրքով։

1915թ. Վանի հերոսական ինքնապաշտպանության մասին առկա են տարաբնույթ և իրարամերժ գնահատականներ։ Սակայն հստակ է մի բան, որն ընդունում են բոլորը։ Ինքնապաշտպանության ընդհանուր ղեկավարությունն իրականացրել է Արամ Մանուկյանը, նրան օժանդակել են բոլորը։



Պաշտպանությունն իրականացվել է գրեթե անթերի, որի արդյունքում փրկվել է Վան-Վասպուրական հայության ճնշող մեծամասնությունը: Վանի հերոսամարտը տևել է 1915թ. ապրիլի 6-ից մինչև մայիսի 3-ը, երբ Զնդեթը դիմեց փախուստի և Վան մտան հայ կամավորները:

Փաստենք.

- 1915թ. Վանի ապրիլյան հերոսամարտը, ինչպես նաև Մուսա լեռան հերոսական ինքնապաշտպանությունը, եզակի կռիվներից էին, որոնք տվեցին ցանկալի արդյունք:
- 1915թ. Վանի ինքնապաշտպանությունն ուներ 1896թ. հերոսամարտի ուսանելի և հուսադրող փորձը: 1896թ. շատ մասնակիցներ կռվում էին Վանի ինքնապաշտպանության ճամանակ:
- Վանի պաշտպանները ապավինեցին սեփական ուժին, թեև ակնկալվում էր նաև ռուսական բանակի օգնությունը:
- Վանում առկա էր կուսակցական համերաշխություն, բացակայում էր կուսակցամոլությունն ու դրա անցանկալի ազդեցությունը:
- Ինքնապաշտպանության ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էր Արամ Մանուկյանը:



Լինելով արևելահայ Արամ Մանուկյանը շատ շուտ ըմբռնեց արևմտահայության ցավը և ամենագլխավոր խնդիրը՝ ֆիզիկական գոյությունը պահպանելու և ազատություն նվաճելու համար:

Նա գիտակցեց, որ պետք չէ վստահել մեծ տերությունների տված խոստումներին, այլ անհրաժեշտ է ապավինել սեփական բազկին: Արամը կողմնակից լինելով խաղաղ

պայմաններում թուրքերի հետ խաղաղ գոյակցությանը՝ նա պահանջում էր աչալուրջ լինել: Նա դեմ էր կամավորական շարժմանը: Նրա կարծիքով դա գազազեցնում էր թուրքերին, որոնք առիթ էին փնտրում, ջարդերի միջոցով փակելու հայկական հարցը: Վճռական պահերին Արամը հեռու մնաց կուսակցությունից:

Արամ Մանուկյանը Վանի նահանգապետ

1915թ. մայիսի 7-ին Վանում հայկական նահանգապետության հիմնումը պատահական չէր:

Վան քաղաքում բուժօգնությունը կազմակերպելու համար ժամանում են բժիշկներ Արտաշես Բաբալյանը և Համազասպ Օհանջանյանը: Վերջինս Արամի խնդրանքով, միաժամանակ անվճար, հանդիսանում էր դատական բժիշկ:

Նահանգապետարանն ուներ բազմաթիվ առաջնահերթ խնդիրներ.

1. Ազատագրված գավառներում և գավառակներում իշխանական մարմինների հիմնումը:
2. Գաղթականների տեղաբաշխումն իրենց բնակավայրերում:
3. Բնակչության բուժսպասարկման ապահովումը:
4. Գյուղատնտեսական աշխատանքների վերսկսումը:
5. Իրենց օջախները վերադարձած բնակչության կյանքի և գույքի ապահովումը:
6. Քրդերի և թուրքերի կողմից լքված բնակավայրերի, գույքի, անասունների և ցանքսերի տնօրինման հետ կապված խնդիրների լուծումը:
7. Զենքի օրինականցման հետ կապված խնդիրների լուծումը:
8. Թուրք-քրդական հարձակումներից պաշտպանվելու հարցերը:
9. Ռուսական հրամանատարության հետ կապված խնդիրների լուծումը:
10. Ռուսական զորամասերի և հայ կամավորների պարենային ապահովումը:

Նահանգապետության մարմիններում ընդգրկվում են հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչները՝ անկախ սոցիալական ծագումից:

Վարազդատ Տերոյանը լինելով Արամ Մանուկյանի ժամանակակիցը նրան բնորոշել է որպես «Վանի հասարակական հսկա»[5]:

Պետք է նշել, որ նահանգապետությունը ստեղծվում է բացառիկ ծանր պայմաններում:

[5] Տես Ռուբեն Սահակյան, «Արամ Մանուկյանը Վանի նահանգապետ», Երևան 2010թ, էջ 20

Ռուսական կառավարության վերաբերմունքը հայկական նահանգապետության նկատմամբ երկակի էր։

Ցավոք, հայկական իշխանությանը սպասվում էր տխուր վախճան։ Կովկասյան 4-րդ կորպուսի զորամասերը հապճեպ՝ առանց որևէ լուրջ հիմքի, նահանջում են։

Վանի հայկական իշխանությանը վիճակված չէր շարունակել իր գործունեությունը։ Դա պատճառաբանվում էր Օսմանյան գերակշիռ ուժերի լայնածավալ հարձակումով։

Հուլիսի 14-ին Ա. Մանուկյանը դիմում է գեներալ Նիկոլաևին, խնդրելով քաղաքի պաշտպանության համար թողնել զենք, զինամթերք և հրետանի։ Գեներալը Արամին հավաստիացնում է, որ ռուսական բանակը մտադրություն չունի նահանջել Վանից։

Ապարդյուն անցան Արամի ջանքերը քաղաքի պաշտպանությունը կազմակերպելու համար։ : Խուճապը համակել էր բոլորին։ Հուլիսի 18-ից 24-ը Վանն ամբողջությամբ դատարկվեց, ծանր կորուստներ ունեցան Բերկրիի ձորում, որտեղ սպանվեցին 10 հազարից ավելի հայեր։

Վանի հայկական իշխանությունը հայոց պետականության վերականգնման առաջին փորձն էր։

Վասպուրականի նահանգապետության փորձն ապարդյուն չանցավ։ Այն օգտագործվեց Արամ Մանուկյանի կողմից, երբ նա 1917 թ. վերջին Երևանի Հայոց ազգային խորհրդի ղեկավարն էր, առաջին Հանրապետության տարին։

Արամ Մանուկյանը Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր

Հայ ժողովրդի նշանավոր մշակութային, ռազմական, քաղաքական ու պետական գործիչների շարքում հայոց նորագույն պատմության մեջ իր կատարած դերով առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Արամ Մանուկյանը, որին դեռևս ժամանակակիցները անվանելեն հանրապետության հիմնադիր, Արարատյան երկրի փրկիչ և այլն։

1917թ. վերջին ռուսական Կովկասյան ռազմաճակատի քայքայումը, որը սկսվել էր փետրվարյան հեղափոխությանը հաջորդած ամիսներին և խորացել հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, թուրքական ներխուժման վտանգի տակ դրեց Հայաստանի ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան մասը։ Դրությունը բարդանում էր նրանով, որ հայությունը իր բնօրրանում դեռևս չուներ կազմակերպված զինուժ և իշխանության իրապես գործող մարմիններ։

Եվ այսպես, որոնք էին Արամի մեծությունը բնութագրող հատկանիշները, որոնք պայմանավորեցին նրան Հանրապետության հիմնադիր կոչելու փաստը։

Առաջին կարևոր գիծը, Արամի մտածողության և գործունեության մասշտաբայնությունն է, բացառիկ շրջահայացությունը, առաջադրած ծրագրերի հեռանկարայնությունը, որի հիմքում ընկած էր իրադարձությունների ընթացքը կանխատեսելու նրա ունակությունը։

1917 թ. դեկտեմբերի 18-ին ժամանելով Երևան՝ Արամը կանխատեսելով հայ ժողովրդին սպառնացող վտանգը, առաջադրեց հայ ժողովրդի պաշտպանությանն ու ազատությանը միտված ծրագիրը։ Նա գտնում էր, որ հայությունը միայնակ է, որ ոչ-ոք նրան օգնելու մտադրություն չունի, և նա պետք է հենվի իր ուժերի վրա։

Կարճ ժամանակ անց՝ 1918 թ. մարտի 28-ին նա էլ ավելի հստակեցրեց նշելով. «Ցույց տանք աշխարհին, որ Հայը ազատ, անկախ ապրելու իրատունք ունի։ Այժմ կամ երբէք»[6]։

Երկրորդ, անհրաժեշտ էր ձևավորել կանոնավոր զորք, որին հաջորդեց զորակոչի հայտարարությունը, 20-32 տարեկան բոլոր հայ զինապարտներին։
Հատուկ ուշադրություն դարձվեց զինվորների ընտանիքների նյութական ապահովությանը։

Ծավալվեց վճռական պայքար դասալիքների, զենք-զինամթերք, պետական գույք, հափշտակողների դեմ։ Արամը հասավ այն արդյունքին, որ ժողովուրդը հավատաց սեփական ուժերին։ Նրա ջանքերի շնորհիվ գործի լծվեցին ամենքը՝ անկախ կուսակցական հանգամանքից։

[6] Տես Արմեն Ասրյան ՀՊՄՀ կյանքը և գործունեությունը, Երևան 2009թ. էջ 163

Ստեփան Շահումյանի ջանքերով ընդունվեց գաղտնի ծրագիր, որի առանքը հայ-բոլշևիկյան ճակատի ձևավորումն էր թուրքերի դեմ, որը չիրականացավ : Արամը համեստ էր, ազնիվ և անշահախնդիր: Ժողովուրդը սիրում և հարգում էր Արամին: Նա լավ էր հասկանում, որ միաժամանակ ոչնչի հասնել հնարավոր չէ. «Հերոսը ինքը ժողովուրդն է» - ասում էր Արամը:

Արամի ջանքերով ստեղծվեց 10-12 հազարանոց զորամիավորումներ:

Արամի մեծությունն ընդգծող գծերից մեկը իրադարձությունները կանխատեսելու ունակությունն էր: 1918թ. ապրիլին Կարսի անփառունակ անկման մեջ իրենց մեղքի բաժինն ունեին նաև Թիֆլիսի հայ քաղաքական ղեկավարները:

Թուրքական զորքերը մայիսի 15-ի գիշերը գրավեցին Ալեքսանդրապոլը, իսկ մայիսի 19-ին ներխուժեցին Արարատյան դաշտ: Նրանք մայիսի 20-ին գրավեցին Արաքս կայարանը,իսկ մայիսի 27-ին Սարդարապատ կայարանն ու գյուղը:

Ամբողջ սրությամբ դրվեց հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը: Մ. Սիլիկյանը մի պահ այն աստիճան էր ընկճվել, որ զորքը կառավարելը համարում էր անհնար: Նազարբեկյանն Ազգային խորհրդին հաղորդում էր անհապաղ վերջնական հաշտություն, իսկ Վրացյանն այդ օրերի մասին հետագայում նշում էր, որ դիմադրությունը շատերին թվում էր անհնար և անիմաստ:

Այդ բախտորոշ օրերին առավելագույնս դրսևորվեցին Արամ Մանուկյան պետական գործչին բնորոշ այնպիսի գծեր, ինչպիսիք էին իրավիճակին չհամակերպվելն ու շրջապատին չենթարկվելը: Նա հանդիսացավ այն միակ գործիչը, որը կարողացավ խավարի, անորոշության և հուսալքության պայմաններում լուսավորել իր ժողովրդի պատմական ճանապարհը:

1918 թ. մայիսի 19-ին Արամը գեներալ Մ. Սիլիկյանի հետ ունեցած զրույցում անընդունելի է համարում հետագա նահանջը: Արգելվեց քաղաքից հեռանալը:

Նա կարևորում էր ամենքին և ամենքին էլ գործի լծում: Կանայք և երեխաները պետք է տներից փամփուշտներ հավաքեին և ջուր հասցնեին ճակատում գտնվող զինվորներին: Նա ամենուր էր և ոգևորում էր զինվորներին: Նրա անմիջական ղեկավարությամբ սկսվեց պարտիզանական պայքար ծավալվեց Բաշ-Ապարանի ճակատամարտում: Դրոյի գլխավորությամբ թուրքերից մաքրեցին Բաշ-Ապարանը: Մայիսի 29-ին թուրքերը հեռացան Համամլոփց (Սպիտակ): Մայիսի 24-28-ը գեներալ Թ. Նազարբեկյանի ընդհանուր հրամանատարությամբ գործող 7000-անոց բանակը պարտության մատնեց թուրքական 10000-անոց բանակին:

Բաթումում թուրքական վերջնագիրն ընդունելուց հետո Ա. Ահարոնյանը Երևանի Հայոց ազգային խորհրդին հաղորդում էր. «... թեև փոքրիկ և աղքատ, բայց Ազատ Հայաստանի համար մենք պարտական ենք մեր զորքերի անձնազոհությանը: Որքան մեզ հայտնի է, գերմանացիները և թուրքերը Կովկասը բաժանում էին Վրաստանի և

Ադրբեջանի, հայերին ապահովելով միայն ֆիզիկական գոյություն: Մեր զորքի դիմադրությունը նրանց հարկադրեց ճանաչել և Հայաստանը»[7]:

Վեհիր փաշան հայտարարում էր այն փաստը, որ հայ ժողովրդի դիմադրությունն իրենց հարկադրեց հաշվի նստել նրանց հետ:

ՀՀ անդրանիկ կառավարության մեջ Արամն ուներ բացառիկ դիրք, նրան էր վստահվել ներքին գործերի նախարարությունը, որի մեջ էին մտնում լուսավորության, հաղորդակցության, պարենավորման, խնամատարության լիազորությունները: Համալսարանական կրթության պակասը, ինչպես միշտ նրան չխանգարեց վարելու պետական խելամիտ ու նպատակային գործունեություն:

Արամը, առաջնորդվելով ազգային-պետական մտածողությամբ, դրսևորելով կազմակերպչական տաղանդ:

Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման, ապա նաև նրա հիմքերի ամրապնդման գործում ունեցած առաջնակարգ և վիթխարի ներդրման համար է, որ Արամ Մանուկյանն արժանացավ Հանրապետության հիմնադրի պատվանվանը:

[7] Տես Արմեն Ասրյան , «Արամ Մանուկյանի պետական գործունեությունը», Երևան 2010թ. , էջ 165

Արամ Մանուկյանի գործունեությունը
Հայաստանի առաջին հանրապետության տարիներին

Առաջին հայացքից թվում է, թե Արամի գործունեության վերջին շրջանն արտաքուստ չունի այն գրավչությունն ու հերոսականությունը: Արամի գործունեությունը Հայաստանի առաջին հանրապետության շրջանում բաժանվում է երեք փուլերի.

1) Հանրապետության հռչակումից հետո մինչև առնվազն 1918 թ. հուլիսի 24-ը, երբ հրապարակվեց Հայոց ազգային խորհրդի հայտարարությունը ՀՀ կառավարության կազմի մասին:

2) 1918 թ. հուլիսի 26-ից, երբ Արամը ստանձնեց ներքի գործերի նախարարի պաշտոնը, մինչև նոյեմբերի 6-ը՝ Հ. Քաջազնունու կողմից Երկրորդ՝ կոալիցիոն կառավարության ստեղծումը:

3) 1918 թ. նոյեմբերի 6-ից մինչև իր մահն ընկած ժամանակահատվածը' թեև կյանքի վերջին ամսում նա գամված էր մահճին, գրեթե կտրված էր պետական գործերից:

Առաջին շրջանում Արամ Մանուկյանը, իր ձեռքում էր կենտրոնացրել երկրի գործադիր իշխանությունը: Քաջազնունու գլխավորած կառավարության մեջ զբաղեցնելով ներքին գործերի նախարարի պաշտոնը, Արամն, ըստ էության, Երկրի ամենաազդեցիկ դեմքն էր: Նրա իրավասություններն իրականում ավելի մեծ էին:

Ուշագրավ է, որ Հ. Քաջազնունու կառավարության մեջ Արամ Մանուկյանն իր կրթական ցենզով ամենից ցածրն էր: Նա միակն էր, որ չուներ համալսարանական կամ զինվորական բարձրագույն կրթություն: Բայց նաև քննադատողները խոստովանել էին, որ կառավարության նիստերում «հաճախ իշխում էին Արամի մտքերը»:

Բազմազան ու բազմաբնույթ են Արամի քայլերը ներքին գործերի նախարարի պաշտոնում: Չնայած երկրում տիրող իրավիճակի ծանրությանը' Արամ Մանուկյանը շատ-շատերից ա վելի լավ էր հասկանում մեր ժողովրդի համար Հայաստանի անկախության հռչակման մեծ խորհուրդը:

Պաշտոնի բերումով Արամը նաև իր ներդրումն ունեցավ երկրում պարենային ճգնաժամն ինչ որ չափով մեղմելու և սովի դեմ պայքարելու գործում:

Պատերազմում Թուրքիայի կրած պարտությունը նոր հեռանկարներ էր բացում սովից, խոլերայից ու բծավոր տիֆից գալարվող նորաստեղծ հանրապետության համար: Բծավոր տիֆը անժամանակ կտրեց նրա կյանքի թելը: Արամի մահը, իրոք, ծանր կորուստ էր հանրապետության և ժողովրդի համար:

Որպես ամփոփում, հավելենք, որ Արամ Մանուկյան պետական գործիչն ու մարդը, անշուշտ, ֆետիշ չէր:

Միշտ չէ, որ բոլորի կողմից միանշանակ ընդունելի էին նրա կայացրած որոշումները: Հաճախ դրանք կտրուկ ու ցավագին էին: Նրա վճիռները թելադրված էին ոչ թե անձնական, այլ՝ ազգային ու պետական շահով:

Եզրակացություն

Աշխարհի տարբեր ժողովուրդներ, այդ թվում հայ ժողովրդի պատմության բեկումնային պահերին հայտնվել են անհայտներ, որոնք վճռական ազդեցություն են ունեցել իրադարձությունների ընթացքի վրա և իրենց կամային որոշումների ու քայլերի միջոցով պատմության զարգացմանը հաղորդել են այլ ընթացք, քան այն կարող էր ունենալ, և դրանով իսկ դարձել են պատմակերտ գործիչներ։ Հայոց նոր պատմության մեջ այդպիսի անհատականություն է Հայաստանի Հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանը։

Նման պնդումը մեզ ամենևին էլ չի տանում դեպի անհատապաշտություն և այն Արամի անհատականության գերագնահատում չէ։ Որովհետև, երբ դիտարկում ենք նրա գործունեությանը ժամանակի իրադարձությունների համապատկերի, այլ գործիչների գործունեության ու վարքագծի հետ համեմատությունների համապատկերի հիման վրա, ապա ակնհայտ է դառնումԱրամի հսկայական անհատական ներդրումը մեր ժողովրդի պատմության համար վճռական ժամանակաշրջանում, երբ լուծվում էր պետություն հիմնելու և պետության սուբյեկտ դառնալու ճակատագրական հարցը։

Ուստի մեր համոզմամբ՝ Արամ Մանուկյանը Պատմակերտ գործիչ է, և դա հաստատում է նրա գործունեությամբ, իրադարձությունների ընթացքի վրա մեծ ազդեցությամբ, ամենից առաջ՝ 1918թ. ունեցած վիթխարի դերակատարությամբ։

Հաճախ մեր խոսքը վերաբերվում է օտարազգի անհատների պատմակերտ սերին, մենք շատ հանգիստ, առանց որևէ առարկության ընդունում ենք դա իբրևճշմարտություն, իսկ երբ խոսքը գնում է մեր մեծերի մասին, փորձում ենք նսեմացնել նրանց դերը։ Կարիք չկա խոսել նրանց արժևորելուց դա անհեթեթ է և վնասակար։

Ի վերջո բոլորիս համար մշտապես պետք է լսելի լինեն Նիկոլ Աղբալյանի հետևյալ խոսքերը.<<Երբ գիշերը գա, մտնեք ձեր հոգու սենյակը, խոսեք ձեր խղճի հետ և ասեք, արդյո՞ք աշխատել եք հայ ժողովրդի համար այնպես, ինչպես Արամը, եղե՞լ եք այնքան անձնազոհ, որքան Արամը, տվե՞լ եք ձեր ամբողջ կյանքը հայ ժողովրդին, ինչպես Արամը...>>

Միայն այդ կերպ մտածելով ու գործելով կարելի է ներկայիս հանրապետությունը վերածել մեր ողջ ժողովրդի համար ընդունելի ու պաշտելի պետության և հասնել նրա ամրապնդմանն ու հզորացմանը։

Գրականության ցանկ

1. Արմեն Ասրյան «Արամ մանուկյանի կյանքը և գործունեությունը», Երևան 2009թ.
2. Էդիկ Մինասյան «Արամ Մանուկյանի պետական գործունեությունը» Երևան 2010թ
3. Ռուբեն Սահակյան «Արամ մանուկյանը Վանի նահանգապետ» Երևան 2010թ :

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա պատմության ուսուցիչների
վերապատրաստման դասընթաց

Դիանա Մատինյան
Գյուլագարակի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչուհի

Հետազոտական աշխատանք
Թեմա «Կրթամշակութային կյանքը Հայաստանի առաջին Հանրապետությունում»

Ղեկավար Ս. Աղաջանյան

Վանաձոր 2022

Բովանդակություն

1. Ներածություն:
2. Հայերենը՝ պետական լեզու ճանաչելը: Բնակչության կրթական գործի կազմակերպումը:
3. Հանրակրթության զարգացման հիմքերի ստեղծումը;
4. Միջնակարգ մասնագիտական կրթության զարգացումը:
5. Համալսարանի հիմնադրումը:
6. Պատմամշակութային հուշարձանների պահպանումը:
7. Եզրակացություն:
8. Գրականություն

Ներածություն

Հարյուրամյակների ընդմիջումից հետո կրկին վերականգնվեց հայոց անկախ պետականությունը՝ ինչը շրջադարձային եղավ հայ ժողովրդի քաղաքական ու հոգևոր-մշակութային կյանքում: Հայաստանի առաջին հանրապետությունը իր հիմնադրման պահից գտնվում էր սոցիալ տնտեսական և մշակութային աղետալի վիճակում: Սակայն ՀՀ իշխանությունները ձեռնամուխ եղան ոչ միայն քաղաքական ու սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, այլև հիմք դրվեց կրթամշակութային կյանքի զարգացմանը: Այս տեսանկյունից հետազոտական աշխատանքում առանձնացվել են մի շարք խնդիրներ.

ա. Ինչպես է ստեղծվել կրթական համակարգը, ինչ անհրաժեշտ օրենսդրական հիմքեր են եղել, որոնք են եղել օրենսդրական որոշումները, ինչ քայլեր կատարվեցին դպրոցներ, միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատություններ ստեղծելու նպատակով: Հետազոտական աշխատանքի հաջորդ խնդիրը համարում ենք կրթական համակարգի կարևոր բաղադրիչներից մեկի՝ ուսումնական նոր հաստատությունների ստեղծումը, ինչպես նաև կրթական գործընթացների մասնակիցների՝ ուսուցչական կադրերի պատրաստման, նախկին պետական, եկեղեցական և ծխական դպրոցների շարունակական գործունեություն ապահովելը:

բ. Կարևոր էր հանրակրթական առարկայական ծրագրերի, դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների ստեղծումը և անշուշտ կրթական համակարգը անհրաժեշտ մանկավարժական կադրերով ապահովելը: Կարևորել ենք պետական լեզվի՝ հայերենի համընդհանուր օգտագործմանը, դպրոցների ազգայնացմանը, ազգային մշակութային արժեքների նորովի գնահատմանը:

գ. ՀՀ իշխանությունները ձեռնամուխ եղան ոչ միայն քաղաքական ու սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, այլև հիմք դրվեց մշակութային կյանքի՝ հատկապես ճարտարապետության, արվեստի, գրականության, բնակչության անգրագիտության վերացմանն ուղղված խնդիրների լուծմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ցույց տալ, որ հանրապետության պայմաններում քաղաքական արմատական փոփոխությունների հետ մեկտեղ առանձնակի նշանակություն են ստանում ազգային կրթության և մշակութային հարցերը:

Հայերենը՝ պետական լեզու ճանաչելը: Բնակչության կրթական գործի կազմակերպումը

Անկախ պետականության վերածննդից հետո կարևոր նշանակություն ուներ հայերենը որպես պետական լեզու ճանաչելու հարցը: Խնդիրը բարդանում էր նրանով, որ Հայաստանի խորհրդում, կառավարությունում և նրա գերատեսչություններում մեծ թիվ էին կազմում ռուսախոս պաշտոնյաները, իսկ գրագրությունը կատարվում էր ռուսերեն, չկային հայերեն մասնագիտական գրքեր, տերմինների բառարաններ և այլն: Հայոց լեզվի պաշտպանության կոչով հանդես են գալիս մի շարք հայ նշանավոր մտավորականներ, ժամանակի մամուլը, այն հասարակական պահանջ էր:

1919թ. ապրիլի 17-ին ստեղծվում է կոմիտե հայոց լեզուն հասարակական հնչեղություն հաղորդելու նպատակով: Կոմիտեի հիմնադիրներն էին հայկական թերթերը՝ «Աշխատանք», «Հայաստանի աշխատավոր», «Վան-Տոսպ» և այլն: Ազգաբնակչությունը, հատկապես գյուղերում, պահանջում էր արագացնել հայացման գործընթացը: Մայիսի կեսերին հայացման կոմիտեն, որին տրված էր պետական կարգավիճակ, մշակում է լեվի մասին օրինագիծ, ըստ որի նախարարությունների գործավարությունը անմիջապես պետք է հայացվեր, իսկ ներքին գործավարության լեզվի հայացումը տեղի էր ունենալու չորս տարվա ընթացքում: 1919թ.հուլիսի 5-ից սկսվում են երկամսյա հայագիտական դասընթացներ, որի ընթացքում դասավանդվում էին Հայոց լեզու, Հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն և այլ առարկաներ: Սակայն այդ դասընթացները կարճ տևեցին:

1919թ. դեկտեմբերի 26-ին Խորհրդարանը ընդունում է որոշում «Օրենք պետական լեզվի» մասին: Նրանում ասվում էր. «ՀՀ պետական լեզուն հայերեն է և պարտադիր զորքի ու բոլոր պետական ու հասարակական հիմնարկությունների մեջ: Այլ լեզուների գործածությունը սահմանվում է հատուկ օրենքով: Պետական և հասարակական բոլոր հաստատությունները պարտավոր են վեց ամսվա ընթացքում հայերենը դարձնել պետական գործավարության պաշտոնական լեզու»[1, էջ 100]: Ս. Վրացյանը գրում է. «Իրականացվեց հայ ժողովրդի դարավոր երազանքը: Մայրենի լեզուն ճանաչվեց պետական լեզու» [2, էջ 374]:

1920թ. ապրիլից հայերենի դասընթացներ են կազմակերպվում Երևանում, Կարսում, Ալեքսանդրապոլում, Ղարաքիլիսայում, այն պետական պաշտոնյաների

համար, ովքեր պետական լեզվի մասին օրենքի համաձայն պարտավոր էին տիրապետել հայերենին, իսկ մայիսի 30-ին կառավարությունը օրենք է ընդունում «Պետական լեզուն չիմացող պաշտոնյաների պաշտոնանկության մասին» [3, էջ 149]: 1920թ. ամռանը զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի հրամանով բանակում գրագրությունը պետք է կատարվեր հայերեն: Հայ սպաները, ովքեր չէին տիրապետում հայերենին պարտավոր էին սովորել հայերեն:

ՀՀ բնակչության գրագիտությունը գտնվում էր բավական ցածր մակարդակի վրա: Գյուղական բնակչության գրագիտությունը մի քանի անգամ ցածր էր քաղաքային բնակչության կրթական մակարդակից: Անհամեմատ ցածր էր կանանց գրագիտության մակարդակը: ՀՀ ծանր սոցիալական վիճակը հնարավորություն չէր տալիս իշխանություններին բավարար ուշադրություն հատկացնել մեծահասակ բնակչության կրթական և մշակութային մակարդակի բարձրացման հարցերին: Սակայն Հանրային կրթության նախարար Ն. Աղբալյանը հրավիրում է խորհրդակցություն, որի ժամանակ շրջանային տեսուչներին հանձնարարվում է առաջարկություններ ներկայացնել արտադպրոցական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ: Ներկայացվում է զեկուցագիր, որտեղ առաջարկվում է հանրապետության տասը քաղաքներում բացել ժողովրդական համալսարաններ և գրաճանաչության դասընթացներ: Դասընթացները տևելու էին վեց ամիս, սովորելը անվճար էր: Դասընթացի ավարտին մասնակիցները ստանում էին վկայականներ: Այնուամենայնիվ հանրապետությունում ստեղծված սոցիալ տնտեսական ծանր վիճակը թույլ չտվեց, որ բնակչությունը ստանա անհրաժեշտ կրթական և մշակութային գիտելիքներ:

Հանրակրթության զարգացման հիմքերի ստեղծումը

Հայաստանի առաջին Հանրապետության երկուսուկես տարիներին էական աշխատանքներ են կատարվել հանրակրթության համակարգ ստեղծելու նպատակով: 1918թ. սեպտեմբերից Հայաստանի Հանրապետության տարածքում սկիզբ դրվեց կրթական բարեփոխումներին, որի արդյունքում նախկին պետական, եկեղեցական-ծխական և այլ տիպի դպրոցները ազատ գործելու հնարավորություն ստացան:

Անհրաժեշտ է նկատել, որ դպրոցական համակարգը գտնվում էր քայքայման եզրին, որովհետև դպրոցների մեծ մասը փակվել էր և դրանք տրամադրվել էին գաղթականության և զինվորականության կարիքների բավարարման համար, չկային ուսուցչական կադրեր, մանկավարժների մեծ մասը հեռացել էր հայրենիքից կամ թողել իր մասնագիտությունը:

1918-1919 ուսումնական տարում հանրապետությունում գործել են 133 տարրական (11.2 հազար աշակերտ, 113 ուսուցիչ) և 10 միջնակարգ (3.2 հազար աշակերտ, 177 ուսուցիչ) դպրոցներ: Համեմատության նպատակով նշենք, որ 1913-1914 ուումնական տարում Երևանի թեմում(Երևան քաղաք, Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Նոր Բայազետի, Շարուր-Դարալագյազի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Զանգեզուրի գավառներ ու Կարսի մարզ) գործել են 188 եկեղեցական-ծխական և երկու հայ կաթոլիկական դպրոցներ: Այդ դպրոցներում սովորել են ընդամենը 15105 աշակերտ, որոնցից մոտ 4340-ը աղջիկներ: Ուսուցիչների թիվը կազմել է 420 հոգի:

Սակայն Հայոց անկախ պետականության վերականգնումից անմիջապես հետո Հայաստանի առաջին հանրապետության ղեկավարությունը քայլեր կատարեց ոչ միայն տնտեսական կյանքը բարելավելու նպատակով, այլև սկիզբ դրվեց նոր սերնդի կրթության և դաստիարակության գործընթացին, դպրոցների հիմնադրման, կրթության և մշակույթի օրենսդրական դաշտի կարգավորմանը և հետագա զարգացմանը: Հասկանալի էր, որ ստեղծված անչափ ծանր սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակում ՀՀ կառավարությունը չէր կարող անհրաժեշտ միջոցներ տրամադրել նոր դպրոցներ կառուցելու, դասագրքեր տպագրելու, ուսուցիչների աշխատավարձը վճարելու և ընդհանրապես կրթական գործընթացը լիարժեք

հիմքերի վրա դնելու համար, այս նպատակով էլ սկզբնական շրջանում որպես դպրոցներ օգտագործվում էին մասնավոր տները, զորանոցային շենքերը, եկեղեցիները և այլն: Նորաստեղծ հանրապետության կրթական համակարգը արտացոլում էր ոչ միայն ներկա սոցիալ-տնտեսական վիճակը, այլև ապագայի նկատմամբ հույսի և հավատի գիտակցության արթնացումը մարդկանց ուղեղներում, վստահության կորստի փոխարինումը լավատեսությամբ՝ և այս ամենի իրականացումը ապագ ա սերունդների ուսուցման և դաստիարակության միջոցով: Այս տեսանկյունից կարևոր էր նաև կրթության կառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների, կրթական գործընթացի մասնակիցների, ուսումնական ծրագ րերի, դասագրքերի ստեղումը: Ինչպես արդեն նշել ենք կրթության կառավարման մարմինը կոչվում էր «Հանրային կրթության և արվեստի նախարարություն»: 1918-1920թթ. կրթության և արվեստի նախարարներ են եղել Մ. Աթաբեկյանը, Գ. Մելիք-Ղարագյոզյանը, Ս. Տիգրանյանը, Ն. Աղբալյանը, Գ. Ղազարյանը, Վ. Մինախորյանը, որոնցից թերևս ամենից երկար և արդյունավետ գործունեություն են իրականացրել Ն. Աղբալյանը և Գ. Ղազարյանը: Հանրային կրթության կազմակերպման և զարգացման նպատակով Հայաստանի խորհրդի ընդունած առաջին որոշումներից մեկը ինչպես նշվել էր վերևում՝ 1918 թվականի օգոստոսին ընդունված « Դպրոցի կառավարման մասին » օրինագիծն էր, որով փորձ էր արվում կանոնակարգել Հայաստանի ամբողջությամբ կազմալուծված ու քայքայված կրթական կյանքը: « Դպրոցի կառավարման մասին » օրինագծով հանրապետության տարածքում գործող նախկին դպրոցները ազատ գործելու հնարավորություն են ստացել: Կրթությունը դարձել է աշխարհիկ, որդեգրվել է դպրոցի կառավարման հասարակական սկզբունքը, տարրական դպրոցներում ուսումը եղել է անվճար ու պարտադիր, միջնակարգ ու բարձրագույն դպրոցներում՝ չափավոր վարձավճարով, կարիքավոր աշակերտները և ուսանողները ստանում էին կրթաթոշակ: 1919թ. մայիսին ՀՀ կառավարությունը որոշում է կայացնում 15 օրյա ժամկետում ազատել բոլոր դպրոցական շենքերը, նորոգել դրանք և նախապատրաստել նոր ուսումնական տարվա համար: Այդ նպատակի համար կառավարությունը նախատեսել է 11մլն. ռուբլի: Այս միջոցառումների շնորհիվ 1919թ. վերջին հանրապետությունում գործում էին 431 տարրական դպրոց (տարրական կրթության մասին օրենքով պետական դպրոցներում սահմանվեց

վեցամյա կրթություն), որոնցում սովորում էին 38 հազար աշակերտներ, որտեղ աշխատում էին 1100 ուսուցիչներ: Այնուամենայնիվ՝ Հանրային կրթության նախարարության առջև կանգնած կարևոր խնդիրներից մեկը մանկավարժների պակասը լրացնելն էր: 1919-1920 ուսումնական տարում շուրջ 90 դպրոցներ չէին գործում ուսուցիչներ չունենալու պատճառով: Միջնակարգ դպրոցների թիվը ընդամենը 20 էր:

Մանկավարժների ուսումնամեթոդական գիտելիքները հարստացնելու նպատակով 1919թ. աշնանից հանրապետության տարբեր վայրերում կազմակերպվում էին մանկավարժական դասընթացներ, նույնիսկ մանկավարժների համագումարներ էին հրավիրվում Հայաստանում կրթական գործունեություն իրականացնող որբախնամ կառույցները: Նմանատիպ դասընթացներ կազմակերպվում են 1920թ. գարնան-ամռան ամիսներին՝ Կարսում, Ալեքսանդրապոլում, Ղարաքիլիսայում: դասընթացների կազմակերպման համար հանրապետության կառավարությունը հատկացնում է որոշակի գումար: Այս դասընթացներին մասնակցում էին ոչ միայն ուսուցիչներ, այլև բարձր դասարանների աշակերտներ, բուժքույրեր, որբանոցի սաներ: Դասընթացների ծրագիրը հարուստ և բովանդակալից էր: Վերապատրաստման դասընթացները իրականացվում էին հետևյալ առարկաներից՝ մայրենի լեզվի մեթոդիկա, դիդակտիկա, փորձնական հոգեբանություն, բնագիտության մեթոդիկա, հոգեբանություն, դպրոցական առաղջապահություն:

Կարևոր նշանակություն ուներ նաև մանկավարժներին զինվորական ծառայությունից ազատելը: Դեռևս 1919թ. հունվարին զինվորական նախարարի կարգադրության համաձայն՝ դպրոցների ուսուցիչները ազատվում էին զորակոչից՝ ինչը պահպանվեց մինչև 1920թ. աշուն, երբ հանրապետությունում առաջացավ ծանր ռազմաքաղաքական իրադրություն:

1919թ. որոշում է կայացվում եկեղեցական-ծխական դպրոցների պետականացման ուղղությամբ, իսկ 1920թ. մարտին հանրապետությունում գործող բոլոր դպրոցները դրվում են կրթության նախարարության վերահսկողության տակ:

1920-1921 ուսումնական տարում հանրային կրթության նախարարության կողմից ծրագրվել է դպրոցական գործի էլ ավելի ընդլայնում և ուսուցման որակի բարձրացում, նախատեսվել էր դպրոցների թիվը հասցնել 1500-ի, վերանորոգել 300

դպրոցներ, սակայն 1920թ. աշնանը սկսված ռազմաքաղաքական իրադարձությունների պատճառով Հայաստանի հանրապետությունը հայտնվում է քաղաքական խորը ճգնաժամի մեջ և բազմաթիվ կրթական ծրագրեր մնում են թերի:

Միջնակարգ մասնագիտական կրթության զարգացումը

Ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման համար անհրաժեշտ էին նաև միջին մասնագիտական որակավորում ունեցող մեխաթիվ մասնագետներ, որոնք սակայն բացակայում էին: Մնացել էր երկու միջնակարգ մասնագիտական կրթական հաստատություններ՝ Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանը և Երևանի ուսուցչական սեմինարիան: Հրատապ էին տեխնիկական մասնագիտությունների գծով մասնագետների պատրաստման հարցը: 1919թ. օգոստոսին Երևանում կազմակերպվեց փոստա-հեռագրական ծառայողների մեխանիկների և վերահսկիչների պատրաստման դասընթացներ, որտեղ կարող էին մասնակցել 6-րդ դասարանի կրթություն ունեցող անձիք:

Հիմնվեցին մասնագիտացված դպրոցներ նոր Բայազետում, Դիլիջանում, որտեղ բացվեցին գյուղատնտեսական դպրոցներ: 1920թ. հուլիսի 19-ն կառավարության որոշմամբ Երևանում և Ալեքսանդրապոլում բացվեցին տեխնիկական միջնակարգ դպրոցներ: Կարսում բացվելու էին Ռազմական գիմնազիա, Էջմիածնում վերաբացվելու էր Գրորգյան ճեմարանը, Երևանում բացվելու էր բժշկական վարժարան, Ուսուցչական սեմինարիա, Ալեքսանդրապոլում բացվելու էր գեղարվեստի ուսումնարան: Ալեքսանդրապոլի տեխնիկական միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո շրջանավարտները ստանում էին տեխնիկի որակավորում: Երեք տարի գործնական աշխատանքից հետո դպրոցի խորհուրդը շրջանավարտին շնորհում էր նաև ճարտարապետի որակավորում: ՀՀ-ն կարիք ուներ նաև գյուղատնտեսական մասնագետների: Գյուղատնտեսությունը գտնվում էր ծանր և անմխիթար վիճակում, զգացվում էր կադրերի պակաս: Շրջանները դիմում էին մայրաքաղաք ՝ խնդրելով գյուղատնտեսներ և անասնաբույժեր ուղարկել, սակայն մերժում էին ստանում մասնագետներ չլինելու պատճառով: 1920թ. հիմնվում է գյուղատնտեսական դպրոց, որը սակայն չուներ ոչ լաբորատորիա, ոչ էլ փորձարարական նպատակների համար անհրաժեշտ հողամաս:

Բժշկասանիտարական վիճակը բարելավելու նպատակով կազմակերպվեցին բուժքույրերի և եղբայրների դասընթացներ: 1919թ. երկրում մեծ չափերի էին հասել համաճարակային հիվանդությունները: Հայ բժիշկները գիտակցում էին, որ առողջական վիճակի բարելավման նպատակով անհրաժեշտ էր ստեղծել բժշկական ուսումնական հաստատություն: 1919թ. Երևանի հիվանդանոցներից մեկին կից բացվեց բժշկական դպրոց:

Քայլեր կատարվեցին նաև բանակը զինվորական սպայական կադրերով համալրելու նպատակով: 1920թ. Նախարարների խորհուրդը որոշում է ընդունում զինվորական գիմնազիա և ուսումնարան բացելու մասին: Գիմնազիայի նպատակն էր մանուկ հասակից ունակ դարձնել զինվորական գործի մեջ: Ալեքսանդրապոլում բացված գիմնազիայի տևողությունը պետք է լիներ 7 տարի: Ընդունելության ժամանակ առաջնություն էր տրվում սպաների, բժիշկների, պաշտոնյաների երեխաներին, որբանոցի սաներին: Սակայն թուրքական հերթական արշավանքը կանխեց այս և այլ ծրագրերի իրականացումը:

Համալսարանի հիմնադրումը

Ազգային անկախ պետականության գործընթացի իրականացման համար անհրաժեշտ էին բարձր որակավորում ունեցող մասնագիտական կադրեր, սակայն հանրապետության մտավորականության մեջ քիչ էին բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցող մասնագետները: Զգացվում էր բժիշկների, շինարարների, գյուղատնտեսների, ուսուցիչների պակաս: Արտերկրներում բնակվող հայ մտավորականներից քչերն էին համաձայնում օգնել մայր հայրենիքին: Առաջնահերթ էր բարձրագույն և միջին մասնագիտական հաստատությունների ստեղծումը:

Կրթական և ընդհանրապես ազգային մշակութային կյանքի մեծագույն իրադարձություն էր 1919թ. մայիսին համալսարանի հիմնադրման մասին որոշման ընդունումը: Համալսարանն ունենալու էր չորս ֆակուլտետ՝ պատմա-լեզվաբանական, տնտեսահիրավաբանական, բժշկական, ֆիզիկամաթեմատիկական: Սակայն Երևանում հնարավորություն չեղավ համալսարանի կազմակերպումը իրականացնել, ուստի այն ժամանակավորապես սկսեց գործել Ալեքսանդրապոլում: Համալսարանը հիմնադրվեց, սակայն ուսումնական պարապմունքներին խանգարում էր գրենական պիտույքների, լաբորատոր սարքավորումների, մայրենի լեզվով դասագրքերի, գիտական նյութերի պակասը: Համալսարանը չուներ գրադարան, գրադարաններ չկային ամբողջ հանրապետությունում, դժվար էր գրքերի ձեռք բերումը այլ երկրներից: Այսպիսի պայմաններում դասախոսների առջև խնդիր էր դրված բավարարել ուսանողների գիտակրթական կարիքները:

1920թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացումը, որին Երևանից ու Թիֆլիսից ժամանել էին բազմաթիվ հյուրեր, Խորհրդարանի անդամներ, Խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը, Հայաստանի գերագույն կոմիսար Հասկելը, Ալ. Խատիսյանը, բրիտանական ներկայացուցիչ Օ. Ուոդրոպը, ֆրանսիական ներկայացուցիչներ,

Հանրային կրթության նախարար Ն. Աղբալյանը և պետական ու հասարակական շատ գործիչներ: Ն. Աղբալյանը իր ճառում ասաց. «համալսարանը մատչելի լինի բոլորի համար, մտնելը լինի հեշտ, դուրս գալը դժվար», իսկ բրիտանական ներկայացուցիչը նշեց, որ համալսարանի բացումը նույնքան կարևոր է, որքան անկախության ձեռքբերումը[4, էջ 273]: Գնդապետ Հասկելն ուրախությամբ հայտնեց, որ հանրապետության ծանր հոգսերը չեն կարող ճնշել ժողովրդի կրթության ծարավը, և որ հայ ժողովուրդը պետք է անկախ լինի նաև իր կրթությամբ: Համալսարանի բյուջեին և գրադարանային ֆոնդին մի շարք նվիրատվություններ կատարվեցին: Խնդիրներ էին առաջացել պատմաբանասիրական ֆակուլտետում: Ուսանողների մեծ մասը ուսուցիչներ և պետական ծառայողներ էին, դրա համար էլ դասախոսությունները ընթանում էին երեկոյան ժամերին, ցուրտ և էլեկտրականությունից զուրկդահլիճում: Ուսումնական նորմալ գործընթացին խոչոնդոտում էր նաև թղթի և գրենական պիտույքների պակասը: Անհանգստացնող էր գրադարանի բացակայությունը, չկար գիտական և մասնագիտական գրականություն: Համալսարանին օգնության ձեռք մեկնեց հայ առաքելական եկեղեցին: Կաթողիկոսի որոշմամբ համալսարանին հանձնվեց Էջմիածնի Մատենադարանի և Գևորգյան ճեմարանի գրքերի որոշ մասը: Մովսես եպիսկոպոսին հաջողվեց Վրաստանի կառավարությունից թույլտվություն ստանալ տեղափոխել համալսարանի կարիքների համար գնված 22 փութ թուղթը, դասախոսների անձնական գրադարանները, Ղուկասյանի անձնական գրադարանները: Համալսարանի տեսուչ Յուրի Ղամբարյանի հրամանով Հ. Մանանդյանը նշանակվում է դոցենտի պաշտոնում և գրադարանի վարիչ, այնուհետև պատմաբանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար:

1920թ. հունիսին համալսարանը փոխադրվեց Երևան, որտեղ նրան հատկացվեց Ուսուցչական սեմինարիայի շենքը: Համալսարանում աշխատում էին ինն պրոֆեսոր, տասներեք դոցենտ, այլ դասախոսներ: 1920-1921ուս. տարվա համար համալսարան էին դիմել 700 երիտասարդներ, այն դարձել էր ազգային կադրեր պատրաստելու դարբնոց: Մեծ աշխատանքներ կատարվեցին պատմաբանասիրական ֆակուլտետի գործունեությունը կազմակերպելու համար: Ճշտվեց ֆակուլտետի ուսումնական ծրագիրը, դասավանդվող առարկաների քանակը, դասախոսական կազմը: Դասախոսներ նշանակվեցին Մ. Աբեղյանը, ՍՏ,

Մալխասյանը, Ռ. Աբրահամյանը, Գ. Մովսեսյանը: Պետական պաշտոնյաներից համալսարանում աշխատելու ցանկություն էր հայտնել Սիրեկան Տիգրանյանը:

1920թ. դեկտեմբերի 17-ին Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսար Աշոտ Հովհաննիսյանի հրամանով համալսարանը վերակազմվեց և վերակոչվեց Երևանի ժողովրդական համալսարան երկու ֆակուլտետներով՝ բնագիտական և հասարակագիտական: Որոշ ժամանակ անց Խորհրդային Հայաստանի կառավարությունը Մայր բուհ-ը վերակոչեց Պետական համալսարան: Դժբախտաբար համալսարանի հիմնադիրներից շատերը հարկադրված էին լքել համալսարանն ու Հայաստանը: Նրանցից շատերը բռնադատվեցին՝ ինչպես Ն. Աղբալյանը, Յու. ՂամբարյանըՍ. Տիգրանյանը և ուրիշներ: Սակայն նրանք թողեցին անդրանիկ ԲՈՒՀ-ը, որի հիմքի վրա կազմավորվեց Հայաստանի բուհական համակարգը:

Պատմամշակութային հուշարձանների պահպանումը

Հայաստանի անկախության վերականգնումը հայ ժողովրդի կյանքում ունեցավ ոչ միայն սոցիալ-քաղաքական, այլև պատմամշակութային նշանակություն: Աշխուժացավ երկրի հասարակական քաղաքական կյանքը, ծաղկում ապրեց արվեստը, թատրոնը, գրականությունը, պարբերական մամուլը, ստեղծագործական կյանքն ընդհանրապես: Պատմամշակութային հուշարձանների պահպանումը դարձավ ժամանակի իշխանությունների կարևոր խնդիրներից մեկը:

Մշակույթի այս բնագավառում Հայաստանի կառավարության առջև կանգնած խնդիրներից էր հավաքել հանրապետության, ինչպես նաև արտերկրի հայ մշակույթի նյութակն բարձրարժեք գործերը և հիմնել պետական թանգարան: 1919թ. վերջերին հանրային կրթության նախարարության արվեստի բաժնում ստեղծվում է հնությունների պահպանման ենթաբաժին, իսկ1919թ. սկզբներին Թիֆլիսում սկսում է գործել պատմամշակութային հարցեչով զբաղվող ժամանակավոր հանձնաժողով, որի կազմում էին ազգագրագետ Ե. Լալայանը, ճարտարապետ Թ. Թորոմանյանը, հնագետ Ա. Լոռու Մելիք-Քալանթարը: Հանձնաժողովը պետք է մշակեր հնագիտական ընկերության կանոնադրությունը, կազմակերպեր Թիֆլիսում գտնվող մշակութային հաստատությունների՝ Կովկասյան թանգարանի հայկական բաժնի և Հայոց ազգագրական ընկերության թանգարանային նմուշների տեղափոխումը հայրենիք: Թանգարանում կային մեծ թվով հայկական արժեքավոր իրեր, հիշատակարաններ, ազգագրական հավաքածուներ, հայագիտական հարուստ գրադարան, սեպագիր հավաքածու Վանից, Առաքելոց վանքի փորագրված դուռը, Էրզրումից՝ հայագիտական մեծ արժեք ներկայացնող գրքերի հավաքածու և այլն: Նույն ժամանակ Վրաստանի կառավարությունը ցանկանում էր հայկական բաժինը վերանվանել վրաց ազգային պետական թանգարան: Հայաստանի արտգործնախարար Ս. Տիգրանյանը բողոքի նոտա է ուղարկում Վրաստանի

արտգործնախարարին, որի մեջ նշվում է որ Կովկասյան թանգարանի ճակատագիրը չի կարող որոշել միայն Վրաստանի կառավարությունը, քանի որ կան նաև շահագրգիռ կողմեր՝ ՀՀ-ն, Ռուսաստանի գիտությունների ակադեմիան, որոնց հետ պետք է բանակցել: Այնուամենայնիվ հայկական կողմին հաջողվում է ազգային բովանդակություն ունեցող բոլոր նմուշները վերադարձնել հայրենիք և հիմնել պետական թանգարան: Հանրային կրթության նախարարությունը ուշադրության մեջ էր պահում նաև հանրապետության տարածքում գտնվող պատմամշակութային ճարտարապետական հուշարձանների պահպանությունը և գիտական ուսումնասիրությունը: Հանրային կրթության նախարարությունում ստեղծվում է Հայաստանի հնությունների պահպանման կոմիտե, որի կազմի մեջ մտան նշանավոր գիտնականներ, ճարտարապետներ և այլք: Կոմիտեի առաջին հոգսը եղավ Անիի ավերակների ուսումնասիրությունը, և ճարտարապետ Թ. Թորոմանյանը հաստատվեց այնտեղ: 1920թ. կազմավորվեց գիտական մեծ արշավախումբ հնագիտական քարտեզ կազմելու նպատակով, կատարվեց մեծ թվով հուշարձանների չափագրություն, ցուցակագրում, հայտնաբերվեցին մինչև այդ անհայտ հուշարձաններ: Հավաքված հարուստ նյութերը պետք է կենտրոնացվեր Երևանում հիմնված պետական թանգարանում: 1919թ. ընդունվեց օրենք, որի համաձայն Դվինի շրջանը հայտարարվեց հնագիտական և շրջանի պահպանության համար գումար հատկացվեց:

Եզրակացություն

Ծանր ու դժվարին պայմաններում սկիզբ դրվեց ազգային պետականաշինությանը: Իշխանությունների վարած քաղաքականության կարճ ժամանակահատվածում հիմքեր դրվեցին մշակույթի, արվեստի, կրթության համակարգի ստեղծման համար: Հանրային կրթության և արվեստի նախարարության անմիջական ջանքերով ազգայնացվեցին դպրոցները: 1919-1920թթ. Հայաստանի մի քանի քաղաքներում հիմնվեցին տեխնիկական, գյուղատնտեսական, մանկավարժական թեքումով միջնակարգ մասնագիտական դպրոցներ: Հիմնադրվեց Մայր բուհը, որը դարձավ Հայաստանի գիտական աշխարհի առանցքը:

Նախարարների խորհրդի կողմից հայերենը ճանաչվեց որպես պետական լեզու: Հայաստանի հանրապետության տարիներին հայկական արվեստը, որը մինչ այդ զարգանում էր գաղթօջախներում, սկսեց զարգանալ մայր հայրենիքում: Կազմակերպվեց Թիֆլիսում գտնվող մշակութային հաստատությունների՝ Կովկասյան թանգարանի հայկական բաժնի և Հայոց ազգագրական ընկերության թանգարանային նմուշների տեղափոխումը հայրենիք: Ալ. Թամանյանի գլխավորությամբ հանրապետությունում սկիզբ դրվեց քաղաքաշինական գործունեությանը, ինչը սակայն վիճակված չէր իրականություն դառնալ ՀՀ-ի օրոք:

Չնայած սոցիալ-տնտեսական ծանր վիճակին կարճ ժամանակահատվածում հնարավոր եղավ հիմք դնել ոչ միայն տնտեսական կյանքի, այլև կրթամշակութային ոլորտում: Հայ մշակույթը դանդաղ, սակայն հաստատուն քայլերով հիմնավորվում էր մայր հայրենիքում: Ազգային պետականության զարթոնքի պայմաններում մշակույթը վերածնունդ էր ապրում, որը կարևոր նշանակություն ունեցավ խորհրդահայ մշակույթի վերելքի համար:

Գրականություն

1. Վարդանյան Գ. Վ. Մշակույթը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920թթ.) Եր. 2003, «Գիտություն», 156 էջ:

2.Վրացյան Ս. Հայաստանի Հանրապետություն, Եր. 1993թ. 462 էջ:

3.Հայոց պատմություն, Եր. 1993, 254 էջ:

4. Կարապետյան Մ. Հայաստանը 1912-1920թթ. Եր.2003, 298էջ:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների

Վերապատրաստման դասընթացներ

Հայոց պատմություն

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ 1877-1878թթ. ռուս- թուրքական պատերազմը: Սան- Ստեֆանոյի պայմանագիրը և Բեռլինի կոնգրեսը

Վանաձոր 2022

Ներածություն

<< 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Սան- Ստեֆանոյի պայմանագիրը և Բեռլինի կոնգրեսը>> խորագիրը կրող այս փոքրածավալ աշխատությամբ մենք մեր առջև նպատակ ենք դրել ցույց տալ, թե ինչպես բազմաչարչար հայ ժողովուրդը՝ Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող քրիստոնյա մյուս ժողավուրդների հետ միասին(բուլղարներ, սերբեր, խորվաթներ, բոսնիացիներև այն), 19-րդ դարի 70-80-ական թթվականներին էլ ավելի են ուժեղացնում ազգային-ազատագրական պայքարը թուրքական ռազմա-ֆեոդալական քաղաքականության դեմ: Արևմտահայերի նբալկանյան սլավոնական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի զարգացման գործում շատ կարևոր դեր է խաղացել 1877-1878 թթ. ռուս թուրքական պատերազմը, քանի որ այն օբյեկտիվորեն նպաստեց այդ ժողովուրդների ազգային- ազատագրական պայքարին:

Ռուսական կառավարությունը ձգտում էր օսմանյան կայսրության մեջ ապրող քրիստոնյա ժողովուրդների ազգային – ազատագրական շարժումները օգտագործել իր նպատակների համար:Նա ջանում էր, որ այդ շողովուրդների ազատագրումը Օսմանյան կայսրությունից տեղի ունենար այնպես, որ նրանք ընդգրկվեին ռուսական ազդեցության ոլորտում և ուժեղացնեին նրա դիրքերը Մեչձավոր Արևելքում և Բալկաններում:

Հայ ազգային-ազատագրական պայքարը հատկապես ուժեղացավ 1877-1878 թթ. ռուս- թուրքական պատերազմի ժամանակ, պատերազմ, որ վճռական դեր խաղաց սուլթանական լծի տակ հեծող մի շարք ժողովուրդների ազատագրության գործում:

Սլավոնական ժողովուրդների հերոսական պայքարը և թուրքական զորքերի բարբարոսությունները մեծ շարժում առաջացրեցին Ռուսաստանում; Ցարական կառավարությունը օգտագործեց ստեղծված իրադրությունը և, իր արտաքին քաղաքականության ծրագրերն իրագործելու համար, հանդես եկավ ապստաժամանակ Կովկասիմբների ազատագրության գործում:

Ոգևորությունը մեծ էր և՛ արևմտահայության, և՛ կովկասահայության մեջ: Պետք է նշել,որ թեև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Կովկասի հայ ազգաբնակչության համար դեռևս սահմանված չէր պարտադիր զինվորական ծառայություն, այնուամենայնիվ, ռուսական բանակի շարքերում կային մեծ թվով հայ կամավորներ, որոնց մի մասն արժանացան պարգևատրման:

1877-1878 թթ. ՌՈՒՍ- ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Դարեր շարունակ արևելյան բռնակալների հարվածներից բզկտված հայ ժողովուրդը 19-րդ դար էր հասել գոյատևելու համար հերոսական պայքարի շնորհիվ :19-րդ դարի սկզբին Օսմանյան Թուրքիայի սահմաններում՝հատկապես Հայաստանում, ապրում էին ավելի քան 3 մլն. հայեր, բայց Թուրքիայում այսօր կա 100-150 հազար հայ[1]:Տասնամյակների ընթացքում իրականացված զանգվածային ջարդերը բռնակալներն ավարտեցին իմպերիալիզմի դարաշրջանում առաջին հրեշավոր գենոցիդով:Արևմտահայ ժողովուրդը բնաջնջվեց, տեղահանվեց, ցաքուցրիվ եղավ:

Օսմանյան կայսրության հետ եվրոպական տերությունների և Ռուսաստանի հարաբերությունները, թուրքական տիրապետության դեմ ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի օգտագործումը, այդ կայսրության հաշվին ռազմաքաղաքական և տնտեսական առավելությունների հասնելու նրնց մրցապայքարը դիվանագիտության մեջ հայտնի է << Արևելյան հարց >> անվանումով[2]:

Թուրքաբնակ քրիստոնյաներին օգնելու պատրվակով եվրոպական դիվանագիտությունը կառչեց այդ պայքարից՝ փլուզում ապրող Օսմանյան կայսրությունում արտոնյալ դիրք նվաճելու, նրա տրոհումից օգտվելու համար:

19-րդ դարի 70-ական թվականներին ավելի ընդգծված էր դառնում թուրքական պետական մարմինների հակահայ քաղաքականությունը: Բ. Դուռը բացահայտ քաջալերում էր արևելյան վիլայեթներում թուրքական պաշտոնյաների և քուրդ ֆեոդալական վերնախավի ճնշումները, հարստահարությունները, հրկիզումները, կոտորածները;Հայկական խնդրի աշխուժացմանը հետևեց մի այլ թուրք պետական գործչի՝ Սայիդ փաշայի բանաձևը. << Հայկական խնդիրը պիտի լուծենք հայերի ջնջելով>>[3]:

Արևմտյան տերությունների և Ռուսաստանի միջև օրեցօր սրվող հարաբերությունների հետևանքով սկսվում է ռուս- թուրքական պատերազմը:Պատերազմը տևեց տաս ամիս և ծավալվեց Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում:Սուլթանական կառավարությունը դաժանությամբ ճնշում էր սլավոնական ժողովուրդների ապստամբությունները:Միայն Բալկաններում 1875 թվականի ապրիլյան ապստամբության ժամանակ թուրքերի կողմից բնաջնջվել է 30000 մարդ և հողին հավասարվել 9000 տուն, մոտավորապես 70000 բնակիչ մնացել անօթևան: Մինչդեռ Անգլիայի Կ.Պոլսում գտնվող դեսպանը մեծ ջանքեր էր գործադրում, որպեսզի թաքցնի Թուրքիայի կողմից հպատակ ժողովուրդների նկատմամբ իրականացվող դաժան քաղաքականությունը[4]:

---

[1] Ջոն Կիրակոսյան , Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Երևան 1978,էջ 8
[2] Նույն տեղում՝ էջ 10
[3] Նույն տեղում՝էջ 46
[4] Խաչիկ Բաղալյան, Հայաստանը ռուս-թուրքական պատերազմում/1877-1878 թթ/, Երևան,1952,էջ 14

Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Ռուսաստանի նկատմամբ թշնամական դիրք էր բռնում նաև ԱՄՆ-ն, որը բացահայտ հանդես էր գալիս Թուրքիայի պաշտպանության դերում։Երբ եվրոպական տերությունների և Անգլիայի խարդախ քաղաքականության հետևանքով ձախողվեցին Կ. Պոլսի յոթ տերությունների միջազգային կոնֆերանսի աշխատանքները, Ռուսաստանը սկսվեց պատրաստվել արևելյան Հայաստանի հարցը զենքի ուժով լուծելուն։

Ռուսական բանակի գլխվոր հրամանատարությունը պատերազմի նախօրյակին Բալկանյան ճակատում կենտրոնացրեց 257 հազարանոց բանակ, որի թիվը հետագայում անցավ 300 հազարը։ Ռուսական բանակի գլխավոր հրամանատարությունը Կովկասյան ռազմաճակատում կենտրոնացրել էր 95 հազար մարդ, բացի հայկական, վրացական տասնյակ հազարավոր կամավորական ջոկատներից։Կովկասյան ռազմաճակատի ընդհանուր հրամանատար է նշանակվում Ալեքսանդր 2-րդի եղբայր Միխայիլ Նիկոլաևիչը։ Թուրքական զորքերի թիվը պատերազմի նախօրյակին հասնում էր 494 հազարի, որից 338 հազարը Եվրոպայում և 140-156 հազարը Փոքր Ասիայում և Աֆրիկայում[5]։

Թուրքիային ջախջախելու համար ռուսական բանակի գլխավոր շտաբը մշակում է ռազմա-ստրատեգիական հետևյալ պլանը.

Սիստովոյի, Տիրնովի և Ադրիանապոլսի վրայով հասնել Թուրքիայի մայրաքաղաք և գրավել այն։ Կովկասյան բանակի զորամասերը պետք է գրավեին Կարսը, Արդահանը, Բայազետը և շարժվեին Էրզրում։ Կ. Պոլիսը և Էրզրումը գրավելուց հետո Թուրքիան պետք է կապիտուլյացիայի ենթարկեր[6]։

1877 թ. ապրիլի 11-ին ռուսական Կ.Պոլսի դեսպան Իգնատևը թուրքական կայսրությանը հայտնում է Թուրքիայի հետ Ռուսաստանի հետ դիվանագիտական կապերը խզելու մասին, իսկ ապրիլի 12-ին կանցլեր Գորչակովը Պետերբուրգի թուրքական դեսպանին է ուղարկում նրա անցագիրը։ Նույն օրը Ալեքսանդր 2-րդը ստորագրում է Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու մանիֆեստը։

1877 թ. ապրիլի 12-ին ռուսական զորամասերը Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում անցնում են լայնամասշտաբ հարձակումների՝ շարժելովդեպի Կ. Պոլիս և Էրզրում։

Ռուսական զորքերը Բալկանյան ճակատում տարան փայլուն հաղթանակներ, որոնցից կարևոր է հիշատակել Շիպկայի և Պլևնայի համար մղված հերոսամարտերը։1877թ. հունիսի 22-ին ռուսական բանակի 14-րդ կորպուսը անցնում է Դանուբը, իսկ հունիսի 27-ին Դանուբն անցնում է ռուսական բանակի գլխավոր ուժերը և շարժվում առաջ։

[5] Խաչիկ Բաղալյան, նշվ. աշխ.՝էջ 34
[6] Նույն տեղում՝ էջ 42

Ռուսական զորամասերը 1877 թ. ամռանը և աշնանը երեք խոշոր հարձակումներ են ձեռնարկում Պլևնայի ամրոցը գրավելու համար։Կովկասյան ռազմաճակատիգլխավոր ստրատեգիական կետը հանդիսանալու էր Էրզրումը։

Կովկասյան կորպուսի երկու ջոկատներ 1877թ. մայիսի 5-ին գրոհով գրավում են Արդահանը։Արշակ Տեր-Ղուկասովի Երևանյան ջոկատը գրավում է Ալաշկերտը, ապա Զեյդեկանը, որից թուրքական զորքերը նահանջում են Քեփիր քյոյ։

Այնուհետև ռուսական զորքերը շարժվում ենդեպի Արևմտյան Հայաստանի խորքերը։ 1877 թ. հոկտեմբերի 23-ին սկսվում է Դեվեյ – Բոյինի վճռական ճակատամարը, որտեղ թուրքական զորքերը նահանջում են Էրզրում։ Երևանյան խմբավորման զորամասերը թեև գտնվում էին ծանր վիճակում,սակայն նահանջի ընթացքում իրենց վրա են վերցնում Ալաշկերտից և Բայազետից Արևելյան Հայաստան գաղթող 3000 ընտանիքների պաշտպանության չափազանց ծանր գործը։

Կովկասյան կորպուսի հրամանատարությունը 1877 թ. սեպտեմբեր- հոկտեմբեր ամիսներին նախապատրաստվում էր Կարսի վրա գրոհելուն։Ռուսական կորպուսի զորամասերը՝ Լազրևի գլխավորությամբ, 1877 թ. նոյեմբերի սկզբներին գրոհում են Կարսի վրա։ Ութ ժամ տևող մարտերից հետո նոյեմբերի 6-ին առավոտյան գրավում են Կարսի բերդը[7]։

Այնուհետև Կովկասյան կորպուսի զորամասերը հաղթականորեն շարժվում են դեպի Էրզրում։ 1877 թ. դեկտեմբերի 30-ին ռուսական զորքերը շրջապատում են ըևմտյան Հայաստանի գլխավոր կենտրոնը՝ Էրզրումը։

Ցարական կառավարությունը, հաշվի առնելով արևմտյան տերությունների թշնամական դիրքը , կարգադրում է Բալկանյան ռազմաճակատի հրամանատարությանը անհապաղ սկսել զինադադարի բանակցությունները։Զինադադարը ստորագրվում է 1878 թ. հունվարի 19-ին։

Հայ ժողովուրդը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ անվերադարձ կերպով անցավ Ռուսաստանի կողմը և բոլոր միջոցներով օգնեց ռուսական բանակին պատերազմն հաղթանակով ավարտելու համար։

[7] Խ. Բադալյան ,նշվ. աշխ.՝էջ 53

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

Պատերազմի ժամանակ ամբողջ արևմտահայության հայացքը հառված էր Ռուսաստանին: Նրանք իրենց դիմումներով խնդրում էին Ռուսաստանին՝ Արևմտահայաստանը համարել ռուսական կայսրության մի մասը, այն միացնելով Արարատյան նահանգին կամ ծայրահեղ դեպքում՝ խնդրում բարենորոգումները, որոնք խոստացել էին արևմտահայությանը կատարել ռուսական զորքերի ներկայության պայմաններում: Ջինադադարից մեկ ամիս հետո՝ 1878թ. փետրվարի 19-ին (մարտի 3) Կ. Պոլսից 12կմ հեռավորության վրա գտնվող Սան-Ստեֆանո (այժմ Յեշիլ Քյոյ) ծովափնյա ամառանոցի այն տանը, որը պատկանում էր հայ մեծահարուստ Առաքել Տատյանին, և որտեղ իջևանել էր ռուսական բանակի գլխավոր հրամանատարը, կնքեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը[8]: Այդ պայմանագրով, որը բաղկացած էր 29 հոդվածներից, անկախ էին հռչակվում Ռուսաստանին էին անցնում Արևմտահայաստանի միայն 35650 քառ/կմ տարածությամբ մի հատված: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով Սերբիան, Չեռնոգորիան, Ռումինիան, իսկ Բուլղարիան, Բոսնիան և Հերցեգովինան ստանում էին ինքնավարություն: Սակայն այլ բան էին Բալկանները, միանգամայն ուրիշ էր Արևելյան Անատոլիան, Արևմտյան Հայաստանն ու նրա հետ կապված քաղաքականությունը: Այլ բան էին ցանկությունը, հնարավորությունները, մեկ այլ բան ռեալականությունը, ազատագրական շարժումների և եվրոպական դիվանագիտության փոխհարաբերությունը, ուժերի իրական հարաբերակցությունը: Սան-Ստեֆանոն ռուսական զենքի անժխտելի հաղթանակի արգասիքն էր: Բայց այս պայմանագրում արդեն առկա էր ցարական քաղաքականության իմաստը, բովանդակությունը: Նրա հեղինակը Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան **Ն.Իգնատևն** էր: Նա էլ խմբագրել էր չարաբաստիկ 16-րդ հոդվածը՝ հայկական նահանգերում տեղական պայմաններին համապատասխան ռեֆորմներ անցկացնելու մշուշապատ որոշակիությունից զուրկ արտահայտություններով: Իր հուշերում **Ն.Իգնատևը** չի թաքցրել, որ 16-րդ հոդվածը միայն Ռուսաստանին հիմք էր տալիս պաշտոնապես միջամտել Բ. Դռան ներքին գործերին, ժամանակ առ ժամանակ ճնշում գործադրել նրա վրա այս կամ այն հարցն իր շահերին համապատասխան լուծելու համար: Ինչ վերաբերում է հայ ժողովրդին, ինքնավստահության նրա ձգտմանը, **Իգնատևին** դա չէր հետաքրքրում: Հայերի համար չափազանց նշանակալից էր , ասում էր նա, որ Օսմանյան կայսրության գոյության ամբողջ ընթացքում առաջին անգամ հայերի մասին հիշատակվեց միջազգային դաշնագրի մեջ, իսկ Բ. Դուռը հրապարակորեն ճանաչեց հայ ազգի գոյությունը Ասիական Թուրքիայում:

[8] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Հ.Ա., Փարիզ, 1934թ., էջ 76, 77:

Իգնատևը այլ չափանիշներ էր կիրառել Բալկանների նկատմամբ: Եթե 16-րդ հոդվածը մշուշապատ էր, այնտեղ բառ անգամ չկար ինքնավարության, կոնկրետ անելիքների մասին, ապա Բալկաններին վերաբերող 15-րդ հոդվածը որոշակիորեն սահմանում էր ռեֆորմների իրականացման ուղղությամբ կոնկրետ խնդիրները:

Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածում ասված էր.

<<Նկատի ունենալով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ և զերծ պահել հայերի ա 16-րդ պարագրաֆի նախնական խմբագրության համաձայն Թուրքիան պարտավորվում էր առանց հապաղելու ստեղծել ինքնավար վարչական կառավարում հայկական նահանգներում՝ Էրզրումում, Մուշում, Վանում, Սեբաստիայում, Դիարբեքիրում և այլուր, ըստ որում, այդ ռեֆորմների իրականացումը սուլթանը պետք է ապահովեր ռեալ երաշխիքներով: Թուրքերը հրաժարվեցին նման խմբագրությամբ պարտավորություններ ստանձնել հայերի վեաբերյալ: Սակայն դրա հետ մեկտեղ, նրանք ու անգլիացնիները Սան-Ստեֆանոյի բանակցությունների նախօրյակին խաղ էին խաղում հայերի հետ: Նպատակ ունենալով դժվարություններ հարուցել ռուսական դիվանագիտության առաջ՝ Օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող սլավոնական ժողովուրդների անկախություն տալու հարցում, Թուրքիան ու Անգլիան հայերին դրդում էին ռուսական և եվրոպական դիվանագիտության առաջ հանդես գալ սլավոն ժողովուրդների ու հայերի նկատմամբ համանման վերաբերմունք ցուցաբերելու պահանջով: Այս նշանակում էր, որ սլավոններին անկախություն տալու հետ միասին, պետք է անկախություն տային նաև հայերին ամբողջական Հայաստանում: նվտանգությունը քրդերից ու չերքեզներից>>[9]:

16-րդ պարագրաֆի նախնական խմբագրության համաձայն Թուրքիան պարտավորվում էր առանց հապաղելու ստեղծել ինքնավար վարչական կառավարում հայկական նահանգներում՝ Էրզրումում, Մուշում, Վանում, Սեբաստիայում, Դիարբեքիրում և այլուր, ըստ որում, այդ ռեֆորմների իրականացումը սուլթանը պետք է ապահովեր ռեալ երաշխիքներով: Թուրքերը հրաժարվեցին նման խմբագրությամբ պարտավորություններ ստանձնել հայերի վեաբերյալ: Սակայն դրա հետ մեկտեղ, նրանք ու անգլիացնիները Սան-Ստեֆանոյի բանակցությունների նախօրյակին խաղ էին խաղում հայերի հետ: Նպատակ ունենալով դժվարություններ հարուցել ռուսական դիվանագիտության առաջ՝ Օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող սլավոնական ժողովուրդների անկախություն տալու հարցում, Թուրքիան ու Անգլիան հայերին

[9] Հայստանը ..... փաստաթղթերում, հոդված 16, էջ 92:

դրդում էին ռուսական և եվրոպական դիվանագիտության առաջ հանդես գալ սլավոն ժողովուրդների ու հայերի նկատմամբ համանման վերաբերմունք ցուցաբերելու պահանջով: Այս նշանակում էր, որ սլավոններին անկախություն տալու հետ միասին, պետք է անկախություն տային նաև հայերին ամբողջական Հայաստանում: Անգլո-Թուրքական դիվանագիտությունը ելնում էր այն բանից, որ պահանջելով անկախություն տալ սլավոններին, Ռուսաստանը նույն պահանջը չի ներկայացնելու նաև հայերի համար, քանի որ այդ կնշանակեր Ռուսաստանի հրաժարումը <<Ռուսական Հայաստանից>>՝ <<Թուրքահայաստանի>> հետ անկախ միասնական Հայաստան ստեղծելու համար: Եվ իսկապես, ցարական Ռուսաստանը հայերի համար անկախության պահանջ չներկայացրերց Թուրքիային, բավարարվեց հայերի օգտին որոշ ռեֆորմներ անցկացնելու պահանջով: Ի վերջո, Սան-Ստեֆանոյում հայերի վերաբերյալ Ռուսաստանի և Թուրքայի միջև կայացած համաձայնությունը հանգում է վերոնշյալ 16-րդ հոդվածի ձևակերպմանը[10]:

Հայերի վերաբերյալ միջազգային պայմանագրի մեջ նման պարտավորություն մտցնելով, ցարիզմը հետապնդում էր որոշակի քաղաքական նպատակներ: Ռուսական դիվանագիտության մտահղացմամբ՝ միջազգային պայմանագրում հայկական հարցի վերաբերյալ համապատասխան հոդվածի առկայությունը պետք է ծառայեր՝ որպես իրավաբանական աղբյուր Փոքր Ասիայի քրիստոնյա բնակչության մեծամասնության նկատմամբ Ռուսաստանի <<խնամակալությունն>> իրականացնելու համար:

Ինչպիսին էլ որ լինեին ցարիզմի քաղաքական նպատակները, Ռուսաստանի հանդես գալը՝ որպես հայերի խնամակալ Թուրքիայում պատմական նշանակություն ունեցող հանագամանք էր հայության կյանքում[11]:

[10] Ա.Եսայան, Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965թ., էջ 6-11
[11] Նշված աշխատությունը՝ էջ 11:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ, ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսական զենքի ու դիվանագիտության հաղթանակը ռուսաթուրքական պատերազմում խիստ բացասաբար ընկալվեց եվրոպական տերությունների և, մասնավորապես, Անգլիայի կողմից, որպիսի հանգամանքը ի դերև հանեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրի ուժի մեջ մտնելը, և ռուս-թուրքական պատերազմի արդյունքների վերջնական կարգավորումը փոխադրվեց Եվրոպական տերությունների Բեռլինի կոնգրես:

Բեռլինի կոնգրեսին նախորդած անգլո-ռուսական բանակցություններում, որն ավարտվեց 1878թ. մայիսի 18/30-ի համաձայանագրի ստորագրմամբ, հատուկ տեղ էր գրավում Հայաստանի և հայերի հարցը: Անգլիան ձգտում էր այն բանին, որպեսզի Մերձավոր Արևելքի հարցում ռուսական ազդեցությունը հասցվի մինիմումի և նրա պահանջով անգլո-ռուսական համաձայնագրի 7-րդ հոդվածը սահմանում էր, որ <<Սան-Ստեֆանոյի պրելիմինար (նախնական) պայմանագրում Հայաստանի մասին տված խոստումը չպետք է վերաբերի բացառապես Ռուսաստանի, այլև Անգլիային>>[12]:Անգլո-ռուսական այս համաձայնագրի 10-րդ կետով Անգլիան հասավ այն բանին, որպեսզի Ռուսաստանը Թուրքիային զիջեր Ալաշկերտի հովիտը և Բայազետը, իսկ 11-րդ կետով հավաստիացում ստանալ այն մասին, որ <<ապագայում Ռուսաստանի սահմանը չի ընդլայնվի Ասիական Թուրքիայի կողմից>>[13]:

Սրա դիմաց Թուրքիան Անգլիային էր զիջում Կիպրոս կղզին գրավելու և այն կառավարելու իրավունքը[14]: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով նախատեսված էր Արևմտահայաստանի բերենորոգումների, իսկ հետագայում նաև ինքնավարության հարցը: Այս հոդվածն իր համեստ բովանդակությամբ, ցնծությամբ ընդունվեց արևմտահայության կողմից, որը ձգտում էր անկախության: Սակայն Արևմտյան երկրները, ինչպես նաև առաջին հերթին Թուրքիան, բոլոր հնարավոր միջոցներով ձգտում էին ձախողել Սան-Ստեֆանոյի պայմանագրի իրագործումը: Նրանք որևէ ցանկություն չունեին հայ ժողովրդի մի ստվար մասին անկախություն տալու: Թուրքիայի ժառանգությունը վիճարկող Արևմտյան երկրները չէին կարող հանդուրժել Ռուսաստանի միակողմանի հաջորդությունը և պաշտոնապես պահանջեցին միջազգային վեհաժողովի հրավիրում, որը պետք է քննարկեր Սան-Ստեֆանոյի պայմանագիրը:

---

[12] Հայաստանը …….. փաստաթղթերում, էջ 100

13 նշված աշխատությունում, էջ 101

[14] Հայաստանը …… փաստաթղթերում, էջ 104-105

Տնտեսական ծանր վիճակում գտնվող և պատերազմից թուլացած Ռուսաստանը, բնականաբար, խուսափում էր նոր պատերազմից և ստիպված համաձայնում էր նոր վեհաժողով հրավիրելու և Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը քննարկելու առաջարկության հետ: Եվ ահա 1878թ. հունիսին Անգլիայի և Ավստրո Հունգարիայի նախաձեռնությամբ և Գերմանիայի աջակցությամբ Բեռլինում հրավիրվում է վեհաժողով Սան-Ստեֆանոյի պայմանագրի վերանայման նպատակով: Անգլիան, ելնելով իր կենսական շահերից, ամեն կերպ աջակցում էր թուրքերին, խոստանալով հետ վերցնելու Ռուսաստանի կողմից գրավված մի շարք շրջաններ: Նա իր վրա էր վերցնում Թուրքիայի քրիստոնյա ազգաբանակչության պաշտպանությունը՝ խոստովանելով թուրքերի Ռուսաստանի կողմից հայերի համար ձեռք բերած այն պայմանների վերանայումը, որը ընդունել էր Սան-Ստեֆանոյի պայմանագրով:

Բեռլինի վեհաժողովին յուրովի էր պատրաստվում նաև հայ ժողովուրդը, որի անունից Կ.Պոլսի Հայոց Պատրիարքների հանձնարարությամբ մի պատվիրակություն էր մեկնել Բեռլին: Պատվիրակությունը ղեկավարում էր 1869թ. Կ.Պոլսի պատրիարք ընտրվեց Մկրտիչ Խրիմյանը[15] (1820-1907թթ): Պատվիրակության կազմում էին նրա քարտուղար և թարգմանիչ Մինաս Չերազը (1852-1929թթ.), եկեղեցական գործիչ, թարգմանիչ Խորեն Գալֆայանը (1832-1892թթ.) և հասարակական գործիչ, մանկավարժ Ստեփան Փափազյանը (1840-1888): Հայկական պատվիրակության կազմը, մանավանդ Խրիմյան Հայրիկի ընտրությունը այդպիսի հույժ կարևոր առաքելության համար, նկատվում է խիստ անհաջող: Պատվիրակության կազմում չկար դիվանագիտական փորձ ունեցեող գոնե մեկ անձ: Հայրիկը օժտված էր մեծ ժողովրդականությամբ, բանաստեղծական տաղանդով, հոգևորականին վայել բոլոր հատկություններով, բայց հեռու էր դիվանագիտությունից, ինչն անհրաժեշտ էր պատվիրակության ղեկավարի համար: Երբ նրան հարցրել են, թե ինչպես պետք է կատարի իրեն վստահված դիվանագիտական առաքելությունը, քանի որ եվրոպական ոչ մի լեզու չգիտե, նա պատասխանել է, որ պետք է խոսի մի լեզվով, որը համաշխարահային լեզու է, նաև տառապանքի լեզու, այսինքն՝ պետք է լաց լինի: Միանգամայն ճիշտ խոսքեր, գրում էր պատմաբան Լեոն և պատկերացնում, թե ինչ էր լինելու <<Հայկական հարցի>> հետ: Հայ ազգային գործիչների մեջ կային անպիսիները, որոնք վտանգավոր էին համարում Բեռլինի վեհաժողովին դիմելու նման ձեռնարկը, քանի որ այն նախօրոք հավանության չէր արժանացել Աբդուլ-Համիդի կողմից[16] :

Թուրքական կառավարությունը վեհաժողովում հայերի ինքնավարության հարցը Օսմանյան կայսրության կազմում առաջ քաշելու առաջարկով կարողացավ մոլորեցնել հայկական պատվիրակությունը՝ հետապնդելով Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի ձախողումը:

---

[15]Մկրտիչ Խրիմյանը Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց 1892թ. իսկ օծվեց 1893թ, Սբ. Էջմիածնի տաճարում:

[16] Վարագ, Պարբերաթերթ Վասպուրականի հայրենակցական միություն, էջ 55-56:

Բեռլինի վեհաժողովից առաջ հայկական պատվիրակության անդամները մեկնեցին Եվրոպա ու Ռուսաստան և հանդիպումներ ունեցան տարբեր երկրների քաղաքական մի շարք գործիչների ու պետական այրերի հետ, որոնց արդյունքում ստացան վեհաժողովում հայերի ինքնավարության պահանջը պաշտպանելու ջերմ հավաստիացումներ: Իսկ Պետերբուրգ մեկնած Խ.Գալֆայանը 1878թ. մարտին անձամբ ներկայացավ ցարին և նրան հանձնեց Թուրքիայի կազմում հայերի ինքնավարության ծրագիրը: Բեռլինի վեհաժողովը բացվեց 1878թ. հունիս 1-ին, որին մասնակցում էին Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի, Իտալիայի Մեծ Բրիտանիայի և Թուրքիայի պատվիրակները: Նրա առանձին նիստերին թույլատրվեց ներկա լինել Հունաստանի, Ռումինիայի, Սերբիայի, Չեռնոգորիայի և Իրանի ներկայացուցիչներին: Բուլղարական և հայկական պատվիրակներին հնարավորություն չտրվեց որևէ կերպ մասնակցել վեհաժողովի աշխատանքներին: Որպես օրակարգի առաջնային հարց, առաջ էր մղվում բուլղարական հարցը: Հայկական հարցը, որպես երկրորդական, քննարկվելու էր ավելի ուշ: Արևմտյան տերությունները և առաջին հերթին Անգլիան, ամեն ինչ արեցին Ռուսաստանի ազդեցությունը թուլացնելու համար և հասան դրան: Ռուսաստանը բոլոր հարցերում իրեն միայնակ տեսավ ողջ Եվրոպայի դեմ: Հայկական հարցին վերաբերող ծրագիրը, որը կազմվել էր Կ.Պոլսի պատրիարքարանի կողմից, պահանջում էր Արևմտահայաստանի ինքնավարություն՝ հայ նահանգապետով: Հայ պատվիրակները այս ծրագիրը և բազմաթիվ խնդրագրեր ուղարկեցին վեհաժողովի պատվիրակներին: Չնայած որ ներկայացված ծրագիրը բավականին արմատական էր, այնուամենայնիվ, այն խստորեն քննադատվեց արևելյան լիբերալ-բուրժուական մտավորականության կողմից, Գրիգոր Արծրունին գտնում էր, որ ծրագրում պետք է հիշատակել ապագա պետության պաշտոնական լեզվի մասին: Նրա կարծիքով՝ սխալ էր ծրագրի այն հոդվածը, ըստ որի ինքնավար Հայաստանի նահանգապետը պետք է նշանակվեր Բ.Դռան (այսինքն՝ Թուրքիայի կառավարության) կողմից, այլ նա պետք է ընտրվի ժողովի կողմից: Սակայն Պողոս Նուբար փաշան, որն ուներ անգլիական դիրքորոշում, ներկայացրել էր իր ծրագիրը, որտեղ ինքնավարության մասին խոսք անգամ չկար: Նա դեմ էր ինքնավարությանը, գտնելով, որ այն անհնարին է: Այդ ծրագիրը թուրքական կառավարության հովանավորությամբ և նրա միջոցով կատարվելիք բարեփոխումների հետ էր կապում արևմտահայության ապագան: Անցնելով ստեղծված իրավիճակից՝ Խրիմյան Հայրիկը հակված էր ընդունելու Նուբար փաշայի ծրագիրը, բայց Ստ. Փափազյանը այդ առնչությամբ Հայրիկի վրա բողոք գրեց Կ.Պոլսի Հայոց Պատրիարքին, որի հետևանքով էլ Բ.Դուռը ոչ միայն արգելեց այդ ծրագրի ընդունումը, այլև մերժեց Նուբարի՝ Բեռլին ուղարկվելը: Սակայն ինչպես Նուբար Փաշայի, այնպես էլ Խորեն Գալֆայանի կողմից կազմված ծրագրերը, որոնք նկատի ունեին Ռուսաստանի հովանու տակ Հայաստանի ինքնավարությունը, դատապարտված էին

անհաջողության, քանի որ եվրոպական տերությունների կողմից այդ ծրագրերի առաջխաղացումը նրբորեն քողարկված դիվանագիտական խաղ էր:

10

Վեհաժողովի հունիսի 22-ին հերթական 12-րդ նիստում քննության դրվեց Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը, որը վերաբերում էր հայկական հարցին: Առաջինը ելույթ ունեցավ Անգլիայի արտգործնախարար լորդ Սոլսբերին, որը հավաստիացրեց, թե ինքն համաձայն է հոդվածի այն մասին, որը վերաբերում է հայկական գավառներում բարեփոխումներ մտցնելուն: Սակայն երկու օր անց նորից ելույթ ունենալով նույն հարցի մասին, թուրքական բարենորոգումների հարցը հետաձգել, որպեսզի ինքը հնարավորություն ունենա փոփոխություն մտցնել ծրագրի մեջ: Սան-Ստեֆանոյի պայմանգրի 16-րդ հոդվածը քննարկող նիստերին հայկական պատվիրակության չթույլատրվեց ոչ միայն մասնակցել, այլև ներկա գտնվել:

Անգլիայից հույսերը կտրված հայ պատվիրակները այցելեցին ռուսական պատվիրակության լիազոր ներկայացուցիչ Պ.Շուվալովին, տեղեկանալու համար հայկական հարցի քննարկման մանրամասներին: Վերջինս նրանց հայտնեց, որ հայկական հարցի լուծումը իրենց ցանկացած ձևով չի իրագործվի և առաջարկեց ներկայացնել մեկ այլ ծրագիր, ավելի չափավոր:

Անհույս և անելանելի վիճակում Խրիմյան Հայրիկն ու հայկական պատվիրակության մյուս անդամները ստիպված դիմեցին նաև թուրքական պատվիրակության ղեկավար Ալեքսանդր Կարաթեոդորի Փաշային՝ իրենց ծրագիրը վեհաժողովում պաշտպանելու խնդրանքնով: Բայց վերջինս մերժեց և հեռագրեց Կ.Պոլիս հայկական պատվիրակությանը հետ կանչելու պահանջով: Իսկ երբ Բ.Դուռը պատրիարք Ն. Վարժապետյանից պահանջեց, որ նա հետ կանչի Բեռլինում գտնվող հայ պատվիրակներին, Հայոց պատիրարքը հանդգնություն ունեցավ ոչ միայն հրաժարվելու, այլև հայտարարեց, որ իրեն ստիպելու դեպքում կկախվի պատրիարքարանի դռնից[17]: Ընդհանուր առմամբ Բեռլինի վեհաժողովը Անգլիայի դիվանագիտության խոշոր հաղթանակն էր և Ռուսաստանի դիվանագիտական պաշտպանությունը, քանի որ Ռուսաստանը կռվել, հաղթել էր, իսկ Անգլիան նրա փոխարեն և նրա դեմ հաշտության պայմանագիր էր թելադրում: Կոնգրեսում հայկական հարցը աճուրդի առարկա դարձավ: Անգլիայի արտաքին գործերի նախարար Սոլսբերին, հանդես գալով որպես ճնշված ազգերի <<խնամատար>>, հայտարարեց, որ <<հայերի շահերը պետք է պաշտպանության տակ վերցվեն>>:

Թուրքիան, ընդունելով Անգլիայի <<խնամակալությունը>>, պատրաստվում էր ռեֆորմներ անցկացնել Փոքր Ասիայում: Հակառակ այդ բոլորի, Անգլիան հետագայում հրաժարվեց միջազգային պայմանագրից և սեփական հանդիսավոր հայտարարություններից, որոնք վերաբերում էին Հայաստանին ու հայերին: Այն բանից հետո, երբ Անգլիան Արևելյան պատերազմում առանց մի գնդակ արձակելու

[17] Վարագ, Պարբերաթերթ Վասպուրականի հայրենակցական միության, էջ 56-58

տիրացավ Կիպրոսին, ստացվեց այնպես, որ <<Անգլիան այլևս Թուրքիայի խնամակալը չէ և նրա

նկատմամբ չի կարող խնամակալության իրավունք իրականացնել>>:

Հայկական հարցը անգլիական դիվանագիտության համար ոչ թե նպատակ, այլ միջոց էր իր ավազակային պլանների իրականացման համար: Ընդդեմ Սան-Ստեֆանոյի պրելիմինար հաշտություն, ըստ որում, նախ ընդդեմ նրա 16-րդ պարագրաֆի, բացի Անգլիայից հանդես եկան նաև Ավստրո-Հունգարիան, Գերմանիան ու Ֆրանսիան:

Ի վերջո լորդ Սոլսբերին հուլիսի 8-ին վեհաժողովի հերթական 15-րդ նիստում ներկայացրեց հայկական հարցի լուծման իր ծրագիրը, որտեղ Արևմտահայաստանի ինքնավարության միասին ոչ մի խոսք անգամ չկար: Սոլսբերիի նախագիծն արժանացավ վեհաժողովի հավանությանը, այն ուներ հետևյալ վերջնական տեսքը <<Բ.Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման հայաբնակ վայրերում իրագործել տեղական կարիքներից ելնելով բարեփոխումներ ու բարենորոգումներ և ապահովել հայ ազգաբնակչության անվտանգությունը քրդերից ու չերքեզներից: Այդ նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին Բ.Դուռը պարբերաբար պետք է հաղորդի մեծ տերություններին, որոնք կհետևեն դրանց իրագործմանը>>[18]:

Այսպիսով, եթե Սան-Ստեֆանոյի 16-րդ պարագրաֆով հայկական մարզերում բարելավումներ և ռեֆորմներ անցկացնելու համար Թուրքիան պարտավորվում էր Ռուսաստանի առջև, իսկ սա էլ պետք է հսկեր այդ բարելավումների ու ռեֆորմների իրականացմանը, ապա Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածի համաձայն Թուրքիան այդ պարտավորությունները ստանձնում էր տրակտատը ստորագրած բոլոր պետությունների առջև (Ռուսաստան, Անգլիա, Ավստրո-Հունգարիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա), իսկ պարտավորությունների կատարման հսկողությունը իրենց վրա էին վերցնում այդ պետությունները[19]:

Բացի 61-րդ հոդվածի ձևակերպումից, 60-րդ հոդվածով սահմանվեց, որ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 19-րդ հոդվածով Ռուսաստանին զիջված Ալաշկերտի հովիտը և Բայազետը քաղաքը վերադարձվում են Թուրքիային[20]:

Ահա սա էր այն նախագիծը, այն ընդունվեց վեհաժողովում և մտավ նրա պայմանագրի 61-րդ հոդվածի մեջ հայկական բարենորոգումներ անվան տակ և որոնք հետագայում չիրականացվեցին: Ահա այսպիսի վախճան ունեցավ հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում: Ճնշված ու վիատված Խրիմյան Հայրիկը, որն արդեն հասկացել էր եվրոպական պետությունների խարդավանքները, ժողովրդին նորից զենքի էր կոչում: Բեռլինից վերադառնալուց հետ, պատրիարքարանում պատմելով դեպի Բեռլին իր առաքելության արդյունքների մասին, Հայրիկն արտահայտվել է

[18] Հայաստանը …… փաստաթղթերում, էջ 128:
[19] Ա.Եսայան, Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, էջ 17:
[20] Հայաստանը …… փաստաթղթերում, էջ 127

հետևյալ կերպ. <<Բեռլինի մեջ բոլոր հպատակ ազգերին հոգեճաշ հարիսա էին բաժանում: Ինձ ուղարկել էիք, որ հայերին հասնող բաժինը վերցնեմ բերեմ: Բոլորը երկաթե շերեփով վերցրին տարան իրենց բաժինը, իսկ իմ շերեփը թղթից էր, որը հարիսայի մեջ լխճվեց,

ընկավ մեջը: Ինձ ոչինչ չհասավ և ես ձեռնունայն վերադարձա>>:

Հայրիկի այս թևավոր խոսքերը փոխաբերական իմաստով մնացին պատմության մեջ, որպես <<երկաթե շերեփի>> պատմություն[21]:

Բեռլինի կոնգրեսը եկավ նսեմացնելու ռուսական զենքի հաղթանակը, չափավարելու ցարիզմի արտաքին քաղաքական և ռազմական արդյունավետ ակտիվությունն ի շահ Անգլիայի, Ավստրո-Հունգարիայի, իսկ ամենակարևորը ի շահ օսմանյան կայսրության և ի վնաս բալկանյան ժողովուրդների ու հայ ժողովրդի: Բեռլինի կոնգրեսի որոշմամբ Արևելյան Ռումելիա նահանգը: Բոսնիան և Հերցեգովինիան օկուպացվեցին Ավստրո-Հունգարիայի կողմից: Ճանաչվեց Ռումինիայի Սերբիայի ու Չերնիոգորիայի անկախությունը: մեծ տերությունների և բալկանյան երկրների հակասական շահերի խճճվածության հետևանքով Բեռլինի կոնգրեսը Մակեդոնիան թողեց թուրքական կառավարման տակ, սահմանափակվելով այն պարտականությամբ, թե Թուրքիան պետք է ռեֆորմներ անցկացներ իր եվրոպական նահանգներում:

Հայկական պատվիրակությունը կոնգրեսին մասնակցելու իրավունքի չստացավ: Կոնգրեսին ներկայացրած նրա խնդրագրերը անուշադրության մատնվեցին: Ինչպես նկատում է Լեոն, <<հայերին ուրախացնում էին, թե ահա նրանց անունն էլ մտավ միջազգային դիվանագիտության անձանագրությունների մեջ>>[22]:

Հայությունը կարծում էր, թե այսուհետև Հայաստանը դառնալու է եվրոպական տերությունների մտահոգության առարկա: Ըստ անգլո-թուրքական պայմանագրի, եթե Ռուսաստանը ստանալու էր Բաթումը, Արդահանը, Կարսը, ապա Անգլիան պարտավորվում էր զենքի ուժով օգնել սուլթանին պաշտպանելու Թուրքիայի ասիական տիրույթները: Դրա դիմաց Անգլիան իրավունք էր ստանում օկուպացնել Կիպրոսը: 1878թ.-ի մայիսի 30-ի անգլո-ռուսական համաձայնությամբ Անգլիան արդեն համաձայնվել էր Կարսը Ռուսաստանին թողնելուն: Եվ անգլո-թուրքական պայմանագրի այն միտքը, թե Կարսը Թուրքիային վերադարձնելու դեպքում Անգլիան կէվակուացնի Կիպրոսը, բացահայտ երկերեսանիություն էր:

Այսպիսով, Թուրքիայի <<պաշտպաններ>> Անգլիան և Ավստրիան առանց կրակոցի զավթեցին՝ առաջինը Կիպրոսը, երկրորդը՝ Բոսնիան և Հերցեգովինան: Բեռլինի տրակտատի էությունը Թուրքիայի մասնակի բաժանումն էր:

---

[21] Վարագ, Պարբերաթերթ Վասպուրականի հայրենակցական միության, էջ 59:
[22] Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, էջ 76,77:

Բեռլիի կոնգրեսի արդյունքները պատերազմում հաղթանակած Ռուսաստանի արտաքին քաղաքականության անհաջողությունն էին նշանավորում: Երբ Շուվալովը Բեռլինից վերադարձավ Պետերբուրգ, իր հետ բերելով ստորագրված պայմանագիրը, Ալեքսանդր 2-րդ ցարը նրան դիմավորեց հետևյալ խոսքերով. <<Խոստովանեցեք սակայն, որ կոնգրեսի արդյունքները խիստ ցավալի են մեզ համար>>:

12

<<Բեռլինի տրակտը, -գրում է ակադեմիկոս Վ.Մ.Խվոստովը, - հայ ժողովրդի զգալի մասը թողեց թուրքերի լծի տակ: Պատմությունը ցույց տվեց, որ կապիտալիստական տերությունների այդ որոշումը ճակատագրական եղավ թուրքահայերի համար, այն նրանց մատնեց ֆիզիկական ոչնչացման>>[23]:

[23] В.М.Хвостов История дипломатии, Т2, Москва, 1963, стр 333.

13

Վերջաբան

Այս փոքրիկ աշխատության մեջ փորձեցինք ցույց տալ, թե հայերը, որ գտնվում էին Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ, ինչպիսի ծանր վիճակում էին գտնվում: Եվ ահա այդպիսի ծանր վիճակից դուրս գալու լավագույն միջոց էին համարում ազգային-ազատագրական պայքարը: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը մեծ հույսեր առաջացրեց արևմտահայ և կովկասահա ժողովրդի շրջանում:Այդ իսկ պատճառով էլ նրանք ակտիվ մասնակցություն ունեցան այս պատերազմին:Նրանք կազմեցին կամավորական ջոկատներ,որոնց ցուցաբերած օգնությունը կարևոր նշանակություն ունեցավ ռուսական բանակի հաղթանակի համար:Հայերը բացի ռազմական օգնությունիվ, ռուսական զորքերին օգնեցին նաև պարենով, տրամադրեցին իրենց բնակարանները և, լավ ծանոթ լինելով տեղանքին, առաջնորդում էին ռուսական զորքերի ավելի մատչելի և նպաստավոր վայրերով: Ի վերջո պատերազմն ավարտվեց ռուսական զորքերի հաղթանակով, ինչը մեծ ոգևորություն առաջացրեց հայ ժողովրդի մոտ:

Սակայն Պատերազմը տեղափոխվեց դիվանագիտական փուլ: Ինչպես տեսանք Սան-Ստեֆանոյումկնքվեց ռուս- թուրքական պայմանագիր, որտեղ <<Հայկական Հարցը>> ամփոփվեց 16-րդ հոդվածում: Ռուսական պատվիրակությունը հաշտության պայմանագրի շուրջը կատարվող բանակցությունների ժամանակ ձգտում էր Ռուսաստանի ազդեցությունը տարածել նաև Արևմտյան Հայաստանի վրա: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով << Հայկական Հարցը>> առաջին անգամ պատմության մեջ միջազգային օրինականություն է ստանում: Սակայն Սան – Ստեֆանոյի պայմանագիրը թշնամանքով ընդունեցին եվրոպական մեծ տերությունները, քանի որ նրանք չէին կարող թույլ տալ որպեսզի Ռուսաստանի ազդեցությունը ուժեղանար Փոքր Ասիայում: Դա կարող էր ազդել Եվրոպական մեծ տերությունների շահադիտական նպատակների վրա:

Ռուսաստանը, հաշվի առնելով երկրի տնտեսական և ռազմական ծանր դրությունը, հարկադրված էր հրաժարվելու նվաճած տարածքներից՝ ներառյալ Արևմտյան Հայաստանից ինքնավարությունից: Մեծ տերությունների ճնշման տակ Ռուսաստանը համաձայնություն տվեց, որպեսզի հրավիրվի Բեռլինի միջազգային կոնգրեսը. ուր Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը վերափոխվեց 61-րդ հոդվածի:Դառը փորձը ցույց տվեց հայ գործիչներին, որ եվրոպական պետություններն ամենևին էլ քրիստոնյա ժողովուրդների փրկիչները չեն:

Թեև <<Հայկական Հարցը>> միջազգայնացվեց, սակայն այն միևնույն ժամանակ պատուհաս դարձավ հայ ժողովրդի գլխին:<<Հայկական Հարցի>> արխարխումը առիթ դարձավ հայ ժողովրդի հետագա կոտորածների, անառիթ ջարդերի համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վարագ, Պարբերաթերթ Վասպուրականի հայրենակցական միության, 51-52, 2004-2005, խմբագրական կազմ՝ Վարդան Թովմասյան, Մկրտիչ Սոսիկյան:

2. Ջոն Կիրակոսյան , Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Երևան 1978

3. Խաչիկ Բաղալյան, Հայաստանը ռուս-թուրքական պատերազմում/1877-1878 թթ/, Երևան,1952

4. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Հ.Ա., Փարիզ, 1934թ

5. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923թթ.), պրոֆ. Ջ.Կիրակոսյանի խմբ., Երևան, 1972թ.

6. Ա.Եսայան, Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965թ.

7. Մկրտիչ Խրիմյանը Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց 1892թ. իսկ օծվեց 1893թ, Սբ. Էջմիածնի տաճարում:

8. История дипломатии, т2 (В.М.Хвостов), Москва, 1963

Բովանդակություն

Ներածություն…… 1

1877-1878 թթ. ՌՈՒՍ- ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ…… ……2

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ…… ……5

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ, ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ…… 8

Վերջաբան……14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ……15

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթացներ

Լուսինե Ալբերտի Կյուրեղյան

«Շուշիի կրթամշակութային կյանքը 1820-1920թթ.»

Հետազոտական աշխատանք

Ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Սամվել Աղաջանյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... **Ошибка! Закладка не определена.**

ԳԼՈՒԽ 1. ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ՄԱՄՈՒԼ 5

ԳԼՈՒԽ 2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ 9

ԳԼՈՒԽ 3. ՆՅՈՒԹԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ **Ошибка! Закладка не определена.**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 19

Ներածություն

Ազգային արժեքների ստեղծման ու պահպանման գործում հսկայական է ազգային մշակույթի դերը: Ազգային մշակույթի համակարգում են մշակվում և ստեղծվում ազգային արժեքները, որոնց միջոցով պահպանվում, վերարտադրվում և զագանում է հայոց արժեհամակարգը: Համաշխարհայնացման մեր ժամանակներում հատկապես կարևորվում է մշակույթի ազգապահպան գործառույթը, մշակութային ժառանգականության ապահովումը: Կրթության և գիտության համակարգերի միջոցով հայկական մշակութային ժառանգությունը ոչ միայն փոխանցվում է նոր սերունդներին, այլև վերջիններիս ջանքերով վերարտադրվում է, թարմացվում և զարգանում: Ազգային կրթությունը, գիտությունը, գրականությունը, մամուլը, արվեստը, հասարակական կյանքի կազմակերպման իրավաքաղաքական ձևերը մշտապես նպաստել են, որպեսզի հայ ժողովրդի տարբեր հատվածները թե՛ հայրենիքում, թե՛ Սփյուռքում իրենց գիտակցեն որպես մեկ ընդհանուր հայկական մշակույթի կրողներ և սերնդեսերունդ վերարտադրեն իրենց մշակութային ժառանգությունը: Հայ ժողովուրդը, դեռ հնագույն ժամանակներից կերտելով իր անընդհատ պատմությունը, ազգային մշակույթը, շարունակաբար ապրել ու ստեղծագործել է քաղաքակրթությունների բոլոր հերթափոխությունների ժամանակաշրջանում: Յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանում մեր ազգային մշակույթը հավասար երկխոսության մեջ է մտել ժամանակի զարգացած մշակույթների հետ:

XIX դ. սկսած ինքնատիպ ձևերով և տարաբնույթ գաղափարներով է դրսևորվում հայկական մշակույթը: Խնդիրն այն է, որ նոր ժամանակներում հայոց քաղաքական, ազգային ու հասարակական կյանքում տեղի ունեցած էական տեղաշարժերին զուգընթաց՝ երկրամասի ժողովուրդը, հենվելով նախնիների ստեղծած մշակութային արժեքների վրա, կերտեց ժամանակի պահանջներին համահունչ իր մշակույթը: Դրա զարգացման մեջ ներքաշվեցին հայ մտավորականության նոր կարող ուժեր, մի շարք հասարակական կազմակերպություններ, որոնք բեղմնավոր գործունեություն ծավալեցին Հայաստանի տարբեր շրջաններում (նաև՝ Արցախում)՝ նպաստելով ժողովրդի հոգևոր վերակենդանացմանն ու վերափոխմանը: Հարկ է նշել, որ XIX դ. առաջին կեսին (1820-ական թթ.-ից սկսած) կարևորվեց հատկապես Շուշիի դերը, որը կարճ ժամանակամիջոցում դարձավ արևելահայոց և ողջ կովկասյան տարածաշրջանի մշակութային խոշոր կենտրոններից մեկը: Շուշիում մեծ գործունեություն են ծավալել տաղանդավոր գիտնականներ(տարբեր

բնագավառներում), արվեստի, գրականության, ռազմաքաղաքական, հոգևոր-մշակութային ասպարեզի ականավոր գործիչներ:

Հետազոտական աշխատանքը, որ մտադիր ենք կատարել վերլուծության և ընդհանրացման մեթոդական հնարներով, հետևյալ նպատակներին և խնդիրներին կհանգեցնի.

Ա. վերլուծության ենթարկել Շուշիի կրթամշակութային կյանքը 1820-1920թթ., բացահայտել Շուշիի դերը մշակույթի զարգացման գործում,

Բ. նպաստել աշակերտների կողմից մշակույթի ազգապահպան գործառույթի կարևորությունը գիտակցելուն,

Գ. աշակերտներին ծանոթացնել և սովորեցնել պահպանել ազգային արժեքները:

1.Կրթական համակարգ և մամուլ

XIX դ. սկզբներին Ռուսաստանի հետ Արցախի միացումից հետո աշխուժացավ մշակութային կյանքը: Դրան նպաստեցին նաև կապիտալի նախասկզբնական կուտակմանը հատուկ երևույթները: Կյանքը նոր խնդիրներ էր դնում մշակութային գործիչների առջև: Լուսավորության տարածումը դժնդակ ժամանակներին դիմակայած ժողովրդին գրին ու գրականությանը հաղորդակից անելը դառնում էր հայ գործիչների առաջնահերթ խնդիրներից մեկը:

Նոր ժամանակը հրամայաբար թելադրում էր, որպեսզի մատաղ սերնդի կրթության գործը համապատասխանեցվի իր պահանջներին, այն է՝ աշխարհականացմանն ու ժողովրդականացմանը, մանկավարժական առաջավոր մեթոդների և կրթական միասնական համակարգի կիրառմանը:

Դարասկզբին Գանձասարի և ս. Հակոբա վանքերի ու Շոշի եկեղեցուն կից գործում էին դպրոցներ: Առաջին երկու դպրոցներում բեղմնավոր գործունեություն էր ծավալել Հովսեփ վարդապետ Տեր Ավագյանը (Արցախեցի), որը հեղինակել է աստվածաբանական, ճարտասանական, քերականագիտական բնույթի աշխատություններ: Նրա աշակերտներից էր Պողոս վարդապետ Ղարաբաղցին, որի մոտ սովորել են Մեսրոպ Թաղիադյանը և Ստեփանոս Նազարյանը:

Մ. Թաղիադյանը պատմում է, որ «իմաստասեր», «գիտնական», վարդապետ Հովսեփ Արցախեցուն և Պողոս Ղարաբաղցուն Շուշու հարուստները բերել էին տվել իրենց որդիներին ուսուցանելու համար[1]: Օրեցօր Շուշին դառնում էր ողջ Այսրկովկասի հայության տնտեսական ու մտավոր կենտրոններից մեկը:

Շուշի այցելած օտար ճամփորդները այն անվանում էին «Հայոց փոքրիկ Փարիզ»[2]:

1862-63 թթ. մարդահամարի տվյալներով Բաքվում բնակվում էր 14897, Շուշիում՝ 19765 մարդ: Բարգավաճող հայկական քաղաքը դեպի իրեն էր ձգում տարբեր ազգերի ներկայացուցիչների:

1823թ. Շուշի են գալիս Բազելի «Ավետարանական քարոզչական ընկերության» ներկայացուցիչներ Ավգուստ Դիտրիխն ու Ֆիլիցիան Զարեմբան, որոնք 1827թ. հիմնում են հայկական ուսումնարան(Լեմսի շկոլը), որը պատրաստել է մեծ թվով ուսուցիչներ և քարոզիչներ:

[1] Մ. Թաղիադյան, Ճանապարհորդութիւն ի Հայս, էջ 292
[2] «Ազգ» 9 մայիսի, 1997

1830-ական թվականներին Արցախի թեմում գործում էին 25 հայկական դպրոցներ, ուր սովորում էր 252 աշակերտ: Միայն Շուշի քաղաքում 1835թ. կար 3 հայկական դպրոց՝ 100 աշակերտով[3]:

1837թ. ցարական կառավարության հրամանագրով արգելվեց Բազելի քարոզչական ընկերության գործունեությունը: Նույն թվականին էլ կայսերական հրամանով Շուշի փոխադրված Ղարաբաղի թեմի կոնսիստորիայի նախագահ նշանակվեց ժամանակի նշանավոր քաղաքական-մշակութային գործիչ Հասան-Ջալալյան տոհմի շառավիղներից Բաղդասար Միտրոպոլիտը (1775-1854թթ.), որը մեծագույն նպաստ բերեց Արցախի կրթական-մշակութային կյանքի աշխուժացմանը: Նրա ջանքերով էլ 1838թ. հիմնվեց Շուշիի թեմական դպրոցը: 1870-ին այն ունեցել է 158, 1893-ին՝ 492, 1909-ին՝ 374 աշակերտ[4] : Այն գործել է մինչև 1920թ. ողբերգական դեպքերը, երբ հրի մատնվեց քաղաքի հայկական թաղամասը: Թեմական դպրոցի 75-ամյա հոբելյանին նվիրված մեծանուն շուշեցին՝ Լեոն գրել է «Պատմություն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգևոր դպրոցի»(1838–1913թթ.) հայտնի աշխատությունը: Այն հրատարակվել է Թիֆլիսում 1914թ. նույն դպրոցի հովանավորությամբ:

Տարբեր տարիների այստեղ դասավանդել են հայ մշակույթի նշանավոր դեմքեր Պ. Պռոշյանը, Մակար Բարխուդարյանը, Ս. Մանդինյանը, Մ. Աբեղյանը, Լ. Մանվելյանը, Ե. Լալայանը, Ա. Կանայանը, Ստ. Դեմուրյանը, Վրթ. Փափազյանը, Հ. Աճառյանը, Ա. Չիլինգարյանը, Նիկոլ Աղբալյանը, Սպիրիդոն Մելիքյանը, Լ. Թախտաջյանը(ակադեմիկոս Արմեն Թախտաջյանի հայրը), Ա. Տեր-Պողոսյանը, Հ. Մուսայելյանը, Խ. Սամվելյանը և ուրիշներ: Նրանց շնորհիվ դպրոցներում փոխվել են ուսուցման, դաստիարակության հին ձևերը, կազմվել նոր ուսումնական պլաններ, ծրագրեր, դասագրքեր:

Թեմականի բազմաթիվ շրջանավարտներ իրենց կրթությունը շարունակելով արտասահմանյան բարձրագույն հաստատություններում դարձել են նշանավոր գիտնականներ, մշակութային, հասարակական, պետական գործիչներ՝ Սիմոն Հախումյանը, Կոստանդին Մելիք-Շահնազարյանցը, Լեոն, Մուրացանը, Արսեն Տերտերյանը, քիմիկոս Հակոբ Հովհաննիսյանը, Գաբրիել Ղուլիքեվիչյանը և ուրիշներ:

Հայ հայրենասեր գործիչները մեծ ջանքեր են թափում նաև Արցախում աղջիկների կրթության և դաստիարակության գործը կազմակերպելու համար:

Շուշեցի մեծահարուստ Համբարձում Հախումյանի կնոջ՝ Մարիամ Հախումյանի կազմած ծրագրով և գործադրած եռանդի շնորհիվ 1864թ. ապրիլի 7-ին Շուշիի նրա

[3] Վ. Բալայան, Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2002թ., էջ 280
[4] Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 8, Երևան 1982, էջ 601

բնակարանում բացվում է Օրիորդաց դպրոց, որի նպատակն էր պատրաստել «լուսավորյալ վարժապետուհիք և լուսավորյալ մայրեր»[5]: Այս դպրոցը պահպանվել է մինչև 1920 թվականը: Դպրոցական այս ուշագրավ նախաձեռնությունը լայն արձագանք գտավ Հայոց Արևելից կողմերում: Երկսեռ դպրոցներ են բացվում Շուշի և Նուխի քաղաքներում:

XIX դարի վերջերին Շուշիում բացվում է ռուսական իգական Մարինսկու դպրոցը, որի աշակերտների մեծ մասը հայուհիներ էին: Այսպես, 1898թ. 257 աշակերտուհիներից 240 հայուհիներ էին, 14 հոգի՝ ռուս, 2-ը՝ թաթար և մեկ հոգի այլք:

Շուշեցի մեծահարուստ Պողոս, Արշակ, Հակոբ և Աբրահամ Ղուկասյան եղբայրները իրենց հանգուցյալ քրոջ հիշատակը հավերժացնելու նպատակով Ամենայն Հայոց կաթողիկոսի տրամադրության տակ են դնում երկու հարյուր հազար ռուբլի և Շուշիում գտնված իրենց սեփական տունը՝ «Մարիամ Ղուկասյան» անունով օրիորդաց դպրոց հիմնելու համար: Դպրոցը բացվել է 1914-1915 ուս. տարում և ունեցել է լրիվ միջնակարգ դասընթաց:

Արցախահայության կյանքում կարևոր երևույթ էր 1881թ. Շուշու ռեալական ուսումնարանի բացումը: Դպրոցը պետական էր, որտեղ ուսուցումը տարվում էր ռուսերեն լեզվով: Հայերը կազմում էին ռեալականի 80 տոկոսից ավելին, թաթարները՝ մոտ 15 տոկոս, և ավելի չնչին է ռուս ու վրացի աշակերտների թիվը: Պահվել է պետական միջոցներով, ունեցել է հարուստ գրադարան և ուսումնական գրադարան: XX-րդ դ. սկզբին շուշեցի վաճառական Գ. Ա. Առաքելյանի միջոցներով կառուցվել է ուսումնարանի նոր շենք: 1920 թ.-ին դարձել է երկրորդ աստիճանի հանրակրթական միջնակարգ դպրոց:

Շուշիում կրթական կյանքի նման պոռթկումը ենթադրում է ունենալ նաև հարուստ տպագրական և հրատարակչական բազա:

Հայ տպագրության գործը 1512թ. սկզբնավորվելով Վենետիկում, երկար ժամանակ զարգանում էր օտար ափերում: 1771թ. Էջմիածնում հիմնվում է տպարան: 1828թ. հայրենի հողում՝ Շուշիում Բազելի քարոզչական ընկերության կողմից ստեղծվում է երկրորդ տպարանը, որտեղ տպագրվում է մեսրոպատառ առաջին գիրքը «Պատմութիւն Սուրբ Գրոց» խորագրով: Չբավարարվելով Շուշիում կատարած հրատարակություններով, Բազելի քարոզչական ընկերությունը գրքերի մի մասը տպագրել է տալիս Մոսկվայում՝ Լազարյան ճեմարանի տպարանում[6]: 8

[5] Վ. Բալայան, Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2002թ., էջ 281

[6] Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 1946թ. էջ 231

տարվա ընթացքում նրանք հրատարակեցին կրոնական, բարոյախոսական, գիտական և ուսուցողական բնույթի գրքեր:

Բազելցի քարոզիչները Շուշիից հեռանալուց հետո տպարանը գնում է Բաղդասար միտրոպոլիտը և այն վերանվանում «Հայոց հոգևոր տեսչության տպարան»: Բաղդասար միտրոպոլիտի մահվանից հետո (1854թ.) Վեհապետյանը հայ մեծահարուստների նվիրատվությունների հաշվին պահում է տպարանը այն անվանելով «Տպարան Սրբոյ Էջմիածնի»:

1881թ. Շուշիում բացվեց Միրզաջան Մահտեսի Յակոբյանցի (Հակոբյան) տպարանը, որը գործեց շուրջ 25 տարի: Այստեղ առաջին անգամ առանձին գրքով լույս տեսան Ռաֆֆու «Խենթը», Մ.Աբեղյանի «Նմուշներ» բանաստեղծությունների ժողովածուն, «Դավիթ և Միհր» ուսումնասիրությունը, Լեոյի «Վեպ թե պատմություն», «Վահան Մամիկոնյան», «Իմ հիշատակարանը»: Թարգմանական գրականությունից հիշատակելի են Ֆիրդուսու «Շահնամեն»(1893), Ա. Դոդևի, Ջ.Վ.Դրեպերի և այլոց գործերը:

1905թ. հետո Շուշիում սկսեցին գործել Բագրատ Տեր-Սահակյանի և Մելքոն Բաբաջանյանի տպարանները, որոնց գործունեությունն ընդհատվեց 1920թ. մարտի 23-ին՝ Շուշիի հայկական թաղամասի ավերման ժամանակ: 1827-1920թթ. ընթացքում Շուշիի հինգ տպարաններում հրատարակվել է ավելի քան 150 անուն գիրք:

1874թ. մինչև 1920թ. Շուշիում լույս է տեսել 21 անուն թերթ և հանդես, որից 19-ը՝ հայերեն, 2-ը՝ ռուսերեն:

2. Գրականություն և արվեստ

1820-1920թթ. Արցախում բուռն զարգացում է ապրում հայագիտական միտքը: Հանդես եկան նաև գեղարվեստական խոսքի մեծ վարպետներ: Հրապարակ են գալիս բառարանագիտական և հայոց լեզվի քերականությանը նվիրված աշխատություններ: 1829թ. Շուշիում լույս տեսավ Պողոս Ներսիսյանց Ղարաբաղցու «Համառոտ հայկական քերականութիւն», 1830թ. Հովսեփ վարդապետ Արցախեցու «Համառոտ բառագիրք ի գրաբարէ յաշխարհաբարն (ի պիտոյ համբակաց)» ուսումնասիրությունները և 1840թ. «Առաջին մասն փիլիսոփայութեան, որ ասի տրամաբանութիւն» քերականության դասագիրքը:

XIX դարի երկրորդ կեսին Շուշիում լայն գործունեություն է ծավալում Միրզա Ֆարուխը (Հարություն Ներսեսի Ղարաբաղցի): Ծնվել է 1798թ. Թաղուտ գյուղում: 1805թ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ գերի է ընկնում: Տիրապետելով արևելյան և եվրոպական մի շարք լեզուների՝ նրան պետական ծառայության են ընդունում, դառնում է Թեհրանի սարդարի քարտուղարը: Պարսկական արքունիքում ստանում է Ֆարուխ անունը: 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ նրան հաջողվում է փախչել գերությունից և հիմնավորվել հայրենի քաղաքում՝ Շուշիում: Նա, համագործակցելով Բազելի ավետարանական քարոզչական ընկերության ներկայացուցիչների հետ, հիմք է դնում գիտական-ուսումնական աշխատությունների հրատարակմանը: Գրել է Ղարաբաղի պատմությունը «Թարիխ-Սաֆի» վերնագրով, որտեղ շարադրված է սկզբից մինչև 1820-ական թվականների իրադարձությունները:

Առանձնապես բեղուն կյանքով ապրեց Արցախը և հատկապես նրա կենտրոն Շուշին 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին: Այստեղ ծնվել և ստեղծագործել են հայագիտության և հայ գրականության շատ երախտավորներ:

Հայ խոշորագույն պատմաբան, հրապարակախոս, գրող, գրականագետ, Լեոն (Առաքել Բաբախանյան, 1860-1932թթ.) ծնվել է Շուշի քաղաքում, ուսանել տեղի թեմական դպրոցում: Նրա 60-ի հասնող կապիտալ աշխատությունների, հարյուրավոր բազմաբնույթ հոդվածների մեջ ամփոփված են հայոց պատմության և գրականության բազմապիսի հարցեր: Լեոյի ուսումնասիրությունները գրված են հայրենասիրական շնչով և լեզվական հրապուրիչ բարձր ոճով:

Լեոյի աշխատությունների մի զգալի մասը՝ «Վեպ թե պատմություն» (1887), «Կույր աղջիկը», «Վահան Մամիկոնյանը» (1888), «Իմ հիշատակարանը», «Սպանված հայրը» (1891), «Թաթախման գիշերը» (1892) և այլն առաջին անգամ տպագրվեցին Շուշիում:

Պատմագիտական աշխատություններից հատկապես արժեքավոր են Լեոյի «Հայոց պատմություն» եռահատոր աշխատությունը(հրատ՝ 1917-47թթ.),

«Հայկական տպագրություն» (հ. 1-2, 1901-02), «Ստեփանոս Նազարյանց» (հ.1-2,1902), «Գրիգոր Արծրունի» (հ.1-3,1902-1905), «Հայոց հարցը» (1906), «Վանի թագավորությունը» (1915), «Հայոց հարցի վավերագրերը» (1915), «Անի» (1946), Երևանի և Ղարաբաղի թեմական դպրոցների պատմությանը նվիրված մենագրությունները (1914):

1917-1923 թվականներին Արցախի պատմության հարցերին է անդրադարձել Միրզա Տեր-Սարգսյանը(Միտսարը): Նա ականատեսի և դեպքերի մասնակցի հավաստիությամբ ներկայացրել է մեր պատմության կարևոր, երբեմն վիճահարույց շրջանի մանրամասները: Նրա գրչին է պատկանում «Կաթիլներ» խորագրով արձակ գործերի ստվարածավալ ժողովածուն, որ հրատարակվել է 1914թ. Շուշիում:

Անգնահատելի է ականավոր ազգագրագետ, բանագետ ու հնագետ Երվանդ Լալայանի (1864-1931) դերը հայ ազգագրության և հնագիտության զարգացման բնագավառում: Ժնևի և Լոզանի համալսարաններում հիմնավոր կրթություն ստանալուց հետո նա 1896թ. Շուշիում հիմնեց «Ազգագրական հանդեսը», իսկ 1900թ. Թիֆլիսում ստեղծեց Ազգագրական հրատարակչական ընկերությունը: Իր շուրջը համախմբելով ժամանակի լուսավոր մարդկանց՝ Ե. Լալայանը նոր աստիճանի հասցրեց ազգագրական-մարդաբանական-հնագիտական աշխատանքների դրվածքը ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Կովկասում: Ընկերության և նրա անխոնջ ղեկավարի ջանքերի շնորհիվ ժողոված բազմապիսի նյութերը հիմք հանդիսացան Վրաստանի և Հայաստանի պատմության թանգարանների հիմնադրման համար:

Շուշիում ծնվել և մինչև 1878թ. ապրել է հայ արձակի խոշորագույն դասականներից մեկը՝ Մուրացանը (Գրիգոր Տեր-Հովհաննիսյանը, 1851-1908): Նա լայն ընդգրկումների խոշոր գեղագետ է: Մուրացանի կարծիքով ազգության, ինչպես և հայրենիքի պահպանման հիմքը գյուղացիությունն է: Ուստի, նրա ստեղծագործու-թյունների հիմնական թեման գյուղն ու գյուղացիությունն է: Նա օժտված է պատմականության խոր զգացողությամբ: Մուրացանը գրական ճանաչման արժանացավ իր «Ռուզան կամ հայրենասեր օրիորդ» (1881թ.) պատմական դրամայով, որի ներկայացմամբ էլ հենց 1891թ. բացվեց Շուշիի Խանդամիրյանների թատրոնի խաղացանկը: Նրա ստեղծագործությունների գլուխ գործոցը դարձավ «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը:

Արցախում հայ գրականության զարգացմանը նպաստում է թարգմանական գործի կազմակերպումն ու հրատարակումը: Շուշիում առաջին անգամ հայերեն հրատարակվեց Գոգոլի «Տարաս Բուլբան», Ֆիրդուսու «Շահնամեից» «Ռոստոմ եւ Զոհրաբը», «Զոհրակ Բիւրասպի Աժդահակը» և այլն: «Քնար խոսնակ» հանդեսի

էջերում թարգմանաբար տպագրվել են Հայնեի, Գյոթեի, Շիլլերի, Բայրոնի, Պուշկինի, Լերմոնտովի, Դոբրոլյուբովի ստեղծագործությունները:

Շուշիի մշակութային եռուզեռի պայմաններում աշխույժ ու բեղմնավոր է եղել Շուշիի թատերական կյանքը:

1860-ական թվականներին Շուշիում գործում էին սիրողական թատերական խմբեր: Դպրոցների բարձր դասարանների աշակերտների և ուսանողների ուժերով կազմակերպվում էին գրական-գեղարվեստական երեկույթներ, ցերեկույթներ, թատերական ներկայացումներ:

Պրոֆեսիոնալ թատրոն ստեղծելու ճանապարհին առաջին քայլը կատարվեց 1865թ., երբ Շուշի են գալիս Թիֆլիսահայ դերասաններ Գ. Չմշկյանը, Մ. Ամերիկյանը և Ս. Մանդինյանը և տեղական ինքնագործ ուժերի հետ միասին բեմադրում «Սամվել», «Վարդան Մամիկոնյան», «Շուշանիկ» և այլ ներկայացումներ: Այս ամենը վարակիչ եղան Շուշիի թատերասեր հասարակության համար: 1868թ-ից սկսած՝ Համբարձում աղա Հախումյանի տան դահլիճում, թեմական դպրոցում, քաղաքային ակումբում բեմադրվել են նաև Ղարաբաղի բարբառով գրված պիեսներ:

1882 թ. ամռանը «Պեպո», «Խաթաբալա», «Ո՞վ է մեղավոր» ներկայացումներում հանդես եկավ հայ բեմի մեծ վարպետ Պետրոս Ադամյանը: Ամենից առաջ ժողովուրդը նրան սիրեց Համլետի դերակատարման համար:

1880-ական թվականներին Շուշիում են լինում նաև Սաֆրազյան ամուսինները՝ տեղի սիրողների հետ խաղալով «Սամվել», «Շուշանիկ», «Երվանդ կամ Սանդուխտ կույս» և այլ պիեսներ: Շուշիի թատերական կյանքը նոր հունով է տարվում, երբ 1891 թ. հիմնադրվում է «Խանդամիրյան» թատրոնը: 350 տեղանոց պրոֆեսիոնալ թատրոնը իր գործունեությունը սկսեց «Ռուզան» պատմական դրամայի բեմադրությամբ:

Խանդամիրյանի թատրոնը գործեց մինչև 1905 թ. ազգամիջյան կռիվները, որի արդյունքում այն հիմնավեր դարձավ:

Թատրոնի հիմնադիրը Մկրտիչ (Նիկիտա) Աբրահամի Խանդամիրյանն էր, որը թատերական կայուն գիտելիքներ էր ստացել Փարիզում: Կարճ ժամանակում «Խանդամիրյան» թատրոնը անուն է հանում ամբողջ Կովկասում: Ժամանակի մամուլը գրում է. «Ոչ միայն գավառում, այլ նույնիսկ Թիֆլիսում էլ անկարելի է մի ամսվա ընթացքում 10-12 ներակայացում տալ հայերի համար միայն, որպեսզի ամեն անգամ թատրոնը այսքան լիքը լինի և կամ թե համարյա թե լիքը»[7]:

[7] Վ. Բալայան, Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2002թ., էջ 289

1891 թ. մինչեւ 1896 թ. բեմադրվել է 119 ներկայացում: Հայ և ռուս դրամատուրգներից բեմադրվել են առավելապես Հ. Պարոնյանի, Շիրվանզադեի, Պուշկինի, Գոգոլի, Լերմոնտովի, Օստրովսկու, Նայդյոնովի, Չեխովի, Նեմիրովիչ Դանչենկոյի, արևմտաեվրոպական գրողներից՝ Իբսենի, Սերվանտեսի, Շիլլերի, Մոլիերի, Հյուգոյի, Ջիակոմետտիի, Զուդերմանի և այլոց ստեղծագործությունները: Չնայած Խանդամիրյանի թատրոնը 1905թ. հրո ճարակ դարձավ, բայց և այնպես չէին դադարում բեմադրությունները Շուշիի թեմական դպրոցում, Մելիք Հայկազյանի տան դահլիճում, քաղաքային ակումբում:

Արցախում հյուրախաղերով հանդես են եկել հայ թատրոնի խոշորագույն դեմքեր Սիրանույշը, Գ. Պետրոսյանը, Հ. Աբելյանը, Գ. Ավետյանը, Հ. Զարիֆյանը, Վ. Փափազյանը, Ա. Մսկանյանը, Օ. Գուլազյանը: Շուշիում են ծնվել հայ բեմի ականավոր գործիչներ Գրիգոր Ավետյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Վաղարշ Վաղարշյանը:

1910թ. Շուշիի դերասանական ամենասիրված խմբերից մեկը Ամո Խարազյանի ղեկավարած խումբն էր:

Շուշիի բնակչությունը ծանոթ էր նաև կրկեսային արվեստին: 1848թ. քաղաքում տրվեց կրկեսային ներկայացում: Նմանօրինակ հանդեսներ կազմակերպվել են նաև «Խանդամիրյան» թատրոնում:

Շուշիում ստեղծվել էին հայ ժողովրդական գուսանական և հոգևոր երաժշտության բարձրարվեստ գործեր: Ղարաբաղը հայկական ավանդական հորովելի նշանավոր կենտրոններից է: «Մաճկալ ես…» երգի մեղեդին հորինվել է Շուշիում՝ ինքնուս կոմպոզիտոր Եգոր Հասրաթյանի կողմից, իսկ «Մի լար բլբուլ» երգի մեղեդին ստեղծել է շուշեցի կոմպոզիտոր Եղիշե Բաղդասարյանը: XVIII դարի վերջերից մինչև նորագույն ժամանակները հայ գուսանական արվեստին մի ամբողջ բույլ է տվել Մեծ Թաղլարեցի Չիթչյանների տոհմը: 1895 թ. այստեղ երգչախումբ են կազմակերպել և համերգներ տվել Գ. Միրզոյանը, Ս. Դեմուրյանը, որը 1916-17թթ. բեմադրել է Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան: Երկար տարիներ նրա ստեղծած երգչախումբը մասնակցել է քաղաքի եկեղեցիների պատարագներին: Մինչև 1920թ. Շուշիում փողային նվագախումբը ղեկավարել է Հ. Իոաննիսյանը: Շուշվա երաժշտական հարուստ ավանդույթների շարունակողներն էին թառահարներ Միրզա Սադղջյանը (1846-1902), Գրիգոր Մելիքովը (1895-1929), Բալա Մեյիքյանը(1888-1935), Սողոմոն Սեյրանյանը(1907-1974), քամանչահարներ՝ Ավանեսը, նրա աշակերտներ՝ Սաշա Օգանեզաշվիլին(1889-1932), Լևոն Կարախանը (1889-1937): Տարբեր ժամանակներում Շուշիում համերգներով հանդես են եկել հայ ճանաչված երգիչներ ու երգահաններ Կոմիտասը, Քրիստափոր Կարա Մուրզան,

Արշակ Կոստանդյանը,Բեգլար Ամիրջանյանը, մեծ թատրոնի մենեջիչ Ներսես Շահլամյանը, Գրիգոր Սյունին(Միրզոյան), Դանիել Ղազարյանը, Նիկոլայ Թեյմուրազյանը, Եղիշե Բաղդասարյանը և ուրիշներ[8]:

Իրավամբ Շուշին ժամանակակիցները անվանել են «Անդրկովկասի կոնսերվատորիա»[9]:

19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբներին աննախընթաց զարգացում է ապրում հայ կերպարվեստի արցախյան դպրոցը:

Ստեփան Աղաջանյանը (1863-1940) ծնվել է Շուշիում, սովորել տեղի թեմական դպրոցում և ռեալական ուսումնարանում: 1886 թվականից ուսումը շարունակել է Ֆրանսիայում և 1900 թվականին վերադարձել հայրենի քաղաք: «Հոր դիմանկարը», «Մոր դիմանկարը», «Քրոջ դիմանկարը», «Մտորումները», «Մարիետա Շահինյանը» և այլ գործերով նա նոր որակի հասցրեց հայկական դիմանկարային արվեստը: Ստեփան Աղաջանյանը կապող օղակ է եղել 19 և 20-րդ դարերի հայ գեղանկարիչների միջև:

Գեղանկարչության աչքի ընկնող դեմքերից էր Մարգարիտ Ալեքսանյանը (1858-1902): 1881 թ. Շուշիում նա հրատարակել է «Հայկական գեղանկարչություն» ալբոմը, որի մեջ արտացոլված են հայկական բնաշխարհը և Ղարաբաղին առնչվող տարբեր թեմաներ: Մ. Ալեքսանյանի ձեռագիր աշխատանքներից մեկը՝ Ավետարանը, այժմ պահպանվում է Էջմիածնի Մայր եկեղեցու թանգարանում:

Հայ նշանավոր քանդակագործ Հակոբ Գյուրջյանը (1881-1948) ծնվել է Շուշիում: Սովորել է Շուշիի և Մոսկվայի ռեալական ուսումնարաններում, 1907-10 թթ.՝ Փարիզի Ժյուլիան ակադեմիայում, ապա հաճախ էլ է Օ. Ռոդենի արվեստանոցը: Նա ստեղծել է 300-ից ավելի աշխատանքներ՝ դիմաքանդակներ, այլաբանական, կրոնական, պատմական, դիցաբանական կերպարներ, անիմալիստական գործեր: Առանձնապես հայտնի են Մ. Գորկու, Լ. Տոլստոյի, Ա. Շիրվանզադեի, Ֆ. Շալյապինի, Մ. Շիրվանզադեի, Վ. Դոբրովեյնի, Վ. Տերյանի, Գենրիետա Պասկալի դիմաքանդակները: Արվեստագետի ստեղծագործության մեջ ինքնատիպ միահյուսվել են արևելքի հնագույն և եվրոպական նոր արվեստների լավագույն ավանդույթները: Գյուրջյանի շնորհիվ հայ արձանագործությունը դուրս բերվեց համաշխարհային ասպարեզ:

Նոր շրջանում Շուշիում շարունակվեցին հայ միջնադարյան ճարտարապետության ավանդույթները: Միաժամանակ 19-րդ դարի երկրորդ կեսին

[8] Շուշի, մշակութային կյանքի մեկ դարը (1820-1920), Երևան, 1992
[9] Վ. Բալայան, Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2002թ., էջ 291

և 20-րդ դարի սկզբին քաղաքային նոր միջավայրում շինությունները կրում էին դասական ճարտարապետական ոճի դրոշմը՝ հիմքում շարունակելով պահպանել ազգայինը:

1813 թվականից հետո Շուշին արագորեն կառուցապատվում է կանոնավոր քաղաքաշինության սկզբունքով:

Մեսրոպ Թաղիադյանը, նկարագրելով 1820-ական թվականներին Շուշիում ծավալված շինարարությունը, նշում է, թե ինչպես նախկին փայտաշեն եկեղեցիների փոխարեն հայ մեծահարուստ ընտանիքների մեկենասությամբ կառուցվում են քարաշեն հոյակապ տաճարներ, երկհարկանի բնակելի տներ, հյուրանոցներ, խանութներ և կուլտուր-լուսավորական բազմաթիվ շենքեր[10]: Ելնելով քաղաքաշինության առանձնահատկություններից՝ քննարկվող ժամանակաշրջանում կազմվել և իրականացվել է Շուշիի կառուցապատման չորս գլխավոր հատակագիծ:

Շուշու հայաբնակ թաղամասերից յուրաքանչյուրն ունեցել է իր կենտրոնն ու եկեղեցին: Դրանք են՝ Կուսանաց վանք(Անապատի) միանավ, թաղածածկ, եռահարկ զանգակատնով Ս. Աստվածածինը (կառուցված 1816, չի պահպանվել), նոր կամ վերին թաղի խաչաձև գմբեթավոր Ս. Հովհաննես Մկրտիչը՝ «Կանաչ ժամ» կամ ղարաբաղցոց եկեղեցի (1818), Ագուլեցոց Ս. Աստվածածին (1822), Մեղրեցոց Ս. Աստվածածին(1838) եռանավ բազիլիկները (չեն պահպանվել), Ղազանչեցոց Ամենափրկիչ մայր տաճարը (1868-87): Վերջինս իր չափերով միայն զիջում է Երևանում կառուցվող ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն:

Առանձնակի հետաքրքրություն էր ներկայացնում Շուշիի հայկական թաղերի ժողովրդական բնակելի տների ճարտարապետությունը: Բնակելի տները 2-3 հարկանի էին՝ շինված կոպտաշար կրաքարից, իսկ շենքի անկյունները, բացվածքների շրջանակները, քիվերը, հարդարանքի տարրերը՝ սրբատաշ, երբեմն էլ նախշազարդ քարից, միջհարկային ծածկերը՝ փայտից:

1903թ. Շուշիի մասին Հրաչյա Աճառյանը գրել է. «Գեղեցիկ էր Շուշի քաղաքը … տները ընդհանրապես քարաշեն են, սպիտակ, խոշոր, տաշած քարերով շինված: Կտուրը հարթ չէ, այլ ունի եռանկյունաձև տախտակյա տանիք, որ պարսկերեն բարբառով կոչվում է թախթափուշ: Կտորները ներկված են կարմիր, և բարձունքից դիտողը կարմիր, կանաչ և սև գույների զանազանությամբ, սիրուն տեսարան ունի առաջը»[11]: Այդ ամենին լրացնելով՝ ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը, 1955թ. լինելով հայրենի երկրամասի կենտրոնում՝ Շուշիում, նկատել է. «Բոլոր տները, առանց բացառության, կառուցված են նույն տիպարով: …Ստացվել է գեղեցիկ ու

[10] Տե՛ս Մ. Թաղիադյան, էջ 266
[11] Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Եր. 1967, էջ 254

հետաքրքիր դասավորություն, որի շնորհիվ այդ քաղաքը բնավ չի կարող ձանձրացնել, չնայած բոլոր տները կառուցված են միևնույն «ճարտարապետությամբ»: … Դա բոլորովին չի խանգարել, որ Շուշին դառնա կոլորիտային, երփներանգ՝ իր կրկնություններով հանդերձ, ավելին, այդ կրկնությունները գունախաղ են ստեղծում տների տարբեր բարձրության ռելիեֆի հարստության որմնախորշերի ու պատշգամբների բազմազանության, փողոցների անսպասելի դարձերի շնորհիվ»:

Շուշիի հին բերդը՝ Շիկաքար անունով, գոյություն ուներ դեռևս միջին դարերից և հիշատակվում է Կաղանկատվացու կողմից 821թ. հակաարաբական ընդվզումների կապակցությամբ: 1720-ական թթ. Ավան հայրուրապետը, Շուշի բերդը դարձնելով իր ռազմական հենակետը, ամրացնում է նոր պարիսպներով:

Արցախի մելիքների դեմ պայքարելու նպատակով 1750-1752 թթ. Փանահ խանը, հայ վարպետների միջոցով վերակառուցելով, բերդը դարձնում է անմատչելի: Շուրջ 370 հա տարածություն զբաղեցնող բերդի արևմտյան, արևելյան և հարավային հատվածները շրջափակված են բնական պատվարներով, ինչպես դիպուկ բնու-թագրել է Հակոբ սարկավագ Շուշեցին «…յԱստուծոյ էր ամրացրել»: Մնացած հյուսիսային մասը,- նշում է նա,-շրջապատված էր 5000 կանգուն(2,5 կմ) ընդհանուր երկարությամբ պարսպապատերով, որոնց մեջ կա 50 աշտարակ և 4 դարպաս»: Պարիսպները ունեն 7-8մ բարձրություն: Բերդը ավելի է ամրացվել 19-րդ դարի առաջին քառորդում՝ ռուս-պարսկական պատերազմների ժամանակ: Շուշիի պաշտպանական հնարավորությունները մեծացնելու համար 1788-89 թթ. Կարկառի հովտում կառուցվում է 1,5 կմ պարսպագծով Ասկերանի նշանավոր բերդը:

Աղբյուրները վկայում են, որ հատկապես Շուշու գավառում բավական զարգացած է եղել գորգագործությունը: «Թեև առանձին գործարաններ չկային, բայց շատ տներում գործում են գորգ, կարպետ, ձիու չուլ և ա յլն»:

Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի ազգագրության բաժնում ցուցադրված են 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբին պատկանող գորգեր, կարպետներ, խուրջիններ, մաֆրաշներ (անկողնապարկ), աղաման, ձիու չուլ, արցախցի կանանց ձեռքերով պատրաստած, գունային երանգների և զարդապատկերների բազմազանությամբ աչքի ընկնող ասեղնագործ իրեր:

3. Նյութի ուսուցման յուրահատկությունները և դաստիարակչական արդյունավետությունը

Ոչ միայն Շուշիի կրթամշակութային կյանքը, այլև մեր ամբողջ հայրենիքի մշակույթը դասավանդելիս պետք է նկատի առնել մի շարք հանգամանքներ՝ այն որ դասավանդումը լինի արդյունավետ, չառաջանան թյուրընկալումներ նյութի ուսումնասիրման և հետազոտման ժամանակ: Արդյունավետ դասավանդումը կարևոր դեր ունի աշակերտների գիտելիքների, վերլուծական կարողությունների և հմտությունների զարգացման գործում:

Ուսումնասիրելով Շուշիի կրթամշակութային կյանքը 1820-1920թթ.-ին երեխաների մեջ պետք է փորձել արթնացնել ճանաչողական հետաքրքրությունները, սերը դեպի իր հայրենիքը և մշակույթը, ձգտումը դեպի այն արժևորելուն, պահպանելուն ու հաջորդ սերունդներին փոխանցելուն:

Ասվածը առարկայացնելու համար դասարանում կարելի է կիրառել որոշ մեթոդական հնարներ, համադրել ավանդական և ժամանակակից մեթոդները: Զրույցի, պատմելու մեթոդների միջոցով պատրաստի գիտելիքը պարզ փոխանցել սովորողներին, կիրառելով ժամանակակից մեթոդները զարկ տալ սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեությանը, գիտելիքների ձեռքբերման գործընթացում նրանց ակտիվ և անմիջական մասնակցությանը: Օրինակ, ես աշակերտներին կառաջարկեի ստեղծել ինքնագնահատման աղյուսակ (ԳՈՒՍ)[12], առաջին սյունակում աշակերտները կնշեն, թե ինչ գիտեն կամ կարծում են, որ գիտեն Շուշիի կրթամշակութային կյանքի վերաբերյալ, երկրորդ սյունակում կնշեն, թե ինչ են ուզում իմանալ թեմայի վերաբերյալ, իսկ երրորդում՝ թե ինչ սովորեցին: Կարելի էր կիրառել նաև մտագրոհը[13]:

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի

Շուշիի կրթամշակութային կյանքը թեմայի հետազոտությունը միտում է արդիականության: Հրատապությունը ավելի է խորանում, երբ գիտակցում ենք, որ կորցրել ենք մեր սուրբ հայրենիքի մի մասը, պատմամշակութային կենտրոն, որի

[12] Ս. Սարուխանյան, Ա. Դալլաքյան, Ն. Դիշաղաջյան, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008, էջ 14:
[13] Նույն տեղում, էջ 8:

դերն ու նշանակությունը մեծագույն կարևորություն է ունեցել հայ ազգի գոյատևման ու զարգացման, սերնդի դաստիարակության գործում: Ուսուցիչներս կարևորագույն խնդիր ունենք երեխաների մեջ սերմանել հայրենասիրություն, կրթել և դաստիարակել հայրենիքի արժանի զավակներ:

Եզրակացություն

Հազարամյակների պատմություն ունեցող հայկական մշակույթը առանձնահատուկ դեր է կատարել մեր ժողովրդի կյանքում: Հայկական մշակույթը հանդես է եկել որպես բարդ ու ճկուն մի համակարգ, որը ճշգրտորեն արտացոլելով դարաշրջանի էական խնդիրները՝ արձագանքել է ժամանակի ու միջավայրի պահանջներին: Այն մշտապես գտնվել է տարբեր ժողովուրդների փոխազդեցությունների ոլորտում՝ միաժամանակ պահպանելով իր ինքնատիպությունը և եզակիությունը: Մեր ազգային նկարագրին, որպես կանոն, խորթ է եղել այլ, թեկուզև ճոխ ու բազմակողմանիորեն զարգացած մշակույթներին նմանակող լինելը: Առավելապես տիրապետող է եղել բուն ազգային մշակութային արժեքների անձնվեր պահպանման և հաջորդ սերունդներին ժառանգություն թողնելու ձգտումը:

Այսպիսով, փաստերն ու մեկնաբանությունները վկայում են, որ 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին արցախահայ մշակույթը առաջընթաց քայլ է կատարում՝ իր մեջ ներառելով ժամանակաշրջանի առաջնային գաղափարները, հիմքում ունենալով ազգայինը:

Սույն թեման ուսումնասիրելով և վերլուծելով գալիս ենք այն եզրահանգմանը, որ թեմայի ուսումնասիրությունը աշակերտների մոտ կձևավորի պատմական տարբեր երևույթների, դեպքերի և անհատների գործունեության անկողմնակալ ընկալման և գնահատման կարողություն, ազգային ինքնագիտակցություն, ազգային պետության և հայրենիքի նկատմամբ հպարտության և սիրո զգացում,ազգային և համամարդկային մշակույթի ժառանգորդի գիտակցություն, կնպաստի ազգային արժեհամակարգի ոգով դաստիարակված ազատ, գիտակից անհատի ու քաղաքացու ձևավորմանը:

Պատմական հարուստ ժառանգության իմացությունն ու յուրացումը ամեն մի հայի, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր ապագա քաղաքացու պարտականությունն է: Այդ խնդրի հաջող լուծման գործում մեծ կարևորություն ունի ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը, որը յուրաքանչյուր ուսուցչի կարևորագույն խնդիրներից մեկն է:

Գրականության ցանկ

1. Մ. Թաղիադյան, Ճանապարհորդութիւն ի Հայս
2. «Ազգ» 9 մայիսի, 1997թ.
3. Վ. Բալայան, Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2002թ.
4. Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 8, Երևան 1982թ.
5. Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946թ.
6. Շուշի, մշակութային կյանքի մեկ դարը (1820-1920), Երևան, 1992թ.
7. Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967թ.
8. Ս. Սարուխանյան, Ա. Դալլաքյան, Ն. Դիշաղաջյան, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008թ.

ՀՀ Կրթության, Գիտության, Մշակույթի և Սպորտի նախարարություն

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Հայ-վրացական պատերազմը

Կատարող՝ Արայիկ Քոչարյան

Ղեկավար՝ Ս. Աղաջանյան

Հետազոտական աշխատանք

Վանաձոր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան……

Գլուխ մեկ

Տարածքային վեճերի սկզբնավորումը……...

Գլուխ երկու

Հայ-վրացական հարաբերությունները անկախության պայմաններում……..

Գլուխ երեք

Ռազմական գործողությունների սկիզբը և ընթացքը……

Գլուխ չորս

Պատերազմի ավարտը և արդյունքները ……..

Եզրակացություն……

Գրականության ցանկ……....

ՆԱԽԱԲԱՆ

1918 թ. հայ-վրացական պատերազմը հայոց պատմության քիչ ուսումնասիրված էջերից է, թեև տեղի է ունեցել ոչ վաղ անցյալում: Այն նաև առաջին հանրապետության կյանքի կարևորագույն դրվագներից է:

Հայ և վրաց ժողովուրդները հազարամյակներով ապրել են կողք կողքի և միշտ ունեցել են բարիդրացիական հարաբերություններ՝ հիմնականում համագործակցելով արտաքին մարտահրավերիների դեմ: Այս պատերազմը մեր ժողովուրդների միջև տեղի ունեցավ բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում, երբ ընթանում էր առաջին համաշխարհային պատերազմը և կործանվում էին կայսրություններ: Մասնավորապես կործանվում էր Ռուսական կայսրությունը և նրա կազմի մեջ մտնող ժողովուրդները, ստեղծելով իրենց պետությունները, ցանկանում էին առավելագույնս օգտվել նոր իրավիճակից և քաղել հնարավոր օգուտ՝ թեկուզ հարևանների հաշվին: Դրան նպաստում էին նաև տասնամյակներով կուտակված և լուծում չստացած ազգային, տարածքային վիճելի հարցերը, որոնց մեծ մասը դիտավորյալ կերպով ստեղծվում էին կայսրությունների կողմից՝ հպատակ ժողովուրդներին հնազանդ պահելունպատակով:

Այս թեման արդիական է նրանով, որ մեր երկրները նորից կանգնած են նույն մարտահրավերների առջև՝ ինչ հարյուր տարի առաջ: Նորից կանգնած ենք պետականության հնարավոր կորստի առջև և նորից հարևան մեծ տերությունները փորձում են մեր ժողովուրդներին ենթարկել իրենց շահերին, փորձում են ստեղծել ազգամիջյան բախումներ տարածաշրջանում՝ ինչպես եղավ արցախյան 44-օրյա պատերազմը՝ իր ծանր հետևանքներով:

Հարկավոր է խորապես ուսումնասիրել հայ-վրացական պատերազմը, նրա դասերը և նոր սերնդին բացատրել, թե հայ-վրացական նոր պատերազմը որքան աղետաբեր կարող է լինել երկու ժողովուրդների համար՝ անկախ արդյունքներից: Բացատրել, որ տարածաշրջանում մենք կարող ենք գոյատևել միայն համագործակցելով գլոբալ մարտահրավերների դեպքում և հասկանալ, որ վիճելի հարցերը մենք պիտի լուծենք միայն խաղաղ ճանապարհով, այլապես թուրք-ադրբեջանական դաշինքը դրանից օգտվելով՝ կարող է կործանել մեր պետականությունները և զրկել տարածաշրջանում սուբյեկտությունից:

Հաշվի առնելով թեմայի կարևորությունը և արդիականությունը, կարելի է 11-րդ դասարանում այս թեմային հատկացնել 1 կամ 2 ամբողջական դասաժամ և դասագրքի հետ զուգահեռ օգտագործելով նաև լրացուցիչ գրականություն, այն ուսումնասիրել առավել խորությամբ:

ԳԼՈՒԽ 1

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Հայ-վրացական տարածքային վեճերը ներկայացնելիս ուսուցիչը պետք է հատուկ ուշադրություն դարձնի այն հարցին, որ չնայած մեր հազարամյա հարևանությանը, մեր երկու ժողովուրդների միջև տարածքային տարաձայնությունները հիմնականում ձևավորվել են Ռուսական կայսրության կազմում ընդգրկված լինելու տարիներին: Կայսրությունը հեշտ և անցնցում կառավարելու համար ռուսական կառավարությունը վարչատարածքային բաժանումներն իրականացնում էր հաշվի չառնելով տվյալ տարածքի ազգաբնակչության պատկերը և կարծիքը: Այդ եղանակով առաջացնում էր ազգամիջյան խռովություններ, որի միջոցով էլ երկրամասը կարողանում էր պահել կառավարելի վիճակում:

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական մի քանի պատերազմներից հետո Ռուսական կայսրությունը մի քանի անգամ կատարել է Անդրկովկասի նվաճված տարածքների վարչատարածքային բաժանումներ, և ոչ մի անգամ հաշվի չի առնվել ազգային շահերը և իրավունքները, և հիմնական տուժողները եղել են հայերը: Հայաբնակ, բուն հայկական տարածքներն են միացվել վրացական կամ մուսուլմանաբնակ տարածքներին, ոչ թե՝ հակառակը:

Երբ Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին, հայ մտավորականները՝ մասնավորապես Խաչատուր Լազարյանը, Հայաստանի ինքնավարություն՝ «Հայոց թագավորություն» ստեղծելու նախագիծ է ներկայացրել ցարական կառավարությանը, որը մերժվել է: Բայց հայերի զգացմունքները որոշ ժամանակ սիրաշահելու նպատակով 1801 թ-ին ստեղծված «Վրացական նահանգ»-ի օրինակով 1828թ. մարտին Արևելյան Հայաստանի նորագրավ տարածքներից կազմվվորվում է նոր վարչական միավոր՝ «Հայկական մարզ» անվանումով, որը չուներ ինքնուրույնություն և ամբողջապես ենթակա էր ցարական կառավարությանը: 1840թ կատարվեց նոր վարչական բաժանում և ստեղծվեց երկու միավոր՝ Վրացա-Իմերեթական նահանգ և Կասպիական մարզ: Կասպիականի մեջ էին մտնում Զանգեզուրն ու Ղարաբաղը, իսկ մնացած հայկական տարածքները՝ Վրացա-Իմերեթականի մեջ: 1846թ. հիմնվում է Կովկասի փոխարքայությունը, կատարվում նոր վարչական բաժանում, բայց միայն 1949թ-ին է ստեղծվում Երևանի նահանգը: Տարբեր փոփոխություններից հետո Անդրկովկասում ձևավորվում են հետևյալ վարչական միավորները. Թիֆլիսի նահանգ, Քութայիսի նահանգ, Ելիզավետպոլի նահանգ, Բաքվի նահանգ, Երևանի նահանգ, իսկ հետագայում նաև Կարսի և Բաթումի մարզերը:[1, էջ190]

Որպեսզի աշակերտները լավ պատկերացնեն այս վարչական բաժանումները, հայկական տարածքների դրանց մեջ ընդգրկվածությունը, այդ տարածքների պատմականորեն հայկական լինելը՝ արդյունավետ կլինի այս ամենը ներկայացնել աղյուսակի միջոցով.

Պատմական Հայաստանի հնահանգներ	Ռուսական կայսրության նահանգներ	Դրանց ստեղծման թվականը	Կայսրության նահանգներներում ընդգրկված գավառները
Այրարատ	Երևանին նահանգ, Կարսի մարզ	1849 1878	Ալեքսանդրապոլի,Երևանի, Էջմիածնի,Սուրմալուի Կաղզվանի,Կարսի
Արցախ	Ելիզավետպոլի նահանգ	1868	Շուշիի,Ջաբրայիլի,Ջևանշիրի
Գուգարք	Կարսի մարզ Թիթլիսի նահանգ	1878 1846	Արդահանի Ախալցխայի,Ախալքալաքի,Բորչալուի
Սյունիք	Երևանի նահանգ Ելիզավետպոլի նահանգ	1849 1868	ՆորԲայազետ,Շարուր-Դարալագյազ Զանգեզուրի
Տայք	Կարսի մարզ Բաթումի մարզ	1878 1878	Օլթիի Արդվինի
Ուտիք	Ելիզավետպոլի նահանգ	1868	Ելիզավետպոլի,Ղազախի,Շուշիի,Ջաբրայիլի,Ջևանշիրի

Աղյուսակից տեսնում ենք, որ պատմական Հայաստնի մաս կազմող տարածքները հիմնականում մտցված են Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգների կազմի մեջ, իսկ մեզ այս դեպքում հետաքրքրող Ախալքալաքի և Բորչալուի գավառները, որոնք պատկանել են պատմական Գուգարք նահանգի Ջավախք և Տաշիր գավառներին, ընդգրկված են Թիֆլիսի նահանգի մեջ: Վիճելի է եղել նաև Ծալկայի շրջանը, որը նախկինում կազմել է Գուգարք նահանգի Թռեղք գավառը, որն էլ հետագայում հիմնականում ներառվեց Ախալքալաքի և Բորչալուի գավառների կազմում և Ղազախ գավառի մի մասը, որը , որը պատմական Ուտիք նահանգի մաս է կազմել:

Իսկ ինչպիսի ազգային կազմ ունեին հայերի ու վրացիների միջև վիճելի համարվող տարածքները: Սա նույնպես ավելի պարզ կլինի աղյուսակի միջոցով ներկայացվելու դեպքում: Աղյուսակում ներկայացված են 1897թ. Ռուսական կայսրությունում անցկացված մարդահամարի տվյալները.[5, էջ 200]

Վարչական միավոր	Կենտրոն	Տարածք կմ ^{2}	Բնակչ.	Հայեր	Կովկասյան թաթարներ	քրդեր	ռուսներ	այլ
Ախալքալաք	Ախալքալաք	2,696	72,709	52,539	6,572	810	5,453	7,335

Բորչալու	Շուլավեր	6,759	128,587	47,423	37,742	108	9,349	33,965
Ղազախ	Ղազախ	6,856	112,074	43,555	64,101	137	3,444	837

Ղազախի գավառը մտնում էր Ելիզավետպոլի նահանգի կազմի մեջ, իսկ Բորչալուի և Ախալքալաքի գավառները մտնում էին Թիֆլիսի նահանգի կազմի մեջ:

Աղյուսակից երևում է, որ Ախալքալաքի գավառի բնակչության 72,3 տոկոսը, Բորչալուի գավառի բնակչության 47,4 տոկոսը և Ղազախի գավառի բնակչության 38,9 տոկոսը կազմել են հայերը: Ախալքալաքում և Բորչալուում ամենամեծ էթնիկ կազմ ունեցող են հայերը իսկ Ղազախում՝ կովկասյան թաթարները: Ինչպես տեսնում ենք՝ վրացիների մասին խոսք չկա: Նրանց քանակն այնքան քիչ է եղել, որ անդգրկված են «այլ» սյունակի մեջ՝ հույների, հրեաների և այլ փոքրամասնությունների հետ:

Ինչպես համոզվեցինք՝ վրացական հավակնությունները չունեն պատմական և էթնիկ հիմքեր, բայց նրանք գտնում էին, որ իրենք պատմականորեն ունեն իրավունքներ այդ տարածքների վրա : Իսկ հայ գործիչները տարբեր ժամանակներում ու տարբեր ձևերով բողոքել են այս անարդարությունների դեմ, կառավարությանը առաջարկել բաժանումները կատարել բնակչության էթնիկ կազմը հիմք ընդունելով: Այդ առաջարկները երբեմն քննարկվել են, որոշ դեպքերում գտել ըմբռնում, բայց հիմնականում հանդիպել են վրաց ազգայնականների, կովկասյան թաթարների, ցարական չինովնիկների դիմադրությանը և վերջնական հաջողության ռեն հասել, քանի որ հայերի շահերը միշտ էլ հակառակ են եղել մյուսների շահերին՝ որոնք տեղավորվել են հայկական հողերի վրա և չեն ցանկացել զիջել՝ ունենալով ցարական կառավարության հովանավորությունը: Նման քննարկումներից բերենք մեկ օրինակ,որը առանձնահատուկ է նրանով, որ առաջին անգամ ռուսական արքունիքը ընդունում է, որ վարչական բաժանում պետք է կատարվի էթնիկական պատկանելիության հիման վրա: .

1917թ. ամռանը Ներքին գործերի նախարարության կողմից Անդրկովկասի զեմստվային կարգին նվիրված խորհրդակցությունը, որին մասնակցում էին նաև Անդրկովկասի ներկայացուցիչները, նույնպես որոշում է ազգային սկզբունքով փոխել երկրամասի վարչական կառուցվածքը: Այդ նպատակով ստեղծվում է հանձնաժողով: Հանձնաժողովի արձանագրության մեջ կարդում ենք. «Հանձնաժողովի անդամներ» Շահխաթունյանցը և Խատիսյանն առաջարկում են Բորչալուի գավառից դուրս բերել Լոռու ոստիկանական տեղամասը և նրան հարող Բորչալուի և Եկատերինֆելդի տեղամասերի գյուղական համայնքները, որոնք ունեն համատարած հայ բնակչություն: Նույն սկզբունքով Թրիալեթի տեղամասից Ախալքալաքի գավառին միացնել Աշղալի և Նարդեվանի գյուղական համայնքները: Գորիի գավառի Բակուրիանիի գյուղական համայնքներից դուրս բերել 2 գյուղ՝ Կզըլ-Քիլիսա (Ղզըլքիլիսա) և Մոլիտ: Թիֆլիսի նահանգից դուրս բերել Ախալքալաքի գավառը»: Հանձնաժողովի անդամների կողմից նշվում է, որ նպատակահարմար է սահմանն անցկացնել Խրամ գետով: Ոչ էական փոփոխություններից հետո Ներքին գործերի

նախարարությունն այն ուղարկում է Անդրկովկասի Հատուկ կառավարման կոմիտեին, որի հրավիրած խորհրդակցությունը (15 անդամ, յուրաքանչյուր ազգությունից 5 անդամ՝ Նոյ Ժորդանիայի նախագահությամբ) նույնպես հավանության է արժանացնում ազգային սկզբունքի հիման վրա կազմված նախագիծը: Միայն ազգային-դեմոկրատներն են հանդես գալիս Վրաստանի տարածքից Բորչալուի և Ախալքալաքի գավառների դուրսբերման դեմ: Որոշ ժամանակ անց վրացական կողմ հանդես է գալիս հայտարարությամբ և նշում, որ այդ փոփոխությունները հակասում են 1783թ. կնքված ռուս-վրացական պայմանագրի կարգավորման առարկային:

Հարցը այս ժամանակ լուծում չստացավ, որի պատճառներից է ոչ միայն վրաց և թաթար շատ գործիչների դիմադրությունը, այլև համաշխարհային պատերազմով պայմանավորված խառնաշփոթ վիճակը: Անդրկովկասի Դեմոկրատական Դաշնային Հանրապետության հռչակումից հետո, երբ դարձյալ բարձրացվում է սահմանների վերանայման հարցը, արդեն ավելի պարզորոշ, խոսքը գնում է Անդրկովկասի երեք հանրապետությունների սահմանների մասին, որոնք կապված կլինեին դաշնային սկզբունքով: Մինչև անկախ պետությունների հռչակումը վրացական Ազգային խորհուրդը ևս համաձայն էր ազգային սկզբունքով Հայաստանի կազմում տեսնել Բորչալուի գավառի մոտ 2/3-ը և ամբողջ Ախալքալաքի գավառը: [3, էջ480] Բայց իրադարձություններն այլ կերպ ծավալվեցին: Ռուսական կայսրությունը 1918թ. մարտին 3-ին Բրեստ-Լիտովսկում սեպարատ հաշտություն կնքեց գերմանական խմբավորման հետ և Արևմտյան Հայաստանի ռուսների կողմից գրավված տարածքները, Կարսը և Բաթումը անցնում են Թուրքիային: Անդրկովկասյան Սեյմը շարունակում է բանակցությունները Թուրքիայի հետ Բաթումում:

Այս պայմաններում 1918թ. մայիսին Անդրկովկասի երեք ժողովուրդները հռչակում են իրենց ազգային պետությունները՝ ունենալով միմյանց միջև տարածքային բազմզթիվ վիճելի հարցեր. հայ-վրացական, հայ- ադրբեջանական, վրաց- ադրբեջանական՝ սրանց գումարած վիճելի հարցերը Թուրքիայի հետ, հայերի գոյապահպանական խնդիրները և Եղեռնի հետևանքները, սոցիալ-տնտեսական ծանր վիճակը:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅ - ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Այստեղ աշակերտներին պետք է բացատրել, որ մեր անկախ հանրապետության ծնունդը, հռչակումը տեղի է ունեցել ոչ թե ոգևորության, հայրենասիրական ցանկությունների, պատմական արդարությունը վերականգնելու իղձի հիման վրա, այլ թելադրված է եղել ստեղծված բարդ աշխարհաքաղաքական իրավիճակով: Հայ ազգային գործիչները ամենևին չէին ձգտում անկախության և ներքին ինքնավարությունը Ռուսական Կայսրության կազմում նախընտրելի տարբերակն էր: Բայց Թուրքիան ամեն ինչ անում էր, որ Անդրկովկասը հանի ռուսական ազդեցության գոտուց, անկախացնի Ռուսաստանից, որ հեշտությամբ այն կլանի կամ ենթարկի իր ազդեցությանը: Թուրքերին այս հարցում մեծապես օգնում էին կովկասի թաթարները, ամեն ինչով համագործակցում թուրքերի հետ և հիմնականում ընդդեմ հայերի: Անկախական ձգտումները մեծ էին նաև վրացիների մոտ և նրանք շատ դեպքերում հայերին մեղադրում էին անուղղելի ռուսասեր լինելու մեջ: Հայերն իհարկե ավելի ռուսասեր էին ,քան մյուսները, բայց հայերին հետ էր պահում հիմնականուն թուրքական վտանգը, վախը՝ թուրքերի դեմ մենակ մնալուց: Հայոց ցեղասպանությունն էլ դեռ շարունակվում էր:

Արդեն նշել ենք, որ 1918թ գարնանը Անդրկովկասյան Սեյմը բանակցություններ էր վարում Թուրքիայի հետ Բաթումում և ստիպված եղավ ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի դրույթները՝ Կարսի,Արդահանի, Բաթումի բռնակցումը Թուրքիային: Դրանից հետո թուրքական զորքերը ներխուժեցին Անդրկովկաս և գրավեցին նրա մի մասը: Երբ հայ ժողովուրդը հերոսաբար մարտնչում էր թուրքերի դեմ/ Մայիսյան հերոսամարտեր/, թուրքական իշխանությունների պարտադրանքով Անդրկովկասյան Սեյմը լուծարվում է: Թուրքերը գիտեին, որ հայկական ու վրացական տարածքները առանձին-առանձին ավելի հեշտությամբ կգրավեն, քանի որ չի լինի ընդհանուր դիմադրություն և հայերից գաղտնի բանակցում էին վրաց և մուսուլման պետական գործիչների հետէ բնականաբար հայերի շահերի հաշվին: Հայ գործիչները ընդիմանում են դրան, բայց նրանք փոքրամասնություն էին: 1918թ. մայիսի 26-ին Վրաստանը և մայիսի 28–ին Հայաստանը հռչակում են իրենց անկախության մասին: Մայիսյան հերոսամարտերում հաղթանակների շնորհիվ կարողացանք ստեղծել մեր պետականությունը, բայց թուրքերի դեմ մնալով միայնակ `ստիպված Բաթումում կնքեցինք նվաստացուցիչ հաշտության պայմանագիր, որով մեզ թողնվեց ընդամենը 12 հազար կմ^2 տարածք: Բաթումի պայմանագրով Թուրքերին է անցնում նաև Ախալքալաքի գավառը, իսկ Լոռին ու Փամբակը ռազմակալված էին մնում գերմանա-թուքական զորքերի կողմից, ինչը պայմանագրով նախատեսված գծից դուրս էր:[1, էջ 56] Ծանր էր նաև վրացիների վիճակը և մեր երկու ժողովուրդները ստեղծեցին իրենց անկախ պետությունները տարաձայնությունների, հակասությունների ու փոխադարձ անվստահության մթնոլորտում:

Հայ-վրացական հարաբերությունների վատթարացմանը նպաստել է նաև Անդրկովկասյան Սեյմի կառավարությունում պորտֆելների անհավասար բաժանումը հօգուտ վրացիների և մահմեդականների, երբ 1918թ. դեկտեմբերի մոտավոր տվյալներով Անդրկովկասում վրացիները կազմել են բնակչության 28, հայերը՝ 29 և մահմեդականները՝ 43 տոկոսը:[7, էջ 125] Հայերի մոտ խորանում է այն համոզմունքը, որ նախքան Բաթումի վեհաժողովը թուրթերի ու վրացիների միջև եղել է պայմանավորվածություն, քանի որ վրաց գործիչները մեծ ջանքեր էին գործադրում Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու, հետո էլ առանձին հանրապետություններ ստեղծելու գործում, որին ձգտում էին թուրքերը և դեմ էին հայերը:

Հայ-վրացական հարաբերությունները կաթվածահար են 1918 թ հունիսին , երբ Ի. Ծերեթելին խոսում է համավրացական պետության ստեղծման մասին՝ ընդգծելով Հայաստանի ներառումը վերջինիս կազմի մեջ՝ ի շահ հայ և վրաց ժողովուրդների: Վրացիները ստեղծված իրավիճակի պատճառ համարում էին հայերի «անուղղելի ռուսասիրությունը»: Այնուամենայնիվ ակնհայտորեն նկատելի է եղել Հայաստանի ռուսամետ կեցվածքի բացասական ազդեցությունը հայ-վրացական հարաբերությունների վրա: Նախկին հակասություններն ու թշնամանքը անկախությունից հետո տեղափոխվում են միջպետական հարաբերություններ՝ վերածվելով արտաքին քաղաքական հիմնախնդրի: Սրա վկայությունն է Ա. Ահարոնյանի նամակը ուղղված վրաց կառավարությանը, որտեղ ասում է,որ հայերից շատերը կարծում են եթե հաստատենք բարեկամական հարաբերություններ թաթարների հետ, հանձին նրանց մենք կունենանք ավելի հավատարիմ դաշնակիցներ, քան վրացիներն էին:[2, էջ 65]

Անկախությունից հետո առավել նկատելի դարձավ, որ վրացիները տարածքային հավակնություններ ունեն Հայաստանի նկատմամբ: Իրավիճակն այնքան սրված էր, որ անկախացումից հետո անգամ նրանց միջև դիվանագիրական հարաբերություններ չհաստատվեցին:Վրացիները կարծում էին, որ Բաթումի պայմանագիր սահմանափակում է Հայաստանի առաջընթացի հնարավորությունները և որ հայաբնակ շրջանների ներառումը Վրաստանի կազմի մեջ կօգնի Հարավային Կովկասում ստեղծել հզոր քրիստոնեական պետություն, որը գերմանական օժանդակությամբ կկարողանա պաշտպանել բոլոր ազգային փոքրամասնությունների շահերը: Վրացիների այս առաջարկությունը բնականաբար բացասաբար է ընդունվում հայկական պատվիրակների կողմից, սակայն խնդրի առարկան կայանում էր նրանում, որ դեռևս Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտի ժամանակ Լոռին գտնվում էր վրացական աշխարհազորայինների վերահսկողության ներքո: Սկզբում վրացիները պնդում էին, որ վրացական բանակը Լոռիում կենտրոնացվել է Թիֆլիսի ուղղությամբ թուրքական հնարավոր գրոհը կասեցնելու համար: Սակայն դեպքերն այլ ընթացք են ստանում և Վրաստանի կառավարությունը փաստացիորեն հրաժարվում է դուրս բերել զորքերը Լոռվա տարածքից: Խնդրին հանգուցալուծում տալու նպատակով հարևան երկրի մայրաքաղաք է մեկնում հայոց ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանը, ով Թիֆլիսում հանդիպում է

ունենում Նոյ Ժորդանիայի հետ, սակայն այս հանդիպումը ևս արդյունք չի տալիս: Մասնավորապես հետաքրքրական է այն հանգամանքը, որ վրացական կառավարությունը հրաժարվում է պետական մակարդակով բանակցություններ իրականացնել դաշնակցական պաշտոնյաների հետ: Թիկունքում ունենալով Գերմանիայի օժանդակությունը, Վրաստանը հավակնում էր ոչ միայն վիճելի, այլև բուն հայկական տարածքների, որոնք երբևէ խնդրի առարկա չեն եղել: Տարածքային վեճերի հակվածությունը շուտով ծնում է ազգամիջյան կոնֆլիկտ, որը կարճ ժամանակում լայն ծավալներ է ընդգրկում:

Վրացական կառավարությունը հանդես է գալիս հայտարարությամբ այն մասին, որ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև սահմանների ճշգրտումն ու անցկացումը միայն հիշյալ երկրների իրավասությունն են, և որ Վրաստանի կառավարությունը կարող է այս հարցերի շուրջ անմիջական բանակցություններ վարել Հայաստանի ու Ադրբեջանի հետ, առանց Թուրքիայի միջամտության: Միևնույն ժամանակ հայտարարվում է, որ տարածքային հարցերի վերաբերյալ պայմանագիր, եթե այդպիսին կստորագրվի Թուրքիայի ու Հայաստանի միջև, Վրաստանի համար չի կարող պարտադիր լինել: Հունիսի 11-ին վրացական կառավարությունը որոշում է կազմել հանձնաժողով սահմանների ճշգրտման համար: Հանձնաժողովը պաշտպանում է Վրաստանի «տնտեսական, ստրատեգիական» սահմանները՝ նրա կազմում ընդգրկելով հայկական տարածքներ՝ ընդհուպ մինչև Սևանա լիճ:

Համատեղ քննարկման համար հրավիրված Հայաստանի կառավարության ներկայացուցիչները պնդում են ազգային սկզբունքի պահպանման հնարավորությունը: Սակայն վրացական կառավարությունը կարգադրում է գրավել տարածքը մինչև Ղարաքիլիսայի և Շահալիի միջև ընկած թունելի կենտրոնական հատվածը, ինչի դեմ բողոքում է Հայոց Ազգային խորհուրդը: Որոշ պայմանների դեպքում հայկական կառավարությունը սկզբունքորեն հնարավոր էր համարում զիջումներ կատարել Վրաստանին՝ Ախալքալաքի գավառի հարցում: Ենթադրվում էր, որ այստեղ բնակվող արևմտահայերի սերունդները կարող են վերաբնակվել Անտանտի ճնշմամբ Հայաստանի Հանրապետությանը տրվելիք տարածքներում: Վրաստանն էլ իր հերթին պարտավորվում է Ախալքալաքն ստանալու դեպքում Խաղաղության վեհաժողովի առջև պաշտպանել հայկական պահանջները, միևնույն ժամանակ օժանդակել, որ Ադրբեջանը համաձայնի Հայաստանին զիջել մի քանի վիճելի տարածքներ: Վրացական զորամասերին հաջողվում է գրավել Լոռու ոստիկանական տեղամասի մեծ մասը (հյուսիսային հատվածը) և գերմանացիների հետ պահակակետեր հաստատել Կամենկա գետի (Ձորագետ) ձախ ափի երկայնքով: Նրանց գլխավոր պահակակետերը գտնվում էին Վորոնցովկա, Հայդարբեկ, Ալեքսանդրովկա, Ծաթեր, Քոբեր, Քարինջ բնակավայրերում: Իսկ թուրքական գիծը ձգվում էր Կամենկա գետի աջ ափի երկայնքով՝ Նովո Պոկրովկա, Ջալալօղլի, Նիկոլաևկա, Գյառգյառ, Վարդաբլուր, Կուրթան, Դարաքենդ գյուղերի միջով, ապա դեպի արևելք՝ Քոբեր և Քոլագերան կայարանների արանքով դեպի Մարց և Լորուտ բնակավայրերը:[3, էջ 426] Վրաց կուսակցական ու քաղաքական գործիչները հավակնում էին Վրաստանի կազմում տեսնելու ոչ միայն ամբողջ

Թիֆլիսի նահանգը, այլ նաև Փամբակի հովիտը, որը Երևանի նահանգի մաս էր կազմում: Հայոց և վրաց ազգային խորհուրդների ներկայացուցիչների բանակցությունների ժամանակ վրաց սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարներից, կառավարության անդամ Ի. Ծերեթելին հայտարարում է, որ հայ –վրացական սահմանը պետք է լինի այնպես, որ վրացական կողմում լինեն Բորչալուի և Ղազախի գավառները, իսկ թուրքերի հեռանալուց հետո նաև Ախալքալաքի գավառը և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանը:[5, էջ 299]Վրաց գործիչները փորձում են Վրաստանի հավակնությունները Լոռու և Ախալքալաքի նկատմամբ հիմնավորել պատմական, աշխարհագրական, տնտեսական գործոններով՝ անտեսելով ազգային սկզբունքը: Սակայն այդ երկրամասերի Հայաստանի կազմում լինելու անհրաժեշտությունը հիմնավորվում է նախ և առաջ ազգային առումով: Մենք փորձենք աղյուսակի միջոցով ներկայացնել հիմնական վիճելի տարածք համարվող երկրամասերի ազգային կազմը 1918 թ-ին:

Ազգային կազմ	հայեր	մահմեդական ներ	վրացիներ	Այլ ազգեր
Բորչալուի գավառի վիճելի հատված և Փամբակի շրջան	105000 85.8տոկոս	15000	1150 0.85տոկոս	13000
Ախալքալաքի գավառ,Ծալկայի շրջան	82000 77.35 տ	9000	7400 6.9 տ	8000

Աշխարհագրական առումով Լոռին ու Ախալքալաքը Հայկական լեռնաշխարհի մաս են կազմում: Պատմական առումով երկու գավառներն էլ բազմիցս ձեռքից ձեռք են անցել, սակայն միշտ պահպանել են իրենց հայկական բնույթը: Ռազմավարական առումով հանդիսանում են բնական պաշտպանական սահմանագիծ, իսկ տնտեսական առումով՝ բնական հարստություններով աղքատ Հայաստանի Հանրապետության համար արոտավայրերով, անտառներով, հանքային պաշարներով հարուստ այս երկրամասերը կենսական նշանակություն ունեն: Հայաստանի կառավարությունը մի քանի անգամ պաշտոնական բողոքներ է ներկայացրել թուրքական և գերմանական կառավարություններին Բաթումի պայմանագրով Հայաստանին պատկանող տարածքներն ազատելու վերաբերյալ և միշտ էլ ստացել է պատասխան, որ այդ գրավումը ժամանակավոր է: Բայց 1-ին աշխարհամարտը մոտենում էր ավարտին, գերմանական բլոկը պարտվում էր և սկսվել էր նրանց զորքերի աստիճանական նահանջը նաև Կովկասից: Հոկտեմբերի 5-ին թուրքական և հայկական շտաբների միջև ստորագրված արձանագրությամբ, թուրքական զորքերը պարտավորվում են հեռանալ հանրապետության տարածքից և հոկտեմբերի 18-ին թուրքական զորքերի Փամբակից ու հարավային Լոռուց դուրս բերելուց հետո, հենվելով նույն արձանագրության վրա, Դիլիջանում գտնվող Դրոյի սպայակույտին կցված հայկական վաշտերը գրավում են Լոռին՝ Երևանի նահանգի սահմանագլխի Շահալի կայարանից մինչև

Կամենկա գետը, այսինքն՝ մինչև թուրքական գիծը: Իսկ մի քանի պարեկախմբեր երկաթուղու երկայնքով հասնում են մինչև Լոռու՝ վրացական հսկողության տակ գտնվող բաժնի ծայրակետ Ծաթեր և Քոբեր: Սակայն գերմանական սպաների ներկայությունը վրացական կողմում հարկադրում է հայերին թողնել Քոբերն ու Ծաթերը: Եվս մեկ անգամ հայկական կողմը գրավում է Քորինջ (Քարինջ) ու Ծաթեր գյուղերը, սակայն հոկտեմբերի 26-ին ստիպված են լինում թողնել այդ երկու գյուղեր:[4, էջ 61] Գերմանացիները խնդրում են հայերին չանցնել Ծալկա գետը, որը նրանք համարում են վրացական սահման, միևնույն ժամանակ արգելվում է վրացիներին անցնել «թուրքական» գիծը,որն էլ ըստ նրանց՝ պիտի լիներ հայկական սահմանը: Ընդհանուր առմամբ այս վիճելի հարցերում վրացիները մեծապես օգտվում էին գերմանացիների օժանդակությունից: Բաց պատերազմական գործողությունները հետաձգվում են երկու ամսով, քանի որ երկխոսությունների շնորհիվ հնարավոր է դառնում կանխել հոկտեմբերյան բախումները:

Այսպիսով՝ հայ-վրացական առճակատման առաջին շրջանում հաջողվեց Հայաստանի վերահսկողությունը հաստատել Հարավային Լոռու վրա, իսկ ավելի հյուսիս շարժվելու փորձերն ավարտվեցին անհաջողությամբ:

ԳԼՈՒԽ 3

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ և ԸՆԹԱՑՔԸ

Այս գլուխը ներկայացնելիս պետք է հատուկ ընդգծել այն հանգամանքը,որ հայկական կողմը ամեն ջանք գործադրում էր վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու համար: Հայաստանի կառավարությունը ձգտում էր գործը չհասցնել զինված առճակատման, բայց միաժամանակ պաշտպանել սեփական իրավունքները, ազգային շահերը: Հայկական տեսկետները վրացական կողմի մոտ ըմբռնում չգտան, որոնք փորձում էին նաև օգտվել Հայաստանի Հանրապետության քաղաքական, սոցիալ- տնտեսական ծանր վիճակից և իրադարձությունները զարգացան այնպես, որ զինված բախումը դարձավ անխուսափելի:

Դեկտեմբերի 5-ին վրացական զորքերը մտնում են Ախալքալաք: Տեղեկանալով վրացական զորքերի ներխուժման մասին՝ կառավարության հրահանգով հայկական մի ջոկատ դեկտեմբերի 7-ին զբաղեցնում է Ախալքալաքի գավառի Ալեքսանդրապոլի գավառին կից շրջանը՝ խուսափելով Վրաստանի հետ ռազմական բախումից: Ցուցադրական բնույթ ունեցող այս գործողության նպատակն էր հաստատել հայկական կողմի իրավունքը Ախալքալաքի նկատմամբ, սակայն վրացական կողմի պահանջով նրանք նահանջում են Ալեքսանդրապոլ՝ թողնելով Ախալքալաքի գավառի Եֆրեմովկա և Տրոյիցկոյե գյուղերը : Ջավախքի հարցում Հայաստանի կառավարության այդ «զգուշավոր» քայլը, որ ավելի շուտ անվճռականության և իրավիճակում ճիշտ չկողմնորոշվելու արդյունք էր, որը թանկ նստեց Հայաստանի և մասնավորապես՝ Ջավախքի հայության համար:

Դեկտեմբերի 8-ին Լոռի-Փամբակի հայկական զորամասի ղեկավար Դրաստամատ Կանայանը հեռագրով Թովմաս Նազարբեկյանին տեղեկացնում է վրացիների կողմից Ջավախքի գրավման մասին: Հայկական բանակը Ախալքալաքում հաստատվել էր նոյեմբերի վերջերին՝ թուրքերի հեռանալուց հետո: Վրացական բանակի կողմից Ախալքալաքի բռնազավթմանը զուգընթաց ընթացքում Թիֆլիսից Երևան մի հեռագիր է ուղարկվում, որում գրված էր՝ «Ախալքալաքի գրավման հարցը պատմական, քաղաքական և բարոյական առումով վիճելի չի կարող համարվել»: [6, էջ 192] Զարգացնելով ռազմավարական հաջողությունները՝ վրացիները ռազմական գործողություններ են սկսում Լոռու սահմանամերձ բնակավայրերի նկատմամբ: Շուտով վրացիները սկսում են ռմբակոծել Օձունը ՝ ընթացքում թալանելով և կոտորելով Լոռվա հյուսիսային մասի հայությանը:Այս մասին ՀՀ վարչապետ Հովհաննես Քաջազնունին տեղեկանում է դեկտեմբերի 9-ին և հրաման է արձակում բողոքի ուղերձ հղել Վրաստանի կառավարությանը՝ հորդորելով դադարեցնել բռնի գործողությունները:

Դեկտեմբերի 11-ին Ղարաքիլիսայում հայկական կողմը (Դրո, Ա. Ահարոնյան, Մ. Պապաջանյան) հանդիպում է վրաց դեսպան Մդիվանիին: Դրոն խիստ քննադատում է վրացիներին և պահանջում նշված տարածքներից դուրս բերել վրացական զորքերը: Նա

հստակ ցույց է տալիս, որ հակված է վրացիների հարձակմանը պատասխան հարված տալուն: Այս առիթով Հայաստանի ռազմական նախարար Հ. Հախվերդյանը նշում է, որ «Դրոն ստեղծել է մի իրավիճակ, երբ հրանոթներն իրենք են կրակում»:[8, էջ 36]

Դրոն հակված էր կտրուկ գործողությունների և Մդիվանին իր կառավարությանը ներկայացնում է, իբր իրավիճակի սրման մեղավորը Դրոն է, որն էլ իբր բնակչությանը դրդել է հակավրացական գործողությունների: Դրանով նա ցանկանում էր նաև ճշտել, թե Դրոն ինքնուրույն է գործում, թե ունի Հայաստանի կառավարության օժանդակությունը:

Լոռու տարածաշրջանում հայերի համար ստեղծված ծանր դրությունը քննարկվում է Հայաստանի խորհրդի դեկտեմբերի 12-ի, 13-ի նիստերում: Հայաստանի կառավարության դեկտեմբերի 13-ի հրամանով Դիլիջան-Լոռիի զորամասի հրամանատար Դրոյին հանձնարարվում է սկսել ռազմական գործողությունները Հյուսիսային Լոռվա տարածքները ազատագրելու ուղղությամբ: Այս ասաթիվը համարում ենք պատերազմի սկիզբ, քանի որ արդեն ռազմական գործողությունները կատարվում են կառավարության ուղղակի հանձնարարությամբ, չնայած որ ռազմական օպերացիա սկսել էին դեռ դեկտեմբերի 7-ին, բայց առանց ռազմական ընդհարման: Դրոն իր զորամասով հոկտեմբերի 14-ին առաջ է շարժվում Վորոնցովկա-Պրիվոլնոյե, Օփրեթ-Այրում գծով:

Ա. Խատիսյանը իր հուշերում գրում է, որ ներկա է եղել այդ նիստին, երբ վարչապետ Հ. Քաջազնունին կառավարության հավանությունից հետո հեռախոսով Դրոյին հրաման արձակեց սկսել ռազմական գործողությունները.՝ Այսպես սկսվեց ռազմական գործողությունները, որը երկար ժամանակ թունավորեց հայ-վրացական հարաբերությունները: Թիֆլիսում վրացիները ուղղակի որսի ելան հայերի վրա, իսկ Երևանից զինվորներ էին ուղարկում ճակատ, նաև այլուրի վերջին պահեստները…հայերը համոզված էին, որ իրենց գործը արդար է և պատերազմը ժողովրդական էր՝ հակառակ ցրտին ու սովին՝: [2, էջ 205]

Հայերի հաջող գործողությունները վրացիներին մատնում են խուճապի և նրանք դիմում են Մեծ Բրիտանիայի օգնությանը: Գերմանիայի ու Թուրքիայի պարտությունից հետո Կովկասն արդեն գտնվում էր Բրիտանիայի ազդեցության գոտում: Մեծ Բրիտանիայի պատվիրակ կապիտան Գրինը ծանոթանալով իրավիճակին՝ առաջարկում է իր կարծիքով փոխշահավետ զինզդզդարի ծրագիր: Հայկական կողմը դեկտեմբերի 16-ին իր համաձայնությունն է տալիս այդ ծրագրին, բայց վրացիների մեղքով այն չի իրագործվում: Սա ցույց է տալիս, որ վրացական կողմը ոչ թե ձգտում է հաշտության, այլ պարզապես օգտագործում է բոլոր հնարավորությունները՝ իր նպատակները իրագործելու: Այս ընթացքում վրացիները քաղաքական ու տնտեսական հալածանքներ են սկսում Թիֆլիսի ու Ջավախքի հայության նկատմամբ և տնտեսական շրջափակման էին ենթարկել Հայաստանը: Հայերին մնում էր մի ելք՝ շարունակել ռազմական գործողությունները և արագ հասնել հաղթանակի: Դեկտեմբերի 15-ին հայկական զորքերը գրավում են Ալավերդին, Այրումը, Ախթալան, Խաչենը, հետո Սանահինը, որտեղ հայերի ձեռքն է անցնում 49 վագոն և 1 շոգեքարշ, գերի վերցվում 15

զինվոր:[8, էջ 7] Ախթալայի մոտ հայերը գերի են վերցնում վրացական մի ամբողջ գումարտակ: Վրացիները մեծ դիմադրություն են ցույց տալիս Սադախլոյում: Վրաց զինվորական նախարար Ծուլուկիձեն 1000 զինվորով և 100 հեծյալով գալիս է նրանց օգնության: Դրոյի գլխավորությամբ հայկական զորքերը շրջապատում են վրացիներին և ստիպում սպիտակ դրոշ պարզել, բայց օգնության եկած զրահագնացքը նրանց փրկում է պարտությունից: Ծանր մարտական գործողություններից հետո դեկտեմբերի 20-ին հայկական զորքերը գրավում են Շուլավերը, իսկ 23-ին՝ Սադախլոն՝ վերցնելով գերիներ ու ռազմավար: Ծուլուկիձեին փոխարինած Մազնիաշվիլին նոր օգնական զորքեր է բերում և փորձում հետ գրավել Շուլավերը: Վրացիները այստեղ օգտագործում են նաև ռազմական ավիացիա: Պետք է նշել, որ այս տարածքում ապրող մահմեդականները կռվում էին վրացիների կողմից և վայրագություններ կատարում տեղի հայ բնակչության նկատմամբ: Վրացիները հաջողության չեն հասնում և նահանջում են Շուլավերից: Ճանապարհը դեպի Թիֆլիս հիմնականում բաց էր: Հայկական ուժերին հաջողվում է հայտնվել Վրաստանի մայրաքաղաքից 50կմ հեռավորության վրա: Դեկտեմբերի 25-ին Թիթլիսում Անտանտի երկրների ներկայացուցիչները կողմերից պահանջում են դադարեցնել պատերազմը:

Փորձենք աղյուսակի միջոցով պարզել, թե կողմերը որքան զինված ուժեր ունեին հակամարտության գոտում: Հայկական զինված ուժերը մարտական գործողությունների գոտում գլխավորում էր Դրաստամատ Կանայանը, իսկ վրացական զորքերը՝ Գիորգի Ծուլուկիձեն, որին փոխարինեց Գիորգի Մազնիաշվիլին:

	Հայկական զորքի քանակը	Վրացական զորքի քանակը
Լոռիում	4000 հազար զինվոր 28 հետևակային խումբ 4 հեծյալ զորախումբ 6500 հայդուկներ և տեղացի կամավորներ	100–ավոր գերմանական զինվորներ 3500 ազգային գվարդիայի զինվոր
Ախալքալաքում	Հստակ թիվ հայտնի չէ, բայց շատ ավելի քիչ, քան Լոռիում	6000 զինվոր

Աղյուսակից երևում է, որ վրացիները իրենց հիմնական ուժերը կենտրոնացրել էին Ախալքալաքում, իսկ հայերը՝ Լոռիում: Վրացական կողմին իր ռազմական ու դիվանագիտական աջակցությունն էր ցուցաբերում նաև նրա դաշնակից Գերմանիան մինչև աշխարհամարտում պարտությունը: Այնուհետև Կովկասում միջպետական հարաբերությունների կարգավորումը անցնում է անգլիացիների տնօրինությանը: Ռազմական գործողություններին մասնակցել են հայ ու վրացի բազմաթիվ զինվորներ ու հրամանատարներ, աչքի ընկել հերոսությամբ ու հնարամտությամբ: Նրանցից են .

Հայկական կողմ	Վրացական կողմ
Դրաստամատ Կանայան	գեներալ Գ. Ծուլուկիձե
գնդապետներ Կորոլկով	գեներալ Գ. Մազնիաշվիլի
Թարվերդյան	Գեներալ Վալիկո Ջուղելի
Նեստերովսկի	գեներալ Գ.Կվինտաձե
Տեր-Նիկողոսյան	գնդապետ Էրիստովա
Տեր-Մարտիրոսյան	
Ֆեյերկովսկի	
Փոխգնդապետներ Պողոսյան	
Ասլանյան	
Մանյան	
Կուռո Թարխանյան	
Ռոտմիստր Փիրումյան	

Հայաստանի ռազմական նախարար Հ. Հախվերդյանը և գեներալ-լեյտենանտ Մ. Սիլիկյանը նույնպես մասնակցել են ռազմական գործողություններին, նրանց պլանավորմանը:

ԳԼՈՒԽ 4

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ռազմական իրադարձությունների ընթացը ցույց տվեց, որ վրացիները սխալ հաշվարկներ են կատարել, գերագնահատել իրենց ուժերը և թերագնահատել հայերինը: Արդեն չկար նաև իրենց դաշնակից Գերմանիայի օժանդակությունը, չէին կարող նաև թուրքերի հետ հայերի թիկունքում հասնել պայմանավորվածությունների և կանգնեցին պարտության, նույնիսկ ջախջախման վտանգի առջև և ստիպված դիմեցին Եվրոպական գերտերությունների օգնությանը:

Վրաստանի դեմոկրատական հանրապետության վարչապետ Նոյ Ժորդանիան , դիմելով Եվրոպական գերտերությունների միջամտությանը, հանդիպում է Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների հետ: Վրացիները համոզում են եվրոպացիներին, որ հայերի հաղթանակը կուժեղացնի սոցիալիստական Ռուսաստանի դիրքերը հարավկովկասյան տարածաշրջանում, քանի որ հայերը ունեն ռուսամետ դիրքորոշում: Այս փաստը մեծ ազդեցություն է ունենում Եվրոպական ներկայացուցիչների կողմնորոշվածության վրա: Իսկ հայկական կողմը ձգտում էր շուտափույտ հաշտության, քանի որ հայությունը ենթարկվում էր Վրաստանում հալածանքների և երկիրն էլ գտնվում էր տնտեսական շրջափակման մեջ:

Հովհաննես Քաջազնունին՝ մարտաճակատում ունեցած ակնհայտ հաջողությունների մասին իմանալով նշում է՝ «հայկական կողմը պատերազմը շարունակելու շարժառիթ այլևս չի տեսնում»: [2, էջ 70]Ընդգծվում է, որ Դրոյի ղեկավարած բանակը գրավել է բացառապես հայկական տարածքներ և վերջացրել իր առաքելությունը: Հայկական կողմը շահագրգռված էր Անգլիայի և Ֆրանսիայի աջակցությամբ արագացնել Վրաստանի հետ բանակցային գործընթացի սկիզբը: Իր դիմումում հայկական կողմն անգամ պատրաստակամություն է հայտում գնալ փոխզիջումների՝ վրացական բանակին թույլատրելով մնալ Ախալքալաքում:

Բաքվից Թիֆլիս էր ժամանել բրիտանական փոխգնդապետ Ջորդանը, որի կարծիքով, հայկական ու վրացական զինված ուժերը պետք է ազատեին նախկինում թուրքական գրավման ներքո գտնված վիճելի տարածքը, ներառյալ Ախալքալաքը, և փոխարինվեին բրիտանական զորքերով մինչև Փարիզի հաշտության վեհաժողովում նրանց կարգավիճակի որոշումը: Սակայն Վրաստանը մերժում է այդ առաջարկը և բրիտանացիները իրենց նախնական առաջարկություններում կատարում են փոփոխություններ, որի համաձայն՝ վրացական զորքերը պետք է մնային Ախալքալաքում և Բորչալուի հյուսիսային մասում, հայկական զորքերը՝ Հարավային Բորչալուում, իսկ նրանց միջև ընկած տարածքում պետք է լիներ «Չեզոք գոտի» բրիտանական հսկողության տակ:

Հայ հասարակության որոշակի շրջաններ պնդում էին, որ հայկական բանակը պետք է զարգացնի ռազմավարական հաջողությունները՝ ճանապարհ բռնելով դեպի վրաց

քաղաքամայր Թիֆլիս: Այնուամենայնիվ կառավարությունը նախընտրում է կայուն հարաբերություններ հաստատել դարավոր հարևանի հետ: Խնդրի հանգուցալուծումը մեծ մասամբ կախված էր նաև վրացական կողմի դիրքորոշումից: Դեկտեմբերի 24-ին այլընտարնք չունենալով Վրաստանի կառավարությունը ստիպված է լինում ընդունել դաշնակիցների միջնորդություն, բայց համալրում ստանալով, փորձում է հետգրավել որոշ տարածքներ, բայց անհաջող: Այնուամենայնիվ դաշնակիցների ներկայացուցիչների զինադադարի պայմանների մեջ կարողանում են նորից մտցնել փոփոխություններ՝ հօգուտ իրենց: Հայերը ստիպված էին զիջել բրիտանական ուժեղ ճնշմանը, քանի որ ինչպես հայ-վրացական, այնպես էլ ամբողջ անդրկովկասյան խնդիրների տնօրինողը բրիտանական զինվորական միսիան էր : Ռազմական գործողությունները վերջնականապես ավարտվում են Դեկտեմբերի 31-ին:

1919թ. հունվարի 9-17-ը հայկական, վրացական և դաշնակիցների պաշտոնատար անձանց մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդաժողովում, որն անցավ խիստ լարված մթնոլորտում, քանի որ կողմերից ոչ մեկը հակված չէր մեծ զիջումների, հայկական կողմն ստիպված համաձայնվեց, որ Ախալքալաքում տեղակայվի վրացական երկու վաշտ՝ դաշնակիցների հսկողության ներքո և երաշխավորվի հայերի մասնակցությունը վարչությանը, ինչը այդպես էլ չիրականացավ: Ի վերջո Վրաստանը վերջնականապես հաստատվում է այդ տարածքում: Խորհրդաժողովում հաստատվում է նաև բրիտանացիների առաջարկած ծրագիրը Բորչալուում չեզոք գոտի ստեղծելու վերաբերյալ, որը տարածվելու էր Սադախլուի մատույցներից մինչև հայկական զորքերի կողմից նախքան երկշաբաթյա պատերազմը գրված դիրքերը: Բորչալուի գավառի չեզոք գոտու հարավային սահմանը համարվում է Դսեղ-Ջալալօղլի գիծը, որը որոշվել է 1918թ. դեկտեմբերի 25-ի համաձայնագրով: Այսպիսով՝ կարելի է ասել, որ Չեզոք գոտու սահմաններն անցնում էին հետևյալ բնագծով. հարավային սահմանը Ձորագետն էր, հյուսիսային սահմանը կազմում էր Վիրահայոց լեռները, արևմուտքում Խոնավ լեռներն էին, իսկ արևելքում՝ Գուգարաց լեռները:[4, էջ 65] Չեզոք գոտու հյուսիսային սահմանը անցնում էր մոտավորապես այն գծով, որտեղ կանգնած էին վրացական զորքերը դեկտեմբերի 31-ին: Հայկական զորքերը տեղակայվելու էին չեզոք գոտու հարավային մասում՝Քոլագերան կայարանից մինչև Դսեղ հատվածը, ինչպես նաև Ջալալօղլի-Գյառգյառ հատվածում: Լոռու չեզոք գոտին ընդգրկում էր Ալավերդու պղնձահանքերը, 43 գյուղ՝ գերազանցապես հայկական և երկաթուղու 30 մղոնանոց հատված: Չեզոք գոտում յուրաքանչյուր կողմից տեղակայվում էր 600-ական զինվոր, մինչև հունվարի 29-ը կողմերը պիտի զինաթափվեին և վերադարձնեին գերիներին:Այս պայմանագիրը հայերի ռազմական գերակայությանը հակասող, հայերին պարտադրված պայմանագիր էր և կողմերից ոչ մեկը գոհ չմնաց և պատերազմը չունեցավ փաստացի հաղթող: Հայ երի մեջ տարածված էր այս արտահայտությունը.՝ Հայ զենքը Դրոյի գլխավորությամբ փառահեղ հաղթանակներ տարավ, իսկ հայ դիվանագիտությունը Թիֆլիսում խայտառակ պարտություն կրեց՝: [6, էջ 93]

Այնուամենայնիվ հայ- վրացական պատերազմը լուծում է միջպետական սահմանային խնդիրը, նորմալանում են միջպետական հարաբերությունները, վերանում է տնտեսական

շրջափակումը: 1919 թ մարտին միջպետական մակարդակով հաստատվում են դիվանագիտական հարաբերություններ:

Պատերազմի արդյունքների համառոտ և դիպուկ խոսքով ամփոփել է Հայաստանի ռազմական նախարար Հ. Հախվերդյանը.՝ Պատերազմի արդյունքը նախ այն էր, որ հայերը փաստորեն իրենց ձեռքին պահեցին գրավված տարածքները և երկրորդը՝ կոտրվեց վրացիների ամբարտավանությունը, ովքեր սկսեցին ավելի զգույշ վերաբերվել հայերին՝:[7, էջ 32]

Այս թեման ներկայացնելիս անհրաժեշտ է օգտագործել անհրաժեշտ քարտեզները: Դրանք են Մեծ Հայքի «աշխարհների» քարտեզը, որտեղ տրված են նաև Վիրքի և Աղվանքի պատմական սահմանները, Ռուսական կայսրության Անդրկովկասում վարչական բաժանումների քարտեզը , Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատի քարտեզը, Անդրկովկասյան հանրապետությունների 1918-20 թթ սահմանների քարտեզները: [4, էջ 62-63]

Որպես հիմնական մեթոդ կարելի է ընտրել զրույցի մեթոդը՝ ստեղծելով ներառարկայական կապ նախորդ թեմաների և միջառարկայական կապ համաշխարհային պատմություն և աշխարհագրություն առարկաների միջև: Թեմայի մասին կան բազմաթիվ փաստաթղթեր և դասի ժամանակի 5-10 րոպեն՝ ըստ նպատակահարմարության, կարելի նվիրել փաստագրական տեսանյութի դիտմանը, որոնք կան համացանցում՝ նախօրոք ընտրելով համապատասխան նյութը: Քանի որ նյութը ծավալուն է՝ պետք է աշակերտներին լ նախապես ներկայացնել բանալի բառերը, արտահայտությունները, հանձնարարել ինքնուրույն ծանոթանալ թեմային, առանձնացնել հարցադրումներ՝ դասարանում արդյունավետ քննարկում կազմակերպելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայ-վրացական պատերազմը հայ ժողովրդի նորագույն պատմության կարևորագույն էջերից է, բայց նրա նշանակությունը քիչ է արժևորված մեր պատմագրության մեջ: Այս պատերազմում մեծ է մեր ականավոր ռազմական ու պետական գործիչ Դրաստամատ Կանայանի դերը: Նրա վճռական գործողությունները Լոռին հայկական պահելու գործում ունեցան նույն դերը, ինչ Նժդեհի գործողությունները՝ Սյունիքը հայկական պահելու մեջ, չնայած Սյունիքի կարևորությունը, նշանակությունը ավելի մեծ էր և աշխարհաքաղաքական ու ռազմական դրությունը ավելի բարդ:

Պատերազմի պատճառները հիմնականում Ռուսական կայսրության տիրապետության տարիներին առաջացած տարածքային անհամաձայնություններն էին, որոնք առաջացել էին կայսրության անարդար, հատկապես հայերի ազգային շահերը հաշվի չառնող վարչական բաժանումների արդյունքում: Կայսրության փլուզումից հետո 1918 թ ստեղծված նորանկախ պետությունները փորձում էին այդ հակասությունները լուծել իրենց օգտին: Հայկական կողմը միշտ փորձել է վեճերը լուծել խաղաղ ճանապարհով՝ հատկապես վրացիների հետ, քանի որ ինչպես այժմ՝ Թուրքիայի ու Ադրբեջանի հետ թշնամական հարաբերություններ էին, իսկ Վրաստանի հետ պատերազմը Հայաստանին ենթարկում էր նաև տնտեսական շրջափակման և վտանգման մեջ դնում տեղի հայության կայանքը, որը և ապացուցվեց գործնականում: Վրացիները օգտվելով հայերի ծանր վիճակից, օգտագործելով նաև իր դաշնակից Գերմանիայի, իսկ նրա պարտությունից հետո նաև Անգլիայի աջակցությունը, փորձում էր տիրանալ ոչ միայն վիճելի տարածքներին՝ այլև հնարավորության դեպքում ողջ Հայաստանին: Հայերը՝ ինչպես հաճախ, թույլ էին տալիս դիվանագիտական սխալներ, երբեմն սխալ կողմնորոշվում քաղաքական իրադրության մեջ, չէին կարողանում ռազմական ակնառու հաջողությունները կապիտալացնել: Խանգարում էր նաև հաճախ ավելորդ ռուսասիրությունը և անվճռականությունը: Կառավարության անվճռականությունն էր պատճառը, որ չկարողացանք պահել հայաբնակ Ախալքալաքը, իսկ Լոռու հարցում վճռական գործողությունները տվեցին իրենց արդյունքը: Արդյունքում մեզ մնաց միայն այն տարածքը, որը ազատագրվեց մեր զորքերի կողմից: Այսինքն քոնն է միայն այն հողը, որտեղ գտնվում է քո զինվորը: Պատերազմի արդյունքներից երկու կողմն էլ մնացին դժգոհ, քանի որ չհասան իրենց նախատեսված նպատակներին, բայց նրանց միջև հաստատվեց խաղաղություն, թևակոխեցին խաղաղ

զարգացման շրջան և հասկացան, որ վիճելի հարցերը պետք է լուծել բանակցելով, որ պատերազմը կործանարար կարող է լինել երկու բարեկամ պետությունների համար էլ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Վ. Մ., 1918-21 թթ հայ-վրացական վիճելի տարածքների հարցի շուրջ, Անի կենտրոն, Երևան, 1995:
2. Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Երևան, Անի կենտրոն , յոթերորդ գլուխ, 1996, էջ 205:
3. Հակոբյան Թ.Խ., Ստ.Տ.ՄելիքԲախշյան, Հ.Խ.Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևանի համալսարանի հրատ., հ. 3, Երևան, 1991, էջ 500
4. Հարությունյան Բ., Հայաստանի պատմության ատլաս, Բ մաս,Երևանի համալսարանի հրատարակություն, Երևան, 2008թ, էջ 62-63
5. Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003,էջ 299:
6. Մելքոնյան Ա., Չոբանյան Պ., Հայոց պատմություն, դասագիրք 11-րդ դասարան, Երևան, Զանգակ, 2019 էջ 192
7. Ջամալյան Ա., Հայ-վրացական կնճիռը, Երևան, 2011, էջ 32:
8. Քառյան Ա.Մ., 1918 թ հայ-վրացական պատերազմը պատմագրության մեջ, Երևան, 2004 էջ 7

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա պատմության ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝«ԴՐԱՄԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐԻ ՕՐՈՔ:ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ»:

ՂԵԿԱՎԱՐ՝Ս.Աղաջանյան/պ.գ.թ.,դոցենտ/

ԿԱՏԱՐՈՂ՝Ս.ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

Լոռու մարզ,ք Վանաձոր, թիվ 13 ավագ դպրոց

Վանաձոր

2022թ.

Բովանդակություն

Ներածություն……էջ 3

Դրամական շրջանառության սկզբնավորումը Հայկական լեռնաշխարհում…….էջ 5

Արտաշեսյանների առաջին դրամները.....էջ 7

Դրամական շրջանառության ընդլայնումն Արտաշեսյանների օրոք.....էջ 8

Ազգային դրամների թողարկման տնական անկման սկիզբը .....էջ 11

Պատմական դարաշրջանի ընկալումը դրամների միջոցով.....էջ 14

Եզրակացություն.....էջ 16

Գրականության ցանկ .....էջ 18

Ներածություն

Ամեն մի պետության անկախության և ինքնուրույնության երաշխիքներից մեկը սեփական դրամական համակարգի ձևավորումն է և շրջանառության մեջ դնելը:

Դրամական շրջանառության հարցերը դուրս են մնացել հայ դրամագիտության տեսադաշտից և չեն քննվել երկրի քաղաքական ու տնտեսական պատմության հետ առնչված: Եթե պարզվի, թե ինչպիսի դրամներ են տարածված եղել երկրում պատմական զարգացման ընթացքում, ապա պարզ կլինի, թե ինչպես է զարգացել երկրի տնտեսությունը, ներքին ու արտաքին առևտուրը, ապրանքափոխանակությունը:Նպատակն է հնարավորինս ներկայացնել այդ ամենը և առաջարկել տարբերակներ թեմայի՝ հետաքրքիր ու-սումնասիրության և յուրացման համար,արդյունքում սովորողների մոտ ձևավորել պատմական մտածողություն: Աշխատանքիս մեջ հերթականությամբ ներկայացած է Հայաստանում դրամաշրջանառության սկզբնավորման, Արատաշեսյան թագավորության շրջանում ծաղկման, ապա տևական անկման մասին, իսկ վերջում պատմական նյութի շրջանակում դրամների ուսումնասիրության ռազմավարություն:Այսօր շատ կարևոր է սովորողների մոտ զարգացնել պատմական ակտիվ մտածողություն, վերլուծելու կարողություն: Պատմությունը միայն թիվ, անուն, իրադարձություն չէ, պատմությունը գիտելիք է կառուցում քննելով անցյալի <<մնացորդները>>՝ արխիվային փաստաթղթերը, հնավայրերը,թանգարանային նմուշները, ընտանեկան հուշերը և այլն, որոնք հարկավոր է համադրել, համեմատել, ապա մտածել և վերլուծել, և ի վերջո դասեր քաղել:

Մեր իրականության մեջ, կարծում եմ, դրամների պատմության ուսումնասիրությունը և այսօրվա հետ կապելը շատ ավելի կհետաքրքրի սովորողներին, որովհետև դեռ շատ վաղ տարիքից երեխան սկսում է մտածել փող աշխատելու մասին, առընչվում է առքուվաճառքի հետ. . .

Դասագրքերում , ցավոք սրտի, ընդամենը մեկ նախադասությամբ է հիմնականում անդրադարձ կատարվում դրամների պատմությանը, օրինակ՝ 10-րդ դասարանի հայոց պատմության դասագրքերում գրված է << Շամ /Սամոս/

Երվանդականը կառուցեց Կոմմագենեի Սամոսատ մայրաքաղաքը և հատեց դրամներ։ Դրանք մեզ հասած առաջին հայկական արքայական դրամներն են>>, և վերջ, մնացած դեպքերում նույնպես։

Հայաստանն իր աշխարհագրական դիրքի շնորհիվ չէր կարող դուրս մնալ Առաջավոր Ասիայի դրամային շրջանառության ոլորտից։ Սակայն հայկական դրամների միջազգային ճանաչումը դիտվում է Արտաշեսյանների հզորության բարձրագույն շրջանում՝ սկսած Տիգրան Մեծի թագավորության տարիներից։ Եվ քանի որ Արտաշատը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին առևտրի խոշոր կենտրոն էր, և այստեղ վաճառում էին և տեղական, և տարբեր երկրներից բերված ապրանքներ, ուստի Տիգրան Մեծի դրամները թողարկվում էին ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ հայոց տիրակալության սիրիական քաղաքներում։

Դրամական շրջանառության սկզբնավորումը Հայկական լեռնաշխարհում

Դրամային շրջանառությունը Հայկական լեռնաշխարհում սկզբնավորվել է Ք.ա. V դարի վերջերին, որովհետև բացառված չէ, որ այս շրջանում ուշ արխայիկ կամ վաղ դասական շրջանի դրամները Փոքր Ասիայից կարող էին թափանցել հայկական շուկաները, հատկապես տարանցիկ առևտրի մայրուղիներին մոտ գտնվող հայաբնակ վայրերը: Հայկական դրամների անդրանիկ օրինակները ծագել են Ք.ա.III-II դարերում: Նրանց թողարկումը կատարվել է Ծոփքում և Փոքր Հայքում առաջացած թագավորությունների կողմից: Այս շրջանի հայկական դրամները ոչ թե ոսկուց կամ արծաթից էին, այլ պղնձից և ունեին զուտ տեղական նշանակություն՝ ներքին շուկայի ոլորտից դուրս չէին անցնում: Փոքր Հայքի ու Ծոփքի մեջ Ք.ա.III-II դարերում ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացումը այնպիսի աստիճանի էր հասել, որ մանր առևտուրն անգամ կատարվում էր դրամով, մի հանգամանք, որ կարող է առա-ջանալ դրամի ֆունկցիոնալ նշանակության լիակատար ծավալման, քաղաքական կյանքի ու նրա առևտրի խորացման պայմաններում:

Ընդհանրապես մետաղյա դրամների շրջանառությունը սկիզբ է առել հունական աշխարհում Ք.ա. VIII-VIIդարերի սահմանագլխին:Վաղ հայկական թագավորներ Երվանդ 1-ին Սակավակյացը և նրա հաջորդ Տիգրան Երվանդյանը դրամներ չեն թողարկել: Անտիկ աշխարհի դրամագիտական նյութի մեջ հայկական ծագում ունեցող արխաիկ դրամներ հայտնի չեն: Հայաստանում գտնված ամենահին դրամները վերաբերում են Ք.ա.VI-V դարերին և պահպանվել է հատուկենտ նմուշներով: Դրանք են՝ 1.Աքեմենյան արծաթ դրամ մեկ հատ,2.Միլեթյան արծաթ դրամ երկու հատ, 3. Աթենական արծաթ դրամ մեկ հատ:(1,էջ 11)

Աքեմենյան տիրակալության վերջին շրջանում, հատկապես Ք.ա. IV դարում, տեղական սատրապները նվաճել էին սեփական դրամ թողարկելու իրավունքը: Այդ դրամների թողարկումը կապվում է Հայաստանի աքեմենյան կառավարիչներ Տիրիբազոսի և Օրոնտասի անունների հետ:(2,էջ 690): Սակայն պարզվելէ , որ ոչ մեկը և ոչ էլ մյուսը դրամներ չեն թողարկել, նրանց դրամները ծագել են Աքեմենյանների փոքրասիական երկրամասերից,ուր

պաշտոնի բերումով նրանք իշխանություն են ունեցել և տեղական առևտրի համար դրամներ են թողարկել:Եվ այս դրամները բնորոշ են հենց Փոքր Ասիայի արևմտյան մասերին: (1, էջ 17,24):

Արդեն Ք.ա. IV դարի վերջերից Հայաստանն ընդգրկվում է հելլենիստական պետությունների դրամական շրջանառության մեջ:Հայկական շուկաներ են թափանցում ատտիկյան համակարգի ոսկյա ու արծաթյա դրամները:(2,էջ 691):

Հայաստանում հելլենիստական դրամների շրջանառությունը կատարվել է ինչպես տեղական, այնպես էլ օտար ծագման դրամական միավորներով, որոնք միջազգային ապրանքափոխանակության շնորհիվ թափանցել ու տարածվել են արհեստների ու առևտրի հայկական կենտրոնները: Հայկական լեռնաշխարհում հելլենիստական դրամ-ների շրջանառությունը սկսվել է Ալեքսանդր Մակեդոնացու արծաթե դրախմաներով/դրաքմե, դրամ/ և տետրադրախմաներով/չորեքդրամյաններով/:(1,էջ 28-30)

Ալ. Մակեդոնացու դրամներն առաջինն էին, որի վրա պատկերված էր միապետի իրական դիմագծերը, իսկ մինչ այդ դրոշմում էին միայն պաշտանմունքային պատկերներ: Սակայն Ալ. Մակեդոնացու դիմանկարը պատկերված էր Հերակլեսի կերպարանքով:Տիգրան Մեծի և Արտավազդ II -ի դրամների վրա ևս պատկերվում էր արքայի դիմանկարը,ինչպես Մակեդոնացու դրամների վրա: Հայաստանում արտաքին ապրանքափոխանակության բերումով տարածում են գտել նաև սելևկյան և փյունիկյան դրամները:(3,էջ 22-25)

Արտաշեսյանների առաջին դրամները

Երկրի հետագա զարգացումը, նրա քաղաքական տնտեսական հզորացումը Ք.ա. II-Ադարերում պայմանավորեց հայկական դրամների ավելի ծավալուն թողարկումը Արտաշեսյանների օրոք(2,էջ 693):Արտաշեսյաններից դրամներ են թողարկել Տիգրան I-ը,Տիգրան II-ը, Արտավազդ II-ը, Արտաշես II -ը, Տիգրան III -ը , Տիգրան IV -ը, Արտավազդ III-ը, Արտավազդ IV-ը, ՏիգրանV-ը: Շրջանառության մեջ տարբեր է եղել նրանց դերը Հայաստանի ապրանքափոխանակության գործարքներում:(1,էջ 33)

Արտաշատն, ընդհանրապես, եղել է ներքին և արտաքին առևտրի խոշոր կենտրոն, նաև ապրանքափոխանակության կետերից մեկը:Եվ պատահական չէր, որ Տիգրան Մեծը մեծացնելով իր պետության տարածքները, վերահսկում էր միջազգային առևտրի գլխավոր ճանապարհները:(4, էջ 50)

Արտաշեսյանների դրամները ճանաչելը դժվար չէ: Նրանք բոլորն ունեին հայկական հատկանշական խույրը/Tiara,որը որոշակի տարբերվում էր այն խույրերից, որը կրում էին հարևան Կոմմագենեի թագավորները:Իր մասնավոր ձևից բացի, դրամների վրա տեսնված հայկական խույրը ճանաչվում էր իր ունեցած աստղով և ընկերակցող մեկ կամ երկու արծիվներով:

Միակ դրամը, որ վերագրվում է Արտաշես առաջինի հայր Զարեհին, ըստ երևույթին կեղծ է եղել: Թագավորի գլուխը թեքված է դեպի աջ և կրում էր խույր: Առաջին կողմում Զարեհ անունն է, դարձերեսին գրած է արքայից արքա: Անհնար է պատկերացնել,որ այս իշխանը, որ նշանակված է եղել Սելևկյանների կողմից, կոչված լինի արքայից արքա: Հայկական խույրը վկայում է, որ այս դրամը Ծոփքի Զարեհին չի պատկանի, որովհետև Ծոփքի թագավորնները բոլորովին տարբեր տեսակի գլխարկ էին կրում իրենց դրամների վրա: Արտաշես I -ի և Արտավազդ I -ին վերագրվող դրամներ չեն գտնվել: (5,էջ 28-29): Իսկ Տիգրան I-ի օրոք դրամները տարածման խիստ սահմանափակ ոլորտ են ունեցել:(1, էջ 33):

Դրամական շրջանառության ընդլայնումն Արտաշեսյանների օրոք

Տիգրան Մեծի արծաթե և պղնձե հիմնականում բոլոր դրամների վրա թագավորի գլուխը միշտ աջ է թեքված: Սրա պատճառն այն է, որ Տիգրան Մեծից առաջ Հայաստանը կապված էր Պարթևստանի հետ թե՛ քաղաքական և թե՛ մշակույթային կապերով: Տիգրան Մեծը հենց սկզբից հակառակվում է պարթևներին և իրականությանը, և քաջալերում էր հունականությանը: Հանդես էր գալիս որպես հելլենոֆիլ: Այսպես Հայաստանն արևմուտք դարձավ և որդեգրեց հունական և սելևկյան դրամների տիպը:(5, էջ 29-32):

Արտաշեսյան դրամների մեծամասնությունը պատկանում են հենց Տիգրան Մեծին, որովհետև վերջինս երկար է կառավարել և քաղաքական մեծ հաջողություններ է ունեցել:(5,էջ 32):Ներքին ու արտաքին առևտրի պահանջով Տիգրան Մեծի դրամները թողարկվում էին ոչ միայն բուն Հայաստանում,այլև հայոց տիրակալության սիրիական քաղաքներում:Նրա դրամները թողարկվում էին ինչպես Արտաշատում, Տիգրանակերտում, այնպես էլ Սիրիայում՝ Անտիոքում և Դամասկոսում:(4,էջ 50):

Անդրկովկասում նրա արծաթե դրամները տարածվել են Արարատյան դաշտի, Շիրակի,Գեղարքունիքի, Սյունիքի, Արցախի,Գուգարքի շրջաններում, Քուռ գետի միջին հոսանքից մինչև Սև ծովի մերձավոր վայրերը:Հազվադեպ են նրա պղնձե դրամները, իսկ ոսկի դրամներ ինչպես Տիգրան Մեծի, այնպես էլ նախորդող ու հաջորդող Արտաշեսյան թագավորների կողմից չեն թողարկվել: (1, էջ34): Սակայն Տիգրան երկրորդին վե-րագրվել են կեղծ ոսկե դրամներ: Ատրպետն այս դրամը կեղծ չի համարել և ասում էր, որ այս դրամը պատկանել է Պարսկաստանի Շահ Մուզու-ֆար-Էդ-Դինին/1896-1906/,որն այս դրամը գործածել է իբրև ժամացույցի շղթայի զարդ: Մահից հետո դրամն անցել է նրա որդի Մուհամմեդ Ալիին, որն այն նվիրել է Վանի փոխհյուպատոս Օլֆերին Սերգեյ Պետրովիչին:1910թ. Երվանդ Լալայանը այն գնել է և նվիրել Մաթեոս Բ կաթողիկոսին:Վերջինս էլ այդ դրամը դրել է Էջմիածնի թանգարանում: Տիգրան Մեծին վերագրվել են նաև այլ ոսկե դրամներ, որոնք, իհարկե, ևս կեղծ էին:(5, էջ 82-85):

Ընդհանրապես Տիգրան Մեծի դրամների վրա հանդիպում ենք երեք տեսակ տիտղոսների՝ << թագավոր>>, <<մեծ թագավոր>> և <<թագավորների թագավոր>>, և այս տարբերությունը գալիս է և այդ դրամների ՝ նրա թագավորության տարբեր տարիներին պատկանելուց, և դրանց հատման վայրերից:Արտաշես երկրորդից հետո Հռոմից կախում ունե-ցող թագավորները անվանվում են <<մեծ թագավոր>> , անկախները՝<< թագավորների թագավոր>>:(2,էջ 668):

Ի տարբերություն Տիգրան Մեծի՝ Արտավազդ երկրորդի դրամները շատ քիչ օրինակներով են հայտնի, և նրա իշխանության տարիներին դրամների թողարկումը կատարվում էր գերազանցապեզ Հայաստանում:(2, էջ 695):

Արտավազդի դրախմաները հայկական դրամների հաջորդ և վերջին խումբն են՝ Տիգրան Մեծի դրամներից հետո, որոնք պատկերատիպի, մասնավորապես արքայական դիմանկարների կատարելությամբ հելլենիստական հայ արվեստի լավագույն ստեղծագործությունների շարքին են դասվում:(3,էջ 29-30): Արտաշատում թողարկված դրախմայի Ա կողմում Արտավազդի կիսանդրին է հայկական թագով՝ դեպի աջ, պարանոցին երեք օղակաձև մանյակներ, իսկ թագի ճակատային մասը զարդարված է երկու արծիվների և նրանց միջև արևի պատկերով:Հայոց արքայի նրբագեղ դիմաքանդակը վերցված է երկարավուն ուլունքների շարվածքով ստեղծված շրջանակի մեջ:Դարձերեսի կենտրոնում էլ չորս ձիերով լծված մարտակառք է , որի արշավանքը դեպի ձախ վարում է ճառգայթաձև թագով մի մարդկային կերպարանք: Վերջինիս ձեռքերի մոտ հաղթության դիցուհին պսակ է բերում: Արձանագրությունը՝ արքայից արքա Արտավազդ ՝ երիզված շրջանակ չունի, կշիռը՝ 4,02 գրամ, տրամագիծը՝ 20 մմ: Գտնվել է Սիսիանի շրջանի Սառնակունք գյուղում, պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում:(1,էջ 56) :

Ի տարբերություն Տիգրան Մեծի՝ Արտավազդ II -ի դրամների վրա հայկական խույրի ականջակալները ծալված են և ամրացված ճակատային մասին, որով տեսանելի է դարձել հայոց արքայի դեմքն առավել լրիվ,քան նրա հոր դրամների վրա: Հայոց արքան իր ականջը զարդարել է օղով, իսկ պարանոցը երեք շարք մանյակներով՝արքայական զարդաքանդակներ, որոնք լրիվ չէին դիտվում Տիգրան Մեծի դրամների վրա: (3,էջ 30):

Դրախմաների վրա Արտավազդ II -ի դիմագծերը իդեալականացված են այնպիսի նրբագեղությամբ, ինչպես հելլենիստական արվեստում ներկայացված էր Ապոլլոնը: Հեթանոս հայերի մոտ Արեգ-Ապոլլոն-Տիր աստծո պաշտամունքն անցյալից եկող խոր արմատներ ուներ և Արտշեսյանների օրոք պետական երկրպագության բնույթ էր ստացել: Ապոլլոնյան դիմագծերով դրամի վրա պատկերված Արտավազդ II -ը, բացի միապետ լինելուց, ջատագով էր արվեստի ու գրականության:(3,էջ 30):

Արքա Արտավազդ գրությամբ դրամները, ըստ երևույթին, թողարկվել են առաջինը: Արքայից արքա Արտավազդ գրությամբ դրախմաները և բրոնզները Արտավազդի դրամաթողարկման ժամանակագրության մեջ միջանկյալ տեղ են գրավում և ժամանակով միմյանց մոտ են: Արտավազդ II -ի դրախմաները թողարկվել են Ք. ա. 50/49 և Ք.ա. 49/48թթ.: Երևի թե նույն տարիներին էլ թողարկվել են նրա բրոնզները:

Արտավազդի տետրադրախմաները՝ արքայից արքա աստվածայինի գրությամբ, թվագրվում են Ք.ա 39/38 և Ք.ա. 38/37թթ.:(6,էջ 86-87, 95-95):

Ազգային դրամների թողարկման տնական անկման սկիզբը

Արդեն Արտավազդի թագավորության վերջին տարիներին հռոմեական զորքի արշավանքները, նրա ձերբակալությունը և մահը առժամանակ կասեցնում են հայկական ազգային դրամների թողարկումը: (2,էջ 97): Այս շրջանում Հայաստանը ներկայացվում էր Մարկոս Անտոնիոսի և Կլեոպատրայի դրամներում, որոնց վրա գրված էին՝ <<Անտոնիոս, քրմապետ, կոնսուլ՝նշանակված երկրորդ և երրորդ անգամ>>, <<Իմպերատոր երրորդ անգամ, եռապետ, հանրապետությունը հաստատող>>,<< Կլեոպատրայի՝ թագավորների և թագավորների որդիների թագուհու>>,<< Անտոնիոս. Հայաստանը հաղթված/ Armenia Victa/>>: Դրամների այս գրությունները ցույց են տալիս, որ թողարկումը կատարվել է Հայաստանը նվաճելուց և Արտավազդին գերեվարելուց հետո աշնանը Ալեքսանդրիայում կազմակերպված հաղթահանդեսի և << Ալեքսանդրիայի նվիրատվությունների>> կապակցությամբ, երբ Կլեոպատրան Անտոնիոսի կողմից հռչակվեց թագավորների թագուհի:(6,էջ 110-114):

Օգոստոսը ևս հետևել է Անտոնիոսի օրինակին, և ևս թողարկում է շքադրամներ՝ նվիրված Հայաստանին հետևյալ արձանագրություններով՝ <<Հայաստանը նվաճված>> և << Հայաստանը վերանվաճված>>: Այս շքա-դրամները մասսայական թողարկում չեն ունեցել, հետևաբար Հայաստանում և ընդհանրապես միջազգային շրջանառության մեջ լայն տարածում չէին կարող ունենալ:

Արդեն հաջորդ տարիներից հայտնի է Արտավազդ II -ի որդի Արտաշես II -ի պղնձյա դրամը, որի մի կողմին դրոշմած է երիտասարդ դիմագծերով Արտաշեսի դիմաքանդակը՝ կիսանդրու չափով՝ գլխին պապենական թագը: Մյուս կողմին ցույց է տրված հաղթություն բերող դիցուհին՝ պսակը ձեռքը, սլացիկ վազքի մեջ և գրված է << Մեծ արքա>>, որովհետև նա շուրջ տասը տարի գլխավորեց իր ժողովրդի պայքարը հռոմեական նվաճողների դեմ:

Տիգրան III -ի իշխանության տարիներից պահպանված հայկական դրամներն արդեն հայտնի են որոշակի պատկերաքանդակներով:(2,էջ696-699): Նրա պղնձե դրամի երեսին թագավորի կիսանդրին է աջ թեքված՝ ապարոշով, անմորուս, կրում է հինգ ծոպով խույրը, ութատամնավոր խոշոր աստղ: Դարձերեսին գրված է՝ << Արքայի Մեծի Տիգրանի աստծու>> և պատկերված է փիղ դեպի ձախ, կնճիթն էլ կախ/ հաղթանակի դիցուհին է նման պատկերով/: Այս դրամը հավանաբար թողարկվել է Արտաշատում և տեղական նշանակություն է ունեցել:(5, էջ 54-55):

Դրախմայի վրա էլ թագավորի կերպարն է դեպի ձախ կանգնած, հագին երկար պատմուճան, գլխին՝ հայոց թագը, աջ ձեռքը պարզած առաջ, իսկ ձախով երկար գավազանն է բռնած, իսկ մյուս կողմին գրված է << Արքայի Մեծի Տիգրանի հայրենասերի և հելլենասերի>>:

Տիգրան III-ից հետո արդեն Հայաստանում ազգային դրամների թողարկումն ավելի է սահմանափակվում: Պտուկյանը վկայում է , որ Արտավազդ III–ից ոչ մի դրամ ծանոթ չէ , իսկ Տիգրան արքայի պատկերներով դրամները հայտնի են բացառապես պղնձյա միավորներով, մի իրողություն, որը ևս վկայում է նրանց զուտ տեղական նշանակության մասին:Ի տարբերություն իր տոհմի բոլոր նախորդ արքաների՝ Տիգրան IV-ը դրամների վրա պատկերված է միանգամայն ինքնատիպ՝ նա կրում է պատկառելի մորուք, ունի տարեց մարդուն բնորոշ դիմագծեր, որով էլ մեծապես հեռացել է հելլենիստական Արևմուտքի արքայական կերպարներից: Տիգրան IV-ի դրամների վրա կան<<Արքայի Տիգրանի>>, <<Արքայի Տիգրանի հելլենասերի>> և <<Արքայի ՄեծիՏիգրանի>>արձանագրությունները: Առաջին տիտղոսաձը նշված է բարի ճակատագրի կամ հաղթանակի դիցուհու պատկերների հետ, երկրորդը՝ Աթենասի կերպարի, երրորդը՝ Վահագնի և կամ փղի պատկերների հետ: Սրանք թողարկվել են Ք.ա. 8-5թթ.: Թագավորության երկրորդ շրջանում իր քույր Էրատոյի հետ միասին ևս թողարկվել են պղնձյա դրամներ:(2,էջ 697):

Այս դրամների երեսին Տիգրանի կիսանդրին է դեպի աջ՝ հայկական խույրով և ապարոշով՝<<արքայից արքա Տիգրան>> տիտղոսով:Դարձերեսին Էրատոյի կիսանդրին է `<< Էրատո՝ արքայի Տիգրանի քույրը>> արձանագրությամբ:(5, էջ 59):

Տիգրան IV-ի և Էրատոյի դրամներով էլ հիմնականում ավարտվում է Արտաշեսյան հարստության դրամահատական գործունեությունը:Արտաշեսյաններից հետո հայ ազգային դրամների թողարկումը դարերով կանգ է առնում:

Սակայն Հայաստանում Արտաշեսյան դրամների շրջանառությունը շատ ավելի երկար է տևել, քան Արտաշեսյանների քաղաքական իշխանությունը. միշտ էլ սկզբում նոր դրամների հետ շրջանառության մեջ են լինում հին դրամները:

Պատմական դարաշրջանի ընկալումը դրամների միջոցով/առաջարկվող ռազմավարություն/

Դրամների ուսումնասիրությունն արդյունավետ միջոց է պատմական կարևորության ընկալման համար: Այս ռազմավարությունը սովորողներին կօգնի հասկանալ, թե ինչպիսի ուղերձ կամ նշանակություն ունեն դրամների պատկերները, ինչու են որոշ պետություն-ներ իրենց դրամական միավորներին պատկերել կենդանիներ, մյուսները՝ ինչ-որ կառույց-ներ, իսկ մեծ մասը՝ հայտնի մարդկանց:

Այս ռազմավարությամբ դասեր կարելի է անել ինչպես առանձին դասերի ընթացքում, այնպես էլ նախագծային ուսումնառության ընթացքում:

1. Պատմական նյութի շրջանակում դրամների ուսումնասիրության նպատակով կարելի է սովորողներին առաջարկել դրամներ ստեղծել պատմական որևէ ժամանակահատված կամ իրադարձություն ուսումնասիրելիս: Նրանք պետք է ընտրեն նյութը, որով ստեղծելու են դրամը, և որոշեն, թե ինչ պատկերներ են լինելու դրամին:
2. Նրանց կարող ենք աջակցող հարցեր տալ, օրինակ՝ ի՞նչ նյութ ընտրեցիք և ինչու՞, որքանո՞վ էր տվյալ նյութի կիրառումը բնորոշ ուսումնասիրվող ժամանակահատվածին և ինչու՞, ի՞նչ սկզբունքով էք որոշելու,թե ինչ պատկերել դրամին՝ դիմերեսին և դարձերեսին. որևէ անհա՞տ, իրադարձությու՞ն,թե՞ առարկա,ինչպիսի՞ տեսք կամ ձև պետք է ունենա դրամը, ո՞վ է պատմական ձեր հերոսը, եթե ոչ անհատի, ապա ի՞նչ կցանկանայիք պատկերել դրամի վրա և ինչու՞:
3. Հարկավոր է ժամանակ տրամադրել դրամները ստեղծելու թղթի վրա կամ էլեկտրոնային տարբերակով: Կարող են աշխատել ինքնուրույն կամ փոքր խմբերով:
4. Ապա ցուցադրեն իրենց <<թողարկած>> դրամները և բացատրեն սեփական որոշումները դրամի ստեղծման հարցում. օրինակ՝ ի՞նչն են կարևորել և ինչու՞:

5. Ցանկալի է քննարկել ուսումնասիրվող պատմական նյութին առնչվող իրական դրամները: Կարելի է կազմակերպել համեմատական քննարկում նույն ժամանակահատվածի այլ դրամների հետ՝ առկա ընդհանրություններն ու տարբերությունները հասկանալու համար:

Կարելի է աշխատանքը զարգացնելու համար սովորողներին առաջարկել ստեղծել անվանական տարբեր արժեքներով դրամներ, տալ աջակցող հարցեր, օրինակ՝ արդյո՞ք դրամների պատկերները բաշխվելու են ըստ կարևորության, այսինքն որքան ավելի կարևոր է անհատը կամ երևույթը,այնքան ավելի բարձր արժողությամբ դրամի վրա է այն պատկերվելու՞, թե՞ ոչ: Եթե՝ այո, ապա՝ ինչու՞, ինչ սկզբունքով է որոշվելու ուսումնասիրվող ժամանակահատվածի անհատների, առարկաների կամ իրադարձությունների կարևորությունը:Սա հիանալի միջոց է սովորողների հետ պատմական կարևորության հարցը քննարկելու համար:

Կարող ենք առաջարկել նաև ոչ միայն քննարկել, թե ով կամ ինչ պետք է լինի դրամին պատկերված, այլև ում կամ ինչ պատկերով դրամը պետք է հանվի շրջանառությունից և ինչու:

Ժամանակի ընթացքում պատմական կարևորության վերաբերյալ եղած պատկերացումների փոփոխությունների ճշմարիտ ընկալման համար սովորողներին կարելի է առաջարկել համեմատական քննարկում անցկացնել տարբեր ժամանակների դրամների վերաբերյալ: Հետևյալ կայքում կարող ենք ուսումնասիրել նաև աշխարհի բոլոր երկրների ներկայիս դրամական միավորը և համեմատել դրանք միմյանց հետ(https://www.banknoteworld.com/banknotes-by-Country/): (7,էջ115):

Օրինակ՝ կարելի է համեմատել Արտաշեսյանների և Կիլիկյան Հայաստանի դրամները: Ի՞նչն է փոխվել, ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան և ինչու՞ (Վեննի դիագրամի կամ m-աձև աղյուսակի միջոցով):Կարող ենք քննարկել դրանց մետաղական ձուլվածքների տեսակները՝ արծաթ, ոսկի,պղինձ և այլն:Ինչ ուղերձներ կարող էին պարունակել դրամների պատկերները, ինչու էին հենց այդ ուղերձներն ընտրված: Վերլուծել զարգացած դրամաշրջանառության ազդեցությունը տնտեսության զարգացման վրա, համեմատեն այսօրվա հետ. . .

Կարելի է համեմատել նաև Հայաստանի Առաջին Հանրապետության, Խորհրդային Հայաստանի և Հայաստանի Հանրապետության դրամները:Կարելի է քննարկել, թե ինչն է փոխվել, ինչ ուղերձներ են դրանք պարունակում, ինչ են կարևորում և ինչու(օրինակ՝ ՀՀ թղթադրամին կանայք չեն պատկերվել և այլն):

Թեման ուսումնասիրելիս կարող ենք հեշտությամբ ապահովել միջառարկայական կապը հասարակագիտության, ձեռնարկատիրական կրթության, հանրահաշվի,ինչու չէ նաև քիմիայի հետ:

Իհարկե, ցանկալի է նման թեմայի ուսումնասիրության արդյունքում կազմակերպել էքսկուրսիա դեպի կամ ՀՀ ԿԲ կամ պատմության թանգարան, որպեսզի նյութն առավել ամրապնդվի և մնայուն լինի, ինչպես ասում են ՝ ավելի լավ է մեկ անգամ տեսնել, քան տասն անգամ լսել:

Եզրակացություն

Այսպիսով, Ք.ա. 2-1 դարերում երկրի հզորացման պայմաններում, մեծ թափ են ստանում ազգային դրամների թողարկումները՝ շնորհիվ Արտաշեսյան-ների:Չնայած, որ Հայաստանում այդ նույն ժամանակ շրջանառության մեջ են եղել նաև կապադովկյան և պարթևական դրամները. Միջազգային առևտուրըդրանք բերել էր հայկական շուկաներ Կապադովկիայից, Իրանից ու Միջագետքից, այնուամենայնիվ, իհարկե, տեղական, սեփական, ազգային դրամների թողարկումը շատ ավելի մեծ դեր ունեցավ և նպաստեց երկրի զարգացմանը:

Արտաշեսյան Հայաստանում դրամաթողարկման սկիզբն ու ծաղկումը միաժամանակ վերաբերում է Տիգրան Մեծի կառավարման շրջանին, երբ առատորեն թողարկվել են բարձրորակ արծաթե և պղնձե դրամներ: Հենց Տիգրան Մեծի օրոք էլ հայկական դրամները միջազգային ճանաչում գտան:Իհարկե, դրան նպաստեց Արտաշատի՝ ներքին ու արտաքին առևտրի խոշոր կենտրոն լինելը, նաև Տիգրան Մեծի աշխարհակալ տերության ստեղծումը:

Արդեն Տիգրան Մեծի անմիջական հաջորդների օրոք խիստ կրճատվում է հայկական դրամներ թողարկումը և ընկնում նրանց դերն ու նշանակությունը միջազգային առևտրում:Արտավազդ 2-րդի արծաթե դրամները հիմնականում թողարկվում էին հիմնականում միայն Հայաստանում: Ի տարբերություն Տիգրան Մեծի դրամների, որոնք ստվար խումբ էին կազմում հին հայկական դրամների շարքում, Արտավազդի դրամները քիչ օրինակներով են հայտնի: Իսկ վերջին Արտաշեսյանների դրամները մեծ տարածում չեն ունեցել ոչ

արտաքին առևտրում, և ոչ էլ բուն Հայաստանում:Դրանք հիմնականում լինելով պղնձից՝ չէին կարող ընդունվել օտար շուկաներում: Եվ , ընդհանրապես, պղինձը միշտ էլ ավելի շատ մնում է երկրի ներսում՝ ի տարբերություն արծաթի:

Սակայն Հայաստանում արտաշեսյան դրամների շրջանառությունը շատ ավելի երկար է տևել, քան Արտաշեսյանների քաղաքական իշխանությունը: Միշտ էլ նոր դրամների հետ շրջանառության մեջ են լինում հին դրամները: Արտաշեսյանների անկումից հետո դրամական շրջանառությունը Հայաստանում թևակոխում է զարգացման մի նոր փուլ, երբ հռոմեական կայսրության դրամները մեծ տարածում են գտնում, և արդյունքում ազգային դրամների թողարկումը մի քանի դարով դադարում է:

Ինչ վերաբերում է մեթոդական մասին, ապա առաջարկած ռազմավարության միջոցով կարելի է մի ամբողջ թեմա ուսումնասիրել և հայոց պատմության, և համաշխարհային պատմության շրջանակներում: Այսինքն՝ կարելի է աշխարհի տարբեր երկրների թղթադրամների պատկերներն ուսումնասիրել և համեմատել ու հակադրել ստացված արդյունքները: Դրամներն ուսումնասիրելիս կարելի է քննարկել, օրինակ՝ ի՞նչն են դրանք կարևորում,ի՞նչ ընդհարական ուղղություններ ունեն, արդյո՞ք տարբեր երկրներում կանայք դրամներին նույնքան հավասարապես են ներկայացված, որքան տղամարդիկ, կա՞ արդյոք հատուկ շեշտադրում գրականության կամ գիտության ներկայացուցիչների ուղղությամբ կամ կա՞ արդյոք որևէ օրինաչափություն այդ ամենում:Ի՞նչ են ցույց տալիս այս տեսակի վերլուծություններն այլ երկրների դավանած արժեքների և մշակույթի մասին:

Եվ շատ կարևոր է, որպեսզի սովորողները պատմական մտածողություն ձևավորեն և ոչ թե միայն դրա որոշ հատվածները յուրացնեն, պետք է խրախուսել նրանց ամբողջական պատմական մտածողություն կիրառել: Սովորողների պատմական մտածողությունը կզարգանա, եթե նրանց հանձնարարենք մտածել պատմության մասին՝ որպես իմացության ձևի, ինչպես նաև դրա սահմանների ու ներուժի մասին:

Գրականություն

1.Մուշեղյան Խ. <<Դրամական շրջանառությունը Հայաստանում>> Երևան1983թ.:

2.<<Հայ ժողովրդի պատմություն>> հատոր 1, ԳԱ հրատարակություն, Երևան 1971թ.:

3.Մուշեղյան Խ. <<Հայաստանի դրամական գանձերը>>, Երևան 1973թ.:

4.Аракелян Б. “Арташат” I , Ереван 1982г.:

5.ՊտուկեանԶ. <<Արտաշեսյան հարստութեան դրամները>>, Վիեննա 1969թ.:

6. ՎարդանյանՌ. <<Արտավազդ II-ի դրամները>>,Երևան 2004թ.:

7.<<Պարադիգմա>> կրթական հիմնադրամ(2020):Գիրք պատմության ուսուցման.ինչու՞,ինչպե՞ս:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Սուրեն Արմենի Թազայան

Վանաձորի թ.17 ավագ դպրոցի պատմության ուսուցիչ

Հետազոտական աշխատանք

Թեմա - << ՀԱՅԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ>>

Ղեկավար՝ Ս. Աղաջանյան

, ՀԱՅԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ե ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

,Զուրկ է մի ժողովուրդ ինքնապաշտպանության ընդունակությունից՝ նշանակում է նա զուրկ է ամեն առաքինությունից, զուրկ է գոյության բարոյական իրավունքիցե:
Գ.Նժդեհ

Առաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրքերի կողմից իրականացվեց հայերի ցեղասպանությունը: Սակայն որքան էլ դաժան էին ու անսպասելի կոտորածները, միևնույնն է՝ դրանք չկոտրեցին հայերի պայքարի ոգին, ու նրանք ինքնապաշտպանության դիմեցին: Լիբանանցի իրավագետ Մեթր Մուսա Պրենսը հայերի զանգվածային կոտորածները բնութագրել է որպես <<արմենոցիդ>> (հայասպանություն): Նա հայերի ցեղասպանությունը համարել է պատմության մեջ անպատիժ մնացած ոճրագործություն:[1]

Ինքնապաշտպանական մարտերի ուսուցանումն իր անգնահատելի տեղն ունի հայոց պատմության դասընթացում: Այն ոչ միայն տեղեկատվական, գիտական նյութ ու փաստեր է տալիս աշակերտին, այլ նրա մեջ դաստիարակվում է հայրենասիրություն, հպարտություն սեփական ժողովրդի անցյալի նկատմամբ, հարգանք հայ հերոսների ինքնազոհության, կամք ու տոկունություն դաստիարակում մատաղ սերնդի մոտ: Ինքնապաշտպանական մարտերի պատմությունը կարմիր գծի նման անցնում է հայոց պատմության ողջ դասընթացում, ուստի և կարևոր է, թե աշակերտին ինչպես է մատուցվում այդ նյութը, ինչպես է նյութը յուրացվում նրա կողմից:

1915 թ. հայ ժողովրդի պատմության մեջ ոչ միայն մեծ ողբերգության, մեծ եղեռնի տարի է, այլև անօրինակ մաքառումների, հերոսական ինքնապաշտպանության, չտեսնված գոյաարտերի տարի: Արևմտահայերի ինքնապաշտպանությունը, ինչպես ամեն մի ինքնապաշտպանություն, միանգամայն բնական էր ու օրինական, քանզի ինքնապաշտպանության գաղափարը համամարդային գաղափար է: Արևմտահայերի ինքնապաշտպանությունը ոչ թե դավադրություն էր, այլ կենսական անհրաժեշտություն, գոյության կռիվ, մաքառում եղեռնի դեմ:

Նյութը նպատակահարմար է ուսուցանել երկու դասաժամով: Առաջին դասը սկսվում է խթանման փուլով, երբ ուսուցչի կողմից առաջադրվում է հարց, թե ինչ ասոցիացիաներ է առաջացնում ,նքնապաշտպանությունե հասկացությունն առհասարակ: Մտագրոհի մեթոդով աշակերտները գրատախտակին գրի են առնում իրենց առաջին մտքերը, գաղափարները: Ոմանք էլ բերում են օրինակներ, թե անցած նյութից ո՛ր ինքնապաշտպանական մարտերն են հիշում, մարտեր, որոնք տեղի են ունեցել սոլթան Աբդուլ Համիդի կառավարման՝ <<զուլումիե տարիներին>>: Այսպիսով, աշակերտները ևս մեկ անգամ վեր հիշում են 1894 թ. Սասունի, 1895-

1896 թթ Զեյթունի և 1896 թ. Վանի ինքնապաշտպանական կռիվները ու նրանց ղեկավարների պատմությունը:

Կազմակերպած կոտորածները արևմտահայության համար անսպասելի էին, ուստի արևմտահայությունը չկարողացավ դիմագրավել դահիճներին ու սրի քաշվեց: Բայց, այդուհանդերձ, մի շարք վայրերում հայերն արագորեն համախմբվեցին ու դիմեցին ինքնապաշտպանության: Հայերն ինքնապաշտպանության դիմեցին Վանում, Մուշում, Սասունում, Շապինգարահիսարում, Սուեդիայում, Ուրֆայում:

Դասի նյութը հեշտ յուրացնելու համար ուսուցիչն առաջարկում է աշակերտներին կազմել հետևյալ գծապատկերաղյուսակը.

Վայրը	Տարեթիվը	Ինքնապաշտ-պանության սկիզբը	Ինքնապաշտ-պանության ավարտը	Զինվորական մարմնի անդամները
Շատախ	1915	Ապրիլի 1	Մայիսի 14	Բաղդիկ Սիմոնյան
Վան 1.Այգեստան 2.Քաղաքամեջ	1915 1915	Ապրիլի 7	Մայիսի 5	Արմենակ Եկարյան Բուլղարացի Գրիգոր, Կայծակ Առաքել Մ. Թերլեմեզյան , Հայկ Կոսոյան
Մուշ Սասուն				

Աղյուսակի յուրաքանչյուր տող պետք է լրացնել նյութի համապատասխան հատվածի մասին տեղեկությունը ստանալուց հետո: Վանի ինքնապաշտպանության մասին խոսելիս ուսուցիչը նշում է, որ ինքնապաշտպանությունը ,այս ու այն կուսակցությանն և անհատներին վերագրելը հիմնովին թյուրիմացություն է. <<…ամենքն իրենց բաժին աշխատանքն ունեցան և ուս-ուսի կռվեցան: Պատիվ այդ անընկճելի ժողովրդյան, որ հայի պատիվն ու մեր կյանքն ազատեց>>[3]: Մուսա լեռան ինքնապաշտպանության մասին խոսելիս աշակերտն ավելի շատ բան կհիշի ,Մուսա լեռան 40 օրը վեպից: Հեռուստաբեմադրությունից դրվագներ դիտելով, իսկ ժամանակակից տեխնոլոգիաները դրա համար լայն հնարավորություն են ապահովում: Միաժամանակ ուսուցիչը աշակերտներին առաջարկում է կարդալ Ֆ. Վերֆելի <<Մուսա լեռան 40 օրը>> վեպը: Փաստական նյութի հետ աշակերտներին

ծանոթացնելուց և գծակարգ աղյուսակը լրացնելուց հետո ուսուցիչն աշակերտներին առաջարկում է ինքնապաշտպանական մարտերը ներկայացել <<Ապագայի անիվը>> մեթոդով:



Այս մեթոդի միջոցով աշակերտին ավելի տեսանելի կլինեն ինքնապաշտպանական մարտերի պատճառները, հետևանքները, առանձին դրվագներն ու տարեթվերը: Լրացնելով ,ապագայի անիվե գծանկարը՝ աշակերտներն ինքնուրույն դատողություններ են անում ինչպես պատճառների, այնպես էլ հետևանքների վերաբերյալ: Այս մեթոդն աշակերտների մոտ զարգացնում է տրամաբանական մտածողությունը, վերլուծելու կարողությունն ու վերջապես պատճառահետևանքային կապի վերհանումը: Երկրորդ դասին ուսուցիչն աշխատում է պարզել յուրացման որակը: Կշռադատման փուլում նա առաջարկում է դասարանին լրացնել պատմական հիշողության օղակը.



Այս օղակները լրացնելուց հետո ուսուցիչը նորից անդրադառնում է առաջին դասաժամին լրացրած գծային աղյուսակին: Դասարանը բաժանվում է երկու խմբի, խմբերից յուրաքանչյուրը ստանում է իր առաջադրանքը: Նրանցից յուրաքանչյուրը պետք է լրացնի իր գծակարգ աղյուսակը: Ընդ որում, ուսուցիչը նախօրոք լրացրել է այդ գծակարգ աղյուսակների հորիզոնական մի քանի վանդակներ, իսկ մյուս վանդակները պետք է լրացնեն աշակերտները: Երբ աշխատանքն ավարտում են, խմբերը փոխանակում են իրենց աղյուսակները, ստուգում, լրացնում, ուղղումներ կատարում:

Այս առաջադրանքն ավարտելուց հետո ուսուցիչն առաջարկում է Վենի դիագրամով համեմատել 1915 թ. ինքնապաշտպանական մարտերը և արցախյան հերոսամարտի դրվագները, որքանով որ հիշում են: Այս մեթոդով աշակերտները պարզում են նմանություններն ու տարբերությունները:

Դասի ուսումնասիրությունը այս մեթոդների միջոցով օգնում է աշակերտին հանգել եզրակացության, որ թեև արևմտահայությունը պատրաստ չէր ինքնապաշտպանության, այնուամենայնիվ, որտեղ հնարավոր էր դիմեց անձնվեր գոյամարտի: Եվ չնայած այդ ինքնապաշտպանական մարտերին՝ դարավոր ոսոխն ամայացրեց Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան: Թուրքական բռնակալության ցեղասպան քաղաքականությունն ընդգրկեց Օսմանյան կայսրության բոլոր հայաբնակ վայրերը: Հայերի բնաջնջումն իրականացվում էր թե՛ տեղերում, թե՛ բնագաղթի ճանապարհներին, թե՛ աքսորավայրում: Եթե 1914 թ. պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունում ապրում էր մոտավորապես 2.5-3 միլիոն հայ, ապա նրանցից ավելի քան 1,5 միլիոնը բնաջնջվեց, իսկ մնացածը գաղթեց Անդրկովկաս և Ռուսաստան, Մերձավոր Արևելքի երկրներ, Եվրոպա և Ամերիկա, և միայն մի փոքր մասը մնաց Թուրքիայում, բայց նա էլ հետագայում զոհ դարձավ քեմալականների խժդժություններին: Քիչ հայեր մնացին Կ.Պոլսում, իսկ վիլայեթներում հայության թշվառ բեկորներին մահմեդականացրին: Եթե պատերազմի ժամանակ հայկական կոտորածներին զումարվեն 19-րդ դարի վերջին տասնամյակներին Թուրքիայում տեղի ունեցած ջարդերն ու 1918-1922 թվականների զանգվածային սպանությունները, ապա ցեղասպանության զոհերի թիվը կկազմի ավելի քան 2 միլիոն:

Սուլթանական Թուրքիայի հայաջինջ քաղաքականության մշակման ու իրականացման հովանավորն ու ակտիվ գործակիցն էր կայսերական Գերմանիան, իսկ արևմտյան մյուս տերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, ԱՄՆ-ն փաստորեն վարում էին հայկական կոտորածների թույլտվության ու խրախուսման քաղաքականություն: Դ. Լլոյդ Ջորջը, մասնավորապես խոսելով Անգլիայի մասին, գրել է. <<Հայաստանը զոհաբերվեց մեր կողմից բարձրացված զոհասեղանին: Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հասցրեց 1895-1897 թթ. սարսափելի սպանդներին և 1915 թ. ահավոր կոտորածներին >> :[6] Ժ. Կլեմանսոն /Ֆրանսիա/ ասել է. << Եվրոպական դիվանագիտության վրա է ծանրանում հայկական արյունը>> : [4]

1916 թ. կնքված Սայքս-Պրկոյի համաձայնագրով էլ արդեն պարզ էր, որ Թուրքիայի տարածքը պետք է բաժանվեր դաշնակից պետությունների միջև (Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա): Այսպիսով, առաջին աշխարհամարտը սկսվեց ու ավարտվեց որպես անարդարացի, զավթողական պատերազմ, իսկ նրա հանցավորները չպատժվեցին: Թեև 1915 թ. մայիսին Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կառավարությունները Թուրքիային բողոքի նոտա այն մասին, որ նրա կառավարողները պատասխանատվություն կկրեն կատարած հանցագործությունների համար, սակայն պատմական անարդարությունն այդպես էլ չուղղվեց: Հենց այդ հանգամանքն էլ հետագայում ոգեշնչեց Հիտլերին, որը իր հրոսակախմբերին մղելով հրեշավոր սպանությունների՝ պնդում էր. <<Այսօր էլ ո՞վ է խոսում հայերի բնաջնջման մասին>>:[5] Իսկ ժամանակի առաջադեմ հասարակությունը դատապարտել է այդ հրեշավոր ոճրագործությունը: Բողոքի ելույթներով հանդես են եկել Մ. Գորկին, Վ. Բրյուսովը, Ա. Ֆրանսը, Ռ. Ռոլանը, Ա. Մեյեն, Նանսենը: Ա. Ֆրանսը գրել է. <<Հայերի դատը մարդկության դատն է, հետևաբար, նրանք պետք է ամբողջ մարդկությանը հետաքրքրեն այդ դատով: Եվրոպային և արար աշխարհին իրենց ձայնը հասցնելու համար բոլոր հայերի ձայնը մեկ ձայն պիտի կազմի>> :Բազմաթիվ երկրներ դատապարտել են նոր ժամանակների այդ առաջին զանգվածային ցեղասպանությունը և անարգանքի սյունին գամել նրա հանցավորներին:

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան 1948 թ. դեկտեմբերի 9- ին հաստատել է <<Կոնվենցիա գենոցիդի հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին>>: Գենոցիդը՝ ցեղասպանությունը, ծանրագույն հանցագործություն է մարդկության և մարդկայնության դեմ, և նրա հանցավորների վրա չի տարածվում վաղեմության իրավունքը:

Վերջում թեման ամփոփում է ուսուցիչը՝ նշելով, որ տարբեր պատմական ժամանակահատվածներում հայ ժողովրդի ինքնապաշտպանական մարտերը դարձել են մեր գոյության առհավատչյան, մեր կենսագրության բաղկացուցիչ մասը, մեր գենետիկ կոդի վերծանման բանալիներից մեկը: Եվ այստեղ կարելի է հիշել Անատոլ Ֆրանսի ևս մեկ խոսք. <<Թուրքիայի դժբախտ զոհը՝ Հայաստանը, մեռնում է, բայց նա կվերածնվի: Նրան մնացել է շատ քիչ թանկագին արյուն, որից կծնվի մի հերոսական սերունդ>>:[2] 20-րդ դարի սկզբի ինքնապաշտպանական մարտերի դասերն են նաև, որ 20-րդ դարի վերջին մեզ դարձյալ մղեցին ինքնապաշտպանվելու թրքության նոր օղակի՝ ազերիականության դեմ: Եվ մինչև հայկական բանակի կազմավորումը հայերը վաշտեր կազմեցին, երկրապահ ջոկատներին, գյուղական աշխարհազորներին անդամագրված մեր տղաները իրենց նախնիների ոգով տոգորված, մղեցին մարտեր՝ պաշտպանելով Արցախը, Տավուշը, Արարատն ու Սյունիքը՝ հաղթական վերջակետ դնելով հայ-ադրբեջանական պատերազմում: Դասի արդյունավետությունը պարզելու համար ուսուցիչը տնային առաջադրանք է հանձնարարում՝ լրացնել քառաբաժին աղյուսակը.

1.Ի՞նչ եք տեսնում տեքստը կարդալիս 1. Տեսողական 2. Լսողական 3. Զգայական	*2.Ի՞նչ եք զգում տեքստը կարդալիս* 1. հույզեր 2. զգացմունքներ
3.Կապը իրական կյանքի հետ 1. ասոցիացիաներ 2. առնչություններ 3. օրինակներ	*4.Նոր վերնագիր և լոգո* 1. վերաիմաստավորում 2. գնահատում

Տարբեր մեթոդների կիրառումը կոնկրետ այս թեմայի ուսուցման ժամանակ առաջ է բերում աշակերտների հետաքրքրությունը, ակտիվացնում է նրանց մասնակցությունը դասապրոցեսին, զարգացնում պատճառահետևանքային կապերի վերլուծման տրամաբանությունը: Եվ այս ամենն ավելի դյուրին է դարձնում դժվար հիշվող այս նյութի յուրացումը:

Բանալի բառեր. ինքնապաշտպանական մարտեր, աշակերտ, նյութ, դաս, աղյուսակ, դիագրամ, պատմություն, զինվոր:

Ամփոփում

Հետազոտական աշխատանում ներկայացված են 1915 թ. ինքնապաշտպանական մարտերը, դրանց ուսուցման առանձնահատկությունները 11-րդ դասարանում: Վերլուծվում են նյութի մատուցման այն տարբերակները, որոնք ավելի դյուրին են դարձնում նյութի ընկալումն աշակերտի կողմից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազատ Համբարյան, Ստեփան Ստեփանյան, Հայոց ցեղասպանություն, Երևան, 1995թ.:
2. Հայ ժողովրդի պատմություն, Վ. Պարամյան, հատոր 3, Երևան, ,Լույսե. 1967 թ.:
3. Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. 2-րդ, գիրք 3-րդ, Երևան, 1996 թ.:
4. Հայկական Սովետական հանրագիտարան, հատոր 12, Երևան, 1987 թ.:
5. Հայկական Սովետական հանրագիտարան, էջ՝ 156, Երևան, 1987 թ.:
6. Лиойд.Дж. , <<Правда о мирных договорах>> т. 2, М., 1957.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

Հայոց պատմություն

Հետազոտական աշխատանք

Թեմա - Արևմտահայ մամուլը 19-րդ դարում (Կ. Պոլիս և Զմյուռնիա)

Կատարող – Լիդա Մանուկյան
Սպիտակի Սուրեն Ավետիսյանի անվան ավագ դպրոցի պատմության ուսուցչուհի

Ղեկավար – Ս. Աղաջանյան

Վանաձոր 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Գլուխ առաջին

Պարբերականները Կ. Պոլսում

Պոլսահայ մամուլը----------5

1.1 «Մասիս» (1852-1908)----------9

1.2 «Մեղու» (1856-1865)----------14

Գլուխ երկրորդ

Պարբերականները Զմյուռնիայում

Զմյուռնահայ մամուլը----------20

2.1 «Արշալույս Արարատյան» (1840-1884)----------22

2.2 «Ծաղիկ» (1861-1867)----------26

Եզրակացություն----------30

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ----------33

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարի 50-60-ական թթ. հայ հասարակական-քաղաքական միտքը և, առհասարակ, հրապարակախոսությունը զարգացավ որոկապես նոր հարթության մակարդակում, որն ըստ էության առաջին հերթին պիտի արտահայտվեր արևմտահայ գրական-մշակութային երկու խոշորագույն կենտրոններում՝ Կ. Պոլսում և Զմյուռնիայում:

19-րդ դարում նշված ժամանակաշրջանն իրավամբ համարվում է արևմտահայ մամուլի առաջացման, աշխուժացման, գաղափարական մտքի վերելքի շրջան: Դրանք իրենց հրատապությունն ու ինքնատիպությունը պահպանում են ոչ միայն հետագայում, այլև այժմեական են մեր օրերում, քանզի և՛ պարբերական մամուլի, և՛ առհասարակ, հասարակական-քաղաքական մտքի որոշ հանգուցային հարցեր, դեռ հետազոտման և վերջնական իրենց ճիշտ և արդարացի լուծման կարիքը ունեն: Այսօր էլ դրանք թե՛ գրականագիտական, թե՛ պատմագիտական առումով շարունակում են մնալ մասնագետների ուշադրության կենտրոնում՝ էլ ավելի խորացնելով վերջիններիս գիտական հետաքրքրությունների շրջանակը:

Ուսումնասիրության թեման արդեն որոշ չափով արտացոլում է առկա ժամանակաշրջանի ինչպես մշակութային ու գիտական ձեռքբերումները, այնպես էլ արևմտահայության սոցիալ-տնտեսական կյանքի դժվար կացությունը, 1839 և 1856 թթ. թուրքական երկու հրովարտակների՝ **«Թանզիմաթ»-ի** (թուրք.՝ **«Հաթթը Հյումայուն»**) հրապարակումը, դրանք ի կատար ածելու ոչ գործնական քայլերի ձեռնարկումը, բռնաճնշումների ու հալածանքների քաղաքականության կիրառումը թուրքական իշխանությունների կողմից և այլն: Թեմայի ուսումնասիրության հայեցակարգից է բխում նաև արևմտահայ սահմանադրական շարժումը, Սահմանադրության հռչակումը, Կ. Պոլսի Կրոնական և Ազգային ժողովների գործունեությունը, կղերա-ամիրայական դասի ներկայացուցիչների երկդիմի կեցվածքը ազգային խնդիրների հետ կապված և այլն:

Վերոնշյալ գործընթացներն այն հիմնախնդիրների ամբողջությունն է, որոնք մշտապես հուզել են հայ հասարակական-քաղաքական հոսանքներին, որոնց գաղափարախոսությունը կամա թե ակամա պիտի արտահայտվեր նոր ասպարեզ իջնող և, միանգամայն, այլ բովանդակություն ու ուղղություն ունեցող

պարբերականների էջերում: Ելնելով վերոնշյալից, պիտի փաստենք, որ առկա հիմնահարցերը մեր օրերում ևս ունեն ինչպես գիտաճանաչողական, այնպես էլ գիտաքաղաքական նշանակություն, ուստի փորձել ենք դարձնել ուսումնասիրության օբյեկտ՝ թեման ուսումնասիրելու շրջանակներում:

ԳԼՈՒԽ I

ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ Կ.ՊՈԼՍՈՒՄ

ՊՈԼՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

Հայերը Կ. Պոլսում հաստատվել են վաղ ժամանակներից: Դեռ 572 թ. այստեղ ստեղծվել էր առանձին հայկական համայնք: Կ. Պոլսի առաջին հայերը եղել են զինվորականներ, վաճառականներ, ճարտարապետներ (հայ ճարտարապետ Տրդատը (շուրջ 940-մահվան թվականն անհայտ է, հավանաբար՝ 1020 թ. հետո): Բյուզանդական Բարսեղ II (976-1025) կայսեր հրավերով նա կառուցել է Սբ. Սոֆիա տաճարի գմբեթի արևմտյան մասը): 9-11-րդ դդ., երբ բյուզանդական գահն անցնում է Մակեդոնական (Հայկական)* արքայատոհմին, սկսվում է նկատելիորեն աճել հայ բնակչության թվաքանակը՝ դրանով իսկ մասնակցություն ունենալով Կ. Պոլսի քաղաքային կյանքին:

1453 թ. (մայիսի 29) Կ. Պոլսի անկումից հետո (ի դեպ հայերը հույների հետ մեկտեղ մասնակցել են քաղաքի պաշտպանությանը) սուլթան Մուհամմեդ II-ը (1444-1446/1451-1481), հույների և հրեաների հետ միասին քաղաքը բռնագաղթեցրեց հայ արհեստավորներով և վաճառականներով, որոնք իրենց գործուն մասնակցությունն ունեցան նոր մայրաքաղաքի վերականգնմանը (վերոնշյալ գործընթացները նկատելիորեն աղնրադարձան հայ բնակչության թվաքանակի վրա):

1461 թ. Կ. Պոլսում ստեղծվեց Հայոց պատրիարքությունը (նշվում է նաև Պատրիարքություն Հայոց Թուրքիո ձևով), որին սուլթանը տվեց որոշ եկեղեցական-համայնական իրավունքներ[1]:

Առաջին պատրիարքն եղել է Հովակիմ եպիսկոպոսը, որի աթոռանիստն էր Սամաթիայի Սբ. Գևորգ եկեղեցին: 1643-1644 թթ. աթոռը տեղափոխվել է Գում-Գամփու,[2] Սբ. Աստվածածին եկեղեցի, ուր մնում է մինչ օրս:

---

* Բյուզանդական կայսր **Բարսեղ II (976-1025)** ուներ հայկական ծագում: Այդ իսկ պատճառով էլ պատմագրության մեջ **Մակեդոնական դինաստիան (867-1056)** երբեմն կոչվում է հայկական անվամբ:

[1] ՀՍՀ, հ. V, «Հակոբ Մեղապարտ» հրատ., Երևան, 1979, էջ 617:

[2] ՀՍՀ, հ. IX, «Հակոբ Մեղապարտ» հրատ., Երևան, 1983, էջ, 217:

1478 թ., արդեն Կ. Պոլսում բնակվում էր 1000[3] տուն հայ ընտանիք, 100-120 հզ. բնակչությամբ[4]:

Հետագայում հայերի թիվն ավելանում է մի կողմից պարբերաբար կրկնվող բռնագաղթերի 16-17-րդ դդ. թուրք-պարսկական պատերազմների հետևանքով և մյուս կողմից՝ իրենց հայրենի օջախը հարկադրված թողած և Կ. Պոլիս կամավոր եկած աշխատանք որոնողների՝ պանդուխտների հաշվին (հայերը Կ. Պոլիս էին գալիս Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից, հատկապես Սեբաստիայից ու Ակնից, ինչպես նաև Կիլիկիայից, Արևելյան Հայաստանից, Անդրկովկասից, Պարսկաստանից և այլ հայաշատ վայրերից), ինչի արդյունքում հայերն արդեն 17-րդ դ. Կ. Պոլսի ոչ թուրք բնակչության մեջ թվաքանակով զբաղեցնում են երկրորդ տեղը՝ հույներից հետո և առաջ անցնելով հրեաներից:

Այստեղ պետք է ընդգծենք շատ կարևոր մի փաստ՝ կապված Կ. Պոլսի ոչ մահմեդական բնակչության գործունեության հետ: Վերջիններս ներառված էին միլեթներ* կոչված համակարգում, որը քիչ թե շատ իրավունքներ էր ընձեռում ոչ մահմեդական համայնքներին կրոնամշակութային, մասամբ՝ քաղաքացիական հարաբերությունների բնագավառում որոշակիորեն տրված արտոնությունների շնորհիվ[5]:

19-րդ դ. էապես փոխվեց Կ. Պոլսի հայ ազգաբնակչության ժողովրդագրական պատկերը19-րդ դ. սկզբին նրանց թիվը հասավ 150 հզ., 1840-ական թթ.՝ 220 հզ., 1860-1880-ական թթ.՝ 250-300 հզ.[6]:

Հայ բնակչության տարբեր խավերի կենտրոնացումը մեկ ընդհանուր միջավայրում կամա թե ակամա ստեղծել էր այն անհրաժեշտ նախադրյալները, որով պիտի սկզբնավորվեր պոլսահայ մտավորականությունը՝ հետագայում հիմք հանդիսանալով Կ. Պոլիսը, արևմտահայ գրական-մշակութային կյանքի և հասարակական-քաղաքական մտքի կարևորագույն կենտրոնի վերածելու գործում:

---

[3] ՀՍՀ, հ. V, Երևան, 1979, էջ 617:

[4] **Ղազարյան, Հ.,** Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967, էջ 374:

* **միլեթ** – ոչ մահմեդական համայնք Կ. Պոլսում XV դ. սկսած.

[5] **Խառատյան. Ա.,** Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դդ.), Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2007, էջ 59, 307-308:

[6] **Ղազարյան Հ.** նշվ. աշխ. էջ 394: Տե՛ս նաև ՀՍՀ, հ. V, «Հակոբ Մեղապարտ» հրատ., Երևան, 1979, էջ 618:

Պակաս կարևոր դեր չխաղաց այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրությունը, 19-րդ դ. առաջին կեսին դառնալով եվրոպական երկրներին կցորդված գաղութային մի երկիր, իրենից այլևս վտանգ չէր ներկայացնում, ինչպես քաղաքական, այնպես էլ՝ առավել ևս նվաճողական տեսակետից: Վերոնշյալ գործընթացներին ավելացավ այն, որ կայսրության առաջադեմ մտավորականության շրջանակները երկու անգամ փորձեցին իրականացնել ընդգծված եվրոպական տարրեր պարունակող բարեփոխումներ, համապատասխանաբար, 1839-ից հետո, 1856 թ. հրապարակելով բարեփոխումների ևս մեկ հրովարտակ՝ «Հաթթը Հյումայուն»-ը: Ճիշտ է, դրանց ծրագրային դրույթներում կային որոշակի ռեֆորմների տարրեր կապված սոցիալ-տնտեսական և քաղաքական բնագավառների վերափոխումների հետ, սակայն, մակերեսային բովանդակություն ունենալու, ինչպես նաև մի շարք գործոնների հետևանքով թանզիմաթը ցանկալի արդյունք չտվեց՝ մնալով լոկ ձևական փաստաթուղթ:

Այն, որ 19-րդ դ. առաջին տասնամյակներին արևմտահայ հասարակական միտքը և լուսավորական շարժումը սկիզբ էր առնում նշված գործընթացներից, վկայում են նույն դարի 20-ական թթ. դեմոկրատական զանգվածների՝ երբեմն մի քանի հազարի հասնող ցույցերը Կ. Պոլսում, դրանով իսկ և՛ բևեռելով մտավորական զանգվածներին, և՛ մյուս կողմից քաղաքը վեր ածելով գրական-մշակութային կյանքի կենտրոնի[7]:

Արևմտահայ հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի ձևավորման հիմքերը Կ. Պոլսում հանդես են գալիս դեռևս, 1567 թ., երբ Աբգար Դպիր Թոխատեցու ջանքերով սկզբնավորվեց պոլսահայ տպագրությունը: Հայկական տպարանների թիվը 19-րդ դ. հասավ 80-ի, որոնց արդյունավետ գործունեությունն անհնար էր առանց կանոնավոր կրթական կենտրոնների առկայության: Առաջին դպրոցը, որը նախատեսված էր ուսյալ եկեղեցականներ պատրաստելու համար, հիմնել է Հովհաննես Կոլոտ պատրիարքը 18-րդ դ. առաջին քառորդին, նախ՝ Սկյուտարում, ապա՝ Գում-Գափուում:

[7] Հայ պարբերական մամուլի պատմություն (XVII-XIX դդ.), հ. I, Գահիրէ, 2006, էջ 108-110:

19-րդ դ. երկրորդ կեսին Կ. Պոլսում կար 48[8] դպրոց, 4376 ուսանող, 1155 ուսանողուհի, 196 ուսուցիչ, որոնց տարեկան ծախսը կազմում էր 840 ոսկի[9]:

Պոլսահայ հասարակական-քաղաքական կյանքի վերելքը չէր կարող տեղի չունենալ առանց գործող մամուլի և պարբերականների հրատարակության, որոնց էջերում պիտի արծարծվեր, ինչպես գրական-մշակութային կյանքի, այնպես էլ՝ ազգային հարցի վերաբերյալ հրատապ խնդիրներ: 19-րդ դ. երկրորդ կեսին, մասնավորապես, սահմանադրական շարժումների, հասարակական-քաղաքական հոսանքների քարոզչության հետ կապված, 1850-1860-ական թթ. հայտնվեցին նոր պարբերականներ, որոնց խմբագիրներն ու աշխատակիցներն աննախընթաց իրազեկությամբ հասարակական-քաղաքական կյանքի, մշակույթի, աշխարհաբարի, դպրոցի ու մանկավարժության, նոր գրականության և ազգային հարցի վերաբերյալ իրենց հրապարակումներով էապես ընդարձակեցին արևմտահայ հասարակական-քաղաքական մտքի սահմանները[10]:

19-րդ. երկրորդ կեսին Կ. Պոլսում հրատարակվող պարբերականներից առավել աչքի ընկան «Բանասեր»-ը (1851-1852), «Նոյյան Աղավնին» (1852-1853), «Մասիս»-ը (1852-1908), «Մեղուն» (1856-1865), «Մյունատիի Էրճիաս»-ը (1859-1862), որոնց էջերում հրապարակվող հոդվածներում տիրապետող դարձավ ազգային կյանքում ընթացող տեղաշարժերի քննարկումը (վարչական, կրթական-լուսավորական, մշակութային):

---

[8] ՀՍՀ, հ. V, Երևան, 1979, էջ 618-619:

[9] **Ղազարյան Հ.,** նշվ. աշխ. էջ 434:

[10] **Խառատյան Ա.,** Արևմտահայ մամուլի սկզբնավորման ու զարգացման պատմությունից (1832-1914 թթ.), «ՊԲՀ», Երևան, 1995, № 2, էջ 137-141:

1.1 «ՄԱՍԻՍ» (1852-1908)

1852 թ. նոր փուլ էր բացվում արևմտահայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության մեջ: Երևան է գալիս մի պարբերական, որը, որդեգրելով լուսավորական գաղափարախոսությունը, ուներ ընդգծված ազգային ուղղվածություն: «Մասիս» պարբերականը, որը հիմնադրվել է 1852 թ. փետրվարի 2-ին, իր երկարամյա գոյության ընթացքում բարձրացրեց ազգային կյանքի ամենատարբեր բնագավառներին վերաբերող հարցեր, պարզաբանեց թուրքական բռնապետության մեջ տիրող օրհասական վիճակը, և այնտեղ ապրող ժողովուրդների, առաջին հերթին հայերի սոցիալ-տնտեսական ծանր կացությունը, պայքար մղեց սահմանադրության, հետևաբար առաջադիմական սկզբունքների համար, սուր բանավեճի մեջ մտավ կղերա-ամիրայական դասի՝ հետադիմական գործիչների դեմ, իր գրական-թարգմանական երկերով էապես զարգացրեց հայ ընթերցողի մտավոր վիճակը և, վերջապես, իր հրապարակած հոդվածներում հայ ժողովրդի ուշադրության կենտրոնում պահեց եվրոպական ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի դրվագները:

1850-1870-ական թթ. «Մասիս»-ը եղել է Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կիսապաշտոնական հրատարակությունը՝ հետևելով չափավոր ուղղության[11]:

Շաբաթաթերթը հիմնադրել է Փարիզից 1851 թ. Կ. Պոլիս վերադարձած Կարապետ Ություճյանը, որի խմբագրությամբ «Մասիս»-ը լույս տեսավ մինչև 1884 թ.: Դրանից հետո պարբերականը խմբագրել են համապատասխանաբար, Ա. Արփիարյանը, Գր. Զոհրապը, Սիպիլը (Զաբել Խանջյան), Հր. Ասատուրը, Մ. Շամտանճյանը, Տ. Արփիարյանը և վերջում՝ Ենովք Արմենը:

Կ. Ություճյանը ծնվել է 1823 թ., արդուկահար Սիմոն աղայի ընտանիքում, որտեղից էլ նրա ազգանունը: Սկզբնական կրթությունը ստացել է Կ. Պոլսի Պալաթի, ապա՝ Սամաթիայի թաղային վարժարանում՝ աշակերտելով նշանավոր պատմաբան Ա. Պերպերյանին: 1839 թ. ընդունվել է նոր բացված Սկյուտարի ճեմարանը, բայց վերջինիս շուտափույթ փակումը ստիպեց Կ. Ություճյանին ուսման բացը լրացնել ինքնակրթությամբ: 1844 թ. մասնավոր դասեր է տվել Պետրոս Խորասանճյանի տանը, իսկ 1848 թ. նշանավոր մանկավարժ Խաչատուր Պարտիզպանյանի և մի խումբ

[11] Հայոց պատմություն, ակադ. հրատ. հ. III, գիրք երկրորդ, «Զանգակ» հրատ., Երևան, 2015, էջ 262:

շնորհալի երիտասարդների հետ մեկնել է Փարիզ՝ հետևելով Սորբոնի համալսարանի և Կոլեժ դը Ֆրանսի դասընթացներին որպես ազատ ունկնդիր[12]:

Կ. Ություճյանը եղել է սահմանադրական ժողովի անդամ, քաղաքական ժողովի ատենադպիր, դպրոցների հոգաբարձու, անդամակցել ազգային հանձնաժողովներին, թաղային ուսումնական խորհուրդների աշխատանքներին և այլն:

Հատկանշական է, որ «Մասիս»-ին աշխատակցել են ժամանակի նշանավոր մտավորականներ Մատթեոս Մամուրյանը (առաջին տասնամյակ), Մատթեոս Այվատյանը, Նիկողայոս Զորայանը, որոնց հետագայում (1860-1870-ական թթ.) միացել են Հակոբ Ոսկանը, Սրապիոն Հեքիմյանը, Համբարձում Ճիզմեճյանը (Արմենակ Հայկունի), Հակոբ Պարոնյանը իր և այլք:

1870-1879 թթ. «Մասիս»-ը շաբաթաթերթից վերածվեց երկօրյա թերթի: Որպես ազատական ուղղվածության պարբերական, «Մասիս»-ը շատ անգամ թեժ բանավեճի մեջ է եղել Հ. Սըվաճյանի «Մեղվի», ինչպես նաև «Մեճումայը հավատիս» հայատառ թուրքերեն պարբերականի խմբագիր Հ. Վարդանյանի, պահպանողականության կարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ Հ. Չամուռճյան-Տերոյենցի հետ, որի հրատարակում էր «Զոհալ» և «Երևակ» պարբերականները:

Չնայած ազատական հայացքներին, Կ. Ություճյանի չափավոր զգուշավորությունը շատ անգամ հանդիպում է ժամանակակիցների ուժգին դիմադրությանը, նամանավանդ, որ ասպարեզ էին իջնում այնպիսի հայացքներ ունեցող գործիչներ ու հրապարակախոսներ, ինչպիսիք են Հ. Սըվաճյանը, Գր. Չիլինկիրյանը, Մ. Մամուրյանը, Կ. Փանոսյանը և ուրիշներ, որոնց արմատական հայացքներն ու գրական նուրբ ոճը հակադրվում էին «Մասիսին»:

1852 թ. հրատարակված առաջին համարում «Մասիս»-ն ընթերցողների շրջանակին է ներկայացնում իր նպատակներն ու հասարակական ուղղվածությունը: Այդտեղից էլ հետևում է, որ պարբերականն ազգի առաջընթացը կապում է լուսավորության, դպրոցներ կառուցելու, կանանց կրթելու հետ՝ այդ համարելով ազգի իմացական, բարոյական ու նյութական բարօրության հիմքը:

Ազգային հարցը «Մասիս»-ի էջերում լուսաբանվում էր իր ուրույն տրամաբանությամբ: «Մասիս»-ի հրապարակումներից երևում էր, որ դեռ վաղ է

[12] Հայ պարբերական մամուլի պատմություն (XVIII-XIX դդ.), հ. I, Գահիրէ, 2006, էջ 232:

Օսմանյան կայսրությունում կատարել լայնամասշտաբ բարեփոխումներ՝ լուսավորության համար անհրաժեշտ հիմնարկների բացակայության պատճառով:

«Մասիս»-ի հրապարակած հաջորդ հոդվածներից պարզ է դառնում, որ շաբաթաթերթն իր իր տեսակետը կապում է մեծ մասամբ եվրոպական երկրների վճռական միջամտության հետ[13]:

1853-1856 թթ. Ղրիմի պատերազմի տարիներին տեղի ունեցած դեպքերի ու իրադարձությունների անդրադարձները ցույց են տալիս, որ «Մասիս»-ը մեծ հույսեր էր կապում օսմանյան բարեփոխումների նոր հրովարտակի հետ, որը կյանքի կոչվեց 1856 թ.: Սակայն, դեպքերի հետագա ընթացքը, գավառական հարստահարություններն ու այլ վայրագ գործողությունները, ինչպես նաև պարբերականի՝ մի շարք փաստերի վկայակոչումները ցույց են տալիս, որ բարենորոգումների երկրորդ հրովարտակը ևս դատարկ տառ է միայն:

Զեյթունի 1862 թ. ապստամբության առթիվ պիտի նշենք, որ «Մասիս»-ը զուսպ համակրանքով է ներկայացնում դեպքերի ու իրադարձությունների հետագա ընթացքը: Սակայն, 1860-ական թթ. վերջին և 1870-ական թթ. սկզբներին բացահայտելով թուրքական իշխանությունների կողմից ծրագրված բռնությունների և հարստահարությունների քաղաքականությունը, անարգանքի սյունին գամելով թուրքական կառավարությանը՝ թերթը մատնանշում էր, որ բարենորոգումներ կոչվածն իրականում ծառայում է որպես քարոզչություն հպատակ ազգերի, այդ թվում և հայ ժողովրդի ազգային-ազատագրական նկրտումները կանխելուն:

«Մասիս»-ի էջերում հրապարակվող համարներից ուշագրավ են 1860-ական թթ. ծավալվող ազգային-հասարակական և սահմանադրական շարժումների վերաբերյալ նյութերը:

1860 թ. «Մասիս»-ն անդրադարձավ այն փաստի վրա, որ արևմտահայերի Ազգային սահմանադրության ընդունումն արևմտահայ հասարակական կյանքի դեմոկրատացման պրոցեսն է, և անկասելի է ժողովրդական խավերի ձգտումները[14]:

---

[13] Տե՛ս «Մասիս», 1863, № 576 և հաջորդ համարներում:
[14] «Մասիս», 1860, № 415:

1860 թ. մայիսի 24-ին գումարված Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովը խանդավառությամբ ընդունվեց «Մասիս»-ի կողմից. «Հայկական տարեգրությանց մեջ ոսկեղեն տառերով նշանակելու արժանի օր մըն էր»[15], - գրում էր թերթը:

Զեյթունի 1862 թ. ապստամբությունը ոչ միայն մեծ ազդեցություն թողեց արևմտահայության բոլոր խավերի վրա, այլև իր ուրույն արձագանքները գտավ պոլսահայ մտավորականության, մասնավորապես՝ դեմոկրատական հայացքներ ունեցող գործիչների շրջանում[16]: Դեռ 1861 թ. «Մասիս»-ը իր հրապարակած հոդվածներից մեկում նշում էր, որ Զեյթունում ստեղծվել էր աղետալի վիճակ թուրք հարստահարիչների վայրագությունների հետևանքով, և դեպքերի նմանօրինակ զարգացումները մի օր հանգեցնելու էր զինված ապստամբության:

«Մասիս» շաբաթաթերթի այս ուղղվածությունն ու թուրքական հասարակության մեջ առկա բացասական դրսևորումների մերկացումը չէր կարող չվրիպել թուրքական իշխանությունների աչքից:

Դեռ 1858 թ. հուլիսի 25-ին թուրքական կառավարությունն օրենք ընդունեց մամուլի մասին, որով կարելի է փաստացի ասել՝ սկսվեց նոր ու խստացված գրաքննությունը: Մասնավորապես հրապարակված օրենքում նշվում է՝ մամուլի ու պարբերականների կողմից տպագրված ցանկացած քննադատական հոդված, որը կվարկաբեկի օսմանյան կառավարությանը, կտուգանվի տասից հիսուն մեճիտիե* ոսկի չափով[17]:

Շաբաթաթերթը տպագրում էր Օսմանյան կայսրության ներքին անցուդարձերը լուսաբանող նյութեր, այլև՝ պարբերաբար քննարկում էր ինչպես Եվրոպայում, այնպես էլ ամբողջ աշխարհում տեղի ունեցող կարևորագույն իրադարձությունները, մասնավորապես 19-րդ դ. 50-60-ական թթ. եվրոպական երկրներում ծայր առած ազգային-ազատագրական շարժումների ընթացքը (իտալական, հունգարական, լեհական և այլ ժողովուրդների), որոնք, չէին կարող չհետաքրքրել արևմտահայ դեմոկրատական մտավորականությանը:

---

[15] Տե՛ս «Մասիս», 1860, № 493:

[16] **Ներսիսյան Մ.,** Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2002, էջ 89-90:

* մեճիտիե (թուրք.) – քսան դուրուշի արժողությամբ աշծաթադրամ օսմանյան Թուրքիայում.

[17] **Խառատյան Ա.,** Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը 1858-1896 թթ. (վավերագրական նյութեր), Երևանի համալս. հրատ., Երևան, 1984, էջ 16: Տե՛ս նաև «Մասիս», 1865, 8 մարտի:

Իտալական ժողովրդի ազատագրական պայքարը լուսաբանելիս «Մասիս»-ը, հիացմունքով էր հետևում այնտեղ ընթացող գործողություններին Ջ. Գարիբալդիի գլխավորությամբ՝ վերջինիս ներկայացնելով որպես իտալական ազգը միավորող հերոսի: Այդ համակրանքի արտահայտությունն է նաև այն,թե ինչպես են զմյուռնացի մի խումբ հայ երիտասարդներ 1861 թ. ապրիլի 16-ին այցելել իտալական հյուպատոսարան, և, անձամբ իրենց շնորհավորանքները հայտնել տեղի հյուպատոսին՝ Վիկտոր Էմանուել II-ի՝ Իտալիայի միացյալ թագավորության կայսր ընտրվելու առթիվ[18]:

Եվ ոչ միայն իտալական, այլև մյուս ժողովուրդների՝ հույների, բուլղարների, բոսնիացիների մղած ազատագրական պայքարի արձագանքները կարելի է գտնել «Մասիս»-ի էջերում՝ միտված լինելով հայ ժողովրդի դիմադրական ոգին բարձրացնելուն:

Չնայած իր զգուշավորությանն ու չափավորությանը, «Մասիսը» որպես լիբերալ գաղափարախոսության օրգան, իր հրապարակումներով ու թեժ բանավեճերով արժանի նպաստ բերեց վերոնշյալ ուղղության զարգացմանը: Պատահական չէ, որ հետագայում արևմտահայ իրականության մեջ ծնունդ առած մի շարք նշանավոր պարբերականներ, հետևելով «Մասիս»-ի օրինակին, որակապես նոր հիմքերի վրա դրեցին վերոնշյալ գաղափարախոսությունը որպես կայացած ուղղություն՝ իրենց ուրույն տեղն ու դերն ունենալով հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ:

---

[18] **Ղուկասյան Վ.** «Մասիս»-ը 1850-1860-ական թթ. իտալական և հունգարական ազգային-ազատագրական շարժումների մասին, «ՊԲՀ», Երևան, 1977, № 3, էջ 131-134:

1.2 «ՄԵՂՈՒ» (1856-1865)

19-րդ դ. 60-ական թթ. արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում ծայր առած գաղափարախոսական առճակատումն ի վերջո ավարտվում է լիբերալ-լուսավորականների հաղթանակով՝ հանուն արևմտահայ գրական-մշակութային կյանքի վերելքի: Այս գործընթացներում իր առանձնահատուկ տեղն ու դերն ունեցավ «Մեղու» ամսագիրը, որը, փաստորեն, դարձավ դեմոկրատական մտքի յուրօրինակ դարբնոցը 1850-1870-ական թթ., երբ հանդեսն ընդհատումներով հրատարակվում էր նախ Հ. Սըվաճյանի, ապա երկրորդ շրջանում՝ Հ. Պարոնյանի խմբագրությամբ:

Ամսագրի հիմնադիր, նշանավոր մտավորական և ազգային գործիչ Հ. Սըվաճյանը ծնվել է 1831 թ. հոկտեմբերի 22-ին, արևմտահայ հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի կենտրոն Կ. Պոլսում: Պատանի հասակում ընկնելով Օտյանների ընտանեկան միջավայրը, Հ. Սըվաճյանը սահմանադրական շարժման նշանավոր գործիչ Գր. Օտյանի հետ միասին աշակերտում է ժամանակի անվանի մանկավարժներ Խաչատուր Միսաքյանին և Խաչատուր Պարտիզպանյանին, որոնց նա հետագայում իր ստեղծագործություններում ջերմ երախտագիտության խոսքեր է հղել:

Հ. Սըվաճյանի կյանքի և գործունեության վաղ շրջանի մասին փաստերը սուղ են: Հայտնի է, որ մինչև «Մեղու»-ի հրատարակվելը, նա մի որոշ ժամանակ եղել է Փարիզում, բայց թե ե՞րբ, որքա՞ն ժամանակով և ի՞նչ է արել այնտեղ մեզ հայտնի չէ:

Վերադառնալով Կ. Պոլիս, Հ. Սըվաճյանն Օտյանների նյութական օժանդակությամբ ու աջակցությամբ մտնում է հրապարակախոսկան ասպարեզ՝ 1856 թ. ձեռնարկելով «Մեղու» պարբերականի հրատարակությունը, որով նշանավորվում է նրա հետագա կյանքն ու գործունեությունը[19]:

Թեև պատմագիտության մեջ «Մեղու» պարբերականին նվիրված կատարվել են հանգամանալից ուսումնասիրություններ, որոնք լույս են տեսել առանձին գրքույկների, հոդվածների, ինչպես նաև մենագրությունների տեսքով, այդուհանդերձ, ամսագրի խմբագրի՝ Հ. Սըվաճյանի աշխարհայացքը, հատկապես

[19] Հայ նոր գրականության պատմություն, ակադ. հրատ., հ. II, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1962, էջ 110-111:

մինչսահմանադրական (1850-1860-ական թթ.) շրջանում անհրաժեշտ հստակությամբ չի գնահատված և լուսաբանված:

Առաջին չորս-հինգ տարիների «Մեղու»-ին աշխատակցում և հովանավորում էր Գր. Օտյանը, ով հանդես էր գալիս անստորագիր հոդվածներով: Իր աշխատակցությամբ՝ *«Օտյան՝ «Մեղուն» քիչ մը իր թերթը կը նկատեր և սկզբները աներկբա մեծ ազդեցություն ունեցած է անոր ուղղության վրա»*[20]:

Այստեղ պետք է ընդգծենք, որ ամսագրի՝ լիբերալ բովանդակություն պարունակող հոդվածները մեծ մասամբ գերակշռում են այն նյութերի նկատմամբ, որոնք բացարձակապես պատկանում էին ժողովրդական դիրքորոշմանը: Դրանք լինեին անստորագիր, թե ստորագիր, պատկանում էին Հ. Սըվաճյանի գրչին, և, այդ իսկ պատճառով էլ «Մեղուն» պատմագիտության մեջ հայտնի է որպես Հ. Սըվաճյանի պարբերական 19-րդ դ. 60-ական թթ.՝ հիմնականում ծառայելով սահմանադրական ուղղությանը: Այստեղից էլ հետևել է այն արմատացած կարծիքը, որ Հ. Սըվաճյանն իր հրապարակախոսական գործունեության առաջին շրջանում հարել է լիբերալ, անգամ՝ պահպանողական ուղղությանը, և, որ թերթի առաջին համարներում բնորոշ են նմանատիպ բովանդակություն ունեցող հոդվածների հրապարակումները[21]:

Սակայն, անժխտելի է այն փաստը, որ «Մեղուն» 1860-1865 թթ. եղել է լուսավորական-դեմոկրատական ուղղություն ունեցող հանդես: Հիշյալ ժամանակահատվածը կարևոր էր այնքանով, որ պարբերականի էջերում լույս տեսնող որոշ նյութեր կարևոր նշանակություն ունեն այն առումով, որ նվիրված էին, «Հյուսիսափայլ»-ին և դրա գլխավոր աշխատակից Մ. Նալբանդյանին և արևելահայության սոցիալ-տնտեսական ծանր կացության նկարագրմանը՝ դրանով իսկ մերկացնելով ցարիզմի գաղութային քաղաքականության բացասական կողմերը[22]:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ «Մեղուն» իր հրատարակության առաջին չորս տարիներին (1856-1865) հարեց սահմանադրականներին, իսկ 1860 թ. սկսած միացավ «Հյուսիսափայլ»-ին՝ դրանով իսկ վերջինիս հետ կանգնելով գաղափարական միևնույն դիրքերում: Հատկանշական է, որ այս հայրենասեր մտավորականները միևնույն տեսլականն ունեին ազգային խնդրի հետ կապված:

---

[20] **Ասատուր Հր.,** Դիմաստվրներ, «Կ. Քէ'ի'եան որդի» հրատ., Կ. Պոլիս, 1921,. էջ 89-91:
[21] Տե՛ս «Մեղու», 1856, № 2 և հետո:
[22] **Ասատրյան Ա.,** Հարություն Սըվաճյան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967, էջ 42:

Պատահական չէ, որ Մ. Նալբանդյանի այցը Կ. Պոլիս խանդավառությամբ ընդունվեց մտավորականության կողմից, և Հ. Սըվաճյանն այդ առիթով գրել է. «Պարոն Նալբանդյանը Պոլիս հասած ատեն մեզի համար նոր մարդ մը չէր. մենք զանի երեք տարիե ի վեր կճանչեինք»[23]: Այս այցը դարձավ հայության երկու հատվածներին կապող ազդակը մեկ ընդհանուր գաղափարի շուրջ:

«Մեղուն» ակտիվորեն լուսաբանում էր ժողովրդի, առաջին հերթին, արևմտահայության ծանր սոցիալ-տնտեսական վիճակը, որի միակ պատճառը համարում էր օտար կապիտալի ներխուժումն օսմանյան շուկա, և, որ այդ երևույթը կասեցրեց արհեստավորների նախաձեռնությունը և նրանց աղքատության գիրկը նետեց[24]: «Մեղու»-ի հրատարակած մի հոդվածում կարդում ենք, որ հայերը. *«օր օրի աղքատանալ սկսան այն ատենեն ի վեր, որ Տաճկաստան... իր դուռերը բացավ Եվրոպայի ճարտարության ու արհեստներուն»*[25]: Այս ծանր վիճակից դուրս գալու միակ ելքը «Մեղվի» լիբերալները տեսնում էին մեծատուների, հատկապես, ամիրայական դասի ներկայացուցիչների անձնական և օրինակելի վարքի, ինչպես նաև ժողովրդին հովանի* լինելու մեջ, որը հնարավորություն կընձեռեր համախմբվել մեկ ընդհանուր գաղափարի շուրջը, մանավանդ, կապված ազգային խնդիրների հետ:

Հ. Սըվաճյանը շատ հոդվածներ է նվիրել արևմտահայ սահմանադրական շարժմանը որպես նոր ձևավորված հասարակական-քաղաքական ուժի՝ մերկացնելով Կ. Պոլսի կղերա-ամիրայական դասի ներկայացուցիչների երկդիմի քաղաքականությունն ազգային խնդիրներին վերաբերյալ:

Սահմանադրական պայքարի հորձանուտում Կ. Ություճյանի «Մասիս» պարբերականն, ինչպես գիտենք հռչակվեց որպես Ազգային ժողովի պաշտոնական օրգան՝ լիբերալ-բուրժուական մարտավարությամբ, ի տարբերություն Հ. Չամուռճյան-Տերոյենցի «Երևակ» և «Զոհալ» պարբերականների, որանք փաստացի Կրոնական ժողովի խոսափողը: Ի հակադրություն այս ամենի՝ Հ. Սըվաճյանի «Մեղուն» հանդես եկավ և՛ Ազգային ժողովում, և՛ Ազգային վարչությունում, դարձավ

---

[23] **Հովհաննիսյան Ա.,** Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, «Հայպետհրատ» հրատ., Երևան, 1955, էջ 343:

[24] Հայ պարբերական մամուլի պատմություն (XVIII-XIX դդ.), հ. I, Գահիրէ, 2006, էջ 257:

[25] Տե՛ս «Մեղու», 1856, № 2, էջ 25-30: Տե՛ս նաև **Խառատյան Ա.,** «Մեղու» հանդեսի (1856-1865) մատենագիտություն, «Նահապետ» հրատ., Երևան, 2003, էջ 10, «Համառոտ տեսություն հայոց անցյալ, ներկա և ապագա վիճակներուն վրա» հոդվածը:

* հովանի – (փխբ.) հովանավոր, պաշտպան.

ընդդիմադիր խավերի մարտական օրգանը՝ զինակցելով Կ. Փանոսյանի՝ սկզբում «Մյունատիի Էրճիաս»-ի ապա «Մանզումեի Էֆքյար»-ի («Կարծիքների շարք»), Ա. Հայկունու և Գր. Չիլինկիրյանի «Ծաղիկ» և Մ. Խրիմյանի «Արծուի Վասպուրական» պարբերականների հետ[26]:

Պատահական չէ, որ սահմանադրությունն ընդունելուց մեկ ամիս չանցած «Մեղուն» իր վրդովմունքն արտահայտեց Կ. Պոլսի, ինչպես քաղաքական, այնպես էլ Կրոնական ժողովների նկատմամբ՝ իր վճիռը ներկայացնելով հասարակությանը. «Հայոց ազգի մեջ դեռ առաջին անգամ է, որ մի օրագիր, իր վճիռը հրապարակելով, խնդրում է բանավոր հասարակության կարծիքը: Անպատմելի ուրախ ենք այս բանի վերա»[27] - գրում էր Մ. Նալբանդյանը: Այս պայքարն ավելի լայն թափ ստացավ, երբ Կ. Պոլսի Ազգային ժողովը փորձեց լրագրության հանդեպ որոշ սահմանափակումներ մտցնել:

«Մեղուն» կարծում էր, որ մամուլը, սնվելով հասարակական կարծիքից, ազդում է դրա վրա՝ ի հաշիվ դեմոկրատական խավերի տրամադրությունների: Ազատ մամուլը, ստանալով ճիշտ գաղափարներ ազգային խմդիրների մասին, ավելի ճշմարտացի է դարձնում իր դատողություններն ու կարծիքը՝ դրանով իսկ ապավովելով դեմոկրատիայի ներգործության ուժեղացումը: Վերոնշյալ գաղափարները «Մեղուն» առաջ քաշեց 1863 թ. մարտին, սահմանադրության վավերացման առթիվ՝ կոչ անելով չկրկնել նախորդ վարչության սխալներն ու բռնության հակումները[28]:

Այդուհանդերձ, Հ. Սրվաճյանի «Մեղու» ամսագիրը սահմանադրական շարժման հարուստ տարեգրություն է, որի էջերում լուսաբանվել է սահմանադրական շարժման առաջին քսանամյա պատմությունը (1856-1874), սկսած այն օրերից, երբ դեռ Սահմանադրության նախագիծը մշակման փուլում էր:

Այստեղից էլ հետևում է այն, որ անկախ նրանից թե ինչ է իրենից ներկայացնում Ազգային Սահմանադրությունը կամ Կանոնադրությունը, անգամ, եթե

---

[26] Հայ նոր գրականության պատմություն, ակադ. հրատ., հ. II, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1962, էջ 119:

[27] «Մեղու», 1860, № 119, էջ 273: Տե՛ս նաև **Խառատյան Ա.,** «Մեղու» հանդեսի (1856-1865) մատենագիտություն, «Նահապետ» հրատ., Երևան, 2003, էջ 66, Նալբանդյանց Մ., «Արգո հայրենակից պ. Սրվաճյան» հոդվածը:

[28] **Խառատյան Ա.,** Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1989, էջ 56-57:

հնարավոր չլիներ լիովին կենսագործել Արևմտյան Հայաստանում, Հ. Սրվաճյանի և նրա «Մեղու»-ի մղած սահմանադրական պայքարն ըստ էության, պայքար էր հանուն հայ ժողովրդի դեմոկրատական վերածննդի:

Հ. Սրվաճյանի մշակութային-գրական գործունեությունը բազմազան է, լրագրությունից ու հրապարակախոսությունից զատ, նա կարևոր դեր է խաղացել գեղարվեստական գրականության և գրաքննադատության բնագավառում: «Մեղու»-ի խմբագրի երգիծանքը հանդես էր գալիս տարբեր ձևերով. նկարագրական, բանավեճային հոդվածներ, պամֆլետներ, ֆելիետոններ և այլն:

1859 թ. «Մեղուն» հարստացավ նոր բաժիններով՝ «Մանր զվարճալիք», «Մանրալուրք» ընդհանուր վերնագրերով, որոնք, երգիծական թեթև ակնարկներ լինելով հանդերձ, հասարակության սոցիալական պատկերն արտահայտող երևույթներ էին[29]:

Հ. Սրվաճյանն իր երգիծանքում հիշատակում է քաղաքակիրթ ազգերին, որոնք այդ ամենն արժևորում են որպես հասարակական դաստիարակիչ ուժ[30]:

«Մեղվի» էջերում լույս տեսնող հոդվածներում Հ. Սրվաճյանը խիստ քննադատության է ենթարկել այն հարուստներին, ովքեր առանց տրտունջի իրերի վրա ծախսում են հսկայական գումարներ, առանց հայերեն անունն իմանալու: Հետևանքը ողբերգական է՝ տգիտություն, բարքերի անկում, արհամարանք սեփական մշակույթի հանդեպ, քաղքենիական այլ տարրեր, որը քայքայում է և՛ հայ ընտանիքը, և՛ աղավաղում հայոց լեզուն[31]:

Հ. Սրվաճյանի երգիծանքն այնքան սուր բովանդակություն ուներ, որ ինքնին արտացոլում էր տվյալ ժամանակաշրջանի արևմտահայության կյանքի բացասական կողմերը, ինչպես նաև խիստ քննադատության է ենթարկել Եվրոպային նմանվելու անզուսպ հակումը՝ մատնանշելով ժողովրդի բարոյականության վրա դրա բացասական հետևանքները[32]:

---

[29] **Մանուկյան Ա.,** Հ. Սրվաճյանի երգիծանքը «Մեղվի» էջերում, «Տեղեկագիր» հաս. գիտ., Երևան, 1957, № 3, էջ 80:
[30] Նշվ. աշխ., էջ 74:
[31] Նշվ. աշխ., էջ 75:
[32] Նույն տեղում:

Երգիծանքը որպես «Մեղվի» կարևորագույն ժանր, պահպանեց իր ինքնատիպությունն ու տիրապետող բնույթը նաև հաջորդ խմբագրի՝ Հ. Պարոնյանի լրագրական ու հրապարակախոսական գործունեության տարիներին (1872-1874):

Միջազգային հարաբերություններում տեղի ունեցող կարևոր իրադարձություններն ու անցքերը միշտ եղել են «Մեղվի» ուշադրության կենտրոնում: Այստեղ պետք է առանձնացնենք Հ. Սըվաճյանի անդրադարձը Իտալիայում ընթացող ազգային-ազատագրական շարժումներին, որտեղ նա բարձր է գնահատում Զեյթունի 1862 թ. ապստամբությունը սուլթանական բռնակալության դեմ՝ այն անվանելով «սուրբ պատերազմ»[33]:

Օսմանյան կայսրության հրապարակած օրենքները մամուլի վերաբերյալ, ինչպես նաև խստացված գրաքննությունն ու «Մեղու» պարբերականի նյութական անմխիթար վիճակը հանգեցնում են ամսագրի ժամանակավոր դադարեցմանը: 1865 թ. հուլիսի 23-ից սկսած, մինչև 1870 թ. օգոստոս «Մեղուն» չի հրատարակվում՝ լույս տեսնելով 1870-1874 թթ., որը պարբերականի հրատարակության երկրորդ շրջանն էր[34]:

1872 թ. «Մեղվի» խմբագրությունն ու հրատարակությունը ստանձնում է Հ. Պարոնյանը: Այդ առիթով գրված հայտարարության մեջ Հ. Սըվաճյանը գրում է. *«Շատերը կըսեին մեզի, որ օգնական մը գտնենք: Բայց թե գրելու կարող և թե «Մեղուին» արդյունքովը անոթի մնալ հանձն առնող անձ մը գտնել որչափ դժվար էր»[35]:*

Չնայած նյութական ծանր կացությանն ու արդյունքում հրատարակության ժամանակավոր դադարեցմանը, «Մեղու» պարբերականն իր արժանի տեղն ու դերն է զբաղեցնում հայ մամուլի պատմության մեջ: Պատահական չէ, որ թերթի շատ համարներ թե՛ պատմագիտական, թե՛ գրականագիտական առումով կարևոր սկզբնաղբյուր են հանդիսանում հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության ուսումնասիրման համար:

---

[33] Հայ նոր գրականության պատմություն, ակադ. հրատ., հ. II, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1962, էջ 122:
[34] **Ասատուր Հր.,** նշվ. աշխ., էջ 16:
[35] **Ստեփանյան Գ.,** Հակոբ Պարոնյան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1956, էջ 17:

ԳԼՈՒԽ II

ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ ԶՄՅՈՒՌՆԻԱՅՈՒՄ

ԶՄՅՈՒՌՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

Կ. Պոլսից հետո արևմտահայ հասարակական-քաղաքական և մշակութային, ինչպես նաև տնտեսապես զարգացած ու մարդաշատ կենտրոնը Զմյուռնիան էր, որն ավելի վաղնջական պատմություն ունի քան առաջինը: Համաձայն հունա-հռոմեական պատմագիրների կողմից հաղորդած տեղեկությունների, քաղաքը հիմնադրվել է ք. ա. 1410-1370 թթ. , ապա կործանվել կամ ավերվել՝ վերակառուցվելով ք. ա. 1362-1232 թթ.: 177 թ. Զմյուռնիան ավերվում է երկրաշարժից, բայց կարճ ժամանակ անց, հռոմեական Մարկոս Ավրելիոս (161-180) կայսրը վերակառուցեց նորը, այժմյան քաղաքը, բայց ոչ նախկին տեղում[36]:

Այժմ պահպանվել են անտիկ շրջանի տաճարի, այսպես կոչված, Տանտալոսի դամբարանի, հելլենիստական թատրոնի, ինչպես նաև հռոմեական շրջանի մնացորդները, որոնք աղբյուրներում թվագրվում են ք. ա. 7-րդ դ.[37]:

Զմյուռնիայի հայերի մասին առաջին հիշատակություններից է 1261 թ. Միքայել Պալեոլոգ կայսրի և ճենովացիների միջև կնքված դաշնագրի տեքստը, որի մեջ հույների կողքին դրվում են հայ «հաջողակ վաճառականներ»-ը[38]:

Հայերը Զմյուռնիա են գաղթել 14-18-րդ դդ.՝ մի քանի խոշոր հոսքերով, որոնցից մեկի հետ էլ կապվում է (Կիլիկիայի հայկական թագավորության վերանալուց հետո) Զմյուռնիայի գաղթօջախի զարգացումը[39]:

Հաջորդ հարյուրամյակում, մասնավորապես Շահ Աբբասի ավերիչ արշավանքների, Դավիթ Բեկի գլխավորած Սյունիքի ազգային-ազատագրական շարժման պարտությունից հետո Զմյուռնիայի հայերի թիվը ստվարացել է ի հաշիվ Սյունիքից, Արարատյան դաշտից, Նոր Ջուղայից և այլ վայրերից գաղթած հայ զանգվածների հաշվին, որոնց թիվը 1630-1870 թթ. տատանվում էր 6-10-12 հզ. միջև[40]:

---

[36] **Ղազարյան Հ.,** նշվ. աշխ., էջ 436:
[37] ՀՍՀ, հ. IV, Երևան, 1978, էջ 312:
[38] **Ղազարյան Հ.,** նշվ. աշխ., էջ 438:
[39] **Խառատյան Ա.,** Զմյուռնիայի հայ գաղթօջախը, ուսումնամեթ. ձեռնարկ, «Էդիթ Պրինտ» հրատ., Երևան, 2008, էջ 8:
[40] Հայ պարբերական մամուլի պատմություն (XVIII-XIX դդ.), հ. I, Գահիրէ, 2006, էջ 155:

Վերոնշյալ գործընթացներից հետո, սակայն, հայերի թիվը քաղաքում կայուն չի եղել: Բնական աղետներն ու այլ գործոններ ևս պատճառ են դառնում Զմյուռնիայի հայ բնակչության թվաքանակի նվազմանը: 1631 թ. քաղաքում ապրում էին 90 հզ. զմյուռնացիներ, որից 8 հզ. հայեր, 1731 թ.՝ 76 հզ., 7 հզ. հայեր, 1772 թ.՝ 102 հզ., 6 հզ. հայեր, 1800 թ.՝ 104 հզ., 12 հզ. հայեր, 1812 թ.՝ 106 հզ., 10 հզ. հայեր, 1836 թ.՝ 150 հզ., 10 հզ. հայեր, 1868 թ.՝ 187 հզ., 12 հզ. հայեր[41]:

XIX դ. Զմյուռնիան դարձավ արևմտահայ լուսավորական շարժման երկրորդ նշանավոր կենտրոնը, որն ամենից առաջ պայմանավորված էր քաղաքի ազգային-տնտեսական և մշակութային իրավիճակով: Այստեղ կային բազմաթիվ մշակութային օջախներ, որոնց մեջ առաջին հերթին պիտի հիշատակենք 1799 թ. հիմնադրված Մեսրոպյան վարժարանը, որը 19-րդ դ. արևմտահայ նշանավոր ու առաջադեմ ուսումնական հաստատություններից մեկն էր[42]:

Բարենպաստ մտավոր և տնտեսական իրավիճակը ձևավորեց այն անհրաժեշտ նախադրյալները, որոնք ապահովեցին Զմյուռնիայում հասարակական մտքի, գրական-մշակութային ու հրապարակախոսական շարժման վերելքը 1860-ական թթ.: Զմյուռնահայ հասարակական-քաղաքական և գրական-մշակութային կյանքի վերելքը, իր արտահայտությունը պիտի գտներ այնտեղ հրատարակվող պարբերականների էջերում:

XIX դ. երկրորդ կեսին Զմյուռնիայում լույս տեսնող պարբերականներն են «Արշալույս Արարատյան»-ը (1840-1884), «Միություն»-ը (1860), ապա վերջինիս իրավահաջորդ «Միություն Սահմանադրական»-ը (1861-1862), «Ծաղիկ»-ը (1861-1867), «Հավերժահարս»-ը (1862), «Գարուն Հայաստանին» (1862) և «Դիմակ»-ը (1862), որոնց էջերում արծարծվում էին հասարակական-քաղաքական, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ու այլ բնագավառներին վերաբորող խնդիրները:

---

[41] **Ղազարյան Հ.,** նշվ. աշխ., էջ 438-439:

[42] **Խառատյան Ա.,** Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840-1900), ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1995, էջ 29:

2.1 «ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՐԱՐԱՏՅԱՆ» (1840-1884)

Արևմտահայ լրագրությունը սկզբնավորվում է նաև Զմյուռնիայի հայ համայնքում: Դարի առաջընթացից, մասնավորապես եվրոպական ու հունական գաղութներից հետ չմնալու ձգտումը, բնականաբար հարուցում էին նաև զմյուռնահայ գաղթօջախը ազգային ստեղծարար գործունեության մղելու պահանջը: 1840 թ. նպաստավոր եղավ զմյուռնահայության համար, քանզի գաղթօջախում սկսեց հրատարակվել առաջին ազգային թերթը՝ «Արշալույս Արարատյանը»: Զմյուռնահայ գաղթօջախի անդրանիկ պարբերականը ստեղծելու, խմբագրելու և հրատարակելու գործը վիճակված էր Մեսրոպյան վարժարանի սաներից մեկին՝ Ղուկաս Պալդազարյանին, որը շուրջ քառասուն տարի՝ 1840-1878 թթ. տնօրինել է այդ թերթը, միայնակ կրելով հրատարակման ու տարածման ծանրությունը, միջամտել է գաղթաշխարհի, հատկապես Կ. Պոլսի կարևոր իրադարձություններին:

«Արշալույս Արարատյանը» շաբաթաթերթ էր, ուներ լրատվական որոշակի ուղղություններ՝ բուն զմյուռնահայ իրականությունը, Կ. Պոլսի ազգային կյանքը, հայ մյուս գաղթօջախների ապա օսմանյան և եվրոպական իրականության անցուդարձը[43]:

Ղ. Պալդազարյանը որոշ ներգործություն է ունեցել հասարակության լայն շերտերի վրա, անգամ բարեգործության է մղել որոշ մեծատունների: Ուներ անձնական կապեր օտարերկրյա գործիչների, մասնավորապես Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Ստ. Քաննինգի (հետագայում՝ լորդ Ռեդկլիֆ) հետ: Ըստ երևույթին, Ղ. Պալդազարյանը փորձում էր օգտագործել մեծ տերությունների դեսպանների զգալի ազդեցությունը սուլթանի և պալատական շրջանակի վրա[44]:

Հետաքրքրական է այն փաստը, որ «Արշալույս Արարատյանը», ելնելով արևմտահայության սոցիալ-տնտեսական դրությունից, ինչպես նաև հաշվի առնելով վաճառականության վիճակն ու հեռանկարները, բազմաթիվ նյութեր է օգտագործել այդ թեմաներով՝ գոհացնել թերթի վաճառական-ընթերցողների հետաքրքրությունները[45]:

---

[43] Նշվ. աշխ., էջ 258:

[44] Հայ պարբերական մամուլի պատմություն (XVIII-XIX դդ.), հ. I, Գահիրէ, 2006, էջ 158-159:

[45] **Խառատյան Ա.,** Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1980, էջ 20:

Այդուհանդերձ մեզ համար առաջնային նշանակություն ունի թերթի էջերում, ինչպես գրական-մշակութային, այնպես էլ գաղութահայության ու միջազգային կարևորագույն անցուդարձերի լուսաբանումը: Որպես պահպանողական թերթ, «Արշալույս Արարատյանը» չէր ընդունում կրոնի հեղինակության դեմ ուղղված գաղափարները, որոնց մեջ հասկանալի պատճառներով նկատում էր ազգության քայքայման ու այլասերման վտանգ՝ փոխարենը մեծ տեղ հատկացնելով արևմտյան մշակույթի ու լուսավորության գաղափարների ներթափանցմանը, սակայն, ոչ առանց վերապահումների[46]:

«Արշալույս Արարատյան»-ի կշիռը մեծ էր գաղութահայության կյանքը լուսաբանելու առումով, որով և նա հայտնի է իր՝ սկզբնաղբյուրի արժեքով գաղթօջախի պատմության ուսումնասիրման ասպարեզում: Շաբաթաթերթն իր ժամանակի համար բացառիկ տարածում էր գտել և ունեցել էր թղթակիցների լայն շրջանակ. Հնդկաստան, Պարսկաստան, Ավստրալիա, Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա, Եգիպտոս, Լիբանան, Թուրքիա: Դրանով իսկ «Արշալույս Արարատյան» պարբերականը դարձել էր աշխարհով մեկ սփռված հայությանն իրար կապող միջոց, ինչպես նաև հայ կյանքը գաղթաշխարհում աշխուժացնելու, մշակույթը զարգացնելու խթանիչ[47]:

«Արշալույս Արարատյանը» նաև լուրջ ծառայություններ ունի արևմտահայ գրական լեզվի հաստատման ու մշակման համար: Ղ. Պալդազարյանը, ոչ միայն տիրապետել է եվրոպական մի շարք լեզուների, այլև հաստատակամորեն առաջ է քաշել գրական աշխարհաբարը զարգացնելու գաղափարը: Նոր գրական լեզվի համար մղված պայքարում «Արշալույս Արարատյանը» հակադրվեց մարտական ոգի դրսևորող պարբերականներին, հատկապես «Մեղվին»: Թերթը տեղի տվեց պատրիարքարանի և հետադիմական վերնախավի սպառնալից հորդորներին՝ անցում կատարելով լիբերալիզմից դեպի պահպանողականություն:

Չնայած չափավոր զգուշավորությանը, այնուամենայնիվ, չենք կարող ժխտել թերթի մատուցած ծառայությունները գրական-մշակութային բնագավառում: Ուշագրավ նորություն էր այստեղ հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի գրական

---

[46] **Խառատյան Ա.,** Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840-1900), ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1995, էջ 80:

[47] Հայ պարբերական մամուլի պատմություն (XVIII-XIX դդ.), հ. I, Գահիրէ, 2006, էջ 162:

պատառիկների տպագրությունը: «Արշալույս Արարատյանի» էջերում մշտապես արծարծվել են հայ բանասիրության, գրականության և արվեստի հետ կապված հարցեր, ինչպես նաև ընդարձակ գրախոսականներ են լույս տեսել Զմյուռնիայում տպագրված գրքերի, այդ թվում «Թշվառներ» վեպի թարգմանաության մասին, նաև Վասպուրականի թատրոնի քառամյա գործունեության ընթացքում՝ ծավալուն թատերախոսականներ[48]:

«Արշալույս Արարատյանի» խմբագիր Ղ. Պալդազարյանը ողջունեց թուրքական բարենորոգումների երկու հրովարտակները: Հատկապես պարբերականի էջերում կարելի է տեսնել ոչ միայն հաթթը շերիֆի, այլև հաթթը հյումայունի բարենորոգումների հակասական ընթացքը Զմյուռնիայի և առհասարակ Էգեյան ծովի առափնյա տարածքներում օսմանյան պահպանողականության կողմից բարենորոգումներին դիմադրելու փաստերի անրադարձը[49]:

Սակայն, 1840-1850-ական թթ., արդեն իսկ բարենորոգումների զուտ ձևական բնույթը, ոչ մահմեդականների իրավազրկությունն ու հարստահարությունների շարունակական բնույթը շաբաթաթերթը համակում են քննադատական տրամադրություններով:

Հրապարակ գալու առաջին տասնամյակում թերթն արձագանքել է 1848 թ. ֆրանսիական և իտալական հեղափոխություններին, որոնցից ուշագրավ է հատկապես Ղ. Պալդազարյանի վերաբերմունքը Ջ. Գարիբալդիի գլխավորած և Իտալիան ներքևից ազատագրելու շարժման հանդեպ: Մասնավորապես 1847 թ. Ֆերարայի իրադարձություններին անրադառնալիս, նա Ավստրիայի դերը տեսնում էր Իտալիայում խաղաղություն հաստատելու մեջ: Գարիբալդիական նյութերն «Արշալույս Արարատյան»-ի արտաքին լուրերի տեսությունների լուսավոր էջերն են: Դրանից կարելի է հետևել, որ պարբերականը համակրանքով է վերաբերվում ազգային-ազատագրական շարժումներին[50]:

Շաբաթաթերթն անրադարձել է Ջ. Մաձձինիի, Ջ. Գարիբալդիի, վարչապետ կոմս Կավուրի և Իտալիայի միավորման շրջանի թագավոր Վիկտոր Էմմանուել II-ի

---

[48] Հայ ժող. պատմ., ակադեմ. հրատ., հ. V, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1974, էջ 585-586:

[49] **Խառատյան Ա.,** Զմյուռնահայ համայնքը և թանզիմաթի բարենորոգումները (1840-1850-ական թթ.), «ՊԲՀ», Երևան, 2003, № 1, էջ 221-222:

[50] **Հակոբյան Մ.,** Զմյուռնահայ պարբերական մամուլը (1839-1860), ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984, էջ 31-33:

քաղաքական գործունեությանը: Բայց ելնելով իր որոշակի հայեցակարգից իտալական ազատագրական շարժումները Ղ. Պալդազարյանը բացատրում էր զգուշավորության սահմաններում[51]:

Ղ. Պալդազարյանն ամեն ինչ արեց թերթի գոյությունը պահպանելու համար: Անկախ այդ ամենից, շաբաթաթերթը, փոքր-ինչ շեղվելով պահպանողական ուղեծրից, փորձեց գոյության վերջին երեք տարիներին՝ 1883 թ. մինչև դադարելը, հանդես գալ համեմատաբար առաջադիմական դիրքերից:

1883-1884 թթ. «Արշալույս Արարատյան»-ի խմբագիրն եղել է Փարիզում բարձրագույն կրթություն ստացած Հ. Սվաճյանը: Ազգային դպրոցի, մշակույթի, առևտրի ու արտադրության զարգացման, ինչպես ազատ կարծիքի ու մամուլի վարաբերյալ իր հրապարակումներով Հ. Սվաճյանը թարմ հոսանք էր մտցնում հայ մամուլի մտավոր ուղղվածության մեջ: Թերթը փակվեց 1884 թ. դեկտեմբերի 29-ին, տեղական իշխանություններին քննադատելու պատճառով, նրա խմբագիրը բանտ նետվեց, որտեղից ազատվեց 1887 թ. սկզբներին և քիչ անց վախճանվեց[52]:

---

[51]**Ամարյան Հ.,** Իտալական ազգային-ազատագրական շարժումների արտացոլումը «Արշալույս Արարատյան» լրագրում (XIX դ. 40-70-ական թթ.), «Բանբեր Մատենադարանի», № 18, («Գիտ. նյութ. ժող.), Երևան, 2008, էջ 173-179:

[52] Հայոց պատմություն, ակադ. հրատ., հ. III, գիրք երկրորդ, «Զանգակ» հրատ., Երևան, 2015, էջ 258: Տե՛ս նաև Հայ պարբերական մամուլի պատմություն (XVIII-XIX դդ.), հ. I, Գահիրէ, 2006, էջ 166:

2.2 «ԾԱՂԻԿ» (1861-1867)

Զմյուռնիայի հայ գաղթօջախի պարբերական մամուլի էջերում ծավալվող պայքարի առաջավոր գծում 1861 թ. հուլիսից հայտնվում է «Ծաղիկ»-ը և գրավում այն տեղը, որ թափուր էր մնացել «Միություն Սահմանադրական»-ի խափանումից հետո: Դեմոկրատիայի դրոշն անցնում էր նոր և ամուր ձեռքեր, և պայքար էր մղվում նոր թափով:

«Ծաղիկ» հանդեսն երևան եկավ 1861 թ. հուլիսի 1-ից՝ նախ տասնօրյա, իսկ 1864 թ. նոյեմբերից՝ № 99-ից կիսամսյա պարբերականությամբ: Այն հրատարակվել է մինչև 1866 թ. վերջ (այն է մեկ համար, հոկտեմբեր-նոյեմբերին չի հրատարակվել)՝ շարունակվելով լույս տեսնել մինչև 1867 թ. հունվար-ապրիլ (լույս տեսնելով չորս համար)՝ ընդամենը 146 համար իր ամբողջ գոյության ընթացքում[53]:

«Ծաղիկ» պարբերականի խմբագիր Գր. Չիլինկիրյանը ծնվել է 1833 թ. Զմյուռնիայում դարբին մահտեսի Հովակիմի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է Մեսրոպյան վարժարանում՝ հմուտ հայագետ Անդրեաս Փափազյանի մոտ, 1853 թ. թողնում է ուսումը և նույն վարժարանում պաշտոնավարում որպես գրագիր: Աշխատելուն զուգընթաց, յուրացնում է ֆրանսերեն, հունարեն և թուրքերեն լեզուները՝ կատարելով համապատասխան թարգմանություններ տարբեր հեղինակներից:

Ուշագրավ է, որ «Ծաղիկ»-ի հիմնադրումով, մասնավորապես նրա օգոստոսի 10-ի, 20-ի և 30-ի համարներում մանրամասնորեն նկարագրել է Զեյթունի 1862 թ. հերոսական ապստամբության դրվագները, ինչպես նաև Կ. Պոլսում կազմակերպված համերաշխության ցույցերը՝ կոչ անելով վավերացնել արևմտահայերի Ազգային սահմանադրությունը[54]:

Զմյուռնահայ համայնքում սահմանադրության շուրջ եղած բախումներն, ըստ երևույթին իրենց արձագանքն են գտել «Ծաղիկ»-ի էջերում: Գր. Չիլինկիրյանը և Ա.

---

[53] **Հակոբյան Մ.,** Զմյուռնահայ պարբերական մամուլը (1861-1880), ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1987, էջ 71: Տե՛ս նաև Հայ պարբերական մամուլի պատմություն (XVIII-XIX դդ.), հ. I, Գահիրէ, 2006, էջ 277:

[54] Հայ նոր գրականության պատմություն, ակադ. հրատ., հ. II, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1962, էջ 134-135:

Հայկունին անխնա քննադատում էին հակասահմանադրական աղաներին, որոնց ձեռնտու էին կառավարման հին վարչաձևերը[55]:

Գր. Չիլինկարյանը հանդես եկավ ծավալուն հոդվածով՝ նվիրված Ազգային սահմանադրությանը. *«Եվ ի՞նչ է սահմանադրությունը... Սահմանադրությունը է այն հաստատուն հիմնադրությունն, որուն վրա կկոթնին ազգին ապահովության, փառքին և ապագային սյուները»*[56]*:*

Հենց սկզբից «Ծաղիկ»-ը գաղափարապես համերաշխվեց ու դաշնակցեց «Մեղու» հանդեսի հետ, և ոչ միայն ընթացավ նրա դեմոկրատական ուղեգծով, այլև հրապարակային պայքարում բացահայտորեն պաշտպանեց այդ մարտավարությունը՝ շարունակելով Նալբանդյանի և Ոսկանյանի հրապարակախոսության ավանդույթները:

Այն, որ սահմանադրությունը Զմյուռնիայում կիրառվել է ավելի շուտ՝ 1861 թ. փետրվարից, այն էլ որոշ ընդմիջումներով, վկայում է համայնքի ներսում եղած ներհակությունների մասին: Այս տեսակետից «Ծաղիկ»-ն առանձնացնում էր «ուսումնասեր» և «ազգասեր» երևելիներին, դրվատում նրանց հայրենասիրությունը՝ ի հակադրություն «տգետ» և «ազգակործան անձանց»[57]:

Այստեղից էլ հետևում է, որ Գր. Չիլինկիրյանը տևականորեն պաշտպանել ու հիմնավորել է դեմոկրատական մամուլի սկզբունքները, հետևողականորեն կիրառել է դրանք և իր հերթին տվել լավագույն օրինակն այն բանի, թե ինչպիսին պետք է լինի իր ժողովրդին ծառայել ցանկացող հանդեսը:

1860-ական թթ. Ազգային սահմանադրության նկատմամբ վերաբերմունքն արևմտահայ իրականության մեջ այն արմատական հարցերից մեկն էր, որով երևան էր գալիս այս կամ այն գործչի, առավել ևս այս կամ այն տպագիր օրգանի բուն դիմագիծը, նրա առաջադիմական կամ հետադիմական լինելը:

Ծավալով և արժեքով հատկապես աչքի է ընկնում Գր. Չիլինկիրյանի «Զմյուռնիական նամականին»՝ նվիրված գաղթօջախի հասարակական իրադարձություններին ու գործիչներին: Ինչպես Մ. Մամուրյանը, Գր. Չիլինկիրյանը

---

[55] **Խառատյան Ա.,** Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840-1900), ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1995, էջ 114:
[56] Տե՛ս «Ծաղիկ», 1861, № 2, էջ 10-12:
[57] «Ծաղիկ», 1863, № 6, էջ 45-46:

նույնպես մեծ հմտությամբ էր օգտագործում նամակների ժանրային հնարավորությունները: Դրանք միաժամանակ «Ծաղիկ»-ի խմբագրի խորհրդածություններն են, նրա կարծիքների ու հայացքների արտահայտությունը, որոնցում մեծ տեղ է գրավում կրթություն ծավալելու խնդիրը, մասնավորապես Մեսրոպյան և Հռիփսիմյան վարժարաններում ուսումնակրթական գործի դրվածքը[58]:

Պայքարելով սահմանադրության համար՝ «Ծաղիկ»-ը, հետևողականորեն քննադատության է ենթարկել պահպանողական և հետադիմական հայացքներ ունեցող Հ. Չամուռճյան-Տերոյենցին, որի դեմ մղված պայքարն ուներ առաջադիմական հիմքեր: Նրա էջերում օրվա հարց դարձավ սահմանադրությունն արդյունավետ դարձնելու խնդիրը, որի իրականացման համար պահանջվում էր ասպարեզ ելնել ու կռվել: Անարժանների ընտրությունն ազգային մարմիններում կնշանակեր աչքաթող անել ապագան:

Ա. Հայկունին «Ծաղիկ»-ի էջերում սահմանադրական իրավունքը նույնացնում էր մարդու ազատության իրավունքին, որը համարում էր նախախնամական, սուրբ և նվիրական, ապա հռչակում, թե *«Ճիվաղ է նա, որ ուրիշին ազատությունը չի ճանչնար»*[59]:

«Հայ ազգ և սահմանադրություն» հոդվածաշարում, խոսքն ուղղելով բոլոր ազգասերներին, ամբողջ ազգին, նա շեշտում էր, որ *«ամեն մարդ յուր պարտավորությունը պարտի կատարել»,* որ ազգը պետք է *«յուր փրկության այն մեկ հատիկ միջոցին դիմե, որ է սահմանադրություն»*[60]:

«Ծաղիկ» հանդեսը համակրանքով է անդրադարձել մյուս ժողովուրդների ազգային ու սոցիալական շարժումներին, մասնավորապես ֆրանսիական բուրժուական հեղափոխությանն ու ցարական Ռուսաստանում ծավալվող ազգային-հասարակական անցքերին: Արդեն, Գր. Չիլինկիրյանը հետագայում (1883) *«Ուղևորության...»* մեջ մեջբերում է ռուս վտարանդի գործիչ, հեղափոխական Գերցենի խոսքերը՝ քաղաքակրթության ու չքավորության անհամատեղելիության մասին:

«Ծաղիկ»-ը նաև գրական հանդես էր և ազգային գրականություն ստեղծելը պարբերականի օրակարգային հարցերից մեկն էր: Նպատակն էր ստեղծել այնպիսի

---

[58] Հայ պարբերական մամուլի պատմություն (XVIII-XIX դդ.), հ. I, Գահիրէ, 2006, էջ 281:
[59] Տե՛ս «Ծաղիկ», 1862, № 35, էջ 292:
[60] Տե՛ս «Ծաղիկ», 1862, № 37, էջ 306-307:

գրականություն, որը ոչ թե զբաղեցնի ընթերցողին, այլ տա հայրենասիրական գաղափարներ: Հանդեսի լավագույն ձեռքբերումներից է ֆրանսիական խոշորագույն դասականներից մեկի՝ Վ. Հյուգոյի «Թշվառներ» վեպի թարգմանության երևան գալը «Ծաղիկ»-ի էջերում:

Խմբագրական իր տաղանդով ու հմտությամբ Գր. Չիլինկիրյանը հանձին իր «Ծաղիկ»-ի ու գրչակից ընկերների, տվել է հայ մամուլի լավագույն օրինակներից մեկը, որը փոխանցել է «Արևելյան մամուլի»-ին: Վերջինիս ապագա խմբագիր Մ. Մամուրյանը եղել է Գր. Չիլինկարյանի զինակիցն ու աջակիցը, ով ավելի քան մի ամբողջ քառասնամյակ՝ 1860-1901 թթ., հետևելով դեմոկրատական ուղղությանը, ապահովեց զմյուռնահայ հասարակական-քաղաքական մտքի վերելքն ու առաջընթացը[61]:

[61] Հայ պարբերական մամուլի պատմություն (XVIII-XIX դդ.), հ. I, Գահիրէ, 2006, էջ 285:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

19-րդ դ. 60-ական թթ. արևմտահայ մամուլի պատմությունը, լինելով հայոց պատմության անքակտելի մասը, և, մեծապես բխելով նրա շարունակականության ընթացքից, իր ուրույն տեղն է զբաղեցնում որպես հայ պատմագիտության առանձին բնագավառ:

Այսպիսով, ամփոփելով կատարված աշխատանքը, եկանք այն եզրահանգումների, որ՝

- 19-րդ դ. 60-ական թթ.արևեմտահայ պարբերական մամուլն արտահայտում էր, ինչպես հասարակական-քաղաքական մտքի վերելքն ու գրական-մշակութային կյանքի լուսաբանումն, այնպես էլ հետադիմական հայացքներ ունեցող կղերա-ամիրայական դասի ներկայացուցիչների շահամոլ քաղաքականությունը՝ շատ դեպքերում անխնա քննադատության ենթարկելով վերջիններիս երկդիմի քաղաքականությունն ազգային խնդիրների հետ կապված:
- 19-դդ. երկրորդ կեսից արևմտահայ հասարակական-քաղաքական մտքի մեջ սկսում է գերիշխող դեր ստանձնել լիբերալ-բուրժուական հոսանքը, որոնց գաղափարական ազդեցությունը կամա թե ակամա իր հետևողական արտահայտությունն է գտնելու և՛ Կ. Պոլսում, և՛ Զմյուռնիայում լույս տեսնող պարբերականների էջերում՝ դրանով իսկ դառնալով լուսավորական գաղափարների տարածման գլխավոր ազդակը:
- Խնդրո առարկա արևմտահայ պարբերական մամուլը 19-րդ դ. 60-ական թթ., ըստ ծավալած գործունեության, պայմանականորեն պետք է ստորադասել մի քանի փուլերի՝

1. արևմտահայ պարբերականների աշխուժացման տարիներ, երբ Օսմանյան Թուրքիայի ներքաղաքական կյանքում տեղի ունեցան որակական տեղաշարժեր՝ կապված արտաքին մի շարք գործոնների հետ,
2. գաղափարական վերելքի արտահայտման, հետևաբար նաև թեժ բանավեճի ու առճակատումների շրջան, որը պայմանավորեց մի կողմից հասարակական-քաղաքական հոսանքների, մյուս կողմից՝ ազգային-հասարակական շարժումների ի հայտ գալուն, ինչն առաջին հերթին պիտի կապել արևմտահայերի Ազգային սահմանադրության հետ,

3. օսմանյան՝ խստ գրաքննության հաստատման ռեժիմի շրջան, որի հետևանքով մի շարք պարբերականներ ժամանակավորապես, շատերն էլ մեկընդմիշտ դադարեցին հրատարակվելուց:

- Նշված ժամանակաշրջանի միջազգային անցուդարձերին անրադառնալը, որոնք լի էին տարատեսակ դեպքերով ու իրադարձություններով (խոսքը 19-րդ դ. 50-60-ական թթ. եվրոպական ժողովուրդների՝ իտալացիների, ֆրանսիացիների, հունգարացիների, բոսնիացիների, բուլղարների բարձրացված ազատագրական շարժումների մասին է), արևմտահայ պարբերականների գլխավոր առանձնահատկություններից մեկն է՝ միտված լինելով վառ պահել ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունն ու ոգին հայ իրականության մեջ:
- Կարևոր առանձնահատկություններից է նաև արևմտահայ մամուլի՝ ժանրային նկարագրի որակական փոփոխությունները: Ասպարեզ իջան նոր պարբերականներ ի դեմս «Ծաղիկ» պարբերականի, որը լրագրության պատմության մեջ ձևավորեց ազգային-դեմոկրատական ուղղությունը՝ այն դարձնելով արևմտահայերի ազգային տրամադրություններն արտահայտող գլխավոր գաղափարական ազդակ:
- Սահմանադրական շարժումները և դրա արդյունքում ընդունված արևմտահայերի Ազգային սահմանադրությունը, որն ըստ էության, էլ ավելի ամրապնդեց հետադիմական հայացքներ ունեցող կղերա-ամիրայական դասի ներկայացուցիչների դիրքերը, ճանապարհ հարթեց նոր՝ երգիծական ժանրի ձևավորման համար, որն առաջինն իր արտահայտությունը գտավ Հ. Սըվաճյանի խմբագրությամբ լույս տեսնող «Մեղու» ամսագրի էջերում:
- Հայ հասարակական-քաղաքական մտքի և գրական-մշակութային կյանքի վերելքի վառ դրսևորումներից է մտավորականների, հրապարակախոսների, ազգային գործիչների մի ողջ համաստեղության ասպարեզ իջնելը, ի դեմս Ղ. Պալդազարյանի, Հ. Հիսարյանի, Կ. Ություճյանի, Հ. Սըվաճյանի, Հ. Պարոնյանի, Գր. Չիլինկարյանի, Հ. Սավալանյանի, Ստ. Փափազյանի, Տետեյան եղբայրների, Կ. Փանոսյանի և այլոց, որոնք իրենց գրական քայլերով, ինչպես նաև ստեղծագործական վառ գործունեության շնորհիվ ոչ միայն զարգացրին

հրապարակախոսական-լրագրական ժանրը, այլև որակապես նոր հարթության վրա դրեցին գեղագիտական-գրաքննադատական միտքը:

- Եվ վերջապես արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքի վերելքի առկայության պայմաններում առկա գաղափարական առճակատումները, ինչպես նաև գաղթօջախին (խոսքը մասնավորապես Ղ. Պալդազարյանի խմբագրությամբ Զմյուռնիայում լույս տեսնող «Արշալույս Արարատյան» պարբերականի մասին է) նվիրված լուսաբանումներն ինքնստինքյան անհրաժեշտ նախադրյալներ էր ստեղծում ոչ միայն հայության երկու՝ այն է արևմտահայ և արևելահայ զանգվածների (առաջին հերթին մտավորականության), այլև գաղթաշխարհի առաջադեմ գործիչների համար՝ ուշադրության կենտրոնում պահելով հայ ազգային-ազատագրական մտքի գաղափարախոսությունը, և այն պահելով միշտ օրակարգում:
- Արևմտահայ հասարակական-քաղաքական, ինչպես նաև գրական-մշակութային ու կրթական կյանքում գրանցված հաջողություններն ուն ձեռքբերումները, որոնք, ըստ երևույթին պայմանավորված էին լիբերալ-դեմոկրատական թևին հարող մտավորականների շնորհիվ, ի տարբերություն կղերա-ամիրայական դասի պահպանողական խավի, մեծ դերակատարություն են ունեցել ազգային-հասարակական շարժումներում ակտիվություն ցուցաբերելու գործում:
- Թրքախոս դարձած հայության մի ստվար զանգվածի առկայության պայմաններում ուշագրավ նորույթ էր հայատառ թուրքերեն պարբերական մամուլի ի հայտ գալն արևմտահայ իրականության մեջ: Եվ նման փոփոխությունները հայկական միջավայրում, հատկապես լեզվամտածողության առումով կամա թե ակամա պիտի կապվեր ազգային զարթոնքի գործընթացների հետ՝ համապատասխանելով վերջինիս գաղափարական միտումներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՊԲՀ» - ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես»

«ԼՀԳ» - ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես

«ՏՀԳ» - ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների» հանդես

«ԲՄ» - «Բանբեր Մատենադարանի» հանդես («Գիտական նյութերի ժողովածու»)

ՀՍՀ – Հայկական սովետական հանրագիտարան

ՏՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Հայ ժողովրդի պատմություն, ակադեմ. հրատ., հ. V, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1974:
2. Հայ նոր գրականության պատմություն, ակադեմ. հրատ., հ. II, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1962:
3. Հայ պարբերական մամուլի պատմություն (XVIII-XIX դդ.), հ. I, Գահիրէ, 2006:
4. Հայկական սովետական հանրագիտարան, հ. IV, Երևան, 1978:
5. Հայկական սովետական հանրագիտարան, հ. V, Երևան, 1979:
6. Հայկական սովետական հանրագիտարան, հ. IX, Երևան, 1983:
7. Հայոց պատմություն, ակադեմ. հրատ., հ. III, գիրք երկրորդ, «Զանգակ» հրատ., Երևան, 2015:

ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

8. Ասատրյան Աս., Հարություն Սըվաճյան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967:
9. Ասատուր Հր., Դիմաստվերներ, «Կ. Քէշիշեան որդի» հրատ., Կ. Պոլիս, 1921:
10. Խառատյան Ա., Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1980:
11. Խառատյան Ա., Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1989:
12. Խառատյան Ա., Զմյուռնիայի հայ գաղթօջախը, ուսումնամեթոդական ձեռնարկ, «Էդիթ պրինտ» հրատ., Երևան, 2008:

13. Խառատյան Ա., Կ. Պոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դդ.), Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2007:
14. Խառատյան Ա., Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840-1900), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2015:
15. Խառատյան Ա., «Մեղու» հանդեսի (1856-1865) մատենագիտություն, «Նահապետ» հրատ., Երևան, 2003:
16. Խառատյան Ա., Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը 1858-1896 (վավերագրական նյութեր), ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984:
17. Հակոբյան Մ., Զմյուռնահայ պարբերական մամուլը (1839-1860), ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984:
18. Հակոբյան Մ., Զմյուռնահայ պարբերական մամուլը (1861-1880), ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1987:
19. Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, «Հայպետհրատ» հրատ., Երևան, 1955:
20. Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967:
21. Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1980 թթ., «Գիտություն» հրատ., 2002:
22. Ստեփանյան Գ., Հակոբ Պարոնյան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1956:

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

23. Ասմարյան Հ., Իտալական ազգային-ազատագրական շարժումների արտացոլումը «Արշալույս Արարատեան» լրագրում (19-րդ. 40-70-ական թթ.), «ԲՄ», № 18, («Գիտական նյութերի ժողովածու»), Երևան, 2008:
24. Խառատյան Ա., Արևմտահայ մամուլի սկզբնավորման ու զարգացման պատմությունից (1832-1914 թթ.), «ՊԲՀ», Երևան, 1995, № 2:
25. Խառատյան Ա., Զմյուռնահայ համայնքը և թանզիմաթի բարենորոգումները (1840-1850-ական թթ.), «ՊԲՀ», Երևան, 2003, № 1:

26. Ղուկասյան Վ., «Մասիս»-ը 1850-1860-ական թթ. իտալացիների և հունգարացիների ազգային-ազատագրական շարժումների մասին, «ՊԲՀ», Երևան, 1977, № 3:
27. Մանուկյան Ա., Հ. Սվաճյանի երգիծանքը «Մեղվի» էջերում, «ՏՀԳ», Երևան, 1957, № 3:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

28. «ԲՄ» - 2008, № 18:
29. «Ծաղիկ» (Զմյուռնիա) – 1861, №2, 1862, №35, №37, 1863, №6:
30. «Մասիս» (Կ. Պոլիս) –1860, №415, №493, 1863, №576, 1865, 8 մարտի:
31. «Մեղու» (Կ. Պոլիս) – 1856, № 2, 1860, № 119:
32. «ՊԲՀ» - 1977, № 3, 1995, № 2, 2003, № 1:
33. «ՏՀԳ» - 1957, № 3:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ , ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման

Դասընթացներ

Գոհար Սանդրոյի Գևորգյան

Արգիշտի Առաջինը և Էրեբունի քաղաք-ամրոցի հիմնադրումը

Հետազոտական աշխատանք

Վանաձոր 2022թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը անձի որակական հատկանիշ է և իրավունք: Սովորել ցանկանալը և սովորել կարողանալը եղել և մնում են որպես կրթության գերխնդիրներ: Դրանց իրականացումը հնարավոր է միայն աշխատանքների ճիշտ պլանավորումով՝ ուսումնառության հենց առաջին օրվանից:

Հայոց պատմության դասերը մեծ հնարավորություն են տալիս սովողներին ձևավորելու ազգային գիտակցությունն ու մտածողություն: Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն:

Այսօր հայոց պատմության ուսուցիչների խնդիրն է դարձել յուրաքանչյուր հարց քննարկել և ներկայացնել յուրովի: 21-րդ դարի աշակերտները կարողանում են տարբեր խնդիրներ մեկնաբանել տարբեր տեսանկյուններից: Հաճախ դասի ժամանակ մենք լսում ենք այնպիսի պատասխաններ, որոնց մասին չենք էլ մտածել:

Ցանկացած խնդիր նորովի մեկնաբանելը ինչ-որ տեղ նաև արդիականացնելն է: Այսօր ուսուցչի առջև խնդիր է դրվել ոչ թե դասն անգիր սովորել մանրամասնություններով, այլև վերհանել դասի կանոր խնդիրները, մեկնաբանել և յուրովի տալ դրանց լուծման ճանապարհները:

<< Մեր ժամանակների ուսուցիչը ոչ միայն պետք է ունենա հարուստ գիտելիքներ, համակողմանի զարգացվածություն և լայն մտահորիզոն, այլև կաչողանա իր ունեցածը դարձնել սովորողների սեփականությունը, անընդհատ հարստացնի նրանց գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Այս հիմնխնդիրը կարելի է լուծել ուսուցման և դաստիարակության գործընթացները օպտիմալացնելու , նոր մեթոդներ հայտնագործելու, հին մեթոդները կատարելագործելու, դրանք կիրառելիս նորին զուգակցելու, ուսուցման տեխնիկական միջոցները լայնորեն օգտագործելու միջոցով>>: [1, էջ 85]:

Այսօր ուսուցչից պահանջվում է աշակերտակենտրոն ուսուցում: Դասերին պետք է սովորողներին ուղղորդել ավելի ճիշտ մեկնաբանության:

<< Ուսուցման կազմակերպման ձևերը տարբեր ժամանակներում տարբեր են եղել: Դրանք կախում են ունեցել տվյալ հասարակարգի սոցիալ-տնտեսական, քաղաքական հարաբերություններից, հասարակության կողմից դպրոցին ներկայացված պահանջներից և բազմաբնույթ այլ հանգամանքներից>>:[1, էջ 188]:

Շատ կարևոր է դասի ճիշտ կառուցվածքը:

<<Դասի կառուցվածք ասելով հասկանում ենք ուսուցման գործընթացում ներառված աշխատանքի տեսակների համադրումը: Նախկինում տիրում էր այն կարծիքը, որ դասը պետք է կառուցված լինի գիտելիքների ստուգման, նոր նյութի մատուցման և տնային հանձնարարումից: Սակայն դա սահմանափակում էր արդյունավետ մեթոդների ընտրությունը: Նախկինում կիրառվող կառուցվածքը համալրվում է նոր՝10 կառուցամասերով: Ելնելով ուսուցման արդյունավետության բարձրացման պահանջներից՝ դասի կառուցվածքը պետք է համապատասխանեցվի մանկավարժական պայմաններին և նպատակներին:

Ընդ որում ցանկացած կառուցվածք ունեցող դաս կարող է լինել և՛ հաջողված, և՛ անհաջող: Դասը կառուցելիս պետք է հաշվի առնել նաև հոգեբանական գործոնները: Այսպես, հայտնի է, որ դասի 4 – 26-րդ րոպեներում նյութը յուրացվում է 100 %, 26-34 րոպեներում : 50%, 34-45 րոպեներում 20%: Հետևապես կառուծվացքային միավորները անհրաժեշտ է դասավորել ըստ արդյունավետության պահանջների: Կարևոր է դասի ընթացքում ճիշտ ընտրել հարցման, նոր նյութի ներկայացման, գրավոր հանձնարարությունների հերթականությունը, պահանջվող ժամանակը, ինչը թույլ կտա օպտիմալացնել ուսուցման գործընթացը>> [1, էջ 9-10]:

Այս թեմայի նպատակն է ցույց տալ, որ Ք.ա. IX դ. կեսերին Հայկական լեռնաշխարհում պատմական ասպարեզ իջած Հին Արևելքի հզոր պետություններից մեկն է, որը ասորեստանյան արձանագրություններից հայտնի է Ուրարտու անունով: Ուրարտացիք իրենց երկիրը անվանում էին Բիայնիլի, Աստվածաշնչում այն հիշատակվում է՝ Արարատյան թագավորություն: Հայտնաբերված նմուշները վկայում են հին արևելյան տիպի մի բարձր քաղաքակրթության մասին՝ պետական կուռ կառուցվածքով, գրչությամբ, ուրույն ծիսակրոն համակարգով ծաղկուն քաղաքներով, արհեստներով և արվեստով :

Քանի որ իմ թեման <<Արգիշտի Առաջինը և Էրեբունի քաղաք-ամրոցի հիմնադրումն>> է, ապա հարկավոր է ցույց տալ, որ Ագիշտի Ա-ի կառավարման տարիների պատմության համար արժեքավոր աղբյուր են նրա անունով Հայկական լեռնաշխարհի զանազան վայրերում պահպանված սեպագիր արձանագրությունները (ավելի քան 30) մասնավորապես Վան քաղաքի միջնաբերդի Խորխոռ կոչվող ժայռին փորագրված տարեգրությունն և նրա կրկնօրինակը: Խորխոռյան տարեգրությունը փորագրված է Վանի ժայռի հարավարևմտյան կողմում, որի ոչ լրիվ պահպանված մասերը գրված ութ սյունակով, կազմում են 380 տող: Խորխոռյան տարեգրության կրկնօրինակի Վանի Սուրբ Սահակ եկեղեցուց գտնված երկու հատվածները պարունակում են 138 տողեր, որոնք չեն պահպանվել ժայռի վրա: Ուստի տարեգրության սկզբնական բնագիրը պետք էր անցներ 500 տողից: Ասորեստանի զորքերի գերագույն հրամանատարը Արգիշտի Ա-ի մասին ասել է «անունն անգամ ահարկու է որպես ծանր հողմ, նրա ուժերը մեծաքանակ էր. . . »:

Արգիշտի Ա-ից մեզ հասած սեպագիր արձանագրությունների համաձայն նրա գահակալության հենց երկրորդ տարին (Ք.ա. 785 թ) խիստ հագեցած էր հայկական երկրամասերի միավորման գործի շարունակմանն ուղղված ձեռնարկումներով: Այդ նպատակով նախ նա իր թագավորությանն է միավորում Դիաուխի Տայքը, որը հարուստ էր մետաղահանքերով: Կենտրոնական իշխանությանը հարկատվության և պատերազմի ժամանակ զորքերի տարադրման պայմանավորվածություն է կայանում:

Արգիշտի Ա-ն նմանապես Արարատյան թագավորության սահմանների մեջ է ներառում էթիունյան դաշնության երկրամասերը և հարևան տարածքները: Ի թիվս միացրած երկրամասերի հիշատակվում են Լուշա, Կատարզա և Վիտերուխի միությունը, էրիախին, Աբունին (հետագայում Հավնունիք): Կարսի սարահարթով Արգիշտին անցնում է Զաբախա՝ (Զավախք) այնտեղից հասնելով Հզոր Սիրիմու լեռանը (հետագայում Սուրամի լեռներ): Նա վերադառնում է Վիտերուխիի ճանապարհով: Տարեգրության մեջ Արգիշտին հայտնում է, որ «այս մեծագործությունները կատարեց մեկ տարում»: Արգիշտի Ա-ի հյուսիսային արշավանքները շարունակեցին հաջորդ տարի: Նա իր տերությանն է միացնում Աբիլիանի երկիրը (հետագայում Աբեղեանք գավառը), էթիունյան միության մաս կազմող Ուդուրի-էթիունի («Զրային էթիունի») երկրամասը՝ Սևանա լճի հյուսիսային ավազանում, նաև այլ փոքր իշխանություններ:

Գրեթե Հայկական ամբողջ լեռնաշխարհը միավորելով Վանի թագավորության մեջ՝ Արգիշտի Ա-ն հետևողականորեն վարել է անհնազանդ ցեղային իշխանությունների կենտրոնախույս ձգտումները ճնշելու քաղաքականություն, թուլացրել է նրանց ուժերը, հարկերի ու պարտավորությունների ենթարկել, նրանց տիրույթներում ռազմական հենակետեր ստեղծել, վերաբնակեցրել իր տիրապետության տակ եղած այլ վայրերում (ըստ Խորխոռյան տարեգրության, ավելի քան 200 հազար մարդու):

Արգիշտի Ա-ն ունեցել է նաև եռանդուն շինարարական և տնտեսական գործունեություն: Արին-բերդում հայտնաբերված արձանագրությունների համաձայն՝ Արգիշտի Ա-ն գահակալման հինգերորդ տարում կառուցել է Էրեբունի քաղաքը, որտեղ վերաբնակեցրել է 6600 հոգի՝ Խաթե և Ծուպա երկրներից: Էրեբունի քաղաքի բերդն ունեցել է արքունի պալատներ և կրոնական տաճարներ, պահեստներում պահվել է զինամթերք և պարեն: Էրեբունին եղել է ուրարտական խոշոր ռազմա-վարչական կենտրոն, որտեղից Արգիշտի Ա-ն և նրա հաջորդները ռազմարշավներ են կատարել դեպի երկրի հյուսիսարևելյան շրջանները: Կառավարման 11-րդ տարում (մ.թ.ա. 776 թվականին) Արարատյան դաշտում Արգիշտի Ա-ն կառուցել է վարչա-տնտեսական կարևոր նշանակություն ունեցող մեկ ուրիշ քաղաք՝ Արգիշտիխինիլին : Արմավիրի բլրում հայտնաբերված արձանագրությունները պատմում են Արգիշտիխինիլիում և նրա մերձակա շրջանում Արգիշտի Ա-ի շինարարական աշխատանքների և ոռոգող ջրանցքի կառուցման մասին: Գտնվել են Արգիշտի Ա-ին վերաբերվող արձանագրությամբ պատկերազարդ բրոնզե սաղավարտներ, վահաններ և այլ իրեր, որոնց մի մասը պահվում է Էրեբունի թանգարանում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այդպիսի դասերից թեմաներից էլ << Արգիշտի Առաջին և Էրեբունի քաղաք ամրոցի հիմնադրումը>> դասն է: Քանի որ թեման բավականին ծավալուն է, իսկ ժամանակը՝ քիչ, այդ իսկ պատճառով ուսուցչի խնդիրն է ժամանակը ճիշտ օգտագործել: Դասի համար շատ կարևոր է, որ աշակերտների մոտ ստեղծվի այնպիսի կարծիք, որ Արգիշտի Առաջինի օրոք Ուրարտուն իր հզորության գագաթնակետին էր, որ նրա կառավարման տարիներին Վանի թագավորությունը ընդգրկում էր ոչ միայն Հայաստանը, այլև զգալի տարածքներ նրա սահմաններից դուրս:



VI դասարանի դասագրքում դասին հատկացված է մեկ դասաժամ, մինչդեռ ավելի նախընտրելի կլիներ անցնել երկու դասաժամով:

Արգիշտի Ա-ին հարկավոր է ուսումնասիրել տարբեր տեսանկյուններից՝ թե՛ որպես քաղաքական գործչի, թե՛ որպես ռազմական առաջնորդի և՛ թե որպես խոշոր շինարարի:

Այս դասին ուսուցչի առջև դրված խնդիրն է.

- Աշակերտները կարողանան ճիշտ ներկայացնել Արգիշտի Ա-ին որպես հզոր քաղաքական գործիչ
- Աշակերտները կարողանան ճիշտ ներկայացնել Արգիշտի Ա-ին որպես հզոր ռազմական առաջնորդ

- Աշակերտները կարողանան ճիշտ ներկայացնել Արգիշտի Ա-ին որպես հզոր շինարար
- Աշակերտները կարողանան ազատ արտահայտել իրենց միտքը:

Դասը սկսում ենք նախապատրաստական փուլից: Դասին անհրաժեշտ պարագաներն են դասագիրք, աշխատանքային տետր, լրացուցիչ նյութեր, գունավոր թղթեր, նախօրոք պատրաստված քարտեր, քարտեզ:

Դասը առավել նպատակահարմար է սկսել մտագրոհով: Այս միջոցով ուսուցչի խնդիրն է վեր հանել աշակերտների նախնական գիտելիքները, խթանել նրանց հետաքրքրությունը, գրավել ուշադրությունը:

Առաջնորդվելով չկա սխալ կարծի եզրույթով, աշակերտների արտահայտած պատասխանները գրում ենք գրատախտակին, ապա կատարում այդ գրածների վերլուծություն: Ժամանակը արդյունավետ օգտագործելու համար նպատակահարմար է տրամադրել 5 րոպե:

Աշխատանքը ավարտելուց հետո պարզ ընթերցանության միջոցով ընթերցում ենք մի հատված՝ դասագրքում ներկայացված նյութը: Դասագրքում ներկայացված է, որ Արգիշտի I-ը արշավանքներից մեկի ժամանակ գրավեց Բաբելոնիան: Դրանով նա երեք կողմից՝ հյուսիսից, արևելքից և հարավից, աքցանի մեջ վերցրեց Ասորեստանը: Հատկանշական է, որ այս հարցը մեկնաբանված չէ դասագրքերում: Այստեղ ուսուցիչը պետք է մեկնաբանի այս խնդիրը, ներկայացնի Ասորեստանը, որպես ժամանակի հզոր երկիր:

Այնուհետև հարց ու պատասխանի միջոցով ներկայացնում ենք տվյալ ժամանակաշրջանը:

Աշխատանքն ավարտելուց հետո անդրադարձ ենք կատարում Արգիշտի Ա-ի կատարած արշավանքներին: Դասի փուլերը տրամաբանորեն շաղկապված են:

Շատ կարևոր է, որ ուսուցիչը ժամի բաշխումը կատարի ճիշտ: Դասը շարունակում ենք խմբային աշխատանքով:

Հաճախ ուսուցիչները, խմբային աշխատանքները կազմակերպելով, հաշվի չեն առնում գենդերային անհավասարությունը, լավ և վատ սովորողների հավասարությունը, ներառարկայականության ապահովումը և այլն: Ուստի մենք առաջարկում ենք ելնելով իրավիճակից՝ դասարանը հնարավորինս բաժանել հավասար, թե՛ գենդերով(սեռային), թե՛ ներառական խնդիրներ ունեցողներով՝ երկու հավասար մասերի:

Ուսուցիչը տեղեկացնում է, որ խմբային աշխատանքը գնահատվում է թե՛ խմբի ներսում՝ անհատական, թե՛ ամբողջ խմբով՝ միասին: Ուսուցչի գերխնդիրներից մեկն է նաև խմբային աշխատանքի ժամանակ բացատրել կանոնները՝ հատկացված ժամանակը և հանձնարարությունները, (որը նա տալիս է առանձին թղթերի վրա՝ նախօրոք հստակեցված):

Մինչև խմբային աշխատանքը սկսելը խմբի ներսում ընտրում ենք ավագ, որը պատասխանատու է խմբի կատարած աշխատանքների արդյունքների լուսաբանման համար: Խմբի անդամներից մեկը պետք է հետևի ժամանակին, մյուսը կարգապահությանը, մյուսը որպեսզի բոլորը մասնակցեն: Որպեսզի աշակերտները ավելի լավ պատկերացնեն Արգիշտի I-ի կատարած արշավանքները, նպատակահարմար է դասարանը բաժանել 2 խնբի՝ առանձնացնելով մի խմբին արշավանքները, մյուսին՝ արդյունքները:

Խմբի ավագը աշխատանքը բաժանելուս ներառում է նաև ԿԱՊԿՈՒ աշակերտներին: Խմբայի աշխատանքը կատարում ենք մտքերի քարտեզագրում մեթոդով, որ արդյունքում ակնկալում ենք, որ աշակերտները ավելի լավ կպատկերացնեն արշավանքները և արդյուքները:

Գրատախտակին գրում ենք <<Բարեփոխում>> բառը և խմբերից մեկին հանձնարարում ենք առանձնացնել բարեփոխումները, իսկ մյուսին արդյունքները



Ուսուցիչը պարբերաբար մոտենում է աշակերտներին, ստուգում աշխատանքները և տալիս է խրախուսական գնահատականներ: Ճյուղավորման քանակը և բազմազանությունը կախված է աշակերտների մտահաղացումից: Այստեղ նորից կարևոր է ժամանակի ճիշտ բաշխումը: Նպատակահարմար է տրամադրել 10-15 րոպե:

Աշխատանքը խմբի ներսում ավարտելուց հետո խմբի ավագը ներկայացնում է աշխատանքը՝ տալով պարզաբանումներ, որից հետո կատարվում է գնահատում:

Որպեսզի աշակերտները կարողանան ավելի հստակ պատկերացնեն արշավանքները՝ կարևոր է կատարել մեջբերում ասորեստանի գերագույն հրամանատարի խոստովանությունը, որում հայոց տիրակալին բնութագրվում է իբրև մի արքա, << *որի անունն անգամ ահարկու է որպես ծանր հողմ, նրա ուժերը մեծաքանակ են>>* :



Աշխատանքը շարունակում ենք նախօրոք պատրաստված քարտերով: Որպեսի ցույց տանք Արգիշտի Ա-ին որպես հզոր քաղաքական գործիչ նրան համեմատում ենք այլ թագավորների հետ, օրինակ՝ Մենուայի: Քարտերի վրա գրված են Մենուայի և Արգիշտի Ա-ի կատարած գործերը: Աշակերտները աղյուսակի միջոցով տալիս են մեկնաբանություններ, ինչպես նաև նմանությունները և տարբերությունները :

թագավոր	նմանություն	տարբերություն
Մենուա		
Արգիշտի Ա		

Կարելի է ներկայացնել, որ շատ ավելի մեծ է եղել Արգիշտի Ա-ի քաղաքական ազդեցության ոլորտը, որի մասին պոտկերացում են տալիս հնագիտական պեղումները: Մասնավորապես Հյուսիսային Կովկասում հայտնաբերվել է Արգիշտի Ա-ի անվամբ սեպագիր արձանագրությամբ սազավարտ, որը պահվում է Բեռլինի առաջավորասիական թանգարանում: Նույնպիսի սաղավարտներ են հայտնաբերվել Աբխազիայում, Օսիայում և Գուգարքի Թռեղք գավառում:

Ուսուցիչը նորից պարբերաբար մոտենում է խմբերին և տալիս խրախուսական գնահատականներ: Վենի դիագրամի միջոցով ամրապնդում ենք ստացած գիտելիքները:

Հաջորդ քայլը պետք է լինի ներկայացնել Արգիշտի Ա-ին որպես շինարարի:

Արգիշտի Ա-ն հիմնում է բազմաթիվ նոր բնակավայրեր: Դրանցից նշանավոր էր Էրեբունի (Ք. ա. 782 թ.)՝ հետագայում Հայաստանի մայրաքաղաք Երևանը: Քաղաքը կառուցում է իր գահակալության հինգերորդ տարում Երևանի հարավ- արևելյան շրջանում, Արին-Բերդ կոչվող բլրի վրա: Պեղումների ժամանակ այստեղ հայտնաբերված, գրեթե միանման երկու արձանագրություններով Արգիշտին ազդարարում է.

<< … Խալդ աստծո մեծությամբ Արգիշտի, որդի Մենուայի այս հզոր քաղաք-ամրոցը կառուցեցի: Հաստատեցի Էրեբունի անունը՝ Բիայնիլի (երկիր) զորությունը լուլուական (=բարբարոսական) ցեղերի մեջ ամրապնդելու (համար)>>: Արգիշտին ասում է. << Հողն ամայի էր: Հզոր մեծագործություններ կատարեցի այստեղ>>: Խալդյան մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բիայնիլի երկրի, տերը Տուշպա քաղաքի>>:

Շարունակելով ներկայացնել Արգիշտի Ա-ի շինարարական աշխատանքները պետք է խոսել Արգիշտիխինիլի քաղաք-ամրոցի մասին: Արարատյան դաշտում, Արաքսի ձախ ափին Արգիշտի Ա-ն իր անունով կառուցում է նաև մի քաղաք-ամրոց՝ Արգիշտիխինիլին, որին հետագայում հայերը անանում են Արմավիր: Նա այս և Էրեբունի քաղաք-ամրոցներում և նրանց շրջակայքում կառուցում է նաև հոյակապ պալատական շենքեր, տաճարներ, զորանոցներ, պահեստներ, հանում է ջրանցքներ տնկում խաղողի և մրգատու ծառերի այգիներ: ներկայացնել, որ շուտով թե՛ Էրեբունին և թե՛ Արգիշտիխինիլին դառնում են Ուրարտական պետության հյուսիսային մարզերի վարչական, ռազմական և տնտեսական խոշոր կենտրոններ:

Կարելի է աշակերտներին հանձնարարել համեմատեն այս երկու քաղաք-ամրոցները: Կարելի է դասարանը բաժանել երկու ենթախմբի:

I ենթախումբ	Էրեբունի քաղաք-ամրոց
II ենթախումբ	Արգիշտիխինիլի քաղաք-ամրոց

Բուն ուսումնասիրությունը ենթախմբերում սկսվում է ուսումնական տեղեկատվության ընտրությամբ. անհրաժեշտ ուսումնական նյութ ձեռք բերելու համար ենթախմբի անդամները օգտվում են տարբեր աղբյուրներից. որպես ուսումանական գիտելիքների աղբյուր ծառայում է և դասագիրքը և ուսուցչի տրամադրած կամ նրա հանձնարարությամբ և օգնությամբ աշակերտների կողմից հավաքված բազմատեսակ օժանդակ գրականությանը: Սովորողը հայտնվում է մեծ քանակությամբ և բազմաբնույթ տեղեկատվական նյութից իրեն անհրաժեշտ գաղափարների, սահմանումների, կարծիքների, փաստերի, ապացույցների վերքաղ կատարելու դրության առաջ:

Զարգանում է էականը, կարևորը նկատելու, հասկացությունների, գաղափարների, օրինաչափությունների մեջ նշանակալի-անհրաժեշտը ինքնուրույնաբար առանձնացնելու նրա մտավոր կարողությունը:

Ուսումնական նախընտրելի նյութի համակարգմանը հաջորդում է նյութի ուսումնասիրության և յուրացման խնդիրների առանձնացումը, իրականացվելիք ուսումնառական գործողությունների հստակեցումը և պարզաբանումը, այսինքն՝ մանակավարժակամեթոդական՝ արդեն սովորողին ծանոթ խնդիրների համախմբումը, որի լուծման արդյունքում պետք է կատարվի գիտելիքի յուրացումը:

Կարելի է ընդհանուր հանձնարարություններ տալ բոլոր ենթախմբերին՝ ուսումնասիրած ենթաթեմայի շուրջ կազմել << հաստ ու բարակ>> հարցեր, << խաթարված կամ խառնված հերթականություն>> թերթիկներ, որոնք յուրաքանչյուր դասի վերջում հանձնվում են ուսուցչին՝ մյուս ենթախմբերի ուսումնառության ընթացքն ուսումնասիրելու, հայտորոշելու կամ ստուգելու նպատակով:

Ենթախմբերից յուրաքանչյուր անդամ ուսումական նյութը յուրացնելիս օգտվում է մտագործունեության տարբեր եղանակներից և մեթոդներից: Կատարելով տարատեսակ վարժություններ, հասկացության կամ գաղափարի քարտեզագրում, գրավոր պատասխանելով ուսուցչի կամ ընկերների նախապես կազմած << բաց, հաստ և բարակ>> հարցերին, դասագրքի առաջադրանքները կատարելով՝ նա գիտելիքներ է ձեռք բերում ինքնություն:

Ամփոփելով Արգիշտի Ա-ի աշխարհակալության մասին մեր տեղեկությունները՝ տեսնում ենք, որ նրա գերիշխանությունը տարածվել է բուն թագավության սահմաններից դուրս շատ հեռու՝ մինչև Փոքր Ասիա և Պարսից ծոց (Բաբելոնիան ներառյալ) : Իսկ նրա քաղաքական ազդեցության ոլորտները ձգվել են մինչև Հյուսիսային Կովկաս և Զագրոի կենտրոնական շրջանները:

Այս պարագայում կարելի է օգտագործել T-աձև աղյուսակ: Այս ձևով կարելի է ներկայացնել Արգիշտի Ա-ի դրական և բացասական կողմերը:

Դրական կողմեր	Բացասական կողմեր

Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխաններ (այո/ոչ, կողմ/դեմ) կամ համադրություն/հակադրություն արտահայտող արձագանքների գրառման համար:

Կարելի է կազմել հարցերի ցանկ՝ դասը ամփոփելու համար:

1. Բացատրե՛ք՝ ինչո՞ւ ----------:
2. Բացատրե՛ք՝ ինչպե՞ս ----------:
3. Ի՞նչն է ---------- իմաստը:
4. Ինչո՞ւ տեղի ունեցավ ---------- :
5. Ո՞րն է խնդրի լուծումը ---------- :
6. Ի՞նչ կլինի, եթե ---------- :
7. Ո՞չն է տարբերությունը ---------- և ---------- միջև:
8. Ուրիշ ի՞նչ տեսանկյունից կարելի է նայել ---------- :
9. Ի՞նչ կպատահի, եթե ---------- :
10. Որո՞նք են ---------- ---------- ի իմաստները :

Վերլուծելով աշակերտների աշխատանքները, կատարել պատճառաբանված գնահատում: Գնահատումը իրականացնում ենք նիշային և խրախուսական:

Ի՞նչ գիտեի	Ի՞նչ իմացա
Ի՞նչպես կարող եմ օգտվել	Ի՞նչ եզրակացություն արեցի

Այս դասին շատ կարևոր է մեթոդների ճիշտ ընտրությունը: Կարևոր խնդիր է դասի օգտվել նաև ՏՀՏ-ներից, նախօրոք պատրաստված տեսասահիկից: Դասը կարելի է վարել տարբեր մեթոդներով ելնելով նաև դասարանի միջին խտությունից:

Դասի կարևոր կողմերից մեկն է նաև, որ աշակերտները սկսում են սովորել աշխատել սկզբնաղբյուրների հետ: Կարևոր է հասկանալ և վերլուծել ցանկացած սկզբնաղբյուր: Սկզբնական շրջանում դժվար կլինի, բայց հետագայի համար անհրաժեշտ է: Անհրաժեշտ է տարբեր տեսանկյուններից մոտենալ սկզբնաղբյուրներին և աշխատել տալ ճիշտ գնահատական:

Դասի կարևոր պահանջն է լինելու նաև աշակերտների մեջ որքան հնարավոր է արթնացնել հայրենասիրությունը:

Եզրակացություն

Ամփոփելով Արգիշտի Առաջինի աշխարհակալության մասին մեր տեղեկությունները՝ տեսնում ենք, որ նրա գերիշխանությունը տարածվել է բուն թագավորության սահմաններից շատ հեռու՝ մինչև Փոքր Ասիա և Պարսից ծոց (Բաբելոնիան ներառյալ) : Իսկ նրա քաղաքական ազդեցության ոլորտները ձգվել են մինչև Հյուսիսային Կովկաս և Զագրոսի կենտրոնական շրջանները:

Այսպիսով, ընդհանրացնելով նյութը, և այս նյութի ուսումնասիրման արդյունքում աշակերտները կարողանում են հասկանալ պետության անկախության և հզորության կարևորությունը: Եվ որ ցանկացած խնդիր, կամ հարց պիտի լուծվի պետության շահերից:

Գրականության ցանկ

1. Յու. Ա. Ամիրջանյան, Ա.Ս. Սահակյան Մանկավարժություն, << Մանկավարժ>>, 2005

2. Աշոտ Մելքոնյան << Հայոց պատմություն>> դասագիրք VI դասարան 2013

3. Ելենա Վարդանյան , Պատմության դասավանդման մեթոդիկա , Գյումրի, 2014

4. Ժամկոչյան << Հայ ժողովրդի պատմությունը>., Երևան, 1975

5.https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%A3%D5%AB%D5%B7%D5%BF%D5%AB_%D4%B1

6.https://hy.wikipedia.org/wiki/%D4%B7%D6%80%D5%A5%D5%A2%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB_%D5%A1%D5%B4%D6%80%D5%B8%D6%81

7. 14Вагин А. А. , Методика преподавания истории в средней школе, (ՎՊՄԻ գրադարանի ընթերցասրահ)

8. Короткова М. В. , Наглядность на уроках истории, М 2000

9. Вяаземский Е. , Методика преподавания истории в школе, М. 2001

ՀՀ Կրթության Գիտության Մշակույթի Սպորտի Նախարարություն

Վանաձորի Հ, Թումանյանի անվան պետական համալսարան

Հերթական ատեստավորման ենթակա պատմության ուսուցիչների

վերապատրաստման դասընթաց

ԹԵՄԱ՝ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ՝ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

ԿԱՏԱՐՈՂ՝ ՀԵՐՄԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ Պ. Գ. Թ., ԴՈՑԵՆՏ ՍԱՄՎԵԼ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1917-1918ԹԹ.
2. ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ՝ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
3. «ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ՝ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արամ Մանուկյանը 20-րդ դարի հայոց ազատամարտի նվիրյալներից է, ով տարբերվում է մյուս պետական գործիչներից իր կազմակերպչական տաղանդով, երկաթյա կամքով, վճռականությամբ և շրջահայացությամբ: Նրա պետական գործունեության ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ներկայումս էլ՝ Հայաստանի Երրորդ Հանրապետության գոյության պայմաններում, անկախությունը պահպանելու, ամրապնդելու անհրաժեշտություն կա:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել Արամ Մանուկյանի բացառիկ դերակատարությունը Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման գործում:

Արամ Մանուկյանի պետական գործունեությունը կարելի է բաժանել երեք փուլերի: Առաջին փուլն ընդգրկում է 1915-1916թթ., երկրորդը՝ 1917-1918թթ., երրորդը՝ 1918-1919թթ.: Արամ Մանուկյանն Արմենակ Եկարյանի և այլ ազգային գործիչների հետ կազմակերպել և ղեկավարել է 1915թ. Վանի ապրիլյան ինքնապաշտպանությունը, որի հաղթական ավարտից հետո՝ 1915թ. մայիսի 7-ին, նշանակվել է Վանի նահանգապետ: 1916-1917թթ. աշխատել է Թիֆլիսի հայոց Ազգային բյուրոյում և ՀՅԴ բյուրոյում (զբաղվել հիմնականում արևմտահայ գաղթականության հարցերով): Իշխանության հետագա ուժեղացման նպատակով 1918թ. մարտի 24-ին Երևանի բնակչությունը, զորքը և Հայոց ազգային խորհուրդը Արամին իր կամային հատկանիշների շնորհիվ ընտրեցին Երևան նահանգի դիկտատոր՝ նրան օժտելով անսահմանափակ լիազորություններով: Այնուհետև երբ ձևավորվեց ՀՀ անդրանիկ կառավարությունը, Արամ Մանուկյանը պաշտոնավարեց որպես ներքին գործերի նախարար:

Այս թեման մշտապես գտնվել է տարբեր պատմաբանների, քաղաքագետների ուշադրության կենտրոնում: Արամ Մանուկյանի պետական գործունեությանը իրենց աշխատություններում անդրադարձել են Սիմոն Վրացյանը, Արմեն Ասրյանը, Երվանդ Փամբուկյանը, Ռիչարդ Հովհաննիսյանը:

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1917-1918թթ.

Արամ Մանուկյանը (Սարգիս Հարությունի Հովհաննիսյանը) ծնվել է 1879թ. մարտի 19-ին Շուշի քաղաքում: Ծնողներն ապրում էին Զեյվա գյուղում, ինչի պատճառով որոշ ուսումնասիրողներ այդ գյուղը համարել են իր ծննդավայրը, մինչդեռ ինքը՝ Արամ Մանուկյանն իրեն համարում էր ղարաբաղցի և ծննդով շուշեցի[1]: Ավարտելով Շուշիի Ագուլյաց ծխական ուսումնարանը՝ 1890թ. ընդունվել է Շուշիի թեմական դպրոցը: ՀՅԴ ազդեցությամբ տեղի ունեցած խռովահույզ ցույցերից հետո Արամն ընկերների հետ վտարվել է դպրոցից, այնուհետև սովորել է Երևանի թեմական դպրոցում: Ուսումն ավարտելուց հետո գործուղվել է Կարս, այնտեղ հայտնի էր Սերգեյ անունով[2]: Նախքան Վասպուրական հասնելը մի քանի ամիս մնացել է Ատրպատականում, որտեղ արդեն հայտնի էր Արամ անունով: Ծածկանուններն անհրաժեշտ էին ցարական, թուրքական գրաքննությունից խուսափելու համար:

Արամ Մանուկյանը հայ ժողովրդի նշանավոր մշակութային, ռազմական, քաղաքական ու պետական գործիչների շարքում հայոց նորագույն պատմության մեջ իր կատարած դերով առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Նրան դեռևս ժամանակակիցներն անվանել են Հանրապետության հիմնադիր, Արարատյան երկրի փրկիչ և այլն: Ի՞նչ հանգամանքներ են հիմք ծառայել Արամին այդպիսի բարձր գնահատական տալու համար: Հարցին ճիշտ պատասխանելու համար պետք է դիտարկել Արամի գործունեությունը ժամանակի իրադարձությունների համապատկերում: Ինչպիսի՞ն էր հայ ժողովրդի ռազմաքաղաքական կացությունը 1917թ. վերջին, երբ իբրև հայոց կենտրոնական ազգային և հայ զինվորական խորհուրդների լիազոր ներկայացուցիչ Արամը գործուղվեց Երևան: 1917թ. վերջին ռուսական Կովկասյան ռազմաճակատի քայքայումը, որը սկսվել էր փետրվարյան հեղափոխությանը հաջորդած ամիսներին և խորացել հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, թուրքական ներխուժման վտանգի տակ դրեց Հայաստանի ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան մասը: Անհրաժեշտ էր արագացնել հայկական

[1] Արամ Մանուկեան. նամականի, Երևան, ԵՊՀ հրատ., 2018, էջ 5:

[2] Նույն տեղում, էջ 6:

զորամիավորումների ստեղծումը, որոնք կփոխարինեին հեռացող ռուսական զորքերին: Այն հանգամանքը, որ հայության համար բախտորոշ այդ իրավիճակում հայ իրականության ղեկավար և ազդեցիկ կառույցների կողմից Արամին վստահվեց Արևելյան Հայաստանի նշանակալի մասն ընդգրկող Երևանի նահանգի ղեկավարությունը, նրան որոշակիորեն բարձրացնում է մյուս գործիչներից:[3] 1917թ. դեկտեմբերի 18-ին ժամանելով Երևան՝ Արամը, կանխատեսելով հայ ժողովրդին սպառնացող վտանգը, առաջադրեց հայ ժողովրդի պաշտպանությանն ու ազատությանը միտված պարզ ու իրատեսական ուղեգիծ: Նա գտնում էր, որ հայությունը միայնակ է և պետք է հենվի իր ուժերի վրա թե՛ թուրքական հարձակումից պաշտպանվելու, թե՛ երկրում կարգ ու կանոն հաստատելու համար: Կարճ ժամանակ անց՝ 1918թ. մարտի 28-ին, նա ավելի հստակեցրեց հետապնդվելիք քաղաքական գիծը՝ նշելով.« Ցույց տանք աշխարհին, որ հայը ազատ, անկախ ապրելու իրավունք ունի: Այժմ կամ երբեք»:[4] Արամը, Երևան ժամանելուն պես աչքի առաջ ունենալով Վանի նահանգապետության շրջանի պետական գործունեության փորձը, նա առաջադրեց գործողությունների խիստ որոշակի ծրագիր և հետևողականորեն իրագործեց այն: Նրա առաջարկությամբ ստեղծվեց Երևանի նահանգի իշխանության դյուրաշարժ մարմին՝ վեց հոգուց կազմված Հատուկ կոմիտե, որի առջև դրվեցին հստակ խնդիրներ: Միաժամանակ ակտիվացվեց Ազգային խորհրդի գործունեությունը: Անհրաժեշտ էր ձևավորել կանոնավոր զորք, որը թելադրում էր կատարել կազմակերպված զորահավաք: 1917թ. դեկտեմբերի 23-ին Հատուկ կոմիտեն հրապարակեց Արամի հեղինակած «Կոչ հայ զինուորներին» շրջաբերականը: Այն բոլորից պահանջում էր կանգնել հայրենիքի պաշտպանության դիրքերում: Դրան հաջորդեց զորակոչի հայտարարությունը, որով նախատեսվում էր հավաքագրել Երևանի նահանգի և Զանգեզուրի գավառի 20-32 տարեկան բոլոր հայ զինապարտներին: Արամը ձեռնարկեց մի շարք քայլեր, որոնք կենսունակություն հաղորդեցին զորակոչին: Նրա գլխավորությամբ ազգային մարմիններն ու գործիչները ծավալեցին քարոզչական լայն աշխատանք թշնամու դեմ կազմակերպված

[3] Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2009, էջ 201:

[4] Նույն տեղում, էջ 203:

պայքարելու նպատակով: Հատուկ ուշադրություն դարձվեց զինվորների ընտանիքների նյութական ապահովությանը՝ այդ խնդիրը հստակ սահմանված կարգով դնելով գյուղական համայնքների վրա: Այդ կերպ զորակոչվողները կազատվեին այն ծանր մտատանջությունից, որ աշխատուժից զրկված իրենց ընտանիքները չեն մատնվի սովի և այլ զրկանքների: Մարտունակ և հայրենասեր բանակ ստեղծելու համար անհրաժեշտ էր զորակոչել բոլորին՝ առանց բացառության: Ծավալվեց վճռական պայքար դասալիքների, զենք-զինամթերքի, պետական գույք հափշտակողների դեմ: Սակայն դրանով խնդիրն ամբողջովին չէր կարող լուծվել: Անհրաժեշտ էր սանձել մահմեդականության հակահայկական խռովությունները, որոնք կազմակերպվում և ուղղորդվում էին թուրքերի կոմից: Այդ խռովությունները ոչ միայն խափանում էին զորամասերի փոխադրումը ռազմաճակատ, այլև պատճառ էին դառնում, որ ռազմունակ հայերն իրենց հարազատներին պաշտպանելու համար գամված մնան սեփական բնակավայրերում կամ այլ նպատակով լքեն ռազմաճակատը: 1918թ. առաջին եռամսյակում հնազանդեցվեց 50-ից ավելի թաթարական գյուղ: Արամը ձգտում էր մոբիլիզացնել հայության ողջ ներուժը: Նա փորձեց կապ հաստատել նույնիսկ Բաքվում գտնվող Ռոստոմի հետ, որպեսզի ամրապնդի Երևանի թիկունքը:[5] Այս միջոցառումները պայմանավորեցին զորահավաքի հաջող ընթացքը:

Արամին բնորոշ, քաղաքական գործչի համար առաջնակարգ կարևորություն ունեցող հատկանիշներից մյուսը շատ արագ բոլոր կենսունակ ուժերին մեկ նպատակի շուրջ համախմբելու նրա ընդունակությունն էր: Նա սեղմ ժամկետում քաղաքում ստեղծեց աշխատանքով հագեցած մթնոլորտ: Գործի լծվեցին ամենքը՝ անկախ կուսակցական հանգամանքից: Նա ոչ միայն կարողանում էր բոլորին համախմբել մեկ նպատակի շուրջը, այլև իր վճռական ու արդարացի քայլերով կանխում էր այդ նպատակի դեմ ուղղված փորձերը: Ապացույցը մաուզերիստների սանձահարումն էր, դասալքության դեմ անհաշտ պայքարը, Մայիսյան հերոսամարտերի ժամանակ անձնատվության կոչեր կատարող ցուցարարների պատժումը և այլն:

[5] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Երևան, 1990, էջ 143:

Արամին բնորոշ, նրան ժողովրդի շրջանում մեծ հեղինակություն ապահովող հաջորդ գիծը փառամոլության և սնապարծության բացակայությունն էր, նաև քաղաքական հավասարակշռությունը: Որպես հայրենասեր և հեռատես քաղաքական պետական գործիչ դարավոր թշնամուց հայ ժողովրդի փրկության ճանապարհին նա երկրորդական էր համարում ամեն ինչ: Երկրորդական համարելով գաղափարախոսական, քաղաքական տարաձայնությունները՝ ՀՅԴ մի շարք այլ գործիչների և առաջին հերթին Ռոստոմի հետ համախորհուրդ նա փորձեց դաշնակից ձեռք բերել ի դեմս բոլշևիկյան Ռուսաստանի: Այդ նպատակով նա հարաբերություններ հաստատեց Երևանի բոլշևիկների հետ, ինչպես նաև հեռակա կարգով մասնակցեց Թիֆլիսում ՀՅԴ գործիչների կողմից Անդրկովկասի բոլշևիկյան ղեկավարների հետ տարվող բանակցություններին:: Այդ ընթացքում ՀՅԴ գործիչների և Կովկասում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Ստ. Շահումյանի ջանքերով ընդունվեց համագործակցության գաղտնի ծրագիր, որի առանցքը հայ-բոլշևիկյան ճակատի ձևավորումն էր թուրքերի դեմ Կովկասի խորհրդայնացման պայմանով (Արևմտահայաստանը լինելու էր անկախ):[6] Հայ գործիչների ջանքերն ապարդյուն անցան: Ստ. Շահումյանը չկարողացավ կատարել իր խոստումը, իսկ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն ու թուրքական սրընթաց առաջխաղացումը ջնջեցին հետագա գործակցության հնարավորությունները:

1918թ. մարտի 24-ին Սարիղամիշի անկումից հետո ժողովրդական զանգվածների, զինվորականության և Երևանի Հայոց ազգային խորհրդի կողմից ընտրվելով դիկտատոր, այսինքն՝ օժտվելով անսահմանափակ իշխանությամբ, նա մինչև վերջ այն օգտագործեց բացառապես հոգուտ համազգային շահերի, երբեք չձգտեց հարստության, երբեք չփորձեց իրեն վեր դասել ազգային ու զինվորական կառույցներից: Լինելով անսահմանափակ իշխանության տեր՝ նա ապրում էր հասարակ երևանցու նման. պատահում էր, որ ճաշի ժամանակ հաց չէր ունենում, իսկ թեյի ժամանակ՝ շաքար:[7] Արամի հաջողությունը պայմանավորող գծերից մեկն էլ ժողովրդի կարևորության ընդունումն էր և իրական հարգանքը նրա նկատմամբ: Նա

[6]Ռուբէն, նշվ. աշխ., էջ 143:

[7] Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 205:

լավ էր հասկանում, որ հայրենիքի փրկությունը կախված է ժողովրդի հավաքական կամքից, ուստի անընդհատ փորձում էր բարձրացնել նրա խանդավառությունը: Նա նշում էր«….Դուք պիտի իմանաք, որ ես անոյժ եմ առանց ձեզ: Հերոսը ինքը ժողովուրդն է, և եթե ժողովուրդը պատրաստակամություն ունի..աշխատել ու փրկել հայութիւնը վերահաս կործանումից, ապա իմ ու ինձ նման շատերի աշխատանքը ապարդիւն չի անցնի»:[8] Եվ դա հաջողվում էր նրան շնորհիվ իրեն բնորոշ մեկ այլ գծի՝ խոսքի և գործի նույնականության. նրա արտահայտած մտքերը միշտ վերածվում էին իրականության: Զորահրամանատարության, պետական, հասարակական-քաղաքական կառույցների գործակցությամբ Արամի կատարած տքնաջան աշխատանքի շնորհիվ ստեղծվեցին 10-12 հազարանոց զորամիավորումներ, որոնց հիմնականում հաջողվեց ճնշել հանրապետության տարածքում թուրքական խռովությունները:

Արամի նախաձեռնողականությունն ու կազմակերպչական ջիղը ցայտուն դրսևորվեցին 1918թ. մայիսյան իրադարձությունների ժամանակ: Շարունակելով 1918թ. հունվարի վերջին սկսած հարձակումը՝ թուրքական զորքերը մայիսի 15-ի գիշերը գրավեցին Ալեքսանդրապոլը, իսկ մայիսի 19-ին ներխուժեցին Արարատյան դաշտ: Նրանք մայիսի 20-ին գրավեցին Արաքս կայարանը, իսկ մայիսի 21-ին՝ Սարդարապատ կայարանն ու գյուղը: Ամբողջ սրությամբ դրվեց հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը: Այդ ծայրահեղ, թվում է, թե անհուսալի իրավիճակում նա դրսևորեց թշնամուն հակահարված հասցնելու վճռականություն, կարողացավ խավարի, անորոշության պայմաններում լուսավորել իր ժողովրդի պատմական ճանապարհը և բարձրացնելով ժողովրդի, զորքի և զորահրամանատարների հոգու կորովը՝ ուղի հարթեց դեպի լուսավոր ապագա, դեպի ազգային իղձերի իրականացում, դեպի հայոց նորագույն վերածնունդը, որը պետք է սկզբնավորվեր հայոց պետականության վերականգնմամբ:[9]

---

[8] Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (հոդվածների ժողովածու), Երևան, 2010, էջ 74:

[9] Նույն տեղում, էջ 77:

Երկար քննարկումներից հետո 1918թ. մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը հռչակեց հայկական գավառների նկատմամբ Հայոց ազգային խորհրդի գերագույն և միակ իշխանությունը:

1918թ. հունիսի 4-ին Բաթումում Հայաստանի և Թուրքիայի միջև կնքվեց հաշտության պայմանագիր: Այն անչափ ծանր էր հայ ժողովրդի համար. նրան թողնվում էր ընդամենը 11 հազար քառ. կմ տարածք և մի քանի կմ երկաթուղագիծ: Այդուհանդերձ իրականանում էր անկախ պետականության վերականգնման հայոց բազմադարյան ձգտումը:

Այսպիսով, ստեղծվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը. այն ստեղծվեց ոչ թե 1918թ. մայիսի 28-ի հայտարարությամբ, ոչ թե ինչ-որ բանակցությունների շնորհիվ, այլ բացառապես Մայիսյան հերոսամարտերի արդյունքում, որոնք կազմակերպվեցին Արամի աներեր վճռականության, անկոտրում կամքի, կազմակերպչական բացառիկ տաղանդի շնորհիվ:[10]

[10] Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (հոդվածների ժողովածու), էջ 80:

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ՝ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

1918թ. մայիսին Հայաստանի անկախացումից հետո հայ հասարակական-քաղաքական շրջանակների առջև ծառացավ նորանկախ հանրապետության օրենսդիր և գործադիր մարմինների ստեղծման հարցը: Արդեն Հայոց ազգային խորհրդի մայիսի 26-ի և 28-ի նիստերում առաջ է քաշվում կառավարության ձևավորման հարցը, իսկ Ազգային խորհրդի մայիսի 30-ի հայտնի հայտարարության մեջ նշվում է, որ մինչև Հայոց ազգային կառավարության կազմավորումը «Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարության բոլոր ֆունկցիաները հայկական գավառների քաղաքական ու վարչական ղեկը վարելու համար»:[11]

Հայոց ազգային խորհրդի հունիսի 7-ի նիստում կրկին քննարկման նյութ է դառնում կառավարության ձևավորման հարցը: Հ. Յ. Դաշնակցության կողմից Խաչատուր Կարճիկյանն առաջարկում է Հայոց ազգային խորհուրդը վերածել պառլամենտի, իսկ կառավարությունը կազմել կոալիցիոն սկզբունքով: Նիստի ընթացքում կրկին ի հայտ է գալիս Դաշնակցություն-Ժողովրդական կուսակցություն հակամարտությունը: Ժողովրդական կուսակցության անդամ Սամսոն Հարությունյանն առաջարկում է կազմել կոալիցիոն կառավարություն՝ գերակշռություն տալով Ժողովրդական կուսակցությանն ու նրան հարողներին: Հունիսի 7-ի նիստի ընթացքում որոշվում է Հայոց ազգային խորհուրդը ժամանակավորապես վերածել ՀՀ օրեսդիր մարմնի և տեղափոխել Երևան: Ազգային խորհուդը որոշում է .« Հ. Քաջազնունուն հանձնվում է կառավարություն կազմել կոալիցիոն սկզբունքով՝ անձնավորությունների ընտրությունը վերապահելով իրեն»:[12] Հայոց ազգային խորհրդի հունիսի 8-ի նիստում վարչապետը կառավարության վերջնական ձևավորումը և հայտարարագիր (դեկլարացիա) կատարելը կապում էր Երևան տեղափոխվելու հետ: Վերջնականապես Հայոց ազգային խորհրդի հուլիսի 13-ի նիստում կտրուկ կերպով դրվեց տեղափոխության խնդիրը և երկար քննարկումներից հետո որոշվեց հուլիսի 16-ին ճանապարհվել Երևան: Վրացիների

[11] Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2009, էջ 31:

[12] Նույն տեղում, էջ 33:

հարուցած խոչընդոտների պատճառով ՀՀ ղեկավարները միայն հուլիսի 17-ի կեսօրին ճանապարհվեցին Թիֆլիսից և 19-ի երեկոյան ժամանեցին Երևան: Մինչև Հայոց ազգային խորհրդի և Հովհ. Քաջազնունու ձևավորվող կառավարության ժամանումը Երևան՝ այստեղ գերագույն իշխանությունը կենտրոնացված էր Արամ Մանուկյանի գլխավորած Վարիչների մարմնի ձեռքում, որը կարևոր քայլեր էր կատարել Երևանում ու շրջակայքում կարգ ու կանոն հաստատելու ուղղությամբ:[13] Հուլիսի 24-ին Հայոց ազգային խորհուրդը պաշտոնապես հայտարարեց կառավարության կազմավորման մասին: ՀՀ անդրանիկ կառավարությունն ուներ հետևյալ կազմը. նախարար-նախագահ՝ Հովհ. Քաջազնունի, արտաքին գործերի նախարար՝ Ալեքսանդր Խատիսյան, ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյան, զինվորական նախարար՝ գեներալ Հովհաննես Հախվերդյան, ֆինանսների նախարար՝ Խաչատուր Կարճիկյան, արդարադատության նախարարի պաշտոնը թափուր մնաց մինչև հուլիսի 28-ը, երբ նախարար նշանակվեց անկուսակցական, սակայն Ժողովրդական կուսակցությանը հարող Գրիգոր Տեր-Պետրոսյանը: Հովհ. Քաջազնունու գլխավորած անդրանիկ կառավարության մեջ առանձնահատուկ դեր ուներ ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանը: Ինչպես նշում է ՀՅԴ նշանավոր գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանը. «Կառավարութեան գլոով՝ Երևանի Ազգային խորհուրդը լուծուեցաւ, բայց Արամ նորաստեղծ իշխանութեան մէջ ալ մնաց ծանրութեան կեդրոնը»:[14]

Քաջազնունու գլխավորած կառավարության մեջ զբաղեցնելով ներքին գործերի նախարարի պաշտոնը՝ Արամն ըստ էության երկրի ամենաազդեցիկ դեմքն էր: Նրա իրավասություններն իրականում շատ ավելի էին, քան սովորաբար ունենում էր ներքին գործերի նախարարը: Գործող կառավարության սահմանափակ կազմի պայմաններում բացի ավանդականից ներքին գործերի նախարարության իրավասության ներքո էին նաև հաղորդակցության, պարենավորման, խնամատարության, գաղթականության, լուսավորության, տեղական իշխանության

[13] Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 212:

[14] Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (հոդվածների ժողովածու), էջ 98:

մարմինների ղեկավարման և այլ, ամենևին էլ ոչ դյուրին ոլորտները: Նման գերբարդ խնդիրների լուծումը, որոնք կապված էին ոչ ստանդարտ, կտրուկ, հաճախ նաև ցավագին քայլերի հետ, ի զորու էր իրականացնել միայն այն գործիչը, որն ուներ մեծ փորձ ու հեղինակություն, օժտված էր վճռականությամբ, անդրդվելի բնավորությամբ և վայելում էր զանգվածների անվերապահ վստահությունը: Զանգվածների շրջանում նորահռչակ պետության հեղինակության ամրապնդումը դառնում է օրվա խնդիրներից մեկը: Այդ ուղղությամբ Արամի ձեռնարկած քայլերից մեկը Հայաստանի անկախության խորհրդանիշները հանրության սեփականությունը դարձնելուն միտված ջանքերն էին: Ներքին գործերի նախարարի 1918թ. սեպտեմբերի 13-ի հրահանգով պետական-կառավարական հիմնարկները պարտավոր էին ունենալ և կրել հանրապետության եռագույն դրոշը: Արամը նախանձախնդիր էր նաև երկրում կատարվող գրագրությունները հայացնելու գործում: Նրա նախաձեռնությամբ 1918թ. սեպտեմբերին կայացվում են որոշումներ հանրապետության տարածքում հեռագրերը ռուսերենի հետ նաև հայերեն լեզվով հաղորդելու մասին:

Արամի առաջնահերթ խնդիրներից մեկը, անշուշտ, երկրում անձի ու գույքի ապահովությունը, մաուզերիզմի հաղթահարումը, կարգ ու կանոնի և ամուր իշխանության հաստատումն էր: Այդ խնդիրների լուծման կարևոր միջոցներից մեկը բնակչության մոտ առկա զենք-զինամթերքի առգրավումն էր: Ժողովրդի զինվելը, որքան էլ ճիշտ և անհրաժեշտ էր նրա ինքնապաշտպանությունը կազմակերպելու շրջանում, նույնքան վտանգավոր ու վնասակար էր պետության գոյության պայմաններում, ինչն անխուսափելի էր դարձնում «մաուզերիզմը»: 1918թ. օգոստոսի 21-ին կառավարությունը հավանություն տվեց նրա ներկայացրած համապատասխան օրինագծին, որի հիման վրա 1918թ. օգոստոսի 29-ին Հայաստանի խորհուրդն ընդունեց օրենք «Մասնավոր սեփականություն կազմող զենքերի ու զինամթերքների պետականացման մասին»:[15]Այդ գործընթացին զուգընթաց Արամը նաև հետևողական աշխատանք էր տանում օրինազանցությունները վերացնելու, ներքին գործերի նախարարությունը, պարենավորման ու տեղական իշխանության մարմինները

[15] Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 222:

պատահական, իրենց չարդարացրած կադրերից մաքրելու և իր կողմից ղեկավարվող համակարգում կարգ ու կանոն հաստատելու ուղղությամբ:

Պաշտոնի բերումով Արամը նաև իր ներդրումը ունեցավ երկրում պարենային ճգնաժամն ինչ-որ չափով մեղմելու և սովի դեմ պայքարելու գործում: Ավելի վաղ սահմանված հացի պետական մենաշնորհին օգոստոսից գումարվեց նաև բամբակի, կարտոֆիլի, խմիչքների և այլ ապրանքների նկատմամբ պետական մենաշնորհը: Մյուս կողմից՝ ՆԳՆ-ին կից պարենավորման բաժանմունքը քայլեր էր ձեռնարկում հանրապետության տարածք մթերքների ներկրում կազմակերպելու ուղղությամբ: 1918թ. օգոստոսի սկզբին Արամի կարգադրությամբ ապրանքների ներմուծումը հայտարարվեց ազատ, մինչդեռ անհրաժեշտ մթերքների արտահանումն արգելվեց: Ձեռնարկված ջանքերի արդյունքում կազմակերպվեց հացի բաշխումը ազգաբնակչությանը:[16]

Ակնհայտ է Արամի դերակատարությունը հարյուր հազարավոր գաղթականների և տասնյակ հազարավոր որբերի խնդիրները հոգալու գործում: Հոկտեմբերի 1-ին Հայաստանի խորհուրդը որբերի խնամքի համար Արամին տրամադրեց 750000 ռուբլի, իսկ մի քանի օր անց որբերի և գաղթականների օգնության համար առանձնացվեց ևս 1մլն 736 հազար ռուբլի: Որբերի հետ կապված խնդիրներում Արամն անգամ պատրաստ էր գնալ ծայրահեղ քայլերի և խախտել գործող օրենքները, եթե դրանք խոչընդոտ էին հանդիսանում հարցի կարգավորմանը: Դպրոցական համակարգը կանոնավորելու համար այդ ամիսներին քայլեր էին ձեռնարկվում զինվորական, բժշկական և այլ հաստատությունների կողմից զբաղեցված դպրոցական շենքերն ազատելու և դրանք վերաբացելու ուղղությամբ:: Այդ հարցում նախանձախնդիրներից մեկն էլ Արամ Մանուկյանն էր, որի տնօրինության տակ էր գտնվում նաև լուսավորության համակարգը: Բայց նույն օրերին Ռ. Տեր-Մինասյանի նախաձեռնությամբ Երևանի դպրոցներից մեկի շենքը, առանց օրինական թույլտվության, վերածվում է որբանոցի: Արամը հավանություն է տալիս Ռուբենի վարմունքին՝ ասելով, թե «Կան դէպքեր, երբ օրէնքն ու իրաւունքը

[16] Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 224:

գործադրելով՝ մենք յանցաւորներ ու չարագործներ կը դառնանք, մանաւանդ… երբ դէպքերը տեղի են ունենում գահավէժ արագութեամբ եւ ստեղծում դրութիւններ, որոնք օրէնքը չէր կարող նախատեսել»[17]: Արամ Մանուկյանը, լինելով օրենքի կատարման երաշխավորը և զբաղեցրած պաշտոնի բերումով պարտավոր լինելով գործադրել օրենքի տառը, նա ինքն առաջինն էր հանդես գալիս քարացած և դրանով իսկ ազգային ու պետական շահի տեսանկյունից վնասակար դարձած օրենքների ու կանոնների դեմ: Այդպես կարող էր վարվել միայն, իրոք, մեծ պետական գործիչը:

Հովհ. Քաջազնունու գլխավորած կոալիցիոն կառավարության շրջանում Արամի լիազորությունների շրջանակներն որոշակիորեն նեղանում են, քանի որ նորաստեղծ լուսավորության, խնամատարության և պարենավորման նախարարությունները ստանձնում են այն գործառույթները, որոնք նախկինում տնօրինում էր ներքին գործերի նախարարը: Դրանով հանդերձ, Արամը շարունակում էր մնալ հանրապետության առանցքային դեմքը:

Պատերազմում Թուրքիայի կրած պարտությունը նոր հեռանկարներ էր բացում սովից, խոլերայից ու բծավոր տիֆից գալարվող նորաստեղծ հանրապետության համար: Եվ նրա հիմնադիրներից մեկը լիովին իրավունք ուներ հույսով նայել ապագային՝ ակնկալելով իր ժողովրդի վերածնունդը: Բայց բծավոր տիֆը անժամանակ կտրեց նրա կյանքի թելը: Արամի մահը ծանր կորուստ էր հանրապետության և ժողովրդի համար: Արամ Մանուկյանի՝ որպես ՀՀ հիմնադրի գնահատականն արտահայտվել է Նիկոլ Աղբալյանի ՝ Արամի հուղարկավորության ժամանակ հնչեցրած հետևյալ խոսքերում. «Երբ գիշերը գայ, մտէք ձեր հոգիի սենեակը և խօսէցէք ձեր խղճի հետ և ըսէք արդեօք աշխատէ՞ք հայ ժողովրդի համար, ինչպէս Արամը, եղէ՞ք այնքան անձնազոհ, որքան Արամը, տուե՞ք ամբողջ կեանքը հայ ժողովրդին, ինչպէս Արամը… »:[18]

[17] Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (հոդվածների ժողովածու), էջ 108:

[18] Նույն տեղում, էջ 110:

«ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ՝ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

11-րդ դասարանում «Արամ Մանուկյանը՝ Առաջին հանրապետության հիմնադիր» թեմայով կիրականացվի խմբային աշխատանք: Դասի նպատակը կլինի հետևյալը՝ ներկայացնել Արամ Մանուկյանի բացառիկ դերակատարությունը Առաջին հանրապետության հիմնադրման գործում, ձևավորել սովորել սովորելու, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություններ:

Հանձնարարությունը դասարանին կտրվի նախորդ դասին: Դասարանը կբաժանվի երեք խմբի. խմբերը կներկայացնեն Արամ Մանուկյանի գործունեության տարբեր շրջաններ՝ առաջին խումբը կներկայացնի Արամ Մանուկյանի գործունեությունը 1917-1918թթ., երկրորդ խումբը կներկայացնի «Հայաստանի առաջին հանրապետության անդրանիկ կառավարության ձևավորումը» թեման, երրորդ խումբը կներկայացնի Արամ Մանուկյանի՝ որպես ներքին գործերի նախարարի գործունեությունը:

Դասի տևողությունը՝ 45 րոպե:

Դասի ընթացքը:

1. Սովորողների հաճախումների ստուգում (2 րոպե):
2. Արամ Մանուկյանին վերաբերող տեսանյութի դիտում (3 րոպե) https://youtu.be/1o9VVuCe-7Y
3. Յուրաքանչյուր խմբի կտրամադրվի 10 րոպե թեման ներկայացնելու համար: Սովորողները թեման կներկայացնեն թեմատիկ սահիկաշարի, պաստառների, տեսանյութերի միջոցով:
4. Հարց ու պատասխան (5 րոպե):
5. Սովորողների պատասխանների գնահատում (3 րոպե):
6. Տնային աշխատանքի հանձնարարում (2 րոպե):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արամ Մանուկյանն իր ամբողջ գիտակից կյանքը նվիրել է թուրքական բռնապետությունից հայ ժողովրդի ազատագրմանը, արժանապատիվ ապագայի կերտմանը: Որքան էլ ծանր էր հայ ժողովրդի դրությունը, կորուստները՝ տևական, նա շարունակեց պայքարը՝ լինելով լավատես, արարող: Նրա գործունեության նպատակը հայ ժողովրդի ձգտումների իրականացումն էր, նրա անվտանգության ապահովումը:

Արամը մարտական հարուստ փորձ է ձեռք բերել Կարսում (1903-1904թթ.), Վանում (1905-1915թթ.), Երևանում (1917-1919թթ.): Նա նպատակասլաց, հեռատես, շրջահայաց քաղաքական գործիչ էր: Հենց այս որակների շնորհիվ նրան հաջողվեց մեկ նպատակի շուրջ միավորել ժողովրդին, հաղթել թուրք ոսոխին 1915թ. Վանում, 1918թ. Երևանում: Նրա համար իշխանությունը ոչ թե առավելություն էր, ոչ թե փառքի արտահայտություն, այլ ժողովրդի վերքերն ամոքելու, ժողովրդին ծառայելու միջոց: Իրեն տրված անսահմանափակ իշխանությունը մինչև վերջ օգտագործեց հօգուտ համազգային շահերի: Նշանակվելով նորանկախ ՀՀ ներքին գործերի նախարար՝ նա դարձյալ մնաց նույն համեստ և ազնիվ գործիչը: Նա, ժամանակի ամենաազդեցիկ քաղաքական ուժի ներկայացուցիչ լինելով հանդերձ, համաժողովրդական խնդիրների լուծման ժամանակ հանդես բերեց վերկուսակցական մոտեցում: Արամն անզիջում պայքար մղեց անարդարության, ստորության դեմ, և ընդհակառակը, անհուն էր նրա սերը, հարգանքը իր ժողովրդի նկատմամբ:

Արամն առաջնորդվում էր ազգային-պետական մտածողությամբ, ազգային շահերով, անկախ Հայաստանը ստեղծեց անհուսալի թվացող իրավիճակում: Ամենուր, որտեղ էլ որ գործեց, աչքի ընկավ կազմակերպչական բացառիկ ձիրքով, անկոտրում կամքով, իրատեսությամբ, արդարամտությամբ, համեստ կենցաղով և իր ժողովրդի ճակատագրի նկատմամբ մեծագույն պատասխանատվությամբ: Նա անառարկելի հեղինակություն էր իր ժողովրդի համար ամենուր և իր գործունեության բոլոր ժամանակներում:

1919թ. հունվարի 29-ին հայ ժողովուրդը կորցրեց իր բազմադարյան պատմության լավագույն գործիչներից մեկին՝ Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2009:
2. Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (հոդվածների ժողովածու), Երևան, 2010:
3. Արամ Մանուկեան. նամականի, ԵՊՀ հրատ., Երևան, 2018:
4. Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2009:
5. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Երևան, 1990:

Հայոց պատմություն

Հետազոտական աշխատանք

Թեմա- Հոգևորականների դերը Մայիսյան հերոսամարտերում

Կատարող- Արմենուհի Գասպարյան

Ստուգող- Սամվել Աղաջանյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 2
1. Մայիսյան հերոսամարտեր 4
2. Հոգևորականները Մայիսյան հերոսամարտերում.....13
3. Հատված Գարեգին Հովսեփյանի ելույթից 17
Եզրակացություններ.....18
Օգտագործված գրականության ցանկ 20

Ներածություն

<u>Թեմայի արդիականությունը:</u> Հայ ժողովրդի համար 1918-1920 թթ. բախտորոշ ժամանակաշրջան էր: Հայ ժողովուրդը հայտնվել էր մեծ պետությունների աշխարհաքաղաքական հետաքրքրություններում: Բռնագաղթից ու զանգվածային կոտորածներից դեռ ուշքի չեկած, կազմավորվեց Հայաստանի Հանրապետությունը, որի առջև ծառացան անլուծելի մի շարք խնդիրներ՝ գաղթականության խնդիրը, բոլշևիկների կողմից բանակի բարոյալքման գործընթացը կանխելու անհրաժեշտությունը, թուրքական զորքերի առաջխաղացման դեմն առնելը:

Թուրքական բանակը 1918 թ. մայիսի 15-ին, խախտելով զինադադարը, վերսկսեց ռազմական գործողությունները, գրավեց Ալեքսանդրապոլը և շարժվեց Երևանի ուղղությամբ:

Թուրքական ներխուժման ահավոր վտանգն անմիջականորեն կախվեց Էջմիածնի և Երևանի վրա: Ամբողջ սրությամբ դրվեց հայ ժողովրդի ֆիզիկական գոյության հարցը: Երևանի նահանգում տիրում էր ծանր կացություն. առկա էր պարենի, դեղորայքի, վառելիքի սուր պակաս: Երկիրը շրջապատված էր թշնամական օղակով. մի կողմից թուրքական բանակն էր, մյուս կողմից՝ ցանկացած պահի նրան աջակցելու պատրաստ կովկասյան թուրքերը (այժմ՝ ադրբեջանցիներ): Չկար ամենից կարևորը՝ հավատը սեփական ուժերի և հաջողության նկատմամբ:

Հայ ժողովուրդը կարողացավ իր ազգանվեր զավակների առաջնորդությամբ հակահարված տալ թուրքերին՝ մայիսյան հերոսամարտերում հետ մղելով նրանց:

<u>Աշխատանքի նպատակը:</u> Աշխատանքի նպատակ է հանդիսանում մայիսյան հերոսամարտերում հոգևորականների դերի լուսաբանումը:

Ելնելով մեր նպատակից՝ առաջադրվել են հետևյալ ***<u>խնդիրները</u>***՝

- ուսումնասիրել և ներկայացնել մայիսյան հերոսամարտերը,
- վերհանել հոգևորականների դերը մայիսյան հերոսամարտերում:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրության օբյեկտն է հանդիսանում մայիսյան հերոսամարտերը: Իսկ որպես առարկա ուսումնասիրվում է մայիսյան հերոսամարտերում հայ հոգևորականների դերը:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը. Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքում դրված է պատմականության և գիտական օբյեկտիվության սկզբունքը, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել իրադարձությունները ոչ թե առանձնացված, այլ ժամանակի և պատճառահետևանքային կապի մեջ: Աշխատանքում նաև օգտագործվել են պատմահամեմատական, պատմավերլուծական քննության մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել արծարծված խնդիրները մեկ ամբողջական համակարգում:

Օգտագործված գրականության բնութագիրը. Աշխատանքի կատարման համար աղբյուրագիտական հիմք են դարձել խնդրո առարկա ժամանակաշրջանում ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ ժամանակաշրջանի քաղաքական գործիչների գրչին պատկանող աշխատությունները, ինչպիսին են Ս. Վրացյանի ու Ա. Խատիսյանի գործերը: Օգտագործվել է նաև ուսումնասիրություններ և մենագրություններ, պատմության դասագրքեր[1]:

[1]Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Ե., 1997, Թուրշյան Հ.. Մայիսյան հերոսամարտ Ե 1969, Մանուչարյան Հ., Հայ ժողովրդի արտաքին քաղաքական կողմնորոշման հարցը և դաշնակցությունը 1890-1920թթ., Երևան, 1997, Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918, Ե., 1964, և այլն

1. Մայիսյան հերոսամարտեր

Մայիսյան հերոսամարտերում հայ ժողովուրդը կարողացավ թշնամուն արժանի հակահարված տալ և վիժեցնել Արևելյան Հայաստանը զավթելու ու տեղի հայությանը ոչնչացնելու երիտթուրքերի ծրագիրը: Դրանք ամբողջ հայ ժողովրդի հավաքական ուժի և ազգային միասնության հաղթանակն էին: Ավելին, եղեռն տեսած, կյանքի ու մահվան եզրին կանգնած հայ ժողովուրդը ոչ միայն պահպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև ստիպեց հակառակորդին հաշվի նստել իր հետ և ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը: Մայիսյան հերոսամարտերը հիմք հանդիսացան Հայաստանի անկախության համար:

Մայիսյան հերոսամարտը դարձավ հայոց նոր ժամանակների Ավարայրը, որ իր խաղացած դերով ու նշանակությամբ հայ ժողովրդի պատմության ամենահերոսական դրվագներից է: Այս դեպքերով, կարելի է ասել, փակվում է հայ ժողովրդի ողբերգական և հերոսական իրադարձություններով հարուստ նոր պատմության շրջանը, և սկսվում նորագույն՝ հայկական պետականությունների պատմության ժամանակաշրջանը[2]:

1918 թ Անդրկովկասում քաղաքական իրադրությունը խիստ անկայուն էր; Ցարական Ռուսաստանի կազմի մեջ մտնող Արևելյան Հայաստանը 1918 թ սկզբին դանթեական դժոխք էր հիշեցնում; Երկրում տիրում էին սովն ու համաճարակները, տնտեսությունը քայքայված էր, հազիվ գոյատևում էին Արևմտյան Հայաստանից հարյուր հազարավոր փախստականներ;

Թուրքիայի ռազմական նախարար Էնվեր փաշան 1918թ փետրվարի 27-ի՝ բռնազավթումը սկսած թուրքական զորքերի հրամանատարներին ուղղված գաղտնի հանձնարարականում նշում էր՝ «Այժմ, բարենպաստ պայմանների շնորհիվ, Նորին Կայսերական մեծությունը հրամայել է ոչնչացնել հայ ժողովրդին»; Ղեկավարվելով այս հրահանգով՝ թուրքական զորքերը, խախտելով 1917 թ Անդրկովկասյան կոմիսարիատի հետ կնքած զինադադարի մասին համաձայնությունը,1918 թ փետրվարի 10-ին անցան հարձակման, մինչև ապրիլի վերջը գրավեցին Երզնկան, Էրզրումը, Սարիղամիշը, Կարսը, մայիսի սկզբին անցան Արաքսը և երեք ուղղություններով շարժվեցին դեպի Անդրկովկասի խորքը;

[2] Հայկական կորպուսը թուրքական զորքի դեմ 1917-1918թթ. էջ 127-144:

Մայիսի 15-ին թուրքական զորքերը ներխուժեցին Ալեքսանդրապոլ՝ ոչնչացնելով խաղաղ բնակչությանը; Ալեքսանդրապոլի գրավումից հետո թուրքական հրամանատարությունը իր բանակի մի մասն ուղարկեց դեպի Ղարաքիլիսա, մյուս մասը Յակուբ Շավկի փաշայի գլխավորությամբ շարժվեց դեպի Սարդարապատ՝ նպատակ ունենալով տիրել Երևանին և ողջ Արարատյան դաշտին; Դեպի Երևան շարժվող թուրքական բանակը կազմված էր հիանալի զինված 36-րդ դիվիզիայից, որտեղ գործում էին հեծելազորային գունդը, հրանոթային գումարտակը, քրդական ջոկատներն ու տեղական անկանոն մահմեդական բնակչությունը; Նրանց դեմ կանգնած էին թուրքական ճակատում արնաքամ եղած մի քանի գունդ, աշխարհազորն ու կանանց ու փախստականների խմբերը; Հայ ժողովրդի վիճակն օրհասական էր; Թվում էր, թե հայ ժողովրդին ոչնչացումից կարող է փրկել միայն հրաշքը; Հայկական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյանը անօգուտ էր համարում հետագա դիմադրությունը; Երևաշում սարսափելի խուճապ էր բռնվել, բնակչությունը պատրաստվում էր փախչելու, սակայն փախուստն հավասար էր մահվան; Այլևս փախուստի տեղ ու ճանապարհ չկար, Երևանի անկումը հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացումն էր նշանակում; Կամ մահ, կամ ազատություն, այլ ելք չկար; Գտնվեցին մարդիկ, որոնք հավատում էին հրաշքին; ՀՅԴ-ն ղեկավարներից Ազգային Խորհրդի ղեկավար Արամ Մանուկյանը կազմակերպեց ինքնապաշտպանությունը, վերջ տվեց տիրող խուճապին, մարդկանց ներշնչեց հաղթանակի նկատմամբ հավատը, որին ինքն էր հավատում; Մանուկյանի և նրա համախոհների կոչին արձագանքեց ողջ ազգը, հաշված օրերի ընթացում կազմավորվեց ազգային բանակ, ժողովուրդն սկսեց հավատալ հաղթանակին, որն իրեն սպասել չտվեց; Հայ հոգևորականները Աստծո անունով հայրենիքը պաշտպանելու կոչ էին անում; Եպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը մշտապես զինվորների հետ էր և ոգեշնչում էր նրանց; Կրկնվում էին Ավարայրի ճակատամարտի օրերը;

Սարդարապատի ուղղությամբ հայկական զորքի հրամանատարությունը դրվեց Սիլիկյանի վրա, որի տրամադրության տակ էին Երկրորդ հրաձգային դիվիզիան ոչ լրիվ կազմով, Երրորդ հետևակային բրիգադը և Երկրորդ

հեծելազորային բրիգադի առաջին գունդը; Սարդարապատի ջոկատի գլուխ կանգնեց Առաջին Հայկական հրաձգային դիվիզիայի հրամանատար Մովսես Սիլիկյանի տեղակալ Դանիելբեկ Փիրումյանը, որի զորքը իր վրա էր վերցնում հարձակման հիմնական հարվածը, իսկ Վեցերորդ հրաձգային, Երկրորդ հեծելազորային և պարտիզանական ջոկատները պետք է փակեին թուրքական իններորդ դիվիզիայի ճանապարհը, որը պլանավորել էր հարվածել Երևանին Բաշ-Ապարանից, որտեղ թուրքական զորքին դիմագրավում էր Դրոյի ջոկատը; Ազգային խորհրդի ղեկավար Արամ Մանուկյանը անձնվեր պայքարի կոչով դիմեց ժողովրդին՝ «Մենք պետք է պայքարենք մինչև վերջ և հաղթենք»;

Մայիսի 21-ին հարձակվող թուրքական զորքերը գրավեցին Սարդարապատ կայարանը, համանուն և Գեչրլու գյուղերը; Նրանց դիմագրավեց հաղթանակի վճռականությամբ զինված հայոց ազգային բանակը; Սիլիկյանի զորքի թիվն հասնում էր 10000-ի; Թուրքերը փորձում էին գտնել հայերի պաշտպանության թույլ տեղերը՝ նույնիսկ չկասկածելով, որ հայերը կարող են և ի վիճակի են հակահարձակվել; Մայիսի 22-ին 5-րդ հայկական հրաձգային գունդը Պողոս Բեկ-Փիրումյանի հրամանատարությամբ, պարտիզանական հետևակային գունդը, Իգդիրի հետևակային և հատուկ հեծելազորային գնդերը Քյորփալու(ներկայումս Արմավիրի մարզի Արշալույս գյուղը) և Ղուրդուղուլի(Արմավիրի մարզի Արմավիր գյուղը) գյուղերի կողմից սկսեցին հակահարձակումը , կոտրեցին թուրքերի դիմադրությունն ու փախուստի մատնեցին; Առաջին հաղթանակը ոգևորեց հայ մարտիկներին, իսկ հաջորդ օրերի փոքր հաջողությունները դարձան վճռական ճակատամարտի հիմքը, որը պետք է տեղի ունենար մայիսի 26-ին, Ավարայրի ճակատամարտի օրը;

Թուրքերը հետ շպրտվեցին մոտ 15-20 կմ, սակայն օգտվելով նրանից, որ հայերը չշարունակեցին հետապնդումը, նրանք վերակազմավորեցին իրենց ուժերն ու ամրացան Արաքս կայարանից հարավ-արևմուտք ընկած բարձունքներում; Այս ընթացքում հայկական հրամանատարությունը իր ուժերի գրեթե կեսն ուղարկել էր դեպի հյուսիս՝ Ապարանի ճակատի հրամանատար Դրոյին օգնության, որը մայիսի 23-28-ը կարողացավ դիմանալ թուրքական 9-րդ դիվիզիայի ճնշմանը և հետ

շպրտել նրան, ապահովեց հայկական զորքերի Սարդարապատի խմբավորման անվտանգությունն ու փրկեց Երևանը թշնամու ներխուժումից; Պողոսբեկ Փիրումյանը որոշեց աջ թևում կենտրոնացնել հրետանին և հասցնել հիմնական հարվածը կանոնավոր գնդերի միջոցով, դրանով խախտելով նաև թուրքական ձախ թևը և սեղմել նրանց Արաքսին՝ զրկելով նրանց մանևրելու հնարավորությունից; Կենտրոնական մասում սվիններով պետք է պայքարեին աշխարհազորային գնդերը;

Այդ նույն ժամանակ, երբ հյուսիսից փորձում էր Արարատյան դաշտ ներխուժել թուրքական 9-րդ դիվիզիան Էսադ փաշայի գլխավորությամբ, թուրքական հրամանատարությունը որոշում ընդունեց նաև հարավից օգնություն ուղարկել Յակուբ Շեվկեին, որը Սարդարապատի նախնական մարտերում կորցրել էր մոտ 3500 զինվոր; Սակայն հայերը հետ մղեցին նաև հարավից շարժվող 5-րդ դիվիզիան; Այստեղ հատկապես փայլեց Արաքսի ձախ ափին դիրքավորված Զեյթունի հայ կամավորական գունդը, որը, չնայած արկերի տարափին, թույլ չտվեց, որ 5-րդ դիվիզիան Արաքսի աջ ափից անցնի ձախ ափը; Այս ընթացքում հայկական հրամանատարությունը ստեղծում է հարվածող գունդը Հասան-Փաշայանի գլխավորությամբ, որի կազմում ընդգրկվեցին Մակուի, Մուշի, Խնուսի գնդերի մնացորդները; Այս խմբավորումը շրջանցեց թուրքերին և հարվածեց թիկունքից, միաժամանակ հիմնական հայկական ուժերը լայնաճակատ հարձակում սկսեցին; Թուրքերն համառ դիմադրություն էին ցույց տալիս, տեղ-տեղ հակահարձակման էին անցնում; Ամբողջ օրը թնդում էին հրանոթները, որոնց ձայնը լսվում էր Երևանում, որտեղ մնացած հայությունը ևս աշխատում էր ռազմաճակատի համար; Էշերով, սայլերով և նույնիսկ ուսերի վրա ճակատ էին տարվում զինամթերք, սնունդ, ծխախոտ; Պայքարում էր ողջ ազգը;

Թուրքական 36-րդ դիվիզիայի ձախ թևը տեղի տվեց Հասան-Փաշայանի խմբավորման հարվածից; Յակուբ փաշայի զորքերը այս իրավիճակում չկարողացան դիմանալ Ղարաբաղյան 5-րդ գնդի ճնշմանը և մեծ կորուստներ կրելով նահանջեցին դեպի Ալեքսանդրապոլ; Կորցնելով իր զորքի գրեթե կեսը՝ Վահիբ փաշան կարողացավ իր զորքի մնացորդներն հավաքել միայն Կարսի տակ;

Մարտի դաշտում մնաց թուրքական ողջ հրետանին, գնդացիրներն ու գումակը, տասնյակ հազարավոր հրացաններ ու փամփուշտներ;Հետագայում Վահիբ փաշան հարցնում է մի հայ սպայի, թե ինչու հայերն իրեն չհետապնդեցին մինչև Կարս, չէ որ կարող էին ազատագրել նաև Կարսը; Նա չէր էլ կասկածում, թե ինչ ուժերով հայերը տարան այդ հաղթանակը, որքն սակավաթիվ էր հայ հեծելազորը;

Սարդարապատի ճակատամարտի պլանը՝

Սարդարապատի հաղթանակը նշանակում էր հայոց պետականության վերականգնում, մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը; Սարդարապատը ստիպեց հայերին հավատալ սեփական ուժերին, բարձրացրեց մեր բարոյական ոգին՝ մի անգամ ևս ապացուցելով հայտնի ճշմարտությունը, որ անպարտելի է այն ազգը, որը պայքարում է իր պատվի և ազատության համար;

Ղարաքիլիսայի և Բաշ Ապարանի ճակատամարտերը: Թուրքական երեք զորամիավորումների ռազմական խնդիրները անմիջականորեն կապվում էին Բաշ-Ապարանի (Ապարան) ու Մեծ Ղարաքիլիսայի (Վանաձոր) հետ:

Ալեքսանդրապոլը մայիսի 15-ին թողնվելուց հետո հայկական կորպուսի հրամանատար Թ. Նազարբեկյանը մայիսի 16-ին հաղորդում է Ջալալօղլի (Ստեփանավան)՝ Անդրանիկին. «Հրամայում եմ ձեր զորամասով դիրքեր գրավել Վորոնցովկայի մոտ՝ պաշտպանելով Լոռիի տափաստանը և որքան հնարավոր է կտրելով թուրքերի առաջխաղացումը: Ախալքալաքի և Ջալալօղլու հետ պահեցեք հարաբերությունը»[3]: Հենց Վորոնցովկայի մոտ էսադ փաշան հանդիպեց տեղի բնակչության առաջին լուրջ հակահարվածին, որտեղ արդյունավետ էին Անդրանիկի գործողությունները: Նրա հետ էին արևմտահայ կամավորական շարժման գործիչներ Սմբատը, Փիլոսը, ճեպեճի Սարգիսը: Կարո Սասունին գրում է. «Անդրանիկը մոտ 2000 զինվորով Ջալալ- օղլի էր և կդիմադրեր Ախալքալաքեն առաջացող Վեհիբ փաշայի ուժերուն»[4]: Ե. Տոկարժևսկու վկայությամբ հայերի մեջ այստեղ կռվում էին նաև կանայք:

Կոտրելով հայերի դիմադրությունը՝ թուրքերը շարժվում են դեպի Ղարաքիլիսա: Սակայն, հասնելով Համամլու, էսադ փաշան փոխում է (դեպի Ղարաքիլիսա) իր 36-րդ դիվիզիայի առաջխաղացման ուղին և Երևան տանող խճուղով շարժվում է դեպի Բաշ-Ապարան: էսադ փաշայի նպատակն էր Ապարանի վրայով դուրս գալ Աշտարակ—Եղվարդ—Կոտայք գիծը և Քանաքեռի գրավմամբ փակել օղակը, զինաթափել հայկական զորքը Երևանում: Թուրքերը Համամլուից անարգել առաջ են շարժվում և մայիսի 22-ին մտնում են Բաշ-Ապարան: Զինված հայ երիտասարդությունը կուտակվում է Բյուլուջա գյուղում, որտեղ նույն օրը Ջհանգիր աղայի եզդիների աշխարհազորի հետ դիմադրում են թուրքերին: Սարդարապատի թեժ ճակատամարտի ժամանակ, մայիսի 23-ին, թուրքական 36-րդ դիվիզիայի ողջ մարտական կազմը ուղղվեց Բաշ-Ապարանի վրա: Թուրքական զորքերի այդ մտադրությունը խափանելու Նպատակով Սարդարապատի ճակատից շտապ կերպով ուժեր տեղափոխվեցին Բաշ-Ապարանի

---

[3] Հայկական կորպուսը թուրքական զորքի դեմ 1917-1918թթ., էջ 127-144:

[6] Սասունի Կ., Թուրքահայստաը Ա. Աշխարհամարտի ընթացքին (1914-1918): Բեյրութ, 1966, էջ 205:

ճակատ[5]: Գեներալ Սիլիկյանը, որը հետախուզության միջոցով արդեն տեղեկացել էր թուրքական այդ զորախմբի ռազմարշավի մասին, առանձնացրեց գնդապետ Դոլուխանյանի 6-րդ հրաձգային գունդը, գնդապետ Զալինյանի Պարտիզանական 2-րդ հեծյալ գունդը (100-120 ձիավոր), գնդապետ Սիլինի սահմանապահ գումարտակը:

Շուտով Երևանից հասնում են մի քանի տասնյակ ապարանցիներ Արսեն Տեր-Պողոսյանի ղեկավարությամբ, դիմադրություն ցույց տվողներին միանում են Մ. Հովհաննիսյանի և Ս. Ջալալյանի, բուլանխցի Մուրադի և բաշգյառնեցի Մակեդոնի խմբերը, ինչպես նաև Սակելյարիի հրետանային մարտկոցը: Այս բոլոր ուժերը (6000 մարդ) Մ. Սիլիկյանը ընդգրկում է Երևանի զորաբաժնի 2-րդ խմբում, որը մայիսի 23-ից ղեկավարում էր Դրոն (Դրաստամատ Կանայան): Վերջինս ըստ Սիլիկյանի պլանի երկու գումարտակով, հեծյալ պարտիզանական գնդով Աշտարակ— Բաշ-Ապարան խճուղու վրա պետք է գրոհեր թուրքերի վրա և նրանց հետ շպրտեր դեպի արևմուտք:

Մայիսի 24-ին Դրոն հասնում է Ալի- Քուչակ (Քուչակ), երբ 3-րդ թուրքական դիվիզիան շարժվում էր Բաշ-Ապարան— Աշտարակ գծով: Արդեն մայիսի 25-ին Դրոն գրոհում է Բաշ-Ապարանի հյուսիսային շրջանում: Հեծելազորի գրոհի հետեվանքով Ղոնդաղսազ գյուղի մոտ կոտորվում են 30 ասկյարներ ու մի սպա: Սիլիկյանը դեպքերն այսպես է նկարագրում. «Թուրքերի հետ առաջին հանդիպական մարտը Դրոն ունեցավ Բաշ-Ապարանի մոտ: Չդիմանալով թուրքերի ճնշմանը' նրա ջոկատը հապճեպորեն հետ նահանջեց դեպի հարավ և թաքնվեց Ղազնաֆարի կիրճում, որտեղ սկսեց կարգի բերել իրեն և սպասել օժանդակ ուժերի ժամանմանը»[6]: Զուգահեռ ներկայացնենք նաև Հայկական կորպուսի շտաբի պետ գեներալ Վիշինսկու. հեռագիրը Թիֆլիս. «Մայիսի 26-ի վաղ առավոտյան թշնամին գերազանց ուժերով հարձակման դիմեց Բաշ-Ապարանի զորամասի դեմ և ձախ թևի կողմից մեր թիկունքն էր անցնում: Քանի որ օժանդակ ուժերը դեռ չէին հասել, ուստի մեր զորամասը հետ նահանջեց Ղսպնաֆար (Ապարանի շրջանի Արագած) գյուղի շրջակայքը, որտեղ միացավ օգնության եկած գնդապետ Դոլուխանյանի ջոկատին: Նահանջի ժամանակ մենք թողեցինք մի թնդանոթ»: Ղազնաֆարի կիրճի դեպքերը բեկումնային դարձան այս ճակատամարտում:

---

[5] Տես Ե.Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918, Ե., 1964, էջ 448:

[6]Տես Թուրշյան Հ.. Մայիսյան հերոսամարտ Ե. 1969, էջ 159

«Ես օժանդակ ուժեր նշանակեցի,— Նազարբեկյանին հղած իր նամակներից մեկում գրում է երկրորդ հեծյալ գունդը և կարծեմ 4 հրանոթ: Հիշյալ օգնական ուժերը հասնում են, ջոկատը մայիսի 27-ին հարձակման է անցնում Բաշ-Ապարանից հարավ, և, ինչպես զեկուցեց Դրոն, նրա դեմ կանգնած էին թուրքերի գերակշիռ ուժեր»:

Արագածի բարձունքները թուրքերի կողմից գրավված լինելու պատճառով հայկական զորագնդերը զրկվել էին Արագածի ուղղությամբ հարձակվելու, թեվերում տեղաշարժվելու հնարավորությունից: ՈՒստի Դրոն որոշում է հիմնական ուժերը կենտրոնացնել Բաշ-Ապարանի ճակատի կենտրոնում և անսպասելի գրոհով ճեղքել թուրքական զորքերի պաշտպանությունը՝ նրանց զրկելով թևերում ձեռք բերած առավելություններից: «Ալագյոզում,—պատմում է Դրոն—ունեի մի բատալիոն, թողեցի երկու վաշտ: Է՛ն երկու վաշտն էլ իջացրի: Ռեզերվվնի բատալիոնից էլ երկու վաշտ ուղարկեցի կենտրոն: Ուրեմն կենտրոնում ունեմ վեց վաշտ»: Նա Սակելյարիի մարտկոցը, Կորոլկովի ու Ջհանգիր աղայի հեծելազորը առաջին գծից դուրս է բերում թիկունք[7]:

Մայիսի 28-ի առավոտյան Դրոն հարձակման հրաման է տալիս: Թուրքերն ի-րենց գլխավոր ուժերը անառիկ բարձունքներից տեղափոխում են ճակատի կենտրոն, որտեղ Դրոն աննկատ կենտրոնացրել էր իր զորաջոկատի մեծ մասը: Վերհիշելով՝ Դրոն գրում է. «Էստեղ էր, որ Կորոլկովն իր պատմական դերն արեց:

Մարտերը Բաշ-Ապարանում շարունակվեցին մինչև մայիսի 29-ը: Թուրքերը ջարդվեցին ու հեռացան արևմուտք, Թափանագետի բարձունքները, դեպի Դյուգքյանդ գյուղը: Մ. Սիլիկյանի վկայությամբ կռվի դաշտում թշնամին թողեց 200 սպանված և բավական գենք ու զինամթերք:

Թուրք-հայկական պատերազմի վճռական տեղամասերից էր նաև Ղարաքիլիսայի ճակատամարտը:

Ալեքսանդրապոլի անկումից հետո Ղարաքիլիսայի ուղղությամբ շարժվող թուրք, զորամասը մայիսի 20-ին գրավել է Ջաջուռը, Աղբուլաղը, Ղալթաղչին մայիսի 21-ին՝ Վորոնցովկան: Մայիսի 22-ին Հայկական կորպուսի հրամանատար գեներալ Թովմաս Նազարբեկյանը և բարձրագույն հրամանատարությունը տեղափոխվել են Դիլիջան:

[7]Տես Թուրշյան Հ.. Մայիսյան հերոսամարտ Ե. 1969, էջ 162

Ջալալօղլիի մոտ մայիսի 21-22-ի մարտերից հետո Անդրանիկի ջոկատը կենտրոնացել է Դսեղ գյուղում և հետագա գործողություններին չի մասնակցել: Գեներալ Նազարբեկյանի հրամանով կորպուսի առաջին դիվիզիան (հրամանատար՝ գնդապետ Աթաբեկ Բեյ-Մամիկոնյան) և 2 լեռնային մարտկոցներ փոխադրվել են Շահալի, մնացածները կենտրոնացել են Դիլիջանի մոտ: Հայկական զորքն ունեցել է 6 հազար զինվոր, 10 հրանոթ և մոտ 20 գնդացիր, թուրքական զորքը (հրամանատար՝ Ջավադ բեյ)՝ 10 հազար զինվոր, 70 հրանոթ և 40 գնդացիր: Ճակատամարտին մասնակցել է նաև Գարեգին Նժդեհը՝ իր հեծյալ գնդո[8]վ:

Հայկական ուժերը հիմնական հարվածները թուրքերի գերակշիռ ուժերին հասցրել են Ղշլաղ գյուղի մոտ, Բզովդալի մատույցներում և Մայմեխ լեռան լանջերին: Մարտերում աչքի են ընկել գնդապետ Նիկոլայ Ղորղանյանի զորամասը, հերոսաբար զոհված շտաբի-կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանի հրետանավորները և ուրիշներ:

Հայերը կրել են զգալի կորուստներ: Մեծ էին նաև թուրքերի կորուստները, սակայն համալրում ստանալով՝ նրանք անցել են հակահարձակման և մայիսի 30-ին ներխուժել Ղարաքիլիսա: Հայկական ուժերը հարկադրված նահանջել են Դիլիջան: Ղարաքիլիսայում և շրջակա գյուղերում թուրք ջարդարարները կոտորել են հայ բնակչությանը (շուրջ 5 հազար մարդ), ավերել բնակավայրերը:

Ղարաքիլիսայի ճակատամարտում մեծ կորուստներ պատճառելով թշնամուն՝ կասեցվել է նրա գերակշիռ զորքի առաջխաղացումը դեպի Դիլիջան և Թիֆլիս:

[8]Տես Թուրշյան Հ.. Մայիսյան հերոսամարտ Ե. 1969, էջ 159

2. Հոգևորականները Մայիսյան հերոսամարտերում

1918 թ. Մայիսյան հերոսամարտերի այդ ծանր օրերին, Մայր Աթոռ ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց կաթողիկոսն ու միաբանությունը, հավատարիմ մնալով հայ եկեղեցու հայրենասիրական դարավոր ոգուն, միասնական ու աննահանջ դուրս եկան համընդհանուր թշնամու դեմ՝ հանուն հայրենյաց և ազգի հարատևման:

Հայոց կաթողիկոս Գևորգ Ե մինչ այդ ոչ մի բանով առանձնապես աչքի չէր ընկել, իր գործերով աչքի ընկնող դեր չէր խաղացել և չէր կարողացել նվաճել ժողովրդի համակրանքը: Նա սիրված չէր անգամ իր միաբանության քիչ թե շատ առաջադեմ մարդկանց կողմից:

Սակայն հետագայում էլ, մինչև 1918 թ. նոյեմբեր ամիսը, երբ թուրքական յաթաղանի վտանգը շարունակում էր կախված մնալ Էջմիածնի ու Երևանի վրա, ոչ ոք իրեն այնպես անհողդողդ չպահեց, ինչպես Գևորգ Ե կաթողիկոսը: Նա ամուր կանգնած մնաց երկրի ինքնապաշտպանության դիրքերում: Կաթողիկոսն այն եզակի անհատներից էր, որ դժնդակ այդ օրերին կարողանում էր արհամարհական վերաբերմունք ցույց տալ ավստրո-հունգարական, գերմանական և թուրքական բարձ-րաստիճան պաշտոնյաներին:

1918 թ. մայիսի 21-ին Արամ Մանուկյանը, Երևանի պարետ Արշո Շահխաթունին և Պողոս Բեկ-Փիրումյանը Երևանից ժամանում են Էջմիածին, հանդիպում կաթողիկոսին և նրան կրկին անգամ առաջարկում տեղափոխվել նախ Երևան, ապա Սևան: Սակայն հաստատակամ կաթողիկոսը սառն անտարբերությամբ կտրուկ մերժում է նրանց խորհուրդը: «Եթե հայ զորքն ու ժողովուրդը,- պատասխանում է նա Երևանի հրավի-րակներին,- ի վիճակի չեն պաշտպանելու այս սուրբ վայրերը, ապա ես ինքս մենակ սուր կվերցնեմ և կընկնեմ Մայր տաճարի գավթում, բայց չեմ հեռանա մեր պապերի ավանդ մնացած Մայր Աթոռից»[9]:

Ավելին, ժողովրդին ուղղված իր կոչում նա առաջարկում է. «ինչո՞ւ ազգովին չբարձրանանք թշնամու դեմ, որ գալիս է անդրարաքսյան իր թեթև հաջողություններով հղփացած»:

---

[9]Բալյան Ա. Էջմիածնի կաթողիկոսության դերը Մայսիյան հերոսամարտերում, ԵՊՀ, Աստվածաբանության ֆակուլտետ - Տարեգիրք 2017, էջ 166-172

Այնուհետև կաթողիկոսը կարգադրում է ահազանգ տալ Մայր տաճարի զանգակատնից: Միաբանության անդամները, որոնք գալիս ու հավաքվում են նրա շուրջը, դիմում է հետևյալ հայտարարությամբ. «Մեզ խորհուրդ են տալիս լքել Մայր Աթոռը և հեռանալ Սուրբ Էջմիածնից,- ասում է կաթողիկոսը իր միաբաններին: Ես ինքս մնում եմ, ձեզանից ովքեր ցանկանում են գնալ, ազատ են, կարող են գնալ» [10]: Սակայն միաբանության անդամներն ի զարմանս բոլորի, ոչ միայն չեն հեռանում, այլև ավելի սերտ են համախմբվում նրա շուրջը:

Հրավիրակներին ճամփու դնելով Երևան, Գևորգ Ե հանգիստ ու անվրդով քայլերով իջնում է վեհարանից և գիշերային աղջամուղջի մեջ իր քայլերն ուղղում դեպի Մայր տաճար, որտեղ Իջման սուրբ սեղանի առաջ արտասվաթոր աչքերով երկար ու երկար աղոթում է: Ապա տաճարի կամարների տակ երկինք է առաքվում հուզիչ «Տեր ողորմեա»-ն և սկսում են ղողանջել Մայր տաճարի և հայոց բոլոր եկեղեցիների զանգերը: Զանգահարությունը, որ սկիզբ էր առել Մայր տաճարից և արդեն արձագանքում էր Գայանեի և Հռիփսիմեի զանգակատներից, հետագա ութ օրերի (մայիսի 22-29-ը) ընթացքում գիշեր-ցերեկ, անդադար ղողանջում էր Արագածից մինչև Արաքս և Էջմիածնից մինչև Սևան: Այն զարթնեցնում, սթափեցնում է բոլորին, խանդավառում ամենքին համեստ զոհողության, հերոսական անձնազոհության և համազգային պայքարի մղում գաղթական ու արյունաքամ ժողովրդին:

Էջմիածնի միաբանությունը 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում աչքի էր ընկնում ինչպես իր գիտական կարող ուժերով, այնպես էլ հասարակական գործունեության ջիղով օժտված եռանդուն հոգևորականներով:

Կաթողիկոսն իր մոտ է կանչում նոր եպիսկոպոսներ օծված ճեմարանի տեսուչ, հայտնի հայագետ՝ Գարեգին Հովսեփյանին, Գևորգ Չորեքչյանին և Էրզրումի առաջնորդ, ղարաբաղցի՝ Զավեն Մահտեսի Բաբայանին, Աղթամարի և Առաքելոց վանքերի վարդապետներ՝ Եզնիկին և Թադևոսին, ինչպես նաև Գրամփա գյուղի քահանա՝ Տեր Հովհաննես Մկրտչյանին և Տեր-Սահակյանին, օրհնում նրանց և ուղարկում կռվի՝ հորդոր կարդալու հայ զորքին: Վերջիններս 1918 թ. մայիսի 22-ի վաղ առավոտյան, ձի հեծած սլանում են Էջմիածնի մոտակա Հայ Զեյվա և Քյորփալու

[10]Բալյան Ա. Էջմիածնի կաթողիկոսության դերը Մայսիյան հերոսամարտերում, ԵՊՀ, Աստվածաբանության ֆակուլտետ - Տարեգիրք 2017, էջ 166-172

գյուղերը և կանգնեցնում են երկաթգծից հյուսիս ընկած հայկական 5-րդ գնդի վաշտերի նահանջը: Պարթևահասակ Զավեն եպիսկոպոսը, որպես Էրզրումի առաջնորդ, Երզնկայից մինչև Արարատյան դաշտ հաճախ էր եղել ռազմաճակատի առաջին գծերում, իսկ փոքրահասակ, անշուք, վտիտ Գարեգին եպիսկոպոսը, որպես գրքի ու գիտության մարդ, առաջին անգամ էր կռվի դաշտ գնում: Բայց լինելով կրակոտ ճառախոս, նա կարողանում էր հայրենասիրությամբ ոգևորել ունկնդիրներին: Ճեմարանի աշակերտները նրան այդ շնորհքի համար սիրով «Պողոս Առաքյալ» մականունն էին տվել: Այդ օրերին նա ոգեշունչ խոսքով դիմում է իր հայրենակից արցախցի զինվորներին, բացատրում է թշնամու անողորմությունը, վտանգի մեծությունը, օգնական ուժի և նահանջի ուղիների իսպառ բացակայությունը և սրբազան հողի վրա պատվով մեռնելու միակ հնարավորությունը: Նա «մահապարտներ» է անվանում հայ ժողովրդին ու նրա զորքին, 5-րդ գունդը վերանվանում է Մահապարտների գունդ, աղոթքի է չոքեցնում և երդվեցնում կռվի դուրս գալ անվախ ու աննահանջ: Ապա Գարեգին և Զավեն եպիսկոպոսները խաչը ձեռքներին բարձր պահած ընկնում են զորքի առաջ և հրամանատար, գնդապետ՝ Պողոս Բեկ Փիրումյանի հետ միասին նրանց առաջնորդում ճակատամարտի:

Աղթամարի և Առաքելոց վանքերի միաբան վարդապետները ոչ միայն հորդոր կարդալով հետ են դարձնում նահանջողներին և կռվի գնալու կոչ են անում աշխարհազորայիններին, այլ անձնական օրինակ են ցույց տալիս: Երկուսն էլ անվրեպ կրակող քաջ ռազմիկներ էին: Վանի առաջնորդի փոխանորդ Եզնիկ վարդապետը քաջ կռվող և հայտնի նշանաձիգ էր: Վանի ինքնապաշտպանության ժամանակ նա քաղաքամիջի հատվածում հայերի նվաճած մինարեի գլուխը բարձրացած, իր դիպուկ կրակոցներով կարողացել էր «հնձել» թուրք թնդանոթաձիգներին[11]:

Վաղորդյան մթնշաղի մեջ, նրանք հրացանը ձեռքներին մտնում են խուռներամ բազմության մեջ և իրենց հետևելու հորդոր են կարդում «փրկության ուրիշ ճանապարհ չկա, պատանքներդ առնեք ու միասին գնանք ստույգ մահվան» կարգախոսով: Այդ առավոտ նրանք ավելի քան 500 «պատանքավոր» են տանում դեպի Սարդարապատ, որոնք միջնադարյան կրոնական պատկերների մարտիկներին հիշեցնելով, կռվում էին

[11]Բալյան Ա. Էջմիածնի կաթողիկոսության դերը Մայսիյան հերոսամարտերում, ԵՊՀ, Աստվածաբանության ֆակուլտետ - Տարեգիրք 2017, էջ 166-172

Մահապարտների 5-րդ գնդի աջ թևում, թշնամու վրա արձակված ամեն մի գնդակի հետ երգելով այդ ժամանակ տարածված «Անտեր մնար Հասան Ղալեն, մեռնի Էնվեր փաշայի բալեն» երգը:

Սարդարապատի մարտերին իր 250 հոգանոց ջոկատով մասնակցում է նաև Կոտայքի Թազագյուղի քահանա՝ Զաքար Տեր-Հարությունյանը:

1918 թ. մայիսի 23-ին երբ Սարդարապատի առաջին հաղթանակի լուրը խանդավառել էր նաև Դիլիջան ապավինած Ալեքսանդրապոլի հայ զորքին, Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, որը որպես գաղթականությանն օգնող արտակարգ հանձնաժողովի նախագահ գտնվում էր Ղարաքիլիսայի շրջանում, Երևանից նոր ժամանած գեներալ Համազյանի հետ գործի են անցնում Դիլիջանում: Մեսրոպ եպիսկոպոսը վկայակոչելով Սարդարապատի օրինակը և հետևելով Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի օրինակին շունչ ու հոգի է ներշնչում կազմալուծված հայ զորքին:

Բաշ Ապարանի կռիվներին անձնուրաց կռվում էին Հովհաննես քահանա Տեր-Մինասյանի և Ապարանի «Ղևոնդ երեց» Տաճատ քահանայի զինված խմբերը:

3. Հատված Գարեգին Հովսեփյանի ելույթից

«Հայ ժողովուրդն օրհասական կռիվներ շատ է ունեցել եւ միշտ ելք է գտել ու փրկել իրեն: Ելքը եղել է անձնազոհ հերոսությունը… Հետ նայեցեք, մեզ մնացել են Երեւանն ու Էջմիածինը… Եթե հերոսության չդիմենք, ամեն ինչ կորչելու է իսպառ, այլեւս չի լինի ո՞չ հայ, ո՞չ հայի հայրենիք…»:

Ոչ մի արձագանք, ոչ մի փոփոխություն: Սակայն նա չի վարանում եւ շարունակում է.

«Հայրենակիցնե՛ր, եղբայրնե՛ր եւ որդինե՛ր, հին դարերում, երբ հայոց զորքը պատրաստվում էր թշնամու դեմ գնալու, նրա հրամանատարները գալիս էին Էջմիածին՝ կաթողիկոսի մոտ՝ նրա աջը համբուրելու եւ օրհնությունն առնելու, բայց այս անգամ վտանգն այնքան ահավոր է ու մեծ, որ ահա ես եմ Սուրբ Էջմիածնից եկել ձեր բոլորի ձեռքը համբուրելու, որ փրկենք հայրենիքը, փրկենք ձեր պատիվը, հայի պատիվը…»[12]:

Եվ արտասվում է ապագա կաթողիկոսը, արցախցի հայորդին, ում ելույթն, իրոք, շրջադարձային էր:

[12] http://www.magaghat.am/.../%D5%A3%D5%A1%D6%80%D5%A5%D5.../

Եզրակացություններ

Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտերը, Շիրակի և Ջավախքի դիմադրական մարտերը հարստացրին մեր պատմության ռազմական տարեգրությունը նոր սխրանքներով ու անուններով: Այս հերոսամարտերի շնորհիվ բնաջնջումից փրկվեց արևելահայությունը, ինչպես նաև Մեծ Եղեռնից մազապուրծ հարյուր հազարավոր արևմտահայեր: Այդ ճակատամարտերում ձեռք բերած հաջողություններն արդյունք էին հայ ժողովրդի տարբեր հատվածների, խավերի, ռազմական ու քաղաքական մարմինների միջև հաստատված միաբանության:

1918 թ. գարնանը դրված էր ողջ հայության լինել չլինելու հարցը: Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի հաստատակամ ղեկավարությամբ՝ Էջմի- ածնի միաբանության մասնակցությունը այդ դժվարին և աղետալի օրերին հայկական զորքերին խանդավառելու և ժողովրդական ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում, մեծ նախաձեռնություն էր: Սարդարապատի և Բաշ-Ա- պարանի մարտերում իրենց ջոկատներով անձնուրաց կռվում էին քահանա Զա- քար Տեր-Հարությունյանի, Հովհաննես քահանա Տեր- Մինասյանի և Ապարանի «Ղևոնդ Երեց» Տաճատ քահանայի զինված խմբերը: Անգնահատելի էր հայ հոգևորականության խաղացած դերը Մայիսյան հերոսամարտերի ժամանակ:

Այդպիսով՝ Մայիսյան հերոսամարտերի պատմական գլխավոր դասը համազգային միաբանությունն է: Դժվարին և օրհասական պայմաններում Մեծ եղեռնի և պատերազմի պատճառած մարդկային, նյութական և հոգևոր մեծ կորուստներից դեռևս ուշքի չեկած հայությունը կարողացավ ազգովին ինքնակազմակերպվել:Հայ ժողովրդի երկու խոշոր հատվածների քաջարիզավակները, համախմբվելով մեկ զորքի մեջ, կռվեցին իրենց հայրենիքի, հարազատ ժողովրդի գոյության, Հայաստանի ազատության և անկախության համար: Մայիսյան հերոսամարտերով ամբողջական հայրենիքի վերականգնման ճանապարհի սկիզբը դրվեց: Այսպիսով ռազմաքաղաքական գործընթացների բերումով հայ ազգային-քաղաքական ղեկավար ուժերը ստանձնեցին Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատի

պաշտպանության ծանր առաջադրանքը, իսկ նորահոչակ հայկական պետությունը դարձավ աշխարհամարտի մասնակից կողմ:

Մայիսյան հերոսամարտերում հայ ժողովուրդը կարողացավ թշնամուն արժանի հակահարված տալ և վիժեցնել Արևելյան Հայաստանը զավթելու ու տեղի հայությանը ոչնչացնելու երիտթուրքերի ծրագիրը: Դրանք ամբողջ հայ ժողովրդի հավաքական ուժի և ազգային միասնության հաղթանակն էին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բալյան Ա. Էջմիածնի կաթողիկոսության դերը Մայսիյան հերոսամարտերում, ԵՊՀ, Աստվածաբանության ֆակուլտետ - Տարեգիրք 2017,
2. Թուրշյան Հ.. Մայիսյան հերոսամարտ Ե 1969,
3. Հայկական կորպուսը թուրքական զորքի դեմ 1917-1918թթ.
4. Մանուչարյան Հ., Հայ ժողովրդի արտաքին քաղաքական կողմնորոշման հարցը և դաշնակցությունը 1890-1920թթ., Երևան, 1997,
5. Սասունի Կ., Թուրքահայստաը Ա. Աշխարհամարտի ընթացքին (1914-1918): Բեյրութ, 1966
6. Սարգսյան Ե., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918, Ե., 1964
7. http://www.magaghat.am

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթացներ

Նաիրա Աշոտի Մխիթարյան

«Երևանը աշխարհի հնագույն քաղաքներից մեկը»

Հետազոտական աշխատանք

Ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Սամվել Աղաջանյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....Ошибка! Закладка не определена.
Ա. ԵՐԵՎԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ..... 4
Բ. ԵՐԵՎԱՆՆ ՈՐՊԵՍ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ 10
Գ. ԵՐԵՎԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ .....Ошибка! Закладка не определена.
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 17
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 18

Ներածություն

Երևանն Հայաստանի Հանրապերության մայրաքաղաքն է և պատմական Հայաստանի տասներկուերրորդ մայրաքաղաքը, որն աշխարհի հնագույն բնակավայրերից ու շարունակաբար բնակեցվող հին քաղաքներից մեկն է: Երևանն ունի իր << քարե անձնագիրը>>, որը ցուցադրված է Հայաստանի պատմության պետական թանգարանում: Երևանն պատմության զարգացմանն զուգընթաց անցել է տարբեր փորձություններով: Հաղթահարելով շատ դժվարություններ Երևանն պահպանել իր գոյությունը և աստիճանաբար բռնել զարգացման ուղին:

Հնամյա քաղաք և նոր մայրաքաղաք Երևան: Քաղաքաշինության եվրոպական փորձն հանձն առնելով և միաժամանակ պահպանելով ազգային նկարագիրը Երևանը սկսեց կառուցապատվել: Մայրաքաղաքը սկսեց արագորեն ընդարձակվել՝ գավառական քաղաքից վերածվելով մշակույթային, քաղաքական և արդյունաբերական կենտրոնի:

Դաժան փորձություն անցած մայրաքաղաքը այժմ վերականգման ճանապարհին է և շարունակում է մնալ կրթության, գիտության, տեխնոլոգիաների, մշակույթի կենտրոն:

Երևանն անընդահատ ենթարկվում է խոշոր փոփոխությունների: Նոր ճանապարհների, հասարակական շենքերի, բնակելի տարածքների կառուցմամբ հնամենի քաղաքը նոր դեմք է ստացել՝ կրկին դառնալով աշխարհով մեկ սփռված հայ ազգի սիրտն ու ոգին:

Դասը սկսում ենք ունկնդրելով Երևանի օրհներգը

Հարց է ուղղվում աշակերտներին

Ինչ գիտեն Երևանի մասին – կկիրառենք մտագրոհ մեթոդ

Ա. Երևանի հիմնադրումը

Երևանը աշխարհի հնագույն քաղաքներից է: Քաղաքի տարածքում կատարված պեղումների շնորհիվ պարզ է դառնում, որ մարդն այստեղ ապրել է տասնյակ հազարավոր տարիներ առաջ: Տարբեր ժամանակաշրջաններում առաջացել և կործանվել են բազմաթիվ բնակավայրեր: Քաղաքի տարածքի հնագույն բնակավայրը Երևանյան կամ Հրազդանյան քարայրն է, որի հնագույն, ստորին շերտը թվագրվում է մուստերյան շրջանով 10-3,5 հազարամյակ առաջ: Հայտնի հին բնակավայր է Շենգավիթը, որտեղ մարդիկ բնակություն են հաստատել 5-6 հազար տարի առաջ:

Հայ մատենագիրները Երևանի անվան ծագումը հիմնականում կապել են Նոյան տապանի աստվածաշնչյան պատմության հետ: Նոյի տապանը կանգ է առել Արարատի գագաթին: Ջրհեղեղից հետո Նոյը տեսնելով առաջին ցամաքը, որն ապագա Երևանի կառուցման վայրն էր, գոչել է՝ երևաց՛

այստեղից էլ Երևան անվանումը:

Տարածված է նաև այն տեսակետը, որ <<Երևան>> անունը կապված է Էրեբունի բերդաքաղաքի անվան հետ: Կան նաև այլ տեսակետներ. դրանցից մեկի համաձայն՝ հիմնադրված նոր բնակավայրի անվանակոչման համար Արգիտի Առաջինն կամ օգտագործել է տարածքում եղած ու նրան հայտնի հնագույն այլ բնակավայրի անուն, կամ կոչել է <<արի>> կամ <<էրի>> ցեղի անունով: Հայկական լեռնաշխարհից ու շրջակա տարածքներից հեռացած հնդեվրոպացիների նախնիները՝ արիական ցեղերը, հիշում են իրենց՝ արի ցեղին պատկանելու փաստը և գրավոր աղբյուրներում նշում են այդ մասին << հնդկական վեդաներ>> , իրանական << Ավեստա>> : Երևանն հայտնի է նաև Այրիվան, Էրիվան, Ռևան և այլ անուններով: Երևանը հիշատակվում է 3-րդ դարի սուդդիական - մանիքեական տեքստում, որտեղ նշվում է, որ քրիստոնեական համայնքի կողքին պարսիկ նկարիչ Մաննի աշակերտներից մեկը Երևանում հիմնել է մանիքեական համայնք:

Վանի թագավորության կործանումից հետո Երևանի հազարամյա պատմության մասին հայ մասենագրական աղբյուրները լռում են:Երևանի մասին կրկին հիշատակվում է 7-րդ դարում՝ << Գիրք թղթոցի>> մեջ: Պատմիչ Սեբեոսը վկայում է, որ արաբական արշավանքների ժամանակ Երևանը վաճառաշահ և այգեշատ քաղաք էր:

Վանի թագավորության քաղաք Էրեբունին հիմնադրվել է Ք. ա 782թ.,

Վանում գտնված սեպագիր տարեգրության համաձայն՝ Վանի թագավոր Արգիշտի Առաջինը իր ղեկավարման 5-րդ տարում կառուցել է Էրեբունի քաղաքը:

1950 թվականին Արին-Բերդի բլրի վրա գտած մի սալաքարի վրա արված գրությունը թույլ է տալիս նույնականացնել Էրեբունի և Երևան քաղաքները:

Սալաքարի վրա գրված է.

Արգիշտին այստեղ է բնակեցնում 6600 հայ զինվորների՝ իրենց ընտանիք-ներով[1]:

[1] Հայոց պատմություն -6-րդ դասարանի դասագիրք

Մեկ դար անց Ռուսա Երկրորդ արքան Հրազդան գետի ափին՝ Երևանի հարավային մասում, հիմնադրում է մի նոր բերդաքաղաք, որը Վանի թագավորության Թեյշեբա աստծու անունով կոչվեց Թեյշեբաինի:

Այն ռազմական նշանավոր կենտրոն էր տերության հյուսիսային հատվածում, ուներ միջնաբերդ, քաղաքային թաղամասեր: Բերդից հարավ տնկվել էին խաղողի այգիներ: Թեյշեբաինին ավերվել է սկյութների կողմից Վանի թագավորության կործանման տարիներին՝ Ք.ա 585 թ.:

Կատարել տրամագիր

Երևանն համեմատել Հռոմի հետ

Գտնել բնորոշ նմանություններ և տարբերություններ

Երևանի կարևորություն մեծացել է 1437-1467թթ., երբ դարձել է Արար-

ատյան աշխարհի մեծագույն մասն ընդգրկող կուսակալության կենտրոնը և հաճախ հիշատակվում որպես << Արարատյան երկրի մայրաքաղաք>>: Կարակոյունլու ցեղապետ Ջհանշահը ստեղծել է Երևան կենտրոնով կուսակալություն և կուսակալ է նշանակել Յաղուբ բեկին:

1502թ. Իրանի Սեֆյան հարստության հիմնադիր Նադիր շահը, ի թիվս Հայաստանի արևելյան երկրամասերի, ակկոյունլուներից խլել է նաև Երևանը և հանձնել Ռևան խանին: 1555թ. Ամասիայի պայմանագրով՝ Հայաստանը բաժանվել է Թուրքիայի և Իրանի միջև: Երևանի խանությունը անցել է Իրանին: Շուրջ երեք դար Երևանը ձեռքից ձեռք է անցել: 1639թ. Կասրե-Շիրինի հաշտությամբ հաստատվել է 60-ամյա խաղաղություն: Երևանն դարձել Սեֆյան կայսրության Չուխուր Սաադի բեգլարբեգության կենտրոնը, որը կառավարել է սարդարը, 1747թ. խանը:

1724թ. Երևանի և շրջակա գյուղերի բնակիչները շուրջ երկու ամիս դիմա-գրավել են թուրքերին: Երևանի պատմության այս էջը ներկայացրել է պատմիչ Աբրահամ Երևանցին, որը մանրամասն նկարագրելով ճակատա-մարտը, հիշատակում է, որ 20.000 զոհ տալով թուրքերին հաջողվում է գրավել բերդը[2]: 1735թ. Իրանի Նադիր շահը, թուրքերի հետ նախապես պայմանավորվելով դադարեցնում է Կարսի բերդի պաշարումը, փոխարենը առանց կռվի գրավում Երևանը:

18-րդ դարի 1-ին քառորդին Իսրայել Օրին և ազատագրական շարժման մյուս գործիչները հայ ժողովրդի ազատագրական գործում կարևոր դեր են հատկացրել Երևանին: 18-րդ դարի 2-րդ կեսին Երևանի խանությունը հարկատու էր Վրաստանի Հերակլ 2-րդ թագավորին, որից ժամանակ առ

[2] Հայ ժողովրդի պատմություն-հատոր 7

ժամանակ հրաժարվելու պատճառով պատժիչ արշավանքներ է կատարել:
19-րդ դարում Երևանում զարգացել է արհեստագործությունը: Արհեստավորները ընդգրկված էին համքարություններում:
1826թ. սկսած ռուս-պարսկական պատերազմի ժամանակ ձեռնարկվել է երրորդ արշավանքը Երևան՝ Իվան Պասկևիչի գլխավորությամբ: 1827թ. հոկտեմբերի 1-ին գեներալ Կրասովսկու զորքերը հայ կամավորների աջակցությամբ գրավել են քաղաքը: 1828թ. փետրվարի 10-ին կնքված պայմանագրով՝ Երևանի և Նախիջևանի խանությունները անցել են Ռուսաստանին: Երևանը դարձել Հայկական մարզի կենտրոն: 1840թ. Հայկական մարզի վերացմամբ Երևանի գավառը ներառվել է Վրացա-Իմերեթական նահանգի մեջ՝ վերածվելով գավառական քաղաքի: 1849թ. կազմվել է Երևանի նահանգը՝ Երևան կենտրոնով: 1874թ. վարչական նոր փոփոխության հետևանքով նահանգը բաժանվել է գավառների, որոնցից մեկը Երևանի գավառն էր: 1870թ. Երևանում ստեղծվել է քաղաքային դուման: Առաջին քաղաքապետ է ընտրվել Հովհաննես Ղորղանյանը:
1915թ. Մեծ Եղեռնից հետո հայ գաղթականները ապաստանել են Երևանում:
1918թ. գարնանը Ալեքսանդրապոլը գրավելուց հետո թուրքերը շարժվել են դեպի Երևան: Արամ Մանուկյանի գլխավորությամբ հայ բնակչությունը մասնակցել է քաղաքի պաշտպանությանը:
1918թ. մայիսի 22-28-ին հայկական զորքերի հետ Սարդարապատի մոտ պարտության են մատնել թուրքական բանակին, որը նահանջել է՝ չկարողանալով գրավել Երևանը:
1918 թվականի հուլիսին Երևան է գալիս նույն թվականի մայիսի 28-ին Թիֆլիսում հռչակված Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Բ. Երևանն որպես մայրաքաղաք

Այսօր Երևանի լայն փողոցներով քայլելիս դժվար է պատկերացնել հին Երևանն իր նեղլիկ փողոցներով, հինավուրց շենքերով, որոնցից գրեթե ոչինչ չի պահպանվել:

Երևանն դարերի ընթացքում մեծ դեր է կատարել Հայաստանի տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում: Դարերի ընթացքում քաղաքը մնացել է կանգուն՝ անցնելով բազում արհավիրքների և փորձությունների միջով: Զուգահեռաբար ստեղծվել է քաղաքակրթություն՝ արժեքավոր մշակույթով ու գիտությամբ:

1918 թվականի մայիսի 28-ին Երևանը հռչակվեց Հայաստանի Հանրապետության, իսկ 1920 թվականի նոյեմբերի 29-ին՝ Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք:

Երևանը Խորհրդային Միության առաջին քաղաքն էր, որ ունեցավ գլխավոր հատակագիծ: Ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի հեղինակած հատակագիծը հաստատվեց 1924 թվականին նախատեսված 150.000 բնակչության համար: Ժամանակի ընթացքում քաղաքի վարչական տարածքը մեծացավ հինգ անգամ: Սկսվեց կառուցապատումը: Երևանն կառուցապատվում էր բազալտով, գրանիտով, մարմարով: Ամենատարածված շինանյութը վարդագույն տուֆն էր: Քանի որ այդ շինանյութը ինքնապիպ գունագեղություն ու առանձնահատուկ երանգ էր տալիս քաղաքին, այն սկսեցին անվանել <<Վարդագույն քաղաք>>: Հետագա 70 տարում մայրաքաղաքի տարածքը

ավելի ընդարձակվեց :

1991 թվականի սեպտեմբերի 21-ին Երևանն ոչ միայն դարձավ անկախ ՀՀ, այլև աշխարհասփյուռ հայության մայրաքաղաք:

Ընթերցել աֆորիզմներ Երևանի մասին

Ես աշխարհի շատ քաղաքներում եմ եղել, բայց չգիտեմ մի ուրիշ քաղաք, որն աճեր այսքան արագորեն, լիներ այսքան գեղեցիկ, ինչպես Երևանը:

Վիլյամ Սարոյան

Երևանն հայ ժողովրդի եռանդի ու արիության իսկական դրսևորման քաղաքն է: Ես իմ կյանքում չեմ տեսել ոչ մի այնպիսի քաղաք, որը նման լիներ Երևանին, ուր բնակչությունը պատմական այդքան կարճ ժամանակահատվածում այդքան արագ աճեր:

Ժան Պոլ

Ինձ վրա հսկայական տպավորություն թողեցին հանրապետության մայրաքաղաքի ճարտարապետական համալիրները: Ինձ թվում է, որ կգա ժամանակ, երբ Երևանը կդառնա աշխարհի ամենագեղեցիկ քաղաքներից մեկը:

Պաբլո Ներուդա

Ժամանակակից, բայց մշակույթային ինքնությունը պահպանած Հայաստանի վարդագույն մայրաքաղաքին դժվար է չսիրահարվել:

Երևան՝ աշխարհի հնագույն քաղաքներից մեկը, որը ժամանակի ընթացքում բազմաթիվ փոփոխությունների ենթարկվելով՝ պահպանել է անցյալի հետքերը: Հայաստանի մայրաքաղաքը 2082 տարեկան է: Լինելով Հայաստանի ամենամեծ ու միջանկյալ դիրք ունեցող քաղաքը՝ Երևանում ամփոփվում է Հայաստանի բոլոր մարզերի կենսակերպն ու վարք ու բարքը:

Երևան քաղաքն անվանում են վարդագույն, քանի որ շինությունների մեծամասնությունը կառուցված են վարդագույն տուֆից: Քաղաքը գտնվում է Հայաստանի արևմուտքում՝ Հրազդան գետի երկու ափերին: Այստեղ բնակվում են մոտ 1մլն մարդ, որի 98 տոկոսը հայեր են: Հայաստանում մայրենի լեզուն հայերենն է, սակայն Երևանում բնակչության մեծ մասը նաև խոսում են ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Երևանը բոլոր հայերի պատմամշակույթային կենտրոնն է: Երևանում են գտնվում երկրի համալսարանների մեծ մասը, որով պայմանավորված երիտասարդությունը կենտրոնացված է հենց մայրաքաղաքում: Այս հանգամանքը նպաստում է նաև նրան, որ Երևան քաղաքը կրում է բոլոր մարզերից մասնիկներ, քանի որ Հայաստանի գրեթե բոլոր քաղաքներից երիտասարդները

գալիս են այստեղ կրթություն ստանալու՝ բերելով իրենց կոլորիտն ու մարզային առանձնահատկությունները:

Քանի որ հայերի մեծ մասը քրիստոնյա են, Երևանում կան հին ու նոր եկեղեցիներ, որոնցից ամենամեծը սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է: Հայտնի եկեղեցիների թվին է պատկանում սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, որը գտնվում է Կոնդ թաղամասում: Հատկանշական է, որ Կոնդը գտնվելով Երևան քաղաքի կենտրոնին շատ մոտ, կարծես առանձնացված լինի քաղաքից: Այն մայրաքաղաքի ամենահին թաղամասերից է ու կենտրոնական Երևանից շատ է տարբերվում, քանի որ այստեղ վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ չեն կատարվել ու հինը պահպանվել է ամբողջությամբ:

1981 թվականից Երևանում գործում է մետրոպոլիտենը, որն ունի 1 գիծ 10 կայարան:

Երևան քաղաքի կենտրոնում է գտնվում հանրապետության հրապարակը, որտեղ երեկոյան մարդիկ զբոսնում են և հիանում երգող շատրվաններով: Այստեղ են գտնվում նաև Հայաստանի ազգային պատկերասրահը, կառավարության և նախարարությունների շենքերը: Ամենագեղեցիկ կենտրոնական փողոցներից են Աբովյանը, Թումանյանը, Սարյանը, Պրոսպեկտը և Բաղրամյանը: Մայրաքաղաքի կենտրոնական փողոցներն առանձնանում են իրենց հարմարավետ գույներով և իհարկե ջերմ ու տարբերվող երևանցիներով: Երևանի դեմքի բաղկացուցիչ մասն են կազմում Օպերայի շենքը, Կասկադը, Կարապի լիճը, Մոսկվա կինոթատրոնը, Պատմության թանգարանը, Մատենադարանը, Ծիծեռնակաբերդը, ինչպես նաև Երևանի կայարանը, որտեղ վեր է խոյանում քանդակագործ Երվանդ Քոչարի <<Սասունցի Դավիթ>> արձանը:

Մայրաքաղաք Երևանը հարուստ է նաև խմելու ջրի ցայտաղբյուրներով, որոնք ամենուր են: Այստեղ կան բազմաթիվ թատրոններ, կինոթատրոններ և պատկերասրահներ:

Հատկանշական է այն, որ հայերը ցանկացած նոր մշակույթ բերելով իրենց երկիր՝ դրա մեջ միախառնում են նաև իրենց մշակութային արժեք-ները:

Այնուամենայնիվ, պետք է խոստովանենք, որ ցանկացած քաղաքի տրամա-դրությունն ու գույները ապահովում են քաղաքի բնակիչները: Ինչպես հայ երգիչներն են իրենց երգերում վկայում <<Երևանը տուն ու շենք չէ, Երևանն մենք ենք, Երևանը սիրելը չգրված օրենք է>>:

Կազմակերպել քննարկում

Արժևորել այն պատմամշակութային ձեռքբերումները, որոնք տեղի են ունեցել Երևանի պատմության մեջ:

Գ. Երևանի խորհրդանիշները

Աշխարհի բոլոր նշանավոր քաղաքները, որոնց հետ Երևանն քույր և համագործակցող քաղաք է ունեն իրենց խորհրդանիշները: Նրանց հետ հանդիպումների ժամանակ Երևանն ներկայանում էր Հայաստանի Հանրա-պետության պետական խորհրդանիշներով, քանի որ աշխարհի հնագույն քաղաքներից մեկը լինելով չուներ իր խորհրդանիշները: Այդ հարցը միշտ անհանգստացրել է մեր քաղաքի ղեկավարներին, բայց ամեն անգամ հետա-ձգվել և լուծում չի ստացել: Վերջապես 20-րդ դարի վերջին խնդիրը ստացավ

իր լուծումը և մեր սիրելի քաղաքը ունեցավ իր խորհրդանիշները: Դրանք քաղաքի դրոշը, օրհներգը և զինանշանն են: Առաջին լուրջ քայլերը խորհրդանիշների ստեղծման ուղղությամբ կատարվեցին 1994 թվականին: Երևանի խորհրդանիշները առաջին անգամ մեր համաքաղաքացիներին ներկայացվեցին 2004 թվականի հոկտեմբերի 13-ին Օպերայի և բալետի թատրոնի դահլիճում կայացած <<էրեբունի Երևան>> տոնակատարության հանդիսավոր նիստի ժամանակ: Նիստը սկսվեց օրհներգով, առաջին անգամ պարզվեց դրոշը և ներկայացվեց զինանշանը: Այնուհետև Երևանի խորհրդանիշները հանդիսավորությամբ հանձնվեցին Երևան քաղաքի պատմության թանգարանին, որտեղ էլ իրենց տեղը գտան հիմնական ցուցադրության մեջ:

Երևանի զինանշանը

1995 թվականին ընդունվեց Երևանի զինանշանը, որի հեղինակն էր Ալբերտ Սոխիկյանը: Զինանշանի կապույտ ֆոնին հայերեն բրոնզագույն մեծատառե-րով մակագրված է <<Երևան>>, պատվանդանին գլուխը հետ շրջած, իշխանու-թյան խորհրդանիշ գավազանը բռնած առյուծն է: Նրա գլխավերևում թագն է՝ մեջտեղից բարձրացող Կենաց ծառի խորհրդանիշ վարսանդով: Առյուծի կրծքին՝ հավերժության նշանի վրա Արարատ լեռան պատկերն է՝ երիզված

ուղղանկյունաձև վահանակով: Գործածված են բրոնզագույն և կապույտ երանգներ:

Երևանի դրոշը

2004 թվականին քաղաքապետարանը շարունակելով աշխատանքներն այս ուղղությամբ, ստեղծեց օրհներգի և դրոշի մրցույթային հանձնաժողովներ: 117 հեղինակներից ստացվեցին 162 առաջարկներ: Առաջին մրցանակը նվաճեց Կարապետ Աբրահամյանի և Կարապետ Փաշայանի համատեղ աշխատանքը՝ դրոշը: Այն իրենից ներկայացնում է սպիտակ գույնի ուղղանկյունն խաղապատկեր որպես մաքրության, պարզության խորհրդանիշ, որի կենտրոնում զինանշանն է՝ շրջապատված Հայաստանի մայրաքաղաքները խորհրդանշող 12 կարմիր եռանկյունիներով: Դրոշի և զինանշանի մայրաքաղաքային նշանակությունը ընգծելու համար օգտագործել են ազգային դրոշի գույները՝ կարմիր, կապույտ, ծիրանագույն: Դրոշը որպես մայրաքաղաքի խորհրդանիշ հաստատվել է Երևանի խորհրդի կողմից 2004 թվականի սեպտեմբերի 27-ին:

Օրհներգը

Երևանի օրհներգը հաստատվեց Պարույր Սևակի և Էդգար Հովհաննիսյանի երաժշտությամբ գրված <<Էրեբունի Երևան>> երգը, որն առաջին անգամ կատարվել է 2750-ամյակի տոնակատարության ժամանակ:

Կատարել անրադարձ.

Ինչ նոր գիտելիքներ և արժեքային համակարգ ձևավորվեց աշակերտների մոտ դասանյութի ուսումնասիրության արդյունքում:

Եզրակացություն

Ամփոփելով դասանյութը արդյունքում կարող ենք եզրակացնել.

Երևանն սկսած հնագույն ժամանակներից մինչև այսօր ողջ հայության երազանքների քաղաքն է: Քաղաքն ունի 2800 տարվա պատմություն, պատկառելի տարիք, որ խոսում է նրա << իմաստուն>> լինելու մասին և որով հպարտանում ենք մենք՝ հայերս:

Երևանն իր մեջ կրում է տարբեր ժամանակաշրջաններ, որոնք կերտել են Երևանն այնպիսին ինչպիսին է այն այսօր: Երևանում կան այնպիսի պատմամշակույթային կոթողներ, որոնք լուռ վկայում են քաղաքի ողջ պատմության մասին:

Գեղեցիկ ու հրաշք քաղաքներ շատ կան աշխարհում, բայց Երևանը մեր սիրելի մայրաքաղաքը սնված է հայի ոգով, հայի ձեռքով:

Երևանի գոյությունը ապացուցում է այն փաստը, որ մենք հայերս սերվել ենք հայկական լեռնաշխարհում, կերտել ենք մեր պատմությունը, ազգային արժեքներն ու մշակույթը, որն իր արժանի տեղն է զբաղեցնում համաշխարհային քաղաքակրթության մեջ:

Գրականության ցանկ

1 Հայաստանի սովետական հանրագիտարան
2 Հայ ժողովրդի պատմության 8 հատորյակ
3 Հայոց պատմության դասագիրք

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա պատմության ուսուցիչների
վերապատրաստման դասընթաց

Նաիրա Սամսոնի Պետրոսյան
Ալավերդու թ. 1 հիմնական դպրոցի պատմության ուսուցչուհի

Հետազոտական աշխատանք
Թեմա «Մշակութային կյանքի կազմակերպման դժվարությունները Հայաստանի առաջին Հանրապետությունում»

Ղեկավար Ս. Աղաջանյան

Վանաձոր 2022

Բովանդակություն

1. Ներածություն:
2. Հանրակրթության կազմակերպման դժվարությունները 1918-1920թթ: Երևանի պետական համալսարանի հիմնադրումը:
3. Արվեստը և ճարտարապետությունը:
4. Պարբերական մամուլը, գրականությունը, գրադարանային ֆոնդի հիմնադրումը:
5. Եզրակացություն:
6. Գրականություն:

Ներածություն

Հայաստանի առաջին Հանրապետությունը ծանր ու դժվարին ժառանգություն էր ստացել Առաջին համաշխարհային պատերազմից, թուրքական արշավանքներից ու ցեղասպանությունից հետո: Այս պայմաններում ՀՀ իշխանությունները ձեռնամուխ եղան ոչ միայն քաղաքական ու սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, այլև հիմք դրվեց մշակութային կյանքի՝ հատկապես, կրթության, ճարտարապետության, արվեստի, գրականության, բնակչության անգրագիտության վերացմանն ուղղված խնդիրների լուծմանը:

Հետազոտական աշխատանքում առանձնացվել են մի քանի բնագավառներ, որոնք փորձել ենք ներկայացնել հաշվի առնելով տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը:

Մշակույթը յուրաքանչյուր ժողովրդի զարգացման վկայությունն է: Դա վերաբերում է նաև հայ ժողովրդին, ով մշակութային հարուստ ժառանգություն է ունեցել, որը սակայն տարբեր ժամանակներում մասամբ կամ ամբողջովին ոչնչացվել է բարբարոսների կողմից: Պետականության վերականգնումով հնարավորություն ստեղծվեց որերորդ անգամ զարգացնել մշակութային կյանքը: Ահա թե ինչու պետականության առկությունը դարձավ կարևոր պայմաններից մեկը մշակույթի զարգացման գործում՝ չնայաց երկրում առկա բազմաթիվ դժվարություններին: Հայաստանի առաջին Հանրապետության տարիների մշակութային կյանքը, թվում է, թե ինչ մշակութային կյանք կարող է զարգացնել Հայաստանի հանրապետությունը, որի բնակչությունը գտնվում էր սովի ու համաճարակային հիվանդությունների անասելի պայմաններում: Սակայն Հայաստանի հանրապետության իշխանությունները հայրենիքի անվտանգային և կենսական հարցերին զուգահեռ չեն անտեսել մշակույթը և զգալի աշխատանք են կատարել մշակույթի, կրթության, արվեստի, գրականության և այլ ոլորտներում: Այդ աշխատանքները բնականաբար դրական արդյունքներ են ունեցել: Մայր հայրենիքում սկսված մշակութայի զարթոնքը իր զարգացումը ունեցավ Խորհրդային Հայաստանում, երբ հայ ժողովուրդը ստեղծագործ աշխատանքի շնորհիվ մշակույթի, կրթության, արվեստի, գրականության և այլ բնագավառներում այնպիսի վերելք ապրեց, որ Երրորդ

հանրապետությանը ժառանգություն թողեց համաշխարհային ճանաչումի հասած մշակութային երկիր:

Ինչպես Առաջին հանրապետությունում, այնպես էլ նորանկախ հանրապետության պայմաններում իրականացվող հասարակական-քաղաքական արմատական փոփոխությունների հետ մեկտեղ առանձնակի նշանակություն են ստանում ազգային կրթական դաստիարակության և մշակութային հարցերը: Երկու դեպքում էլ առկա է ազգայնացման հիմքի վրա ձևավորված գործընթաց, որը նախ և առաջ վերաբերում է պետական լեզվի, հայերենի համընդհանուր օգտագործմանը, դպրոցական կյանքի կազմակերպմանը, մանկավարժական կադրերի պատրաստմանը, ապա ազգային մշակույթի արժեքների նորովի գնահատմանը:

Հանրակրթության կազմակերպման դժվարությունները 1918-1920թթ: Երևանի պետական համալսարանի հիմնադրումը:

Հնագույն մշակույթ ունեցող հայ ժողովուրդը, որը վերականգնել էր իր պետականությունը, նոր հասարակական քաղաքական պայմաններում ձեռնամուղ եղավ մշակութային կյանքի զարգացմանը: Չնայած բազմաթիվ ներքին և արտաքին ռազմատնտեսական, սոցիալական և քաղաքական դժվարություններին՝ նոր սերնդի կրթական դաստիարակությունը առաջնային նշանակություն էր ստանում, որովհետև անկախ պետականության կառուցման համար անհրաժեշտ էին գրագետ և բանիմաց մասնագետներ, որոնց պատրաստման համար անհրաժեշտ էր ունենալ ազգային դպրոց: Մյուս կողմից անհրաժեշտ է նկատել, որ դպրոցական համակարգը գտնվում էր քայքայման եզրին, որովհետև դպրոցների մեծ մասը փակվել էր և դրանք տրամադրվել էին գաղթականության և զինվորականության կարիքների բավարարման համար, չկային ուսուցչական կադրեր, մանկավարժների մեծ մասը հեռացել էր հայրենիքից կամ թողել իր մասնագիտությունը: Անհրաժեշտ էր շտապ միջոցառումներ կազմակերպել 1918-1919 ուսումնական տարին հունի մեջ դնելու համար. « Մեր կառավարությունը այնպիսի ծանր հոգսեր ունի և դրված է այնպիսի ճնշող պայմանների տակ, որ ամենաանկեղծ ցանկության դեպքում իսկ, որի մասին մենք կասկածներ չունենք, նա անկարող է գեթ այս տարի հայ դպրոցը դնել իր կոչման բարձրության վրա»[1,8]: 1918-1919 ուսումնական տարում հանրապետությունում գործել են 133 տարրական (11.2 հազար աշակերտ, 113 ուսուցիչ) և 10 միջնակարգ (3.2 հազար աշակերտ, 177 ուսուցիչ) դպրոցներ: Համեմատության նպատակով նշենք, որ «1913-1914 ուումնական տարում Երևանի թեմում(Երևան քաղաք, Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Նոր Բայազետի, Շարուր-Դարալագյազի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Զանգեզուրի գավառներ ու Կարսի մարզ) գործել են 188 եկեղեցական-ծխական և երկու հայ կաթոլիկական դպրոցներ: Այդ դպրոցներում սովորել են ընդամենը 15105 աշակերտ, որոնցից մոտ 4340-ը աղջիկներ: Ուսուցիչների թիվը կազմել է 420 հոգի»[2,14]:

Դպրոցաշինության նպատակով անհրաժեշտ էր մշակել օրենսդրական ակտեր և այդ նպատակով Հայաստանի խորհրդում ստեղծվում է դպրոցական հանձնաժողով,

որի կազմում ընդգրկվում են հմուտ և խոր մանկավարժական գիտելիքներ ունեցող պատգամավորներ տարբեր խմբակցություններից: Ս. Տիգրանյանը, ով հանձնաժողովի նախագահն էր, գտնում էր, որ դպրոցի կառավարման հասարակական սկզբունքը, որը կիրառվել էր եվրոպական մի շարք երկրներում, հնարավորություն կտար վերականգնել դպրոցական գործը՝ այն հեռու պահելով քաղաքականությունից: Հանձնաժողովի կողմից ստեղծված օրինագիծը վերացնում էր այն անորոշ վիճակը, որը գոյություն ուներ դպրոցական գործում: Օրենքի համաձայն Հանրապետությունում գործող նախկին պետական, եկեղեցական-ծխական և այլ տիպի դպրոցները հնարավորություն էին ստանում ազատ գործելու:

Հայոց անկախ պետականության վերականգնումից անմիջապես հետո Հայաստանի առաջին հանրապետության ղեկավարությունը քայլեր կատարեց ոչ միայն տնտեսական կյանքը բարելավելու նպատակով, այլև սկիզբ դրվեց նոր սերնդի կրթության և դաստիարակության գործընթացին, դպրոցների հիմնադրման, կրթության և մշակույթի օրենսդրական դաշտի կարգավորմանը և հետագա զարգացմանը: Հասկանալի էր, որ ստեղծված անչափ ծանր սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակում ՀՀ կառավարությունը չէր կարող անհրաժեշտ միջոցներ տրամադրել նոր դպրոցներ կառուցելու, դասագրքեր տպագրելու, ուսուցիչների աշխատավարձը վճարելու և ընդհանրապես կրթական գործընթացը լիարժեք հիմքերի վրա դնելու համար:

Նորաստեղծ հանրապետության կրթական համակարգը արտացոլում էր ոչ միայն ներկա սոցիալ-տնտեսական վիճակը, այլև ապագայի նկատմամբ հույսի և հավատի գիտակցության արթնացումը մարդկանց ուղեղներում, վստահության կորստի փոխարինումը լավատեսությամբ՝ և այս ամենի իրականացումը ապագա սերունդների ուսուցման և դաստիարակության միջոցով: Այս տեսանկյունից կարևոր էր նաև կրթության կառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների, կրթական գործընթացի մասնակիցների, ուսումնական ծրագրերի, դասագրքերի ստեղումը: Ինչպես արդեն նշել ենք կրթության կառավարման մարմինը կոչվում էր «Հանրային կրթության և արվեստի նախարարություն»: 1918-1920թթ. կրթության և արվեստի նախարարներ են եղել Մ. Աթաբեկյանը, Գ. Մելիք-Ղարագյոզյանը, Ս. Տիգրանյանը, Ն. Աղբալյանը, Գ. Ղազարյանը, Վ. Մինախորյանը, որոնցից թերևս ամենից երկար և արդյունավետ

գործունեություն են իրականացրել Ն. Աղբալյանը և Գ. Ղազարյանը: Հատկապես մեծ էր ականավոր գրականագետ և մանկավարժ Նիկոլ Աղբալյանի դերը կրթական գործի կազմակերպման և զարգացման մեջ, որի նախարար եղած ժամանակահատվածում՝ մշակվել և հաստատվել են մի շարք օրենսդրական ակտեր, որոնցով ազգային նոր կրթական համակարգի հիմքն է դրվել: Ազգային կրթական համակարգի ստեղծման համար կարևոր նշանակություն ունեցավ նոր դպրոցական կանոնադրության և ուսումնական ծրագրերի մշակումն ու ընդունումը: Դպրոցի նոր կանոնադրությունը քննարկումներից, երաշխավորումներից հետո 1920թվականին հաստատվում է Խորհրդարանի կողմից: Կանոնադրության համաձայն դպրոցներում դասավանդվելու էին հայոց լեզու և գրականություն, թվաբանություն, պատմություն, աշխարհագրություն և այլ առարկաներ: Կրոնը հանվում էր պարտադիր առարկաների ցանկից, այն կարող էր դասավանդվել միայն ծնողների ցանկությամբ: Ռուսերենը համարվում էր օտար լեզու:

Հանրային կրթության կազմակերպման և զարգացման նպատակով Հայաստանի խորհրդի ընդունած առաջին որոշումներից մեկը ինչպես նշվել էր վերևում՝ 1918 թվականի օգոստոսին ընդունված Դպրոցի կառավարման մասին» օրինագիծն էր, որով փորձ էր արվում կանոնակարգել Հայաստանի ամբողջությամբ կազմալուծված ու քայքայված կրթական կյանքը: «Դպրոցի կառավարման մասին» օրինագծով հանրապետության տարածքում գործող նախկին դպրոցները ազատ գործելու հնարավորություն են ստացել: Կրթությունը դարձել է աշխարհիկ, որդեգրվել է դպրոցի կառավարման հասարակական սկզբունքը, տարրական դպրոցներում ուսումը եղել է անվճար ու պարտադիր, միջնակարգ ու բարձրագույն դպրոցներում՝ չափավոր վարձավճարով, կարիքավոր աշակերտները և ուսանողները ստանում էին կրթաթոշակ:

Մանկավարժական կադրերի պակասը լրացնելու նպատակով տարբեր երկրներից Հայաստան էին հրավիրվում բարձրագույն կրթություն ստացած գիտության և մշակույթի տարբեր ոլորտներ ներկայացնող նշանավոր ներկայացուցիչներ, սակայն ուսուցիչների պակասը շարունակվում էր պահպանվել, որովհետև Առաջին Հանրապետությունում դեռևս չէին հիմնադրվել բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ մասնավորապես մանկավարժական: Այս առումով Հայաստանի կրթական-մշակութային կյանքում նշանակալի

իրադարձություն դարձավ 1920թ. պետական համալսարանի հիմնադրումը, որը խորհրդանշում էր հայ ժողովրդի գիտակրթական վերածնունդը: Նշենք նաև, որ համալսարանը բացվել է Ալեքսանդրապոլում, որտեղ 1920թ. առաջին ամիսներին սովից ու տարբեր հիվանդություններից օրական մահանում էր 25-26 գաղթական:

1919թ. դեկտեմբերի 26-ին Խորհրդարանը ընդունում է որոշում՝ օրենք «Պետական լեզվի մասին»: Նրանում ասվում էր. «ՀՀ պետական լեզուն հայերենն է և պարտադիր զորքի ու բոլոր պետական ու հասարակական հիմնարկությունների մեջ: Այլ լեզուների գործածությունը սահմանվում է հատուկ օրենքով: Պետական և հասարակական բոլոր հաստատությունները պարտավոր են վեց ամսվա ընթացքում հայերենը դարձնել պետական գործավարության պաշտոնական լեզու» [3, 100]: Չափահաս բնակչության համար կազմակերպվում էին հայերենի դասընթացներ: Հանրային կրթության նախարար Ն. Աղբալյանի հանձնարարությամբ շրջանային տեսուչները պարտավորվում էին տասը քաղաքներում բացել գրաճանաչության դասընթացներ և ժողովրդական համալսարաններ, որտեղ դասավանդվում էր Հայոց լեզու և գրականություն, Հայոց պատմություն, Աշխարհագրություն, Թվաբանություն և այլ առարկաներ: Սակայն բավարար ֆինանսատնտեսական միջոցներ չունենալու պատճառով լիարժեք կրթության համակարգ չստեղծվեց և հանրապետության բնակչության մեծ մասը շարունակում էր մնալ կիսագրագետ:

Արվեստը և ճարտարապետությունը

Անկախ պետականության հաստատումով հնարավորություն ստեղծվեց զարգացնել նաև արվեստն ու նրա տարբեր ճյուղեր: Հայ արվեստագետները բնակություն էին հաստատել Հայաստանից դուրս տարբեր երկրներում: Անհրաժեշտ էր մայր հայրենիքում հավաքել աշխարհասփյուռ հայ արվեստագետներին, նոր լիցք հաղորդել ազգային արվեստի վերելքին: Նոր անկախ Հայաստանում չկային մշակույթի օջախներ, թատերական, երաժշտական խմբեր: Սակայն նվիրյալների ջանքերով քայլ առ քայլ արվեստը հաստատվում էր հայրենիքում: Կառավարության ջանքերով արվեստի բնագավառի վիճակը փոխելու նպատակով 1919թ. օգոստոսին Ն. Աղբալյանը ձեռնարկեց իր իսկ խոսքերով «գեղարվեստի միջոցով ժողովրդին կրթելու և դաստիարակելու նպատակով» ՀՀ Խորհրդարանի հերթական նիստում թատերական վարժարան հիմնելու և այդ նպատակով Կ. Պոլսից դերասաններ հրավիրելու մասին: «Հացը ստորադաս է արվեստից: Ոչ թե արվեստը պետք է իջնի դեպի ժողովուրդը, այլ ժողովուրդը բարձրանա դեպի արվեստը» [4,121]:

Դեռևս 1919թ. որոշում է ընդունվում Հայոց ազգագրական ընկերության Թիֆլիսում ունեցած գույքի հիման վրա, Երևանում Ազգագրական մարդաբանական թանգարան հիմնելու մասին: 1919թ. մայիսին Երևանում բացվեց Հայ արվեստագետների միության պատկերասրահը, նկարչական ցուցահանդեսը, որտեղ ցուցադրվում է Գ. Բաշինջաղյանի, Ե. Թադևոսյանի, Մ. Սարյանի և այլոց նկարներ: Ցուցահանդեսից ստացված միջոցները ներդրվեց Պետական պատկերասրահ հիմնելու համար:

Հայ թատրոնը ևս գտնվում էր ծանր վիճակում: Հ. Զարիֆյանը ստեղծում է թատերական խումբ և առաջին ներկայացումը տալիս 1918թ. դեկտեմբերի, երբ Հայաստանում սով էր ու տարբեր հիվանդություններ: 1919թ. Հանրային կրթության և արվեստի նախարարությունը Ն. Աղբալյանի առաջարկությամբ օրենք ընդունվեց թատերական վարժարանի ստեղծման համար: 1920թ. Երևանում բացվում է Հայ ժողովրդական թատրոն: Ներկայացումները տեղի էին ունենում Զանփոլադյանի թատրոնում, որտեղ խաղում էին տաղանդաշատ դերասաններ Հ. Աբելյանը, Օլգա

Մայսուրյանը, Վ. Միրզոյանը, Մ. Գարագաշը և ուրիշներ: 1920թ. վերջին խորհրդարանի նախկին շենքը տրվեց պետական թատրոն կազմակերպելու համար: 1918-1919թթ. հայ երաժշտական արվեստը անկում էր ապրում, միայն 1919թ. աշնանը որոշ աշխուժացում նկատվեց: 1919թ. մայիսին մի խումբ հայ երաժշտասերներ հիմնեցին «Կոմիտաս» երաժշտական ընկերությունը, որի նպատակն էր նյութապես օգնել Փարիզի հոգեբուժարաններից մեկում գտնվող Կոմիտասին: 1920թ. կառավարությունը նախաձեռնում է գործնական քայլեր բարձրագույն երաժշտական դպրոց հիմնելու համար: 1920թ. օգոստոսին Նախարարների խորհուրդը օրենք ընդունեց Երևանում բարձրագույն երաժշտական դպրոց՝ Կոնսերվատորիա հիմնելու մասին և ռեկտորի պաշտոնում աշխատելու նպատակով հրավեր է ուղարկում հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր Ալ. Սպենդարյանին: 1920թ. սեպտեմբերին օրենք ընդունվեց Ալեքսանդրապոլում երաժշտական միջնակարգ դպրոց բացելու մասին:

ՀՀ կառավարությունը քայլեր է ձեռնարկում քաղաքաշինության զարգացման ուղղությամբ: 1919թ. մայիսին Ալ. Թամանյանը ստանում է գլխավոր ճարտարապետի պաշտոնը, որի գլխավորությամբ կազմվում է ոչ միայն Երևանի գլխավոր հատակագիծը, այլև նա ձեռնարկում է կիսակառույց շենքերի ավարտման աշխատանքները, ինչպես նաև մշակում քաղաքաշինության զարգացման հեռանկարային ծրագրեր: Ալ. Թամանյանի գլխավորությամբ քաղաքաշինության վարչությունը ստեղծագործական մեծ աշխատանք է կատարում հանրապետության տարբեր քաղաքներում կառուցվելիք մի շարք կրթամշակութային հաստատությունների, պետական թանգարանի, Հանրային գրադարանի կառուցման նախագծերը իրականացնելու համար: 1919թ. Ալ. Թամանյանը այցելելով Անիի համալիր, Ն. Աղբալյանին տեղյակ է պահում Անիի ավերակների վիճակի մասին, իսկ 1920թ. օգոստոսին Ալ. Թամանյանի գլխավորությամբ ձևավորվում են արշավախմբեր, որոնք վերակառուցման նշանակալի աշխատանքներ են կատարում այնտեղ:

Այսպիսով, հայ արվեստը Հայաստանի առաջին հանրապետության շրջանում սկսեց դանդաղ, բայց համարձակ քայլերով զարգանալ մայր հայրենիքում:

Պարբերական մամուլը, գրականությունը, գրադարանային ֆոնդի հիմնադրումը:

Հայաստանի անկախության վերականգնումը հայ ժողովրդի կյանքում ունեցավ ոչ միայն սոցիալ-քաղաքական, այլև պատմամշակութային նշանակություն: Աշխուժացավ երկրի հասարակական քաղաքական կյանքը, ծաղկում ապրեց պարբերական մամուլը, լրագրողական և ստեղծագործական կյանքը: ՀՀ ընդհամենը երկուսեկես տարվա գոյության ընթացքում լույս են տեսել ընդհանուր հաշվով վաթսուն անուն պարբերականներ, որոնց ճնշող մեծամասնությունը հրատարակվել են մայրաքաղաք Երևանում: Թերթեր էին լույս տեսնում նաև Ալեքսանդրապոլում, Կարսում, Էջմիածնում, Գորիսում և այլ վայրերում:

Նշված ժամանակաշրջանում հրատարակվող մամուլը կարելի է բաժանել երեք տիպի՝ պաշտոնական, կուսակցական և անկախ մամուլ: Պաշտոնական մամուլի քանակը հասնում էր տասնչորսի, կուսակցական մամուլը՝ երեսունութ և անկախ մամուլը՝ ութ անուն թերթեր:

ՀՀ պաշտոնական մամուլի նպատակը եղել է կառավարության և խորհրդարանի ընդունած օրենքների, օրենսդրական ակտերի, որոշումների և հրամանների տարածումն էր: ՀՀ գլխավոր պաշտոնական օրգանը «Կառավարության լրաբեր» եռօրյա թերթն էր: Հաջորդ պաշտոնաթերթը «Հայոց ազգայի խորհրդի լրատու» եռօրյա թերթն էր: Պաշտոնական մամուլի թվին էր դասվում ռազմական նախարարության «Ռազմիկ» 16 էջանոց շաբաթաթերթը: Կիսապաշտոնական պարբերականների թվին կարելի է դասել Կարսում լույս տեսնող «Աշխատավորի ձայն» երկօրյա թերթը, Արցախում լույս տեսնող «Ղարաբաղի սուրհանդակ» թերթերը:

ՀՀ կուսակցական մամուլը կարելի է բաժանել երեք մասի՝ կապված քաղաքական երեք ուղղությունների հետ, «աջ», «ձախ», «ձախակենտրոն»: Այս բաժանման հիմքում ընկած են կուսակցությունների քաղաքական նպատակները և դասակարգային էությունը: Աջակողմյան թևին պատկանում էին Հայ ժողովրդական, Հայ սահմանադրական կուսակցությունները: Այս կուսակցությունները հրապարակել են հինգ անուն թերթ: ՀԺԿ-ի օրգան «Ժողովուրդ» լրագիրը իր էջերում ներկայացնում էր ազգային և ազատական գաղափարներ, կուսակցության մոտեցումները

հանրապետության ներքին և արտաքին հարցերում և այլն: «Ժողովուրդ» լրագիրը ներկայացնում էր արևելյան, ռուսահայ ազգային աջ-ազատական հատվածը:

ՀՀ ձախկենտրոնամետ դիրք էր գրավում ՀՅԴ-ի մամուլը՝ թվով 13 անուն թերթ: Դրանցից առավել կարևորներն էին «Զանգ», «Հայաստանի աշխատավորը», «Հառաջը», «Աշխատանքը» և այլ պարբերականներ: Էսեռները ունեցել են մամուլի երեք օրգան, մենշևիկները՝ երեք, բոլշևիկների և նրանց համախոհների թերթերի քանակը հասնում էր 13-ի: 1920թ. Ալեքսանդրապոլում բոլշևիկները հրատարակեցին «Ալիք» շաբաթաթերթը, Հաղպատում՝ «Լոռվա գյուղացու ձայն» և այլն: Այսպիսով, չնայած սոցիալական ոչ լայն հենարանի ՀՀ քաղաքական դաշտում իրենց տեղն ունեին բոլոր քաղաքական կազմակերպությունները:

ՀՀ-ում գրական կյանքը գտնվում էր կազմավորման փուլում: 1918թ. սկզբին «Ժողովուրդ» պարբերականում լույս են տեսնում Հ. Թումանյանի, Երևանի որբանոցի սաներ Գ. Մահարու, Ն. Զարյանի և այլ պատանի ստեղծագործողների բանաստեղծությունները: 1919թ. հունվարին Հանրային կրթության նախարար Գ. Մելիք-Ղարագյոզյանի և մտավորականության մի քանի ներկայացուցիչների նախաձեռնությամբ հիմնվում է Գրական գեղարվեստական միությունը: 1919թ. նշվեց Ամենայն հայոց բանաստեղծ Հ. Թումանյանի 50 ամյակը: Գրական կյանքը գնալով աշխուժանում էր: Կազմակերպվում են գրական առանձին երեկոներ: Դրանցից մեկը նվիրված էր պոեզիայի նորագույն հանճարին՝ Եղիշե Չարենցին: Հայ գրողները տեսնում էին այն հոգատար վերաբերմունքը, որը դրսևորում էր անկախ պետությունը գրականության նկատմամբ: 1920թ. Հայաստան է գալիս Դ. Դեմիրճյանը, որը ստանձնում է արվեստի բաժնի վարիչի պաշտոնը Հանրային կրթության նախարարությունում: Հայաստանի առաջին հանրապետության ժամանակ ստեղծվեցին անհրաժեշտ նախադրյալներ, հին ու նոր գրական սերունդ, գրական կազմակերպություն և այլն, որպեսզի հայ գրականությունը նոր վերելք ապրեր, ինչն էլ տեղի ունեցավ Խորհրդային իշխանության օրոք:

1918թ. գրադարանային ֆոնդ հասկացություն չկար, այն գտնվում էր քայքայված վիճակում: Հասարակական լայն խավերի շնորհիվ հնարավոր եղավ վերաբացել նախկինում գործող գրադարանները և հիմնել նորերը: 1920թ. Երևանի արական գիմնազիայի շենքում բացվում են սենյակներ՝ գրադարան-թանգարան ունենալու նպատակով: Գրադարանը ուներ մի քանի բաժիններ՝ մարդաբանական,

բուսաբանական, մանկավարժական, փիլիսոփայական, գրական և այլն: 1919թ. ընթացքում Երևանում, Կարսում, Ալեքսանդրապոլում, Նոր Բայազետում ստեղծվում են քաղաքային գրադարաններ: Հ. Թումանյանի անվան գրադարան է բացվում իր ծննդավայր Դսեղում: Վերաբացվում են դպրոցական գրադարանները: Բավական հարուստ գրականություն ունեին Գայանյան թեմական դպրոցը, Երևանի ուսուցչական սեմինարիան, Արական գիմնազիան: 1920թ. սկզբին սկսեցին գործել գերատեսչական գրադարաններ (Խորհրդարանում, Արտաքին գործերի նախարարությունում, Աշխատանքի նախարարությունում): 1920թ. մայիսին Նախարարների խորհուրդը ընդունեց օրենք քաղաքներում ու գյուղերում գրադարան-ընթերցարաններ հիմնելու մասին: 1919թ. հուլիսին Նախարարների խորհուրդը օրենք ընդունեց պետական հանրային մատենադարան հիմնելու մասին: Հաստատվեց գրադարանի հաստիքային կազմը, անհրաժեշտ ֆինանսները: Հանրային գրադարանի և ազգագրության թանգարանի նյութական արժեքները գտնվում էին Թիֆլիսում և համապատասխան վայրի բացակայության պատճառով Երևան չէին փոխադրվում: Միայն 1921թ. հնարավոր եղավ տեղափոխել արժեքավոր գրքային հավաքածուն: 1918-1920թթ. դրվեց Հանրային պետական գրադարանի հիմքը:

Եզրակացություն

1918թ. մայիսի 28-ին հայոց անկախ պետականության վերականգնումը կրթության և մշակույթի նոր զարգացման հնարավորությունների սկիզբ հանդիսացավ: Ծանր ու դժվարին պայմաններում սկիզբ դրվեց ազգային պետականաշինությանը: Շնորհիվ քաղաքական իշխանությունների վարած քաղաքականության կարճ ժամանակահատվածում հիմքեր դրվեցին մշակույթի, արվեստի, գրականության, մամուլի, գրադարանների, դպրոցական համակարգի ստեղծման համար: Հանրային կրթության և արվեստի նախարարության անմիջական ջանքերով ազգայնացվեցին դպրոցները: 1919-1920թթ. Հայաստանի մի քանի քաղաքներում հիմնվեցին տեխնիկական, գյուղատնտեսական, մանկավարժական թեքումով միջնակարգ մասնագիտական դպրոցներ: Հիմնադրվեց Մայր բուհը, որը դարձավ Հայաստանի գիտական աշխարհի հիմնասյունը: Նախարարների խորհրդի կողմից հայերենը ճանաչվեց որպես պետական լեզու: Հայաստանի հանրապետության տարիներին հայկական արվեստը, որը մինչ այդ զարգանում էր գաղթօջախներում, սկսեց զարգանալ մայր հայրենիքում: 1920թ. հանրապետությունում հիմք դրվեց երաժշտական կրթության զարգացմանը, մի քանի քաղաքներում բացվեցին երաժշտական դրպրոցներ:

Ալ. Թամանյանի գլխավորությամբ հանրապետությունում սկիզբ դրվեց քաղաքաշինական գործունեությանը, ինչը սակայն վիճակված չէր իրականություն դառնալ ՀՀ-ի օրոք: Ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ մի քանի այլ քաղաքներում ծաղկում ապրեց պարբերական մամուլը, որը հանդիսացել է տվյալ ժամանակաշրջանի բարդ իրականության և բազմաշերտ քաղաքական կյանքի հայելին:

Չնայած սոցիալ-տնտեսական ծանր վիճակին կարճ ժամանակահատվածում հնարավոր եղավ հիմք դնել ոչ միայն տնտեսական կյանքի, այլև կրթամշակութային ոլորտում: Հայ մշակույթը դանդաղ, սակայն հաստատուն քայլերով հիմնավորվում էր մայր հայրենիքում: Ազգային պետականության զարթոնքի պայմաններում մշակույթը վերածնունդ էր ապրում, որը կարևոր նշանակություն ունեցավ խորհրդահայ մշակույթի վերելքի համար:

Գրականություն

1. Վարդանյան Գ. Վ. Մշակույթը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920թթ.) Եր. 2003, «Գիտություն», 156 էջ:

2.Սիմոնյան Ց. Հայ մանկավարժության պատմություն (Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Եր.2010, 204էջ:

3.Խուդոյան Ս. Սովետահայ դպրոցի պատմություն (1920-1941), Եր. 1973, 309էջ:

4.Սուքիասյան Հ. Հայաստանը Առաջին հանրապետությունում, Եր. 2015, 144 էջ:

Կրթության,գիտության,մշակույթիևսպորտինախարարություն

Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարան

Հետազոտական աշխատանք

Խումբ՝ պատմություն

Թեմա՝ Հայաստանի Առաջին Հանրապետության նշանավոր դիվանագիտական գործիչները

Հետազոտող՝ Գայանե Պապոյան

Ղեկավար՝ Սամվել Աղաջանյան

Վանաձոր 2022

Բովանդակություն

Ներածություն. 3

Հայաստանի Առաջին Հանրապետության նշանավոր դիվանագիտական գործիչները. 5

Հովսեփ Արղության. 5

Արմեն Գարո. 7

Դիանա Աբգար. 9

Պողոս Նուբար. 12

Վահան Փափազյան. 14

Միքայել Վարանդյան. 17

Եզրակացություն. 18

Օգտագործված գրականության ցանկ. 19

Ներածություն

Բարդ ու հակասական ժամանակաշրջանում հյուսվում է հայ ժողովրդի արդի պատմությունը: Երկիրը ծանր ու դժվարին վիճակում է և մեր ամենակարևոր խնդիրը պետք է լինի դաստիարակել խելացի, արդի մարտահրավերներին դիմակայող սերունդ: Այդ սերնդի համար ամենակարևոր արժեքը հայ զինվորն է, որը պատրաստ է դիմագրավել ամենածանր փորձություններին: Սակայն աշակերտներին պետք է ծանոթացնել հասարակական-քաղաքական, պետական և դիվանագիտական այն գործիչների հետ որոնք ամեն ինչ արել են որ մեր երկիրը հզորանա և լինի ապահով: Նրանցից ոմանց անունները մեր աշակերտներին և ինչու չէ նաև մեզ՝ ուզուցիչներիս ծանոթ են բայց շատ գործիչների անուններ հայտնի են միայն նեղ գիտական շրջանակներին: Այսօր ամենաարդիական հարցերից մեկը լավ դիվանագիտական աշխատանքն է, որը հնարավոր է մեր երկրին բերի կայունություն, իսկ ապագայում նաև բարեկեցություն: Չէ որ լավ դիվանագետի աշխատանքի արդյունքում երկիրը մեծ օգուտ կարող է ստանալ: Յուրաքանչյուր դիվանագետ գիտակցելու է իր դերը հայոց պատմության, մշակույթի և հազարամյա ավանդույթների պաշտպանության մեջ: Նրանք պետք է լավ հասկանան որ իրենք թիկունքում ոչ միայն ՀՀ քաղաքացին է այլ նաև սփյուռքի մեծ ուժը և որ նրանց միասնական ցանկությունն ու պահանջը ՀՀ պաշտպանության պատասխանատվությունն է: Հայաստանի դիվանագիտությունը ձևավորվել է 1918 թվականին, երբ ՀՀ խնդիրն էր դիվանագիտական կապեր հաստատել այլ երկրների հետ: Իզուր չէր որ հայ չորս վարչապետներից երեքը՝ Ա. Խատիսյանը, Հ. Օհանջանյանը և Ս. Վրացյանը ղեկավարել են արտաքին գործերի նախարարությունը: ՀՀ դիվանագիտական կապեր էր հաստատել աշխարհի 40-ից ավել պետությունների հետ: Դիվանագիտական կապեր հաստատվեցին և դիվանագիտական ներկայացուցչություններ բացվեցին Փարիզում,Լոնդոնում,Հռոմում,Վաշինգտոնում,Տոկիոյում,Աթենքում,Կ. Պոլսում,Կահիրեում,Թիֆլիսում,Թեհրանում և շատ այլ վայրերում: Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը 1917-1920 թթ. ջանքեր էր թափում որ ապահովեր հայերի անվտանգությունը և ամրապնդեր Հայաստանի միջազգային դիրքերը: Այդ աշխատանքի շնորհիվ մեր երկիրը օգնություն ստացավ ԱՄՆ-ից,Անգլիայից,Պարսկաստանից: Կարևոր էր նաև հայ գաղթականների բազմաթիվ խնդիրների լուծումը:

Հայաստանի դվանագիտությունը շատ փորձություններ է հաղթահարել և ես հույս ունեմ, որ ներկա մարտահրավերները հաղթահարելու համար և՛ս նա մեծ ուժ կգտնի, որ այս ծանր ժամանակաշրջանը և փորձությունները արժանապատվորեն հաղթահարվեն:

Այսօրվա դիվանագետը պետք է ուսումնասիրի ամբողջ դիվանագիտության պատմությունը և հատկապես հայ ժողովրդի և նրա հետ սահմանակից պետությունների հարաբերությունների պատմությունը և ջանք չխնայի անկորուստ պահել ՀՀ սահմանները և ՀՀ քաղաքացու իրավունքները:

Չնայած այն բանին որ Ադրբեջանը մեզ պարտադրած 44-օրյա պատերազմի արդյունքում ստիպում է նորանոր զիջումների գնալ, հայ դիվանագետները պետք է աշխատեն օր ու գիշեր դիվանագիտական բոլոր ճակատներում որպեսզի կարողանանք դիամակյել թշամում, որը ունենալով հսկայական միջոցներ և դաշնակիցներ փորձում է մեզ պարտադրել ծանր պայմաններով պայմանագիր:

Հայաստանի Առաջին Հանրապետության նշանավոր դիվանագիտական գործիչները

ՀովսեփԱրղության (իշխան)

Ծնվելէ 1863 թվականինԼոռվաաշխարհի Սանահին գյուղում:Կրթությունննստացելէ Թիֆլիսի ՆերսիսյանՎարժարանում, որնավարտելէ 1884 թվին:Ուսուցչականաշխատանքէտարել Ջալալօղլիի ևԹիֆլիսիհայկականդպրոցներում: 1889 թվականինանցելէ ԱրևմտյանՀայաստան, որտեղհեղափոխականաշխատանքներէկատարելիամագործակցելով Արաբոյի հետ: 1890 թվականինանցելէ Տրապիզոն, սակայնմատնությամբձերբակալվելէ, հանձնվելցարականիշխանություններինևաքսորվել Քիշնև:

Աքսորիցվերադառնալով՝անցելէ Թավրիզ, որտեղիսկելուկարգավորելէՀՅԴզինագործարանիաշխատանքները, կազմակերպելևղեկավարելէԱրևմտյանՀայաստանզինամթերքիտեղափոխմանգործը, զինատարխմբովանձամբհասել Վան: 1897 թվականինմասնակցելէ Խանասորիարշավանքին, որտեղեղելէհրամանատարի՝ ԽանասորաՎարդանի օգնականը:Դրանիցհետո Իրանյան իշխանություններըձերբակալելենրան, ուորպեսռուսահպատակիհանձնելռուսականկառավարությանը:ԲանտարկվելէԹիֆլիսիՄետեխիբանտում, ապաաքսորվել Վոլոգդա որտեղմնացելէմինչև 1903:

1905-1906 թվականներին, կազմակերպելէհայերիինքնապաշտպանությունըթաթարջարդարարներիդեմ:

1916-1917 թվականներին, մասնակցելէ Առաջինաշխարհամարտին, որտեղկովկասյանռազմաճակատումեղելհայկականկամավորական 7-րդգնդիհրամանատար:

1918 թվականին ՀայաստանիՀանրապետության հռչակումիցհետոեղելէՎիրահայոցազգայինխորհրդինախագահ, ՀՀխորհրդարանիանդամ, ապա՝դեսպանԻրանում՝ 1919-1920 թվականներին:

Հայաստանիխորհրդայնացումիցհետո, 1922 թվականինհաստատվելէՓարիզումորտեղ 3 տարիանցկնքելէիրմահկանացուն:

Խանասորիհաղթանակինվիրված,Մենքանկեղծզինվորենքեերգիհետևյալտողերով՝ԻշխանՀովսեփԱրղությաննանմահացվելէԱշուղՖահրադիկողմից.

"ԿոտուրիցդէպիՎանանցնելշտապով
Աջիցվարդանը,
ՁախիցԻշխանը..."

18-19 դարերումհայազգային-ազատագրականպայքարնուղեկցվելէնորխորհրդանիշներիևբազմազանդրոշներիուզինանշաններիմշակմամբ:ՀովսեփԱրղությանըհայկականպետականությանվերականգնմաննուղղվածջանքերինզուգընթացաշխատելէնաևապագահայկականթագավորությանպետականխորհրդանիշներիմշակմանուղղությամբ:

ՀովսեփԱրղությաննառաջարկելէՀայաստանիզինանշանիմիտարբերակ, որումպատկերվածէրհայկականազգայինևհոգևորմիշարքխորհրդանշաններ՝

Անձեռակերտ Փրկչի, Արշակունիներիխորրդանիշարծվի, գառանուխաչվառի, Արարատլեռանու Նույանտապանի, ինչպեսնաև առյուծիուվիշապիպատկերներով:

ԱրմենԳարո

ԳարեգինՓաստրմաճյան (կամ **ԳարեգինՓաստրմաճեան**), առավելիայտնիէ **ԱրմենԳարո** / **ԱրմենԿարո**, (փետրվարի 9, 1872, Կարին, Էրզրումիվիլայեթ, Օսմանյանկայսրություն - մարտի 23, 1923, Ժնև, Շվեյցարիա), ՀայաստանիՀանրապետությանպետականգործիչ, ՀՅԴ ականավորառաջնորդներից, և ,Նեմեսիսե գործողության կազմակերպիչներից:

ԱրմենԳարոնծրագրելէրհայրենիքվերադառնալուսումնավարտելուցհետո, սակայնստիպվածեղավիրաժարվելայդմտքից, երբջարդերուկռիվներսկսվեցին Զեյթունում:Թողնելովուսումը՝ԱրմենԳարոնորոշումէ օգնել Զեյթունի հայրենակիցներին:ՇուտովԱրմենԳարոնհայտնվումէԺնևում, որտեղդառնումէակտիվիստ:ՈւղարկվումէԵգիպտոս՝այնտեղիցԶեյթունիինքնապաշտպանությանը աջակցելուհամար: ՍարգիսՍրենցի (Sarkis

Srentz), ՀայկԹիրաքյանի (Հրաչ), ՄաքսԶեվրուզի (Max Zevrouz)-
իհետթողնումէԵգիպտոսըևանցնում Օսմանյանկայսրություն,
որտեղաջակցումէ ՀՅԴ-
ի ծրագրերին:ԱյսշրջանումէլԳարեգինՓաստրմաճյանըստանումէԱրմենԳարոմականո
ւնը:

Օտոմանյանբանկիգրավում

1896 թ. օգոստոսի 26-ինԲաբկենՍյունիի (ՊետրոսՓարյան)
հետկազմակերպելէմիջազգայինՕսմանյանբանկիգրավմանգործողությունը,
որինպատակնէրՀայկականհարցիհանդեպեվրոպականտերություններիուշադրությա
նհրավիրումը:Խումբըսպառնումէրպայթեցնելբանկը,
եթեԱրևմտյանՀայաստանումԹուրքիանբարենորոգումներչիրականացնի:ԱրմենԳար
ոյիխնդիրնէրբանկայինծառայողներիևայցելուներիփախուստիխոչընդոտումը:Բաբկե
նՍյունուզոհվելուցհետոգլխավորելէխումբը:Օգոստոսի 27-
իառավոտյանխումբըեվրոպականտերություններիերաշխիքիներքոֆրանսիականշոգ
ենավովհեռացելէՄարսել:

1908 թ. տեղիունեցավ երիտ-թուրքերիհեղափոխությունը: Էրզրումի հայերը,
ինչպեսնաևՀՅԴ-ն,
դիմումենԱրմենԳարոինևխնդրումեննրանդառնալիրենցթեկնածուն Օսմանյանխորհ
րդարանի առաջիկաընտրություններում:ԱրմենԳարոնդառնումէՀՅԴներկայացուցիչ
Օսմանյանխորհրդարանում:

1914 թ. աշնանը՝ռազմականգործողություններըսկսվելուցմեկուկեսամիսառաջ,
ԱրմենԳարոնգնումէ Թիֆլիս՝Էրզրումիհայկականխորհրդիկողմիցստացվածհատուկի
անձնարարությամբ:Այնտեղմիանումէ Կովկասի Հայոցազգայինխորհրդի կողմիցստե
ղծվածխմբին,
որինպատակըկամավորականջոկատներիստեղծումնէր:Այսջանքերիարդյունքում 19
14 թ. նոյեմբերինստեղծվումէկամավորականներկրորդջոկատը: Նոյեմբերի 14-
ինայսջոկատը Բայազետի մոտառաջինանգամմտնումէճակատամարտիմեջ:Մեկօրյա
արյունոտմարտերիցհետոջոկատիհրամանատար ԴրաստամատԿանայանը ծանրվի
րավորվումէ:Այդօրվանիցմինչևհաջորդտարվամարտ Դրոն մնումէծանրվիճակում,
բայցնրաջոկատըտալիսէ 11
ճակատամարտ Ալաշկերտի, Շատախի, Մալաշկերտի մոտ,
մինչև Դրոն վերականգնվումէևվերադառնում:

1915 թ. ամռանըԱրմենԳարոն Վանում էր,
այստեղմասնակցումէ Վանի ինքնապաշտպանությանը: Խեչոն եղելէնրաօգնականը:
1917 թ. գարնանը,
երբ Ռուսաստանիհեղափոխությունը տակնուվրաէանումամբողջ Կովկասը,
ԱրմենԳարոնևբժիշկ ՀակոբԶավրիևը մեկնումեն Պետրոգրադ Կովկասի գործերիհե
տկապվածբանակցելու Ռուսաստանիժամանակավորկառավարության հետ: 1917 թ.
ԱրմենԳարոնմեկնումէ ԱՄՆ,
որպեսԹիֆլիսի Հայոցազգայինխորհրդի և Ամենայնհայոցկաթողիկոսի ներկայացուց
իչ:ԱրմենԳարոնընտրվելէ Հայաստանիառաջինհանրապետության դեսպանԱՄՆ-
ում, Վաշինգտոն:

ԴիանաԱբգար

ԴիանաԱղաբեկը (Աղաբեկյան) ծնվելէ 1859 թվականի հոկտեմբերի 12-ին։Նրածննդավայրիհետկապվածիրարամերժտեսակետներկան՝ Բիրմայի մայրաքաղաք Ռանգուն, ՆորՁուղա, Բոմբեյ, նաև՝ Կալկաթա, սակայնհստակէ, որնրանախնիներըեղելենՆորջուղայեցիներ։Ծնվելուցնրանտրվելէերկուանուն՝Գայան եւԱնահիտ։

1889 թվականին Հոնկոնգում ամուսնացելէծնունդովնորջուղայեցիՄիքայելԱբգարի (Աբգարյան) հետ,
որիընտանիքընույնպեսՀնդկաստանէրգաղթել Պարսկաստանից:Ամուսնությունիցհետ տոապրելեն Չինաստանում,
այնուհետևմշտականբնակությունհաստատել Ճապոնիայում:

Ճապոնիայումգտնվելուտարիներին,
ԴիանաԱբգարնիրմեջբացահայտեցվեպերգրելուտաղանդը, 1882 թվականինհրապարակվեցնրաառաջին,Սուսաննաեվեպը,
իսկմիքանիտարիանցլույստեսավ,Պատմություններհայրենիքիցեվեպը,
որտեղնանկարագրումէրճապոնացիժողովրդիկյանքը:

Ճապոնիայումծնվեցիննրանցհինգերեխաները,
որոնցիցերկուսըմահացանվաղհասակում: 1891 թվականինծնվելէԴիանայիառաջնեկը՝Ռոզը, հետոորդին՝Միքայելկրտսերը,
իսկ 1896 թվականին՝Ռութը: 1906 թվականին՝ամուսնուհանկարծակիմահիցհետո,
ընտանիքըտեղափոխվելէՃապոնիայիամենաաշխույժնավահանգստայինքաղաքը՝ Յոկոհամա, որտեղԴիանանբացելէվաճառատուն,
որնառևտուրէրիրականացնում Չինաստանի, ԱՄՆ-
ին և Եվրոպայի հետևմեծառանձնատունգնելՅոկոհամայիՅամատեթաղամասում:

ԴիանաԱբգարըմահացելէ 1937 թվականի հուլիսի 8-ին,
Յոկոհամայում:Նրաաճյուննամփոփվելէտեղիօտարերկրացիներիգերեզմանատանն՝
ամուսնուշիրմիկողքին:ՏվյալպահինԱբգարիշիրիմըգտնվումէՀայ-
ճապոնականհասարակությանհովանավորությանտակ Տոկիոյում:

1984 թվականին ճապոնացի հայագետ ՅիդեհարաՆակաջիման հիմնելէՀայաստանի
ինստիտուտը:ՆրաջանքերովՅոկոհամայումգտնվելենԱբգարիտունը և 1911-
1918 թվականներինհրատարակված 3 գրքերը:

ԴիանայինգործառաջարկեցինՃապոնիայիարտաքինգործերինախարարությունում՝
արձանագրայինբաժնում:Կարճժամանակահատվածումնանշանակալիդեմքդարձավ
դիվանագիտականշրջանակներում:ՆաՃապոնիայումապրելէ 46
տարի:Դիանանտիրապետելէ պարսկերեն, անգլերեն, հինդի, ճապոներեն ու չինարեն
 լեզուներին:Գրելէբանաստեղծություններևպատմվածքներ:

ԱռաջինաշխարհամարտինախօրեինևպատերազմիտարիներինԴիանաԱբգարըելույթէրունենումհայժողովրդիմասինդասախոսություններով, գրումէրհոդվածներ,
համագործակցումէրանգլալեզու,The Japan
Gazettetե թերթին,ՅեռավորԱրևելքիեհետ:Նաառաջիններիցմեկնէր,
որըփաստերովապացուցեց,
որ Ադանայիկոտորածը կազմակերպվելևիրականացվելէր երիտթուրքերիսահմանադրականիշխանության կողմից:Համաշխարհայինգիտակցությունըբարձրացնելուհամար՝ընդգծելով Արևմուտքի բարոյականպարտականությունըհայազգինփրկելուգործում,
ԴիանաԱբգարըգրումէր Օսմանյանկայսրությունում հայերիկյանքիանտանելիպայմաններիմասին:

20-րդդարի 20-ականթվականներին,The Japan Gazettetեհրատարակչությանշնորհիվ,
լույստեսանԴիանաԱբգարիանգլալեզուևս 8 վեպեր, որոնցթվումկային.
,Հայերիկոտորածիմասինիրավունքները (1910), ,Հայկականհարցե, ,Հայաստան,
որինդավաճանեցինե (1910), ,Քոանունովե (1911), ,ԽաղաղությունըԵվրոպայումե,
,Աշխարհիխնդիրը (1912), ,Խաղաղությունևոչխաղաղությունե (1912), ,Մեծչարիքե
(1914):Այդաշխատություններնմեծգնահատականիարժանացանամերիկյան ՁԼՄ-
իկողմից:Ավելիուշ, նահրատարակեցմիքանիհոդվածներ,
որոնցթվումուշադրությանենարժանիայնպիսիհոդվածներ,

ինչպես,Սարսափելիանեծքե,
,ԿայսերականԵվրոպայիմիամտությանմասինեև,ԽաչվածՀայաստանե:Նանամակագրականկապերուներաշխարհիբազմաթիվքաղաքականևհոգևորգործիչներիհետ:ԴիանաԱբգարըմիակհայկինէր,
որնամբողջությամբտիրապետումէրմիջազգայինիրավիճակին:

ԾանոթլինելովՀնդկաստանումբրիտանականգաղութատիրականգործունեությանը,
ԱբգարըկանխազգումէրԵվրոպականօգնությանպակասն Օսմանյանկայսրությունում
ապրողհայերինկատմամբ:Նացանկանումէր, որԱՄՆ-նհանդեսգար,
որպեսՀայաստանիհովանավոր,
ինչնայդպեսէլչստացվեց:Իրհայրենիքինվիրվածլինելով,
նացանկանումէրգործովօգտակարլինելիրժողովրդինևՀայաստանին, որտեղնա,
իդեպ,
երբեքչիեղել:ԴիանաԱբգարնամենկերպօգնումէրբազմաթիվհայփախստականներին,
որոնք Սիբիրով ևՃապոնիայովփորձումէինտեղափոխվելԱՄՆ:Այդպես Վլադիվոստոկում՝ հայերիցեղասպանությունիցհետոհավաքվեցմոտ 500 հայ,
որոնքհայբարերարիօգնությամբօվկիանոսովտեղափոխվեցինԱՄՆ:

Երբ 1918 թվականիմայիսի 28-
ին Հայաստանըվերականգնեցիրպետականանկախությունը,
ոչոքչշտապեցայնճանաչել:Եվմիայն 1920 թվականին,
իշնորհիվԴիանաԱբգարիջանքերի, Ճապոնիանդարձավառաջիներկիրը,
որըպաշտոնապեսճանաչեցհայայականԱռաջինՀանրապետությանանկախությունը:
Իշնորհիվիրհմուտքաղաքականությանևհսկայածավալաշխատանքի, 1920 թվականի հուլիսի 21-
ինԴիանաԱբգարընշանակվեցՀայաստանիԱռաջինՀանրապետությանդիվանագիտականներկայացուցիչևգլխավորհյուպատոս ՀեռավորԱրևելքում:Նույնթվականի հուլիսի 22-ինգրվածնամակում,
ՀայաստանիԱռաջինՀանրապետությանԱրտաքինգործերինախարարի՝ Համազասպ Օհանջանյանի կողմիցստորագրված,
նշանակմանմասինփաստինկցվածէրհետևյալգրությունը. *որպեսզիպաշտպանեքնորաստեղծՀայրենիքիշահերըևմեղմացնեքմերհայրենակիցներիկացությանպայմանները* ... Այդպիսովնադարձավաշխարհումառաջինկինը,
որըդիվանագիտականպաշտոնէրզբաղեցրել:ՆորկարգավիճակըԴիանաԱբգարինավելիմեծհնարավորություններտվեցՃապոնիայիկառավարականօղակներում,
ինչըզգալիորենթեթևացրեցնրաաշխատանքըհայփախստականներիանունից:

Փորձելովօգնելիրպատմականհայրենիքինևնրաժողովրդին,
նաակտիվգործունեությունէրծավալում,
միաժամանակնամակագրականկապիհաստատելովորոշքաղաքականգործիչներիևհրավապաշտպանների հետ:Նրանցմեջ,
ումհետմշտականնամակագրությունէրտարվում,
կայինԱմերիկայինախագահ ՎուդրոՎիլսոնը, քարտուղարՌոբերտԼանսինգը,
քարտուղարիտեղակալ՝ ՈւիլյամՖիլիպսը,
հումանիտարկազմակերպությաննախագահ՝ ՋեյմսԼ. Բարտոնը,
խաղաղությանհամաշխարհայինկոնգրեսիանդամներԱրթուրՍիմոնդսըևԴևիդՋորդանը, ինչպեսնաևայլհայտնիմարդիկ:

ՊողոսՆուբարՓաշա

ՊողոսՆուբարը ծնվել է 1851 թ. օգոստոսի 2-ին Կոստանդնուպոլսում: Հայրը՝ ՆուբարՆուբարյանը, երեքանգամ եղավ Օսմանյան կայսրության, իսկ վելի ճիշտ անգլո-ֆրանսիական գերիշխանության տակ գտնվող Եգիպտոսի վարչապետը: Նուբարյան գերդաստանը սերում էր Սյունիքի մելիքներից: Դավիթ Բեկի իշխանության ժամանակ նրանց շանավորզորավարներից մեկն էր Չավնդուրի մելիք Թորոսը: 1724 թ. , երբ նասպանվեց, նրա նիրպաշտոնը ստանձնեց մելիք Նուբարը, ով իշխանությանտապալումից հետո անցավ Զմյուռնիա, որտեղ էլ հաստատվեց Նուբարյանների գերդաստանը: Նուբարյանները այնուհետև կապերհաստատեցին Եգիպտոսի հետ և տեղափոխվեցին այնտեղ՝ զբաղեցնելով բարձր պաշտոններ: Եգիպտոսը Պողոս Նուբարփաշայի հայրը՝ Նուբարփաշային էպարտական Սուեզի ջրանցքի կառուցումը:

Պողոս Նուբարը նախնական կրթությունը ստացել է տանը, հրավիրված ուսուցիչների միջոցով, այնուհետև ուսանել Շվեյցարիայում և Ֆրանսիայում, ապա Փարիզի կենտրոնական վարժարանի ճարտարագիտաարդյունաբերական ֆակուլտետում: Ավարտելուց հետո աշխատանքի է անցնում ֆրանսիական հանքերում, երկաթուղիներում: 1879-ին Պողոս Նուբարը մեկնում է Կոստանդնուպոլիս, որտեղ էլ գտնում է կյանքի ընկեր ու հուն, ով թուրքական արքունիքի հանձնակատար Հովհաննես Տատյանբեյի աղջիկն էր՝ Մարին: 1880 թ. ամուսնանում է: Ունեցել է հինգ զավակ՝ չորս որդի և մեկ դուստր:

1912 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդի կոնդակով գլխավորեց ազգային պատվիրակությունը և ապետք է Մեծ տերություններին ներկայացներ թուրքահպատակ հայկական հանգներում բարեփոխումներ կատարելու հարցը: Նրան էին ընտրել, քանի որ ուներ կարողություն, որ և էկուսակցության չէր հարում, հեղինակություն էր աշխարհ ասփյուռ հայության համար և Եվրոպայի դիվանագիտական աշտոնական շրջանակներում: Իտարբերություն մինչ այդ պատվիրակության ղեկավարհոգևորականների, նահարցը ներկայացնում էր ոչ թեմ արդասիրական, այլ շահադիտական տեսանկյունից: Հետևանքը եղավ 1914 թ-ին Թուրքիային բարենորոգումներ պարտադրող պայմանագիրը, որը ցավոք համաշխարհային պատերազմի պատճառով, մնաց անկատար: Պատերազմի սկսելուց հետո Պողոս Նուբարը կիլիկիահայերին փրկելունպատակով 1914 թ. նոյեմբերին, ծովեզերքը գրավելու առաջարկ ունի մեր գլխավոր գերիշխանություններին, Բրիտանական ուժերի ափ հանումը կապահովեր տեղի հայերի անվտանգությունը, սակայն Բրիտանացիները այլ ծրագիր ունեին:

Պողոս Նուբարը նորթափ է հաղորդում արևելահայերի շարժմանը՝ 6000 ոսկի ուղարկելով Թիֆլիս: Սկսում նորհանգանակություններ: Հայությանանունից շրջում է Եվրոպայում՝ բանակցելով տարբեր երկրների կառավարությունների հետ: Հույսուներ, որ պատերազմում մերի աղթանակի հետ ոամենի նչկփոխվի:

1919 թ-ի ապրիլի ննա և ՀՀ. պատվիրակության նախագահ՝ Ավետիս Ահարոնյանը Ամերկոմի հետ համաձայնագիր ստորագրեցին և անկախ Հայաստան մեծ օգնություն ունեկավալ ուրի և այլ սննդամթերքներ ի տեսքով: Միքանի ամսվա ընտաթցքում 1մլն. 600.000

ֆրանկիօգնությունուղղվեց արևմտահայերին: 1919 թ. ՊողոսՆուբարը՝որպեսարևմտահայերիպատվիրակությանղեկավար, ՀՀպատվիրակությանհետմիասիններկայացավ Փարիզիկոնֆերանսում: 1919 թհոկտեմբերի 29 - ինՊողոսՆուբարըՄիացյալկառավարությունստեղծելուառաջարկովպատվիրակներու ղարկեցՀայաստան, սակայնարդյունքիչհասան:

Առողջությանվատթարացմանպատճառով 1928 թվականիմայիսի 28-ինհրաժարականտվեց՝ ՀԲԸՄն ղեկավարեց ԳալուստԳյուլբենկյանը, իսկՊողոսՆուբարփաշանհռչակվեցհավերժնախագահ:Սփյուռքումհովանավորելէմիշ արքդպրոցների: Հայագիտությունը զարգացնելունպատակով 4000 ոսկիէփոխանցել Օքսֆորդիհամալսարանին հայագիտականամբիոնբացելուհամար: Խոշորձեռնարկությունէր Փարիզում՝ Նուբարյանմատենադարանի հիմնումը:

Մահացելէ 1930 թ. Փարիզում:Նրաանունովէվերանվանակոչվել Նուբարաշեն վարչականշրջանը, որըկառուցվել էրմիայնՊողոսՆուբարփաշայիմիջոցներով:



ՎահանՓափազյան

ՎահանՓափազյանը ծնվելէ 1876 թվականին Թավրիզում, վանեցուը ընտանիքում։Ինը տարեկանհասակումհայրը՝,շուշտակեմականունովհայտնի եկեղեցական, քաղաքականգործիչՏեր-
ՄեսրոպքահանաՓափազյանը Սալմաստում դառնումէկաթոլիկներիդավադրությանզոհը և Վահանիդաստիարակությամբսկսումէզբաղվելմեծքույրը՝Աշխենը։Նրանցընտանիքը բազմանդամէր՝ 10 երեխա։Եղելեն 6 եղբայր, կրտսերը Վահանն է։Նրաեղբայրներիցէգրող Վրթանես Փափազյանը: 1893 թվականին Թիֆլիսից տեղափոխվումեն ՆորՆախիջևան։Ցանկանալովապրուստը ինքնուրույնհոգալ 16 տարեկանումդառնումէմիհրեալուսանկարչհաշակերտ, յուրացնումարվեստը։Շուտովհարումէ Հնչակյանկուսակցությանը, սակայն Ալեքսանդրապոլում քրոջորդուդաշնակցականԼևոնԳյուլումյանիմիջոցով ծանոթանալովկուսակցականմամուլին, հանդիպելովերկրիցեկածհայդուկներին ՆորՆախիջևանէվերադառնումկուսակցական նապետդավանափոխված: 1902 թվականինգարնանարդեն Պետերբուրգում ուսանող Փափազյանը խույստալով ձերբակալությունից փախչումէ Ֆինլանդիա, ապա Շվեյցարիա՝ Ժնև։Դրոշակի խմբագրատանը հանդիպումէ Արտաշես Հովսեփյանին՝ ապագահռչակավոր Մալխասին, Քրիստափոր Միքայելյանին, Սիմոն Զավարյանին: Նրանցհանձնարարությամբ էլ, որպես լուսանկարիչ և վստահելի ընկեր Գայլ Վահանի խմբի հետգալիս է Կովկաս՝ պատրաստվելով մեկնել Վասպուրական։Նրանը ընկերակցումէր Նիկոլ Պողոսյանը, ապագահայտնի Հշխանը:

Մինչև սահմանանցումը վիրավորհայդուկներից մեկին վիրակապող Վահանին կնքումեն ,բժիշկ եմականունով, իսկ հետագայումնրանկոչումեն նաև,Կոմսե։Առանցլուրջ փորձություններ Վահանն ու Հշխանը հասնումեն Վան: 1903 թվականին նոյեմբերին հաջողաշխատանքներ են տարվումկուսակցականկառույցը Վան քաղաքում և նրաշրջակագավառներում մամրապնդելու ուղղությամբ:

1904

թվականհաշնանը Վան էգնում Արամ Մանուկյանն ուքարոզչականաշխատանքը,

նորթափ է ստանում։Սակայն այսոգևորությունը կարճ է տևում,

ՀՅԴ բյուրոն Արամ Մանուկյանին ուղարկել էր,

ոչթե Կոմսիենթակայությանտակաշխատելու, այլ նրասխալները շտկելու,

ինչ իցէ լնեղսրտելով Վահան Փափազյանը որոշումէ հեռանալ: 1905

թվականի հունվարին Կոմսնու Քեռին (Արշակ Գավաֆյան) ծպտվածթողնումեներկիրը,

ավելի ուշ հասնումեերևան: Հայ-

թաթարականբախումների ժամանակ Նիկոլ Դումանի հրամանով նամեկնումէ Նախիջևան, Սարգիս Կոդաբաշյանի ենթակայությամբ կազմակերպելու ինքնապաշտպանությանգործը: 1906

թվականիաշնանընրանկրկինհրավիրումեն Վասպուրական:Հասնելովվան՝անցնումէ իրհամարկարծեսսովորականաշխատանքի:ԳարնանըվերադառնումենանահՅԴ 4-րդհամագումարինմասնակցելուհամար Վիեննա մեկնածԱրամՄանուկյաննուԻշխանը:

1912 թվականի դեկտեմբերի 21-ինԿոստանդնուպոլսիհայոցազգայինժողովըորոշումէընդունումհայականհարցըբարձրաձայնելեվրոպականտերություններիառաջ:ՀիմնվումէԱպահովությանխորհուրդ, որինախագահըպատիարքԱրշարունինէր, քարտուղարը՝ՎահանՓափազյանը:ԲացիՊատրիարքարանինախագծիցհայկականբարենորոգումներիվերաբերյալնախագիծներկայացրեցնաև ՊողոսՆուբարՓաշան, որըդժգոհումէրպատրիարքարանիներկայացրածնախագծից:ԱյսպայմաններումպատրիարքարանիկողմիցԵվրոպաէգործուղվումևՊողոսՆուբարիհետբանակցություններիմեջէմտնումՎահանՓափազյանը՝նպատակունենալովհասնելփոխզիջումայինտարբերակիընդունմանը:ՄեկուկեսամիստևածբանակցություններիցհետոՎահանՓափազյանըևՊողոսՆուբարըհասնումենհամաձայնությանևռուսականդեսպանությանըներկայացնումերկկողմանիընդունելինախագիծ:Իվերջո 1914 թվականիհունվարի 26-ինկնքվումէռուս-թուրքականհամաձայնագիրհայկականբարենորոգումներիվերաբերյալ, որին, սակայնվիճակվածչէրիրագործվել, քանզի 1914 թվականիցսկսվածառաջինհամաշխարհայինպատերազմըայնթողնումէանավարտ:

1918 թվականիվերջինՓարիզիցստացվումէՊողոսՆուբարիհրավերը, որպեսԱրևմտահայությանԱպահովությանխորհրդինախագահ՝մասնակցելուԱզգայինհամագումարին. 1919 թվականիփետրվարի 24-իցապրիլի 22-ին:ՎահանՓափազյաննուԱվետիսԹերզիբաշյանըկազմումևհայությաներկուհատվածներընեներկայացնողպատվիրակություններինենտրամադրում ,Վնասուցեհատուցմանզեկուցագիրը:Ինչպեսինքնէգրում. ,Մերպահանջը Թուրքիաեն 20 միլիարդֆրանկիկիհասներե:ՎահանՓափազյանըշուտովվերադառնումէՀայաստան:Ընտրվելէրխորհրդարանիպատգամավոր, այսանգամարդենանկախՀայաստանիօրենսդիրխորհրդիանդամ:Նաղեկավարումէրելևմտական (բյուջետային) հանձնաժողովը:Շուտովնրանկրկինհրավիրումեն Փարիզ, ապագաՍևրիդաշնագրովնախատեսվումէրՀայաստանինելքդեպի Սևծով, մանրամասնություններըպիտիճշտերհատուկհանձնաժողովը, որումՓարիզումՀայաստանիպատվիրակությանզինվորականկցորդզորավարԳոգանյանիառաջարկովընդգրկվումէնաևԿոմսիանունը:ՆաայդօրերինկրկինՏիֆովիհիվանդէ

ռևմիայնօգոստոսիսկզբինկազդուրվելուցհետոէկարողանումմեկնել:Իդեպնույնհիվանդությունիցմահացելէրեղբայրը՝ՎրդանեսՓափազյանը:ՊրոֆեսորԽաչատրյանիհետՓարիզենհասնումսեպտեմբերին, դեռևս 1920 թվականիօգոստոսի 10-ինկնքվածՍևրիպայմանագրինհաջորդումէսեպտեմբերի 23-ինսկսվածհայերիհամարկործանարարհայ-թուրքականպատերազմը:

Փափազյաննայլևսհայրենիքչիվերադառնում:Հայաստանիխորհրդայնացումիցհետոշարունակումէաշխատելպատվիրակությանկազմում:ՆրաևՀայաստանիՀանրապետությանտարագիրկառավարությանանունիցբազմաթիվհանդիպումների, բանակցություններիէմասնակցումԹուրքիայումհայկականօջախստեղծելու, գաղթականությանըօժանդակելուևայլհարցերով: 1921 թվականիմայիսինընտանիքովմեկնումէ Բեռլին, Գերմանիայի աջակցությամբթուրքերիցզիջումներկորզելուևբոլշևիկներիհետբանակցություններիեզրերգտնելուհամար:ՆախհայկականդեսպանատանըհանդիպումէՀՀդեսպանԳրինֆիլդին, օգնական ԼիպարիտՆազարյանի, ԱրշակՋամալյանի հետ, ապահյուրընկալվումդոկտոր ՅոհաննեսԼեփսիուսին, սովետականդեսպանատանըտեսակցումբոլշևիկ ԱլեքսանդրԲեկզադյանին, դեսպանԿրասինին:Սակավաթիվնյութերիցհայտնիէ, որԿոմսըիբրևՀՅԴլիազորներկայացուցիչմասնակցելէքրդականազգայինՀորփիումկազմակերպությանհետտարվողբանակցություններին:

ՄիքայելՎարանդյան

ԾնվելէՇուշիիգավառի Քյաթուկ գյուղում:ԱվարտելէՇուշիիռեալականդպրոցը, Ժնևիհամալսարանը (1897 թ.), որտեղէլկապէհաստատելԴաշնակցությանգործիչներ Ռոստոմի, Ք. Միքայելյանի, Հ. Դավթյանիհետ: 1898 թվականինսկսումէաշխատակցել ,Դրոշակե թերթին:Հետագայումաշխատելէ Թիֆլիսի ,Հառաջե (1907-07) և ,Հորիզոնե (1915 թ.-ից) թերթերիիմբագրություններում:ԳործելէԵվրոպայում (Ռումինիա, Շվեյցարիա, Ֆրանսիա):Մեծօժանդակությունէցույցտվել հայկականհարցի օգտինԵվրոպայումքարոզչությունտանող ,ՊրոԱրմենիայիե (1900-1914 թթ.), իսկվերջինիսընդհատվածժամանակ՝,Արևելքիժողովուրդներիհամարեթերթիհրատարակմանը: 1904 թվականիցեղելէՀՅԴարևմտյանբյուրոյիանդամ: 1907 թվականիցեղելէՀՅԴկուսակցությաններկայացուցիչը 2-րդինտերնացիոնալում: Առաջինհամաշխարհայինպատերազմի տարիներինև Հայաստանի Հանրապետության ժամանակաշրջանում ֆրանսերեն լեզվովհրատարակելէ,Հայաստանը և Հայկականհարցը և ,Հայ-վրացականկոնֆլիկտը և Կովկասյանպատերազմը գրքերը,

եվրոպականհասարակայնությանընծանոթացրելիրհայրենիքումկատարվողիրադարձություններին:ԸնտրվելէՀայաստանիՀանրապետությանխորհրդարանիանդամ, նշանակվելիանրապետությանդիվանագիտականներկայացուցիչ Հռոմում:

Վարանդյանըմերժելէպատմականմատերիալիզմիդրույթները, հասարակությանառաջադիմությանհիմնականշարժիչուժըհամարելէոչթեհասարակականարտադրությունը, այլգիտակիցմարդուն:Հասարակությանառաջընթացումմեծդերէհատկացրելմտավորականությանը:Ազգային-ազատագրականշարժմանմեջկողմէրհեղափոխականպայքարին, իսկսոցիալականհարցերիլուծմանխնդրումպաշտպանելէխաղաղբարեփոխումներիուղին (2-րդինտերնացիոնալիգործիչներիօրինակով):Համարվումէհայազգային-ազատագրականշարժմանխոշորգաղափարախոսներիցմեկը, որգտնումէր, որհայժողովրդիհերոսականպայքարըպատմականորենօրինաչափէ, արդարացիևառաջադիմական, ընդգծումայդպայքարիհամազգայինբնույթը, փառաբանումհայրենիքիազատագրությանհամարպայքարողմարտիկներին:Հայազատամարտիվերջնականնպատակըհամարելէմիասնականևանկախ Հայաստանի ստեղծումը:

1934 թ. ապրիլի 22 մահացելէ Մարսելում:

Եզրակացություն

1918թ. Մայիսյան հերոսամարտերի շնորհիվ հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը: Իրականություն դարձավ հայերի բազմադարյա երազանքը՝ մենք ունեցանք պետականություն : Բայց Հայաստանի առաջին Հանրապետությունը գոյատևեց շատ բարդ պայմաններում: Հայաստանի անկախանալը պատմական անհրաժեշտություն էր և ստեղծված պայմաններում չուներ այլ ընտրանք:

Հայաստանի Հանրապետությունը սկսեց դիվանագիտական կապեր հաստատել իր հարևան և ոչ հարևան երկրների հետ, որովհետև յուրաքանչյուր նորանկախ

պետության առաջնահերթ խնդիրներից մեկը միջազգային ճանաչման հասնելն է։ Հայաստանի կառավարությունում կարևոր տեղ էր զբաղեցնում արտաքին գործերի նախարարությունը։ ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը հարաբերությունների կարգավորումն ու կայունացումն էր հարևանների հետ, նամանավանդ, որ նրանց հետ կային սահմնային-տարածքային վեճեր։ Հայ դիվանագետների առաջնային խնդիրներից էին օտար երկրների կառավարական շրջանակների հետ աշխատանքներ տանել և լուծել Հայկական հարցը ինչպես նաև պաշտպանել հայ ժողովրդի անվտանգությունը հնարավոր թուրքական սպառնալիքներից։ Կարևոր էր նաև դրսից պարենային և ռազմական օգնություն ստանալը։ Շատ կարևոր էր լավ հարաբերություններ հաստատել հայկական գաղթօջախների հետ, կազմակերպել հայերի գաղթը դեպի Հայաստան, նրանց տնտեսական, ֆինանսական և մտավոր ներուժը օգտագործել Հայաստանի հզորացման գործում։ Հայ դիվանագետները մեծ աշխատանք էին տանում հայկական հարցի լուծման համար և Հայաստանի կառավարության պատվիրակությունը Փարիզում, Լոնդոնում և մի շարք այլ կենտրոններում ջանք չէին խնայում այդ գործում։

Հայաստանի Հանրապետությունը իր կարճատև գոյության ընթացքում աշխարհի 40-ից ավելի պետություններումն բացեց իր դիվանագիտական ներյկայացուցչությունները ու հյուպատոսությունները, որոնց հիմնական խնդիրը ՀՀ միջազգային ճանաչումը ապահովելն էր, տնտեսական անվտանգային, հումանիտար խնդիրների լուծումն էր։ Հայ նշանավոր դիվանագետներից մի քանիսի մասին ես փորձեցի ներկայացնել այս աշխատանքում, բայց շատ գործիչներ անգամ չունենալով համապատասխան կրթություն և աշխատանքի փորձ, ջանք չէին խնայում օգնել նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը և ձգտում էին իրականություն դարձնել հայ ժողովրդի բաղձալի երազանքը՝ միացյալ Հայաստանի ստեղծումը։

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Մելքոնյան,Պ. Չոբանյան, Ա. Սիմոնյան,<<Հայոց պատմություն 11>> դասագիրք, Երևան <<Զանգակ>>,2015, էջ 238:

2. Վ. Բարխուդարյան,Ա. Մելքոնյան,<<Հայոց պատմություն>>հատոր 4-րդ,Երևան 2010, էջ 797:

3. Ազատ հանրագիտարան

https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%AC%D5%AD%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80_%D5%A7%D5%BB